Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հրատարակչությունը, չհետապնդելով որևէ եկամուտ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի համացանցային կայքերում ներկայացնում է իր հայագիտական հրատարակությունները: Գիրքը այլ համացանցային կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ հրատարակչության համապատասխան թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Հ. Ռ. ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

# ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌՔ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ և ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հ. ՌՒ. ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

# ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌՔ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ

(1920—1980 թթ.)

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ—1985

ԳՄԴ 63.3(2Հ) + 63.3(2Հ0)
Մ511

Գրախոս՝ Հայկ. ՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի
Հայ գաղթավայրերի պատմության բաժին

Մելիքսեթյան Հ. Ուխ.

Մ511 Հայրենիք—սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը (1920—1980 թթ.).— Եր.: Երևանի համալս. հրատ., 1985.— 476 էջ.

Վերնախորագր.՝ Երևանի. պետ. համալս.

Աշխատության մեջ լուսաբանվում են թուրքական կառավարության կազմակերպած հայոց եղեռնի ողբերգական հետևանքները և հայկական սփյուռքի կազմավորման հարցերը: Ցույց է տրվում սովետական իշխանության մտահոգությունը հայ գաղթականների նկատմամբ և նրանց որոշ մասի հայրենադարձության իրագործումը, ինչպես նաև դրա նկատմամբ քաղաքական տարբեր հոսանքների վերաբերմունքը: Այդ կապակցությամբ քննադատվում է նաև արևմտյան տերությունների և Ազգերի լիգայի քաղաքականությունը: Միաժամանակ շարադրվում է հայրենիք—սփյուռք առնչությունների պատմությունը:

Մ $\frac{0505040000—33}{704(02)—85}$ 64—85

ԳՄԴ 63.3(2Հ) + 63.3(2Հ0)

МЕЛИКСЕТЯН ОВИК УХТАНЕСОВИЧ
ВЗАИМОСВЯЗЬ РОДИНА—СПЮРК И РЕПАТРИАЦИЯ
(1920—1980 гг.)
(На армянском языке)
Издательство Ереванского университета
Ереван—1985

© Երևանի համալսարանի հրատարակչություն, 1985

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանը գտնվելով Եվրոպայի և Ասիայի սահմանագծում՝ վաղուց ի վեր եղել է բազում զավթիչների ավերիչ ասպատակությունների ահեղ ռազմադաշտ: Թեպետ հայ ժողովրդի պատմությունը հարուստ է օտար նվաճողների դեմ մղված հերոսական պայքարի բազմաթիվ դրվագներով, սակայն երկար ժամանակ զրկված լինելով սեփական պետականությունից, անխնա հրի ու սրի է մատնվել հայոց աշխարհը, կոտորվել է բնակչությունը, թալանվել նրա ունեցվածքը, ամայացվել երկիրը:

Այդպիսի դժնդակ պայմաններում հայ ժողովրդի որոշ մասը հաճախ հարկադրված է եղել բռնի կամ կամովին հեռանալ հարազատ երկրից, գաղթել դեպի օտար հորիզոններ: Ժամանակի ընթացքում այդպես են հիմնադրվել հայկական գաղթօջախները աշխարհի տարբեր անկյուններում, մինչդեռ հայկական լեռնաշխարհում աստիճանաբար հաստատվել են մահմեդական ցեղերը:

Երկրի ավերումները ու ժողովրդի արտագաղթը պարբերական բնույթ ստացան հատկապես XVI դարից սկսած, երբ Հայաստանը կռվախնձոր դարձավ երկու գիշատիչ հարևանների՝ Օսմանյան Թուրքիայի և Սեֆյան Պարսկաստանի միջև: Մոտ մեկուկես դար ենթարկվելով նրանց կործանարար ասպատակումներին՝ 1639 թվականին Հայաստանը բաժանվեց երկու մասի: Նրա մեծագույն՝ արևմտյան մասն անցավ Թուրքիային, իսկ արևելյանը՝ Պարսկաստանին:

1828 թ. Արևելյան Հայաստանը մտավ Ռուսաստանի տիրապետության տակ և հայության այդ հատվածը, իր բախտը ընդմիշտ կապելով ռուս ժողովրդի հետ, Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության շնորհիվ ձեռք բերեց ազգային ու սոցիալական վերածննդի լայն հնարավորություններ:

Դժբախտաբար, հայ ժողովրդի մի զգալի հատվածը մնաց թուրքական բռնակալության ճիրաններում և շարունակում էր ենթարկվել դաժան հալածանքների։ Թուրքական շովինիստները, հետևողականորեն կենսագործելով համաթուրքական-համամահմեդական քաղաքական որոշակի ծրագիր, պարբերաբար կազմակերպվող կոտորածներով, կրոնափոխությամբ ու բռնագաղթեցումներով աստիճանաբար նվազեցնում էին հայության թիվը նրա իսկ պատմական հայրենիքում։

Բայց այն, ինչ կատարվեց առաջին համաշխարհային պատերազմի թոհուբոհի օրերին, իր նախընթացը չուներ համաշխարհային պատմության մեջ։ Օգտվելով պատերազմի խառնակ իրադրությունից՝ երիտթուրքական բարբարոսները իրականացրին ահավոր ցեղասպանություն՝ ուղղակի հայաթափելով Արևմտահայաստանը։ Զանգվածային բռնագաղթի միջոցով նրանք դեպի արաբական անապատները արտաքսեցին հայ ժողովրդի արևմտյան հատվածին և այդ ընթացքում ոչնչացրին մեկուկես միլիոն հայերի։

Իրենց հայրենի օջախներից բռնությամբ զրկված հարյուր հազարավոր հայ մանուկներ, կանայք ու ծերունիներ, անցնելով մարդկության պատմության մեջ իր նախընթացը չունեցած գողգոթայով և արաբական անապատներում հազարավոր նոր զոհեր տալով՝ ցրվեցին դեպի տարբեր երկրներ, բազմապատկելով ու ստվարացնելով հայկական նախկին գաղթօջախները։ Առաջին համաշխարհային պատերազմից հետո այդպես կազմավորվեց հայկական «Ցրոնքը» կամ «Սփյուռքը»։ Այսուհետև մեր լեզվի մեջ մտավ մի տերմին, որը մեզ համար ունի աշխարհագրական ու քաղաքական որոշակի իմաստ, արտահայտում է հայ ժողովրդի աշխարհասփյուռ վիճակը։

Այսպիսով, ժամանակակից հայկական սփյուռքը, կազմավորվելով առաջին համաշխարհային պատերազմից անմիջապես հետո, արդեն 20-ական թվականներին ստացավ որոշակի դիմագիծ։ Սակայն, բնականաբար, այն անփոփոխ ու քարացած վիճակում չի մնացել։ Տարբեր երևույթների, իրադարձությունների ու պատճառների հետևանքով սփյուռքը անընդհատ ենթարկվել է փոփոխությունների, այսպես ասած՝ մակընթացությունների ու տեղատվությունների։ Ժամանակի հոլովույթում նվազել ու խամրել են որոշ գաղթօջախներ, գոյացել ու աշխուժացել են նորերը։ Այսպես, վերջին տասնամյակներում աստիճանաբար



ձևավորվեցին ու ստվարացան Կանադայի, Ավստրալիայի, Քուվեյթի և այլ հայկական համայնքները։ 60—70-ական թվականներին նոր վերածնունդ ապրեցին Անգլիայի, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի հայկական գաղթավայրերը՝ հատկապես ի հաշիվ ազգային դիմագիծը համեմատաբար լավ պահպանած Մերձավոր արևելքի հայության դեպի այդ երկրները կատարած գաղթերի։

20-ական թվականների սկզբին արևմտահայության տարագիր բեկորները, որոնք հայրենազուրկ դեգերում էին օտար ու անհյուրընկալ հորիզոններում, միամտորեն կարծում էին, թե պատերազմից հետո, մեծ տերությունները, որոնք «ազատության ու անկախության» վերաբերյալ բազում խոստումներ էին շռայլել նրանց, հաշվի կառնեն հայերի ծառայությունները ու տառապանքները և հնարավորություն կստեղծեն վերադառնալու հայրենիք։ Սակայն դրանք սին պատրանքներ էին, քանի որ իմպերիալիստական տերություններին հետաքրքրում էր ոչ թե ճնշված ու իրավազրկված ժողովուրդների ճակատագիրը, այլ իրենց շահը։ Հայ գաղթականության վիճակը շարունակում էր մնալ ծանր ու անորոշ։ Մի շարք երկրներից հայ տարագիրները ուղղակի զանգվածաբար դուրս էին մղվում և ոչ մի տեղ հաստատուն ասպնջականություն չէին կարողանում գտնել։ Այդ պայմաններում բոլոր «բարեկամներից» խաբված ու լքված սփյուռքահայերի համար հուսալի ապավեն դարձավ 1920 թ. նոյեմբերին Արևելյան Հայաստանում հաղթանակած սովետական իշխանությունը։

Հայաստանի սովետական կառավարությունը, որպես աշխատավոր զանգվածների շահերի իսկական պաշտպան, իր գոյության հենց սկզբից երբեք անտարբեր չմնաց դժնդակ պայմաններում գտնվող և օգնություն հայցող պանդուխտ հայերի դառն ճակատագրի հանդեպ։ Սովետական կառավարությունը ելնում էր այն պարզ փաստից, որ այն ժամանակ Հայաստանի սահմաններից դուրս գտնվում էր ավելի մեծ թվով հայություն, քան ներսում, և որի ճնշող մեծամասնությունը կազմում էին աշխատավորական տարրերը։

Ի դեպ, անհրաժեշտ ենք համարում շեշտել, որ, ցավոք, մինչև այժմ էլ կան մարդիկ, ովքեր անտեղյակ լինելով հայ ժողովրդի պատմությանը, սփյուռքահայերին համարում են քաղաքական վտարանդիներ։ Մինչդեռ հանրահայտ է, որ վտարանդիները նրանք են, ովքեր թշնամի լինելով տվյալ երկրում հաս-

տառված սոցիալ-քաղաքական կարգին, հեռանում են հայրենիքից, անցնում արտասահման և շարունակում տարբեր միջոցներով պայքարել նրա դեմ: Հայ ժողովրդի 1/3-ից ավելին հանդիսացող սփյուռքահայ ավելի քան երկու միլիոնանոց զանգվածը կազմված է ոչ թե քաղաքական վտարանդիներից, թեպետ նրանում կան նաև աննշան թվով իսկապես վտարանդիներ, այլ պատմական ահավոր անարդարության՝ երիտթուրքերի կուսակցության ու կառավարության, իսկ ապա նաև քեմալականների կազմակերպած ցեղասպանության անմեղ զոհերից: Նրանք, զրկվելով հայրենի օջախներից, բռնագաղթի միջոցով սփռվել են աշխարհով մեկ, բայց շարունակում են իրենց ամենանվիրական իղձը համարել հայրենիք վերադարձը, մայր հայրենիքում համախմբումը: Հետևապես նրանց չի կարելի նույնացնել քաղաքական վտարանդիների հետ:

Սփյուռքահայությունը, իր բացարձակ մեծամասնությամբ, հակառակ հայրենի հողից բռնությամբ կտրված լինելուն, հակառակ այն բանին, որ բաժան-բաժան է, ցրված աշխարհի տարբեր կողմերում և ենթակա զանազան ազդեցությունների, այնուամենայնիվ շարունակում է մնալ որպես հայ ժողովրդի անկապտելի մասը: Գերմարդկային ճիգերի գնով նա ձգտում է պահպանել իր ազգային դիմագիծը, մշտապես լինել հայրենիքի հետ, զորավիգ նրան, հպարտ նրանով:

Իրենց հայրենիքի մի մասում սովետական իշխանության հաստատումից անմիջապես հետո, հայրենաբաղձ սփյուռքահայ աշխատավորները դասակարգային հստակ տրամաբանությամբ վճռականորեն դիմուղղվեցին դեպի Սովետական Հայաստան: Հենց սկզբից նրանք Սովետական Հայաստանը համարեցին իրենց հուսալի հանգրվանը, անվերապահորեն կանգնեցին նրա պաշտպանության դիրքերում և ցանկություն հայտնեցին ներգաղթելու հայության ազատագրված ու սոցիալիզմի ուղին թևակոխած հայրենիքը:

Ահա այդ ամենը հաշվի առնելով, Հայաստանի կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը հենց սկզբից լրջորեն մտահոգվեցին արտասահմանյան տարագիր բեկորների ճակատագրով, հետևողականորեն անդրադառնալով այն հարցին, թե դեպի ո՞ւր են բեկվում սփյուռքահայ զանգվածների մտքերն ու հայացքները, ի՞նչ անցուդարձեր են կատարվում նրանց մեջ և ինչպե՞ս կարելի է թեթևացնել նրանց վի-



ճակը՝ հնարավորության սահմաններում կազմակերպելով նաև նրանց հայրենադարձությունը:

Սփյուռքահայերի մեջ Սովետական Հայաստան ներգաղթելու ձգտումը առավել հրամայական դարձավ 1922—1923 թթ. տեղի ունեցած Լոզանի կոնֆերանսից հետո, ուր արևմտյան տերությունները ու քեմալական Թուրքիան փորձեցին վերջնականապես գերեզմանել իրենց կողմից նենգափոխված հայկական հարցը՝ այն ձևականորեն կապելով Ազգերի լիգայի տնօրինությանը:

Ինչ խոսք, որ սփյուռքահայերի դեպի հայրենիք բեկվելու գործում հսկայական դեր ու նշանակություն ունեցան նաև Սովետական Հայաստանում կուտակված տասնյակ հազարավոր արևմտահայ գաղթականների, որբ ու անապաստան երեխաների նկատմամբ սովետական կառավարության ցուցաբերած ջերմ հոգատարությունը, նրանց հարցի արմատական լուծման և սփյուռքահայերի հետ սերտ կապեր հաստատելու ուղղությամբ ձեռնարկված միջոցառումները:

Սովետական Հայաստանի գոյությունը արմատական բեկում մտցրեց հայ ժողովրդի բազմադարյան պատմության մեջ: Այն ոչ միայն ազատարար նշանակություն ունեցավ ֆիզիկական բնաջնջման անմիջական սպառնալիքից փրկված արևելահայության կյանքում, այլև լուսատու փարոս դարձավ դաժան հակատագրի բերումով աշխարհով մեկ սփռված գաղութահայ աշխատավորության համար: Սովետական Հայաստանը հենց սկզբից ոչ միայն իր հնարավորությունների սահմաններում իրականացրեց սփյուռքահայ աշխատավորների առավել դժվարին կացության մեջ գտնվողների հայրենադարձությունը, այլև բազմաթիվ միջոցներով, ու հենց իր գոյության փաստով, օգնեց գաղթաշխարհում ազգապահպանության դժվարին գործին, զորավիգ եղավ ապազգայնացման դեմ սփյուռքահայ զանգվածների մղած պայքարին:

Հայ ժողովուրդը, որը դարեր շարունակ տեսել ու զգացել էր միայն կոտորածների և բռնագաղթերի սարսափներն ու դառնությունները, սովետական կարգերի շնորհիվ, եղբայրական սովետական մյուս ժողովուրդների, առաջին հերթին ռուս մեծ ժողովրդի բազմակողմանի օգնության շնորհիվ, հնարավորություն ստացավ հավաքվելու իր նոր, սոցիալիստական հայրենիքում: Դրանում ակնառու կերպով դրսևորվեցին սոցիալիստական սիս-

տեմի մեծ առավելությունները, նախկինում ամեն կողմից հալածված ու բզկտված հայ ժողովրդի նկատմամբ կոմունիստական կուսակցության լենինյան ազգային քաղաքականության կենսագործման փայլուն վկայությունն ու հաստատումը:

Պատմության դասերն ու փորձը միշտ էլ խորիմաստ են և ուսանելի: Հայ գաղթականության հարյուրամյակների պատմության փորձն ու դասերը վկայում են, որ վերջիվերջո, վաղ թե ուշ, սփյուռքահայությունը, որքան էլ հայրենասեր ու ավանդապահ լինի, դատապարտված է անխուսափելի ուծացման և անհետացման: Հայկական գաղօջախները, ցրված լինելով աշխարհի բոլոր կողմերում, ենթակա են նրանց ընդգրկած երկրների անխուսափելի ազդեցություններին, որոնք ամեն ժամ, ամեն օր նրանց տանում են դեպի ձուլում: Ուստի գաղութահայության փրկության միակ ու իրական ուղին հայրենադարձությունն է, մայր հայրենիքում ապրող հայության հետ վերամիավորումը, ազգահավաքումը:

Այսպիսով, գաղութահայ ազգային կյանքի վրա որոշակի դեր ու ազդեցություն ունի Սովետական Հայաստանը, հայրենի հողի վրա ապրող ժողովուրդը: Որքան մեծ լինի մայր հայրենիքում ապրող հայոց թիվը, որքան զարգացած ու զորեղ լինի նրա տնտեսությունը, ծաղկուն մշակույթը, այնքան ավելի կծավալվեն գաղութների կապերը հայրենի երկրի հետ, այնքան ավելի կհարստանա ու բովանդակալից կդառնա նրանց ազգային հասարակական և մշակութային կյանքը, ուստի և այնքան ուշ կկատարվի ձուլումը:

Ահա թե ինչու, ինչպես սովետական կառավարությունը, այնպես էլ սփյուռքահայ բոլոր առաջադիմական, հայրենասեր ուժերը ամեն կերպ շահագրգռված են մայր հայրենիքի և սփյուռքի միջև սերտ կապերի հաստատմամբ ու զարգացմամբ, անվերապահորեն պաշտպանում են հայրենադարձության գաղափարը, աշխատում որքան կարելի է ավելի շատ տարագիրների ներգաղթի միջոցով փոխադրել հայրենիք: Սփյուռքում ներգաղթի դեմ հանդես են գալիս դաշնակցությունը և նրա հետ կապված հետադիմական խավերը, դրա մեջ տեսնելով իրենց վերջնական մահավճիռը:

Աշխարհով մեկ սփռված տարագիր հայության հայրենադարձությունը, որն սկսվել է դեռևս սովետական իշխանության արշալույսին և շարունակվում է մինչև օրս, սոցիալիզմի շնորհիվ



մեր ժողովրդի ձեռք բերած մեծագույն նվաճումներից մեկն է, պատմական բազմանշանակալից մի իրողություն մեր բազմադարյան պատմության մեջ: Հայրենադարձությունը հայ ժողովրդի ազգահավաքման, ազգային կոնսոլիդացիայի ու հետագա զարգացման կարևոր գործոններից մեկն է:

Սակայն պետք է խոստովանել, որ ինչպես ընդհանրապես սփյուռքահայության պատմությունը, այնպես էլ մասնավորապես հայրենիք—սփյուռք առնչությունների և սփյուռքահայերի հայրենադարձության պատմությունը մինչև այժմ բավարար ուսումնասիրության չեն ենթարկվել և գիտականորեն լուսաբանվել: Օգտվելով այդ հանգամանքից, բուրժուա-ազգայնական, եվրոպական, ամերիկյան ու թուրքական պատմագրությունը և պետական գործիչները հաճախ միտումնավոր կերպով խեղաթյուրել են հարցերը, շարախոսել սովետական իշխանության հասցեին, զրպարտել նրան: Այդ գործում հատկապես ակտիվորեն են հանդես գալիս Հայաստանից ընդմիշտ վտարված բուրժուա-ազգայնական դաշնակցություն կուսակցության գրչակները: Նրանք, կամայականորեն կեղծելով փաստերը, փորձում են մեղադրել սովետական կառավարությանը սփյուռքահայության նկատմամբ անտարբերության ու անհոգատարության մեջ:

Հայրենիք—սփյուռք առնչությունների և հայրենադարձության պատմության լուսաբանումը ոչ միայն բացահայտում է կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության հոգատարությունը հայ տարագիրների նկատմամբ, այլև մերկացնում է դաշնակների ու նրանց օտարերկրյա հովանավորների լարախաղացությունների էությունն ու նպատակը:

Այստեղից էլ բխում է վերոհիշյալ պրոբլեմների քաղաքական ու պատմագիտական կարևոր նշանակությունը, դրանց լուսաբանման խիստ անհրաժեշտությունն ու կարևորությունը:

Եթե սփյուռքահայերի հայրենադարձության պատմությունը, մասնավորապես 1920—1940 թվականների ժամանակահատվածը, ինչ-որ չափով լուսաբանվել է, ապա 1946—1948 թվականների և հետագա տարիների հայրենադարձության պատմությունը միայն թռուցիկ կերպով է շոշափվել ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի կողմից հրատարակված «Հայ ժողովրդի պատմություն» բազմահատորյակի 8-րդ հատորում[1], «ՀԿԿ պատ-

[1] *«Հայ ժողովրդի պատմություն», հ. 8, «Հայ ժողովուրդը Հայրենական*

մության ուրվագծերում»[2] և որոշ մենագրություններում ու հոդվածներում[3]: Առանց սխալվելու կարելի է ասել, որ ուղղակի բաց է մնացել հայրենիք—սփյուռք առնչությունների ավելի քան 60-ամյա պատմությունը՝ գրեթե երբեք չդառնալով հատուկ ուսումնասիրության նյութ:

Ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին տեղի ունեցած սփյուռքահայ աշխատավորների հայրենադարձությունը որոշ չափով լուսաբանվել է ՀՍԽՀ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի կողմից հրատարակված «Խորհրդային Հայաստան—1920—1925» ժողովածուի մեջ[4], Հովհ. Հակոբյանի «Խորհրդային Հայաստան» գրքում[5], Ս. Խուդգարյանի «Ներգաղթը և գաղթականության բնակեցումը Հայաստանում» հոդվածում[6], ինչպես նաև այդ ժամանակաշրջանի պատմությանը նվիրված մի շարք այլ մենագրություններում և սովետահայ ու սփյուռքահայ պարբերական մամուլում, գիտական հանդեսներում[7]:

---

*մեծ պատերազմի և հետպատերազմյան կոմունիստական շինարարության տարիներին (1941—1965)», ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1970:*

[2] *«Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր», «Հայաստան» հրատ., Երևան, 1967:*

[3] *Գ. Ե. Ավագյան, Հայկական ՍՍՀ բնակչությունը, Երևանի համալսարանի հրատ., Երևան, 1975, Ն. Սարգսյան, ՀԿԿ և կառավարության միջոցառումները սփյուռքահայերի հայրենադարձությունը նախապատրաստելու ուղղությամբ (1946—1948 թթ.), տե՛ս «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, 1983 թ., № 1, էջ 152—159, նույնի՝ «ՀԿԿ գործունեությունը սփյուռքահայերի հայրենադարձության կազմակերպման և նրանց սոցիալիստական շինարարության մեջ ներգրավելու ուղղությամբ (1946—1948)», տե՛ս ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», ամսագիր, 1983 թ., № 8, էջ 13—19:*

[4] *«Խորհրդային Հայաստան—հինգ տարի՝ 1920—1925», հոդվածների ժողովածու, հրատ. ՀՍԽՀ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի, Երևան, 1926:*

[5] *Հովհ. Հակոբյան, Խորհրդային Հայաստան (տպավորություններ և ուսումնասիրություններ), Փարիզ, 1929:*

[6] *Ս. Խուդգարյան, Ներգաղթը և գաղթականության բնակեցումը Հայաստանում, տե՛ս «Նոր ուղի», ամսագիր, Երևան, 1929 թ., № 6, էջ 122—131:*

[7] *Ա. Մ. Հակոբյան, Սովետական Հայաստանը ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանում (1921—1925 թթ.), ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1955, էջ 315—317:* **С. В. Хармандарян**, Армянская ССР в первый год новой экономической политики, изд. АН Арм. ССР, Ереван, 1955, стр. 144—151. *Վ. Ն. Ներկարարյան, Հայաստանի կոմունիստական պարտիան երկրի ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանում, Հայպետհրատ, Երևան, 1956, էջ 279—284: Հ. Մ. Էլչիբեկյան, Վաս-*



Նախապատերազմյան հնգամյակների տարիներին կատարված հայրենադարձությունը շոշափվել է նաև «Ուրվագծեր Սովետական Հայաստանի պատմության» պրակներում[8], «Հայ ժողովրդի պատմություն» բազմահատորյակի 7-րդ հատորում[9] և «Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր»[10] կոլեկտիվ աշխատություններում: Սակայն վերոհիշյալ աշխատություններից ոչ մեկը նպատակ չի ունեցել ամբողջական ձևով ներկայացնել սփյուռքահայերի հայրենադարձության պատմությունը և միայն կողմնակի ու հպանցիկ կերպով է անդրադարձել դրան:

Այդ ժամանակաշրջանի հայրենադարձության և նրան առնչվող հարակից այլ հարցերի ամբողջական պատմությունը շարադրելու առաջին փորձը կատարվել է մեր կողմից հրապարակված մի շարք հոդվածներում[11] և «Արևմտահայերի բռնագաղ-

---

*պուրականի հայերը Միջագետքում և նրանց վերադարձը Սովետական Հայաստան, տե՛ս ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ. սերիա), Երևան, 1949 թ., № 2, էջ 17—26 և այլն:*

[8] *Հ. Մ. Էլչիբեկյան, Ա. Մ. Հակոբյան, Ուրվագծեր Սովետական Հայաստանի պատմության, պրակ 1-ին, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1954, Վ. Գ. Մելիքսեթյան, Հ. Ս. Կարապետյան, Ուրվագծեր Սովետական Հայաստանի պատմության, պրակ 2-րդ, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1958, Ծ. Պ. Աղայան, Ե. Մ. Խալեյան, Ուրվագծեր Սովետական Հայաստանի պատմության, պրակ 3-րդ, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1960:*

[9] *«Հայ ժողովրդի պատմություն», հ. 7, «Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում. ՀՍՍՀ սոցիալիստական շինարարության ժամանակաշրջանում (1917—1941)», ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1967:*

[10] *«Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր», «Հայաստան» հրատ., Երևան, 1967:*

[11] *Հ. Ու. Մելիքսեթյան, ՀԿԿ-ը և նրա դերը հայրենիքի հետ սփյուռքահայ աշխատավորների կապերի ամրապնդման գործում, տե՛ս ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ. սերիա), Երևան, 1959 թ., № 8, էջ 31—48, նույնի՝ «Սովետական իշխանության առաջին քայլերը հայ գաղթականության հարցի լուծման ուղղությամբ (1921—1922)», տե՛ս ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ. սերիա), Երևան, 1960 թ., № 3, էջ 3—20, նույնի՝ «Հայ գաղթականության հարցը Ազգերի լիգայում», տե՛ս ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ. սերիա), Երևան, 1961 թ., № 9, էջ 43—60, նույնի՝ «Սփյուռքահայերի հայրենադարձությունը Սովետական Հայաստան 1921—1925 թթ..», տե՛ս ՀՍՍՀ ԳԱ «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 1961 թ., № 2, էջ 142—149:*

թը և սփյուռքահայերի հայրենադարձությունը Սովետական Հայաստան (1915—1940 թթ.)» մենագրության մեջ[12]:

Ուղղակի պետք է խոստովանել, որ ոչ միայն հայրենիք—սփյուռք առնչությունների և հայրենադարձության պատմության լուսաբանումը, այլև ընդհանրապես սփյուռքահայության պատմության ուսումնասիրությունը դեռևս գոհացուցիչ վիճակի չի հասցված: Սովետահայ պատմաբանները միայն վերջին տասնամյակում են ձեռնամուխ եղել այդ պրոբլեմների արմատական հետազոտմանը, սակայն մինչև այժմ արվածը դեռևս բավարար համարել չի կարելի: Ներկայումս հայ ժողովրդի մի զգալի հատվածը շարունակում է մնալ գաղթաշխարհում, իր հայրենիքից դուրս: Մոտ հինգ տասնյակ երկրներում կան հայկական համայնքներ, որոնք ունեն որոշակի ազգային կյանք, քաղաքական կուսակցություններ, կրթական հաստատություններ, մշակութային, բարեգործական, հայրենակցական, երիտասարդական, մարզական և այլ բնույթի կազմակերպություններ ու միություններ, պատկառելի քանակ կազմող պարբերական մամուլ և այլ հրատարակություններ, որոնց գործունեության լուսաբանումն ու գնահատումը պետք է լինի սովետահայ պատմագիտության կարևոր խնդիրներից մեկը:

Այս ամենը նկատի ունենալով, կարելի է վճռականորեն պնդել, որ բնավ հնարավոր չէ ներկայացնել հայ ժողովրդի ամբողջական ու գիտական պատմությունը առանց սփյուռքահայության բազմաբովանդակ կյանքի ու անցած ուղու ընդգրկման, որքան էլ դա կապված լինի գործնական դժվարությունների հետ:

Այժմ Սովետական Հայաստանի տարբեր գիտական հիմնարկներ և զգալի թվով գիտնականներ ձեռնամուխ են եղել սփյուռքահայության պատմության առանձին հարցերի ուսումնասիրությանը: ՀՍՍՀ ԳԱ նախագահությանն առընթեր ստեղծվել է սփյուռքահայ համայնքների և մշակույթի պատմության բաժին, որն անմիջականորեն զբաղված է հայկական գաղթօջախների պատմության ու մշակույթի ուսումնասիրությամբ: Այդ պրոբլեմով են զբաղվում նաև ՀՍՍՀ ԳԱ պատմության և

[12] Հ. Ռ. Մելիքսեթյան, *Արևմտահայերի բռնագաղթը և սփյուռքահայերի հայրենադարձությունը Սովետական Հայաստան (1915—1940 թթ.)*, *Երևանի համալսարանի հրատ., Երևան, 1975*:



արևելագիտության ինստիտուտների մի խումբ պատմաբաններ, ուստի պետք է հուսալ, որ առաջիկայում սփյուռքահայության պատմության վերաբերյալ հրապարակ կգան գիտական լուրջ հետազոտություններ:

Սփյուռք—հայրենիք առնչությունների լուսաբանման ուղղությամբ մինչև այժմ մեզանում հրատարակված գործերից պետք է նշել ականավոր կուսակցական և պետական գործիչներ Ալ. Մյասնիկյանի (Մարտունի) և Աշ. Հովհաննիսյանի մի շարք աշխատություններ, որոնք գործնական կարևոր նշանակություն ունենալուց բացի, որոշակի դեր խաղացին նաև սփյուռքագիտության զարգացման ուղղությամբ[13]:

«Կուսակցությունները գաղութահայության մեջ» խորագիրը կրող աշխատության մեջ Ալ. Մյասնիկյանը, իրեն հատուկ քաղաքական նպատակասլացությամբ և գիտական խորությամբ, վերլուծելով սփյուռքահայ կուսակցությունների գործունեությունը, անդրադառնում է նաև գաղութահայության սոցիալ-տնտեսական կյանքին, ցույց տալիս նրա հետագա պայքարի ճշմարիտ ուղին:

Աշ. Հովհաննիսյանը «Գաղութահայ խնդիրներ» գրքույկում, անդրադառնալով սփյուռքահայության նկատմամբ տարվող քաղաքականությանը և նշելով այդ բնագավառում եղած որոշակի թերությունները, ցույց է տալիս գաղութահայ աշխատավորության ինքնակազմակերպման, հայրենիք—սփյուռք կապերի զարգացման գործնական ուղիները:

Ականավոր մարքսիստ-լենինյաններ Ալ. Մյասնիկյանի և Աշ. Հովհաննիսյանի վերոհիշյալ գործերից հետո, գրեթե շուրջ տասնամյակ, հատկապես անհատի պաշտամունքի տարիներին, սովետահայ պատմագրությունը սփյուռքի վերաբերյալ որևէ լուրջ գործ չտվեց: Միայն ՍՄԿԿ XX համագումարից հետո սովետահայ պատմաբանները ձեռնարկեցին սփյուռքի հարցերի ուսումնասիրության գործը: Այդ բնագավառում երևան եկած առաջին ուսումնասիրություններից մեկը եղավ Ս. Գասպարյանի «Սփյուռքահայ գաղթօջախներն այսօր» խորագրով աշխատու-

[13] Ալ. Մյասնիկյան (Մարտունի), *Կուսակցությունները գաղութահայության մեջ*, *Պետհրատ, Թիֆլիս, 1924*, նույնի՝ *Գաղութահայ աշխատավորությանը*, *Նյու Յորք, 1923*, Աշ. Հովհաննիսյան, *Գաղութահայ խնդիրներ*, *Երևան, 1925*:

թյունը[14], որը, թեպետ համառոտ, այնուամենայնիվ ամփոփ տվյալներ է պարունակում հիմնական հայկական գաղթօջախների հասարակական-քաղաքական կյանքի, կրթական օջախների և այլ հարցերի մասին: Ժամանակին այն լավ ընդունելություն գտավ, սակայն իր պարունակած տվյալներով ներկայումս բավականին հնացած է:

Սփյուռքում գործող հայկական քաղաքական կուսակցությունների, մասնավորապես երկրորդ համաշխարհային պատերազմից մինչև 60-ական թվականների կեսերն ընկած ժամանակաշրջանի գործունեության վերլուծությանն է նվիրված Լ. Խուրշուդյանի «Սփյուռքահայ կուսակցությունները ժամանակակից էտապում»[15] շահեկան, փաստական հարուստ նյութերով հագեցած և միանգամայն ճշմարտացի եզրահանգումներ պարունակող մենագրությունը: Ի դեպ, վերջաբանում հեղինակը համառոտակի անդրադարձել է նաև սփյուռքահայերի 1946—1948 թվականների զանգվածային հայրենադարձությանը և դրա նկատմամբ գաղութահայ կուսակցությունների դիրքորոշմանը:

Հայ գաղթավայրերի մինչհոկտեմբերյան ժամանակաշրջանի պատմությունը շարադրելու հետ մեկտեղ Ա. Գ. Աբրահամյանը «Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության» երկրորդ հատորի վերջում[16] թռուցիկ ակնարկով անդրադարձել է Սովետական Հայաստանի և սփյուռքահայության փոխհարաբերություններին, շոշափելով նաև սովետական իշխանության տարիներին՝ մինչև 1948 թվականը, կատարված հայրենադարձությունը:

Ետպատերազմյան տարիներին հանուն խաղաղության, դեմոկրատիայի և սոցիալական արդարության սփյուռքահայության մղած պայքարը իր արտացոլումն է գտել Հր. Սիմոնյանի «Սփյուռքահայությունը սոցիալ-քաղաքական պայքարի ուղի-

[14] Ս. Գասպարյան, *Սփյուռքահայ գաղթօջախներն այսօր*, Հայպետհրատ, Երևան, 1962:

[15] Լ. Ա. Խուրշուդյան, *Սփյուռքահայ կուսակցությունները ժամանակակից էտապում*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1964:

[16] Ա. Գ. Աբրահամյան, *Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության*, հ. Ա, Հայպետհրատ, Երևան, 1964, հ. Բ, «Հայաստան» հրատ., Երևան, 1967:



ներում» ծավալուն մենագրության մեջ[17]: Որպես այդ գրքի կարևոր արժանիք պետք է նշել այն հանգամանքը, որ հեղինակն աշխատել է սփյուռքահայ առաջադիմական ուժերի գործունեությունը քննարկել տեղաբնակ ժողովուրդների և նրանց քաղաքական կազմակերպությունների հետ սերտ առնչության մեջ:

Սովետահայ պատմագրության մեջ որոշ քայլեր են կատարվել նաև սփյուռքահայ առանձին գաղթօջախների ու նրանց հասարակական-քաղաքական կյանքի ուսումնասիրության ուղղությամբ:

Սփյուռքահայության ժամանակակից պատմության տարբեր կողմերն իրենց լուսաբանությունն են գտել Կ. Դալլաքյանի երկու աշխատություններում՝ «Սփյուռքահայ առաջադիմական կազմակերպությունները խաղաղության և դեմոկրատիայի համար մղվող պայքարում» և «Լիբանանահայ դեմոկրատական մամուլի պատմությունից»[18]: Գիտական որոշակի հետաքրքրություն է ներկայացնում հատկապես նրա վերջին մենագրությունը, որտեղ հեղինակը քննության ենթարկելով լիբանանահայ «Ժողովրդի ձայն» և «Մեր նշանաբանն է հառաջ» կոմունիստական թերթերի գործունեությունը, նրանց միջոցով ցույց է տալիս լիբանանահայության տնտեսական, հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքը:

Ուշագրավ գործ է նաև Ռ. Խաչատրյանի «Արտասահմանի հայ կոմունիստական մամուլի պատմությունից» մենագրությունը[19]: Նրանում հեղինակը Բուլղարիայի կոմկուսի կենտրոնական կուսակցական արխիվում հայտնաբերած նոր վավերագրերի և «Կարմիր լուրեր» արտասահմանյան առաջին կոմունիստական հայ թերթի նյութերով ցույց է տալիս բուլղարահայ աշխատավորության մասնակցությունը երկրի 1919—1923 թվականների հեղափոխական շարժումներին: Այդ իմաստով, կարելի է ասել, որ Ռ. Խաչատրյանի տվյալ աշխատությունը փաս-

[17] Հր. Սիմոնյան, *Սփյուռքահայությունը սոցիալ-քաղաքական պայքարի ուղիներում*, «Հայաստան» հրատ., Երևան, 1968:

[18] Կ. Դալլաքյան, *Սփյուռքահայ առաջադիմական կազմակերպությունները խաղաղության և դեմոկրատիայի համար մղվող պայքարում*, ՀՍՍՀ «Գիտելիք» ընկերության հրատ., Երևան, 1962, նույնի՝ «Լիբանանահայ դեմոկրատական մամուլի պատմությունից», «Հայաստան» հրատ., Երևան, 1964:

[19] Ռ. Հ. Խաչատրյան, *Արտասահմանի հայ կոմունիստական մամուլի պատմությունից*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1960:

տարեն մեզանում հիմք դրեց սփյուռքահայ կոմունիստական շարժման պատմության գիտական ուսումնասիրությանը:

Սովետահայ պատմաբանների հատուկ հետաքրքրությանն են արժանացել արաբական արևելքի ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարին սփյուռքահայերի մասնակցության հարցերը: Արաբական արևելքի երկրներում ապրող հայության սոցիալ-տնտեսական իրավիճակի, մշակութային ու կրթական կյանքի մասին բավականին հանգամանալից տեղեկություններ է տալիս Լ. Տեր-Մկրտչյանի «Հայերը արաբական արևելքի երկրներում» գիրքը[20]:

Սփյուռքահայ առաջադիմական ուժերին հակադիր գործում են նաև հետադիմական, արևմուտքի իմպերիալիստական տերությունների հետ գործակցող ուժեր, որոնց գործունեության մերկացմանն են նվիրված սովետահայ հեղինակների մի շարք աշխատություններ: Դրանցից պետք է նշել հատկապես Ջ. Կիրակոսյանի և Հ. Հակոբյանի «Դաշնակները իմպերիալիզմի գործակալներն են Մերձավոր արևելքի երկրներում»[21] և Ա. Թադևոսյանի «Դամասկոսյան դատավարության հետքերով»[22] գրքույկները: Այդ աշխատություններում մերկացված է Մերձավոր արևելքում դաշնակների տարբերկրյա իմպերիալիստական հետախուզական գործակալություններին մատուցած ծառայությունը, նրանց հակահեղափոխական գործունեությունը, որն զգալի վնաս է պատճառում նաև մերձավորարևելյան ժողովուրդների հակաիմպերիալիստական ազգային-ազատագրական պայքարին:

Լիբանանյան և սիրիական ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի և դրանում հայության մասնակցության հարցերն են լուսաբանված նաև Ն. Հովհաննիսյանի և Հ. Թոփուզյանի մենագրություններում[23]:

Եգիպտահայ գաղութի ներքին կյանքը, սոցիալ-տնտեսական

---

20 **Л. Х. Тер-Мкртчян**, Армяне в странах арабского востока, изд. «Наука», М., 1965.

21 **Ջ. Կիրակոսյան, Հ. Հակոբյան**, *Դաշնակները իմպերիալիզմի գործակալներն են Մերձավոր արևելքի երկրներում, Հայպետհրատ, Երևան, 1960։*

22 **Ա. Ե. Թադևոսյան** *Դամասկոսյան դատավարության հետքերով, «Հայաստան» հրատ., Երևան, 1968։*

23 **Ն. Հ. Հովհաննիսյան**, *Ազգային-ազատագրական պայքարը Լիբանանում (1939—1958), ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1967,* **Հ. Խ. Թոփուզյան**, *Հայերի մասնակցությունը Սիրիայի և Լիբանանի ազգային-ազատագրական շարժումներին, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1968։*



ու քաղաքական դրությունը և հայ-եգիպտական հարաբերությունների պատմությունն է հետազոտված Հ. Թոփուզյանի «Եգիպտոսի հայկական գաղութի պատմություն (1805—1952)» ծավալուն և փաստալից մենագրության մեջ[24]:

Հունաստանի հայ գաղութի 20-ական թվականների պատմությանն է նվիրված Պ. Կոկինոսի «Հունահայ գաղութի պատմությունից (1918—1927)» աշխատությունը[25]: Գրքում հեղինակը մանրամասնորեն շարադրել է տվյալ ժամանակաշրջանում հունահայ աշխատավորության սոցիալ-տնտեսական վիճակը, ինչպես նաև առաջադիմական ուժերի, մասնավորապես հայ կոմունիստների ծավալած բազմակողմանի գործունեությունը հայ աշխատավորությանը երկրի հասարակական-քաղաքական կյանքի մեջ ներգրավելու ուղղությամբ:

Բուլղար և հայ ժողովուրդների բարեկամության, օսմանյան լծի դեմ համատեղ պայքարի և հատկապես համաշխարհային երկրորդ պատերազմի տարիներին ֆաշիզմի դեմ ակտիվորեն մարտնչած բուլղարահայության հերոսական սխրագործություններն են լուսաբանված Ջ. Ղազարյանի «Հայ-բուլղարական բարեկամության պատմությունից» գրքույկում[26]:

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ֆաշիզմի դեմ ֆրանսահայության մղած պայքարին են նվիրված Տ. Դրամբյանի «Ֆրանսահայ կոմունիստները դիմադրության տարիներին (1941—1944)» և «Նրանք մարտնչել են հանուն Ֆրանսիայի» գրքերը[27], որոնցում արխիվային փաստաթղթերի, պարբերական մամուլի և դիմադրության շարժման մասնակիցների հուշերի միջոցով հեղինակը ցույց է տվել Ֆրանսիայում ապրող հայերի անձնազոհ պայքարը ֆաշիստական զավթիչների և նրանց վիշիական դրածոների լծից երկիրը ազատագրելու գործում:

---

24 **Հ. Խ. Թոփուզյան**, *Եգիպտոսի հայկական գաղութի պատմություն (1805—1952), ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1978։*

25 **Պ. Կոկինոս**, *Հունահայ գաղութի պատմությունից (1918—1927), ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1965։*

26 **Ջ. Մ. Ղազարյան**, *Հայ-բուլղարական բարեկամության պատմությունից, «Հայաստան» հրատ., Երևան, 1978։*

27 **Տ. Ս. Դրամբյան**, *Ֆրանսահայ կոմունիստները դիմադրության տարիներին (1941—1944), «Միտք» հրատ., Երևան, 1967,* նույնի՝ «Они сражались за Францию», изд. Ереванского университета, Ереван, 1981.

Սփյուռքահայ բուրժուական փիլիսոփայության, հասարակական-քաղաքական մտքի ուսումնասիրության ուղղությամբ որոշ գործ է կատարել Հ. Գաբրիելյանը «Ժամանակակից սփյուռքահայ բուրժուական ռեակցիոն փիլիսոփայությունը» մենագրության մեջ[28]: Սակայն հարկ է նշել, որ հեղինակը հաճախ տուրք է տվել գռեհիկ-սոցիոլոգիզմին և սփյուռքահայ բոլոր քաղաքական կուսակցություններն ու հոսանքները, անշուշտ, բացառյալ կոմունիստներին, մտցվել են միևնույն կաղապարի մեջ: Չկա նրանց հայացքների նկատմամբ տարբերակված մոտեցում, որն, իհարկե, ճիշտ չէ:

Սփյուռքահայության սոցիալ-քաղաքական պատմության մի շարք հարցեր են շոշափված նաև Գ. Գալոյանի «Անդրկովկասում սոցիալիստական հեղափոխության և կոմունիստական շինարարության պատմության կեղծարարության դեմ» աշխատության մեջ[29]: Մենագրության մեջ հեղինակը փաստական հարուստ նյութերով մերկացրել է սոցիալիստական հեղափոխության և սովետական իշխանության հասցեին բուրժուական պատմագրության զրպարտությունները, անդրադարձել է դեպի հայրենիք սփյուռքահայ առաջադիմական ուժերի ունեցած դրական վերաբերմունքին:

Սփյուռքահայության պատմության և սփյուռք-հայրենիք առնչությունների վերաբերյալ ուշագրավ մի շարք հոդվածներ են լույս տեսել նաև գիտական հանդեսներում ու պարբերական մամուլում, մասնավորապես Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի օրգաններ «Սովետական Հայաստան» ամսագրում և «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթում: Դրանցից կարելի է հիշատակել հատկապես Ս. Գասպարյանի «Սփյուռքը հայրենիքի կողքին» և Գ. Խոլոպյանի «Սփյուռքի մի քանի հիմնական խնդիրների մասին» հոդվածները[30]:

---

[28] Հ. Գաբրիելյան, *Ժամանակակից սփյուռքահայ բուրժուական ռեակցիոն փիլիսոփայությունը*, Երևանի համալս. հրատ., Երևան, 196[illegible]:

[29] Գ. Գալոյան, *Անդրկովկասում սոցիալիստական հեղափոխության և կոմունիստական շինարարության պատմության կեղծարարության դեմ*, Հայպետհրատ, Երևան, 1961:

[30] Ս. Գասպարյան, *Սփյուռքը հայրենիքի կողքին*, տե՛ս «Լենինյան ուղիով», ամսագիր, 1963 թ., № 5, էջ 44—52, և Գ. Խոլոպյան, *Սփյուռքի մի քանի հիմնական խնդիրների մասին*, տե՛ս ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ. սերիա), 1963 թ., № 8, էջ 63—76:



Սփյուռքահայ գաղթօջախները կատարած իր երկու ուղևորություններից ստացած անմիջական տպավորություններն է հաղորդել սովետահայ բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանը «Քարավանները դեռ քայլում են» և «Խճանկար հոգու և քարտեզի գույներից» գրքերում[31]: Դրանցից առաջինը նվիրված է Մերձավոր արևելքի երկրների՝ մասնավորապես Լիբանանի, Սիրիայի և Եգիպտոսի, իսկ երկրորդը՝ ԱՄՆ-ի և Կանադայի հայկական գաղթօջախների կյանքին ու ազգապահպանման համար մղվող պայքարին:

Մեծ հայրենադարձության տարիներին Սովետական Հայաստան եկած և հայրենիքում իրենց նոր կյանքն ստեղծած բազմաթիվ բանվորների, գյուղացիների, բժիշկների, գիտնականների ու արվեստագետների մասին է պատմում գրող Ստեփան Կուրտիկյանի «Հայրենի հողի վրա» վավերագրական ակնարկների ժողովածուն[32]:

Թեպետ հարևանցիորեն, այնուամենայնիվ, սփյուռքահայության կյանքի, սփյուռք—հայրենիք կապերի հարցերին են անդրադարձել նաև Մանվել Բաբլոյանը[33] և Գեղամ Սևանը[34] սփյուռքահայ մամուլին և գրականությանը վերաբերող իրենց ուսումնասիրություններում:

Հայկական գաղթօջախների պատմության ուսումնասիրության ուղղությամբ որոշակի աշխատանք է կատարվել նաև սփյուռքահայ մտավորականների կողմից: Սփյուռքում գործող հայրենակցական միությունները, հատկապես վերջին երեսնամյակում, լույս են ընծայել Արևմտյան Հայաստանի տարբեր գավառների ու քաղաքների, ինչպես նաև առանձին գաղթօջախների պատմությունը լուսաբանող բազմաթիվ ստվարածավալ հատորներ, որոնց մեջ զգալի տեղ է հատկացված նաև այդ քաղաքների ու գավառների վերապրող սերունդների ժամանակակից

---

[31] Ս. Կապուտիկյան, *Քարավանները դեռ քայլում են*, «Հայաստան» հրատ., Երևան, 1964, *«Խճանկար հոգու և քարտեզի գույներից»*, «Սովետական գրող» հրատ., Երևան, 1976:

[32] Ստ. Կուրտիկյան, *Հայրենի հողի վրա*, Հայպետհրատ, Երևան, 1960:

[33] Մ. Բաբլոյան, *Սփյուռքահայ մամուլի պատմությունից. «Անի» (1946—1955)*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1965:

[34] Գեղամ Սևան, *Սփյուռքահայ գրականության պատմության ուրվագծեր (1920—1945)*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1980:

գործունեությանը թե՛ սփյուռքում և թե՛ հայրենիքում[35]:

Հայ գաղթականության և գաղթօջախների պատմության ուսումնասիրության* բնագավառում մեծ աշխատանք է կատարել հատկապես սփյուռքահայ բազմավաստակ պատմաբան Ա. Ալպոյաճյանը: Առանձնապես մեծաքանակ փաստական նյութ է պարունակում նրա «Պատմություն հայ գաղթականության» եռահատոր աշխատությունը[36]: Արժեքավոր է նաև նույն հեղինակի «Արաբական Միացյալ Հանրապետության Եգիպտոսի նահանգը և հայերը» մենագրությունը[37]:

Սփյուռքահայության պատմության և սփյուռք—հայրենիք փոխհարաբերությունների լուսաբանման իմաստով ուշագրավ աշխատություն է Ա. Անդրեասյանի «Սփյուռքը և հայրենիքը» գիրքը[38], որտեղ հեղինակը հանգամանորեն վերլուծում է սփյուռքահայության տրամադրությունները, նոր սերնդի հոգեբանական դիմափոխությունը և այլ երևույթներ: Հեղինակը իրավացիորեն ընդգծում է սփյուռք—հայրենիք կապերի ամրապնդման կենսական կարևորությունը ազգապահպանման դժվարին

[35] Ա. Ալպոյաճյան, *Պատմութիւն Եգիպտոսի հայոց: Տեղագրական և ազգագրական տեղեկութիւններով:* Հրատ. Նյու Յորքի Եգիպտոսի կրթասիրաց միութեան, Գահիրէ, 1952: Նույնի՝ *Պատմութիւն Մալաթիոյ հայոց: Տեղագրական, պատմական և ազգագրական տեղեկութիւններով:* Պէյրութ, 1961: «*Պատմութիւն Այնթէպի հայոց*», *աշխատասիրեց և խմբագրեց* Գևորգ Ա. Սարաֆյան, *հ. Ա—Բ, Լոս Անճելըս— Գալիֆորնիա, 1953:* «*Հուշարձան եղդրեցիներու (Եոզկաթ)*», *աշխատակցությամբ* տիկ. Նուրիցա Մ. Փիլիպոսյանի և Ավետիս Քեսաեքյանի (Ա. Կապենց), խմբ. Վահե Հայկ, *Ֆրեզնո, 1955:* Վահե Հայկ, *Խարբերդ և անոր ոսկեղեն դաշտը: Հուշամատյան ազգային, պատմական, մշակութային և ազգագրական, Ֆրեզնո, ԱՄՆ, 1957: Պատմութիւն Տարոնի աշխարհի, Պէյրութ, 1957,* Գ. Երեմյան, *Պատմութիւն Չարսանճագի հայոց, Պէյրութ, 1956: Պատմութիւն հայոց Արաբկիրի, կազմեց և հրատարակեց* Ա. Լ. Փոլատյան, *Նյու Յորք, 1969:* Ս. Գ. Փաշանյան, *Հուշամատյան Ռոդոսթոյի հայերուն (1606—1922), Պէյրութ, 1971:* Մ. Հ. Վարժապետյան, *Հայերը Լիբանանի մէջ, հ. 1, Պէյրութ, 1957, հ. 2—3, Պէյրութ, 1980:* Լևոն Զորմիսյան, *Համայնապատկեր արևմտահայոց մեկ դարու պատմութեան, հ. Ա—Ե, հ. Գ, Հայ սփյուռքը, գիրք Ա, Ֆրանսահայերու պատմութիւնը, Պէյրութ, 1975, և այլն:*

[36] Ա. Ալպոյաճյան, *Պատմութիւն հայ գաղթականութեան, Հայերու ցրումը աշխարհի զանազան մասերը, հ. Ա, Գահիրէ, 1941, հ. Բ, Գահիրէ, 1955, հ. Գ, Գահիրէ, 1961:*

[37] Ա. Ալպոյաճյան, *Արաբական Միացյալ Հանրապետութեան Եգիպտոսի նահանգը և հայերը, Գահիրէ, 1960:*

[38] Ա. Անդրեասյան, *Սփյուռքը և հայրենիքը, հրատ. «Զարթօնք» օրաթերթի, Պէյրութ, 1962:*



պայքարում, քննարկելով նաև հայրենադարձության հետ առնչվող մի շարք հարցեր: Այդ նույն ոգով է շարադրված նաև Գ. Ահարոնյանի «Մեծ երազի ճամփին վրա» գիրքը[39], որտեղ հեղինակը, սրափ կերպով վերլուծելով հայ ժողովրդի վերջին հարյուրամյակի պատմությունը, ռեալիստորեն գնահատում է իրադարձությունները և հիմնականում հանգում ճիշտ եզրակացությունների: Սակայն հարկ է նշել, որ վերջին երկու հեղինակները, լինելով ռամկավար-ազատական կուսակցության ներկայացուցիչներ, երբեմն փաստերը վերլուծում և գնահատում են զուտ ռամկավարական պատմագրության դիրքերից, ուստի նրանց եզրահանգումները ոչ միշտ են համոզեցուցիչ և ընդունելի:

Հայրենիք—սփյուռք առնչությունների և հայրենադարձության պատմության որոշ հարցեր շոշափվել են նաև Ս. Ծառուկյանի[40], Հարություն (Արթուր) Հելվաճյանի[41], Զ. Մսրլյանի[42] և ուրիշների աշխատություններում:

Վերոշարադրյալը ակնբախորեն վկայում է, որ սփյուռքահայության պատմության և հայրենիք—սփյուռք առնչությունների ուսումնասիրության բնագավառում, հատկապես վերջին քառասնամյակում, որոշակի աշխատանք է կատարված: Սակայն արվածը դեռևս բավարար չէ: Այսօրվա դրությամբ շատ անելիքներ կան մեր ժողովրդի սփյուռքահայ հատվածի պատմության ուսումնասիրման և գիտական իմաստավորման ուղղությամբ: Այդ նպատակն է հետապնդում նաև մեր սույն աշխատությունը, որը մի փորձ է լուսաբանելու առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Թուրքիայում կազմակերպված հայկական ցեղասպանությունից փրկված և բռնագաղթի միջոցով արաբական անապատները քշված ու աշխարհով մեկ սփռված տարագիր հայության ու Սովետական Հայաստանի փոխհարաբերությունների և սփյուռքահայերի հայրենադարձության իրականացման պատմությունը: Այդ առնչությամբ մենք աշխատել ենք մերկացնել նաև հայ ժողովրդի նկատմամբ արևմտյան տերությունների իմպերիալիստական քաղաքականությունը, հայ գաղթականության

[39] Գ. Ահարոնյան, *Մեծ երազի ճամփին վրա, Պէյրութ, 1964:*

[40] Ս. Ծառուկյան, *Նոր Հայաստան, նոր հայեր, Պէյրութ, 1981:*

[41] Վեր. Հրբ. Հելվաճյան, *Մեր աշխարհէն, Պէյրութ, 1966:*

[42] Զ. Մսրլյան, *Մկրտիչ Մսրլյանի ազգային-քաղաքական գործունեութիւնը, Պէյրութ, 1981:*

հարցում Ազգերի լիգայի երկդիմի խաղերը: Միաժամանակ ցույց է տրված օտարերկրյա բարեգործական մի շարք հաստատությունների, Հայաստանի օգնության կոմիտեի, հայրենակցական, վերաշինաց և այլ անուններով սփյուռքում գործող միությունների ու կազմակերպությունների գործունեությունը, մեծ հումանիստ Ֆր. Նանսենի ջանքերը հայ գաղթականության հարցի լուծման ուղղությամբ[43]: Աշխատության մեջ առանձին գլուխ է հատկացված հայրենիք—սփյուռք առնչությունների և հայրենադարձության նկատմամբ սփյուռքում գործող քաղաքական կուսակցությունների վերաբերմունքի բացահայտմանը, Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի գործունեության և հարակից այլ հարցերի լուսաբանմանը:

Ներկա ուսումնասիրության համար որպես հիմնական աղբյուր են ծառայել Հայկական ՍՍՀ Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության արխիվի, ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի կուսակցական արխիվի և Հայկական ՍՍՀ Կենտրոնական պետական պատմական արխիվի մի շարք ֆոնդերում եղած նյութերը, սովետահայ և սփյուռքահայ պարբերական մամուլը, թեմային փոքր ի շատե առնչվող գրականությունը: Աշխատության մեջ օգտագործված են կուսակցական ու պետական բազմաթիվ որոշումներ, հրապարակված սկզբնաղբյուրներ և այլ նյութեր: Սակայն հիմնական աղբյուրներ են ծառայել արխիվային վավերագրերը և պարբերական մամուլից քաղված նյութերը, որոնց ճնշող մեծամասնությունը առաջին անգամ բարձրացվում և գիտական շրջանառության մեջ է դրվում մեր կողմից:

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ տվյալ թեմայի լուսաբանումը կապված է մի շարք դժվարությունների և բարդությունների հետ, որոնք, անշուշտ, իրենց կնիքն են թողնում հետազոտության ընդհանուր ընթացքի վրա: Ամենից առաջ խիստ պակասում են սփյուռքահայության սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող նյութերը՝ անգամ հիմնական գաղթօջախների վերաբերյալ: Սովետահայ պատմաբանների համար սփյուռքահայության պատմության ուսումնասիրության կարևոր աղբյու-

[43] Այդ մասին տե՛ս նաև Մ. Արզումանյան, Նանսենը և Հայաստանը, «Հայաստան» հրատ., Երևան, 1977։



րը սփյուռքահայ պարբերական մամուլն է: Սակայն հատկապես նախապատերազմյան շրջանում խիստ անկանոն է եղել մեզ մոտ սփյուռքահայ մամուլի ստացումը, որը հնարավորություն չի ընձեռում վերը նշված հարցերի մասին գտնել անհրաժեշտ նյութեր: Խիստ անբավարար են պահպանվել և մշակվել նաև արխիվային նյութերը, հաճախ, միևնույն հարցի շուրջը եղած տարբեր փաստաթղթերում, հանդիպում են միանգամայն հակասական տվյալներ: Չեն պահպանվել և մեզ չեն հասել բազմաթիվ փաստաթղթեր, որոշումներ և այլ նյութեր, հանրապետությունում կուտակված արևմտահայ գաղթականության հարցի լուծման և սփյուռքահայերի հայրենադարձության իրականացման վերաբերյալ:

Հատկապես սկզբնական շրջանում դա հետևանք էր այդ աշխատանքների հապճեպ կատարման, սովետական պետական ապարատի նոր կազմակերպվածության, համապատասխան կադրերի ու անհրաժեշտ միջոցների բացակայության և այլ գործոնների:

Պետք է նշել, որ 70-ական թվականների կեսերից սկսած, որոշ հիմնարկությունների ու կազմակերպությունների գործերը դեռևս չեն մշակված ու պետական արխիվներին հանձնված, որը, ինչ խոսք, նույնպես որոշակի դժվարություններ ու բարդություններ է առաջ բերում հետազոտողի համար: Մեր կարծիքով ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր արխիվային վարչությունը պետք է խստորեն հետևի հատկապես պատմագիտական մեծ կարևորություն ու արժեք ներկայացնող նյութերը ժամանակին մշակելու և համապատասխան արխիվներին հանձնելու սահմանված կարգին, որը մեծապես կնպաստի ավելի հարուստ սկզբնաղբյուրների օգտագործմամբ գիտական ուսումնասիրությունների ստեղծման գործին:

Հարկ է եղել կատարել հիրավի տքնաջան ու բազմակողմանի պրպտումներ, որպեսզի հնարավորին չափ ճշմարտացիորեն վերականգնվի գերագույն ջանքեր կլանած անձնուրաց ու հայրենանվեր աշխատանքի այն պատկերը, որն ակնառու կերպով ցուցադրում է հայ ժողովրդի, մասնավորապես նրա սփյուռքահայ հատվածի, ճակատագրի նկատմամբ կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության ջերմ հոգատարությունն ու ուշադրությունը:

Սփյուռքահայերի հայրենադարձությունը մենք բաժանել ենք

երեք հիմնական փուլերի: Առաջին փուլն ընդգրկում է 1921—1936 թթ., երբ տարբեր երկրներից հայրենիք եկան մոտավոր տվյալներով 42286 տարագիրներ: Երկրորդ փուլն ընդգրկում է հիմնականում 1946—1948/49 թթ.: Այդ տարիներին տեղի ունեցավ սփյուռքահայերի ամենամեծ ու զանգվածային ներգաղթը, որը հայտնի է մեծ հայրենադարձություն անունով: Կարճ ժամանակամիջոցում արտասահմանյան 12 երկրից Սովետական Հայաստան եկավ 20646 ընտանիք (89750 մարդ): 1950-ական թվականներին անհատական կարգով հայրենիք են ներգաղթել ավելի քան 4000 սփյուռքահայեր:

Հայրենադարձության երրորդ փուլն սկսվել է 1962 թ. և շարունակվում է առ այսօր: 1962—1982 թթ. ընթացքում աշխարհի 30 երկրից հայրենադարձվել է 6795 ընտանիք (31920 մարդ):

Հայրենիք—սփյուռք առնչությունները և սփյուռքահայ աշխատավորների հայրենադարձությունը, որոնք ծայր առան սովետական իշխանության հաստատման հենց սկզբից, շարունակվում ու ծավալվում են մինչև օրս: Ազգապահպանման ու ազգահավաքման հայրենասիրական այդ իրադարձությունների վերաբերյալ դեռ շատ անելիք ունի սովետահայ պատմագիտությունը, ուստի սույն աշխատությունը մենք դիտում ենք միայն որպես այդ ուղղությամբ գցված առաջին հիմնավոր ակոսներից մեկը: Լինելով սփյուռքահայերի հայրենադարձության և հայրենիք—սփյուռք առնչությունների 60-ամյա ծավալուն ժամանակաշրջանի պատմության ուսումնասիրության առաջին փորձը, մեր աշխատությունը բնավ հավակնություն չունի ներկայացնելու այդ կնճռոտ պրոբլեմների հետ աղերսվող բոլոր հարցերի սպառիչ ու անթերի լուսաբանումը:

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՍՓՅՈՒՌՔԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ ԵՎ ՆՐԱ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄԸ ԴԵՊԻ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

*Հայ ժողովրդի արևմտյան հատվածը, որը երկար ժամանակ հեծում էր թուրքական վայրագ տիրապետության տակ, XIX դարի վերջին քառորդից սկսած պարբերաբար ենթարկվում էր բնաջնջման ու իր բնօրրանից արտաքսման։ Դա ուղղակի հարցականի տակ էր դնում նրա ֆիզիկական գոյությունը։*

*Աբդուլհամիդյան արյունոտ ռեժիմին փոխարինած երիտթուրքական կառավարությունը ոչ մի դրական քայլ չկատարեց ազգային հարցում և Օսմանյան կայսրության կողմից նվաճված ժողովուրդները, այդ թվում նաև հայերը, շարունակում էին ենթարկվել վայրենի ճնշման ու հալածանքների։*

*Երիտթուրքերը, որոնք որոշել էին ազգային հարցը լուծել այլազգիների ասիմիլյացման ու ֆիզիկական բնաջնջման եղանակով, հատկապես առաջին համաշխարհային պատերազմը հարմար պահ համարեցին իրենց հայաջինջ ծրագիրն իրականացնելու համար։ Պատերազմին մասնակցելու թուրքական ռազմական պլանի բաղկացուցիչ մասն էր կազմում իր պատմական հայրենիքից հայության զանգվածային տեղահանումն ու ոչնչացումը, որը պետք է հիմնականում կատարվեր հարյուր հազարավոր անմեղ մարդկանց գժոխային տարագրության ընթացքում։*

*Եվ այն, ինչ տեղի ունեցավ պատերազմի ժամանակ Թուրքիայում հայ ժողովրդի նկատմամբ, իր չափերով ու վայրագություններով միանգամայն բացառիկ ու աննախադեպ երևույթ էր ընդհանրապես համաշխարհային պատմության մեջ։ Դա փաստորեն XX դարի առաջին ահավոր ցեղասպանությունն էր (գենոցիդ), որն իրականացվեց ամբողջ քաղաքակիրթ մարդկության աչքի առաջ։*

Հայ ժողովրդի երկարատև ու դաժան մարտիրոսագրությունը թուրքական բռնակալության ճիրաններում լեցուն է հոգեվարքի ու մահվան օրհասական բազում ճիգերով: Բայց այն, ինչ կատարվեց համաշխարհային պատերազմի թոհուբոհի օրերին, երբ ոչնչացվեց մեկուկես միլիոն հայություն և կորստյան մատնվեցին դարերի ընթացքում ստեղծված տնտեսական ու մշակութային բազմաթիվ գանձեր, իր նախընթացը չուներ նույնիսկ սուլթանների երկրի, մեծատաղանդ բանաստեղծ Պարույր Սևակի խոսքերով ասած՝ և մինչև անգամ իրենց՝ թուրքերի արյունով հունցված սև պատմության մեջ:

Պատերազմի ժամանակ հայ ժողովրդի նկատմամբ ունենալիք վերաբերմունքի հարցը նախապես մանրամասն քննարկվել էր «Միություն և առաջադիմություն» («Իթթիհատ վե Թերաքքը») կուսակցության ղեկավար օրգաններում, թուրքական կառավարական շրջաններում և մտել Թուրքիայի ռազմական շտաբի պլանների մեջ: Ինչպես ծրագրվել էր, հայերի կոտորածները հիմնականում իրականացվելու էին սկզբում երկրի ներսում տղամարդկանց ոչնչացմամբ, իսկ ապա մնացած բնակչությանը իր պատմական դարավոր հայրենիքից զանգվածորեն դեպի արաբական անապատներն աքսորելու ժամանակ: Այդ բարբարոսական ծրագրի կենսագործումը բազմակողմանիորեն նախապատրաստվում էր ոչ միայն թուրքական շովինիստների, այլև գերմանական կառավարող շրջանների կողմից: Անհերքելի ու հանրահայտ փաստ է այն իրողությունը, որ համաշխարհային պատերազմի տարիներին հայ ժողովրդի ապրած սոսկալի ողբերգության կազմակերպման ու իրականացման գործում որոշակի դեր են խաղացել գերմանական իմպերիալիստները և վիլհելմյան կառավարությունը[2]:

Երիտթուրքական շովինիստները, հետևելով գերմանական իմպերիալիստների խորհուրդներին, որոշեցին դաժան տարագրության միջոցով հայերին ոչ թե սոսկ աքսորել արաբական անապատների խորքերը, այլև, այդ պատրվակի տակ քողարկված, ֆիզիկապես ոչնչացնել նրանց և հայկական նահանգնե-

---

[1] Տե՛ս Պարույր Սևակ, Անլռելի զանգակատուն, «Հայաստան» հրատ., Երևան, 1966, էջ 195:

[2] Տե՛ս Հանրի Պառդի (Հանրի Բարբի), Սարսափի երկրին մեջ, Կ. Պոլիս, 1919, էջ 10:



րում բնակեցնել մահմեդականների, որպեսզի իրենց համար մեկընդմիշտ ապահով թիկունք ստեղծեին Կովկասից սպառնացող ռուսական վտանգից[3]:

Դեռևս պատերազմն սկսվելուց առաջ, ռուսական և եվրոպական մամուլն ահազանգում էր հայության նկատմամբ Թուրքիայում նախապատրաստվող չարագործությունների՝ սպասվող կոտորածների և խաղաղ բնակչության՝ կանանց, երեխաների ու ծերերի զանգվածային տարագրության դիվային ծրագրի գոյության մասին: Սակայն թուրքական մամուլն ու պաշտոնական շրջանները խորամանկ շողոքորթությամբ փորձում էին հերքել հայաջինջ ծրագրի առկայությունը վկայող հաղորդագրությունները[4]:

Ինչպես ցույց տվեցին հետագա դեպքերը, օտարերկրյա մամուլը միանգամայն իրավացի էր այդ հարցում, քանի որ պատերազմի մեջ մտնելու առաջին իսկ օրվանից թուրքական կառավարությունն անցավ հայ ժողովրդի բնաջնջման իր նողկալի ծրագրի իրականացմանը: 1914 թվականի նոյեմբերից թուրքական իշխանությունները թուրք-ռուսական և թուրք-պարսկական սահմանների մոտ սկսեցին բռնությամբ ամայացնել հարյուրավոր հայկական բնակավայրեր: Գավառներն ուղարկվեց հայերի կոտորածների ու տարագրության վերաբերյալ երիտթուրքական ջարդարարների նախօրոք մշակած բարբարոսական հրամանը, որն ամփոփված էր շուրջ տասը կետերում և մանրամասնորեն նախատեսում էր, թե որտեղ և ինչ եղանակներով պետք է իրականացվեր հայկական եղեռնը[5]:

Հայ ժողովրդի տարագրությունն ու բնաջնջումը կազմակերպելու ուղղությամբ թուրքական կառավարության ու «Իթթիհատ վե Թերաքքը» կուսակցության գործունեության բացահայտման իմաստով խիստ կարևոր է ներքին գործերի մինիստր Թալեաթի, ռազմական մինիստր Էնվերի և Իթթիհատի Կենտկոմի գլխավոր քարտուղար դոկտոր Նազըմի ստորագրություններով հաստատված ու 1915 թ. ապրիլի 15-ին

---

[3] Տե՛ս Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հ. Բ, Փարիզ, 1935, էջ 82:

[4] Տե՛ս «Հուշարձան ապրիլ տասնըմեկի», հավաքեց և խմբագրեց Թեոդիկ, Կ. Պոլիս, 1919, էջ 96:

[5] Տե՛ս Լեո, նշվ. աշխ., էջ 153—154:

որպես կառավարական խստագույն գաղտնի դիրեկտիվ բոլոր նահանգապետներին, գավառապետներին և այլ պաշտոնյաներին ուղարկված հրամանը: Այդ փաստաթղթում հրամայված էր՝ օգտվելով պատերազմական իրադրության ընձեռած հնարավորություններից, վերջնականապես հաշվեհարդարի ենթարկել հայությանը «բնաջնջելով այդ անհարազատ տարրը, քշելով զանոնք դեպի Արաբիո անապատները, համաձայն տրված մեր գաղտնի հրահանգին»: Այդ հրամանում այնուհետև ասված էր. «Արդ, կառավարությունն ու Իթթիհատի մեծ կոմիտեն, կոչ կընենք ձեզ և ձեր հայրենասիրության և կհրամայենք, որ ձեր բոլոր տրամադրելի ուժերով աջակցեք Իթթիհատի տեղական մարմիններուն, որոնք 24 ապրիլի արևածագեն սկսյալ, գաղտնի ծրագրի մը համաձայն, գործադրության պիտի դնեն այս հրամանը:

Որևէ պաշտոնատար ու անհատ, որ կհակառակի այս սրբազան ու հայրենասիրական գործին ու չի տրամադրվիր իրեն հանձնված պարտականության, և որևէ ձևով այս կամ այն հայը պաշտպանելու կամ պահելու փորձը կընե, հայրենիքին ու կրոնքին թշնամի կնկատվի և ըստ այնմ ալ կպատժվի»[6]: Այստեղ ամեն ինչ պարզ ու որոշակի է ասված, ուստի բնավ կասկած չի թողնում, որ երիտասարդ թուրքերի կուսակցությունն ու կառավարությունը հայության բնաջնջման գործը դարձրել էին իրենց պետական քաղաքականության կարևոր խնդիրներից մեկը: Դեռևս Թուրքիայի պատերազմի մեջ մտնելուց առաջ Իթթիհատի Կենտկոմը մանրամասնորեն մշակել ու նախապատրաստել էր հայերի ջարդի ու բնաջնջման ծրագիրը: Այդ ծրագիրն իրականացնելու համար հայկական նահանգներում ստեղծվել էին հատուկ գաղտնի կոմիտեներ, որոնց մեջ մտնում էին նահանգապետները, ոստիկանապետները և տվյալ նահանգի զինվորական միավորման հրամանատարները: Այդ կոմիտեների անմիջական տրամադրության տակ էին դրվում ոստիկանական ու կանոնավոր զորամասեր, զանազան ոճրագործներից բաղկացած այսպես կոչված «հատուկ կազմակերպության» ուժեր, թուրքական ու քրդական հրոսակախմբեր, անսահմանափակ քանակությամբ զենք և այլ միջոցներ:

---

[6] «Դրվագներ հայկական եղեռնեն և վերածնունդ», Փարիզ, 1947, էջ 180—181:



Ինչպես վկայում է հայկական եղեռնի կազմակերպմանը լավատեղյակ Մեվլան Զադե Ռիֆաթը, մարդասպան ոճրագործների գործունեությունն անմիջականորեն ղեկավարում էր երեք հոգուց բաղկացած գործադիր կոմիտեն, որի մեջ մտնում էին Իթթիհատի Կենտկոմի գլխավոր քարտուղար դոկտոր Նազըմը, դոկտ. Բեհաեդդին Շաքիրը և կրթական նախարար Միդհատ Շյուքրի բեյը[7]: Ամբողջությամբ վերցրած՝ հայերի կոտորածներն ու տարագրությունները ղեկավարում էր Թուրքիայի ռազմական կաբինետը, որի կազմի մեջ մտնում էին մեծ վեզիր Սայիդ Հալիմ փաշան, ներքին գործերի մինիստր Թալեաթ փաշան, ռազմական մինիստր Էնվեր փաշան, ծովային մինիստր Ջեմալ փաշան, ֆինանսների մինիստր Ջավիդ բեյը և արդարադատության մինիստր Խալիլ բեյը: Հենց այդ կաբինետի կողմից էր, որ հրաման ուղարկվեց տեղական բոլոր իշխանություններին՝ ձեռք առնել «պատշաճ միջոցներ», որպեսզի իբր թե նախօրոք կանխվի ու ճնշվի հայերի «հնարավոր ապստամբությունը»: Այդ հրամանում նշված էր, որ հայերն «սպառնում են» կայսրության միասնությանն ու անվտանգությանը, հետևապես, պետության անվտանգությունը պաշտպանելու նպատակով, անհրաժեշտ է ամենայն խստությամբ ու անխնա միջոցներով անվնաս դարձնել թշնամուն, այսինքն՝ հայերին: Մի կողմ թողնելով հազվադեպ բացառությունները, պետք է ասել, որ թուրք պաշտոնյաների բացարձակ մեծամասնությունը աննկարագրելի ուրախությամբ արձագանքեց հայերի բնաջնջման վերաբերյալ Կ. Պոլսից ստացված գաղտնի հրամանին և ձեռնամուխ եղավ դրա կենսագործմանը:

Թուրքական ջարդարարները նպատակահարմար էին գտել առաջին հերթին ոչնչացնել հայ բնակչության արական մասը և հատկապես մտավորականությանը, որպեսզի այնուհետև հեշտությամբ հաշվեհարդար տեսնեին նաև անպաշտպան մնացած խաղաղ բնակչության՝ ծերերի, կանանց ու երեխաների անմեղ զանգվածի հետ: Ինչպես այդ առթիվ դիպուկ կերպով նկատել է այն ժամանակ Կ. Պոլսում ամերիկյան դեսպան Հենրի Մորգենթաուն՝ «ցեղ մը բնաջնջելու այս ծրագիրը հաջողացնելու համար երկու նախաքայլեր պետք էին առնվել. անհրաժեշտ էր բոլոր հայ

---

[7] Տե՛ս Մեվլան Զադե Ռիֆաթ, Օսմանյան հեղափոխության մութ ծալքերը, Պեյրութ, 1938, էջ 183—187:

զինվորները անզոր դարձնել և ամեն քաղաքներու հայերուն ձեռքէն զենքերը առնել: **Հայաստանը խնդրաման ընելէ առաջ, Հայաստանը անպաշտպան դարձնել**»[8] (ընդգծումը մերն է.—Հ. Մ.):
Թուրք ոճրագործները իրականում հենց այդպես էլ վարվեցին: Սկզբում, որպես իբր թե «դավաճանների», զինաթափեցին բանակում գտնվող հայ զինվորներին, չնայած նրանք միանգամայն բարեխղճորեն կատարում էին իրենց պարտականությունները: Հայ զինվորները միայն այն ժամանակ սկսեցին կասկածամտությամբ և թշնամանքով վերաբերվել թուրքական հրամանատարությանը, երբ տեսան ու համոզվեցին, որ իրենց ազգակիցներին զանգվածաբար հանում են ռազմաճակատից և գաղտնաբար կոտորում[9]:

Հայ զինվորներին գաղտնաբար կոտորելուց հետո, որպեսզի հեշտությամբ իրականացնեին նաև քաղաքացիական բնակչության տարագրության ու բնաջնջման ավելի ընդարձակ ծրագիրը, թուրքական ջարդարարներն անցան հայերի զորահավաքից հետո գյուղերում և քաղաքներում մնացած արական բնակչության ոչնչացմանը: Միտումնավոր կերպով կատարված զորահավաքից հետո առանց այն էլ տեղերում մնացել էր տղամարդկանց այն մասը, որից փոքր ինչ դիմադրություն, առավել ևս հակահարված, չէր կարելի սպասել: Բնակչության այդ մասի ոչնչացումն իրականացվեց 1915 թվականի փետրվարից սկսած, զինաթափման անվան տակ: Նենգ ու խարդախ խաբեությամբ ոչնչացնելով հայկական արական բնակչության մեծ մասին ու կեղծելով իրողությունը, ջարդերի կազմակերպիչ Թալեաթին ամեն կողմից հեռագրեր էին հղվում «հայկական ապստամբությունները» հաջողությամբ կանխելու և ճնշելու մասին: Ի պատասխան դրանց, տեղական իշխանությունները կենտրոնից շնորհավորանքներ էին ստանում իրենց հաջող գործողությունների առթիվ: Այդ կեղծ գրագրությունները, որպես թուրքական պետությանն սպառնացող անխուսափելի վտանգի կանխման անժխտելի ապացույցներ, ցույց էին տրվում Կ. Պոլսում գտնվող օտարերկրյա այն թղթակիցներին ու դիվանագետներին,

[8] Տե՛ս «Ամերիկյան դեսպան մր. Մորկընթաուի հիշատակները և հայկական եղեռնին գաղտնիքները», Կ. Պոլիս, 1919, էջ 250:

[9] Տե՛ս Հայկական ՍՍՀ Կենտրոնական պետական պատմական արխիվ (այսուհետև՝ ՀՍՍՀ ԿՊՊԱ), ֆ. 43, ց. 1, գ. 76, թ. 40:



որոնց լուրեր էին հասնում հայերին կոտորելու անընդհատ կրկնվող դեպքերի մասին, և որոնք այդ առթիվ երբեմն հարցումներ էին անում թուրքական կառավարությանը:

Հայության արական բնակչության հիմնական զանգվածի ոչնչացմանը զուգընթաց, թուրքական կառավարությունը իրագործեց նաև իր նողկալի ծրագրի մի այլ կարևոր կետը: 1915 թվականի ապրիլի 11-ին (նոր տոմարով 24-ին), գրեթե մի գիշերվա մեջ, Կ. Պոլսում մեկեն ձերբակալվեց արևմտահայ մտավորականության ընտրանին՝ մոտ 235 մարդ, նետվեց մութ զնդաններն ու քշվեց դեպի մահ: Ապրիլի 11—13-ին (ն. տ. 24—26-ին), ընդամենը երեք օրվա ընթացքում, Կ. Պոլսում և գավառներում ձերբակալված հայ մտավորականների թիվը, ներառյալ նաև եկեղեցականներին, անցնում էր 760 հոգուց[10]: Ձերբակալվածներին Կ. Պոլսից տեղափոխեցին Անկարայի բանտը, այնտեղից էլ մի մասին աքսորեցին Այաշ, մյուսին՝ Չանղըրը և գրեթե բոլորին, առանց դատ ու դատաստանի, սպանեցին հենց աքսորի ճանապարհին: Ձերբակալվածների թվում էին հայ մշակույթի անզուգական մշակներ՝ Կոմիտասը, Սիամանթոն, Վարուժանը, Զոհրապը, Երուխանը, Ռուբեն Սևակը, Ռուբեն Զարդարյանը և բազմաթիվ ուրիշ ականավոր դեմքեր, որոնցից հազիվ միայն 15 մարդ փրկվեց:

1915 թ. ապրիլի 20-ին հայերի ընդհանուր կոտորածներն սկսելու ազդանշան տրվեց Վան քաղաքում: Այնտեղ հաջող ինքնապաշտպանության կազմակերպման, ռուսական զորքերի ու հայ կամավորների մասնակի առաջխաղացման և Վանի գրավման շնորհիվ թուրքական յաթաղանից փրկվեցին տասնյակ հազարավոր հայեր: Բայց շուտով կասեցվեց ռուսական զորքերի առաջխաղացումը, որոշ տեղերում նրանք դիմեցին նույնիսկ նահանջի, և թուրքերն սկսեցին հայերի բնաջնջման նախօրոք մշակված ծրագրի հետևողական իրագործումը:

1915 թ. մայիսի 20-ին (նոր տոմարով հունիսի 2-ին) թուրքական կառավարությունը հրաման արձակեց այսպես կոչված դեպորտացիաների, այսինքն՝ հայերին արաբական անապատներն աքսորելու մասին: Այդ հրամանը պաշտոնապես նախա-

[10] Տե՛ս «Հուշարձան ապրիլ տասնըմեկի», Կ. Պոլիս, 1919 և «Դատավարություն Թալեաթ փաշայի», սղագրական զեկուցում, Վիեննա, 1921, էջ 95—96:

տեսում էր մերձռազմաճակատային գոտու բնակիչների էվակուացիան՝ նկատի ունենալով իբր թե նրանց համակրանքը ռուսների նկատմամբ, դավաճանությունը Թուրքական հայրենիքին և զինված համագործակցությունը թշնամու հետ։ Իրականում այդ հրամանը նշանակում էր հայկական բնակչության քողարկված մահավճիռը։ Ինչպես իրավացի կերպով նկատել է Յոհաննես Լեփսիուսը՝ գաղտնի տեղեկագրերի ու ականատեսների վկայությունների հիման վրա գրած իր «Հայաստանի ջարդերը» գրքում, թուրքական կառավարությունը երբեք փաստերով չէր հաստատել հայ ժողովրդի դավաճանությունը, ապստամբելու նրա տրամադրությունը կամ թշնամու հետ համագործակցությունը։ Ընդհակառակը, փաստերը վկայում էին «օսմանյան հայրենիքի» նկատմամբ հայերի պարտաճանաչությունն ու հավատարմությունը[11]։ Չնայած այդպիսին էր իրականությունը, թուրքական իշխանությունները դեռևս մարտի վերջերից սկսել էին Կիլիկիայի՝ ռազմաճակատից հարյուրավոր կիլոմետրերով հեռու գտնվող այդ երկրամասի, հայ ազգաբնակչության տարագրությունը[12]։

Իրենց հայաջինջ ծրագիրն իրականացնելու համար թուրքական շովինիստներին հարմար պատրվակ էր պետք, և ահա հորինվում էր շինծու պատճառաբանությունն այն մասին, թե «հայերը համակրում են ռուսներին», ուստի հարկավոր է ռազմաճակատը մաքրել այդ վնասակար տարրերից։ Դրա համար առաջ էր քաշվում հայերի տեղահանության ծրագիրը, որը գործնականում նշանակում էր նրանց զանգվածային բնաջնջում։ Բնութագրելով հայերի տեղահանության թուրքական ծրագրի էությունը, Լեփսիուսը նշում է, որ «տարագրության ձեռնարկը շուտով և ամենեն հաճախ վերածվեցավ կանոնավոր բնաջնջումի մը»[13]։

Թուրքական ներքին գործերի մինիստրության 1915 թ. նոյեմբերի մի ծածկագիր հեռագրում ուղղակի նշված էր. «Մանութ անձնավորության (գաղտնի փաստաթղթերում այդպես էին անվանում հայերին.— Հ. Մ.) առաքման (աքսորի.— Հ. Մ.) նպատակը հայրենիքին ապագա բարօրության ապահովությունն է,

[11] Տե՛ս Տոքթ. Յոհ. Լեփսիուսի գաղտնի տեղեկագիրը. Հայաստանի ջարդերը, Կ. Պոլիս, 1919, էջ 9։

[12] Տե՛ս նույն տեղում, էջ 170։

[13] Տե՛ս նույն տեղում, էջ 142։



որովհետև անոնք՝ ուր որ ալ բնակեցվեն՝ դարձյալ հոն չպիտի կենան իրենց անիծապարտ գաղափարներեն։ Պետք է աշխատիլ, որ կարելի եղածին չափ նվազի անոնց թիվը»[14]։

Եվ համատարած ջարդերից, քաղցից ու հիվանդություններից ամեն օր հազարավոր հայեր էին զոհվում, որը և նրանց ընդհանուր տարագրության վերջնական նպատակն էր։ Այդ մասին կառավարական հրահանգներից մեկում ուղղակի ասված էր. «Դարերե ի վեր պետության ամուր հիմը քանդելու բաղձացող և կառավարության համար կարևոր փորձանքի մը երևույթը առած հայ տարրին ջնջումը թեև նախապես մտադրված էր, բայց ժամանակին ստիպումները այս սրբազան մտադրությունը իրականացնելու կարելիություն չէին ընծայեր։ Հիմա, բոլոր արգելքները վերացած և հայրենիքը այս վնասակար տարրեն փրկելու ժամանակը հասած նկատելով, կարևորությամբ կհանձնարարվի, որ անոնց արգահատելի վիճակին հանդեպ գութի զգացումներու չհանձնվեք, և անոնց ընդհանուրին գոյության վերջ տալով, Թուրքիո մեջ հայ անունին չմնալուն ոգի ի բռին աշխատիք։ Ուշադրություն ընեք, որ այս նպատակը իրականացվելու կոչվելիք պաշտոնյաները հայրենասեր և վստահելի մարդիկ ըլլան»[15]։

Յոհաննես Լեփսիուսի վկայությամբ «Հայերու տարագրությունը տեղի ունեցավ երեք տարբեր մարզերու մեջ և երեք հաջորդական ժամանակամիջոցներու» ընթացքում։ Երեք տարբեր մարզեր ասելով Լեփսիուսը նկատի ուներ Արևմտահայաստանը (Կարին, Տրապիզոն, Սեբաստիա, Խարբերդ, Տիգրանակերտ, Վան, Բաղեշ վիլայեթներով), Արևմտյան Անատոլիան (Նիկոմեդիա, Պրուսա, Գասթեմունի, Գալաթիա, Կոնիա և այլն) և, վերջապես, Կիլիկիան ու Սիրիան (Ադանա, Մարաշ, Հալեպ, Անտիոք, Սուեդիա, Քեսապ, Իսկենդերուն, Քիլիս, Այնթապ, Ուրֆա)[16]։ Ահա հատկապես այս վայրերի հայությունն էր, որ ենթարկվեց ամենավայրենի ջարդերի ու տարագրությունների։

1915 թվականի մարտից մինչև հոկտեմբերն ընկած ժամանակամիջոցում, թուրքական կառավարությունը հետևողականորեն կենսագործեց հայ ժողովրդի բռնագաղթեցման ու բնաջնջման իր ոճրագործ մտադրությունը։ Երբ արդեն հիմնականում

[14] Ա. Անտոնյան, Մեծ ոճիրը, Բոստոն, 1921, էջ 23։

[15] Տե՛ս նույն տեղում, էջ 26։

[16] Տե՛ս Տոքթ. Յոհ. Լեփսիուս, Հայաստանի ջարդերը, էջ 9։

ոչնչացված էին հայ տղամարդիկ, անպաշտպան կանանց ու երեխաներին հրամայվում էր ճանապարհ ընկնել դեպի անհայտ հեռուները, դեպի արաբական անապատները։ Գյուղերում ու քաղաքներում մունետիկները հայտարարում էին կառավարական խստագույն հրամանը՝ այսինչ օրը, այսինչ ժամին պատրաստ լինել մեկնելու։ Ոչ մեկին բացառություն չէր արվում. ոչ հիվանդներին, ոչ ծերերին, ոչ էլ հղի կանանց։ Միայն նրանք, ովքեր անհապաղ կընդունեին մահմեդականություն և կհրաժարվեին հայությունից, կարող էին խուսափել ընդհանուր ճակատագրից։ Տարագրվողներին թույլատրվում էր իրենց հետ վերցնել նվազագույն չափով սնունդ և հագուստեղեն։ Նրանց առաջ էին քշում ոտքով, սովորաբար հեծյալ պահակախմբերի ուղեկցությամբ։ Տարագրվողներին վիճակվեց այդ ձևով անցնել երեքից մինչև վեց շաբաթ տևողությամբ ճանապարհ, ձյունապատ լեռներով ու կիզիչ արևի տակ, այրող անապատներով։ Հիվանդները, ծերերն ու երեխաները ուժասպառ ընկնում էին այդ տառապալից ճանապարհներին, չկարողանալով այլևս վեր բարձրանալ։ Սակայն ուղեկցող ժանդարմները, մտրակահարելով նրանց, ստիպում էին նորից առաջ գնալ։ Ականատեսները վկայում են, որ անգամ երկունքի տանջանքների մեջ գտնվող կանանց գազանաբար առաջ էին քշում, մինչև որ վրա կհասներ ծննդաբերության պահը և այդ վիճակում նրանց անօգնական թողնում էին մեռնելու ճանապարհին[17]։ Շատ թե քիչ գրավիչ աղջիկները վերցվում էին հարեմները կամ ուղեկցող պահակների կողմից ենթարկվում ամեն տեսակ անարգանքի, մինչև որ մահը նրանց կազատեր այդ տանջանքներից։ Այդ պատճառով էլ ով կարող էր՝ վերջ էր տալիս իր կյանքին։ Խելակորույս մայրերը երեխաներին նետում էին գետը կամ ցած գլորում ժայռերից, որպեսզի վերջ տային նրանց տառապանքներին։ Հարյուր հազարավոր աքսորյալներ այդ տաժանակիր ճանապարհին մեռան քաղցից, ծարավից, ցրտից, արևահարությունից ու լիակատար հյուծվածությունից։ Հենց այդ էլ տարագրության իսկական նպատակն էր։ Դա լավ էին հասկացել նաև քարավաններին ուղեկցող պահակախմբերը, որոնք իրենց հերթին բոլոր միջոցներով նպաստում էին հայերի ոչնչացմանը։ Կառավարությունն

[17] Տե՛ս «Ամերիկահայ հանրագիտակ տարեգիրք», Բոստոն, 1925, էջ 46—47։



անշուշտ գիտեր, թե ինչ է նշանակում այդպիսի «ճանապարհորդությունը», և տարագրվողներին առաջնորդող նրա կամակատարները անում էին ամեն բան, որպեսզի ավելի բազմապատկեին նրանց ֆիզիկական ու բարոյական տանջանքները։ Անտանելի պայմանների պատճառով այդ դժբախտների շարքերը ճանապարհի սկզբում հալվում էին ամեն օր, ճանապարհի վերջում՝ ամեն ժամ։ Նրանց ամենամեծ ցանկությունն էր մեռնել որքան կարելի է շուտ, որովհետև ի՞նչ հույս կամ ուժ կարող էր մնալ նույնիսկ ամենադիմացկունների մոտ, երբ չէր երևում այդ սոսկալի տաժանակրության վերջը։

Գետանցումները, հատկապես Եփրատի անցումը, հայերի տարագրության ժամանակ հարմար տեղ են համարվել զանգվածային սպանություններ կատարելու համար։ Հենց միայն Երզնկայի և նրա շրջակայքի հայերից ավելի քան 30000 մարդ խեղդամահ է արվել Եփրատում[18]։

Շատ քչերին էր հաջողվում ինչ-որ հրաշքով փրկվել անխուսափելի մահից և հասնել մինչև «նշանակված վայրը»։ Սակայն իրականում հայ գաղթականների համար տարագրության որոշակի ու մշտական վայրեր չէին նախատեսված։ Թուրքական կառավարության բոլոր հրահանգները միշտ հանձնարարում էին՝ «կարավաններու ընկերացնելով զրկեցեք անապատները»։ Այս անորոշ դարձվածքը նշանակում էր «ոչնչացրեք», որովհետև «նույնիսկ անապատներու մեջ հայ գաղթականները որոշ տեղ մը չունեին։ Միշտ պետք էր քալել, երթալ, ո՞ւր, մարդ չէր գիտեր։ Կբավեր, որ տեղ մը չմնային երկար ատեն և քալելով հատնեին»[19],— հետագայում պատմում է թուրքական պաշտոնյա Նայիմ բեյը, որն այդ ժամանակ գաղթականների Հալեպի տեսչության գլխավոր քարտուղարն էր և որի ձեռքով էին անցել հայերի տարագրությանը վերաբերող շատ փաստաթղթեր։

Իրենց պատմական բնօրրանից ու հայրենի օջախներից բռնությամբ արտաքսված հայ տարագիրների բեկորները հանգիստ չգտան նաև հեռավոր արաբական անապատներում։ Տարագրության տառապալի ճանապարհն անցած և անմարդաբնակ անապատներում կուտակված հայությունը 1916 թվականին և

[18] Տե՛ս «Армянский вестник», շաբաթական հանդես, Մոսկվա, 1916 թ., № 28, էջ 16։

[19] Ար. Անդոնյան, Մեծ ոճիրը, էջ 88։

հետո ենթարկվեց թուրքական իշխանությունների նոր, զարհուրելի եղեռնագործություններին։ Արաբական անապատներում թուրքերը կազմակերպեցին հայության երեք մեծ ու սոսկալի ջարդեր, որոնց զոհ գնացին հարյուր հազարավոր տարագիրներ։ Առաջին ջարդը տեղի ունեցավ Ռաս-ուլ-Այնում, ուր զոհվեցին մոտ 70000 հայեր։ Երկրորդ ջարդն իրականացվեց Ինթիլիի մեջ, ուր սրի քաշվեցին մեծ մասամբ Բաղդադի երկաթուղագծի վրա աշխատող ավելի քան 50000 հայ տարագիրներ։ Երրորդը, որը եղավ անապատները հասցված հայության ամենազարհուրելի սպանդը, կատարվեց Տեր-Զորում, ուր կառավարիչ Զեքի-բեյի հրամանով ոչնչացվեց ավելի քան 200 հազար մարդ[20]։ Եթե դրանց ավելացնենք նաև հիվանդությունների և սովի հետևանքով տեղի ունեցած կորուստները, ապա անապատների մեջ զոհվածների թիվը շատ ավելին կլինի։ Տասնյակ հազարավոր հայ տարագիրներ նահատակվել են Հալեպում, Մեսքենեում, Մարաթում, Շեդադեում, Սուվարի ավազուտներում և Եփրատի երկայնքով ձգված գաղթականական մյուս ճամբարներում[21]։ Ահա թե ինչ դաժան մեթոդներով էին թուրքական շովինիստները արաբական անապատներում ոչնչացնում հայ կանանց ու երեխաներին, որպեսզի «արմատախիլ» անեին մտացածին «հայկական ապստամբությունը» Փոքր Ասիայում։

Այսպիսով, արևմտահայության մեծամասնության բնաջնջումը իրականացվեց հաջորդական երեք էտապներով՝ երկրում կազմակերպված ջարդերի միջոցով, տարագրության քարավանների ուղեկցության ընթացքում և արաբական անապատներում։ Տարագրությունը բնավ չսահմանափակվեց մերձռազմաճակատային գոտով, այլ տարածվեց Թուրքիայի հայաբնակ բոլոր բնակավայրերի և նույնիսկ Կ. Պոլսի վրա։ Ընդունված ընդհանուր կարծիքի համաձայն՝ թուրքական կառավարության կազմակերպած հայկական ցեղասպանության վերջնական արդյունքը եղավ համաշխարհային պատմության մեջ նորագույն ժամանակներում աննախընթաց պլանաչափ ոչնչացումը հայ ժողովրդի մի խոշոր հատվածի[22]։

[20] Տե՛ս նույն տեղում, էջ 18։

[21] Տե՛ս նույն տեղում, էջ 18—19։

[22] Հայերի տարագրության և ջարդերի մասին ավելի մանրամասն տե՛ս «Гекоцид армян в Османской империи», сборник документов и материа-



Եվ այսպես, ընդամենը մի քանի ամսվա ընթացքում, թուրք ջարդարարներն անպատիժ կերպով հայաթափեցին Հայաստանը, վստահ լինելով, որ իրենց քաղաքականության հետևանքով կոչնչանա ամբողջ արևմտահայությունը։ Սակայն պետք է ասել, որ թուրքական ջարդարարներին ոչ բոլոր տեղերում հաջողվեց հեշտությամբ գլուխ բերել իրենց դիվային ոճիրը։ Մի շարք վայրերում հայերը դիմեցին հերոսական ինքնապաշտպանության։ Ինքնապաշտպանական այդ կռիվները ոչ թե դավադրություններ կամ ապստամբություններ էին, ինչպես փորձում են դրանք ներկայացնել թուրք շովինիստները, այլև գոյության պաշտպանման բնական ու օրինական մի կռիվ, օրհասական մի ճիգ։ Այդպիսի հերոսամարտեր տեղի ունեցան Վանում, Մուշում, Սասունում, Շապին-Գարահիսարում, Սուեդիայում, Մուսա լեռան վրա, Ուրֆայում (Եդեսիա) և այլուր, որոնցից մի քանիսը դրական ելք ունեցան։ Դժբախտությունն այն էր, որ դրանք ինչպես հարկն է նախապատրաստված չէին, համընդհանուր բնույթ չկրեցին, որպեսզի ավելի հաջող ու մեծ արդյունքներ ունենային։

Թուրքիայում հայության բնաջնջման վերաբերյալ հաղորդումները խոր զայրույթով ընդունեցին բոլոր առաջադեմ մարդիկ։ Շատերն իրենց արդար բողոքի ձայնը բարձրացրին հարյուր հազարավոր անմեղ մարդկանց նկատմամբ գազանային դատաստանի հեղինակների դեմ և անարգանքի սյունին գամեցին հանցագործներին։ Հայության ոչնչացման դեմ իրենց ցասումնալից բողոքի խոսքն ասացին Մարսել Կաշենն ու Անատոլ Ֆրանսը, Վալերի Բրյուսովն ու Յան Ռայնիսը, Կարլ Լիբկնեխտն ու Իոհաննես Լեփսիուսը, Հանրի Բարբին ու Հերբերտ Գիբոնսը, անգլիացի ուսանող Թոյնբին ու ամերիկյան գրող Ջոն Ռիդը, լեհ բանաստեղծ Վալերի Յազվեցկին և շատ ուրիշներ։ Սակայն, հասկանալի է, որ դա այն ժամանակ չէր կարող կասեցնել թուրքական ջարդարարների վայրագությունները։ Պրոֆ. Իոհ. Լեփսիուսը վճռականորեն բողոքեց թուրք ջարդարարների հետ համագործակցած գերմանական կառավարության դեմ և հրատարակեց հայկական կոտորածների իսկությունը պարզաբանող ու

лов, под ред. М. Г. Нерсисяна, изд. «Айастан», Ереван, 1982. Ջ. Ս. Կիրակոսյան, Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը (1914—1916 թթ.) աշխատությունը, Երևան, 1965, էջ 217—356։

այն իրականացնողներին մերկացնող փաստաթղթերի արժեքավոր ժողովածուներ[23]։

Արդեն իրենց չարագործությունները ավարտելուց հետո Թալեաթը ամերիկյան դեսպան Հենրի Մորգենթաուին բացեիբաց խոստովանել էր, որ հայերի նկատմամբ իրենց քաղաքականությունը նախօրոք որոշված էր և ոչինչ չէր կարող այն փոխել։ Բնավ պատահական չէր, որ այդ ծրագրի կենսագործումից հետո նա լկտիաբար պարծենում էր, թե «հայկական խնդիրը լուծելու տեսակետով երեք ամսվա մեջ ես ավելի գործ կատարեցի, քան Աբդուլ Համիդը երեսուն տարվա մեջ»[24] և «հայկական հարցն այլևս գոյություն չունի, քանի որ Թուրքիայում հայեր այլևս գոյություն չունեն»[25]։

* * *

Չնայած լուրջ դժվարություններին, անհրաժեշտ է գոնե մոտավորապես պարզել, թե համաշխարհային պատերազմի տարիներին, մասնավորապես 1915—1916 թվականներին, որքան հայեր զոհ գնացին զանգվածային կոտորածների ժամանակ, տարագրության ճանապարհին և արաբական անապատների ավազուտներում, որպեսզի ավելի պարզ ու որոշակի դառնա երիտթուրքական կլիկի ոճրագործությունների ամբողջ պատկերը։

Այս խնդրի լուծումը դժվարանում է ոչ միայն այն պատճառով, որ անհնար է վերականգնել զոհերի ճշգրիտ թիվն ընդհանրապես, այլև այն բանի հետևանքով, որ անգամ նախքան պատերազմն ստույգ տվյալներ չկան արևմտահայության թվի մասին։ Հայության թիվը Թուրքիայում որոշելիս, բնավ չի կարելի վստահել թուրքական աղբյուրներին, որովհետև դրանք միշտ էլ դիտավորյալ կերպով խեղաթյուրել ու նվազեցրել են քրիստոնյաներին վերաբերող վիճակագրական տվյալները և ուռճացրել մահմեդականների թիվը, որպեսզի ցույց տան, թե իբր

---

[23] Տե՛ս J. Lepsius, „Bericht über Lage des armenischen Volkes in der Turkei", Potsdam, 1916. և „Deutschland und Armenien 1914—1918. Sammlung diplomatischer Aktenstüke". Hrsg. von der Dr. J. Lepsius, Potsdam, 19.9.

[24] Տե՛ս «Մորգենթաուի հիշատակները», էջ 284։

[25] Е. В. Тарле, Сочинения, т. V, М., 1958, էջ 308:



վերջիններս մեծամասնություն են կազմում առաջինների համեմատությամբ։ Այնինչ մինչև XIX դարի կեսերը հայերն Արևմտահայաստանում կազմել են բնակչության բացարձակ մեծամասնությունը։ Սակայն այդ ժամանակներից արդեն սկսվեց հայ ժողովրդի սիստեմատիկ բնաջնջման քաղաքականությունը, որը հասցրեց ողբերգական հետևանքների։ Աբդուլ Համիդի և ապա երիտթուրքերի տիրապետության տարիներին զանգվածաբար կոտորելով ու դուրս մղելով հայերին, թուրքական կառավարությունը նրանց տեղում բնակեցնում էր թուրք մուհաջիրներին, քրդերին, չերքեզներին և այլոց։ Մյուս կողմից՝ կյանքի ապահովության երաշխիքի բացակայության, սիստեմատիկ բռնությունների ու հետապնդումների հետևանքով հայերն իրենց հարկադրված գաղթում էին Ռուսաստան, Բալկաններ, Ամերիկա և այլուր։ Չնայած այդ ամենին, այնուամենայնիվ, մինչև առաջին համաշխարհային պատերազմի եղերական իրադարձությունները արևմտահայության հիմնական զանգվածն ապրում էր իր հայրենիքում։

Համաձայն Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի վիճակագրության, Օսմանյան կայսրության սահմաններում 1912 թվականին ապրում էր 2,1 միլիոն հայ, որից 1,018 հազար՝ Արևմտահայաստանում, 145 հազար՝ հայկական վեց նահանգներին սահմանակից տերիտորիաներում, 407 հազար՝ Կիլիկայում և 530 հազար՝ երկրի այլ շրջաններում։ Արևմտյան Հայաստանում հայերը կազմում էին ամբողջ բնակչության 38,9 տոկոսը, մինչդեռ թուրքերի թիվը այդտեղ հասնում էր 666 հազարի կամ 25,4 տոկոսի, քրդերը կազմում էին 16,3 տոկոս, մնացած ժողովուրդները՝ 19,4 տոկոս։ Բոլոր քրիստոնյաները միասին կազմում էին Արևմտյան Հայաստանի ազգաբնակչության ընդհանուր թվի 45,2 տոկոսը[26]։

Հայկական պատվիրակների կողմից 1919 թ. փետրվարին Փարիզի խաղաղության կոնֆերանսին ներկայացված հուշագրում հայության թիվը Թուրքիայում 1914 թվականին ցույց է տրված 2,026 հազար մարդ, որից հայկական նահանգներում՝ 1,403 հազար, Կիլիկիայում՝ 440 հազար և Կ. Պոլսում ու կայսրության

---

[26] Տե՛ս «Сборник дипломатических документов. Реформы в Армении», Петроград, 1915, էջ 289:

եվրոպական մասում՝ 183 հազար[27], Արևմտահայ անվանի բանասեր Թեոդիկը Թուրքիայում հայերի թիվը պատերազմից առաջ հաշվում էր 2.026.700 մարդ[28]։ Այսպիսով, ինչպես վկայում են հայկական աղբյուրները, կարելի է վստահորեն պնդել, որ նախապատերազմյան Թուրքիայում ապրող հայության թիվն անցնում էր երկու միլիոնից։

Մոտավորապես վերականգնելով նախապատերազմյան շրջանում թուրքական տիրապետության տակ ապրող հայության ընդհանուր թիվը, անհրաժեշտ է պարզել նաև նրա կրած կորուստները։ Ուրեմն դառնանք այն հարցին, թե որքա՞ն հայեր զոհվեցին Թուրքիայում առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ։ Ուրիշ ժողովուրդների կորուստները այդ պատերազմի տարիներին սակավ դեպքերում են գերազանցել նրանց ընդհանուր թվի 10 տոկոսին, մինչդեռ հայության զոհերը կազմում են նրա ընդհանուր թվի ավելի քան մեկ չորրորդը, իսկ արևմտահայության՝ երկու երրորդը։ Պատերազմի տարիներին հայ ժողովրդի կրած նյութական վնասները ևս հսկայական են ու անվերադարձ։

Եվրոպական, մասնավորապես անգլիական ու ֆրանսիական աղբյուրների համաձայն, համաշխարհային պատերազմի ժամանակ թուրքական ջարդարարների ձեռքով զոհվել են 800 հազար հայեր, մի այդքան էլ բռնագաղթի միջոցով հեռացվել են երկրից, բայց նրանց հազիվ $^1/_3$-ն է անվնաս տեղ հասել ու ողջ մնացել։ Հենրի Մորգենթաուն նշում է, որ վեց ամսվա ընթացքում՝ 1915 թ. ապրիլից մինչև հոկտեմբեր, դեպի արաբական անապատներն են քշվել 1.200 հազար հայեր, որոնց մեծ մասը զոհվել է հենց ճանապարհին։ Ըստ Յոհ. Լեփսիուսի, 1915—1916 թթ. Թուրքիայից տեղահանվել են մոտ 1.400 հազար հայեր, որոնց հազիվ 10 տոկոսն է աքսորավայր հասել, իսկ մնացած 90 տոկոսը ոչնչացել է տարագրության ճանապարհին[29]։

Հակառակ այս անկողմնակալ ու անհերքելի փաստերին, կեղծելով իրականությունը, թուրքական պաշտոնական աղբյուր-

[27] Տե՛ս «Армянский вопрос перед мирной конференцией». Екатеринoград, 1919, էջ 21 — 23։

[28] Տե՛ս Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Կ. Պոլիս, 1922, էջ 263։

[29] Տե՛ս Յոհ. Լեփսիուս, Հայաստանի ջարդերը, էջ 312։



ները զոհված հայերի թիվը ցույց են տալիս ընդամենը 300 հազար։ Հարկ չկա ապացուցելու, որ դա խիստ միտումնավոր ու նվազեցված թիվ է և պետք է առնվազն հնգապատկել, ավելացնելով նաև թիվն այն զոհերի, որոնք եղան ոչ միայն անմիջականորեն թուրքական յաթաղանից, այլև տարագրության ճանապարհներին ու արաբական անապատներում կրած տանջանքներից, քաղցից և հիվանդություններից։

Պողոս Նուբար փաշայի գլխավորած Ազգային պատվիրակության հավաքած տվյալների համաձայն արևմտահայերի ընդհանուր կորուստը հասնում է մեկուկես միլիոն մարդու։ Ոմանք հաշվում են մեկ միլիոն երկու հարյուր հազար, ուրիշները՝ մոտ մեկ միլիոն։

Այդ հարցը պարզելու դժվարությունը նաև այն է, որ ստույգ տվյալներ չկան պատերազմից հետո Թուրքիայում մնացած հայերի թվի մասին, և խիստ թերի են տեղեկությունները գաղութահայության վերաբերյալ։ Այդ մասին գրեթե չկան անհրաժեշտ վիճակագրական տվյալներ ու աղբյուրներ, որոնք գեթ մոտավոր չափով բավարարեին գիտական նվազագույն պահանջները և համապատասխանեին իրականությանը։ Հայտնի չէ նույնպես թիվն այն հայերի, որոնք հարկադրաբար մահմեդականացած կամ առանց կրոնափոխության ապրել են թուրքերի, քրդերի և արաբների մեջ։ Պատերազմից հետո Թուրքիայում մնացած հայերի վերաբերյալ սկզբնական շրջանում հանրային գործածության մեջ էր 100 հազար թիվը, բայց ակնհայտ է դրա խիստ նվազեցված լինելը։ Պետք է ենթադրել, որ նրանց թիվն անհամեմատ ավելի մեծ էր։

Վերոհիշյալ կնճռոտ հարցերին ժամանակին փորձել է պատասխանել Թեոդիկը։ Նա հավաքել ու հրատարակել է տեղահանությունից առաջ և հետո, 1921 թ. ապրիլի 1-ի դրությամբ, Օսմանյան կայսրության մեջ ապրող հայ բնակչության բաղդատական վիճակագրությունը։ Դրա համաձայն պատերազմից առաջ Թուրքիայի հայ բնակչության թիվը կազմում էր 2.026.700 մարդ, իսկ ջարդերից ու տեղահանությունից հետո վերապրողներինը՝ 592.200[30]։ Վերապրողների մեջ Թեոդիկը հաշվել է նաև Երուսաղեմում, Բեյրութում, Բաղդադում, Բասրայում, Մոսուլում, Դամասկոսում և Հալեպում եղած հայությունը։ Մյուս կողմից՝

[30] Տե՛ս Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1922, էջ 261—263։

այդտեղ նկատի է առնված նաև պատերազմից հետո Կիլիկիա, Կ. Պոլիս և այլուր վերադարձած հայությունը։ Նկատի ունենալով այդ հանգամանքները, Թուրքիայում մնացած հայերի թվի նախապատերազմյան ժամանակաշրջանին վերաբերող տվյալները պետք է ընդունել խիստ վերապահությամբ։ Ինչպես ասվեց, նրանցից շատերը զինադադարից հետո հատկապես Կիլիկիա վերադարձածներն էին, որոնք հետագայում կրկին ենթարկվեցին անմարդկային ջարդերի՝ այս անգամ արդեն քեմալականների կողմից։ Համեմատելով նախապատերազմյան ու հետպատերազմյան տարիների հայ բնակչության թիվը ցույց տվող տվյալները, պարզվում է, որ 1915—1916 թթ. տեղի ունեցած հայկական ջարդերի հետևանքով զոհվել են մոտ մեկուկես միլիոն հայեր, իսկ մնացածները՝ մեծ մասամբ կանայք ու երեխաներ, ցրվել են արաբական անապատներում[31]։ Արևմտահայության այդ հալածական բեկորները, ձգտելով խույս տալ անխուսափելի ոչնչացումից, փորձում էին ամենափոքր իսկ հնարավորության դեպքում հեռանալ արաբական անապատներից, մեկնել արևմտաեվրոպական երկրներ, Բալկաններ, Ամերիկա և այլուր, հուսալով գտնել փրկություն։ Սակայն ամենուրեք նրանք հանդիպում էին անասելի դժվարությունների և, ցրվելով զանազան երկրներում, անտուն ու անհույս դեգերում էին, կրելով բազում զրկանքներ։

Երբ այսպես օրեցօր հալվում էին արևմտահայության վերջին բեկորներն արաբական անապատներում և այլ երկրներում, ողբալի վիճակում էին գտնվում նաև Անդրկովկասում ապաստանած հայ փախստականները, որոնց թիվը անցնում էր 400 հազար մարդուց։ Ճիշտ է, այստեղ չկար թուրքական արյունոտ յաթաղանի անխնա բնաջնջումը, բայց այստեղ էլ իրենց սև գործն էին կատարում սովն ու համաճարակային հիվանդությունները։ Այդ տարիների հայկական մամուլը լեցուն է գաղթականների աղետալի վիճակի նկարագրություններով, որոնց վերհիշումն անգամ այսօր սարսուռ է առաջացնում։

Եվ այսպես, դեպի անխուսափելի մահ էր գնում թուրքական յաթաղանից հազիվ ազատված արևմտահայ գաղթականությունը, սակայն չէր երևում ոչ մի ուժ՝ նրան փրկելու համար։ Անտանտի տերությունները, որոնք կեղծավորաբար ի-

[31] Տե՛ս նույն տեղում, էջ 264։



րենց «փոքրիկ դաշնակիցն» էին անվանում հայ ժողովրդին, և որոնց քաղաքականության զոհն էր դարձել վերջինս, անտարբերությամբ ու նույնիսկ թշնամանքով էին վերաբերվում նրա արդարացի պահանջներին։

Այդպիսի պայմաններում հայ ժողովրդի համար փրկության և ազգային վերածննդի իրական ուղի նշեց 1917 թվականի հոկտեմբերին Ռուսաստանում հաղթանակած սոցիալիստական հեղափոխությունը, որը նոր դարագլուխ բացեց մարդկային հասարակության պատմության մեջ։ Հոկտեմբերյան հեղափոխությունը խառնեց իմպերիալիստական տերությունների ու խմբավորումների բոլոր հաշիվները համաշխարհային պատերազմի եռուն օրերին և արմատապես փոխեց միջազգային դրությունը նաև Մերձավոր արևելքում։ Աշխարհում առաջին սովետական կառավարությունը հանդես եկավ արտաքին քաղաքականության միանգամայն նոր սկզբունքներով։ Կտրականապես հրաժարվելով ցարական և ժամանակավոր կառավարությունների վարած զավթողական քաղաքականությունից, Սովետական Ռուսաստանը բոլոր ժողովուրդներին ու պետություններին դիմեց արդարացի հաշտության կնքման և խաղաղության հաստատման կոչով։ Ճնշված, իրավազուրկ ու շահագործվող ժողովուրդների և ազգությունների համար հսկայական նշանակություն ունեցան Սովետական Ռուսաստանի ներքին ու արտաքին քաղաքականության մի շարք կարևորագույն ակտերը, այդ թվում՝ խաղաղության մասին դեկրետը, «Ռուսաստանի և Արևելքի բոլոր աշխատավոր մահմեդականներին» ուղղված դիմումը, ռուսական զորքերի դուրս բերումը ուրիշ երկրներից, Արևմտյան Հայաստանի վերաբերյալ դեկրետը և այլն[32]։

Բազմաչարչար արևմտահայությունը, ինչպես և ամբողջ հայ ժողովուրդը, խորին գոհունակությամբ ընդունեց տվյալ պայմաններում իր շահերին ու բաղձանքներին համապատասխանող այդ դեկրետը։

Սակայն մի կողմից գերմանա-թուրքական ու անգլո-ամերիկյան իմպերիալիստների զավթողական քաղաքականության, իսկ մյուս կողմից՝ ռուսական ու անդրկովկասյան հակահեղափոխական ուժերի ծավալած հակասովետական գործունեության

[32] Տե՛ս «Декреты Октябрьской революции», М., 1933, էջ 393։

հետևանքով հնարավոր չեղավ իրականացնել հայ ժողովրդի համար պատմական բացառիկ կարևոր նշանակություն ունեցող այդ դեկրետը, որը հռչակում էր արևմտահայության ազատ ինքնորոշման անկապտելի իրավունքը՝ ընդհուպ մինչև լիակատար անկախության հաստատումը։ Օգտվելով Սովետական Ռուսաստանի համար ստեղծված լուրջ դժվարություններից և Անդրկովկասյան հակահեղափոխական բլոկի անճարակությունից, թուրքական զավթիչները շուտով կրկին գրավեցին Արևմտյան Հայաստանը։ Ավելին, թուրքական զորքերը ներխուժեցին Անդրկովկաս և իրենց ջարդարարական գործունեությունը ծավալեցին նաև արևելահայության նկատմամբ, չնայած վերջինիս օրհասական դիմադրությանը և փայլուն հերոսամարտերին 1918 թ. մայիսին Սարդարապատում, Բաշ Ապարանում և Ղարաքիլիսայում։

Ինչ խոսք, որ այդպիսի իրադրության մեջ ամեն կողմից թշնամիներով շրջապատված հայությանը փրկություն չէր կարող բերել արկածախնդրական պլաններով տարված դաշնակցական կառավարությունը, որի օրոք ոչ միայն արևմտահայ գաղթականությունը, այլև ամբողջ հայ ժողովուրդը արագորեն գնում էր դեպի մահ։

Դաշնակցության անիրականանալի երազանքներն ու անհեռատես քաղաքականությունը իրենց ողբալի հետևանքներով դրսևորվեցին նաև գաղթականության հարցում։ Սպասելով Անտանտի կողմից Հայաստանի սահմանների իբր թե որոշմանը (ծայրահեղ պարագայում գեթ մոտակա երեք-չորս վիլայեթները Արևելյան Հայաստանին կցելու ձևով), դաշնակցական կառավարությունը լավագույն դեպքում սահմանափակվում էր երբեմն-երբեմն մի կտոր հացի կամ հնամաշ հագուստեղենի ու նպաստի բաշխման միջոցով արևմտահայ գաղթականությանն իրեն որպես հուսալի հենարան ծառայեցնել։

Ուժերի ռեալ հարաբերակցությունը երբեք հաշվի չառնելու դաշնակների անհեռատես քաղաքականության հետևանքով 1915 թվականից ի վեր տառապող արևմտահայ գաղթականության վիճակը ոչնչով չբարելավվեց։ Ընդհակառակը, հետագայում նրան ավելացան նաև քեմալականների կողմից Հայաստանից գրավված նոր տերիտորիաների հայ, քուրդ, եզդի, ասորի և ռուս-մոլոկան բնակիչների զանգվածները։

Այսպիսով, հարյուր հազարավոր անարտադրող ու անօթևան



գաղթականությունը ծանր բեռի նման ընկած էր փոքրիկ ու աղքատ Հայաստանի Հանրապետության տեղական բնակչության ուսերին։ Տարիներ շարունակ կտրված լինելով հողից ու տնտեսությունից և օտարանալով օգտակար աշխատանքից, գաղթականությունը վեր էր ածվել թշվառ մուրացկանների մի հոծ զանգվածի, որը նպաստավոր միջավայր էր նաև ամեն տեսակ հանցագործ տարրերի ու խմբերի առաջացման համար։

Գաղթականության վիճակի թեթևացման գործում դաշնակցական կառավարության անհոգի վերաբերմունքն ու լիակատար անճարակությունը բացահայտ կերպով դրսևորվեց Միջագետքում ապաստան գտած հայ տարագիրների նկատմամբ նրա բռնած դիրքով։ Այնտեղ կուտակված գաղթականությունը, որը գտնվում էր շատ ծանր պայմաններում, դժվարին կացությունից դուրս գալու ելք էր որոնում։ Երբ այդ գաղթականությունն իր թշվառ դրության մասին Ամենայն Հայոց կաթողիկոսի միջոցով տեղեկացրեց դաշնակցական կառավարությանը, վերջինս նրան օգնելու փոխարեն դիմեց ուղղակի խաբեության[33]։

Դաշնակների կառավարությունը ըստ էության ոչինչ չէր անում երկրում կուտակված գաղթականության հարցը արմատապես լուծելու կամ զանազան գաղթօջախներում դեգերող տարագիրների դրությունը փոքր ի շատե բարվոքելու ուղղությամբ։

1920 թ. օգոստոսին դաշնակցական կառավարությունը քննարկեց արտաքին գործերի նախարարի զեկուցումը գաղութներում տարվելիք աշխատանքների մասին և որոշում կայացրեց նույն նախարարության կազմում հիմնել գաղութային բաժին՝ նրանց «նյութական ու բարոյական ուժերը Հայաստանի օգտին օգտագործելու նպատակով»[34]։

Դաշնակների կառավարության արտաքին գործերի նախարարության գաղութային բաժնի կազմակերպման վերաբերյալ հրահանգներ պարունակող փաստաթղթերը ակնհայտորեն ցույց են տալիս, թե ամենից առաջ ինչ ռեալ նպատակներ էին հետապնդում նրանց հեղինակները։ Այդ մասին եղած փաստաթղթերից մեկում ասված է, որ գաղութային բաժինը «կկազմակերպի Հ.(այաստանի) Հ.(անրապետության) օժանդակիչ

33 Տե՛ս ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 68/200, ց. 1, գ. 204, թ. 107—108 և «Երևան», Եռօրյա թերթ, Փարիզ, 28 ապրիլի, 1929 թ., № 498։
34 ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 68/200, ց. 1, գ. 448, թ. 182։

*միություններ Հ. Հ. արտասահմանյան դիվանագիտական ներկայացուցիչների հսկողության տակ, Հայաստանի վերաշինության և ներգաղթի գործին աջակցելու համար (թղթի վրա գրված լինելու և միամիտներին խաբելու նպատակով.—Հ. Մ.) և կըհաստատի ու կգանձի հայրենիքի տուրք հայ գաղութներու անդամներեն»[35] (մի բան, որն առանց գրվելու էլ գանձվում էր և մուտք արվում դաշնակցական պարագլուխների գրպանները՝ հատկապես արտասահմանում եղած ժամանակ հաճույքներից զուրկ չմնալու համար)։ Եվ իրոք, դաշնակները տարբեր անուններով (բանակի, ճակատը պաշտպանելու, անկախության փոխառության և այլ ֆոնդերի անվան տակ) հսկայական գումարներ էին կորզում հայկական գաղթավայրերից և դրանք ծառայեցնում իրենց կուսակցական ու անձնական շահերին[36]։*

*Խիստ անմխիթարական էր հայ գաղթականության վիճակը նաև Վրաստանում և Ադրբեջանում, որտեղ կուտակված հայ տարագիրների նկատմամբ մենշևիկներն ու մուսավաթականները բացահայտ թշնամական վերաբերմունք էին դրսևորում։*

*Այդ տարիներին հայ գաղթականությանը միակ ռեալ օգնություն ցույց տվող երկիրը Սովետական Ռուսաստանն էր, ուր ապաստան էին գտել տասնյակ հազարավոր գաղթականներ ու որբեր։ Անկասկած է, որ թուրքական արշավանքների սարսափներից, դաշնակցական կառավարության անհոգատարությունից և մենշևիկների ու մուսավաթականների բացահայտ թշնամական քաղաքականությունից բացի, հայ տարագիրներին դեպի հյուսիս մղող զորավոր պատճառներից մեկն էլ Սովետական Ռուսաստանի անշահախնդիր ու հոգատար վերաբերմունքն էր նրանց նկատմամբ։ Չնայած քաղաքական ու տնտեսական իր դժվարին կացությանը, Սովետական Ռուսաստանն աշխատում էր որքան հնարավոր է թեթևացնել նրանց վիճակը և ստեղծել տանելի պայմաններ։ Հենց միայն Հյուսիսային Կովկասում, ոչ լրիվ տվյալներով, 1920 թվականի աշնանը կուտակված էին ավելի քան 130 հազար հայ գաղթականներ, որոնց նյութական ու բարոյական զգալի աջակցություն էր ցույց տալիս ՌՍՖՍՀ Կենտրոնական վերաբնակեցման Կովկասյան հատուկ լիազորությունը[37]։*

*ՌՍՖՍՀ Ազգությունների գործերի ժողկոմատի հայկական կոմիսարիատը Ռուսաստանի և Ուկրաինայի բազմաթիվ քաղաքներում, որոնք ողողված էին հայ գաղթականներով ու որբերով, բացել էր տասնյակ որբանոցներ, դպրոցներ, հիվանդանոցներ, արտելներ, սննդակայաններ և այլն։ Միայն 1918—1919 թվականների տասն ամսվա ընթացքում ՌՍՖՍՀ ժողկոմխորհի կողմից հայ գաղթականության համար կենտրոնացված կարգով բաց էր թողնվել ավելի քան 10 միլիոն ռուբլի նպաստ, 200 հազար արշին կտորեղեն, 30 հազար կտոր պատրաստի հագուստ, մեծ քանակությամբ կոշկեղեն և այլ ապրանքներ։ Հայ գաղթականների համար մայրենի լեզվով հրատարակվում էին թերթեր, գրքույկներ և այլն, որոնք պրոպագանդում էին կոմունիստական կուսակցության ու սովետական կառավարության քաղաքականությունը, նրանց համախմբում սովետական իշխանության շուրջը։ Եվ բնավ պատահական չէր, որ երախտապարտ հայ գաղթականները բազմաթիվ նամակներով ու հեռագրերով իրենց շնորհակալության անկեղծ խոսքն էին հղում ռուս ժողովրդին, կոմունիստական կուսակցությանն ու սովետական կառավարությանը, անձամբ Վ. Ի. Լենինին՝ ցուցաբերած ջերմ հոգատարության և հսկայական օգնության համար[38]։*

*Մինչդեռ գաղթականության անտեր ամենուրեք շահագործող դաշնակների կառավարությունը ոչ միայն արմատական միջոցներ չէր ձեռնարկում նրա հարցի լուծման ուղղությամբ (ասենք, նա իրականում չէր էլ կարող այդ անել), այլև իմպերիալիստական տերությունների օգնության հույսի վրա կառուցած իր արկածախնդրական քաղաքականությամբ ուղղակի ապակողմնորոշում էր ժողովրդին։*

*Միայն Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության ծնունդ 1920 թվականի նոյեմբերին Հայաստանում հաղ-*

---

[35] Նույն տեղում, ց. 403, թ. 6։

[36] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», օրաթերթ, Երևան, 24 մարտի, 1923 թ., № 57։

[37] Տե՛ս Հայկական ՍՍՀ Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության պետական կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ), ֆ. 40/113, ց. 3, գ. 21, թ. 49—54։

[38] Տե՛ս «Հայ փախստականներին» գրքույկը, հրատ. հայկական կենտրոնական կոմիսարիատի, Մոսկվա, 1919։ Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Ս. Տ. Ալիխանյան, Հայկական գործերի կոմիսարիատի գործունեությունը (1917—1921), Հայպետհրատ, Երևան, 1958, էջ 86—127։

թանակած սովետական իշխանությունը փրկության ուղի բացեց ամբողջ հայ աշխատավորության, այդ թվում՝ ինչպես երկրում գտնվող արևմտահայ գաղթականության, այնպես էլ սփյուռքում դեգերող տարագիր հայության համար։

Սովետական Հայաստանի կառավարությունը, որպես հայ աշխատավորության շահերի իսկական պաշտպան, երբեք անտարբեր չմնաց դաժան ճակատագրի բերումով դժնդակ պայմաններում գտնվող և օգնություն հայցող պանդուխտ հայության հանդեպ։ Սովետական կառավարությունը հենց սկզբից հետևողականորեն շարունակ անդրադառնում էր այն հարցին, թե դեպի ո՞ւր է թեքվում նրա հայացքը, ի՞նչ անցուդարձեր են կատարվում սփյուռքահայության մեջ։

Սովետական կառավարությունը երբեք չէր կարող աչքաթող անել այն պարզ իրողությունը, որ այն ժամանակ Հայաստանի սահմաններից ներս ապրում էր ավելի քիչ հայություն (1920 թվականին Սովետական Հայաստանի ժառանգած ամբողջ բնակչության թիվը կազմում էր ընդամենը 720 հազար մարդ), քան դրսում և որի ճնշող մեծամասնությունը կազմում էին թուրքական յաթաղանից մի կերպ փրկված աշխատավորական տարրերը։ Մինչև 1915 թ. եղեռնական իրադարձությունները հայրենիքից դուրս ապրող հայության թիվը (առանց բուն ռուսական և օսմանյան կայսրությունների լայնածավալ տերիտորիաներում բնակվողների) հասնում էր մոտ 200 հազարի, որից մոտ 100 հազարը՝ Իրանում, 25 հազարը՝ Բուլղարիայում, 10 հազարը՝ Ռումինիայում, 20 հազարը՝ Եգիպտոսում և Հաբեշստանում (Եթովպիա), իսկ մնացածը՝ ավելի փոքր զանգվածներով ցրված էր Եվրոպայի, Ասիայի և Ամերիկայի այլևայլ երկրներում[39]։ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ և դրանից հետո, զանգվածային կոտորածներից փրկված ու բռնագաղթի միջոցով Թուրքիայից արտաքսված հայության բեկորները անհամեմատ ստվարացրին ու բազմապատկեցին հայկական գաղթօջախներն աշխարհի տարբեր անկյուններում, ստեղծելով ընդարձակածավալ հայկական սփյուռքը։ Ի դեպ, սփյուռք տերմինը մեր լեզվում լայն գործածության մեջ մտավ փաստորեն առաջին համաշխարհային պատերազմից հետո և մեզ համար ունի

[39] Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՕՇ ՊԿԱ, ֆ. 4/114, ց. 2, գ. 88, թ. 47—48 և ֆ. 113, ց. 3, գ. 53, թ. 72։



մեր ժողովրդի աշխարհացրիվ վիճակն արտահայտող աշխարհագրական ու քաղաքական որոշակի իմաստ։

Մեր կարծիքով անհրաժեշտ է որոշակի ճշգրտում կատարել գաղութահայ և սփյուռքահայ հասկացությունների հարցում։ Դրանք երկուսն էլ մեզանում հավասարապես օգտագործվում են արտահայտելու համար հայրենիքից դուրս ապրող հայկական համայնքների գոյությունը։ Սակայն այդ հին ու նոր համայնքներն իրարից տարբերվում են ոչ միայն իրենց ծագումով, այլև ընդհանրապես հայ իրականության մեջ ունեցած դերով ու բնույթով։ Ուստի տարաշխարհի ներկա հայկական համայնքների համար, մեր կարծիքով, ավելի նպատակահարմար է օգտագործել սփյուռքահայ բառը։

Հայկական նախկին գաղութները առաջացել և գոյություն են ունեցել այն ժամանակ, երբ դեռևս հայ ժողովրդի ճնշող մեծամասնությունն ապրում էր իր հայրենիքում։ Մինչդեռ ժամանակակից հայկական սփյուռքը ձևավորվեց թուրքական կառավարության կազմակերպած գենոցիդի հետևանքով, արևմտահայության զանգվածային տեղահանությունից հետո, երբ հայ ժողովրդի պատմական հայրենիքի մի մեծ մասը ուղղակի հայաթափվեց։ Արևմտահայության կենդանի մնացած բեկորներն ու նրանց նոր շառավիղները կազմեցին ժամանակակից սփյուռքահայությունը։

Հայկական սփյուռքի կազմավորումը փաստորեն զուգադիպեց Արևելյան Հայաստանում հայկական սովետական սոցիալիստական պետականության հաստատման հետ, որը չէր կարող իր կնիքը չդնել արտերկրի հայության կողմնորոշման և հետագա ճակատագրի վրա։ Իր գոյության հենց սկզբից Սովետական Հայաստանը փրկության խարիսխ դարձավ ոչ միայն հանրապետությունում եղած հայության համար, այլև աշխարհասփյուռ արևմտահայության տարագիր հատվածի համար։ Բոլոր «բարեկամներից» խաբված ու լքված սփյուռքահայության համար Սովետական Հայաստանը դարձավ հույսի կարևոր ապավեն։ Հայաստանում սովետական իշխանության հաղթանակի լուրը ուրախությամբ ընդունվեց հայրենաբաղձ սփյուռքահայ աշխատավորների կողմից, որոնք դասակարգային որոշակի տրամաբանությամբ հենց սկզբից վճռականորեն դիմուղղվեցին դեպի Սովետական Հայաստան, անվերապահորեն կանգնեցին



4—1181

նրա պաշտպանության դիրքերում, նրանում տեսնելով իրենց իղձերի իրականացման միակ հնարավորությունը։

Այժմ փորձենք, գոնե մոտավոր կերպով վերականգնել սփյուռքահայության թիվը 20-ական թվականների սկզբների տվյալներով, չնայած այդ հարցում եղած դժվարություններին ու բարդություններին։

20-ական թվականների սկզբի տվյալներով բնակչության թվով ամենամեծը Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախներն էին։ Այն ժամանակ այնտեղ ապաստան էին գտել շուրջ 150 հազար հայեր, որից մոտ 90 հազարը՝ Հալեպում և նրա շրջակայքում, 18 հազարը՝ Բեյրութում, 8 հազարը՝ Դամասկոսում, իսկ մնացածները ցրված էին այլ բնակավայրերում[40]։ Մի կողմից հայության այդ հոծ զանգվածի առկայությունը, իսկ մյուս կողմից արաբ բնակչության հյուրընկալ վերաբերմունքի շնորհիվ ստեղծված նպաստավոր պայմանները Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթավայրերը դարձրին սփյուռքահայ կարևոր օջախներ։ Հենց այն ժամանակվանից Հալեպն ու Բեյրութը դարձան Մերձավոր արևելքի հայության նշանավոր կենտրոններ՝ իրենց հայկական վարժարանների լայն ցանցով, մտավորական կարող ուժերով, պարբերական մամուլով, կուսակցական, մշակութային, մարզական միություններով ու ակումբներով։

Իր մեծությամբ և ազգային-հասարակական ակտիվ գործունեությամբ այնուհետև աչքի էր ընկնում ԱՄՆ-ի հայկական գաղթօջախը, որի կազմավորումը սկիզբ էր առնում դեռևս անցյալ դարի 70-ական թվականներից։ Ամերիկյան մայրցամաքի երեք հայկական գաղթավայրերում, 20-ական թվականների սկզբում ապրում էր 128 հազար հայ։ Դրանից 125 հազարը կենտրոնացած էր ԱՄՆ-ում և Կանադայում, իսկ շուրջ 3 հազարը՝ Լատինական Ամերիկայի մի քանի երկրներում՝ Արգենտինայում, Ուրուգվայում, Բրազիլիայում, Մեքսիկայում, Կուբայում և այլուր[41]։ Կանադայի և Լատինական Ամերիկայի հայկական համայնքները բազմացան ու աշխուժացան հատկապես 1922 թվականից հետո, որպես հետևանք Միացյալ Նահանգների կողմից հայերի զանգվածային ներհոսման դեմ ընդունված օրենքի։ Մերձավոր արևելքից ու Եվրոպայից դեպի նոր աշխարհ

[40] Տե՛ս «Հայաստանի կոչնակ», շաբաթաթերթ, Նյու Յորք, 1923 թ., № 25, էջ 794։

[41] Տե՛ս նույն տեղում, 1923 թ., № 3, էջ 85—86։



ուղղված տարագիր հայերի քարավանները, իրենց առջև փակված գտնելով ԱՄՆ-ի դարպասները, շրջվում էին դեպի Կանադայի և Լատինական Ամերիկայի ափերը։ Դեպի Լատինական Ամերիկա հայերի հոսանքն ուժեղացավ հատկապես Ֆրանսիայի կողմից Կիլիկիան լքելուց և այն քեմալականների տնօրինությանը հանձնելուց հետո։ Կիլիկիայում քեմալականների կազմակերպած ջարդերից փրկված մարաշցի, այնթապցի, հաճնցի ու զեյթունցի տարագիրները, որոնք ժամանակավոր ապաստան էին գտել Սիրիայի ու Լիբանանի գաղթականական կայաններում, զանգվածորեն ձգվում էին դեպի Ամերիկա։ Նրանք էլ հենց, հաստատվելով Լատինական Ամերիկայի երկրներում, դարձան այդ շրջանի հայկական գաղթօջախների հիմնական կորիզը։ Այդտեղ արագորեն աճում էր հայության թիվը նաև ի հաշիվ Բալկանների, Իրանի և Թուրքիայում մնացած հայության։ Այդ մասին է խոսում այն փաստը, որ արդեն 1925 թվականին Լատինական Ամերիկայում հայության թիվը հասել էր 15 հազարի, իսկ Բուենոս Այրեսը դարձել էր գաղութահայ կյանքի կարևոր կենտրոններից մեկը։ Ինչ խոսք, որ Մերձավոր արևելքի ու Եվրոպայի մի քանի երկրներում հայության համար ստեղծված անբարենպաստ պայմանների հետևանքով հեռավոր ամերիկյան աշխարհամաս մեկնող տարագիրները երբեք էլ այնտեղ չգտան ավելի նպաստավոր պայմաններ։ Ինչպես մյուս երկրներում, այնպես էլ Լատինական Ամերիկայում որոշ չափով ունևոր ու ինքնաբավ վիճակի հասած փոքրաթիվ ընտանիքների կողքին հսկայական զանգված էին կազմում ծայրահեղ թշվառության մեջ արվարձանային խղճուկ հյուղակներում իրենց գոյությունը հազիվ պահպանող հայ տարագիրները։ Չնայած հայության թվի անընդհատ ավելացմանը, այնուամենայնիվ Լատինական Ամերիկայի երկրներում մեծ չափերի էր հասնում ապազգայնացումը, ուղղակի ձուլումը։

Քսանական թվականներին, ըստ իրենց մեծության, հայության հոծ համախմբման տեսակետից, երրորդ տեղը գրավում էին Բալկանյան երկրների՝ բուլղարահայ, ռումինահայ և հունահայ գաղութները։ Բուլղարիայում ապրում էր 46 հազար, Ռումինիայում (Տրանսիլվանիայի և Բեսարաբիայի հետ միասին)՝ 43 հազար, Հունաստանում և Կիպրոսում՝ 79 հազար հայ[42]։ Առաջին համաշխարհային պատերազմին հաջորդած դի-

[42] Տե՛ս նույն տեղում։

նագաղարից և հատկապես Զմյուռնիայի աղետից հետո, Հունաստանը, ուր վաղուց ի վեր կար հայկական գաղութ, դարձավ լայն բացված դարպասներով հյուրընկալ ապաստան աշխարհասփյուռ սպանդից ճողոպրած բյուրավոր հայերի համար։ Սակայն այդ տարիներին խիստ հարափոփոխ ու անկայուն էր հայերի թիվը Հունաստանում։ Տասնյակ հազարավոր խուճապահար տարագիրներ, հասնելով Պիրեյա, այնտեղից տարածվում էին դեպի Աթենք, Սալոնիկ ու դրանց շրջակայքի գաղթականական կայանները։ Թուրքիայում կազմակերպված հայկական որբանոցների հազարավոր որբերը նույնպես, քեմալական հետապնդումների հետևանքով, էվակուացվեցին և տեղավորվեցին Քեֆալոնիայում, Կորնթոսում, Կորֆու կղզում և այլ վայրերում։ Բայց օրվա հացի կարոտ, ցնցոտիների մեջ ծայր թշվառության մատնված, տեղի ունեցած սարսափների արհավիրքները վերապրող ու վաղվա անստույգ վիճակի հղձավանջից տանջվող անտուն պանդուխտները խիստ անկայուն վիճակի մեջ էին Հունաստանում, ուստի այնտեղ երկար չէին մնում։ Մինչ մի կողմից գաղթականների նորանոր խմբեր էին ապաստանում Հունաստան, նույն ժամանակ նախկիններից հազարավորները այնտեղից մեկնում էին դեպի Ամերիկա, Ֆրանսիա և այլ երկրներ, հուսալով գտնել ավելի բարվոք պայմաններ։ Այսպիսով, այդ տարիներին Հունաստանում ապաստանած հայ գաղթականների թիվը խիստ փոփոխական էր։

1922 թվականի վերջերին կատարված հաշվարկումների համաձայն արտասահմանյան մյուս երկրներում գաղութահայությունը տեղաբաշխված էր հետևյալ կերպ. Եգիպտոսում, Սուդանում և Եթովպիայում՝ 28 հազար, Հնդկաստանում, Ճավայում և Հեռավոր արևելքի այլ երկրներում՝ 12 հազար, Եվրոպայում (Ֆրանսիա, Անգլիա, Իտալիա, Հունգարիա, Ավստրիա, Գերմանիա, Չեխոսլովակիա, Հարավսլավիա, Բելգիա, Հոլանդիա և այլն)՝ 38 հազար[43]։

Սակայն գնալով անընդհատ ավելանում էր եվրոպական երկրների հայությունը։ Օրինակ, արդեն 1925 թվականին միայն Ֆրանսիայում հայերի թիվը հասել էր մոտ 45 հազարի։ Ընդհանրապես ֆրանսահայ համայնքը, Մերձավոր արևելքի և ԱՄՆ-ի գաղթօջախներից հետո, ամենահոծ հայկական գաղթօջախը եղավ արտասահմանում։

[43] Տե՛ս նույն տեղում։



Բացի վերը թվարկած երկրներից, զգալի թվով՝ մոտ 15 հազար հայեր էլ ապրում էին Միջագետքում (Իրաք) և Պաղեստինում։ Եթե այս բոլորին ավելացնենք նաև Իրանի (մոտ 100 հազար) և Թուրքիայում մնացած հայության թիվը, որը հասնում էր 281 հազարի[44] (150 հազարը Կ. Պոլսում, իսկ 131 հազարը՝ փոքրասիական գավառներում), ապա կարելի է ասել, որ 1920—1922 թվականների տվյալներով սփյուռքահայության ընդհանուր թիվը կազմում էր մոտ 920 հազար մարդ[45]։

Իհարկե, այս թվերը միայն մոտավոր գաղափար կարող են տալ սփյուռքահայության թվի վերաբերյալ, քանի որ եղած աղբյուրները միանգամայն տարբեր տվյալներ են ներկայացնում։ Դրա կարևոր պատճառներից մեկն այն է, որ այդ տարիներին չի եղել ճշգրիտ վիճակագրություն։ Աննպաստ պայմանների հետևանքով հայությունը շատ երկրներում երկար չէր կարողանում մնալ միևնույն տեղում, այլ վարում էր թափառական կյանք և հնարավոր չէր լինում որոշել նրա իրական թիվը։ Այնուհետև, տարբեր երկրներում գաղթականության հաշվառումը միանգամայն տարբեր սկզբունքներով էր կատարվում և անհնարին էր ստույգ տվյալներ ձեռք բերել։ Օրինակ, ԱՄՆ մեկնածների ազգային հատկանիշը որոշվում էր ներգաղթի վարչության գրանցումներով, իսկ երկրի ներսում հետագայում կատարված աճը չէր ավելացվում կոնկրետ ազգության թվին։ Այնտեղ ծնվածներն ըստ ամերիկյան վիճակագրության պարզապես համարվում էին ԱՄՆ-ի քաղաքացիներ և ոչ այս կամ այն ազգի ներկայացուցիչներ։ Նույնն էր դրությունը նաև Ֆրանսիայում և մի շարք ուրիշ երկրներում։ Ահա թե ինչու այդ տարիներին գաղութահայության թիվը զանազան աղբյուրներում տատանվում էր 600 հազարից մինչև մեկ միլիոն։

Չնայած սփյուռքահայությունն իրենից ներկայացնում էր այդքան ստվարաթիվ մի զանգված, այնուամենայնիվ, նրա գլխին սպառնալից կախված էր ուծացման չարագուշակ վտան-

[44] Տե՛ս նույն տեղում։

[45] Տե՛ս Հայկ. ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 43, ց. 1, գ. 41, թ. 13, ֆ. 68/200, ց. 1, գ. 514, թ. 270 և 274, համե. նաև՝ Հայկ. ՍՍՀ ՀՀՍՃ ՊԿԱ, ֆ. 4/114, ց. 1, գ.3, թ. 38—41 և 115, «Հայաստանի կոչնակ», 1923 թ., № 3, էջ 85—86 և № 25, էջ 794, «Հայրենիք», ամսագիր, Բոստոն, 1925 թ., № 2, էջ 90—102, Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Վենետիկ, 1926, էջ 577—590, Ս. Անդրեասյան, Սփյուռքը և հայրենիքը, էջ 7։

գը, որովհետև նա կտրված էր հարազատ երկրից, ցրված տարբեր վայրերում և ենթակա ամեն տեսակ ազդեցությունների։ Ապազգայնացման ու ձուլման պրոցեսը մեծապես պայմանավորված էր այնպիսի գործոններով, ինչպես հյուրընկալող երկրի տնտեսական ու մշակութային զարգացման մակարդակը, տիրող քաղաքական մթնոլորտը, գաղթօջախի ներսում սեփական մտավորական ուժերի պակասությունը, կրթական ու մշակութային օջախների բացակայությունը և այլն։ Սփյուռքում հայապահպանման հիմնական և կարևոր գործոններից մեկն, անշուշտ, գաղթօջախների և մայր երկրի փոխադարձ կապերի ամրության ու շփումների հաճախականության մեջ է։

Ապազգայնացման ու օտարացման ամենից ավելի ենթակա էր հայությունը Ամերիկայում, Բալկաններում, Ֆրանսիայում և եվրոպական մյուս երկրներում։ Այդ գաղթօջախներում մի շարք պատճառներով նոր սերունդը հեշտությամբ մոռանում էր իր մայրենի լեզուն, իր ժողովրդի պատմությունը, մշակույթը, արագորեն խորթանում հայությունից և կորցնում իր ազգային դիմագիծը։ Ապազգայնացման վտանգի դեմ սփյուռքահայության դիմագրավման համար հսկայական ու վճռական նշանակություն ունեցավ Հայաստանում հաղթանակած սովետական իշխանությունը։ Սովետական Հայաստանի գոյության փաստն ինքնին օտարության մեջ գեգերող տարագիր հայությանը տվեց պայքարի ուժ, փրկության հույս և աներեր հավատ՝ ապագայի նկատմամբ։

Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմն ու սովետական կառավարությունը հենց սկզբից ըմբռնումով և հոգատարությամբ վերաբերվեցին սփյուռքահայությանը։ Սփյուռքահայության նկատմամբ ճիշտ քաղաքականության մշակման ու իրականացման գործում կարևոր ավանդ ունեն Ալ. Մյասնիկյանը (Ալ. Մարտունի), Ս. Սրապիոնյանը (Ս. Լուկաշին), Ս. Համբարձումյանը, Ասք. Մռավյանը, Աշ. Հովհաննիսյանը, Ալ. Բեկզադյանը, Ար. Երզնկյանը, Դ. Շահվերդյանը, Պ. Մակինցյանը, Ս. Փիրումյանը և պետական-կուսակցական ու մտավորական ուրիշ ականավոր գործիչներ, որոնք իրենց պրակտիկ գործունեությամբ, ելույթներով ու հոդվածներով նպաստում էին սփյուռքահայ զանգվածների շրջանում տարվող աշխատանքներին, հայրենիք—սփյուռք կապերի ստեղծմանն ու զարգացմանը և այլ խնդիրների լուծմանը։ Այդ իմաստով հատկապես մեծ



են կուսակցական ու պետական ականավոր գործիչ, ՀՍՍՀ Ժողկոմխորհի անդրանիկ նախագահ Ալ. Մյասնիկյանի ծառայությունները։ Հայաստանում և Անդրկովկասում աշխատած տարիներին նրա գրեթե բոլոր ելույթներում, հոդվածներում ու աշխատություններում շոշափվել են սփյուռքահայության և Սովետական Հայաստանի հարաբերությունների հետ կապված խնդիրները։ Սփյուռքահայ զանգվածներին նրա կողմից գործիմացաբար պարզաբանված են նրանց հուզող հարցերը և ցույց տրված պայքարի ճիշտ ուղիները։ Ալ. Մյասնիկյանը գտնում էր, որ սփյուռքահայ աշխատավորության և Սովետական Հայաստանի միջև պետք է ձգված լինի ամուր կամուրջ, որովհետև «Խորհրդային Հայաստանը այն կայանն է, որը ապահովում է հայի ֆիզիկական գոյությունը, հայ աշխատավորի ազատությունը և բարեկեցությունը», որովհետև նա նաև գաղութահայ աշխատավորության և առհասարակ գաղթականական հայության փրկության, ազատության և երջանկության առհավատչյան է[46]։

Մինչև Հայաստանում սովետական իշխանության հաստատումը, օտար երկրներում հայրենազուրկ գեգերող արևմտահայ տարագիրները կրկին իրենց հայրենի օջախները վերադառնալու որոշ հույսեր էին կապում մեծ տերությունների հետ, որոնք ժամանակին «ազատության ու անկախության» վերաբերյալ բազում խոստումներ էին տվել նրանց։ Սակայն պատմության դառը փորձը սփյուռքահայ զանգվածներին հանգեցրեց այն ճշմարիտ եզրակացությանը, որ փրկության միակ խարիսխը Սովետական Հայաստանն է։ Ահա թե ինչու նրանք որոշակիորեն շրջադարձ կատարեցին դեպի Սովետական Հայաստան, կանգնեցին նրա պաշտպանության դիրքերում և վճռական ցանկություն հայտնեցին ներգաղթել իրենց ազատագրված ու սոցիալիզմի ուղին թևակոխած նոր հայրենիքը։ Այսպիսով, Սովետական Հայաստանն իր գոյության հենց սկզբից դարձավ համայն հայ աշխատավորների մայր հայրենիքը, նրանց վերջնական հանգրվանը։

Սփյուռքահայության մեջ լայն արձագանք գտավ և նրան դեպի հայրենիք կողմնորոշելու գործում հսկայական նշանա-

[46] Տե՛ս Ալ. Մյասնիկյան (Մարտունի), Գաղութահայ աշխատավորությանը, էջ 13—14։

կությունն ունեցավ Հայաստանի բանվորների, գյուղացիների և կարմիր բանակայինների պատգամավորների խորհուրդների առաջին համագումարի (30-ը հունվարի—4-ը փետրվարի 1922 թ.) դիմումը՝ ուղղված սփյուռքահայությանը։ Ազատագրված հայ ժողովրդի պետական իշխանության բարձրագույն օրգանը այդ դիմումի մեջ սրտագին ողջույններ էր հղում արտասահմանում ցրված բոլոր հայ տարագիրներին։ Դիմումի մեջ միաժամանակ հույս էր հայտնվում, որ երկրի վերաշինության և նրա լավագույն ապագայի կերտման գործում իրենց արժանի ավանդը կներդնեն նաև սփյուռքահայ աշխատավորները, որովհետև միայն այդ ուղիով, միայն Սովետական Հայաստանի հզորացմամբ ու բարգավաճմամբ կգա նաև նրանց փրկությունը[47]։ Այդ տարիներին գաղութահայ միջավայրում անցյալի վերաքննության, նոր դիրքորոշման և ապագա գործունեության շուրջը համառ պայքար էր գնում տարբեր հոսանքների միջև։ Նման պայմաններում սփյուռքահայ աշխատավորության ճիշտ կողմնորոշելու համար կարևոր նշանակություն ուներ Սովետական Հայաստանից նրան ուղղված ամեն մի ճշմարիտ խոսք, առավել ևս հայ ժողովրդի պետական իշխանության բարձրագույն օրգանի դիմումը։

Սփյուռքի տարբեր անկյուններում պրոսովետական մտայնության առաջացման ու զորացման գործում մեծ նշանակություն ուներ Սովետական Հայաստանի մասին ճշմարիտ ու բազմակողմանի ինֆորմացիայի տարածումը։ Այդ իմաստով կարևոր դեր էին կատարում սփյուռքահայ առաջադիմական կազմակերպություններն ու մամուլը, մի շարք երկրների՝ ԱՄՆ-ի, Բուլղարիայի, Ֆրանսիայի կոմունիստական կուսակցությունների մեջ ստեղծված հայկական մասնաճյուղերը, ինչպես նաև եվրոպական երկրներում առաջ եկած հայկական ուսանողական միությունները։

Մայր հայրենիքի և սփյուռքահայության միջև որպես կապի կարևոր օղակներ էին ծառայում Սովետական Ռուսաստանի և Հայկական ՍՍՀ դիվանագիտական, տնտեսական ու առևտրական ներկայացուցչությունները, առանձին պատվիրակությունները, սովետահայ մամուլը և այլ միջոցներ։

[47] Տե՛ս «ՀՍԽՀ բանվորների, գյուղացիների և կարմիր բանակայինների խորհուրդների Ա համագումարը», Երևան, 1922, էջ 150—151։



Սովետական Հայաստանի և սփյուռքահայության միջև կարևոր կամուրջ դարձավ նաև 1921 թ. սեպտեմբերին կազմակերպված Հայաստանի օգնության կոմիտեն (դրա մասին ավելի մանրամասն խոսք կլինի իր տեղում), որի մասնաճյուղերը տարածվեցին հայկական գրեթե բոլոր գաղթօջախներում և որոշակի դեր կատարեցին սփյուռքահայությանը մայր հայրենիքի հետ կապելու, բուրժուա-ազգայնական հոսանքների վնասակար ազդեցությունից դուրս հանելու գործում։

Գաղթաշխարհի հետադիմական ուժերը, հատկապես դաշնակցությունը, շատ գոհ էին, որ սկզբնական շրջանում թույլ էին կապերը Սովետական Հայաստանի և սփյուռքի միջև։ Այդ հանգամանքը նրանց հնարավորություն էր տալիս չարախոսել սովետական կառավարության հասցեին, զրպարտել նրան, թե իբր «բոլշևիկները չեն ուզում կապ պահպանել գաղութների հետ»։ Դաշնակներն աղմուկ էին բարձրացնում և հոխորտում, թե միայն «իրենք են հոգում ազգի շահերի մասին» և այլն։ Իսկ երբ այդ կապը ստեղծվեց, և օրըստօրե ավելի էին սերտանում հայրենիքի և սփյուռքի միջև փոխհարաբերությունները, նրանք սկսեցին խիստ անհանգստանալ։ Դաշնակցությունն սկսեց փոխել իր «երգի» եղանակը և, դիմելով ամեն տեսակ խարդախումների, ձգնում էր մոլորության մեջ գցել սփյուռքահայությանը, պնդելով, ինչպես պատկերավոր կերպով Ա. Մյասնիկյանն է գրել իր «Կուսակցությունները գաղութահայության մեջ» գրքում, թե իբր «բոլշևիկները քեզ ուզում են շահագործել, դու նրանց փորացավն ես, իսկ քո դարդը նրանց չի զբաղեցնում, մի լսիր նրանց, այլ՝ մեզ, չէ՞ որ մենք ենք քո հարազատները» և նման կարգի այլ բարբաջանքներ։ Իրականում դաշնակցությունն այդպիսի մեքենայությունների ու կեղծիքների էր դիմում այն պարզ պատճառով, որ եթե Սովետական Հայաստանի ազդեցության ուժեղացման հետևանքով գաղութահայությունը լիովին երես դարձներ իրենից, ապա նրա գոյությունը կդառնար անհնարին։

Սփյուռքում որոշակի դիրք ունեին ռամկավար ազատական և հնչակյան կուսակցությունները, որոնք դեռ այն ժամանակվանից հիմնականում կողմնակից էին սփյուռքահայության պրոսովետական կողմնորոշմանը։ Նրանք մերկացնում էին դաշնակցության ազգավնաս գործունեությունը և պաշտպանում Սովետական Հայաստանը։

Պետք է նշել, որ Հայաստանում սովետական իշխանության հաստատումից հետո, սփյուռքահայ հասարակական-քաղաքական հոսանքների և ուժերի միջև մղվող պայքարի հիմնական առանցքը, կարևոր հանգույցը դարձավ վերաբերմունքը դեպի մայր հայրենիքը։ Այդ պահից սկսած «ո՞վ ում» հարցը գաղթաշխարհում լուծվում էր Սովետական Հայաստանի նկատմամբ ունեցած դիրքորոշմամբ։ Ժողովրդական զանգվածները այս կամ այն հոսանքի ու գործչի դերը, նրա նկատմամբ իրենց վերաբերմունքը որոշում էին այն բանով, թե տվյալ հոսանքն ու գործիչը թեր թե՞ դեմ են Սովետական Հայաստանին։

Դեպի Սովետական Հայաստան՝ որպես համայն հայության հայրենիքի սփյուռքահայության կողմնորոշման գործում հսկայական զգաստացնող նշանակություն ունեցավ նաև Լոզանի կոնֆերանսը, որը վերջնականապես ցրեց արևմտյան տերություններից ունեցած բոլոր սպասելիքները։ Լոզանի 1922—1923 թթ. տեղի ունեցած միջազգային կոնֆերանսը, ուր արևմտյան տերությունները ու քեմալական Թուրքիան իջեցրին հայկական հարցի իրենց սարքած «վերջին» ու քստմնելի արարի արյունաշաղախ վարագույրը, վերջնականապես սթափեցրեց ու լիովին զգաստացրեց սփյուռքահայությանը։ Հայկական հարցը Լոզանում փաստորեն փոխարինվեց աշխարհով մեկ ցրված արևմտահայ գաղթականներին իրենց նախկին բնակավայրերը վերադառնալու թույլտվություն տալու կամ էլ այսպես կոչված «հայկական օջախ» ստեղծելու գաղափարով։

Այս բոլորն, ինչ խոսք, չէին կարող լիովին չբացել սփյուռքահայ աշխատավորների աչքերը՝ տեսնելու համար տարիներ շարունակ իրենց «բարեկամներ» հայտարարած մարդկանց ու կառավարությունների իսկական դեմքը, նրանց ստոր խաբեությունը։ Ահա թե ինչու տարագիր հայությունը վերջնականապես ու վճռականորեն շրջադարձ կատարեց այդ կեղծ բարեկամներից և իր հայացքն ուղղեց դեպի վերածնվող Սովետական Հայաստանը։

Սփյուռքահայ աշխատավորները գործնականում տեսան ու համոզվեցին, որ սովետական կառավարությունը և կոմունիստական կուսակցությունը, չնայած երկրի քայքայված ու դժվարին վիճակին, սովետական իշխանության առաջին իսկ օրերից անում են ամեն բան, որպեսզի կարճ ժամանակամիջոցում բուժեն այն



խոր վերքերը, որ տարիներ շարունակ առանց սպիանալու իր վրա կրում էր հայ ժողովուրդը։

Ուստի պատահական չէր, որ լքված ու անդեկ մնացած սփյուռքահայ զանգվածների հայացքները աներկբայելիորեն ու աննահանջ կերպով լիովին դարձան դեպի Սովետական Հայաստան, որտեղից առկայծում էին լույսի ու հույսի կենարար ճառագայթները։ Սովետական իրականության մասին որքան ավելի շատ ճշմարտացի ու փաստալից տեղեկություններ էին երևան գալիս արտասահմանյան մամուլում ու հայկական շրջաններում, այնքան ավելի էր աճում սփյուռքահայերի ձգտումը դեպի Սովետական Հայաստան։ Այդ գործում, անշուշտ, վճռական դեր խաղացին նաև Սովետական Հայաստանում կուտակված արևմտահայ գաղթականության նկատմամբ դրսևորված հոգատարությունը, նրա հարցի արմատական լուծման ուղղությամբ ձեռնարկված գործնական առաջին միջոցառումները։

Այսպիսով, գաղթաշխարհում օրըստօրե ավելի էր զորանում սովետական օրիենտացիան և ծավալվում էր սփյուռքահայերի անկեղծ ու նվիրական ձգտումը «դե՛պի տուն, դե՛պի հայրենիք, դե՛պի Հայաստան», նրանց պատկերավոր խոսքերով ասած՝ «դե՛պի ավետյաց երկիր»։ Ծնունդ էր առնում հայրենադարձության հայրենասիրական շարժումը, որը շարունակվում է առ այսօր։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

## ԱՌԱՋԻՆ ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

Սովետական իշխանությունը Հայաստանում հաղթանակեց մի այնպիսի ժամանակ, երբ երկիրը գտնվում էր ուղղակի անդունդի եզրին։ Առաջին համաշխարհային իմպերիալիստական պատերազմը և դաշնակների արկածախնդրական ու անճարակ քաղաքականությունը լիակատար քայքայման էին հասցրել Հայաստանը։ Նախապատերազմյան առանց այն էլ ցածր մակարդակի համեմատությամբ խիստ անկում էր ապրել տնտեսության գլխավոր ճյուղը հանդիսացող գյուղատնտեսությունը։ Ահռելի չափերով կրճատվել էին ցանքատարածությունները, շարքից դուրս եկել ոռոգման սիստեմները, պակասել էր անասունների գլխաքանակը։ Գրեթե արտադրանք չէին տալիս եղած հատ ու կենտ արդյունաբերական ձեռնարկությունները։ Մի խոսքով, ամբողջ տնտեսության մեջ թագավորում էին կատարյալ քաոսն ու քայքայվածությունը։

Դրա հետ միասին Սովետական Հայաստանը ժառանգություն ստացավ սովի մատնված ու համաճարակային հիվանդությունների ճիրաններում գալարվող բնակչությամբ ավերված գյուղեր ու քաղաքներ։ Հայաստանում չկար մի անկյուն, որը ենթարկված չլիներ համատարած ավերածությունների, բնակչությունն ապրած չլիներ զանգվածային ներգաղթի կամ արտագաղթի հետ կապված դժվարությունները։ Նախկին Երևանի նահանգի ոչ մեծ տարածքը ողողված էր Արևմտյան Հայաստանի բազմաթիվ գավառներից եկած գաղթականներով։ 1920 թվականի աշնանը քեմալականների կողմից զավթված Կարսի, Կաղզվանի, Սուրմալուի և այլ շրջանների բնակչության թուրքական ասկյարների յաթաղանից փրկված մասը նույնպես



գտնվում էր հանրապետության տերիտորիայում։ Երկրում կուտակված արևմտահայ գաղթականության թիվը անցնում էր 200 հազարից։ Դրան ավելանում էր նաև տասնյակ հազարավոր որբ ու անապաստան երեխաների զանգվածը։

Տասնյակ հազարավոր հայ գաղթականներ էլ գտնվում էին Վրաստանում, Ադրբեջանում, Ռուսաստանում, Ուկրաինայում, Միջին Ասիայում և այլուր, որոնք Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո ձգտում էին վերադառնալ հայրենի երկիր, հարազատ միջավայր։

Ծանր էր Հայաստանի վիճակը, որն իրենից ներկայացնում էր բանաստեղծի խոսքերով ասած՝ «զարկված ու զրկված որբի հայրենիք, ողբի հայրենիք»։ Եվ բնավ պատահական չէր, որ ամենուրեք մոլեգնում էին սովն ու համաճարակային հիվանդությունները, որոնք օրական հարյուրավոր մարդկային զոհեր էին կլանում։

Կոմունիստական կուսակցության և սովետական պետության ականավոր գործիչ Գ. Կ. Օրջոնիկիձեն 1920 թ. դեկտեմբերի 1-ին, Բաքվի սովետի հանդիսավոր նիստում ունեցած ելույթում, ողջունելով Հայաստանում սովետական կարգերի հաղթանակը և նշելով գոյություն ունեցող դժվարությունները, դիպուկ կերպով ասել է. «...Է՛լ ավելի դժվար է, միլիոն անգամ ավելի դժվար է այդ իշխանությունը կառուցել այնտեղ՝ տանջված, ծվատված Հայաստանում, **որը քիչ է մնացել վերածվի գաղթականների ճանապարհության**»[1] (ընդգծումը մերն է.— Հ. Մ.)։

Այդքան մեծ թվով գաղթականության առկայությունը Հայաստանի վիճակը սովետական մյուս հանրապետությունների հետ համեմատած դարձնում էր բացառիկ։ Կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը քաջ գիտակցում էին, որ գաղթականության հարցը ամենադժվար լուծելի հարցերից մեկն է։ Նրանք լիովին ըմբռնում էին, որ առանց երկրում կուտակված հարյուր հազարավոր գաղթականության տեղավորման, բնակարաններով, հողով, գյուղատնտեսական գործիքներով և այլ միջոցներով ապահովելու, մի խոսքով, առանց նրան սեփական տնտեսության հետ կապելու, չէին կարող իրականացվել նաև սովետական իշխանության առջև ծա-

[1] Գ. Կ. Օրջոնիկիձե, Ընտիր հոդվածներ և ճառեր, Երևան, 1950, էջ 34։

ռացած քաղաքական ու տնտեսական կարևորություն ունեցող մյուս խնդիրները՝ այդ թվում հայրենիք ներգաղթելու վերաբերյալ սփյուռքահայ աշխատավորների ցանկություններն ու պահանջները։

Ինչպես քաղաքական ու տնտեսական լուրջ դժվարությունների հաղթահարման, այնպես էլ գաղթականության հարցի լուծման գործում, անշուշտ, հսկայական նշանակություն ունեցավ Սովետական Ռուսաստանի և եղբայրական մյուս հանրապետությունների բազմակողմանի օգնությունը Հայաստանին։

Չնայած իր տնտեսական ու քաղաքական դժվարին կացությանը, հայ աշխատավորությանը եղբայրական օգնության ձեռք մեկնեց ռուս ժողովուրդը, որը ոչ միայն շարունակում էր ապաստան տալ Ռուսաստանում ցրված հայ գաղթականներին, այլև ամեն կերպ օգնում էր Սովետական Հայաստանին։ Սովետական Հայաստանին նյութական լայն օգնություն էր ցույց տալիս նաև եղբայրական ուկրաինական ժողովուրդը[2]։ Վրաստանում և Ադրբեջանում գտնվող հայ գաղթականներին, հնարավորության սահմաններում, ապաստան էին տվել և բազմապիսի օգնություն կազմակերպել սովետական իշխանության տեղական օրգանները[3]։

Սովետական Ռուսաստանի ու եղբայրական մյուս հանրապետությունների համակողմանի օգնությունը վճռական դեր խաղաց հայ ժողովրդի համար ճակատագրական այն օրերին, հնարավորություն ընձեռելով նրան արագորեն դուրս գալու տնտեսական դժվարին վիճակից և վստահորեն ընթանալու ժողովրդական տնտեսության վերականգնման ու սոցիալիզմի կառուցման ուղիով։

Ակնհայտ է, որ առանց եղբայրական այդպիսի անշահախնդիր օգնության, Հայաստանի կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը մենակ ի վիճակի չէին լինի կարճ ժամանակամիջոցում վճռելու իրենց առջև ծառացած քաղաքական ու տնտեսական բարդ խնդիրները, այդ թվում երկրում գտնվող բազմահազարանոց գաղթականական զանգվածին տեղավորելու, բնակարաններով, հողով, գյուղատնտեսական

[2] Տե՛ս «Восстановление народного хозяйства Армянской ССР» (сборник документов и материалов). Ереван, 1958, էջ 91—100։

[3] Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 40/113, ց. 3, գ. 21, թ. 49։



գործիքներով, անասուններով, սերմացուով բավարարելու և այլ հարցերը։ Պետք է ուղղակի նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ տվյալ պահին Հայաստանի բնակչության գրեթե մեկ երրորդը կազմում էին անտուն ու անհող, թափառական ու մուրացկանային վիճակով իրենց գոյությունը մի կերպ քարշ տվող արևմտահայ գաղթականները։

Դեռևս 1920 թ. դեկտեմբերի 8-ին, այսինքն՝ Հայհեղկոմի Երևան ժամանելուց չորս օր հետո, արևմտահայ գաղթականների գործադիր մարմնի անդամները, երևանաբնակ արևմտահայերի դեկտեմբերի 2-ին տեղի ունեցած խորհրդակցության որոշման համաձայն, դիմեցին Հայհեղկոմի նախագահ Ս. Կասյանին՝ առաջարկելով միջոցառումներ մշակել համատեղ ջանքերով տառապյալ գաղթականության վիճակը բարելավելու ուղղությամբ[4]։ Հաջորդ օրը, դեկտեմբերի 9-ին, Ս. Կասյանն ընդունեց արևմտահայ գաղթականների գործադիր մարմնի անդամներին և մանրամասն զրույց ունեցավ նրանց հետ։ Ս. Կասյանը հայտարարեց, որ սովետական իշխանությունը, որպես աշխատավոր ժողովրդի շահերի պաշտպան, ամեն ինչ կանի գաղթականության վիճակի թեթևացման և նրա հարցի շուտափույթ լուծման համար[5]։

Սակայն պետք է նշել, որ իր գոյության առաջին ամիսներին նորաստեղծ սովետական իշխանությունն ի վիճակի չէր անհրաժեշտ չափով բավարար աշխատանք տանել գաղթականության մեջ, որովհետև չկային հարկ եղած միջոցները, պակասում էին համապատասխան կադրերը, չկար աշխատանքի կազմակերպման անհրաժեշտ փորձ և այլն։ Այդ ամենը այնքան զգալի էր, որ Արագածի ստորոտի գյուղերում վերաբնակվող մշեցիներն ու սասունցիները 1921 թ. սկզբներին դիմել էին ՀՍԽՀ Հեղկոմին և պահանջել, որ իրենց մոտ նույնպես ստեղծվեն հեղկոմներ, ուղարկվեն պրոպագանդիստներ, գրականություն, թերթեր և այլն[6]։

Սովետական իշխանությունը դեռ նոր էր կազմակերպում

[4] Տե՛ս նույն տեղում, գ. 18, թ. 49։

[5] Տե՛ս նույն տեղում։

[6] Տե՛ս Ա. Մ. Հակոբյան, Սովետական Հայաստանը ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանում (1921—1925 թթ.), էջ 70։

կյանքի տարբեր բնագավառներում աշխատանքը, երբ տապալված դաշնակցությունը 1921 թ. փետրվարի կեսերին կազմակերպեց ավանտյուրիստական հակասովետական խռովություն և քաղաքացիական կռվի մեջ քաշեց առանց այդ էլ քայքայված երկիրը։ Չխոսելով մյուս հարցերի մասին, ասենք, որ դրանով դաշնակցությունը զգալի վնաս հասցրեց նաև արևմտահայ գաղթականության հարցի շուտափույթ բարելավմանը։ Հայաստանի կոմունիստական կուսակցությունն ու կառավարությունը հարկադրված էին ընդհատել ավերված երկրի վերաշինության ու երկրում կուտակված գաղթականության հարցի լուծման ուղղությամբ ձեռնարկված աշխատանքները և զբաղվել սովետական իշխանության պաշտպանությամբ։

Դաշնակցության փետրվարյան ավանտյուրան նաև ուրիշ աղետներ պատճառեց բազմաչարչար հայ ժողովրդին։ Դրանցից մեկն էլ դաշնակների տարածած սուտ լուրերին, պրովոկացիաներին ու սպառնալիքներին զոհ գնացած ավելի քան մեկ տասնյակ հազար աշխատավորների խուճապահար փախուստն էր դեպի Զանգեզուր, դեպի Իրան։ Դաշնակների «Հայրենիքի փրկության կոմիտեի» տխրահռչակ դիկտատուրայի լիկվիդացումից հետո սովետական կառավարությունը որոշ ժամանակ հարկադրված էր զբաղվելու մոլորված փախստականների այդ զանգվածի վերադարձի կազմակերպմամբ, որը նույնպես զգալի ջանքեր ու միջոցներ կլանեց[7]։

Այսպիսով, Հայաստանում քաղաքացիական կռիվների ավարտից հետո միայն սովետական կառավարությունը կարողացավ ըստ ամենայնի զբաղվել գաղթականության, ինչպես նաև արդեն սկիզբ առնող ներգաղթի հարցերով։ Այդ աշխատանքները կենտրոնացնելու և ավելի կազմակերպված ձևով իրականացնելու նպատակով 1921 թվականի հուլիսի կեսերին ՀՍԽՀ ժողկոմխորհի դեկրետով վերացվեց ներքին գործերի ժողկոմատի կազմում եղած կենտրոնական վերաբնակեցման բաժինը և ստեղծվեց ժողկոմխորհին առընթեր գաղթականական գործերի գլխավոր վարչություն (գաղթվար)։ Գաղթվարին տրվեցին ժողովրդական կոմիսարիատներին հավասար իրավունք-

[7] Այդ մասին մանրամասն տե՛ս Հ. Ու. Մելիքսեթյան, Արևմտահայերի բռնագաղթը..., էջ 82—87։



ներ[8]։ Գաղթականական գործերի գլխավոր վարչության նախագահ նշանակվեց սոցապժողկոմ Ն. Տեր-Ղազարյանը, նախագահի տեղակալ՝ Հովհ. Դուրգարյանը, անդամներ՝ Շահգելդյանը, Թոնունցը և Քալանթարը[9]։ Գաղթվարը կարևոր դեր խաղաց գաղթականության տնտեսական դրության բարելավման, նրա տեղավորման, ինչպես նաև ներգաղթի կազմակերպման ուղղությամբ։ 1921 թվականի վերջերին, երբ արդեն որոշ չափով նորմալ հունի մեջ էր դրվել գաղթականական հարցի լուծումը, գաղթվարը՝ որպես իր խնդիրները կատարած մի արտակարգ օրգան, լուծարքի ենթարկվեց։ Նրա ֆունկցիաների մի մասը հանձնվեց ներքգործժողկոմատում կազմակերպված գաղթականական բաժնին, մի մասն էլ՝ սոցապժողկոմատին[10]։

Ինչպես ասվեց, քաղաքացիական կռիվներն ավարտելուց և Իրան մեկնած փախստականության վերադարձն իրականացնելուց հետո սովետական կառավարությունը ավելի հիմնավոր աշխատանք ծավալեց արևմտահայ գաղթականության շրջանում։ Ամենից առաջ անհրաժեշտ էր նրան համախմբել սովետական իշխանության շուրջը։ Հայաստանում և Վրաստանում կուտակված արևմտահայերի մեջ կազմակերպական աշխատանքներ տանելու նպատակով, ՀՍԽՀ ժողկոմխորհի նախագահության որոշմամբ, հատկացվեց 30 միլիոն ռուբլի[11]։ Ապա հրավիրվեցին արևմտահայ գաղթականների բազմամարդ ժողովներ, որոնք մեծ նշանակություն ունեցան դեպի սովետական իշխանությունը նրանց վերաբերմունքի մեջ բեկում առաջացնելու իմաստով։

Այսպես, 1921 թ. մայիսի 21—23-ը Թալինում տեղի ունեցավ էջմիածնի գավառի արևմտահայերի համագումարը, որտեղ լսվեցին Հայհեղկոմի անդամ Դր. Տեր-Սիմոնյանի, էջմիածնի հեղկոմի նախագահ Ար. Շահգելդյանի, էջմիածնի գավառի գաղթականական գործերի կոմիսար Գր. Վարդանյանի և ուրիշների զեկուցումները գաղթականությանը հուզող խնդիրների և նրանց օգտին սովետական իշխանության ձեռնարկումների մասին։ Համագումարը լիովին հավանություն տվեց սովետական

[8] Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 40/113, ց. 3, գ. 50, թ. 26 և 34։
[9] Տե՛ս նույն տեղում, ֆ. 4/114, ց. 1, գ. 17, թ. 84։
[10] Տե՛ս նույն տեղում, ֆ. 40/113, ց. 3, գ. 25, թ. 37։
[11] Տե՛ս նույն տեղում, թ. 38։

կառավարության վարած քաղաքականությունը և կոչ արեց արևմտահայ բոլոր գաղթականներին՝ կապվել հողի հետ ու լծվել երկրում ծավալված վերաշինական աշխատանքներին, որովհետև, ինչպես ասված էր ընդունված բանաձևում, «միայն ՀՍԽ Հանրապետության հարատև գոյության ու ամրապնդման միջոցով Հայաստանի աշխատավորությունը կարող է իր իղձերն ու փափագները իրագործված տեսնել»[12]։ Համագումարի մասնակիցները Հայհեղկոմին և Վ. Ի. Լենինին ուղարկեցին ողջույնի հեռագրեր, ուր իրենց պատրաստակամությունն էին հայտնում ամեն կերպ զորավիգ լինել սովետական իշխանությանը[13]։

Նման բազմամարդ ժողովներ ունեցան նաև Ղուրդուղուլիի (այժմ՝ Հոկտեմբերյան), Ղամարլուի (այժմ՝ Արտաշատ), Ալեքսանդրապոլի (այժմ՝ Լենինական) և այլ գավառների արևմտահայ աշխատավորները[14]։

Սովետական իշխանության պաշտպանությամբ հանդես եկան նաև Թիֆլիսում ապաստան գտած արևմտահայ գաղթականները։ Նրանց առաջին ժողովը, որը տեղի ունեցավ 1921 թ. մարտի 27-ին, վերագնահատելով արևմտահայության ոչ հեռու անցյալի դիրքորոշումը, հատուկ կոչով դիմեց արևմտահայ բոլոր աշխատավորներին, որտեղ նշում էր, թե «բավ է, որքան արևմտահայ աշխատավորական մասսաները տասնյակ տարիներ գործիք ու խաղալիք եղանք դաշնակցություն կոչված ավանտյուրիստական կուսակցության միջոցով՝ եվրոպական գիշատիչ իմպերիալիստների ձեռքին. հերիք է, ինչքան արյուն ու ավյուն զոհաբերեցինք այդ լպիրշ, ստորաքարշ, խաբեբա դիպլոմատների գրպանները էլ ավելի պարարտացնելու համար»[15]։

Այնուհետև, մերկացնելով արևմտյան տերությունների խաբեությունները և դաշնակցության ավանտյուրիստական գործունեությունը հայ ժողովրդի բախտի նկատմամբ, կոչի հեղինակները գրում էին. «Այսպես ուրեմն, մեզ համար այլևս պարզ

[12] Տե՛ս նույն տեղում, ֆ. 4/114, ց. 1, գ. 5, թ. 2 և ֆ. 40/113, ց. 3, գ. 22, թ. 104—113։

[13] Տե՛ս նույն տեղում, ֆ. 40/113, ց. 3, գ. 31, թ. 58։

[14] Տե՛ս նույն տեղում, ֆ. 4/114, գ. 5, թ. 25—26 և 43, նաև՝ ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի կուսակցական արխիվ (այսուհետև՝ ՄԼԻ ՀՄԿԱ), ֆ. 1, ց. 1, գ. 178, թ. 3 և 12։

[15] Տե՛ս «Կոմունիստ», օրաթերթ, Երևան, 23 ապրիլի, 1921 թ., № 71։



է ամեն ինչ. մենք միանգամ ընդմիշտ մեր թիկունքն ենք դարձնում Հայաստանի աշխատավորության միակ թշնամիներին՝ իմպերիալիստական աշխարհին, դաշնակցական և մնացած բոլոր ազգայնական շովեն ու ոճրագործ կուսակցություններին։ Թո՛ղ հավետ կործանեն նրանք»[16]։

Ապա, նշելով, որ հայ աշխատավորության փրկությունը կախված է սովետական իշխանության ամրապնդումից, կոչի հեղինակները արևմտահայ գաղթականությանը հրավիրում էին համախմբվել սովետական կառավարության շուրջը և լծվել երկրի վերաշինության վեհ գործին։

1921 թ. օգոստոսի 21-ին կայացավ Թիֆլիսաբնակ արևմտահայ աշխատավորների կոնֆերանսը, որը քննարկեց նրանց դիրքորոշման, Սովետական Հայաստանի վերաշինության, արտասահմանյան հայկական գաղթօջախների հետ կապեր հաստատելու և ընդհանրապես գաղթականությանը հուզող մի շարք այլ հարցեր։ Կոնֆերանսն ընտրեց 15 հոգուց բաղկացած Թիֆլիսի արևմտահայ բյուրո։ Վերջինս, դիմելով արտասահմանի հայ աշխատավորներին և նկարագրելով Հայաստանի տնտեսական դժվարին կացությունն ու սովետական կառավարության ջանքերը արևմտահայ գաղթականների տեղավորման ու նրանց ամեն կերպ օգնելու ուղղությամբ, կոչ արեց նպաստել երկրի վերաշինության գործին, չհավատալ նրա շուրջը տարածվող զրպարտություններին, այլ գալ երկիր, տեսնել և համոզվել[17]։

Իսկ տեսնելու շատ բան կար և համոզվելու բազմաթիվ առիթներ։ Դեռևս 1921 թ. ապրիլի սկզբներից Թիֆլիսում հրատարակվում էր «Կարմիր օրեր» թերթը, որը արևմտահայ աշխատավորների համար մատչելի ձևով լուսաբանում էր կոմունիստական կուսակցության ու սովետական պետության քաղաքականությունը, նրանց վերաբերմունքը դեպի արևմտահայության բեկորները և ընդհանրապես բացատրական լայն աշխատանք էր տանում գաղթականության շրջանում[18]։

Ընդառաջելով արևմտահայ գաղթականների ժողովներում արտահայտված ցանկություններին, ՀԿԿ Կենտկոմի և սովետական կառավարության աջակցությամբ 1921 թ. հուլիսի սկզբներ-

[16] Նույն տեղում։

[17] Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍԾ ԳԿԱ, ֆ. 4/114, ց. 1, գ. 5, թ. 37—39։

[18] Տե՛ս նույն տեղում, թ. 43։

րին ստեղծվում է ՀՍԽՀ տերիտորիայում ապրող արևմտահայերի ընդհանուր համագումար հրավիրող հանձնախումբ՝ Գր. Վարդանյանի նախագահությամբ[19]։ Սահմանված կարգի համաձայն 18-ից բարձր տարիք և արևմտահայ ծագում ունեցող բոլոր քաղաքացիները պետք է մասնակցեին համագումարի պատգամավորների ընտրություններին, որոնք լինելու էին ուղղակի և բաց քվեարկությամբ։ 1921 թ. օգոստոսի կեսերից Հայաստանի բոլոր շրջաններում սկսվում են պատգամավորների ընտրությունները[20]։ Նախատեսված էր համագումարի աշխատանքներն սկսել սեպտեմբերի 10-ին, էջմիածնում, սակայն մի շարք պատճառներով այն տեղի ունեցավ ավելի ուշ՝ նոյեմբերին, Երևանում։

Արևմտահայ գաղթականների համագումարի նախապատրաստման օրերին հրապարակվեցին մի շարք կոչեր, որոնցում աշխատավորներին բացատրվում էին նրանց անելիքներն ընտրությունների ժամանակ։ Հրատարակվեց նաև «Կարմիր օրեր» թերթի բացառիկ համար՝ նվիրված համագումարին, ուր հոդվածներով հանդես եկան Ասք. Մռավյանը, Պ. Մակինցյանը, Հ. Ազատյանը և ուրիշներ[21]։ Այդ համագումարը, որին մասնակցում էին մոտ 400 պատգամավորներ, քննարկեց գաղթականությանը հուզող մի շարք կարևոր հարցեր և ստեղծեց Սովետական Հայաստանի Արևմտահայ աշխատավորների կենտրոնական վարչություն, որի նախագահ ընտրվեց Գր. Վարդանյանը[22]։

Այս բոլոր միջոցառումները հսկայական դեր խաղացին գաղթականությանը սովետական իշխանության շուրջը համախմբելու և նրան շինարար աշխատանքի ներգրավելու գործում։ Այսպիսով, սովետական կառավարությունը կարճ ժամանակամիջոցում գործով ապացուցեց, որ նա իսկապես շահագրգռված է գաղթականության վիճակի բարելավմամբ և նրա հարցի արմատական լուծմամբ։

ՀՍԽՀ ժողկոմխորհի հատուկ դեկրետի համաձայն, 1921 թ. գարնանից սկսած, հողագործության ժողովրդական կոմիսարիատը տեղացիներին հավասար չափով հող է հատկացնում հանրապետությունում գտնվող արևմտահայ գաղթականներին՝ սակավահող շրջաններից նրանց փոխադրելով այլ վայրեր։ Դրա հետ միասին, ձրի կամ արտոնյալ պայմաններով, գաղթականներին տրամադրվում են նաև գյուղատնտեսական գործիքներ, սերմացու, անասուններ, բնակարաններ, շինարարական ու գույքավորման վարկեր և այլն[23]։

Գաղթականության կարիքները հոգալու և նրա համար պարենի ու սերմացուի կայուն ֆոնդ հիմնելու նպատակով, 1921 թ. օգոստոսի 24-ին ժողկոմխորհը որոշում է կայացնում պարենավորման ժողկոմատի ընթացիկ միջոցներից պարբերաբար հատկացնել հացահատիկ։ Միաժամանակ որոշվում է գաղթականական տնտեսություններին սերմացուով ապահովելու համար ստեղծել հատուկ ֆոնդ, դրան տրամադրելով բերքն այն բոլոր հողատերերի, որոնք անմիջականորեն իրենք չէին մշակում հողը, այլ զանազան պայմաններով՝ վարձակալությամբ և այլն, մշակել էին տալիս սակավահող գյուղացիներին[24]։

Ժողկոմխորհի մի այլ դեկրետով (22 հոկտեմբերի 1921 թ.) հաստատվում է 15 միլիարդ ռուբլու միանվագ և արտակարգ, այսպես կոչված գաղթականական տուրք՝ հանրապետության սահմաններում գտնվող գաղթականներին նյութական ծանր կացությունից դուրս բերելու համար։ Գաղթականական տուրքը գանձվում էր ազգաբնակչության միայն ունևոր խավերից. այն տնտեսություններն ու անձնավորությունները, որոնց եկամտի միակ աղբյուրն իրենց աշխատանքն ու աշխատավարձն էր՝ ազատվում էին այդ տուրքը վճարելուց։ 1922 թ. ամռանը, երբ արդեն որոշ չափով բարելավվել էր գաղթականության նյութական դրությունը, ժողկոմխորհի որոշմամբ դադարեցվում է գաղթականական տուրքի գանձումը, և լիկվիդացվում են այդ կապակցությամբ գոյացած ապառքները[25]։

Գաղթականության հարցի արմատական լուծմանը զուգընթաց սովետական կառավարությունը լուրջ ջանքեր էր գործադրում նաև նրա առօրյա հոգսերի թեթևացման ուղղությամբ՝ բացելով սննդակայաններ, որբանոցներ, հիվանդանոցներ, ար-

---

19 Տե՛ս ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 1, ց. 1, գ. 111, թ. 5, և գ. 76, թ. 69։

20 Տե՛ս նույն տեղում, գ. 76, թ. 1—34։

21 Տե՛ս նույն տեղում, թ. 94—97։

22 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 4/114, ց. 1, գ. 5, թ. 25—26։

23 Տե՛ս նույն տեղում, ֆ. 112, ց. 1, գ. 26, թ. 60 և ֆ. 4/114, ց. 1, գ. 5, թ. 20 և 25—26։

24 Տե՛ս նույն տեղում, ֆ. 4/114, ց. 1, գ. 5, թ. 59։

25 Տե՛ս նույն տեղում, թ. 60։

տեղներ և այլն։ Առանց այդպիսի ամենօրյա օգնության ու հոգատարության անհնարին կլիներ բազմահազար գաղթականներին ու որբերին կարճ ժամանակամիջոցում դուրս բերել սովահար վիճակից և նրանց փոխադրել տնտեսության վերականգնման ու զարգացման ուղին։

Այդ գործում սովետական կառավարությունը շրջահայաց ու խելամիտ կերպով օգտագործում էր նաև օտարերկրյա մի շարք բարեգործական հաստատությունների՝ Մերձավոր արևելքի օգնության Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի (կրճատ՝ Ամերկոմ), Անգլիական կոմիտեի և այլն, ինչպես նաև Հայաստանի օգնության կոմիտեի (ՀՕԿ) ու սփյուռքահայ այլ բարեգործական կազմակերպությունների ուժերն ու միջոցները։ Սովետական Հայաստանի այն ժամանակվա տնտեսական վիճակը հրամայաբար թելադրում էր օգտագործել բոլոր հնարավոր աղբյուրները բնակչության, մասնավորապես տուն ու տեղից զրկված արևմտահայ գաղթականության ու որբերի կարիքները որոշ չափով բավարարելու համար։ Այդ էր պատճառը, որ սովետական կառավարությունը, հաշվի առնելով նաև Սովետական Ռուսաստանի փորձը, զանազան արտոնություններ ու արտոնությունների միջոցով նպաստեց օտարերկրյա բարեգործական հաստատությունների գործունեության շարունակմանը այստեղ։ Դրա շնորհիվ հնարավոր եղավ նրանց ուժերն ու միջոցները ծառայեցնել հատկապես տասնյակ հազարավոր որբ ու անապաստան երեխաներին անխուսափելի կորստից փրկելու և մասամբ էլ կարիքավոր բնակչությանն օգնելու գործին[26]։

Երկրում գտնվող արևմտահայ գաղթականության տնտեսական դրության բարելավման և նրա հարցի արմատական լուծման ուղղությամբ այն՝ ինչ կատարեց նորաստեղծ սովետական իշխանությունը, ունեցավ քաղաքական ու տնտեսական կարևոր նշանակություն։ Դա միաժամանակ ակնառու կերպով ցույց տվեց, որ միայն սովետական կառավարությունն է իրոք շահագրգռված անկեղծորեն լուծելու երկար տարիներ թափառական կյանք վարող արևմտահայ գաղթականության հարցը։

Ահա թե ինչու սփյուռքահայ աշխատավորները և իրենց հայացքներն ուղղեցին դեպի Սովետական Հայաստան, այստեղ տեսնելով իրենց փրկությունը։ Արտահայտելով սփյուռքահայության այդ կարգի տրամադրությունները, Նյու Յորքում հրատարակվող «Հայաստանի կոչնակ» շաբաթաթերթը գրում էր. «Գաղութներու մեջ հետզհետե ավելի կշեշտվի համակրանքը դեպի Հայաստանի ներկա կառավարությունը», դեպի «Խորհրդային Հայաստանը, որուն դարձած են հիմա բնազդաբար բոլոր հայոց աչքերը»[27]։ Վերլուծելով սփյուռքահայության ընդհանուր գոյավիճակը, շաբաթաթերթը միանգամայն ճիշտ կերպով հանգում էր այն եզրակացության, որ «քաղաքական արդի գժբախտ պայմաններու մեջ իրապես ալ հայերը չէին կրնար ուրիշ հենակետի մը վրա հույս դնել, եթե ոչ Խորհրդային Հայաստանի Հանրապետության վրա, քանի որ հոն միայն կարելի էր ազգին համար ստեղծել կեդրոն մը, որ միևնույն ատեն շաղկապ մը ըլլար բոլոր ցրված հայերու միջև»[28]։

Սփյուռքահայության մեջ մեծ գոհունակությամբ ընկալվեց այն փաստը, որ սովետական կառավարությունը ամենայն հոգատարությամբ էր վերաբերվում Հայաստանում գտնվող գաղթականությանը, օգնում նրան ստեղծելու իր օջախը, իր տնտեսությունը։ Կ. Պոլսում հրատարակվող «Երկիր» թերթի ստորև բերվող տողերում առավել խտացված ձևով են արտահայտված արևմտահայ գաղթականությանը հող հատկացնելու վերաբերյալ սովետական կառավարության որոշման կապակցությամբ սփյուռքում եղած արձագանքները։ «Նախորդ կառավարությունը (խոսքը վերաբերում է դաշնակցական կառավարությանը.— Հ. Մ.),— գրում է «Երկիր»-ն իր խմբագրականներից մեկում,— իր տիրապետության երեք տարիներու ընթացքին արևմտահայ փախստականության վրա խորթ աչքով նայեցավ և բնավ չի մտածեց արևմտահայ գյուղացիության հող տրամադրելու մասին», մինչդեռ Սովետական Հայաստանի «ղեկավարները սկիզբեն ի վեր իրենց գլխավոր մտահոգություններեն մեկն ալ դարձուցին արևմտահայ գյուղացիությունը հողի հետ կապելու խնդիրը»[29]։

Այնուհետև թերթն իր ուրախությունն էր հայտնում, որ «Մյասնիկյանի կառավարության որոշումով Խորհրդային Հա-

[26] Այդ մասին մանրամասն տե՛ս Հ. Ռ. Մելիքսեթյան, Արևմտահայերի բռնագաղթը..., էջ 93—107։

[27] «Հայաստանի կոչնակ», 28 հուլիսի, 1923 թ., № 30, էջ 937—938։

[28] Նույն տեղում։

[29] «Երկիր», Կ. Պոլիս, 16 սեպտեմբերի, 1921 թ., № 585։

յաստանի սահմաններուն մեջ գտնվող արևմտահայ գյուղացիներուն պիտի բաշխվի հող այն չափով, ինչ չափով որ կտրվի բնիկ գյուղացի աշխատավորներուն։ Ահա հիմնական և բարվոք կարգադրություն մը, որուն շնորհիվ արևմտահայությունը կազատվի գաղթականի թափառական կյանքեն, կլծվի շինարար, ստեղծագործող աշխատանքի և այդ կերպով ոչ միայն հնարավորություն կունենա իր ապրուստը իր ճակատի քրտինքովը հայթայթելու, այլ նաև նպաստելու հայրենիքի տնտեսական վերաշինության կենսական գործին»[30]:

Պետք է շեշտել, որ սփյուռքահայ առաջադիմական շրջանները, ըստ արժանվույն գնահատելով գաղթականության նկատմամբ սովետական կառավարության հոգատարությունը, միաժամանակ գիտակցում էին իրենց պարտքն ու պարտականությունը հայրենիքի հանդեպ։ Այդ իմաստով ուշագրավ են նույն «Երկիր» թերթի խմբագրականներից մեկի հետևյալ տողերը. «Հայաստանի կառավարությունը իր պարտքը կատարած է. նախապես իրավազուրկ մեր եղբայրները՝ հիմա իրավատերներ կըլլան, իրենց խրճիթը, իրենց օճախը կունենան, իրենց քըրտինքին արդյունքը կվայելեն։

Կարգը գաղութինն է, մինչև գարուն գաղութն ալ իր բոլորանվեր օգնությունը պետք է փութացնե, որպեսզի մեր գյուղացի եղբայրները ճիշտ ժամանակին ունենան իրենց բահը և բրիչը, խոփն ու արորը»[31]:

Թեպետ գաղութների օգնությունը չեղավ «բոլորանվեր» ու խիստ նշանակալից, բայց դրանով սկիզբ առավ սփյուռքահայության աստիճանական ու արմատական բեկումը դեպի հայրենիք։ Օրըստօրե սփյուռքում աճեց ու պայծառացավ Սովետական Հայաստանի հմայքը, որն այլևս չէին կարող մթագնել հակասովետական ոչ մի զրպարտություն և պրովոկացիա։ Հասունացավ ու օրակարգի հարց դարձավ սփյուռքահայերի հայրենադարձությունը։

[30] Նույն տեղում։

[31] Նույն տեղում, 23 նոյեմբերի, 1921 թ., № 620։



ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

## ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅԵՐԻ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ 1921—1936 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Սովետական Հայաստանում ապաստան գտած արևմտահայ գաղթականության նկատմամբ ցուցաբերված ջերմ ու հոգատար վերաբերմունքը և դրա շնորհիվ կարճ ժամանակամիջոցում նրա համար ստեղծված համեմատաբար բարվոք պայմանները օտարության մեջ դեգերող հայ աշխատավորներին թելադրում էին լրջորեն խորհել իրենց հետագա ճակատագրի մասին։ Նրանք սևեռուն կերպով հետևում էին հարազատ երկրի վերաշինությանը և օրեցօր ուրախալի լուրեր ստանալով կատարվող վերափոխությունների մասին, ձգտում էին ներգաղթել հայրենիք, փրկվել օտարության մեջ իրենց բաժին ընկած տառապանքներից։

Հայրենիքը հզոր մագնիսի նման դեպի իրեն էր գրավում մեծ թվով տարագիրների ոչ միայն Մերձավոր ու Միջին արևելքի երկրներից, ուր խիստ աննպաստ էին տնտեսական պայմանները, այլև համեմատաբար բարվոք վիճակում գտնվող գաղթօջախներից։ Սովետական կառավարությունը հայրենիք ներգաղթելու ցանկությամբ մեծ թվով կոլեկտիվ և անհատական խնդրագրեր, նամակներ ու դիմումներ էր ստանում սփյուռքի տարբեր անկյուններից։ Սովետական կառավարության ուղղված այդ դիմումների մեջ որոշակիորեն արտահայտվում էր ցիր ու ցան սփյուռքահայ զանգվածների հայրենադարձվելու անկեղծ ձգտումը, հայրենիքում հավաքվելու նրանց վճռական կողմնորոշումը։

Չնայած գոյություն ունեցող ամեն տեսակ դժվարություններին, Հայաստանի կոմունիստական կուսակցությունն ու կառավարությունը երբեք անտարբեր չմնացին սփյուռքահայ աշ-

*խատավորների ցանկությունների նկատմամբ, անպատասխան չթողին նրանց խնդրանքները։ Հանրապետության ժողովրդական տնտեսության վերականգնման վիթխարի ջանքեր ու հսկայական միջոցներ պահանջող աշխատանքներին զուգընթաց, երկրում կուտակված գաղթականությանը բնակեցնելու, հողով և այլ միջոցներով բավարարելու հետ մեկտեղ, իր գոյության առաջին իսկ օրերից սովետական կառավարությունը զգալի գործունեություն ծավալեց նաև սփյուռքահայ աշխատավորներին հայրենիք տեղափոխելու ուղղությամբ։*

*Ընդառաջելով տարագիր հայության հայրենաբաղձ ցանկություններին, արդեն 1921 թվականի վերջերից սովետական կառավարությունը ձեռնամուխ եղավ սփյուռքահայերի հայրենադարձության իրականացման դժվարին գործին։*

## 1. Սփյուռքահայերի հայրենադարձությունը ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին

*Սկզբնական շրջանում հատկապես շատ դիմումներ էին ստացվում Միջագետքում (Իրաք) ապաստանած հայ տարագիրներից, որոնք գտնվում էին անասելի դժնդակ պայմաններում և իրենց փրկության միակ հույսը կապում էին Սովետական Հայաստանի հետ։ Դրանք հիմնականում Վասպուրականի հայերն էին, որոնք թուրքական զորքերի վայրագ հարձակումներից խույս տալով, 1918 թ. վաղ գարնանը զանգվածաբար փորձեցին անցնել Անդրկովկաս։ Սակայն Վան—Իգդիր ճանապարհը թուրքական զորքերի կողմից փակվելուց հետո, նրանք հարկադրված եղան բազմաթիվ զրկանքներ կրելով ու զոհեր տալով, երկար ու տառապալից ուղի անցնել դեպի Իրան, հույս ունենալով այնտեղից տեղափոխվել Անդրկովկաս։ Բայց նրանց այդ մտադրությունը ևս չհաջողվեց իրականացնել, քանի որ թուրքական զորքերը ավելի շուտ մտան Իրան և փակեցին Անդրկովկաս տանող նաև այդ ճանապարհը։ Վասպուրականցիները և նրանց միացած Խոյի, Սալմաստի, Ուրմիայի հայերն ու նեստորական ասորիները, ստիպված շարժվեցին դեպի Հարավային Իրան։ 1918 թ. հունիսի վերջերին, Իրանում գտնվող անգլիական զորքերի հրամանատարությունը, գաղթականական այդ զանգվածը իրեն ծառայեցնելու նպատակով, նրան վերցրեց*



*իր «հովանավորության» տակ։ Խուճապահար նահանջող գաղթականները օգոստոսի սկզբներին հասան Համադան, սակայն անգլիական իշխանությունները արգելեցին նրանց մտնել քաղաք[1]։*

*Անգլիացիները աշխատում էին ամեն կերպ համոզել գաղթականներին, թե ստեղծված իրադրության մեջ ամենահարմար ելքն այն է, որ նրանք տեղավորվեն Միջագետքում, միառժամանակ մնան այնտեղ, խոստանալով հետագայում նրանց փոխադրել Հայաստան[2]։*

*Միջագետք հասնելուց հետո անգլիական իշխանությունները անմիջապես զինաթափեցին գաղթականությանը պաշտպանող հայկական ու ասորական զինված ջոկատները, բացի նրանցից, ովքեր համաձայնեցին ընդգրկվել անգլիական զորքերի մեջ։ Այդ ձևով կազմավորվեցին հայ-ասորական մի քանի գումարտակներ և ուղարկվեցին Ջենջան՝ օգնելու համար թուրքերի դեմ կռվող անգլիական զորքերին[3]։*

*Գաղթականությունը կարճ ժամանակամիջոցում համոզվեց, որ անգլիական ռազմական իշխանությունները իրեն մասին հոգալու ոչ մի մտադրություն չունեն, այլ նրանց նպատակն է ստեղծել հայերից ու ասորիներից բաղկացած զինված ուժեր և դրանց միջոցով իրենց դիրքերն ամրապնդել արաբների շրջանում, միաժամանակ անձեռնմխելի պահել Հարավային Իրանի ու Միջագետքի նավթահանքերը։*

*Շուտով հայ գաղթականությունը ծառացավ անգլիացիների այդ նենգ մտադրությունների դեմ, պահանջելով իրագործել Հայաստան փոխադրելու մասին իրեն տրված խոստումները։ Զգալով գաղթականության բուռն ըմբոստացումը, անգլիական իշխանություններն սկսեցին բռնություններ գործադրել։ Ձերբակալեցին և պատիժների ենթարկեցին առավել ակտիվ անձանց, իսկ գաղթականության հիմնական զանգվածին զինված պահակախմբերի հսկողության տակ փոխադրեցին Բաղդադի շրջանը, որտեղ նրան տեղավորեցին վրանների տակ, հատուկ ճամբարներում, այսպես կոչված՝ քեմփերում։*

*Տարագիրների մեծ մասը՝ ավելի քան 15 հազար մարդ, տեղա-*

[1] *Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՃ ՊԿԱ, ֆ. 114, ց. 1, գ. 267, թ. 119—121։*

[2] *Տե՛ս նույն տեղում։*

[3] *Տե՛ս ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 68/200, ց. 1, գ. 125, թ. 9 և 16։*

վորված էր Բաղդադից ոչ հեռու գտնվող Բաքուբա ավանում[4]։ Ճամբարաբնակներին անգլիացիները տալիս էին աննշան քանակությամբ անորակ մթերքներ, որով մի կերպ իրենց գոյությունն էին քարշ տալիս գաղթականները։ Գաղթականներին տրվող չնչին նպաստի դիմաց անգլիացիները տղամարդկանց ձրի աշխատեցնում էին երկաթուղու շինարարության վրա, ուր նրանք ենթակա էին վերահսկող սպաների ամեն տեսակ կամայականություններին։ Գաղթականական ճամբարները շրջափակված էին փշալարերով և գտնվում էին հնդիկ զինվորների խիստ հսկողության տակ։ Հայերին արգելվում էր դուրս գալ ճամբարից և աշխատանք փնտրել Բաղդադում կամ մի այլ վայրում։ Գաղտնի կերպով Բաղդադ կամ Բասրա աշխատանքի մեկնողներին անգլիացիները հետապնդում էին, գտնում և ենթարկում բանտարկության կամ ուղարկում տաժանակիր աշխատանքի։ Իսկ եթե չէր հաջողվում այդպիսիներին բռնել, այդ դեպքում փախածի ընտանիքն էին վտարում ճամբարից դեպի անապատ։ Տարածված սովն ու համաճարակային հիվանդությունները օրական տասնյակ զոհեր էին պատճառում անապատի կիզիչ արևի տակ տառապող ու հյուծված վրանաբնակներին, որոնց ոչ մի բժշկական կամ այլ օգնություն ցույց չէր տրվում։

Անգլիական իշխանությունները գաղթականության մի մասին 1920 թ. աշնանը փոխադրեցին Բասրայի նահանգի Նահր էլ Օմար գետափնյա ավանը՝ տեղի նավթահանքերում և ստրատեգիական նշանակություն ունեցող շինարարական օբյեկտներում աշխատեցնելու նպատակով, ուր ավելի վատթարացավ առանց այն էլ թշվառության մեջ գտնվող հայ տարագիրների վիճակը։ Արաբական աշխարհում իրենց դիրքերն ամրապնդելու և կայուն հենարան ստեղծելու նպատակով, անգլիական գաղութարարները ձգտում էին քրիստոնյա հայերին ու ասորիներին կապել հողի հետ, հակադրություն ստեղծել վերջիններիս և արաբների միջև, մյուս կողմից՝ զենքի ընդունակներին օգտագործել իրենց զինված ուժերի կազմում։ Այդ հողի վրա և քեմալական գործակալների հրահրումների հետևանքով, տեղական արաբները մի քանի անգամ զինված հարձակումներ գործեցին հայ գաղթականների ճամբարների վրա և բավականին վնասներ պատճառեցին նրանց։

[4] Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՃ ՊԿԱ, ֆ. 114, ց. 1, գ. 267, թ. 119—121։



Այս մղձավանջային կացությունից դուրս գալու նպատակով Միջագետքում կուտակված հայությունը անընդհատ քայլեր էր կատարում Բաղդադի, Կ. Պոլսի ու Երևանի բարեգործական և ազգային հիմնարկությունների հետ հարաբերությունների մեջ մտնելու ուղղությամբ։ Վերջապես, 1919 թ. ամռանը նրանց հաջողվում է կապվել էջմիածնի Ամենայն հայոց կաթողիկոսի հետ և նրան տեղեկացնել իրենց աննախանձելի կացության մասին։

1919 թ. հուլիսի 9-ին Ամենայն հայոց կաթողիկոսի դիվանը հայտնում է դաշնակցական կառավարությանը, որ Բաղդադի հայոց առաջնորդական փոխանորդի ապրիլի 27-ի գրության համաձայն «Միջագետքում այժմ գտնվում են 25 հազար[5] հայ փախստականներ, որոնք ապրում են շատ դաժան պայմանների մեջ և եթե նոցա դեպի իրենց հայրենիք գաղթը շուտով չկատարվի հայակեր Միջագետքը կուլ պիտի տա այդ մնացյալ փոքր հայությանը ևս»[6]։ Ներկայացնելով գաղթականության թշվառ վիճակը, կաթողիկոսի դիվանն առաջարկում էր դաշնակցական կառավարությանը՝ արագացնել նրանց ներգաղթի կազմակերպումը։ 1919 թվականի հուլիսի 17-ին դաշնակցական կառավարությունը կաթողիկոսին պատասխանում է՝ թե «ներգաղթն առայժմ հնարավոր չէ, վասն որոյ կառավարությունն ուղարկում է Բաղդադ իր ներկայացուցիչը՝ նրանց գրությունը պարզելու»[7]։

Իհարկե, սա տիպիկ խուսափողության կոնկրետ օրինակ է, որը ոչինչ չէր փոխում տառապյալների վիճակի մեջ։ Տեղի տալով հատկապես պառլամենտի արևմտահայ անդամների պահանջներին, դաշնակցական կառավարությունը ձևականորեն որոշեց արևմտահայ հասարակական գործիչ Արսեն Կիտուրին ուղարկել «Միջագետք՝ հոն գտնվող տառապակոծ գաղթակա-

[5] Հավանաբար այստեղ որոշ չափով չափազանցված է Միջագետքում եղած հայերի թիվը։ Ավելի հավաստի աղբյուրների համաձայն այն կազմում էր մոտ 15 հազար մարդ։ Միջագետքահայ գաղթականների թվերի այդ տարբերությունը հետևանք է մի կողմից՝ ստույգ վիճակագրության բացակայության, իսկ մյուս կողմից՝ վարչատերիտորիալ տարբեր շրջանների ընդգրկման, որի հետևանքով էլ այն տատանվում է 12 հազարից մինչև 25 հազարի միջև։ Մեր կարծիքով իրականությանը ավելի մոտ է 15 հազարը։

[6] ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 68/200, ց. 1, գ. 284, թ. 107։

[7] Նույն տեղում, թ. 8։

նությանը Հայաստան փոխադրելու նպատակով»[8]: Սակայն հենց իրեն՝ Ա. Կիտուրի հայտարարությամբ, դաշնակցական կառավարությունը գաղթականությանը խաբելու համար միայն պառլամենտում անվանապես 3 միլիոն ռուբլի ներգաղթին հատկացնելու որոշում կայացրեց։ Իրականում ոչ մի կոպեկ էլ չտրամադրվեց այդ գործին, և, ինչպես ճիշտ կերպով հետագայում գրում է Ա. Կիտուրը, դա կատարվեց «տաճկահայ պատգամավորներուս, հետևաբար մեր ետեր կանգնած 400,000 գաղթականությանը քնացնելու» և ոչ թե իսկապես միջագետքահայ տարագիրներին օգնելու համար[9]։

Եվ այսպես, անխուսափելի կորստյան ճիրաններում գալարվում էր միջագետքահայ գաղթականությունը, երբ նրան հասավ Հայաստանում սովետական կարգերի հաստատման լուրը։ Այն ցնծությամբ ընդունեցին տարագիրները և նրանց մոտ վերակենդանացավ հայրենիք վերադառնալու հույսը։ Շուտով նրանք կապ հաստատեցին Իրանում ՌՍՖՍՀ լիազոր ներկայացուցչության, ապա նաև Սովետական Հայաստանի հետ։

Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմը և ՀՍԽՀ ժողկոմխորհը, ծանոթանալով Միջագետքի հայության ծանր կացությանը, անմիջապես միջոցներ ձեռնարկեցին նրանց վիճակը թեթևացնելու, ապա նաև հայրենիք վերադարձնելու ուղղությամբ։ 1921 թ. հուլիսի 2-ին ՀԿԿ Կենտկոմը կոչով դիմեց Համադանի, Քիրմանշահի, Մոսուլի, Նահր էլ Օմարի և Միջագետքի այլ շրջաններում ապաստանած հայ գաղթականներին։ Կոչում ասված էր, որ «ՀԿԿ-ն, ամենամեծ համակրանքով և նույնքան խորունկ վշտով, հետևում էր ձեր գերմարդկային գողգոթային, անասելի տառապանքներին, որ կտանիք ամբողջ երեք երկար տարիներն ի վեր։

Հայաստանի կոմունիստական կուսակցությունը, մինչև այսօր ամբողջապես կտրված ըլլալով ձեզմե՝ չըսավ և չէր կարող ըսել իր պատմական խոսքը՝ մինչև այն ատեն, երբ տակավին Հայաստանի և հայ աշխատավորության բախտը իրենց ձեռք բռնած ունեին ազգային-բուրժուական կուսակցությունները։

... Ձեռք առնելով Հայաստանի իշխանությունը— հայ գյուղացիության և աշխատավոր ժողովրդի կամքով, այժմ մեր ա-

8 «Երևան», եռօրյա թերթ, Փարիզ, 28 ապրիլի, 1929 թ., № 498։

9 Տե՛ս նույն տեղում։



ռաջին աշխատանքների հետ միասին ձեռնարկում ենք նաև ձեր տառապանքներուն այլևս միանգամայն ընդմիշտ վերջ տալու անխուսափելի և անհրաժեշտ պահանջին»[10]։

Հայաստանի կոմկուսի Կենտկոմը, գնահատելով ոչ հեռու անցյալի դեպքերը և հայ ժողովրդին հասած աղետները, ոչ միայն միջագետքահայ տարագիրներին, այլև համայն աշխարհով մեկ ցրված հայությանը կոչ էր անում վերադառնալ հայրենիք և նվիրվել շինարար աշխատանքի։ «Կոչ անելով վերադառնալ դեպի հայրենի երկիր, ի խնդիր անոր շինարարության, ի խընդիր ձեր աստանդական կյանքին, Հայաստանի կոմունիստական կուսակցությունը և խորհրդային իշխանությունը պիտի ի գործ դնեն իրենց բոլոր հնարավոր միջոցները, ապաստան տալու, վերաբնակեցնելու համար ձեզի, գյուղերու թե քաղաքներու մեջ, պիտի տան իրենց բոլոր կարելի և անկարելի միջոցները, անելով իրենց լավագույն ճիգը՝ ընդառաջելու համար ձեր կարիքներին, մինչև որ դուք ևս ձեր հերթին կարողանաք նվիրվել մեր երկրի վերաշինության սրբազան գործին։

Հայաստանի կոմունիստական կուսակցությունը, ղրկելով իր ներկա կոչ-դիմումը, կգիտակցե իր անելիք աշխատանքի մեծության վրա, բայց ան կգիտակցե նաև իր պարտքի, պարտականության վրա, որ անհրաժեշտորեն կներկայանա իրեն և կդառնա հերթական հարց»[11]։

Միջագետքի հայ գաղթականության վիճակը օրըստօրե ավելի էր մտահոգիչ դառնում։ Դեռևս 1921 թ. մարտին անգլիական իշխանությունները հայտարարել էին, որ ապրիլից գաղթականներին այլևս նյութական օգնություն չի տրվելու, ուստի նրանք պետք է կապվեն հողի հետ, զբաղվեն հողագործությամբ, միջոցներ վաստակեն, որով իբր թե հնարավորություն կունենան վերադառնալու հայրենիք։ Հողին կապվելով, գաղթականները պարտավոր էին 4—5 տարի դարձյալ մնալ այնտեղ։ Բայց իրականում ոչ միայն 4—5, այլև 14—15 տարում էլ հնարավոր չէր այնքան գումար կուտակել, որ նրանք կարողանային սեփական միջոցներով վերադառնալ հայրենիք։ Հայ

10 ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 4/114, ց. 1, գ. 89, թ. 38—39։ Գաղթականական զանգվածներին ավելի հասկանալի լինելու նպատակով կոչը գրված է արևմտահայերենով։

11 Տե՛ս նույն տեղում։

գաղթականները ճիշտ կռահեցին անգլիական գաղութարարների իսկական նպատակները, ուստի կտրականապես հրաժարվեցին ցրվել Միջագետքի անապատներում և կապվել հողին։

Այն ժամանակ Միջագետքում անգլիական բարձրագույն կոմիսար Ռ. Զ. Քոքսի՝ գաղութների մինիստր Ուինստոն Չերչիլին ներկայացրած մի զեկուցագրից երևում է, որ 1921 թ. ամռանը որոշված է եղել Միջագետքում ցրել հայ գաղթականությանը՝ ամեն մի ընտանիքին տալով 65 ռուփի, իսկ ամեն մի անձին՝ 13 ռուփի երկու շաբաթվա օրապահիկ։ Սակայն այդ մտադրությունը, Քոքսի ասելով, չհաջողվեց ամբողջությամբ գործադրել, որովհետև գաղթականները մերժեցին թե՛ օրապահիկն ստանալ և թե՛ ճամբարների վրանները քանդել։ Իսկ երբ անգլիական վարչությունը ոստիկաններ հրավիրեց և փորձեց նրանց օգնությամբ քանդել վրանները, Նահր Էլ Օմարի ճամբարավանի բնակիչները միահամուռ կերպով ընդդիմացան դրան և սկսեցին քարկոծել ոստիկաններին։ Զգալով, որ հայ տարագիրները բոլորովին էլ մտադրություն չունեն ճամբարը թողնելու, անգլիացիները որոշեցին ժամանակավորապես նրանց օգտագործել Աբադանի նավթահանքերում։ Սակայն հայերը մերժեցին անգլիացիների նաև այդ առաջարկը։ Այն ժամանակ անգլիական վարչությունը դիմեց մի այլ խորամանկության։ Նա վրանները վաճառեց տեղացի արաբ վաշխառուներին և հայտարարեց, որ այլևս երկու շաբաթվա օրապահիկ չի տրվի հայերին։ Կոմիսար Քոքսը, այս բոլորը ներկայացնելով գաղութների մինիստրին, վճռականորեն զգուշացնում էր, որ անգամ հիվանդների պատճառով չի կարելի հետաձգել վրանների քանդումը[12]։

1921 թ. ամռանը Միջագետքի գաղթականության ներկայացուցիչները բանակցությունների մեջ մտան Սովետական Հայաստանի կառավարության Թավրիզում գտնվող գաղթականական գործերի լիազոր Գր. Վարդանյանի, ինչպես նաև Երևան մեկնած իրենց պատվիրակների միջոցով ՀՍԽՀ Ժողկոմխորհի նախագահ Ալ. Մյասնիկյանի հետ և խնդրեցին շտապ կերպով գաղթականությանը փոխադրել Հայաստան[13]։ 1921 թ. սեպտեմբերի 4-ին Միջագետքի հայ գաղթականության ներկայացուցիչ Ա. Սիմոնյանը սովետական կառավարությանը ներկայացնե-

[12] Տե՛ս նույն տեղում, թ. 43—48։

[13] Տե՛ս նույն տեղում, ֆ. 114, ց. 1, գ. 267, թ. 122։



լով նրանց ծանր վիճակը, Թեհրանից գրում էր. «Գաղթականությանը իր անտանելի դրությունից դուրս բերելու համար պարտք եմ համարում ձեր ուշադրությանը հանձնել տեղի ունեցած հետևյալ պարագաները. հուլիսի 20-ից անգլիացիների կողմից դադարեցված են մեր գաղթականությանը տրվող մթերքները, ժողովուրդը մատնելով աներևակայելի տնտեսական ճգնաժամի։ Սրանով էլ չբավականանալով, նրանք, գաղթականության հավաքականությունը միանգամայն անկարելի դարձնելու համար, վերցրել են քեմբերի ջրամբարները և ջրի խողովակները։ Փորձել են վերցնել նաև վրանները, բայց կին ու երեխաների դառնագին խնդրանքի վրա, մի քանի օրով հետաձգվել է այդ։

Մեր գաղթականությունը ցրելու և միևնույն անգամ նրանց Միջագետքից հեռացումը անկարելի դարձնելու նպատակով անգլիացիները հայ գաղթականության տված են անձագլուխ 13 ռուփի միայն, մինչդեռ ասորի գաղթականներին՝ յուրաքանչյուրին 122-ական ռուփի։

Ահա անգլիական կառավարության մտայնությունը և նրանց ճիգերը. մեր 12 հազարանոց գաղթականությունը, որ 7—8 տարիների բազմատեսակ տառապանքներին և տանջանքներին դիմագրաված է, ներկայիս հետին մտքերով ձգտում են կապել իրենց համար անհարազատ և օտար հողին՝ խեղդելով նրանց մեջ հայրենիք վերադառնալու իղձերը։

Բնաջնջումի նախօրյակին այս բազմաչարչար գաղթականությունը կարե հուսալ իր փրկությունը միայն իր հարազատ հայրենիքից։ Այժմ լիահույս ենք, որ խորհրդային Հայաստանի կառավարությունը ոչ մի զոհողության և դժվարության առաջ կանգ չի առնի փրկելու համար գաղթականության այդ բեկորները, տեղափոխելով Բասրայից դեպի հարազատ հայրենիք, որտեղ միայն հնարավորություն պիտի ունենա լծվելու խաղաղ և շինարար աշխատանքի»[14]։

Սովետական կառավարությունը, ստանալով այս տեղեկությունները, 1921 թ. հոկտեմբերի 7-ին հատուկ նոտայով դիմում է Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի մինիստրությանը և առաջարկում միջոցներ ձեռնարկել գաղթականությանը Հա-

[14] Նույն տեղում, ֆ. 4/114, ց. 1, գ. 5, թ. 61։



6—1181

յաստան փոխադրելու համար[15], ՀՍԽՀ Արտգործժողկոմ Ասք. Մռավյանի ստորագրությամբ հղված այդ նոտայում ասված էր. «Ստույգ տեղեկություններ առնելով Բաղդադի հայերից՝ Միջագետքի անգլիական իշխանություններից կախում ունեցող 14 հազար տարագիր գաղթականության վատթար վիճակի մասին, որը հետևանք է գաղթականությանը տրվող նպաստի դադարեցմանը և նրա բանի տեղահանմանը սկսած օգոստոսի 1-ից, սույնով պատիվ ունեմ դիմելու ձեզ Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության կառավարության անունից հետևյալով.

Օգնության գործի դադարեցումը Միջագետքի անգլիական իշխանությունների կողմից փաստորեն համազոր է գաղթականությանը մահվան դատապարտելուն։ Այն տարերային ու աղետաբեր գաղթը, որին ճարահատյալ դիմել են այսօր հայ գաղթականները Բասրայի անբարեհամբույր շրջավայրերից, որտեղ նրան ներփակել են անգլիական տեղական իշխանությունները, մղում է նրանց սովի, համաճարակ հիվանդությունների և մահվան գիրկը։ Եվ հազիվ թե այդ 14 հազար տառապող ժողովրդից ազատվեն մի քանի խղճուկ բեկորներ»[16]։

Ներկայացնելով հայ տարագիրների նկատմամբ անգլիական գաղութարարների քաղաքականության հետևանքով առաջացած ծանր վիճակը, Սովետական Հայաստանի արտաքին գործերի ժողովրդական կոմիսարն առաջարկում էր Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի մինիստրին՝ համապատասխան կարգադրություն անել Միջագետքի անգլիական իշխանություններին, որպեսզի դադարեցվեն գաղթականությանը Միջագետքում ցրելու և նրանց համար օտար ու անհարազատ հողին կապելու ուղղությամբ կատարվող ձեռնարկումները, ինչպես նաև շարունակվի նրանց օգնություն ցույց տալու գործը։ «Այդ գործը,— այնուհետև ասված էր նոտայում,— կարող է կատարել և պարտական է անել Բրիտանիայի ներկա կառավարությունը, որը մինչև այսօր կապված է եղել վերոհիշյալ հայ գաղթականական զանգվածի հետ։ Իսկ եթե Բրիտանիայի ներկա կառավարությունը հրաժարվի ստանձնել իր վրա այդ դժբախտ գաղթականների հոգա-

[15] Տե՛ս նույն տեղում, ֆ. 114, ց. 1, գ. 97, թ. 7։

[16] «Խորհրդային Հայաստան», օրաթերթ, Երևան, 16 հոկտեմբերի, 1921 թ., № 197, տե՛ս նաև՝ ՀՍՍՀ ՀՀՄԾ ՊԿԱ, ֆ. 114, ց. 1, գ. 97, թ. 197։



ցողությունը, կխնդրեի գեթ կատարել նրանց վերջին խղճի և միջոցներ ձեռք առնել նրանց տեղափոխելու Պոլսի վրայով դեպի Բաթում, որպեսզի Հայաստանի կառավարությունը հնարավորություն ունենա տեղավորել նրանց իր սահմաններում»[17]։

Սովետական կառավարության ձեռք առած վճռական միջոցների՝ շնորհիվ և հասարակական կարծիքի ճնշման տակ, անգլիական իշխանությունները ստիպված եղան համաձայնվել գաղթականներին իրենց նավերով հասցնել Բաթում։ Նրանց ընդունելու և տեղավորելու համար սովետական կառավարությունը ձեռք առավ արտակարգ միջոցներ։ 1921 թ. դեկտեմբերի 13-ին ՀՍՀԽ ժողկոմխորհի նախագահությունը քննարկեց Միջագետքից Հայաստան ժամանող 3000 գաղթականների ընդունելության հարցը և հանձնարարեց Հողագործության ժողկոմ Ար. Երզնկյանին նրանց բնակեցնել հարմար շրջաններում, ապահովել հողով և ցույց տալ նյութական լայն աջակցություն[18]։

1921 թ. դեկտեմբերի 20-ին Վրաստանում ՀՍԽՀ դիվանագիտական ներկայացուցիչ Հ. Սուրխաթյանը Թիֆլիսից հեռագրում է Երևան՝ ժողկոմխորհին, որ արդեն Բաթում է հասել շոգենավը՝ մոտ 3000 միջագետքահայ ներգաղթողներով, Մեծ Բրիտանիայի ներկայացուցչի ուղեկցությամբ[19]։ Դա փաստորեն հայրենադարձների առաջին քարավանն էր, որով սկիզբ դրվեց ազգահավաքման հայրենասիրական այն մեծ գործին, որը շարունակվում է մինչև օրս։ Այդ խմբում ներգաղթածների մեծ մասը տեղավորվեց Ալեքսանդրապոլի, Բասարգեչարի (այժմ՝ Վարդենիս) և Ղամարլուի շրջաններում[20]։

Նկատի առնելով Հայաստանի այն ժամանակվա տնտեսական ծանր պայմանները, բնակարանների ու կենսամթերքների պակասը, պետք է ասել, որ սովետական կառավարության այդ քայլը սփյուռքահայ տարագիրների նկատմամբ ցուցաբերած վեհ հոգատարության մի ակտ էր, որը կատարվում էր Միջագետքի անապատներում անխուսափելի ոչնչացման դատապարտված հայերի կյանքը փրկելու համար։

Հակառակ նախապես ձեռք բերված համաձայնությանը,

[17] Նույն տեղում։

[18] Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՄԾ ՊԿԱ, ֆ. 40/113, ց. 3, գ. 25, թ. 56։

[19] Տե՛ս նույն տեղում, ֆ. 4/114, ց. 1, գ. 96, թ. 634։

[20] Տե՛ս նույն տեղում, թ. 641։

որպեսզի սովետական կառավարության նկատմամբ դժգոհություն առաջ բերեին ներգաղթողների մեջ, անգլիական իշխանությունները որոշում են Միջագետքում մնացած գաղթականներին նույնպես Հայաստան փոխադրել հենց ձմեռվա ամիսներին, երբ այստեղ ավելի դժվար կլիներ հոգալ նրանց բազմատեսակ կարիքները։

1921 թ. դեկտեմբերի 27-ին ՀՍԽՀ Ժողկոմխորհը կրկին անդրադարձավ միջագետքահայերի նոր խմբերի ընդունելության հարցին և որոշեց ձմեռվա ամիսներին միանգամայն անհնարին համարել գաղթականներին Հայաստան ընդունելը, հավանություն տալ արտգործժողկոմատի ձեռնարկումներին՝ առնվազն մինչև 1922 թ. գարունը ներգաղթ չկատարելու ուղղությամբ[21]։ ՀՍԽՀ Ժողկոմխորհը միաժամանակ խնդրում է Սովետական Ռուսաստանի կառավարությանը, որպեսզի նա Թեհրանի իր դիվանագիտական ներկայացուցչության միջոցով գաղթականներին ցույց տա նյութական օգնություն, մինչև որ գարնանը նրանք փոխադրվեն Հայաստան[22]։ Նույն օրը արտգործժողկոմ Աշ. Մռավյանը նամակով դիմում է Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի մինիստր Քերզոնին, նշելով, որ ՀՍԽՀ կառավարությունը իր նախորդ դիմումով, «հանուն 14 հազար միջագետքահայ գաղթականության կյանքի փրկության, որոնք անելանելի դրության մեջ էին ընկել բրիտանական իշխանությունների կողմից նրանց տրվող նպաստի հանկարծակի դադարեցման (հետևանքով), խնդրել էր բրիտանական կառավարությանը այդ գաղթականությանը նավերով փոխադրել Բաթում, այնտեղից նրանց Հայաստան տեղափոխելու համար։ Իր երկրորդ գրության մեջ ՀՍՀԽ կառավարությունը համաձայնվելով նրանց առաջին խմբի՝ 3000 հոգու ընդունմանը, որովհետև նրանք արդեն գտնվում էին ճանապարհին, իր ժամանակին, սակայն, նախազգուշացրեց բրիտանական կառավարությանն այն մասին, որ տրանսպորտի բացակայությունը և բնակարանների սղությունը՝ մեծ թվով գաղթականության համար, հարկադրում են խնդրել դադարեցնելու գաղթականության փոխադրությունը մինչև 1922 թ. ապրիլը և այնուհետև տեղափոխել ավելի փոքր խմբերով, հազար հոգուց ոչ ավելի ամեն խմբում, ամսական

[21] Տե՛ս նույն տեղում, ֆ. 40/113, ց. 3, գ. 25, թ. 60։

[22] Տե՛ս նույն տեղում։



մեկ անգամ։ Բայց ՀՍԽՀ կառավարությանը հայտնի է դարձել, որ արդեն սպասվում էր 7000 հոգու մուտքը Բաթում, մի բան, որն անհնարին է ընդունել ներկայումս»[23]։

ՀՍԽՀ արտգործժողկոմատը տեղեկացնելով այդ մասին, կրկին առաջարկում էր բրիտանական կառավարությանը դադարեցնել գաղթականների տեղափոխությունը և շարունակել նրանց նյութական օգնություն ցույց տալու գործը մինչև 1922 թ. ապրիլ ամիսը։ Հաշվի չառնելով այդ դժվարությունները, անգլիական իշխանությունները հապճեպորեն իրագործում են իրենց որոշումը։ 1922 թ. հունվարի 2-ին ՀՍԽՀ արտգործժողկոմատը Կ. Պոլսում բրիտանական գերագույն կոմիսարին հղում է մի հուշագիր, ուր նշվում է, որ թեպետ մինչև 1922 թ. ապրիլը Սովետական Հայաստանը ի վիճակի չէր միջագետքահայ տարագիրներին ընդունել բնակարանների և այլ անհրաժեշտ միջոցների պակասության պատճառով, այնուամենայնիվ, կընդունի արդեն ժամանող գաղթականությանը՝ հանուն նրա անխուսափելի կորստից փրկության[24]։

1922 թ. հունվարի 10-ին Բաթում ժամանեց մոտ 3000 մարդուց բաղկացած միջագետքահայերի երկրորդ քարավանը, որին ընդունելու և տեղավորելու համար սովետական կառավարությունը ձեռք առավ արտակարգ միջոցներ։ Այդ խմբում ներգաղթածները ժամանակավորապես տեղավորվում են Ղամարլուի շրջանի զորանոցներում, որպեսզի գարնանը տեղափոխվեին Վեդու (այժմ Արարատ) շրջանը[25]։

Չնայած բազմատեսակ կարիքներին ու հոգսերին, բոլոր ներգաղթածներն էլ գոհ և ուրախ էին, որ երկարատև դեգերումներից ու անլուր զրկանքներից հետո բախտ ունեցան հաստատվելու հայրենի հողի վրա։

Արևելքի երկրներում Միջագետքի և Պարսկաստանի հայ գաղթականության ցրումը կանխելու և նրան հայրենիք վերադարձնելու գործում լուրջ օգնություն ցույց տվեց Սովետական Ռուսաստանի կառավարությունը Թեհրանի իր դիվանագիտական ներկայացուցչության միջոցով[26]։

[23] Նույն տեղում, ֆ. 4/114, ց. 1, գ. 51, թ. 113։

[24] Տե՛ս նույն տեղում, գ. 96, թ. 748։

[25] Տե՛ս նույն տեղում, գ. 5, թ. 78։

[26] Տե՛ս նույն տեղում, գ. 16, թ. 89։

Ներգաղթողներին, ինչպես ճանապարհին, այնպես էլ երկրում տեղավորվելուց հետո սովետական կառավարության և տեղական իշխանությունների ու աշխատավորների կողմից ցույց էր տրվում լայն օգնություն։ Նրանք օգտվում էին առանց մաքսի ու տուրքի մեծ քանակությամբ բեռների ձրի փոխադրության իրավունքից, ստանում էին անվճար բժշկական օգնություն և այլն։ Այնտեղ, ուր նրանք մշտական բնակություն էին հաստատում, ստանում էին անհրաժեշտ չափով հող, լծկաններ, գյուղատնտեսական գործիքներ, սերմացու, բնակարաններ, վարկեր, շինանյութեր և այլ միջոցներ[27]։

Միջագետքում մնացած հայ գաղթականության մեծ մասը Սովետական Հայաստան վերադարձավ հաջորդ տարիներին և նույնպես հնարավորություն ստացավ կարճ ժամանակամիջոցում թոթափելու իր անցած տառապալից ճանապարհների փոշին ու մասնակցելու երկրի վերաշինության գործին[28]։

Այսպիսով, առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Վասպուրականից, Սալմաստից, Ուրմիայից, Խոյից և այլ վայրերից Միջագետքում կուտակված հայ գաղթականության մեծ մասը՝ ավելի քան 9000 մարդ, Բաթումով և Ջուլֆայով Սովետական Հայաստան ներգաղթեց 1921 թ. վերջերին և 1922 թ. սկզբներին։ Հայրենադարձները տեղավորվեցին հիմնականում Վեդու, Բասարգեչարի, Ալեքսանդրապոլի, Ղամարլուի շրջաններում և հնարավորություն ստացան նոր կյանք կերտելու հայրենի հողի վրա[29]։

Երբ Միջագետքի հայ տարագիրների առաջին քարավանների հայրենադարձության լուրը հասավ հայկական գաղթօջախները, էլ ավելի բուռն դարձավ Սովետական Հայաստան ներգաղթելու սփյուռքահայ աշխատավորների ձգտումը։ Սկսվեց դիմումների ու խնդրագրերի մի լայն հոսանք, որով արտահայտվում էր տարագիր հայերի ներգաղթելու վճռական ցանկությունը։ Ահա դրանցից մեկը. 1923 թ. մարտի 20-ին Ալեքսանդրիայից մի խումբ հայ տարագիրներ գրում էին. «Եգիպտահայ գաղութի մեջ ապրող հայրենակիցներեն շատեր կփափագին փոխադրվիլ

[27] Տե՛ս նույն տեղում, ֆ. 40/113, ց. 3, գ. 374, թ. 18։

[28] Տե՛ս նույն տեղում, գ. 297, 377 և այլն։

[29] Տե՛ս «Խորհրդային Հայաստան—հինգ տարի՝ 1920—1925», ժողովածու, էջ 69։



Խորհրդային Հայաստան իրենց ամբողջ ունեցվածքով, ձանձրացած ըլլալով օտարներու ծառայելե, անոնց գյուղերը և քաղաքները շինացնելե, մանավանդ վերջերս հայ թերթերու մեջ երևցած կարգ մը գրությունները Խորհրդային Հայաստանի մասին ավելի մեծ զարկ մը տվին այս մտածման»[30]։ Նման տրամադրությունները ու ցանկությունները օրըստօրե ավելի էին ուժեղանում և լայն արձագանք գտնում մոտիկ ու հեռու բոլոր գաղթօջախներում։ Հայրենիք ներգաղթելու ցանկությամբ սովետական կառավարության հասցեով ստացվող նամակների ու դիմումների հեղինակները մեծ մասամբ աշխատավոր մարդիկ էին, որոնք նկարագրելով օտարության մեջ իրենց ծանր վիճակը, խնդրում էին շուտափույթ կերպով փրկել իրենց և հնարավորություն տալ ներգաղթելու Հայաստան։ Դիմում էին տարբեր խավերի ու զբաղմունքների տեր մարդիկ, կոշտացած ձեռքերով երկրագործըն ու բանվորը, ուսումնատենչ պատանին ու բազմավաստակ ինժեները, և յուրաքանչյուրն իր կյանքի ողբականը շարադրելուց հետո հավաստիացնում էր, որ երբեք «բեռ մը չպիտի ըլլա խորհրդային կառավարության վրա», այլ իր ուժերով հաղորդակից կլինի երկրում ծավալված շինարար աշխատանքին և օգտակար գործակից՝ իր նվիրական հայրենիքին։

Չնայած նման բովանդակությամբ ստացվող բազմաթիվ խնդրանքներին, սովետական կառավարությունը 1923 թ. կարողացավ իրականացնել միայն մոտ 1000 հոգու ներգաղթը Վանից, Իրանից և այլ վայրերից[31]։ Պետք է նկատի առնել այն հանգամանքը, որ այդ ժամանակ մի կողմից հանրապետությունը դեռևս գտնվում էր տնտեսական դժվարին վիճակում, իսկ մյուս կողմից՝ 1921—1922 թթ. ներգաղթածները, բոլորն էլ առանց բացառության, խիստ չքավորներ էին և կարիք ունեին տեղավորման ու նյութական մեծ օգնության։ Նման օգնության կարիք էին զգում նաև հանրապետությունում եղած արևմտահայ գաղթականները։ Ահա այս հանգամանքները լրջորեն կաշկանդում էին սովետական կառավարությանը՝ ավելի լայն մասշտաբներով սփյուռքահայ տարագիրներին ընդառաջելու և ավելի մեծ թվով ներգաղթողների ընդունելու գործում։

[30] «Խորհրդային Հայաստան», 16 մարտի, 1924 թ., № 63։

[31] Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 30/116, ց. 1, գ. 2352, թ. 23։

Բայց դեպի հայրենիք մի անգամ արդեն ծայր առած շարժումը այլևս անհնար էր կասեցնել, և սովետական կառավարության ուղղված նորանոր դիմումներով սփյուռքահայ աշխատավորները խնդրում էին թույլատրել ներգաղթելու Սովետական Հայաստան։ 1924 թ. հունվարին հունահայ տարագիրներից մեկը Աթենքից գրում էր. «Սրտի անսահման ուրախությամբ այսօր կուգամ հայտնելու այն փափագը, զոր ծնունդ է առած հայրենադարձ կուրծքիս տակ։ Այդ փափագը մեր դարավոր երազներու իրականացման արդյունքն է։ Բառ մը միայն— Հայաստան երթալ, ուրիշ ոչինչ»[32]։

«Մենք պատրաստ ենք ձեր առաջին կոչին ու հրամանին, որպես գաղափարի ընկերներ ու հպատակներ, ահա կերկրորդենք մեր աղերսն ու առաջարկը, որ ժամ առաջ փրկած ըլլաք մեզ սաստիկ ու իրական մահեն, որ է սով ու զուլում ներկա պարագաներու տակ։ Մենք ամեն կերպ զոհողություններու, ի հարկին ամեն կերպ աշխատանքներու պատրաստ ենք»,— այսպես էին գրում հայրենիք գալու մասին Կալամաթիայից 600 հայ տարագիրներ[33]։

Բեյրութից մի խումբ հայ արհեստավորներ 1924 թ. ապրիլին ՀՍԽՀ ժողկոմխորհի նախագահ Ս. Լուկաշինին հասցեագրած դիմումի մեջ գրում էին. «Փափագելով հայրենիքի հողին վրա վերաշինել մեր ավերված բույները, մենք 4—6 ընտանիքներ, բաղկացյալ 4—5 հոգիե յուրաքանչյուր ընտանիք, և արհեստավոր՝ որպես դերձակ, կոշկակար, մշակ-եազմաճի, կառավարության վրա որևէ բեռ չենք (լինի), արդյոք պիտի արտոնե՞ք մեր հոն գալը և ինչ ձևակերպություններ պետք է արտոնագիրը ստանալու (համար)»[34]։

Հայ տարագիրները, որպես օտարազգիներ, բազմաթիվ հալածանքների էին ենթարկվում կապիտալիստական երկրներում, ուստի ձգտում էին անպայման ներգաղթել Սովետական Հայաստան, գտնել հարազատ միջավայր։ Այսպես, օրինակ, բուլղարական կառավարության որոշմամբ Ֆիլիպեի և Թաթար-Բազարճիկի շրջաններում հաստատված հողագործությամբ զբաղվող հայերը 1923—1924 թթ. տեղահանվում էին այդ վայրերից

---

[32] «Խորհրդային Հայաստան», 16 մարտի, 1924 թ., № 63։

[33] Տե՛ս նույն տեղում։

[34] ՀՍՍՀ ՀՀՄԾ ՊԿԱ, ֆ. 40/113, ց. 3, գ. 258, թ. 43։



այն բանի համար, որ մրցակցության մեջ նեղում էին մակեդոնացի ծխախոտագործ վերարտադրիչներին։ Այդ կապակցությամբ վերջիններս բազմիցս բողոքել էին կառավարությանը, որը և որոշել էր այդտեղից հեռացնել հայերին, նրանց գնելով միանգամայն ծանր վիճակի մեջ[35]։

Այդ տարիներին առանձնապես ծանր կացության մեջ էին գտնվում Հունաստան ապաստանած հայ տարագիրները։ 1923 թ. հունվարին հունական կառավարության ընդունած օրենքի համաձայն բոլոր օտարահպատակները ազատվում էին պետական ծառայությունից, գործարաններից և այլ աշխատավայրերից։ Նույն գաղթականներին աշխատանքով ապահովելու նպատակով։ Հույն գաղթականներին ավելի բարեբեր վայրերում տեղավորելու համար հայերին Թրակիայից տեղափոխում էին Մակեդոնիայի և Պելոպոնեսի անմշակ շրջանները։ Տնտեսական ու քաղաքական անտանելի վիճակի մեջ էին դրվում բից թե շատ համար անտեսություններ ստեղծած հայ գաղթականները։ Հայ որբերը նույնպես հեռացվում էին հունական քաղաքներից, և նրանք հարկադրված ցրվում էին Ֆրանսիայում, Եգիպտոսում ու այլ երկրներում։ Եվ ահա Հունաստանի որբանոցների փոքրիկ մանչուկները եւ, դիմելով սովետական կառավարությանը, իրենց անվարժ գրիչներով ու մանկական թոթովանքներով փորձում էին նկարագրել այն արյունոտ ուղին, որը նրանց հասցրել էր որբանոցները և այն տառապանքները, որ նրանք կրում էին այդ հաստատություններում։ «Տարե՛ք մեզ Հայաստան, տարե՛ք տուն»[36],— այսպես էին եզրափակում իրենց աղերսանքը հունահայ որբուկները։

1924 թ. սեպտեմբերին ՀՍԽՀ ժողկոմխորհի նախագահ Ս. Լուկաշինին հասցեագրած դիմումի մեջ Աթենքի հայոց առաջնորդարանի կենտրոնական վարչությունը գրում էր, որ հունական կառավարությունը ձեռնարկել է «Թրակիո կողմերը բարեկան կառավարությանը ձեռնարկել է «Թրակիո կողմերը բարեբեր հողերու վրա հաստատված և իրենց աշխատասիրության շնորհիվ ինքնաբավ եղած հայությանը տեղահան ընել ու նետել զանոնք Բելոպոնեսի շրջանին ապերախտ ապառաժներուն վրա, զրկելով զանոնք նույնիսկ հունձքեն և արդյունքեն այն աշխա-

---

[35] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 29 ապրիլի, 1924 թ., № 98։

[36] Նույն տեղում, 16 մարտի, 1924 թ., № 63։

ություններում, զորս սպասված էին հասցնելու համար հացահատիկ, ծխախոտ և այլ երկրագործական բերքեր։

Կհուսանք թե մեր սույն հակիրճ տողերը բավական կըլլան հասկցնելու, թե տեղս գտնվող հայության գյուղացի, բանվոր և արհեստավոր մասը մատնված է վերջին ծայր թշվառության»[37]։ Դիմումի մեջ այնուհետև շեշտվում էր, թե «այս թըշվառ գաղթականները իրենց սպառնացող ստույգ մահեն փրկելու միակ միջոցը նկատած ենք անոնց Հայաստան փոխադրվելը։ Այս եղբայրացության կհասնինք մանավանդ տեսնելով գաղթականներու դեպի հայրենի երկիր ձգտումը ու սերը և օր առաջ հոն նետվելու ջերմ փափագը»[38]։

1924 թ. մարտին Հունաստանի Սալոնիկ քաղաքից մեքենավար Հ. Տեր-Նիկողոսյանը նույնպես դիմում է սովետական կառավարությանը։ Նկարագրելով հայ տարագիրների թշվառ վիճակը օտար երկնակամարների տակ, նա գրում է, թե «...այսուհետև կուխտենք չմնալ այս բուրժուական կարգ ու սարքերով կառավարված երկիրներու մեջ և անդիմադրելի ցանկություն կզգանք վերադառնալ ամենուս մայր հայրենիքին եղող Երևան և հոն ապրիլ խաղաղությամբ մեր բանվոր ընկերներու և աշխատավոր եղբայրներու հետ»[39]։

1924 թ. մայիսին Սալոնիկից մի խումբ արհեստավորներ ևս դիմում են ՀՍԽՀ ժողկոմխորհի նախագահ Ս. Լուկաշինին՝ Հայաստան փոխադրվելու թույլտվություն ստանալու համար։ Դիմումն ստացվելուն պես, Ս. Լուկաշինը մակագրում է՝ պատճենն ուղարկել Կ. Պոլսում Անդրկովկասի առևտրական ներկայացուցիչ և ՀՍԽՀ ժողկոմխորհի ներգաղթի լիազոր Դ. Շահվերդյանին՝ որպես բանվորների նրանց առաջին հերթին վիզա տալու համար[40]։

Դիմումի հեղինակները, վերլուծելով իրենց անցած ուղին, գրում էին. «Դարեր ամբողջ ազատություն և անկախություն երազեցինք։ Տարիներ անընդհատ մարդու և քաղաքացիի իրավունքներ ձեռք բերելու համար պայքարեցանք, որուն համար ենթարկվեցանք ահավոր զրկանքներու և հարստահարությանց։

Եվրոպական անբարոյիկ քաղաքականությունը, հայ իրականության մեջ գոյություն ունեցող կուսակցական սխալ և հակամարտ պայքարները, կապիտալիստական պետություններեն նոր օրենտասիոններ և նորանոր «օջախներ» որոնելը, մեծ Հայաստան մը երազելու մեր սին ու պարապ հույսերը, այսօր մի անգամ ընդմիշտ գերեզմանված կնկատենք, ընդունելով մեր սխալները կկանգնինք հպարտորեն մեր միակ խարիսխը եղող խորհրդային Հայաստանի կողքին որպես հարազատ քաղաքացիներ»[41]։

Նրանք հայտնում էին, որ իրենք ներկայումս լավ են ճանաչում իրենց այսօրվա գոյավիճակի բոլոր պատասխանատուներին, որոնց զոհը դարձան հայ աշխատավորները, որ իրենք այլևս չեն կարող հանդուրժել, որպեսզի շարունակվեն կուսակցական նորանոր շահատակությունները և երկարաձիգ տառապանքներից հետո իրենք կանգնում են խորհրդային Հայաստանի ու Անդրկովկասյան Ֆեդերացիայի փրկարար դրոշի տակ։

Այնուհետև խնդրելով օր առաջ փրկել իրենց պանդխտության դառն վիճակից, դիմումի հեղինակները վճռականորեն եզրակացնում էին. «Մենք մեր բովանդակ հույսը լույս և ապագա մեր երջանկության փառահեղ աստղը Կովկասյան կարմիր հորիզոնին վրա կտեսնենք, մեր և մեր նոր սերունդի ապագան հող, միայն հող է, որ պիտի կարենանք տեսնել»[42]։

Սալոնիկում ժամանակավորապես ասպնջականություն գտած 25 հայ արհեստավորներ 1924 թ. հունիսին ՀՍԽՀ ժողկոմխորհին ուղարկած դիմումի մեջ նկարագրելով, որ շրջապատող քաղաքական ու տնտեսական պայմանները չափազանց անտանելի են դարձնում իրենց կյանքը, խնդրում էին հնարավորություն տալ իրականացնելու իրենց անհուն բաղձանքը՝ ներգաղթելու Սովետական Հայաստան։

Դիմումի մեջ նրանք գրում էին. «Հիացած ձեր չորս տարվա կատարած հսկայական գործերուն, համակված այս մեծ ու փրկարար ճշմարիտ իրավակարգին, խանդավառված բանվորի, գյուղացու ու արհեստավորի գտած հանգստության ու վայելած ասպնջականությանը մեր պաշտելի հայրենիքին մեջ, կզգանք մեր երկար ու տանջալի ուղևորությունների վերջ մեր գաղթականի բեռներն ուսին, հոգնած ու ուժասպառ, բայց վերապ-

---

[37] ՀՍՍՀ ՀՀՍՇ ԿՎԱ, ֆ. 40/113, ց. 3, գ. 259, թ. 15—17։

[38] Նույն տեղում։

[39] Տե՛ս նույն տեղում, գ. 258, թ. 8—9։

[40] Տե՛ս նույն տեղում, թ. 15—17։

[41] Նույն տեղում, թ. 83—84։

[42] Նույն տեղում։

ընկու հույսերով ու մեր սիրելի երկիրը տեսնելու հավատքով լեցուն, սրտագին օրերն գոտեպնդված կհամբուրենք այն դրոշակը, որու վրա մակագրված է աշխատանքի ու վայելքի, մարդու ու քաղաքացու նշանաբանն իր բոլոր ստորոգելիներով»[43]։

Այս ներկայացնելով իրենց տեղահանվելու վերաբերյալ հունական կառավարության որոշման հետևանքով ստեղծված անելանելի վիճակը, դիմումի հեղինակները վերջում դարձյալ խնդրում էին, որ իրենք, լինելով ընիկ սերաստացի երկրագործներ ու արհեստավորներ, պատրաստ են ամեն կարգի զոհողությունների, միայն թե վայրկյան առաջ փրկվեն տանջալից մղձավանջից։

Այդ դիմումն ստացվելուց անմիջապես հետո, 1924 թ. հուլիսին, ՀՍԽՀ ժողկոմխորհը պատասխանում է խնդրատուներին, որ «ձեզ՝ ինչպես բանվորների և բանվորա-գյուղացիական երկրին հարազատ տարրերի, կառավարությունը կարող է ընդունել իր սահմանները, չնայած որ մեր երկիրը, հողի սղության պատճառով, թույլ չի տալիս բավարարել նման բազմաթիվ դիմումներ։ Պետք է իմանալ, որ մեր երկրում ուժեղ թափով ընթանում է սոցիալիստական շինարար աշխատանքը և միայն նրա կարող են հարազատ քաղաքացիներ լինել ՀՍԽ Հանրապետության մեջ, որոնք կմասնակցեն այդ աշխատանքներին։

Ձեր տեղափոխության մասին հայտնված է Պոլիս՝ ընկ. Շահվերդյանին և հրահանգված է նրան՝ ցույց տալ ձեզ լայն աջակցություն»[44]։

Սովետական կառավարության ամեն մի այսպիսի պատասխանը արագորեն տարածվում էր քաղաքից քաղաք, երկրից երկիր, առաջ բերելով դիմումների նոր հոսանք։ Եվ ահա սփյուռքահայերի մի այլ խումբ ՀՍԽՀ ժողկոմխորհին ուղարկած նամակում գրում էր. «...Գաղթականի ցուպը ձեռքին, օտար երկինքներու տակ հուսաբեկ ու գլխիկոր, գրեթե կյանք մուրացող հայության բեկորները իրենց աչքերը հառած են պատմական Արարատի ստորոտը հարություն առնող, վերածնվող մայր հայրենիքին, անշուշտ այն խոր հավատքով, որ նրա իմաստուն վարիչները միշտ նկատի կունենան արտասահմանի իրենց տառապող եղբայրակիցներու ցավն ու թշվառությունը։

[43] Նույն տեղում, ֆ. 113, ց. 3, գ. 54, թ. 34։

[44] Նույն տեղում, թ. 36։



...Ահավոր է տնտեսական տագնապը, որ համաշխարհային բնույթ է առացեր, որուն հետևանքը, իբրև օտարահպատակ, նանսենյան հայ բանվորներուս (խոսքը նանսենյան անձնագրեր ունեցող տարագիրների մասին է.— Հ. Մ.) գործազրկությունն է։ Ցավալի է ըսել, որ բացարձակապես իրավունք չտրվիր մեզ աշխատելու ոչ մեկ մարզին մեջ։ Թշվառությունը յուր ավերիչ ճիրաններուն զոհն է դարձուցեր մեզ բոլորիս։ Կան բանվորներ, հակառակ իրենց երկաթե բազուկներուն, անոթի ու անսնունդ, չոր հացի մը կարոտ... Ո՞վ պիտի օգնե մեզ, այս օտար երկնքի տակ, ո՞վ պիտի սրբե այս թշվառ բաղդակորույսներու դառն արցունքը...»[45]։

Միայն ներգաղթի մեջ տեսնելով իրենց իսկական փրկությունը, նրանք գրում էին. «Ներգա՛ղթ, ներգա՛ղթ կպոռան հայ խլյակներ։ Բյուրավորներ անպատսպար կթափառեն ու գործ կմուրան։ Միակ և գլխավորագույն սպեղանին ներգաղթն է, որ հնարավորություն պիտի տա բազմաթիվ շինարար բանվոր բազուկներու գործ հայթհայթելու, ի փոխարեն նույնիսկ չոր հացի մը, հոգ չէ թե դաշտերու մեջ ժամանակավորապես վրաններու տակ պատսպարվելով, միայն թե մեր երկնքին տակ գտնվելու մխիթարությունը ունենանք։

Մեր միակ հույսը կմնա ներգաղթը՝ որուն փութով իրականացման համար պաղատագին կխնդրենք ձեր ընկերական հեղինակությունը, ձեր միջամտությունը։ Ամեն օր դժբախտություն ունինք լսելու անպատմելի թշվառություններ, շվարուն և անել կացության մը մատնված ենք, հույսի միակ ակը և լույսի միակ փարոսը ներգաղթն է։

Ակնդետ կսպասենք ձեր ընկերական արդյունավետ պատասխանին և ներգաղթը ավետող պատվական գրության»[46]։

1924 թվականին միանգամայն տագնապալի վիճակ էր ստեղծվել նաև Թուրքիայում բնակվող հայերի համար։ Դա 1922 թ. հետո երկրորդ լուրջ տագնապն էր, որ ապրում էր Թուրքիայում մնացած հայությունը։ 1924 թ. հուլիսի 21-ին ՀՍԽՀ ժողկոմխորհին ուղարկած զեկուցագրում Դ. Շահվերդյանը խնդրում էր արագացնել նախատեսված ներգաղթի իրականացումը, որովհետև «ըստ երևույթին գաղտնի կարգադրության

[45] Նույն տեղում, ֆ. 178, ց. 1, գ. 975, թ. 19։

[46] Նույն տեղում։

համաձայն, այնպիսի անտանելի դրություն է ստեղծվել Անատոլիայում, որ հայերը մնալ իրենց տեղերը չեն կարողանում և ստիպված հեռանում են երկրից, թողնելով ամեն ինչ, միայն թե ազատվեն այդ ծանր պայմաններից։ Դ. Շահվերդյանը նշում էր, որ «հեռանալիս տաճիկ իշխանությունը անցագրերի վրա գրում է՝ երկրի (Տաճկաստանի) սահմանից հեռանալու պայմանով։ Երբ նրանք հասնում են Պոլիս, գաղթականներին նպաստավորող ազգային-բարեգործական հաստատությունները մի կերպ հաջողացնում են մի առժամանակ նրանց պահել Պոլսում։ «Այդ ժամանակամիջոցին,— գրում է Շահվերդյանը,— սկզբում դիմում են ինձ, որպեսզի նրանց ուղարկեմ Հայաստան կամ մի որևէ անկյուն Խորհրդային Միության, բայց, որովհետև այդպիսի հնարավորություն չկա, նրանք ընկնում են զանազան ագենտների ձեռքը, որոնք ուղարկում են նրանց Ֆրանսիա և Աֆրիկայի գաղութները կամ Հարավային Ամերիկա, գլխավորապես Արգենտինա»։ Նկարագրելով Թուրքիայում մնացած հայության այս անմխիթարական վիճակը, Դ. Շահվերդյանը խնդրում էր ժողկոմխորհին՝ ըստ հնարավորին արագացնել նրանց հայրենադարձության կազմակերպման գործը[47]։

Այս բոլոր փաստերը ակնբախորեն խոսում են այն մասին, որ 1923—1924 թթ. ևս սփյուռքահայությունը գտնվում էր խիստ տագնապալի վիճակում, դարձյալ շարունակվում էին անհույս գեգերումները, բռնի կամ կամավոր մակընթացություններն ու տեղատվությունները։ Շատ դեպքերում հայ տարագիրները հազիվ էին իրենց ապնջականություն տված երկրներում արմատներ ձգած լինում, հազիվ էին փորձում ծիլեր արձակել ու փոքր-ինչ ապահովություն ստեղծել և ահա նորից արմատահան էին արվում։ Նրանց գլխին կրկին կախվում էին նոր տեղահանությունների արհավիրքները՝ իրենց բոլոր սարսափներով։ Ու դարձյալ սկսվում էր սփյուռքահայ տարագիրների անծանոթ ուղիներով հալածական երթը դեպի նոր ու անհայտ հանգրվաններ։

Այսպիսի պայմաններում, չնայած գոյություն ունեցող լուրջ դժվարություններին, սովետական կառավարությունն անհրաժեշտ ու նպատակահարմար գտավ շարունակել սփյուռքահայ աշխատավորների հայրենադարձությունը։

[47] Տե՛ս նույն տեղում, Ֆ. 40/113, ց. 3, գ. 305, թ. 33։



ՀՍԽՀ ժողկոմխորհի միջնորդությամբ, 1924 թ. մարտի 3-ին, Անդրկենտգործկոմի նախագահությունը որոշում կայացրեց 1924—1925 թթ. ընթացքում արտասահմանից՝ հիմնականում Հունաստանից, Միջագետքից և Թուրքիայից, Սովետական Հայաստան ընդունել 10.000 գաղթականներ և նրանց տեղավորել Սարդարապատի արևելյան մասում, նախապես այն դարձնելով ոռոգելի։ ՀՍԽՀ հողագործության և ներքին գործերի ժողկոմատները կազմեցին 10.000 գաղթականների փոխադրության և տեղավորման հետ կապված ծախսերի նախահաշիվը՝ մոտ 1,7 միլիոն ռուբլի։ 1924 թվականի մայիսից սկսվեց ներգաղթողների ժամանումը Բաթում և Ջուլֆա[48]։

1924 թ. հոկտեմբերի 15-ին ՀՍԽՀ ժողկոմխորհը քննարկեց Հայաստան ներգաղթող 10.000 տարագիրների ընդունման, տեղավորման, հողի հետ կապելու և այլ միջոցառումների մասին ներքգործժողկոմատի զեկուցումը։ Որոշվեց այդ նպատակով լրացուցիչ գումար խնդրել Անդրֆեդերացիայի ժողկոմխորհից և միութենական կառավարությունից։ Միաժամանակ առաջարկվեց գյուղատնտեսական և կոմունալ բանկերին՝ ներգաղթողների համար բացել երկարաժամկետ վարկեր՝ գյուղատնտեսական գործիքներ, սերմացու և շինանյութեր ձեռք բերելու նպատակով։ Որոշվեց նաև հողժողկոմատի ֆոնդերից ներգաղթողներին տրամադրել շինափայտ՝ երկաթուղային կայարաններին մոտիկ վայրերում[49]։

1924 թ. ընթացքում Հունաստանից, Կ. Պոլսից, Սիրիայից, Միջագետքից և Ֆրանսիայից հայրենիք եկան 4167 տարագիրներ՝ այդ թվում և որբ երեխաներ։ Նրանց մեծ մասը՝ 3051 մարդ, հայրենիք ժամանեց Բաթումով, 1924 թ. մարտի 29-ից մինչև 1925 թ. հունվարի 19-ն ընկած ժամանակամիջոցում[50]։ ժամանածների 50 տոկոսը արհեստավորներ էին, 12 տոկոսը՝ ծխախոտագործներ, 16 տոկոսը՝ շերամապահներ, 2 տոկոսը՝ մտավորականներ, իսկ մյուսները՝ այլ զբաղմունքների տեր աշխատավորներ[51]։

1924 թ. ներգաղթած ընտանիքներին տեղավորելուց

[48] Տե՛ս նույն տեղում, գ. 419, թ. 153։
[49] Տե՛ս նույն տեղում, թ. 147։
[50] Տե՛ս նույն տեղում, գ. 418, թ. 28։
[51] Տե՛ս նույն տեղում, թ. 20։

հետո, ներքգործժողկոմատը և հողժողկոմատը մանրամասն ուսումնասիրեցին նրանց վիճակը և 1925 թ. մարտին այդ մասին զեկուցագիր ներկայացրին ՀՍԽՀ ժողկոմխորհին առընթեր աշխատավորական ներգաղթի հանձնաժողովին։ Այդ զեկուցագրում նշված էր, որ 1924 թ. Կ. Պոլսից, Հունաստանից և այլ վայրերից Հայաստան եկած գաղթականները գտնվում են ծայրահեղ կարիքի մեջ։ Այսպես, Կ. Պոլսից ժամանած և Լենինականի գավառի գյուղերում տեղավորված 77 տնտեսությունների (291 շունչ) և Ստեփանավանի շրջանից այնտեղ տեղափոխված 172 տնտեսությունների (703 շունչ) 80 տոկոսը չքավորներ էին։ Լենինական քաղաքում բնակություն հաստատած 205 ընտանիքներից (862 շունչ), որոնց աշխատունակ անդամները մեծ մասամբ Կ. Պոլսից ներգաղթած արհեստավորներ էին, կարիքավորներ էին 70 տոկոսը։ Ծայրահեղ չքավոր վիճակում էին գտնվում նաև Երևանի գավառում տեղավորված Կ. Պոլսից և Միջագետքից ներգաղթած շուրջ 100 ընտանիքները (438 շունչ)[52]։

Թե՛ գյուղերում և թե՛ քաղաքներում տեղավորված հայրենադարձները կարիք ունեին բնակարանների, շինանյութերի, վարկերի, որպեսզի կարողանային վերանորոգել իրենց հատկացված հին տները կամ կառուցել նորերը, զբաղվել արհեստներով և երկրագործությամբ։

Նկատի ունենալով ներգաղթածների այդ վիճակը, ՀՍԽՀ ժողկոմխորհը հատուկ քննարկման ենթարկեց այն։ Հանձնարարվեց աշխատավորական ներգաղթի հանձնաժողովին՝ մշակել առաջարկներ ու կազմել նախահաշիվ՝ 1925 թ. գաղթականությանը տեղավորելու, հողի հետ կապելու և նրանց օգնություն ցույց տալու ծախսերի վերաբերյալ։

Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ շտապ օգնության կարիք ունեցող գաղթականների թիվը կազմում է ավելի քան 9 հազար մարդ, որի համար հանձնաժողովի ներկայացրած նախահաշվով անհրաժեշտ է 636 հազար ռուբլի, որով միջին հաշվով յուրաքանչյուրին կհասներ 75 ռուբլի, իսկ մեկ տնտեսությանը՝ 212 ռուբլի[53]։ Ահա այսպես մշտական հոգատարություն էր ցուցաբերում սովետական կառավարությունը հայրենադարձների նկատմամբ, իր սուղ բյուջեից զգալի

[52] Տե՛ս նույն տեղում, ֆ. 123, ց. 1, գ. 998, թ. 40։

[53] Տե՛ս նույն տեղում, ֆ. 40/113, ց. 3, գ. 421, թ. 55—56։



գումարներ հատկացնելով նրանց դրության բարելավման գործին։

1924 թ. վերջերից հայրենադարձությունն ավելի զանգվածային բնույթ ստացավ և հանրապետությունում եղած գաղթականության շրջանում տարվող աշխատանքի ծավալը նույնպես մեծացավ։ Նկատի ունենալով այդ հանգամանքները, 1925 թ. հունվարի 28-ին ՀՍԽՀ ժողկոմխորհը որոշում ընդունեց ստեղծել ժողկոմխորհին առընթեր գաղթականական հանձնաժողով։ Հանձնաժողովի նախագահ հաստատվեց ժողկոմխորհի նախագահի տեղակալ Ասք. Մռավյանը, անդամներ՝ Գ. Պարզյանը, Ս. Շաղունցը, Ա. Կոստանյանը և քարտուղար Գ. Անտելեպյանը։ Այդ հանձնաժողովի միջոցով լուծում էին ստանում գաղթականությանը և ներգաղթին վերաբերող սկզբունքային բնույթ կրող բոլոր հարցերը, իսկ ներքգործժողկոմատը դրանք կիրառում էր գործնականում։ Այդ հանձնաժողովի գործունեության շնորհիվ հայրենադարձության և ընդհանրապես գաղթականության հետ տարվող աշխատանքները ընթանում էին ավելի կազմակերպված ու պլանավորված կերպով։ 1925 թ. սեպտեմբերին գաղթականական հանձնաժողովը վերակառուցվեց և այն կոչվեց ժողկոմխորհին առընթեր աշխատավորական ներգաղթի հանձնաժողով, որն ստացավ ավելի լայն իրավունքներ ու լիազորություններ։ Ասք. Մռավյանը շարունակեց գլխավորել նաև այդ հանձնաժողովը, իսկ անդամներ դարձան Հովհ. Դուրգերյանը, Հ. Բալյանը, Ար. Երզնկյանը, Ս. Մելիք-Հովսեփյանը և Գ. Գողթունին[54]։

1925 թ. ապրիլի 21-ին ժողկոմխորհին առընթեր գաղթականական հանձնաժողովը, ի կատարումն ՀԿԿ Կենտկոմի նախագահության նույն թվականի հունվարի 19-ի և ապրիլի 6-ի, ինչպես նաև ժողկոմխորհի հունվարի 28-ի որոշումների, քննարկեց Միջագետքից և Հունաստանից նոր հայրենադարձություն կազմակերպելու հարցը[55]։ Որոշվեց 1925 թ. ընթացքում վերոհիշյալ երկրներից ընդունել 10 հազար տարագիրներ, այդ թվում՝ 8000-ը Հունաստանից։ Ներգաղթողների ընդունման, տեղավորման և նրանց բնակարաններով ու նյութական միջոցներով ապահովելու համար ներքգործժողկոմատին և

[54] Տե՛ս նույն տեղում, գ. 415, թ. 13 և գ. 518, թ. 90—91։

[55] Տե՛ս նույն տեղում, գ. 463, թ. 3—5։

հողժողկոմատին առաջարկվեց մեկ շաբաթվա ընթացքում ներկայացնել մանրամասն մշակված միջոցառումների ծրագիր[56]։ Ներգաղթողների բժշկական սպասարկման գործը դրվեց առողջապահության ժողկոմատի և Կարմիր խաչի ընկերության վարչության վրա[57]։

Հունաստանում և Միջագետքում եղած հայ գաղթականության նկատմամբ սովետական կառավարության դրսևորած այս նոր մարդասիրական քայլը թելադրված էր այն դժվարին կացությամբ, որի մեջ շարունակում էին տառապել նրանք։ 1924 թ. ամենածանր տարին եղավ հունահայության կյանքում։ Հունաստանում ասպնջականություն գտած հայությունը, ներքին տարուբերումներից հետո, հազիվ էր սկսել ինքնուրույնաբար տեղավորվել Արևմտյան Թրակիայի և Մակեդոնիայի շրջաններում, երբ հանկարծ, կառավարական կտրուկ հրամանով, պետք է 15 օրվա ընթացքում լքեր իր տուն ու տեղը, իր կատարած ցանքն ու մշակած այգիները և հեռանար դեպի Հին Հունաստանի անբերրի ապառաժները։ Դրանով հունահայ գաղութի ինքնաբավ դարձած մասը փաստորեն վերստին մուրացիկ ու թափառական վիճակի մեջ էր դրվում։

Այդ ժամանակ խիստ ծանր կացություն էր ստեղծվել նաև Միջագետքում մնացած հայ տարագիրների համար։ Հայրենիք ուղարկած դիմումի մեջ նկարագրելով իրենց վիճակը, նրանք հույս էին հայտնում, որ սովետական կառավարությունը անտարբեր չի մնա իրենց «ցավերուն և աղաղակներուն հանդեպ», նկատի կունենա բարոյապես ու ֆիզիկապես ոչնչացման դատապարտված միջագետքահայ տարագիրների դժբախտ ճակատագիրը և «օր առաջ նպաստավոր ու փրկարար կարգադրություն մը ընելով, մի անգամ ընդմիշտ կազատե զիրենք իրենց ներկայի հուսահատ կացութենեն»[58]։

Եվ ահա, նկատի առնելով այդ հանգամանքները, սովետական կառավարությունը որոշում կայացրեց 1925 թվականին հունահայ և միջագետքահայ զգալի թվով տարագիրների հայրենադարձությունն իրականացնելու վերաբերյալ։ Նախօրոք մշակված պլանի համաձայն 1925 թ. ընթացքում Բաթումով և

[56] Տե՛ս նույն տեղում, գ. 418, թ. 142։
[57] Տե՛ս նույն տեղում, թ. 127։
[58] Նույն տեղում, թ. 169։



Ջուլֆայով հայրենիք ներգաղթեցին 5016 մարդ, այդ թվում Հունաստանից՝ 1098 ընտանիք (3656 մարդ), Կ. Պոլսից՝ 201 ընտանիք (780 մարդ), Բաղդադից և ընդհանրապես Միջագետքից՝ 160 ընտանիք (385 մարդ)[59]։

Սփյուռքահայ աշխատավորների հայրենադարձությունը 1925 թվականին տեղի ունեցավ ավելի հաջող և կազմակերպված։ Դրան զգալի չափով նպաստեց այն հանգամանքը, որ այդ ուղղությամբ արտասահմանում որոշակի աշխատանք կատարեցին սովետական դեսպանությունները ու Հայաստանի օգնության կոմիտեի մասնաճյուղերը։ Այդ տեսակետից ուշագրավ է Իրանում և Հունաստանում ՍՍՀՄ ներկայացուցչությունների ծավալած գործունեությունը Միջագետքի և Հունաստանի հայ գաղթականների հայրենադարձությունն իրականացնելու ուղղությամբ։

Չնայած Միջագետքի հայ տարագիրներին սովետական կառավարությունը վաղուց էր թույլատրել ներգաղթել Հայաստան, սակայն նրանք երկար ժամանակ չէին կարողանում իրականացնել այդ հնարավորությունը՝ անգլիական իշխանությունների հարուցած զանազան բանսարկությունների և գաղտնի արգելքների պատճառով[60]։ Քիչ խոչընդոտներ չէին ստեղծում նաև իրանական իշխանությունները։ Վերջիններս, խախտելով 1922 թ. ամռանը Թեհրանում ՀՍԽՀ լիազոր-ներկայացուցչության հետ կնքված համաձայնագիրը՝ իրենց տերիտորիայով Միջագետքից Սովետական Հայաստան ներգաղթողներին դյուրություններ ընձեռնելու մասին, հաճախ փակում էին սահմանը հայրենիք մեկնողների առջև և այլ արգելքներ հարուցում[61]։ Հարկ եղավ գործադրել Թեհրանում ՍՍՀՄ լիազոր-ներկայացուցիչ Բ. Շումյացկու և ներկայացուցչության հայկական գործերով քարտուղար Ս. Առաքելյանի ամենագործուն միջամտությունը, որպեսզի վերջապես տեղի տային իրանական իշխանությունները։

Ինչպես վկայում են հունահայերի ներգաղթի իրականացման վերաբերյալ եղած նյութերը, մասնավորապես արտգործժողկոմատին Աթենքում ՍՍՀՄ լիազոր-ներկայացուցիչ Ա. Մ. Ուստինովի ներկայացրած զեկուցագրերը, Հունաստանում և

[59] Տե՛ս նույն տեղում, գ. 377, թ. 3 և գ. 486, թ. 19։
[60] Տե՛ս նույն տեղում, գ. 418, թ. 167—168։
[61] Տե՛ս նույն տեղում, գ. 377, թ. 3 և գ. 486, թ. 19։

կատարվել է կազմակերպական լարված ու հետևողական աշխատանք, 1925 թվականին հունահայերի հայրենադարձությունը գլուխ բերելու համար[62]։

1925 թ. սեպտեմբերին սովետական և հունական կառավարությունների միջև համաձայնություն կայացվեց հունահայերի հայրենադարձության վերաբերյալ[63]։ Կարճ ժամանակամիջոցում ավարտվեցին նախապատրաստական աշխատանքները և սովետական դեսպանության ու ՀՕԿ-ի տեղական մասնաճյուղերի ջանքերով կազմվեցին ներգաղթողների ցուցակները։ Ներգաղթողները երկաթուղով և փոխադրական այլ միջոցներով իրենց բնակավայրերից հասցվեցին նավահանգիստ, տեղավորվեցին նավի վրա, ապահովվեցին սննդով և այլն[64]։ Եվ ահա, 1925 թ. նոյեմբերի 7-ին, Հունաստանից ներգաղթողների 3016 հոգուց բաղկացած առաջին խումբը «Խարալամբոս» նավով Դեդեաղաչից ուղղություն վերցրեց դեպի Բաթում, այնտեղից էլ երկաթուղով փոխադրվեց Սովետական Հայաստան[65]։

Այդ ցնծալից իրադարձության առթիվ, Հունաստանի ՀՕԿ-ի կենտրոնական վարչության նախագահ Բոյաջյանը, կատարելով ներգաղթողների ջերմ ցանկությունը, սրտագին շնորհակալություն հայտնեց ՍՍՀՄ դեսպանությանը այն անձնվեր ջանքերի համար, որոնց շնորհիվ զգալի չափով դյուրացվեց տարագիրներին հայրենիք ճանապարհելու դժվարին գործը[66]։

1925 թ. նոյեմբերի 13-ին ՍՍՀՄ դեսպան Ուստինովը Աթենքից պատասխան հեռագիր հղեց Սալոնիկ՝ Բոյաջյանին, որտեղ ասված էր. «Սրտանց շնորհակալություն եմ հայտնում ձեր հեռագրի, ինչպես և այն աջակցության համար, որ կոմիտեն ցույց է տվել տեղափոխությունը կազմակերպելու գործում։ Խորհրդային Հայաստանի, ինչպես և ԽՍՀՄ կառավարությունները արին այն բոլորը, ինչ հնարավոր էր ընդունելու 3000 հայ նոր հայրենիքում, որտեղ նրանց սպասում են եղբայրաբար։ Հույս ունեմ, որ նորեկները կմասնակցեն հայ բանվոր-գյուղացիների հետ միասին Հայաստանի տնտեսական և կուլտուրական վերածնության մեծ գործին, որը կարելի դարձավ Հայաստանի բանվորների և գյուղացիների աշխատանքային անձնվիրությամբ և զոհողությամբ, ղեկավարվելով Լենինի ոգով»[67]։

1925 թ. նոյեմբերի 10-ին ՀՍԽՀ ժողկոմխորհին առընթեր աշխատավորական ներգաղթի հանձնաժողովը քննարկում է Հունաստանից և Միջագետքից ժամանած գաղթականությանը տեղավորելու և նյութական ու այլ օգնություն ցույց տալու հարցերը։ Որոշվում է նրանց հիմնականում տեղավորել Արազդայանում։ Ստեղծվում է հատուկ հանձնաժողով՝ ժողկոմխորհի նախագահ Ս. Համբարձումյանի գլխավորությամբ և ներքգործժողկոմ Հ. Դուրգարյանի, հողժողկոմ Ար. Երզնկյանի ու ջրային տնտեսության վարչության պետ Ս. Շաղունցի անդամակցությամբ[68]։

Հողժողկոմատին հանձնարարվում է գաղթականության հարցերով Մոսկվայում կայանալիք խորհրդակցությանը ներկայացնելու համար նախապատրաստել անհրաժեշտ նյութեր և կազմել նախահաշիվ՝ 1925—1926 թթ. բյուջետային տարում գաղթականների ընդունելության և տեղավորման մասին։ Հայկոոպին առաջարկվում է Արազդայանի շրջանին պարբերաբար մատակարարել ալյուր և այլ կենսամթերքներ։ Ներգաղթածների բազմազան կարիքները հոգալու կապակցությամբ համապատասխան առաջադրանքներ են տրվում նաև աշխժողկոմատին, ջրային տնտեսության վարչությանը, առժողկոմատին և այլ կազմակերպություններին։ Հայրենադարձների տեղավորման համար բաց է թողնվում 50.000 ռուբլի[69]։ Նրանց շրջանում ընթացիկ աշխատանքներ տանելու համար ստեղծվում է Արազդայանի ներգաղթի հանձնաժողով, որը և նախքան հայրենադարձների ժամանումը նրանց համար նախապատրաստում է վրաններ, դույք, վառելիք և այլն[70]։

1925 թ. ներգաղթողների մեծ մասը հայրենիք ժամանեց ուշ աշնանը՝ նոյեմբերի վերջերին, երբ վրա էին հասել ցրտերը և նախօրոք որպես ժամանակավոր բնակարաններ պատրաստված վրաններում ապրելն արդեն հնարավոր չէր։ Այդ պատճառով էլ ներգաղթածների մի մասը տեղավորվեց Երևան և Լենինա-

---

[62] Տե՛ս նույն տեղում, գ. 418, թ. 167—168։
[63] Տե՛ս նույն տեղում, գ. 494, թ. 83։
[64] Տե՛ս նույն տեղում, գ. 517, թ. 37—80։
[65] Տե՛ս նույն տեղում, գ. 396, թ. 81։
[66] Տե՛ս նույն տեղում, գ. 494, թ. 83։

[67] Նույն տեղում, գ. 396, թ. 84։
[68] Տե՛ս նույն տեղում, գ. 377, թ. 1։
[69] Տե՛ս նույն տեղում։
[70] Տե՛ս նույն տեղում, գ. 494, թ. 38։

կան քաղաքներում, իսկ մոտ 1500 հոգի՝ Արազդայանում։ Այդտեղ շուտափույթ կարգով նրանց համար կառուցվեցին փայտյա ժամանակավոր տներ, բաղնիք, հիվանդանոց, դպրոց, արհեստանոց, խանութ և այլն։ Հայրենադարձների մի զգալի մասը, լինելով չքավոր, բնականաբար սիստեմատիկ օգնության կարիք էր զգում։ Ուստի Ժողկոմխորհին առընթեր աշխատավորական ներգաղթի հանձնաժողովի որոշմամբ ավելի քան 500 հոգի սնվում էին պետության հաշվին, իսկ մյուս մասին էժան գներով տրվում էին հաց և այլ մթերքներ[71]։ 1926 թ. գարնանը Արազդայանի շրջանում հայրենադարձներին տրամադրվում են 4 գյուղեր, հողամասեր, սերմացու և վարկեր՝ իրենց սեփական տնտեսությունները ստեղծելու համար։ Նրանց տրամադրված գյուղերն էին՝ Արազդայանը, որտեղ տեղավորվեց 99 ընտանիք (290 մարդ), Արմաշը՝ 114 ընտանիք (334 մարդ), Սուրենավանը՝ 34 ընտանիք (112 մարդ) և Սմոն՝ 47 ընտանիք (172 մարդ)[72]։

Հայրենադարձներին պետության կողմից ցույց էր տրվում զգալի աջակցություն, որպեսզի կարճ ժամանակամիջոցում նրանք կարողանային ստեղծել իրենց սեփական տնտեսությունները։ Գարնանը նրանց հատկացված հողերը հերկվեցին պետական միջոցներով կամ վարկային սկզբունքներով։ Չորս գյուղերում հերկվեց ավելի քան 397 դեսյատին տարածություն, որից 235 դեսյատին՝ գյուղբաժնի միջոցով, 65 դեսյատին՝ Արազդայանի աշխատավորական ներգաղթի հանձնաժողովի կողմից և 97 դեսյատին՝ Դավալուի վարկային ընկերության կողմից։ Միաժամանակ հայրենադարձներին տրվում են զգալի քանակությամբ անասուններ, գյուղատնտեսական գործիքներ, բամբակի ու բանջարեղենի սերմեր և այլն[73]։

Քանի որ ներգաղթածներն անծանոթ էին տեղական բնակլիմայական պայմաններին, Հողժողկոմատը նրանց օգնելու համար առանձնացնում է գյուղատնտեսներ և այլ մասնագետներ։ Արազդայանի շրջանում տեղավորված հայրենադարձներին հատկացված հողամասերը ոռոգման ջրով ապահովելու համար ջրային տնտեսության կողմից վերանորոգվում է նախկին «Կախանովի» ջրանցքը և Արաքսից խմելու ջուր է մատակարարվում։ Հողասակավությունը վերացնելու և մշակելի տարածությունները ընդարձակելու նպատակով Սուրենավան և Արմաշ գյուղերի շուրջը ոռոգելի է դարձվում 150 դեսյատին հողամաս։ Նկատի առնելով, որ ներգաղթածների մեջ կային հմուտ ծխախոտագործներ և ծխախոտի մշակությունը Հայաստանում ուներ մեծ հեռանկարներ, Արմաշ գյուղում կազմակերպվում է ծխախոտագործների կոոպերատիվ միություն, ուր ընդգրկվում է 57 տնտեսություն։ Ծխախոտի մշակությամբ էին զբաղվում նաև մի քանի մասնավոր տնտեսություններ, որոնք նույնպես արտոնյալ պայմաններով պետությունից ստանում էին վարկեր ու այլ միջոցներ՝ ծխախոտագործությունը ավելի զարգացնելու համար։

1925 թվականին ներգաղթածների համար մինչև 1926 թ. կեսերը կատարվում են նաև շինարարական աշխատանքներ։ Արազդայան գյուղում կառուցվում է 12 նոր տուն և վերանորոգվում է նախկին Տերեմեսի ընկերության գործարանի շենքերից 63 սենյակ, ուր տեղավորվում են 93 տնտեսություն՝ 271 շնչով։ Արմաշում կառուցվում է 34 շենք, որտեղ բնակություն են հաստատում 104 ընտանիք՝ 311 բնակիչներով։ Ավշար գյուղում կառուցվում է 12 շենք՝ 35 տնտեսությունների համար, որոնց անդամների թիվը հասնում էր 112 մարդու։ Սմո ներգաղթածները իրենց տրամադրված շինանյութերով վերանորոգում են քանդված ու լքյալ շենքերը, ուր տեղավորվում է 172 հոգուց բաղկացած 47 ընտանիք[74]։

Հայրենադարձության կազմակերպման, ներգաղթողների տեղափոխման, նրանց տեղավորման և այդ կապակցությամբ կատարվող մյուս աշխատանքների իրականացման համար պահանջվում էին նյութական հսկայական միջոցներ։ Սովետական կառավարությունը միշտ էլ զգալի գումարներ էր տրամադրում այդ նպատակների համար։ Բավական է ասել, որ միայն 1923 թվականին ներգաղթած 953 հոգու համար ՀՍԽՀ Ներքգործժողկոմատի գաղթականական բաժնի կողմից ծախսվել է 22.500 ռուբլի ոսկու կուրսով, չհաշված հացահատիկով և այլ մթերքներով նրանց ցույց տրված օժանդակությունը[75]։ 1925 թ.

[71] Տե՛ս նույն տեղում, ֆ. 30/116, ց. 1, գ. 335, թ. 121—127։

[72] Տե՛ս նույն տեղում, ֆ. 123, ց. 1, գ. 1576, թ. 13—15։

[73] Տե՛ս նույն տեղում, ֆ. 30/116, ց. 1, գ. 335, թ. 121—127։

[74] Տե՛ս նույն տեղում։

[75] Տե՛ս նույն տեղում, ֆ. 112, ց. 1, գ. 1490, թ. 21։

ներգաղթած և գյուղական վայրերում տեղավորված հայրենադարձների կարիքները հոգալու նպատակով ծախսված գումարը կազմել է 418,250 ռուբլի[76]։ Արտասահմանից ներգաղթող ընտանիքները, համաձայն ՀՍԽՀ Կենտգործկոմի 1925 թ. հունվարի որոշման, առնվազն 3 տարի ազատվում էին ամեն տեսակ հարկերից և օգտվում էին առանց մաքսի ու վարձի բեռների փոխադրության վերաբերյալ ԽՍՀՄ աշխատանքի և պաշտպանության խորհրդի 1923 թ. օգոստոսի 16-ի որոշմամբ ընձեռված արտոնություններից[77]։ Սովետական Հայաստան ներգաղթած բանվորները, արհեստավորներն ու այլ մասնագետները լայն հնարավորություններ էին ստանում վայելելու ազատ աշխատանքի պտուղները։ Նրանց տրվում էին համապատասխան դյուրություններ և արտոնություններ, աշխատանքով ապահովվում էին առաջին հերթին, ստանում էին վարկեր և այլ միջոցներ։

Հայրենադարձների շնորհիվ հանրապետության ժողովրդական տնտեսությունը ձեռք էր բերում հմուտ ու առաջնակարգ մասնագետներ, որովհետև նրանցից շատերը որակյալ արհեստավորներ, բանվորներ ու հմուտ երկրագործներ էին։ Մինչև Սովետական Հայաստան ներգաղթելը սփյուռքահայ աշխատավորների ապրած չարքաշ ու աստանդական կյանքը նրանց դարձրել էր տոկուն և աշխատասեր։ Մի կողմից այդ հանգամանքը, իսկ մյուս կողմից՝ նրանց նկատմամբ սովետական կառավարության ամենօրյա հոգատարությունը, կարճ ժամանակամիջոցում ներգաղթածների տնտեսական վիճակի բարելավման իսկական երաշխիքներն էին։ Քաղաքական ազատ ու լիիրավ կյանքը հայրենիքում, ինչպես նաև տնտեսական բարեկեցության ստեղծումը ռեալ երաշխիքն էին այն բանի, որ նրանք կարճ ժամանակամիջոցում ապաքինեին իմպերիալիստական պատերազմի ու թուրքական վայրագությունների պատճառած վերքերը, մոռանային մոտիկ անցյալի դաժան օրերի բոլոր տխուր մտապատկերներն ու արհավիրքները։

Մոտավորապես այսպիսին է բնավ ոչ լրիվ պատկերն այն աշխատանքների, որ կատարել է սովետական կառավարությունը 1921—1925 թթ. հայրենիք վերադարձած սփյուռքահայ աշխա-

[76] Տե՛ս նույն տեղում, ֆ. 123, ց. 1, գ. 1576, թ. 13—15։

[77] Տե՛ս նույն տեղում, ֆ. 113, ց. 13, գ. 4, թ. 1—2։



տավորներին տեղավորելու և սկզբնական շրջանում նրանց կարիքները հոգալու ուղղությամբ։ Այդ աշխատանքներն ավելի ակնառու են դառնում այն ժամանակ, երբ նկատի են առնվում մեր երկրի ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին գոյություն ունեցած բոլոր դժվարությունները և այդ պայմաններում տեղի ունեցած ամբողջ ներգաղթն ու գաղթականական շարժումն ընդհանրապես։

Այդ դժվարին ժամանակաշրջանում՝ 1921—1925 թթ., իրականացված հայրենադարձությունը տարագիր հայության ճակատագրի նկատմամբ ջերմ հոգատարության դրսևորման մի վառ օրինակ է, որ ցուցաբերեցին Հայաստանի կոմունիստական կուսակցությունն ու սովետական կառավարությունը, Անդրֆեդերացիայի և ՍՍՀՄ կառավարությունների ամենալայն աջակցությամբ։ Տասնյակ հազարավոր սփյուռքահայ աշխատավորների հայրենիք վերադառնալու նվիրական իղձերի իրականացումը 1921—1925 թթ. ակնառու կերպով ցույց տվեց, որ աշխարհով մեկ սփռված տարագիր հայության փրկության միակ կայանը Սովետական Հայաստանն է։ Պետք է ասել, որ խիստ դժվար գործ է այժմ վերականգնել այդ տարիներին ներգաղթածների ստույգ թիվը։ Բազմաթիվ աղբյուրների համադրմամբ մենք փորձել ենք պարզել 1921—1925 թթ. ընթացքում արտասահմանից ներգաղթածների թիվը, կազմելով ստորև բերված աղյուսակը[78]։

| Տարե. թիվը | Որտեղից են ներգաղթել | Ընտանիքների թիվը | Ներգաղթածների թիվը |
|---|---|---|---|
| 1921 | Միջագետքից | — | 3000 |
| 1922 | Միջագետքից, Իրանից, Կ. Պոլսից և այլ վայրերից | 2001 | 6552 |
| 1923 | Վանից, Իրանից և այլ վայրերից | 258 | 953 |
| 1924 | Հունաստանից, Սիրիայից, Կ. Պոլսից և այլ վայրերից | 783 | 4167 |
| 1925 | Հունաստանից, Միջագետքից, Կ. Պոլսից և այլ վայրերից | 1459 | 5016 |
| | Ընդամենը | 4501 ընտանիք | 19688 մարդ |

[78] Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 40/113, գ. 377, թ. 3, գ. 494, թ. 7, և 33—35, գ. 518, թ. 10, ֆ. 123, ց. 1, գ. 1576, թ. 13—15, գ. 1640 թ., թ. 31—35, ֆ. 30/116, ց. 1, գ. 335, թ. 121—127, գ. 2352, թ. 19—28։ Համեմ. նաև՝

Սակայն պետք է նշել, որ աղյուսակում բերված տվյալները միայն մոտավոր գաղափար կարող են տալ ներգաղթածների իրական թվի մասին: Անկասկած է, որ 1921—1925 թթ. ընթացքում ներգաղթածների թիվը շատ ավելին է եղել: Աղյուսակում բերված թվերի մեջ չեն մտել արտասահմանից անհատական վիզաներով, առանձին ընտանիքներով կամ փոքր խմբերով եկած շատ հայրենադարձներ: Այնուհետև որոշակի անհամաձայնություն է նկատվում աղյուսակում բերված ընտանիքների և շնչերի թվի միջև: Դա հետևանք է այն բանի, որ ներգաղթողների մեջ հաճախ եղել են մեծ թվով որբեր, որոնք որպես առանձին տնտեսություններ չեն հաշվվել:

1921 թ. տեղի ունեցած ներգաղթի և ընդհանրապես գաղթականության տեղաշարժերի վերաբերյալ ստույգ տվյալներ չեն պահպանվել այդ աշխատանքների նոր կազմակերպման և հապճեպ կատարման հետևանքով: Մինչդեռ հայտնի է, որ 1921 թ. իրականացվեց փետրվարյան արկածախնդրության լիկվիդացման ժամանակ դաշնակների տարածած բանսարկությունների հետևանքով Իրան անցած ավելի քան մեկ տասնյակ հազար փախստականության, ինչպես նաև Հայաստանից հեռացած ադրբեջանցի և այլազգի գաղթականության վերադարձը[79]:

Վերը բերված աղյուսակի մեջ չեն արտահայտված նաև սովետական մյուս հանրապետություններից Հայաստան տեղափոխվածները, որոնք նույնպես զգալի թիվ էին կազմում: Թեպետ նախկինում նրանք Հայաստանից դուրս ապաստան էին գտել, սակայն հայրենի երկրում սովետական իշխանության հաղթանակից հետո զանգվածաբար վերադառնում էին հարազատ վայրերը, հաճախ ոչ մի տեղ հաշվառման չենթարկվելով: Իրականում, այսպիսով, 1921—1925 թվականներին Սովետական Հայաստան են ներգաղթել շատ ավելի մեծ թվով տարագիրներ, քան արտահայտված է վերը բերված աղյուսակում:

Ինչ խոսք, որ այնքան էլ մեծ չէ երկրի ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին արտասահմանից Սովետական Հայաստան ներգաղթածների թիվը: Բայց, երբ նկատի են առնվում այն դժվարին պայմանները, որոնց մեջ սկզբնա-

«Խորհրդային Հայաստան—Հինգ տարի` 1920—1925», ժողովածու, էջ 69 և Հովհ. Հակոբյան, Խորհրդային Հայաստան, էջ 255:

[79] Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 112, ց. 1, գ. 8, թ. 135:



կան շրջանում իրականացվում էր ներգաղթը և հիմք դրվում ազ-
գահավաքման հայրենասիրական շարժմանը, այդ դեպքում ար-
դեն հասկանալի են դառնում հայրենադարձության հսկայական
կարևորությունն ու անգնահատելի նշանակությունը, որպես սո-
վետական իշխանության շնորհիվ հայ ժողովրդի ձեռք բերած
մեծագույն նվաճումներից մեկի:

Այսպիսով, սովետական կառավարությունը, ժողովրդական
տնտեսության վերականգնմանը զուգընթաց, մեծ ուշադրություն
և հոգատարություն ցուցաբերեց ինչպես հանրապետությունում
գտնվող արևմտահայ գաղթականության, այնպես էլ սփյուռքա-
հայ տարագիրների բախտի նկատմամբ: Եվ գործադրելով գե-
բագույն ջանքեր, սովետական կառավարությունը լուծեց ինչ-
պես երկրում եղած արևմտահայ գաղթականության հարցը,
այնպես էլ կազմակերպեց սփյուռքահայ աշխատավորների ա-
ռավել դժվարին կացության մեջ գտնվող մասի ներգաղթը:

Սփյուռքահայ աշխատավորները Հայաստան տեղափոխվե-
լուց հետո, զգալով սովետական կառավարության ջերմ վերա-
բերմունքն իրենց նկատմամբ, երախտագիտությամբ լի, անմի-
ջապես լծվում էին ստեղծարար աշխատանքի և ջանում շուտով
վերականգնել իրենց ավերված օջախները ազատագրված հայ-
րենիքում: Հայրենադարձները միաժամանակ կոչ էին անում
իրենց նախկին բախտակիցներին՝ նույնպես վերադառնալ Սո-
վետական Հայաստան և ձեռնամուխ լինել նրա վերաշինության
վեհ գործին:

Ահա այդ երախտագիտության կոնկրետ վկայություններից
մեկը, որ արտահայտել են 1924 թ. ամռանը Կ. Պոլսից հայ-
րենիք ներգաղթած մի խումբ աշխատավորներ արտասահմանի
իրենց տարագիր եղբայրներին ուղղված նամակում. «Այն մար-
դավայել վերաբերմունքը, որ մենք վայելեցինք խորհրդային
երկրում ընդհանրապես, և այն ջերմ, սիրալիր ընդունելությունն
ու հոգատար վերաբերմունքը, որ իր սուղ միջոցներով մեզ ցույց
տվեց մասնավորապես Խորհրդային Հայաստանը, մեզ միան-
գամայն հիացրեց, մենք զգացված՝ մեր անկեղծ երախտագի-
տական շնորհակալությունն ենք հայտնում Խորհրդային Հա-
յաստանի կառավարությանը, հայտնելով մեր պատրաստակա-
մությունը՝ բովանդակ ուժերով լծվելու նրա ձեռնարկած կուլ-
տուր-շինարարական աշխատանքներին:

Թող լսեն օտար երկրներում թափառող մեր ատանդական

եղբայրները, որ միայն և միայն Խորհրդային Հայաստանում վերջ գտան մեր տառապանքները և մենք տեսանք մարդկային, ընկերական վերաբերմունք, որին մինչև այժմ այնքան ծարավի էինք։ Այստեղ միայն գնահատվեց մեր աշխատանքը և կարելիություն տրվեց լծվելու շինարարության հսկա գործին...»[80]։

Սովետական կառավարությունը, ընդառաջելով սփյուռքահայ աշխատավորների ցանկություններին և կազմակերպելով մեծ թվով տարագիրների հայրենադարձությունը, միաժամանակ չէր կարող աչքաթող անել այն հանգամանքը, որ գաղթականական շատ տնտեսություններ դեռևս լիովին ապահովված չէին հողով, հարմար բնակարաններով և այլ միջոցներով։ Հաշվի առնելով այդ ամենը, ՀՍԽՀ Ժողկոմխորհը 1926 թ. հունվարի 21-ին հատուկ քննարկման ենթարկեց աշխատավորական ներգաղթի հանձնաժողովի նախագահ Աս. Մռավյանի զեկուցումը գաղթականության գրության մասին։ Նկատի ունենալով հանրապետությունում գոյություն ունեցող խիստ սակավահողությունը և 1925 թ. ժամանած գաղթականների տեղավորման հետ կապված դժվարությունները, նյութական խոշոր միջոցների անհրաժեշտությունը և այլն, Ժողկոմխորհը որոշում կայացրեց սփյուռքահայերի զանգվածային հայրենադարձությունը **ժամանակավորապես** դադարեցնելու մասին[81]։

Միաժամանակ Ժողկոմխորհը հաստատեց գաղթականության տեղավորման միջոցառումների 1926/27—1930/31 թթ. հնգամյա հեռանկարային պլան, որի իրականացումը լիովին ու վերջնականապես կրարելավեր գաղթականության տնտեսական դրությունը և իսպառ կվերացներ «գաղթական» անունը սոցիալիզմի ուղին թևակոխած Սովետական Հայաստանի արդեն լիիրավ քաղաքացիներ դարձած տասնյակ հազարավոր նախկին տարագիրների վրայից։

Չնայած սփյուռքահայերի հայրենադարձությունը ժամանակավորապես դադարեցնելու մասին ՀՍԽՀ Ժողկոմխորհի վերը նշված որոշմանը, 1926 թ., ինչպես և հետագա տարիներին, դարձյալ շարունակվեց հայրենադարձությունը։ Տարաբախտ պանդուխտներն իրենց փրկությունը տեսնում էին Սովետական Հայաստանում։ Արտահայտելով գաղութահայ աշխատավորների

---

[80] «Խորհրդային Հայաստան», 7 հոկտեմբերի, 1924 թ., № 229։

[81] Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 112, ց. 1, գ. 318։



հայրենակարոտ մարդկանց մտքերի ու իղձերի խտացած հանրագումարը, Մարսելում հրատարակվող «Հայ սիրտ» թերթը գրում էր. «Մեզ համար ինչ կա ավելի դյութական, ավելի հանկուցիչ՝ քան վերածնվող հայրենիքի մը լուսատու պատկերը։

Հեռու ենք այդ պատկերեն, բայց նա կա, կմնա, նա մարմնացած հույսն է, որ կուսուցանե մեր կյանքին իմաստը, առանց այդ հայրենիքին, առանց անոր բարգավաճ գոյության՝ ինչ միտք կրնար ունենալ մեր կյանքը. ինչ արժեր ապրիլ առանց սեփական բույնի, առանց ինքն իր կամքին տեր ըլլալու, այսինքն՝ առանց մարդկային արժանապատվության։

Ուրեմն նոր հույսերու այս լուսածագին մեջ մեր իղձերն ու մաղթանքները կուղղվին միայն և միայն մեր սեփական բույնին, մեր Հայաստանին»[82]։

«Հայ սիրտը» նշում էր, որ չնայած դեռևս «դրախտային» չեն հայրենիքի տնտեսական պայմանները, բոլորը չէ, որ ունեն իրենց «երդիկը», բայց, այնուամենայնիվ, նա լեցուն է լինելիության մեծ հույսերով, հույսեր, որոնք կոթողված են շինարար ու ազատ աշխատանքի և հեռատես ու խոհուն քաղաքականության հիմքի վրա։ Ահա սրա շնորհիվ էր, որ սփյուռքահայ աշխատավորությունը անվերապահորեն կանգնել էր Սովետական Հայաստանի կողքին։ Արտահայտելով տասնյակ հազարավոր պանդուխտների տենչանքը, թերթը մաղթում էր, որպեսզի որքան կարելի է արագ գոյանան ավելի մեծ ու ցանկալի կարելիություններ, «որպեսզի հայրենաբաղձ հայ հոգիները կարենան երթալ Հայաստան, այլևս այնտեղ աշխատելու, այնտեղ ապրելու և այնտեղ ալ մեռնելու համար», որովհետև դա է նրանց հայրենիքը, նրանց «**փրկության միակ կայանը**»[83] (ընդգծումը մերն է.—Հ. Մ.)։

Այսպիսով, իր գոյության առաջին իսկ օրերից Սովետական Հայաստանը դարձավ համայն հայ աշխատավորների իսկական օրրանը, այն հանգրվանը, որտեղ հետագա տարիներին ավելի մեծ թվով սփյուռքահայեր վերջնականապես գերեզմանեցին գաղթականի իրենց անիծյալ ցուպը և դարձան սովետական լիիրավ քաղաքացիներ, սոցիալիստական շինարարության գործուն մասնակիցներ։

---

[82] «Հայ սիրտ», շաբաթաթերթ, Մարսել, 1 հունվարի, 1926 թ., № 36։

[83] Նույն տեղում։

## 2. Հայրենակցական միությունների գործունեության աշխուժացումը և սփյուռքահայերի հայրենադարձությունը 1926—1936 թվականներին

*Սփյուռքահայության նկատմամբ կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության շրջահայաց քաղաքականությունը սփյուռքում աստիճանաբար առաջ բերեց մի շատ խրախուսելի հայրենասիրական շարժում։ Դա այնտեղ գոյություն ունեցող հայրենակցական, վերաշինաց, կրթասիրաց և այլ անուններով հայտնի միությունների ու ընկերությունների կողմից Սովետական Հայաստանում ներգաղթողների համար նոր ավաններ, շենքեր ու զանազան ձեռնարկություններ հիմնելու ձգտումն էր, որի շնորհիվ հնարավոր կլիներ հայրենիք փոխադրել ավելի շատ տարագիրներ։*

*Սփյուռքում գործող բազմաթիվ ու բազմաբնույթ կազմակերպությունների շարքում հայրենակցական միությունները կատարում են շատ շնորհակալ ու խրախուսելի աշխատանք։ Դըրանց մեծ մասը հայկական գաղթօջախներում հանդես է եկել դեռևս նախքան առաջին համաշխարհային պատերազմը և նպատակ է ունեցել օգնել իր հայրենի գյուղի, քաղաքի կամ գավառի կրթական-մշակութային գործին։ Սակայն արևմտահայության մեծ եղեռնից հետո, երբ գրեթե լիովին հայազրկվեց ու ավերակների վերածվեց Արևմտյան Հայաստանը, այդ միությունները փոխեցին իրենց բնույթն ու նպատակը։ Դրանք սկսեցին հաշվառման վերցնել կոտորածներից փրկված իրենց հայրենակիցներին, ճշտել նրանց հասցեները, օգնել նրանց կյանքի ճիշտ ուղի ընտրելու գործում և այլն։ Այդպես սփյուռքում կազմակերպվեցին մոտ 300 միություններ, որոնք կրում էին Արևմըտյան Հայաստանի տարբեր գավառների, քաղաքների ու գյուղերի անունները։*

*Հայրենակցական միությունների գործունեությունը նոր իմաստ ու բովանդակություն ստացավ, երբ տարագիր հայությունը զանգվածաբար ուղղվեց դեպի Սովետական Հայաստան՝ այն դիտելով որպես համայն հայության մայր հայրենիքը։ Այդ պայմաններում հայրենակցական միությունները որդեգրեցին «Հայաստանի վերաշինման ու կառուցման» նշանաբանը, քանի որ վերածնված հայրենիքի մեջ էին նրանք տեսնում նաև տարագիր հայության փրկությունն ու ապագան։*



*Հայաստանում սովետական իշխանության հաստատումից հետո հայության համար ստեղծված նոր իրադրությունը հայրենակցական միություններին թելադրում էր որդեգրել գործունեության նոր ուղեգիծ, ամեն կերպ զորավիգ լինել Սովետական Հայաստանին և նպաստել ի սփյուռս աշխարհի իրենց հայրենակիցների հայրենադարձության իրականացման գործին։*

*Սակայն այդ մտադրությունը հեշտությամբ չէր գլուխ գալիս։ Դաշնակները ամեն ճիգ ու ջանք գործադրում էին, որպեսզի խափանեին հայրենակցական միությունների այդ ճիշտ դիրքորոշումը։ Նրանք հայրենակցական միություններին խորհուրդ էին տալիս նույնիսկ Աֆրիկայում կամ Ամերիկայում փոշիացնել հայրենակցական միությունների միջոցները, քան թե Հայաստանում անցկացնել մի ջրանցք կամ կառուցել մի տուն հենց իրենց՝ սփյուռքից հայրենիք դարձող տարագիրների համար։*

*Դաշնակների նման բանսարկությունների հետևանքով էր, որ ԱՄՆ-ում գտնվող Հաճընցիների հայրենակցական միության ղեկավարները 20-ական թվականների կեսերին մտադրվել էին Սիրիայում կառուցել «Նոր Հաճըն» ավանը և այնտեղ հավաքել բոլոր հաճընցիներին։ Սակայն հաճընցի տարագիրները ճիշտ կռահեցին այդ հայրենադավ մտադրության իրական հետևանքները և ժամանակին հակահարված տվին այդ որոշման իրականացմանը[84]։ Նրանց միահամուռ բողոքները ցույց տվեցին, որ սփյուռքահայության հիմնական զանգվածը իր ապագան անվերապահորեն կապել է Սովետական Հայաստանի հետ և ոչ մի խաբեություն չի կարող սասանել նրա հավատը հայրենիքի նկատմամբ։*

*Ահա հենց այդ ժամանակ էլ սկիզբ առավ հայրենակցական միությունների վճռական շրջադարձը դեպի Սովետական Հայաստան, որտեղ աստիճանաբար առաջացան պատմական Հայաստանի մի շարք գավառների, քաղաքների և գյուղերի անուններով նոր ավաններ ու թաղամասեր։ Հայրենակցական միությունների այդ ճիշտ ուղիով ընթանալու հայրենասիրական առաջին օրինակը տվողներից մեկը եղավ ԱՄՆ-ում գտնվող Արաբկիրցիների հայրենակցական միությունը։ Արաբկիրցիների դիմումը հարգվեց սովետական կառավարության կողմից և*

---

84 Տե՛ս «ՀՕԿ-ի տեղեկատու», Երևան, 1927 թ., № 1, էջ 13—14։

նրան թույլատրվեց այն ժամանակվա Երևանի հյուսիս-արևմտյան ծայրամասում կառուցել «Նոր Արաբկիր» ավանը, ուր կկարողանային հավաքվել տարագիր նախկին արաբկիրցիները[85]։

Նոր Արաբկիրը, որի հատակագիծը պատրաստել էր ակադեմիկոս Ալ. Թամանյանը, մեծ հանդիսավորությամբ հիմնադրվեց Հայաստանում սովետական կարգերի հաստատման հինգերորդ տարեդարձի օրը՝ 1925 թ. նոյեմբերի 29-ին[86]։

Սովետական կառավարության հետևողական օգնության և հայրենակցական միության ջանքերի շնորհիվ արագորեն աճեց Նոր Արաբկիրը։ Արդեն 1928 թ. վերջերին այնտեղ կառուցվել էր 51 տուն և հայրենադարձ բնակիչների թիվը հասել էր 762-ի։ Ավանն ուներ մանածագործների, պղնձագործների, դերձակների, կոշկակարների, գուլպայագործների արտելներ, դպրոց, մանկապարտեզ, ակումբ, գրադարան և այլ օջախներ[87]։

Դեռևս 1925 թ. գարնանը, Էջմիածնի շրջանում, Էվջիլարի ջրանցքով ոռոգվող մի ընդարձակ հողամասի վրա, ՀՕԿ-ի կենտրոնական վարչության ջանքերով և տարիներ առաջ եվդոկիացիներին կտակված 2500 ֆունտ ստերլինգ գումարով (մոտ 25000 ռուբլի) հիմնադրվել էր Նոր Եվդոկիա գյուղը, որտեղ բնակություն էին հաստատում Հայաստան ներգաղթող եվդոկիացիները[88]։

Գրեթե նույն ժամանակ, Երևանի հարավ-արևելյան արվարձանում, Թոխմախան լճի մոտ, հիմնադրվեց «Նոր Բյութանիա» ավանը՝ Հունաստանից ներգաղթած բյութանիացի, զմյուռնիացի, ատաբազարցի, սեբաստացի և բիլեճիկցի հայրենադարձների կողմից։ Սկզբում Նոր Բյութանիայում բնակություն հաստատեցին մոտ 60 հայրենադարձ տնտեսություններ, որոնք զբաղվում էին ծխախոտագործությամբ, շերամապահությամբ և այլ թանկարժեք կուլտուրաների մշակությամբ։ Նրանք բնակելի տներ կառուցելու, գյուղատնտեսական գործիքներ և սերմեր ձեռք բերելու համար արտոնյալ պայմաններով վարկեր էին

[85] Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 54, թ. 30։

[86] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1 դեկտեմբերի, 1925 թ., № 273։

[87] Տե՛ս «Երևան», եռօրյա թերթ, Փարիզ, 17 դեկտեմբերի, 1929 թ., № 468։

[88] Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 178, ց. 1, գ. 320, թ. 1—10։



ստանում Երևանի գավգործկոմից, գյուղբանկից և ուրիշ հաստատություններից[89]։

ՀՍԽՀ ժողկոմխորհին առընթեր գաղթականական հանձնաժողովը դեռևս 1925 թ. մարտին ընդառաջել էր նաև Սեբաստիայի վերաշինաց միության ցանկությանը և թույլատրել Սովետական Հայաստանում հիմնել գորգագործական արհեստանոց և այնտեղ տեղափոխել մոտ 1200 գորգագործ սեբաստացիների ու մեծահասակ որբերի։ Այնուհետև բավարարվեց սեբաստացիների խնդրանքը՝ Սովետական Հայաստանում Նոր Սեբաստիա անունով ավան հիմնադրելու մասին։ Ինչպես նախատեսվում էր, հենց այդ ավանում էլ պետք է կառուցվեր գորգագործական արհեստանոցը և միաժամանակ հող հատկացվեր երկրագործությամբ զբաղվել ցանկացողներին[90]։

Սովետական Հայաստանում հետագայում այդպիսի հնարավորություններ ստացան նաև Մալաթիայի կրթասիրաց ընկերությունը[91], Քոբբեցիների ուսումնասիրաց ընկերությունը[92], Դատեմի լուս-ուսումնասիրաց ընկերությունը[93], խարբերդցիները, թոմարզացիները, կեսարացիները, երզնկացիները և Արևմտյան Հայաստանից ու ընդհանրապես Թուրքիայի այլև այլ անկյուններից աշխարհի տարբեր կողմեր ցրված բազմաթիվ ուրիշ հայ տարագիրներ[94]։

Ահա այդպես, սովետական կառավարության, համապատասխան հայրենակցական միությունների և որոշ նվիրատվությունների ու կտակների միջոցներով ձեռնարկվեցին Նոր Մալաթիայի (1927), Նոր Սեբաստիայի (1928), Նոր Խարբերդի (1930), Նուբարաշենի (1930), Նոր Թոմարզայի (1931), Նոր Կեսարիայի (1934), Նոր Տիգրանակերտի (1934), Նոր Տարոնի, Նոր Երզնկայի, Նոր Յոզղատի, Նոր Ամասիայի և այլ ավանների հիմնադրման աշխատանքները[95]։

[89] Տե՛ս նույն տեղում, ֆ. 40/113, ց. 3, գ. 418, թ. 19—20 և գ. 518։

[90] Տե՛ս նույն տեղում, գ. 493, թ. 44—45։

[91] Տե՛ս նույն տեղում, թ. 62։

[92] Տե՛ս նույն տեղում, թ. 23։

[93] Տե՛ս նույն տեղում, թ. 15, և գ. 421, թ. 152։

[94] Տե՛ս նույն տեղում, ֆ. 178, ց. 1, գ. 578, թ. 2—11։

[95] Տե՛ս նույն տեղում։ Հետագայում այդ ավաններից մի քանիսը տարբեր պատճառներով ենթարկվեցին անվանափոխության, իսկ շատերը մինչև օրս էլ կրում են իրենց պատմական անունները։



8—1181

ՀՍԽՀ ժողկոմխորհի հատուկ որոշմամբ հայրենակցական միությունների կողմից Հայաստանում կատարվող շինարարական աշխատանքների ղեկավարությունը հիմնականում դրված էր ՀՕԿ-ի կենտրոնական վարչության վրա։ ՀՕԿ-ը ոչ միայն կազմակերպական, այլև նյութական իմաստով հսկայական օգնություն էր ցույց տալիս հայրենադարձների համար նոր ավանների շինարարական աշխատանքներին[96]։

Հայրենակցական միությունների և սփյուռքահայ առաջադիմական այլ կազմակերպությունների այս նոր վերաբերմունքը հնարավորություն տվեց սովետական կառավարությանը շարունակելու հայրենադարձությունը։ Եվ ահա 1926 թ. Հունաստանից հայրենիք ներգաղթեց 3120 մարդ, 1927 թվին՝ դարձյալ Հունաստանից 1200 մարդ և Կ. Պոլսից՝ 400 մարդ։ 1928 թ. 700 հոգի ներգաղթեցին Հունաստանից, 90 հոգի՝ Կ. Պոլսից, 70 հոգի՝ Մարսելից։ 1929 թվականին Ֆրանսիայից (Մարսել) և Թուրքիայից (Կ. Պոլիս) Սովետական Հայաստան ներգաղթեց 106 ընտանություն՝ 282 մարդ։ Այսպիսով, 1926—1929 թթ. ընթացքում Հունաստանից, Թուրքիայից և Ֆրանսիայից եկած հայրենադարձների թիվը, անշուշտ ոչ լրիվ տվյալներով, կազմեց 5863 մարդ[97]։

Սփյուռքահայ աշխատավորների հայրենադարձությունը ավելի մեծ թափ ստացավ ՀՍԽՀ Կենտգործկոմի և ժողկոմխորհի 1931 թ. օգոստոսի 10-ի «ՀՍԽՀ սահմանները արտասահմանի աշխատավոր հայերի մասսայական նոր ներգաղթ արտոնելու մասին» որոշումից հետո[98]։ Այդ որոշման մեջ նշված էր, որ շնայած Սովետական Հայաստանի դեմ արտասահմանում բուրժուական կառավարությունների ու կուսակցությունների կողմից նյութվող դավերին և երկրի ներսում դասակարգային թշնամիների համառ դիմադրությանը, սոցիալիստական շինարարության բոլոր ճակատներում ձեռք բերված նվաճումների հետևանքով վերացվել է գործազրկությունը ինչպես ամբողջ Սովետական Միության մեջ, այնպես էլ Հայաստանում։ Դրա շնորհիվ հնարավոր է դառնում արտասահմանյան երկրներում տառապող հայ

96 Տե՛ս «ՀՕԿ», ամսագիր, Փարիզ, 1934 թ., № 3, էջ 133։

97 Տե՛ս ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 1, ց. 25, գ. 9, թ. 34—36 և ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 123, ց. 1, գ. 1588։

98 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 20 օգոստոսի, 1931 թ., № 194։



աշխատավորների նոր զանգվածների հայրենադարձության իրականացումը։ Այդ նպատակով կազմակերպվում է ՀՍԽՀ ժողկոմխորհին առընթեր ներգաղթի հատուկ հանձնաժողով՝ ժողկոմխորհի նախագահի տեղակալ Ար. Երզնկյանի ղեկավարությամբ։

ՀՍԽՀ Կենտգործկոմի և ժողկոմխորհի վերը նշված որոշման մեջ ներգաղթի հանձնաժողովին հանձնարարվում էր սահմանել ներգաղթողների թիվը, նրանց ընդունման ժամկետները, մատակարարման և ֆինանսավորման հետ կապված բոլոր խնդիրների մշակումն ու լուծումը, հայրենադարձներին ըստ մասնագիտությունների աշխատանքով ապահովելը, հանրապետության սահմաններում բնակեցնելը և այլն։

Ի կատարումն վերոհիշյալ որոշման, ավելի կազմակերպված ձևով, 1932—1933 թթ. ընթացքում Հունաստանից, Բուլղարիայից և Ֆրանսիայից Սովետական Հայաստան ներգաղթեցին շուրջ 8007 մարդ։ Ֆրանսիայից առավել մեծ ներգաղթ կատարվեց հատկապես 1936 թվականին։ Այդ ժամանակ հայրենիք եկավ ավելի քան 1800 մարդ[99]։

Բացի մեծ խմբերով կատարված հայրենադարձությունից, 1926—1936 թթ. ընթացքում անհատական վիզաներով արտասահմանյան տարբեր երկրներից Սովետական Հայաստան են ներգաղթել ևս 6926 մարդ[100]։

Այսպիսով, 1926—1936 թթ. ներգաղթածների ընդհանուր թիվը կազմում է 22598 մարդ։ Եթե դրան ավելացնենք նաև 1921—1925 թթ. ներգաղթածների թիվը՝ 19688 շունչ, մոտավոր ճշտությամբ կարելի է ասել, որ 1921—1936 թթ. ընթացքում օտարությունից հայրենիք են վերադարձել 42286 տարագիրներ։ Մոտավորապես նույն թիվն է նշված նաև ՀՍՍՀ արտգործժողկոմատի կողմից 1944 թ. նոյեմբերին այդ մասին կազմված տեղեկանքի մեջ, որի համար հիմք են ծառայել ինչպես արխիվային վավերագրերը, այնպես էլ Փարիզում լույս տեսնող «ՀՕԿ» ամսագրի 1935 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսների համարները և «Խորհրդային Հայաստան» օրաթերթի 1936 թ. մայիսի 20-ի համարում եղած հաղորդումը[101]։

99 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 123, ց. 1, գ. 1588։

100 Տե՛ս նույն տեղում։

101 Տե՛ս նույն տեղում, ֆ. 326, ց. 1, գ. 44, թ. 1։

1932—33 և 1936 թվականներին ներգաղթած ընտանիքները հիմնականում տեղավորվեցին հայրենադարձների համար կառուցված ավաններում, Երևանում ու նրա արվարձաններում, Լենինականում, Կիրովականում, Անի-Պեմզայում, Իջևանում, Ստեփանավանում, Լամբալուի (այժմ՝ Բագրատաշեն) սովխոզում և այլ վայրերում։

Չնայած ՀՕԿ-ի, հայրենակցական միությունների և բարեգործական այլ հաստատությունների կողմից ներգաղթողներին ցույց տրվող օգնությանը, առանց սովետական կառավարության բազմակողմանի աջակցության, նրանց կարիքների նկատմամբ ամենօրյա հոգատարության, անհնարին կլիներ հայրենադարձների դրության շուտափույթ բարելավումը։ Սովետական կառավարությունը զգալի գումարներ տրամադրեց մասնավորապես 1932—1933 թթ. ներգաղթածների ճանապարհածախսի, սննդի, նրանց համար բնակարաններ, դպրոցներ կառուցելու և այլ միջոցներ ձեռք բերելու գործին[102]։

Սակայն հարկ է նշել, որ հայրենադարձների ավանների շինարարությունը, նրանց կոմունալ-կենցաղային կարիքների բավարարումը որոշ տեղերում այնքան էլ լավ չէր կազմակերպված, որը երբեմն արդարացի դժգոհությունների տեղիք էր տալիս։

Նյութական ու կենցաղային վատ պայմանների հետևանքով հայրենադարձների որոշ մասի մեջ, հատկապես 1932—1933 թթ. ներգաղթածների մոտ, առաջ էին եկել դժգոհություններ։ Նման տրամադրությունների առաջացման հիմնական պատճառներից մեկը բնակարանային վատ պայմաններն էին։ Օրինակ, 1933 թ. հունվարին Հունաստանից ներգաղթած և Անի-Պեմզայի բանավանում տեղավորված 138 ընտանիքներ 2—3 ընտանիքով միասին բնակվում էին մի սենյակում, որոշ մասը՝ դպրոցի շենքում և այլ տեղերում[103]։ Երբեմն վրիպումներ էին թույլ տրվում հայրենադարձներին աշխատանքի տեղավորելու ժամանակ։ Այդ կարգի հարցերի լուծման ժամանակ ոչ միշտ էին ուշադրության առնվում հայրենադարձների մասնագիտությունները։ Բարձր որակավորում ունեցող շատ մասնագետներ՝ մեխանիկներ, ար-

[102] Տե՛ս նույն տեղում, ֆ. 40/113, ց. 3, գ. 1428, 1432, 1770, 1777 և այլն։

[103] Տե՛ս ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 1, ց. 24, գ. 72, թ. 63—64։



հեստավորներ, ծխախոտագործներ և այլն, աշխատանքի էին ուղարկվում որպես սևագործ բանվորներ։ Այդ պատճառով էլ այդպիսիներից շատերը թողնում էին այլ վայրերում իրենց տրված աշխատանքը և տեղափոխվում Երևան կամ Լենինական։ Դրա հետևանքով լրացուցիչ դժվարություններ էին առաջանում նրանց ինչպես բնակարանով, այնպես էլ համապատասխան աշխատանքով ապահովելու գործում։ Օրինակ, 1932—1933 թթ. սկզբում Ղարաքիլիսայում (այժմ՝ Կիրովական), Անի-Պեմզայում, Իջևանում և Ղափանում տեղավորված 471 ընտանիքներից 414-ը կարճ ժամանակ անց հեռացել էին իրենց տեղերից, մեկնել Երևան կամ Լենինական[104]։

Տեղական որոշ կազմակերպությունների ղեկավարության կողմից երբեմն ոչ հոգատար, բյուրոկրատական վերաբերմունք էր ցուցաբերվում ներգաղթածների կարիքների նկատմամբ (Քանաքեռհէկի շինարարություն, Անի-Պեմզա և այլն)[105]։

Բայց, չնայած այս թերություններին, հայրենադարձների հիմնական զանգվածը ճիշտ էր ըմբռնում եղած պակասությունների ու անհարմարությունների պատճառները և համբերատար ձևով հաղթահարում այդ ժամանակավոր դժվարությունները։ Ահա թե ինչ է ասում այդ կապակցությամբ 1936 թ. Լիոնից ներգաղթածներից մեկը, որը բնակություն էր հաստատել Նոր Մալաթիայում. «Այնտեղ (Լիոնում.—Հ. Մ.) ունեի չորս սենյակ,— գրում էր այդ հայրենադարձը,— ստանում էի օրական 30 ֆրանկ. այստեղ դեռ նեղվում ենք, բայց վնաս չունի, մեր հայրենիքն է, մենք պետք է կառուցենք և մեզ համար լավ կյանք ստեղծենք։ Մեր գալու ժամանակ (Ֆրանսիայից հայրենիք գալու ժամանակ.—Հ. Մ.) ինձ բարձր ռոճիկով առաջարկվեց մնալ, սակայն ես նրանց պատասխանեցի, որ ես մտադիր եմ իմ հայրենիքին ծառայել և մերժեցի նրանց առաջարկը»[106]։

Այդպես էր մտածում ու գործում հայրենադարձների ճնշող մեծամասնությունը և հայրենիքում իր համար բարեկեցիկ կյանք ապահովում իր սեփական ջանքերով։ Իսկ այդ ջանքերը անկասկած հաջողությամբ էին պսակվում, որովհետև միահյուսվում էին այն մեծ աշխատանքների հետ, որ կատարում

[104] Նույն տեղում, գ. 162, թ. 1—2։

[105] Տե՛ս նույն տեղում։

[106] Նույն տեղում, գ. 72, թ. 63—64։

էին Հայաստանի կոմունիստական կուսակցությունը և կառավարությունը հայրենադարձների դրության բարելավման ուղղությամբ։

1933 թ. սեպտեմբերի 21-ին ՀԿԿ Կենտկոմի քարտուղարությունը քննարկեց «Ներգաղթածների դրության և նրանց հետ տարվող աշխատանքների մասին» հարցը և ընդունեց կոնկրետ ու ծավալուն որոշում, որը կուսակցական ու սովետական օրգանների ուշադրության կենտրոնում էր դնում այդ գործը։

Կենտկոմի քարտուղարությունը գտավ, որ ներգաղթածների դրությունը և նրանց հետ տարվող աշխատանքները միանգամայն անբավարար են մի շարք շրջաններում ու ձեռնարկություններում (Ղուրդուղուլի, Ամասիա, Լենինականի մսի կոմբինատ, 3-րդ սովխոզ և այլն)։ Խիստ քննադատության ենթարկվեց այն հանգամանքը, որ չնայած ներգաղթածների շրջանում տարվելիք աշխատանքների մասին Կենտկոմի բազմաթիվ որոշումներին, մի շարք կենտրոնական մարմիններ, շրջկոմներ և շրջսովետներ (լուսժողկոմատ, հողժողկոմատ, առժողկոմատ և հատկապես Երևանի, Լենինականի, Ղուրդուղուլիի, Վաղարշապատի (այժմ՝ Էջմիածին) և այլ քաղկոմներն ու շրջկոմները) չեն կենսագործել այդ որոշումները։

Գոյություն ունեցող անցանկալի դրությունը շտկելու նպատակով ՀԿԿ Կենտկոմի քարտուղարությունը որոշում է ժողկոմխորհին առընթեր ստեղծել ներգաղթածների շրջանում աշխատանքի հատուկ կոմիտե, մշտական աշխատողների ապարատով։ Ժողկոմխորհին հանձնարարվում է այդ կոմիտեին հատկացնել դրամական և այլ միջոցների զգալի ֆոնդեր, արագացնել հայրենադարձների բնակարանային շինարարությունը, բարելավել նրանց բժշկական սպասարկումը, օգնել հագուստեղենով ու կոշկեղենով, դպրոցահասակ բոլոր երեխաներին ընդգրկել դպրոցներում և այլն։

Որոշման մեջ հանձնարարվում է ՀԿԿ քաղկոմ-շրջկոմներին՝ ուժեղացնել քաղմասսայական և կուլտուրական աշխատանքները ներգաղթածների շրջանում, այդ նպատակով առանձնացնելով հատուկ աշխատակիցների և այլն[107]։

Հայրենադարձների շրջանում տարվող աշխատանքների և նոր ներգաղթի կազմակերպման հարցը 1936 թ. հուլիսի 21-ին

---
[107] Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 40/113, ց. 3, գ. 1777, թ. 5։



հատուկ քննության է ենթարկվում նաև ՀամԿ(բ)Կ Կենտկոմի և ԽՍՀՄ ժողկոմխորհի կողմից[108]։ ՀամԿ(բ)Կ Կենտկոմի և ԽՍՀՄ ժողկոմխորհի ընդունած որոշման մեջ մեծ ուշադրություն էր հատկացվում հայրենադարձների տնտեսական դրության բարելավման և նրանց կուլտուրական կյանքի կազմակերպման հարցերին։ Հանձնարարվում է ՀՍԽՀ ժողկոմխորհին՝ անմիջապես ձեռնարկել և կարճ ժամկետներում, մինչև 1937 թ. ամառը, իրականացնել շինարարական մի շարք կարևոր աշխատանքներ, այդ թվում՝ Նուբարաշենում (այժմ՝ Մովսեսաշեն) կառուցել մեկ սենյականոց 100 բնակարան, դպրոցի, մանկապարտեզի, մանկամսուրի, թատրոնի և հիվանդանոցի շենքեր՝ 1,8 միլիոն ռուբլու ընդհանուր արժեքով։ Այդ որոշման համաձայն մեծ շինարարություն է ծավալվում նաև Նոր Սեբաստիայում, Նոր Տիգրանակերտում, Նոր Կեսարիայում և հայրենադարձների համար հիմնադրված մյուս ավաններում։

ՀամԿ(բ)Կ Կենտկոմի և ԽՍՀՄ ժողկոմխորհի որոշմամբ հայրենադարձների համար ստեղծված ավաններում կազմակերպված կոլտնտեսությունների ու հայրենադարձ կոլտնտեսականների, ինչպես նաև աշխատավոր մենատնտեսների համար սահմանվում են լրացուցիչ մի շարք արտոնություններ։ Սկսած 1936 թվականից, հայրենադարձների բոլոր կոլտնտեսություններն ու նրանց անդամները չորս տարով ազատվում են պետական ամեն տեսակ բնատուրքերից, գյուղատնտեսական ու կուլտուրական հարկերից և այլն։

Համապատասխան օրգանները միաժամանակ նախապատրաստում էին 1937—1938 թվականներին իրականացնել նոր ավելի մեծ զանգվածային հայրենադարձություն Ֆրանսիայից, Մերձավոր արևելքի ու Բալկանյան երկրների հայկական գաղթօջախներից։ Սակայն մի կողմից բացահայտ պատերազմական մթնոլորտի առաջացումը միջազգային ասպարեզում, մյուս կողմից՝ երկրի ներսում անհատի պաշտամունքի բացասական հետևանքների դրսևորումը, սոցիալիստական օրինականության խախտումները, արտասահմանյան երկրների՝ ուստի նաև սփյուռքահայ գաղթօջախների հետ կապերի պահպանման գործում առաջացած դժվարությունները, ՀՕԿ-ի լիկվիդացումը, կուսակցական ու պետական բազմաթիվ աշխատողների նկատ-

---
[108] Տե՛ս նույն տեղում, ֆ. 178, ց. 1, գ. 943, թ. 1—3։

*մամբ ձեռնարկված անհիմն ռեպրեսիաները և այլն, ուղղակի անհնարին դարձրին նոր հայրենադարձության իրականացումը։*

*Միայն համաշխարհային երկրորդ պատերազմից հետո վերսկսվեց սփյուռքահայ տարագիրների զանգվածային հայրենադարձությունը, որի շնորհիվ հայրենիք վերադարձան տասնյակ հազարավոր պանդուխտներ։*

## ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

## ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԱԶԳԵՐԻ ԼԻԳԱՅՈՒՄ ԵՎ ՆԱՆՍԵՆՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

*Սփյուռքահայերի հայրենադարձության իրականացման և ընդհանրապես արևմտահայ տարագիրների հարցի լուծման ուղղությամբ սովետական կառավարության դրական գործունեությունը էլ ավելի ակնառու է դառնում, երբ այն դիտվում է հայ գաղթականության նկատմամբ արևմտյան տերությունների ու Ազգերի լիգայի վարած երկդիմի քաղաքականության հետ զուգահեռ։*

*Արևմուտքի իմպերիալիստական տերությունները, որոնք թուրքական կառավարության հետ միասին առավել կամ պակաս պատասխանատվություն էին կրում արևմտահայության ցեղասպանության և աշխարհով մեկ սփռվելու գործում, պատերազմի ավարտից հետո նույնպես դրական ոչ մի քայլ չարեցին նրա հարցի լուծման ուղղությամբ։ Ավելին, ինչպես ցույց տվեց Լոզանի միջազգային կոնֆերանսը, նրանք վերջնականապես լքեցին հայկական հարցը, որը այդտեղ անամոթաբար փոխարինվել էր հայ գաղթականությանը այսպես կոչված մի «ազգային օջախ» տրամադրելու համեստ պահանջով։*

*Մինչև Լոզանի, որոշ ընդհատումներով 1922 թ. նոյեմբերից մինչև 1923 թ. հուլիսը տևած, կոնֆերանսը սփյուռքահայության գրեթե բոլոր խավերում տակավին ապրում էր այն հույսը, թե միգուցե մեծ տերությունները իրենց համար որևէ հնարավորություն ստեղծեն հայրենի օջախները վերադառնալու։ Սակայն Լոզանում կատարվեց անխուսափելին։ 1920 թ. օգոստոսի 10-ի Սևրի պայմանագիրը գերեզմանելու հետ մեկտեղ այնտեղ «մոռացության» տրվեց նաև հայկական հարցը։ Բայց հասարակական կարծիքի առջև իրենց լիովին չմերկացնելու*

նպատակով, արևմտյան տերությունները այն ձեռկանորեն փոխանցեցին Ազգերի լիգայի տնօրինությանը։ Պայմանագրերի ու համաձայնագրերի վերսալյան սիստեմի ծնունդ հանդիսացող և հիմնականում իմպերիալիստական մեքենայությունների քողարկիչ դարձած Ազգերի լիգան երկար ժամանակ ու ապարդյուն կերպով զբաղվում էր հայ, հույն և այլազգի գաղթականների թշվառ կացությունն իբր թե բարելավելու գործով։ Սակայն օտար երկրներում անտուն ու անտեր տարիներ շարունակ գեգերող հայ տարագիրների վիճակը, ինչպես, դրանից բնավ չէր թեթևանում։

Դեռ իր առաջին նստաշրջանում, 1920 թվականի գարնանը, Ազգերի լիգան անդրադարձավ հայ գաղթականության հարցին և հայտարարեց, թե անհրաժեշտ է, որ տերությունները միջոցներ ձեռնարկեն «բոլոր կարելիօրեն շուտ վերջ տալու հայկական սարսափելի ողբերգությանը» և ապահովեն այդ ժողովրդի ապագան՝ նրա համար ստեղծելով մի ազգային օջախ[1]։

Այնուհետև համանման որոշումներ կայացվեցին Ազգերի լիգայի հաջորդ մի քանի նստաշրջաններում՝ ապարդյուն կերպով շարունակելով հոլովել հայ գաղթականության հարցը։ Այդ որոշումներում մասնավորապես խոսվում էր այն մասին, որ սփյուռքահայ այն տարագիրների համար, որոնք գտնվում են առավել դժվարին ու անկայուն դրության մեջ և դուրս են մղըվում արդեն հաստատված մի շարք երկրներից (Հունաստան, Բուլղարիա, Սիրիա, ինչպես նաև Թուրքիայում մնացած հայերը), անհրաժեշտ է գտնել մի հաստատուն բնակավայր և այնտեղ հավաքել նրանց։

1923 թ. աշնանը դարձյալ անդրադառնալով այդ խնդրին, Ազգերի լիգան որոշում կայացրեց՝ ուսումնասիրել մոտ 50 հազար հայ գաղթականների Սովետական Հայաստանում տեղավորելու հնարավորությունը[2]։ Թեպետ այդ առթիվ սովետական կառավարությունը վաղուց և բազմիցս հայտնել էր իր պատրաստակամությունը, արևմտյան տերությունների և Ազգերի լիգայի մեղքով այդ որոշումը ևս երկար ժամանակ մնում էր թղթի վրա։

Չնայած գոյություն ունեցող բազում դժվարություններին, սովետական կառավարությունը պատրաստակամություն էր

[1] Տե՛ս Fridtjof Nansen, Betrogenes Volk, Leipzig, 1928, էջ 330։

[2] Տե՛ս «Վերջին լուր», Կ. Պոլիս, 1 հոկտեմբերի, 1923 թ., № 2917։



հայտնել լրացուցիչ ընդունել ևս մի քանի տասնյակ հազար սփյուռքահայ աշխատավորների, եթե նրանց տեղափոխության և հատկացվելիք հողամասերի ոռոգման համար պահանջվող գումարները հայթայթեին գաղթականության անունից հաճախ խոսող արտասահմանյան բարեգործական հաստատությունները կամ Ազգերի լիգայի անդամ պետությունների ու եվրոպական բանկերը՝ երկարաժամկետ փոխառությունների ու վարկերի ձևով։

Երկրից վտարված գաղթականությունը և արևմտյան մի շարք տերությունների ներկայացուցիչներ, որոնք հաճախ էին փորձում սովետական կառավարությանը մեղադրել գաղութահայության նկատմամբ անտարբերության ու անհոգատարության մեջ, այլևս չէին կարող ոչինչ ասել։ Սովետական կառավարության այս հստակ ու գործնական առաջարկությունը մեկընդմիշտ փակում էր բոլոր այն զրպարտիչների բերանը, ովքեր սփյուռքահայության մեջ լուրեր էին տարածում, թե իբր նա չի հոգում հայ տարագիրների մասին, դեմ է ներգաղթին, փակել է երկրի դռները և այլն։

Եվ ահա Ազգերի լիգան, որպեսզի հասարակայնության առջև լիովին չվարկաբեկեր իրեն, ստիպված էր գիծել որոշ քայլերի։ Ազգերի լիգայում եղած խոսակցություններից դատելով, կարելի էր հանգել այն մտքին, թե մոտ 50 հազար հայ գաղթականների Սովետական Հայաստան տեղափոխելու, նրանց սովետական կառավարության կողմից առաջարկված Սարդարապատի դաշտում տեղավորելու (նախօրոք այն դարձնելով ոռոգելի), բնակարաններով, գյուղատնտեսական գործիքներով, ապահովելու և այլ միջոցառումներ իրականացնելու համար անհրաժեշտ է 4,7 միլիոն դոլար կամ 1 միլիոն ֆունտ ստերլինգ։ Այդ գումարը ձեռք բերելու համար տարբեր առաջարկներ էին արվում։ Ոմանք առաջարկում էին վերահիշյալ գումարը ձեռք բերել կամ զանազան կառավարություններից խնդրելով, կամ էլ մշակվելիք հողամասերից ստացվող եկամուտներով երաշխավորված երկարաժամկետ փոխատվության միջոցով։ Փոխանակ ռեալ և կտրուկ միջոցներ մտածելու այդ խնդրի լուծման ուղղությամբ, 1923 թ. սեպտեմբերին Ազգերի լիգայի խորհուրդը որոշում է՝ սկզբունքով ընդունել հայ գաղթականներին Սովետական Հայաստան տեղափոխելու ծրագիրը և հանձնարարել լիգայի ընդհանուր քարտուղարությանը՝ այդ

մասին նախապատրաստել մանրամասն տեղեկագիր և այն ներկայացնել հաջորդ նստաշրջանի քննարկմանը[3]:

Իրականում ոչ ոքի ոչինչ չպարտավորեցնող նման բազմաթիվ որոշումներ ընդունելով, լիգան փաստորեն տարեցտարի ձգձգում էր հայ գաղթականությանը Հայաստան տեղափոխելու համար անհրաժեշտ միջոցների հայթայթման հնարավորությունը պարզելու հարցը: Վերջապես, 1924 թ. սեպտեմբերի 25-ին, Ազգերի լիգայի հինգերորդ ընդհանուր ժողովը որոշում է հանձնարարել աշխատանքի միջազգային բյուրոյին՝ Ֆրիտյոֆ Նանսենի ղեկավարությամբ Սովետական Հայաստանում ձեռնարկել մի ուսումնասիրություն, որը նպատակ պիտի ունենար քննելու մեծ թվով հայ գաղթականների այնտեղ տեղավորելու հնարավորությունը[4]: Այս որոշման համաձայն աշխատանքի միջազգային բյուրոն կազմում է էքսպերտների մի հանձնաժողով, որը պետք է մեկներ Սովետական Հայաստան և բազմակողմանի ուսումնասիրությունների հիման վրա Ազգերի լիգային ներկայացներ մեծ թվով գաղթականների Հայաստանում տեղավորելու մասին հիմնավորված առաջարկներով զեկուցագիր:

Ազգերի լիգային առընթեր աշխատանքի միջազգային բյուրոյի հատուկ հանձնարարականով հանձնաժողովի Սովետական Հայաստան գալուն, հանուն հայ գաղթականության տառապանքների շուտափույթ լիկվիդացման, դրականապես են վերաբերվում ՀամԿ(բ)Կ Կենտկոմը և ԽՍՀՄ կառավարությունը, թեև մեծ հույսեր ու սպասելիքներ չունեին իմպերիալիստական դիվանագիտության կամակատար Ազգերի լիգայից[5]:

Եվ ահա 1925 թ. հունիսի 14-ին Բաթում ժամանեց հայ գաղթականներին Սովետական Հայաստանում տեղավորելու հետ կապված հարցերի ուսումնասիրման համար Ազգերի լիգայի հանձնաժողովը՝ Ֆրիտյոֆ Նանսենի գլխավորությամբ: Մի երկու օր Վրաստանում անցկացնելուց հետո, հունիսի 17-ին հանձնաժողովը ժամանեց Հայաստան: Հանձնաժողովի անդամներին Լենինականում դիմավորեցին ՀՍԽՀ հողագործության ժողովրդական կոմիսար Ար. Երզնկյանը, ներքգործժողկոմ Հովհ.

[3] Տե՛ս «Վերջին լուր», 8 հոկտեմբերի, 1923 թ., № 2923:
[4] Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 40/113, ց. 3, գ. 372, թ. 7:
[5] Տե՛ս նույն տեղում, գ. 454, թ. 200:



Դուրգերյանը և պաշտոնական այլ անձինք[6]: ՀՍԽՀ կառավարության անունից ողջունելով հանձնաժողովին, Ար. Երզնկյանն ասաց, որ Նանսենն արդեն վաղուց հայտնի է սովետական ժողովուրդներին որպես հին բարեկամի և մեծապես գնահատվում է սովի դեմ ռուս ժողովրդի մաքառման ծանր տարիներին նրա ցույց տված օգնությունը:

Իր պատասխան խոսքում Ֆր. Նանսենն ուրախություն հայտնեց այն բանի համար, որ հայ ժողովրդին, որի անցյալի տառապանքներին ինքը լիովին ծանոթ է, հանդիպում է Արարատի ստորոտում, նրա հայրենիքում, որտեղ արագորեն վերականգնվում է երկրի ավերված տնտեսությունը և վերածնվում կուլտուրան: Այնուհետև նա նշեց իր գլխավորած հանձնաժողովի նպատակը[7]: Նույն օրը Նանսենի հանձնաժողովը ժամանեց Երևան, ուր նրան դիմավորեցին Ժողկոմխորհի նախագահի տեղակալ Ասք. Մռավյանը և մայրաքաղաքի հասարակայնության բազմաթիվ ներկայացուցիչներ:

Այնուհետև Նանսենը և հանձնաժողովի մյուս անդամները այցելեցին ՀՍԽՀ Ժողկոմխորհի նախագահ Ս. Լուկաշինին և Կենտգործկոմի նախագահ Ս. Համբարձումյանին: Վերջիններս Նանսենի հանձնաժողովին հավաստիացրին, որ սովետական կառավարության կողմից լայն հնարավորություններ կտրվեն նրան հետաքրքրող բոլոր հարցերը մանրամասնորեն ուսումնասիրելու համար, ինչպես նաև տեղում ծանոթանալու այն բոլոր հողամասերին, որոնց վրա նախատեսվում է բնակեցնել երկիր ներգաղթող սփյուռքահայերին: Միաժամանակ հայտնվեց, որ այդ հողամասերի ոռոգման վերաբերյալ կան պատրաստ նախագծեր, որոնք նույնպես կտրամադրվեն հանձնաժողովին: Ապա Ասք. Մռավյանի նախագահությամբ տեղի է ունենում ՀՍԽՀ կառավարական հատուկ հանձնաժողովի (Ժողկոմխորհին առընթեր աշխատավորական ներգաղթի հանձնաժողով) և Նանսենի հանձնաժողովի համատեղ նիստը՝ մի խումբ հայ մասնագետների մասնակցությամբ:

Ֆր. Նանսենը հաղորդում է, որ հատկապես վերջին շրջանում Հունաստանում, Սիրիայում, Թուրքիայում (Կ. Պոլիս) և այլ երկրներում հայ գաղթականության վիճակը խիստ վատ-

[6] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 16 հունիսի, 1925 թ., № 135:
[7] Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 40/113, ց. 3, գ. 518, թ. 7:

թարգացել է և այդ կապակցությամբ իրենց նպատակն է ուսումնասիրել մոտավորապես 50 հազար տարագիրների Հայաստան տեղափոխելու հնարավորությունը։ Օրինակ, Հունաստանում, ուր հունական կառավարությունը սկզբում բարյացակամորեն էր ընդունում հայերին, այժմ 1,5 միլիոն հույն գաղթականներին տեղավորելու համար հայերին հանում է նրանց հաստատված վայրերից և նույնիսկ արտաքսում երկրից։ Նանսենը նշում է, որ սփյուռքահայ աշխատավորները ձգտում են տեղափոխվել Սովետական Հայաստան և ոչ ուրիշ տեղեր։ Հետևապես, պետք է լրջորեն հաշվի առնել նրանց այդ օրինական ցանկությունը ևս։ Ելնելով դրանից, նիստում նախնական քննարկման են ենթարկվում սփյուռքահայ տարագիրներին Հայաստանում տեղավորելու հետ կապված ծրագրերը, մասնավորապես մանրամասն ուսումնասիրության առարկա է դառնում Սարդարապատի դաշտի ոռոգման նախագիծը[8]։ Այնուհետև Նանսենի հանձնաժողովի անդամները ՀՍԽՀ ժողկոմխորհի աշխատավորական ներգաղթի հանձնաժողովի ներկայացուցիչների և մի խումբ հայ մասնագետների ուղեկցությամբ տեղում ուսումնասիրում են ոռոգման ենթակա հողամասերն ու նախագծերը, շրջագայում հանրապետությունում, դարձյալ նիստեր ունենում ՀՍԽՀ կառավարական հանձնաժողովի հետ և, ընդհանուր համաձայնության գալով, հուլիսի 2-ին մեկնում Երևանից։ Եվրոպա ուղևորվելու ճանապարհին Մոսկվայում Ֆր. Նանսենը հանդիպումներ ունեցավ ՍՍՀՄ արտգործժողկոմ Չիչերինի և հողագործության ժողկոմի տեղակալ Սվիրդերսկու հետ, նրանց հաղորդեց Հայաստանից ստացած իր տպավորություններն ու հետագա ծրագրերը։

Երևանից մեկնելուց առաջ, բանակցությունների ընթացքում ձեռք բերված համաձայնության հիման վրա, Նանսենը ՀՍԽՀ կառավարությանը ներկայացրեց մոտ 50 հազար տարագիրների Հայաստանում տեղավորելու վերաբերյալ իր հուշագիրը, որը հայտնի է «Նանսենյան ծրագիր» անունով[9]։ Այդ հուշագրում Նանսենը հայտնում էր, որ Արարատյան դաշտում ոռոգման ու ճահիճների չորացման միջոցով նոր հողերի յուրացման և դրանց վրա մեծ թվով ներգաղթողների տեղավորման վերաբերյալ Հա-

[8] Տե՛ս նույն տեղում, գ. 373, թ. 1—5։

[9] Տե՛ս նույն տեղում, գ. 820, թ. 3—5։



յաստանի կառավարության առաջադրած բոլոր նախագծերն էլ իր գլխավորած հանձնաժողովը գտնում է իրագործելի և ընդհանուր առմամբ միանգամայն նպատակահարմար։ Նա միաժամանակ ընդգծում է, որ հայ գաղթականության խնդրի արմատական լուծման լավագույն միջոցը կլիներ սովետական կառավարության առաջադրած բոլոր նախագծերի իրագործումն ու Հայաստանի արդյունաբերական հնարավորությունների հետագա զարգացումը։ Սակայն, քանի որ իրենք դժվարանում են բոլոր նախագծերի միաժամանակյա ֆինանսավորման համար բավարար միջոցներ գտնել, ուստի նպատակահարմար են համարում առայժմ մի կողմ թողնել Սարդարապատի դաշտի ոռոգման ընդարձակ պլանը և սկզբում սահմանափակվել ավելի քիչ ծախս պահանջող մյուս ծրագրերի իրագործման համար դրամի ձեռք բերումով։ Նանսենի կարծիքով դրանք էին՝ Երևանի արևելյան և արևմտյան մասերում եղած 19 հազար դեսյատին տարածությամբ ղեբրի ոռոգման համար ջրանցքի կառուցումը, որը պահանջում էր 2 միլիոն ռուբլի և Սև ջրի հովտի ու Զանգիբասարի շրջանի 14 հազար դեսյատին ընդհանուր տարածությամբ ճահիճների չորացումն ու այդ հողերի ոռոգելի դարձնելը, որի համար անհրաժեշտ էր ներդնել 2,1 միլիոն ռուբլի[10]։

Այսպիսով, Նանսենի հանձնաժողովի կարծիքով 33 հազար դեսյատին տարածությամբ նոր հողերի յուրացման համար, նախնական հաշվումներով, պահանջվում էր 4,1 միլիոն ռուբլի։ Նանսենը դրան ավելացնում էր ևս 900 հազար ռուբլի՝ որպես չնախատեսված ծախսերի գումար։ Բացի այդ, ներգաղթող տնտեսություններին այդ հողերի վրա տեղավորելու, բնակարաններ, գյուղատնտեսական գործիքներ, սերմացու, անասուններ և այլ միջոցներ տրամադրելու համար անհրաժեշտ կլիներ ունենալ ևս 3 միլիոն ռուբլի։ Հետևաբար, ընդհանուր գումարը կկազմեր 8 միլիոն ռուբլի՝ առանց ներգաղթողներին մինչև սովետական երկիր տեղափոխելու ծախսերի, որոնք, ըստ Նանսենի, կարելի կլիներ ստանալ այլ աղբյուրներից, ասենք՝ շահագրգռված կառավարություններից։

Հիմնական ծախսերի 8 միլիոն ռուբլին ձեռք բերելու և նախատեսված ծրագիրն իրականացնելու համար Նանսենի կարծիքով գոյություն ուներ երեք ուղի։ Առաջինը բարեգործական

[10] Տե՛ս նույն տեղում, գ. 373, թ. 6—7։

հաստատությունների միջոցով հանգանակություններ անցկացնելու ուղին էր, երկրորդը՝ եվրոպական կառավարություններից վարկի կամ նպաստի ձևով ստանալու և երրորդը՝ եվրոպական բանկերից փոխառություն վերցնելու միջոցով։ Սակայն հենց ինքը Նանսենը իրավացիորեն նշում է, որ առաջին երկու ուղիները դժվար իրագործելի են, որովհետև այդքան մեծ գումարն անհնարին է բարեգործական հաստատությունների կազմակերպած հանգանակության միջոցով կամ եվրոպական կառավարություններից վարկերի ու նպաստի ձևով ստանալը։ Հունաստանում գաղթականությանը տեղավորելու իր փորձից ելնելով, Նանսենը գտնում էր, որ միակ նպատակահարմար ելքը անհրաժեշտ գումարը փոխառությունների միջոցով ձեռք բերելու ուղին է։ Հայտնելով իր մասնավոր կարծիքը, նա խորհուրդ էր տալիս օգտվել նաև կոնցեսիոն ձեռնարկների կազմակերպման հնարավորությունից։ Ենթադրվում էր, որ փոխառությունը կլինի երկարատև՝ 15—20 տարի ժամանակով, 10 տոկոսից ոչ ավելի շահով և երաշխավորված ԽՍՀՄ և ՀՍԽՀ կառավարությունների կողմից։ Փոխառության գումարների նպատակային ծախսմանը հսկելու համար Նանսենն առաջարկում էր թույլատրել Հայաստանում ունենալու փոխատուների ներկայացուցիչների հատուկ կոմիտե[11]։

Չհամաձայնվելով նման կոմիտեի ստեղծման Նանսենի առաջադրած գաղափարին, ՀՍԽՀ ժողկոմխորհի նորընտիր նախագահ Ս. Համբարձումյանը հավանություն է տալիս մյուս բոլոր առաջարկություններին և հայտնում, որ ինչպես բոլոր ներգաղթողները, այնպես էլ այդ 50 հազար հայ տարագիրները Հայաստան տեղափոխվելիս կօգտվեն մի շարք դյուրություններից ու արտոնություններից։ Նրանց բեռները ազատ կլինեն մաքսից և այլ տուրքերից[12]։ Ներգաղթողները Բաթումից մինչև Հայաստանում իրենց հատկացվելիք բնակավայրերը կփոխադրվեն առանց ճանապարհավարձի, հողը կստանան ձրի, առաջին երեք տարիների ընթացքում ազատ կլինեն հարկերից, մեկ-երկու տարի՝ նաև զինվորական ծառայությունից և այլն[13]։ Ստանալով այդ հավաստիացումները, Նանսենը հույս է հայտ-

[11] Տե՛ս նույն տեղում։

[12] Տե՛ս նույն տեղում, գ. 494, թ. 12, և ֆ. 113, ց. 13, գ. 4, թ. 1—2։

[13] Տե՛ս նույն տեղում, ֆ. 40/113, ց. 3, գ. 820, թ. 3—5։



նում, որ նշված բոլոր միջոցառումների իրականացման շնորհիվ կարելի է վերը նշված վայրերում առայժմ բնակեցնել շուրջ 25—30 հազար մարդ, որով կլուծվի արտասահմանում տվյալ պահին ամենադժվարին կացության մեջ գտնվող հայ գաղթականների հարցը։ Այդ ծրագրի կենսագործումից հետո, Նանսենի կարծիքով, հնարավոր կլիներ ձեռնամուխ լինել ավելի մեծ միջոցներ պահանջող մյուս նախագծերի՝ այդ թվում նաև Սարդարապատի դաշտի ոռոգման իրականացմանը[14]։

Եվրոպա վերադառնալուց հետո, Նանսենը և նրան ուղեկցող մասնագետները Հայաստանում կատարած իրենց ուսումնասիրությունների հիման վրա կազմեցին մի ծավալուն զեկուցագիր և այն ներկայացրին Ազգերի լիգայի ընդհանուր ժողովի քննարկմանը։ Այդ զեկուցագրի հիմնական եզրակացությունը հանգում էր այն մտքին, որ միանգամայն ռեալ ու նպատակահարմար է Սովետական Հայաստանում ընդարձակ հողամասերի ոռոգման ու ճահիճների չորացման միջոցով ստեղծել հարմար բնակավայրեր տասնյակ հազարավոր սփյուռքահայ տարագիրների համար։ Դրա համար անհրաժեշտ է Սովետական Հայաստանին տրամադրել մոտ մեկ միլիոն ֆունտ ստերլինգի փոխառություն։

Ֆր. Նանսենի գլխավորած հանձնաժողովի զեկուցումը Ազգերի լիգայի գլխավոր խորհրդում և նրա մի քանի հանձնաժողովներում ենթարկվեց մանրակրկիտ քննարկման։ 1925 թ. սեպտեմբերի 10-ին այդ զեկուցումը լսվեց Ալ. Թոմայի նախագահությամբ գործող աշխատանքի միջազգային բյուրոյի գաղթականների բաժնին առընթեր խորհրդակցական կոմիտեում, ուր ներկա էին նաև սփյուռքահայ մի շարք կազմակերպությունների և հայ տարագիրներին օգնող օտարերկրյա ընկերությունների ներկայացուցիչներ։ Նանսենի զեկուցումն ու ներկայացրած նախագծերը արժանացան սփյուռքահայ աշխատավորների ջերմ համակրանքին ու միահամուռ հավանությանը։ Սփյուռքահայ հասարակայնության ներկայացուցիչներն իրենց ելույթներում հայտարարեցին, որ լիովին պաշտպանում են Նանսենի նախագծերը և խոստացան ցույց տալ ամեն տեսակ նյութական ու բարոյական աջակցություն։ Նույն ոգով են արտահայտվում նաև հայասերների լիգայի և օտարերկրյա բարեգործական ընկե-

[14] Տե՛ս նույն տեղում, գ. 373, թ. 10—17։

րությունների ներկայացուցիչները՝ գտնելով, որ այդ նախագծերի իրականացումը պետք է կատարվի հանուն «հայերի հանդեպ տարրական արդարության» վերականգնման, հայերի, որոնց «շատ բան է խոստացվել և ոչինչ չի տրվել»[15]։

1925 թ. սեպտեմբերի 12-ին, հանդես գալով Ազգերի լիգայի պլենար նիստում, Նանսենը զեկուցեց հայ գաղթականների վիճակի մասին և ներկայացրեց Սովետական Հայաստանում գաղթականության նկատմամբ ցուցաբերվող հոգատարությունը։ Իր բոլոր ելույթներում Նանսենը մեծագույն գովասանքով է արտահայտվում Սովետական Հայաստանի կառավարության մասին, որպես լիակատար վստահության արժանի մի իշխանության, որի ընդունակությունները, եռանդն ու գործունեությունը, մասնավորապես գաղթականության նկատմամբ ցուցաբերված հոգատարությունը, առաջ են բերել իր անկեղծ հիացմունքը։

Անդրադառնալով իր գլխավորած հանձնաժողովի հիմնական եզրակացություններին և Հայաստանից ստացած տպավորություններին, Նանսենը հայտարարում է. «Մենք քննեցինք բոլոր հնարավորությունները (հայ գաղթականների տեղավորման.— Հ. Մ.) և եկանք այն եզրակացության, միաձայն և մեր ճշտության մասին առանց որևէ կասկածի, որ միակ վայրը, ուր այժմ Եվրոպայում թափառող մի մեծ մաս—շեշտում եմ, մի մեծ մաս— կարող է տեղավորվել՝ դա Երևանի Հայ Հանրապետությունն է։ Եթե ժողովը, մի րոպե անդրադառնա խնդրին՝ ես կարծում եմ, որ պետք է համաձայնի, որ մենք ճիշտ ենք»[16]։ Ապա Նանսենը նշում է, որ պետք է անպայման նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ գաղթականներն իրենք ցանկանում են գնալ Հայաստան, այնտեղ կառուցել իրենց ազգային հայրենիքը և ո՛չ ուրիշ տեղ։

Այնուհետև Նանսենը պատմում է Հայաստանում իրենց կատարած ուսումնասիրությունների մասին, նշելով, որ իրենք այնտեղ են գնացել խիստ երկյուղով, կասկածելով. թե հազիվ մի բան ստացվի իրենց ուղևորությունից։ Սակայն Սովետական Հայաստանից վերադարձել են այն խոր համոզմունքով, որ այնտեղ ծավալված է հույժ կարևոր տնտեսական մի ծրագիր, որը խաղաղ աշխատանքի հոյակապ հնարավորություններ կըն-

[15] Տե՛ս նույն տեղում, գ. 453, թ. 10—12։

[16] Տե՛ս նույն տեղում։



ձեռի ոչ միայն արդեն հայոց հողի վրա գտնվող հազարավոր գաղթականների, այլև դեռևս աշխարհում թափառող մեծ թվով սփյուռքահայ տարագիրների։

Շարունակելով իր ճառը, Նանսենն ասում է, որ իր նպատակն է «համոզել հանձնաժողովին, որ հայ ժողովուրդը, որի հետ այնքան վատորեն են վարվել և որը շատ է տանջվել, որ հատկապես ոչ մի ժողովուրդ արդի պատմության մեջ չի տեսել որևէ բան, որը կարելի լինի բաղդատել նրա քաշածների հետ», որ այս ժողովուրդը բարձր զարգացմամբ և օժտված ու աշխատասեր ժողովուրդ է, «որը իսկապես վերջին երեք տարիների ընթացքում հրաշքներ է գործել՝ զարգացնելով դեռևս մի քանի տարի առաջ թշվառության մեջ գտնվող երկիրն այն ժամանակ, երբ ամեն օր սայլերը մեռած երեխաներ և չափահասներ էին հավաքում քաղաքների փողոցներից»[17]։

Խոսելով Սովետական Հայաստանի տնտեսական կյանքի օրավուր աճող բարելավման մասին, Ֆր. Նանսենը հայտարարում է. «Եվ վերջապես՝ ես պետք է ջանամ համոզել հանձնաժողովին, որ Երևանի հանրապետությունը իրական Հայաստան է... Իսկապես այս փոքրիկ հանրապետության մեջ գոյություն ունի վերջապես հայկական օջախը, և ես խնդրում եմ նստաշրջանի անդամներին իրենց խղճի առաջ դնել այն հարցը, թե արդյո՞ք նրանք անկեղծորեն և լրջորեն չեն հավատում, որ որևէ ուրիշ ազգային օջախ կարելի չէ հուսալ։ Ես հավատում եմ, ես գիտեմ, թե ինչ պետք է պատասխանեն նրանց խղճերը, և ես դիմում եմ նստաշրջանին՝ վավերացնել այս ջանքը՝ գլուխ բերելու (համար) հայ ազգին ազգային օջախի վերաբերմամբ անցյալում տրված խոստումները»[18]։

Ապա Նանսենը շատ դիպուկ զուգահեռ է անցկացնում, նշելով, որ վերջերս եվրոպական երկրներից մեկում ջուրն է իջեցված մի մեծ մարտանավ, որի վրա ծախսվել է 7 միլիոն ֆունտ ստեռլինգ, իսկ նրա պահպանման ծախսը տարեկան կազմում է կես միլիոն ֆունտ ստեռլինգ, մինչդեռ հայ գաղթականության համար պահանջվող փոխառությունը հավասար է այդ նավի պահպանման համար պահանջվող երկու տարվա գումարին։ Առաջինը պատերազմի համար է, երկրորդը՝ մի դժբախտ ժողո-

[17] Տե՛ս նույն տեղում։

[18] Նույն տեղում, թ. 17—18։

վրդի։ Ուստի Նանսենը հայտարարում է. «Ես կոչ եմ անում նստաշրջանին՝ չկորցնել այս պատեհությունը (Հայաստանի փոխառությունն իրացնելու մասին է խոսքը.—Հ. Մ.)։ Մեր օրերում շատ հաճախ մոռացվում է հայկական ողբերգությունը, կամ վրայից անցնում են ինչ-որ անտարբեր ոճրական ժեստով», սակայն եվրոպական տերությունները պատասխանատվություն են կրում հայ ժողովրդի ապրած ողբերգության մեջ և այժմ անհրաժեշտ է, որ նրանք ձեռք առնեն ռեալ միջոցներ՝ անցյալի ձախողանքի փոխարեն ստեղծելու ավելի պայծառ մի ապագա՝ ոտնահարված իրավունքներով այդ ազգի համար[19]։

Իր ընդարձակ ճառի վերջում Նանսենն առաջարկում է զեկուցման մեջ առաջ քաշված հարցերը հանձնել լիգայի հինգերորդ՝ հումանիտար հանձնաժողովին, դրանց հետագա ընթացք տալու համար[20]։ Սեպտեմբերի 18-ին Նանսենի ծրագիրը քննարկվում է հինգերորդ հանձնաժողովում, ուր հայ գաղթականության Սովետական Հայաստան տեղափոխելու միջոցառումների հիմնավորմամբ ու պաշտպանությամբ հանդես են գալիս Ֆր. Նանսենը, Ալ. Թոման, Ջորջ Դյուպյուին ու ուրիշներ։

Նանսենյան ծրագիրն իբր ավելի մանրամասնորեն ուսումնասիրելու նպատակով այնուհետև այն հանձնվեց 9 հոգուց կազմված մի ենթակոմիտեի, ուր և ծավալվեցին գլխավոր ելույթները և բացահայտվեց նախագծի նկատմամբ մեծ տերությունների իսկական, անսքող վերաբերմունքը։ Այնտեղ Մեծ Բրիտանիայի պատվիրակ լեդի Աստորն իր կառավարության անունից հայտարարեց, որ նա չի կարող ոչ իրացնել և ոչ էլ երաշխավորել որևէ սովետական հանրապետության բաց թողած փոխառությունը[21]։ Արտահայտելով ֆրանսիական կառավարության տեսակետը, նրա պատվիրակ Պաման ասաց, թե իր երկիրը պատրաստ է երաշխավորել փոխառությունը, բայց այն անառարկելի պայմանով, որ Անգլիան ևս համաձայնի համատեղ երաշխիքներ տալուն։ Իտալական պատվիրակը հայկական ներկայացուցիչներին և Ֆր. Նանսենին մասնավոր կերպով հայտնեց, որ նա այդ հարցում բաժանում է ֆրանսիական տե-

[19] Նույն տեղում, թ. 19—20։

[20] Տե՛ս նույն տեղում, թ. 20։

[21] Տե՛ս նույն տեղում, գ. 454, թ. 206—207, և «Խորհրդային Հայաստան», 27 սեպտեմբերի, 1925 թ., № 219։



սակետը։ Ենթակոմիտեի մնացած անդամները Նանսենի նախագծին և փոխառության հարցին վերաբերվում են կարեկցաբար ու համակրանքով, սակայն գործնական ոչ մի քայլ չեն անում։ Անգլիական կառավարության այդպիսի անբարյացակամ դիրքը՝ հայ գաղթականության համար անհրաժեշտ փոխառության նկատմամբ, ինչպես արտահայտվում է Նանսենը, իր համար անսպասելի էր։ Փոխառության կողմնակիցները ստիպված հետաձգում են ենթակոմիտեի աշխատանքները՝ մինչև որ գտնվեր փոխառության իրացման մի այնպիսի հարմար եղանակ, որը ընդունելի լիներ անգլիական պատվիրակության համար։

Հայ գաղթականներին Սովետական Հայաստան տեղափոխելու հետ կապված միջոցառումների իրականացման համար պահանջվող փոխառության գործը գլուխ բերելու նպատակով Ֆր. Նանսենը, Ալ. Թոման, բելգիական ներկայացուցիչ Դեբրուկերը և Ազգերի լիգայի ֆրանսիական քարտուղարության շեֆ Արթուր Սոլտերնը մասնավոր տեսակցություն են ունենում Փարիզում ԽՍՀՄ լիազոր-ներկայացուցչության քարտուղար Ս. Փիրումյանի հետ։ Զրույցի ընթացքում նրանք փորձում են պարզել, թե Հայաստանի կառավարությունը փոխառության ապահովման ի՞նչ նոր առաջարկներ կարող է ներկայացնել, որոնք բավարար լինեին առանց անգլիական երաշխիքների այն իրացնելու համար։ Նրանց խոսակցություններից հասկանալի է դառնում, որ դա է հիմնական դժվարության պատճառը, քանի որ նախկին երաշխիքները մերժվել են անգլիական պատվիրակության կողմից։ Ինչպես հաղորդում է 1925 թ. սեպտեմբերի 22-ին ՀՍԽՀ ժողկոմխորհին գրած իր զեկուցագրում Ս. Փիրումյանը, իրեն հետ բանակցողները, բացահայտ առաջարկ չանելով, փորձել են պարզել, թե արդյո՞ք Հայաստանի կառավարությունը չէր համաձայնի նախատեսվող փոխառությունը երաշխավորել գրեթե մշտական բնույթ կրող նյութական պարտավորություններով։ Ի պատասխան դրա, Ս. Փիրումյանը վճռական կերպով հայտարարել է, որ սովետական կառավարությունը երբեք չի կարող գնալ այդպիսի քայլի։ ԽՍՀՄ կառավարությունը համաձայնություն էր հայտնել ՀՍԽՀ անունից բաց թողնել փոխառություն Մոսկվայի կենտրոնական բանկի երաշխավորությամբ, իսկ այլ կարգի պարտավորություններ, որոնք կարող էին խախտել Սովետական Հայաստանի սուվերենիտետը, սո-

վետական կառավարության համար միանգամայն անընդունելի են։

Այնուհետև Ալ. Թոման և Ֆր. Նանսենը առաջարկում են գտնել փոխառության իրացման մի ուրիշ եղանակ, որը դույն ընդունելի լիներ Անգլիայի համար։ Նրանք առաջարկում են ստեղծել մի ինքնավար կազմակերպություն, որը մի կողմից որոշակի պայմանագրային հիմունքներով Հայաստանի կառավարությունից կստանար Նանսենի ծրագրով նախատեսված հողամասերի ոռոգման, ճահիճների չորացման ու այդ վայրերում ներգաղթողների տեղավորման գործը, իսկ մյուս կողմից՝ փոխառությունն իրացնելու համար հարաբերությունների մեջ կմտներ եվրոպական ֆինանսական շրջանների հետ[22]։

Այդ առաջարկի հեղինակները ըստ երևույթին կարծում էին, թե այդ ինքնավար կազմակերպությունը կկարողանա Անգլիայից ստանալ այն երաշխիքը, որը նա չհամաձայնեց տալ անմիջականորեն Սովետական Հայաստանի կառավարության բաց թողնելիք փոխառությանը։ Նանսենի կարծիքով դա կլիներ մարդասիրական բնույթի յուրահատուկ մի կոնցեսիա, որը կբողարկեր Հայաստանի կառավարության փոխառությունը[23]։ Նանսենը և Թոման հայտարարում են, որ եթե այդ կապակցությամբ շուտափույթ կերպով մի կոմպրոմիսային որոշում չկայացվի, ապա անգլիական դիմադրությունը կարող է գործը ամբողջովին ու վերջնականապես ձախողել։

1925 թ. սեպտեմբերի 23-ին տեղի է ունենում ենթակոմիտեի վերջին նիստը, ուր ընդունված որոշման համաձայն ստեղծվում է հինգ հոգուց բաղկացած մի նոր օրգան։ Նրա խնդիրն էր վերջնականապես պարզել Նանսենի առաջարկած ծրագրի տեխնիկական իրագործելիությունը, բանակցություններ վարել Հայաստանի և մյուս շահագրգռված կառավարությունների, կազմակերպությունների ու մասնավոր անձանց հետ և լիգայի խորհրդին ներկայացնել մանրամասն առաջարկներ՝ ինքնավար կազմակերպության ֆունկցիաների մասին։ Ազգերի լիգայի խորհրդի կողմից հաստատված ստատուտով այդ ինքնավար կազմակերպությունը իրավունք կունենար հարկ եղած դեպքում Հայաստանի կառավարության հետ կնքել պայմանագրեր, ստորագրել հողամասերի վերաբերյալ կոնցեսիոն համաձայնագրեր և ընդհանրապես զբաղվել փոխառության իրացման հարցերով[24]։

Սեպտեմբերի 25-ին հայկական փոխառության հարցը ենթակոմիտեից նորից փոխադրվում է Ազգերի լիգայի հինգերորդ համաժողով, ուր զեկուցումով հանդես է գալիս Բելգիայի ներկայացուցիչ Դեբրուկերը։ Ենթակոմիտեի ընդունած որոշման պաշտպանությամբ տոգորված իր ճառում, որը մեծ տպավորություն է թողնում ներկաների վրա, նա նշում է, որ պետք է մի կողմ դնել քաղաքական մոտիվները և օգնել տարագիր հայության մի ստվար զանգվածի, որը դեռևս օթևան չի գտել օտարության մեջ, վերադառնալու իր հայրենիքը, հայրենիք, որն արդեն շատ բան է արել գաղթականության մի զգալի մասին իր միջոցներով երկիր տեղափոխելու, իսկ այնտեղ գտնվող տասնյակ հազարավորներին հողով, բնակարաններով և այլ միջոցներով ապահովելու ուղղությամբ։

Արտասահմանի էմիգրանտական, հակասովետական շրջաններում Դեբրուկերի ճառը խիստ դժկամությամբ ընդունվեց։ Ռուս վտարանդի կադետ Աստրովը, այդ առթիվ խորին վրդովմունք և ցավակցություն հայտնելով իր հայ բախտակիցներին, ասում է, թե ենթակոմիտեում ընդունված բանաձևը ըստ էության ներկայացնում է «սովետների փոխառության միջազգային հանձնարարական»[25]։

ՀՍԽՀ ժողկոմխորհին ուղարկած իր զեկուցագրում Ս. Փիրումյանը նշում է, որ Ազգերի լիգայի շրջանակներում փոխառության հարցի շուրջը տեղի ունեցած այդ բոլոր խորհրդակցությունները, զեկուցումներն ու ելույթները, ինչպես և պետք էր սպասել, գործնական ոչինչ չավեցին հայ գաղթականության ներգաղթի կազմակերպման օգտին։ Սակայն դրանք օբյեկտիվորեն մեծ դեր խաղացին սովետական հանրապետությունների հեղինակության, նրանց կայունության, կազմակերպվածության, կյանքի բոլոր բնագավառներում ձեռք բերված հսկայական նվաճումների, ինչպես նաև ազգային հարցի լուծման դրական փորձի պրոպագանդման տեսակետից։ «Սովետական իշխանության այնպիսի հակառակորդների հայտարարությունները,— գրում է Ս. Փիրումյանը,— ինչպիսիք են Ալ. Թոման ու Դեբրուկերը, որ

[22] Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՃ ՊԿԱ, ֆ. 40/113, ց. 3, գ. 454, թ. 206—207։
[23] Տե՛ս նույն տեղում։
[24] Նույն տեղում, գ. 820, թ. 3—5։
[25] Տե՛ս նույն տեղում, գ. 454, թ. 206—207։

Հայաստանի սովետական կառավարությունը հիրավի ժողովրդական է, որ նա իրագործել է կազմակերպական հսկայական խնդիրներ և արժանի է վստահության, Ազգերի լիգայի կուլուարներում ունեցել են հսկայական ազդեցություն։ Լիգայում երևացած ռուսական և վրացական էմիգրանտական հակահեղափոխական գործիչները շշմել էին Սովետական Հայաստանի ու նրա կառավարության օգտին ծավալված պրոպագանդայից, դեպի սովետական իշխանությունը բոլոր հայկական ընկերությունների դրական վերաբերմունքից և նույնիսկ փորձեր էին անում նվազեցնել մեր այդ բարոյական հաղթանակի էֆեկտը՝ դ-ր Նանսենի ու սովետական հանրապետությունների դեմ հարձակումներով»[26]։

Վերջապես, 1925 թ. սեպտեմբերի 26-ին, Ազգերի լիգայի խորհրդի 35-րդ նստաշրջանի 16-րդ նիստում, հայ գաղթականների տեղավորման հանձնախմբի զեկուցման հիման վրա, որոշվում է՝ նկատի առնելով հայ տարագիրներին Կովկասում կամ այլուր տեղավորելու վերաբերյալ ընդհանուր ժողովի 1924 թ. սեպտեմբերի 25-ի հանձնարարականը, հաստատել հայ գաղթականների տեղավորման հինգ հանձնակատարներ, որոնք պետք է վերջնականորեն պարզեն ու ճշտեն Նանսենի ծրագրի իրագործելիության տեխնիկական կարելիությունը, կարծիքների փոխանակություն կատարեն Հայաստանի և ուրիշ կառավարությունների ու կազմակերպությունների հետ՝ փոխառության իրացման և վերահսկիչ օրգանի ստեղծման հարցի շուրջը։ Հայ գաղթականների տեղավորման հանձնախմբի մեջ մտնում են Ֆրիտյոֆ Նանսենը, Կ. Բերգմանը, Մարգուս Մակդոնալդը, Ժյուլ Պամսը և իտալացի Պոման, որին սկզբում փոխարինում է Պեարելլին, ապա Կոնտաի Ռոսսինին[27]։

Հանձնախումբն իր առաջին նստաշրջանում, որ տեղի ունեցավ 1925 թ. հոկտեմբերի 30-ից մինչև նոյեմբերի 1-ը, լսում է Հայաստանի կառավարության ներկայացուցիչ Ս. Փիրումյանի և Հայկական բարեգործական ընդհանուր միության կենտրոնական վարչության պատվիրակության (Լ. Բաշալյան, Գր. Մինասյան, Մ. Պապաջանյան) հաղորդումները՝ հայ գաղթականությունը Սովետական Հայաստանում տեղավորելու առթիվ նրանց տեսակետները պարզելու նպատակով։

[26] Նույն տեղում։

[27] Տե՛ս նույն տեղում, թ. 161։



Նստաշրջանի վերջում հանձնախումբը որոշում է «առաջարկել պր.-ն Ուիլյամ Մակինտոշին՝ ինչքան կարելի է շուտ մեկնել Երևան՝ վերահսկելու համար ոռոգման պլանի վերջնական նախապատրաստության վրա՝ Ղռերի արևելյան և արևմտյան կողմում, Կարասուի և Զանգիբասարի շրջանում, որ նկարագրված է դոկտ. Նանսենի զեկուցման մեջ, ինչպես և հանձնախմբին տեղեկացնելու պլանի տեխնիկական կողմի մասին»[28]։ Այդ որոշման համաձայն 1925 թ. դեկտեմբերի 15-ին Երևան է ժամանում ինժեներ Ու. Մակինտոշը, որը մինչև 1926 թ. փետրվարի 1-ը պետք է լիգայի գաղթականական հանձնաժողովին ներկայացներ իր զեկուցումը[29]։

Սովետական կառավարությունն ընդառաջում ու նպաստում է նաև այս որոշման կատարմանը, ամեն կերպ օգնելով, որպեսզի Ազգերի լիգայի հայ գաղթականների տեղավորման հանձնաժողովի առաջիկա նիստին հասցվի Մակինտոշի զեկուցագիրը։ Ու. Մակինտոշը, հայ մասնագետների համագործակցությամբ, Երևանում աշխատում է մի քանի ամիս և 1926 թ. գարնանը հանձնաժողովին ներկայացնում իր զեկուցագիրը՝ Նանսենի նախագծերի տեխնիկական հիմնավորմամբ։ Մակինտոշի զեկուցագրի գլխավոր եզրակացությունն այն էր, որ Նանսենի ծրագիրը տեխնիկապես միանգամայն իրագործելի է, տնտեսական տեսակետից՝ շահավետ ու ընդունելի, եթե կարելի լինի բավականաչափ երաշխիքներ տրամադրել այդ նպատակով անհրաժեշտ փոխառությունը բաց թողնելու համար։ Միաժամանակ Մակինտոշը հայտնում է, որ նախագծերի իրագործման դրամական միջոցների վերաբերյալ ինքն ի վիճակի չէ դրական առաջարկ անելու, որովհետև սոսկ սովետական պետական կենտրոնական բանկի երաշխավորությունը իրեն բավարար չի թվում փոխառության իրացման համար։ Նրա կարծիքով նպատակահարմար կլիներ, եթե այն երաշխավորված լիներ ոռոգվելիք հողամասերից ստացվող բերքով, որը բավարար կլիներ նաև պարտքի հատուցման համար։ Մակինտոշի հետ վարած բանակցությունների ժամանակ սովետական կառավարությունը

[28] Նույն տեղում։

[29] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 17 դեկտեմբերի, 1925 թ., №287։

հայտնել էր, որ Մոսկվայի պետական բանկը պատրաստ է երաշխավորել հայ գաղթականության համար նախատեսվող փոխառությունը: Բայց սովետական Հայաստանի սովերենիտետը խախտող ներքին բնույթի ոչ մի այլ պարտավորության մասին խոսք անգամ լինել չէր կարող, ինչպես նաև չէր թույլատրվի երկրի ներսում Ազգերի լիգայի կամ որևէ պետության միջամտությունն ու վերահսկողությունը[30]:

1926 թ. մարտի 19-ին Փարիզում տեղի է ունենում հայ գաղթականների տեղավորման հանձնաժողովի նիստը ֆրանսիական սենատոր Ժյուլ Պամսի նախագահությամբ: Նիստին ներկա էին նաև Մարդուխ Մակդոնալդը (Անգլիա), Ֆր. Նանսենը, դոկտ. Մայերը (Գերմանիա), իտալական ներկայացուցիչ Կոնտտի Ռոսսինին, լիգայի մի խումբ տեխնիկական էքսպերտներ և Սովետական Հայաստանի ներկայացուցիչը՝ Ֆրանսիայում ԽՍՀՄ ներկայացուցչության քարտուղար Ս. Փիրումյանը:

Նախագահող Ժ. Պամսն իր ելույթում հաղորդում է, որ հանձնաժողովն ստացել է Հայաստան ուղարկված էքսպերտի զեկուցագիրը, որը լրիվին հաստատում է Նանսենի ծրագրի իրագործելիությունը: Ըստ նրա վկայության, հնարավոր է կարճ ժամանակամիջոցում ոռոգելի դարձնել 37450 դեսյատին լավագույն հողամասեր, այնտեղ փոխադրել մեծ թվով հայ գաղթականների, սկզբնական շրջանում նյութապես ապահովել նրանց և օգնել կառուցելու բնակարաններ, ձեռք բերելու գյուղատնտեսական գործիքներ, սերմացու և այլն: Այդ բոլոր միջոցառումների իրականացման համար պահանջվում է ընդամենը 15 միլիոն ռուբլի, այսինքն՝ նախապես հաշվարկվածից մոտ 5 միլիոն ռուբլով ավելի[31]: Ապա Պամսը հիշեցնում է, որ հանձնաժողովն սկզբում մտածում էր այդ գումարն ստանալ լիգայի անդամ պետությունների կողմից երաշխավորված փոխառության ձևով: Սակայն անգլիական կառավարության հրաժարումից հետո (որին չքմեղանքով հետևեցին նաև ֆրանսիական ու իտալական պատվիրակությունները), անհրաժեշտ համարվեց այդ փոխառության համար առաջադրել Ազգերի լիգայի երաշխավորությունը: Դժբախտաբար այդ էլ անհաջողությամբ վերջացավ, և անհրաժեշտ միջոցներ ձեռք բերելու խնդիրն այնուհետև կրկին

[30] Տե՛ս «Նոր ուղի», ամսագիր, Երևան, 1929 թ., № 1, էջ 342:

[31] Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 40/113, ց. 3, գ. 502, թ. 44—47:



քննարկվեց լիգայի հինգերորդ հանձնաժողովում: Այդ հանձնաժողովի առաջարկությամբ լիգայի խորհուրդը որոշում կայացրեց ստեղծել մի կոմիտե՝ պահանջվող գումարը հավաքելու խնդիրն ուսումնասիրելու համար: Միաժամանակ որոշվեց Նանսենին կամ նրա ներկայացուցչին վարկ տրամադրել՝ Եվրոպայում և Ամերիկայում հայ գաղթականների օգտին հանգանակություն անցկացնելու հնարավորությունը պարզելու նպատակով[32]:

Այսպիսով, Ազգերի լիգան, իմպերիալիստական տերությունների խարդախություններն ընդօրինակելով, հայկական հարցը փոխարինեց գաղթականական հարցով, իսկ գաղթականության հայրենադարձությանը նպաստելու խնդիրը՝ նրա օգտին ինչ-որ հանգանակություն անցկացնելու, իրականում ողորմություն մուրալու խղճուկ միջոցառումով:

Հայ գաղթականության հարցի վերաբերյալ իրադարձությունների այդ ամբողջ շղթան կամ ավելի ճիշտ կլինի ասել՝ երկարաձիգ այդ քաշքշուկը, մանրամասնորեն արտացոլվել է Ազգերի լիգայի կողմից 1927 թ. Ժնևում ֆրանսերեն և անգլերեն հրատարակված «Հայ գաղթականության տեղավորման պլան» հավակնոտ վերնագրով փաստաթղթերի ու նյութերի ժողովածուի մեջ[33]:

Սովետական կառավարությունը, անկեղծորեն մտահոգված լինելով բազմաչարչար հայ գաղթականության ճակատագրով, ամեն կերպ ընդառաջում էր նրա հարցի լուծմանը, թեկուզ Ազգերի լիգայի միջոցով: Սակայն միանգամայն պարզ ու որոշակի էր, որ սկզբունքային հարցերում նա երբեք չէր կարող զիջումներ անել իմպերիալիստական շահերի արտահայտիչ Ազգերի լիգայի խաբկանքներին: Ինչպես հասարակայնությանը հուզող մյուս հարցերը, այնպես էլ հայ գաղթականության խնդիրը Ազգերի լիգան իրականում առաջ էր քաշում, սովորական աղմուկ բարձրացնում, որպեսզի պահպանի «մարդասիրության» կեղծ տիտղոսը և ճնշված ու փոքր ազգերի աչքին թոզ փչի: Ամեն

[32] Տե՛ս «Նոր ուղի», 1929 թ., № 1, էջ 342:

[33] Այդ գիրքը՝ „Plan d'etablissement des refugies Armeniens" կամ „Scheme for the sectlement of Armenian Refugies. General Survey and pri. doc". Geneva. 1927, դժբախտաբար չգտնվեց ո՛չ Երևանի, ո՛չ էլ Մոսկվայի գրադարաններում, ուստի մենք չկարողացանք մանրամասնորեն անդրադառնալ դրան:

անգամ հայ գաղթականների հարցը Ազգերի լիգայի խորհրդում ու նրա զանազան հանձնաժողովներում քննարկելիս իմպերիալիստական դիվանագետները պիղատոսյան արցունքներ էին թափում այդ «դժբախտ ու չարչարված» ժողովրդի կրած տառապանքների և, անշուշտ, նրան օգնելու անհրաժեշտության համար։ Իսկ երբ իրոք հարկ էր լինում գործով ապացուցել գեթ իրենց պարտքի զգացումն այդ ուղղությամբ, ընդհակառակը, ինչ-որ կասկածելի հաշիվներ էին ներկայացնում հայ ժողովրդին։

Երբ խորամուխ ենք լինում փաստերի էության մեջ, պարզ է դառնում, որ իմպերիալիստական տերությունների իսկական նպատակը հայ գաղթականությանն իր հայրենիքը վերադառնալու գործում օգնելը չէր, այլ այդ անվան տակ, եթե հնարավոր էր, Սովետական Հայաստանն անմիջականորեն իրենց տնտեսական, ապա նաև քաղաքական շահագործման ոլորտի մեջ առնելը։ Դրա համար էլ նրանք չէին ցանկանում գործ ունենալ անմիջականորեն ՍՍՀՄ կառավարության հետ, այլ մեկուսացված Հայաստանի, որին, նրանց կարծիքով, հեշտ կլիներ ենթարկել իրենց ազդեցությանը։ Հենց այստեղ էր, որ նրանք չարաչար սխալվում էին իրենց հաշիվների մեջ։

Հայ ժողովրդի ճակատագրի, նրա ողբերգական անցյալի և պանդխտության մեջ տառապող գաղթականության դառն վիճակի հանդեպ այդ դաժան խաղերը բոլորովին էլ նորություն չէին։ Հայ աշխատավորությունը դեռ տասնամյակներ առաջ իր մաշկի վրա զգացել էր գլադստոնների և դիզրայելիների, այժմ էլ տեսնում էր Լլոյդ Ջորջերի ու լորդ Քերզոնների իրեն «օգնելու», «ազատագրելու» մասին դատարկ խոսքերի ու կեղծ ճառերի արյունոտ հետևանքները։ Ըստ էության այդ փարիսեցիական խոսքերից ու ճառերից երբեք էլ այն կողմ չանցավ Եվրոպայից հայ ժողովրդի ակնկալած օգնությունը և Ազգերի լիգայի «բարերարությունը»։ Փաստորեն մի քանի տարի շարունակ հայ գաղթականության հարցը և Նանսենի ծրագիրը «քննարկելուց» հետո Ազգերի լիգան այն մոռացության տվեց։

Ուստի միանգամայն իրավացի էր սովետական կառավարությունը, որ Նանսենի միսիայի Հայաստան գալուց առաջ ու առավել ևս դրանից հետո, ոչ մի սպասելիքներ չուներ Ազգերի լիգայից և երբեք էլ ինչ-որ հույսեր չէր կապում նրա հետ։ Այդ մասին շատ տեղին է արտահայտվել ՀՍԽՀ հողագործության



ժողկոմ Ար. Երզնկյանը, որը լավատեղյակ էր գաղութականու-
թյան հարցին և սփյուռքի կյանքին։ «Խորհրդային Հայաստան»
թերթի աշխատակցի հետ ունեցած զրույցում Ար. Երզնկյանն
ասել է. «Մենք Նանսենին, որպես մեր և առհասարակ Խորհրդա-
յին Միության բարեկամի, անկասկած, հարգանքով ենք վերա-
բերվում և երբեք չենք կասկածում նրա բարի տրամադրություն-
ների և ցանկությունների մասին, սակայն նրա միսիայից մեծ
բան չենք սպասում։ Չէ՞ որ նա չէ որոշողն այդ խնդիրը, այլ
Ազգերի լիգան։
Եթե մենք ընդունել ենք Նանսենի միսիան, ունեցել ենք
երկու հիմնական նպատակ, որը չենք թաքցնում։
Դեռ արտասահմանում գաղութահայության մեջ կան կազ-
մակերպություններ, որոնք գիտակցաբար և թե անգիտակցաբար
մթագնում են գաղութահայ աշխատավորության գիտակցությու-
նը, օրորելով նրան սին հույսերով, թե մեծ պետություններից և
Ազգերի լիգայից մեծ սպասելիքներ ունենք։
Մենք բոլոր հնարավորությունները տվեցինք Նանսենին, ա-
ռաջարկեցինք բոլոր թե մեծ և թե գյուղին ծրագրերը, որպես-
զի գաղութահայության աշխատավոր մասսաները տեսնեն, թե
մեծ պետություններից և լիգայից սպասելիքներ չկան...
Տալով Նանսենին բոլոր հնարավորությունները, մենք փա-
կեցինք արտասահմանում գտնված մեր բոլոր հակառակորդների
պրովոկացիաների բոլոր դռները։ Մենք պարզ և որոշակի ասա-
ցինք Նանսենին—մենք մուրալու ցանկություն չունենք, եթե դուք
և ձեզ ուղարկողներն ուզում եք, որ ներգաղթի հարցը լուծվի,
տվեք մեզ փոխառություն, մենք պատրաստ ենք ձեր փոխառու-
թյունն ապահովելու նույնիսկ արտասահմանյան բոլոր բանկե-
րի միջոցով, մենք այդ հնարավորությունը կստեղծենք։ Մենք
պատրաստ ենք լավ տոկոս վճարել, որովհետև ուզում ենք, որ
գաղթականության հարցը լուծվի»[34]։ Սակայն, ինչպես տեսանք,
Ազգերի լիգան և նրանում եղանակ ստեղծող տերությունները
շահագրգռված չէին այդ հարցի արդարացի լուծմամբ։
Դատապարտելով հայ գաղթականության հարցում Ազգերի
լիգայի երկերեսանի ու անճարակ վերաբերմունքը, սովետական
կառավարությունը և ողջ հայ աշխատավորությունը միաժամա-
նակ արժանին են հատուցել հայ ժողովրդի լավագույն բարեկամ,

[34] «Խորհրդային Հայաստան», 11 սեպտեմբերի, 1925 թ., № 210։

մեծ մարդասեր Ֆր. Նանսենին, որի անկեղծությանը երբեք չի կարելի կասկածել: Անկախ Ազգերի լիգայի խաղացած դերից, հայ գաղթականության թշվառ կացության բարելավման ուղղությամբ խոշոր ծառայություններ ունի Ֆր. Նանսենը, մի մարդ, որի գիտական անխոնջ գործունեությունը անխզելիորեն կապված է եղել հասարակական համարձակ պայքարի հետ: Չնայած որ նա իր քաղաքական հայացքներով մանր-բուրժուական դեմոկրատ էր, մեծ համակրանքով վերաբերվեց Ռուսաստանում հաղթանակած Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությանը և դարձավ սովետական ժողովրդի անկեղծ բարեկամը: Նանսենը մեծ մարդասեր էր: Նրա պայծառ մարդասիրությունը դրսևորվեց շատ վաղ, դեռևս նրա դեպի Հյուսիսային բևեռ կատարած ճանապարհորդությունների դժվարին օրերին: Ուստի պատահական չէր, որ նա խորապես ցնցվեց 1914—1918 թթ. իմպերիալիստական սպանդից և հետագայում իր ուժերն ամբողջովին նվիրաբերեց պատերազմի զոհերին օգնելու վեհ գործին:

Սկսած 1920 թ. գարնանից Ֆր. Նանսենը Նորվեգիան ներկայացնում էր Ազգերի լիգայում և որպես ռազմագերիների գործերով լիգայի գերագույն կոմիսար մեծ ջանքեր գործադրեց օտարության մեջ տառապող հարյուր հազարավոր ռազմագերիներին իրենց ընտանիքները վերադարձնելու ուղղությամբ: Ֆր. Նանսենի ծավալած եռանդուն գործունեության շնորհիվ կարճ ժամանակամիջոցում հաջողությամբ իրականացվեց ռազմագերիների փոխանակությունն ու հայրենադարձությունը: Այնուհետև Նանսենն աչքի ընկավ դաժան երաշտի պատճառով 1921 թ. Սովետական Ռուսաստանում բռնկված սովի դեմ պայքարում՝ մարդասիրական օգնություն կազմակերպելով հազարավոր սովյալներին:

Նանսենը հազիվ էր վերջացրել Պովոլժիեի սովյալներին օգնելու իր դժվարին աշխատանքը, երբ ստիպված եղավ ձեռնամուխ լինել մարդասիրական մի այլ գործի: 1922 թ. սեպտեմբերին, Ժնևում ներկա գտնվելով Ազգերի լիգայի նիստերին, Կոնստանդնուպոլսի իր ներկայացուցչից Նանսենն ստացավ հետևյալ բովանդակությամբ մի հեռագիր. «Անատոլիայի գաղթականների դրությունը շատ լուրջ է: Սպառնում է սովը: Առաջարկում եմ օգնություն կազմակերպել: Հեռագրեցեք ձեր համաձայնությունը»[35]:

Այդ կապակցությամբ Ազգերի լիգան Նանսենին առաջարկեց զբաղվել հույն գաղթականությանն օգնություն կազմակերպելու գործով: Նանսենն ընդունեց այդ առաջարկությունը, անմիջապես մեկնեց Բալկաններ և այնտեղ լայն օգնություն կազմակերպեց հույն և այլազգի գաղթականներին:

Այնուհետև Նանսենի մարդասիրական հետագա գործունեությունը կապվում է հայ ժողովրդի՝ մասնավորապես սփյուռքահայ գաղթականության հետ: Մինչև 1925 թ. ամառը, երբ Նանսենն անձամբ եղավ Հայաստանում, նա բազմիցս առիթներ էր ունեցել ծանոթանալու ինչպես հայկական հարցին, այնպես էլ աշխարհով մեկ ցրված հայ գաղթականության վիճակին:

Դեռևս 1922 թ. մարտի 1-ին սովյալներին օգնող Նանսենյան միջազգային կոմիտեի Մոսկվայի ներկայացուցիչ Ջոն Գորվինի և Մոսկվայում ՀՍԽՀ լիազոր-ներկայացուցիչ Ս. Տեր-Գաբրիելյանի միջև ստորագրվել էր մի համաձայնագիր, ըստ որի Սովետական Ռուսաստանի արտգործժողկոմ Գ. Վ. Չիչերինի և Ֆր. Նանսենի միջև 1921 թ. օգոստոսի 27-ին կնքված պայմանագիրը պետք է տարածվեր նաև Սովետական Հայաստանի վրա[36]:

Նանսենը լավատեղյակ էր Եվրոպայի, Մերձավոր արևելքի և այլ երկրների բազմահազար հայ գաղթականների ծանր վիճակին, որը մի քանի տարի շարունակ քննարկման առարկա էր Ազգերի լիգայի նիստերում ու նրա զանազան հանձնաժողովներում: Սակայն, մինչ Ազգերի լիգայի և իմպերիալիստական դիվանագիտության այլ ամբիոններից սուտ «ափափանքի» խոսքեր էին շռայլում հայ գաղթականության հասցեին և շարունակում խաբել նրան, գնալով ավելի էր վատթարանում տարագիրների վիճակը: Նրանցից շատերը հապճեպ կերպով երկրից փախած ու թուրքական սպանդից հազիվ փրկված լինելով, զուրկ էին անգամ իրենց քաղաքացիությունը հաստատող փաստաթղթերից, և նրանց իրավունքները չէին ճանաչվում օրենքի առջև: Միջազգային իրավունքի տեսակետից նրանք համարվում էին

[35] Տե՛ս Ֆր. Նանսեն, «Ֆրամ»-ը բևեռային ծովում, Երևան, 1958, էջ 41—42:

[36] Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 40/113, ց. 3, գ. 18, թ. 29—31:

պարզապես հայրենազուրկներ և ոչ որևէ պետության քաղաքա-
ցի կամ հպատակ[37]:

Գաղթականությանը այդ անորոշ վիճակից հանելու նպա-
տակով հայկական Ազգային պատվիրակության նորընտիր նա-
խագահ Գ. Նորատունկյանը դիմեց Ազգերի լիգային՝ հայ տա-
րագիրներին միջազգային ճանաչում ունեցող նանսենյան անձ-
նագրերով ապահովելու խնդրանքով: 1923 թ. սեպտեմբերին
քննարկելով այդ հարցը, Ազգերի լիգան սկզբունքորեն ընդունեց
հայ տարագիրների քաղաքացիությունը օրինականացնելու ան-
հրաժեշտությունը[38]:

Լիգայի խորհուրդը որոշեց Թուրքիայից հեռացած հայ տա-
րագիրների համար նույնպես ստեղծել Ազգերի լիգայի հովա-
նավորությունը վայելող մասնավոր անձնագրեր՝ այդ գործը
հանձնարարելով Ֆր. Նանսենի գլխավորած կոմիտեին[39]:

Ազգերի լիգայի խորհուրդը, 1924 թ. հունիսի 12-ին քննելով
գաղթականության բարձրագույն կոմիսար Ֆր. Նանսենի ներկա-
յացրած զեկուցագիրը, որոշեց հանձնարարել լիգայի անդամ
պետություններին՝ ընդունել լիգայի անունից հայ տարագիր-
ներին տրվող ինքնության թղթերի՝ այսպես կոչված նանսենյան
միջազգային անձնագրերի օրինականությունը[40]: Դրա շնորհիվ
մի շարք երկրներում երկար տարիներ հազարավոր հայ գաղթա-
կանների քաղաքացիությունն ու իրավունքները ճանաչվեցին
օրինական:

Հետագայում մի շարք այլ դյուրություններ ստեղծվեցին հայ
գաղթականներին նանսենյան անձնագրեր տալու գործում: Ազ-
գերի լիգայի 1925 թ. նոր հրահանգի համաձայն, «երկար ատեն
ի վեր Թուրքիայեն հեռացած և Թուրքիո հետ իրենց բոլոր կա-
պերը խզած հայերեն անոնք, որ փախստ հայտնեն, իրավունք
պիտի ունենան իրենց նանսենյան անձնագրերու վրա արձա-
նագրել տալու իրենց միայն ծննդավայրը և հայ ազգությունը»[41],
այնուհետև անձնագրերի դիմաց հայ գաղթականներից գանձվող

[37] Տե՛ս «Միություն», ՀԲԸՄ երկամսյա պաշտոնաթերթ, Փարիզ, 1929 թ., № 125, էջ 73—74:
[38] Տե՛ս «Վերջին լուր», 8 հոկտեմբերի, 1923 թ., № 2923:
[39] Տե՛ս նույն տեղում, 21 հունվարի, 1924 թ., № 3012:
[40] Տե՛ս նույն տեղում, 23 հունիսի, 1924 թ., № 3124:
[41] Տե՛ս «Հայաստանի կոչնակ», 3 հոկտեմբերի, 1925 թ., № 40, էջ 470:



գումարը հասցվում է նվազագույնի և այլն[42]: Նանսենյան անձ-
նագրերը դրական նշանակություն ունեցան հայ տարագիրների
արտասահմանյան թափառական կյանքը որոշ չափով թեթևացնե-
լու իմաստով: Այդ առումով միանգամայն դրվատանքի են ար-
ժանի այն մեծ ջանքերը և ջերմ հոգատարությունը, որ ցուցա-
բերեց Ֆր. Նանսենը հայ գաղթականներին իր անվամբ միջազ-
գային լայն ճանաչում ունեցող անձնագրերով ապահովելու ուղ-
ղությամբ:

Ընդհանրապես, թե որքան ջերմ հոգատարություն էր տա-
ծում Ֆր. Նանսենը հայ ժողովրդի հանդեպ, ի հակադրություն
Ազգերի լիգայի, պարզ կերպով երևում է 1927 թ. հուլիսի 5-ին
ՀՍԽՀ ժողկոմխորհի նախագահին նրա գրած նամակի հետևյալ
տողերից. «Ես կարծում եմ, որ հազիվ թե կարիք կա հայտ-
նելու ձեզ, որ իմ սրտանց ցանկությունն է անել այն բոլորը,
ինչ ես կարող եմ հայ գաղթականների և ձեր հիանալի ժողո-
վրդի համար, որին ես ճանաչեցի Հայաստանում իմ կատարած
անմոռանալի ճանապարհորդության ընթացքում:

Մի գրքում, որ ես արդեն ավարտում եմ, հույս ունեմ ծա-
նոթացնելու ձեզ և համայն աշխարհին այն մասին, թե ինչ եմ
մտածում ես ձեր ժողովրդի և նրա ապագա հնարավորություն-
ների մասին»[43]:

Հայաստանում եղած կարճ ժամանակամիջոցում Ֆր. Նան-
սենը ծանոթացավ մեր երկրի բազմաբեղուն կյանքի գրեթե բո-
լոր բնագավառներին, այցելեց գյուղատնտեսական շրջաններն
ու արդյունաբերական ձեռնարկությունները, բնության տեսար-
ժան վայրերն ու պատմական հնագույն հուշարձանները, ազգա-
յին թանգարաններն ու նորաբողբոջ ուսումնական հաստատու-
թյունները, տեսավ հայ աշխատավորի շինարարական տաղանդի
կերտած կոթողներն ու լսեց ժողովրդական զուլալ մեղեդինե-
րը: Այցելելով մեր երկիրը և տեղում ծանոթանալով նրա աշ-
խատասեր ժողովրդին ու դարավոր մշակույթին, մեծ մարդասերն
իր ստացած անմիջական տպավորությունների ու եվրոպական
լեզուներով մինչ այդ լույս տեսած աշխատությունների հիման
վրա հետագայում գրեց «Խաբված ժողովուրդ» գիրքը, որը չնա-

[42] Տե՛ս նույն տեղում, 27 փետրվարի, 1926 թ., № 9, էջ 410, նաև՝ 27 նոյեմբերի, 1926 թ., № 48, էջ 1658:
[43] ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 40/113, ց. 3, գ. 820, թ. 15:



10—1181

յած իր մեջ պարունակող որոշ ակնհայտ, բայց և անխուսափելի սխալներին, հայ ժողովրդի պատմության, նրա ողբերգական, բայց և հերոսական անցյալի, ինչպես նաև լուսավոր ու պայծառ ապագայի մասին եվրոպացի ուսումնասիրողների գրած լավագույն գործերից մեկն է։ Հեռանալով Հայաստանից, Նանսենը չմոռացավ հայ ժողովրդին, այլ իր գրած գրքով ցույց տվեց, որ նրա հոգսերը շատ մոտ ու հասկանալի են իրեն։ Նրա գիրքը տալիս է հայոց պատմության վերաբերյալ թեպետ համառոտ, բայց և հետաքրքիր մի ակնարկ։

Սակայն մեզ համար առավել ուշագրավ են Նանսենի գրքի այն մասերը, որոնք նվիրված են Սովետական Հայաստանի 20-ական թվականների առօրյային ու հայ գաղթականության հարցին։ Այդտեղ նա դրվատանքով նկարագրում է սովետական իշխանության շինարար գործունեությունը Հայաստանում և մեղադրում Անտանտին ու Ազգերի լիգային, որոնք դրժելով իրենց բոլոր խոստումները, չկատարեցին իրենց պարտքը հայ ժողովրդի հանդեպ։

Չնայած Ազգերի լիգայում հօգուտ հայ գաղթականության ծավալած իր բազմամյա եռանդուն գործունեությանը, Նանսենին չհաջողվեց նրա հարցի լուծման ուղղությամբ շատ թե քիչ շոշափելի արդյունքների հասնել։ Եվ իմպերիալիստական մեքենայությունների հետևանքով Ազգերի լիգայում հայ գաղթականության խնդրի վերջնական տապալումից վրդովված՝ Նանսենը նորվեգերեն, գերմաներեն, անգլերեն և ֆրանսերեն լույս ընծայեց իր գիրքը, որն ինչպես դիպուկ կերպով որակել է գերմանական հրատարակիչը՝ «մեղադրական է Անտանտի և Ազգերի լիգայի դեմ»[44]։

Նանսենը փաստորեն խաբվեց իր բարի մտադրությունների մեջ, Ազգերի լիգայից ունեցած ակնկալությունների մեջ։ Բայց խաբվելով հանդերձ, այդ ազնիվ մարդասերն իր հրատարակած գրքով վրեժխնդիր եղավ իրեն խաբողներից։ Ինչպես բնութագրել է անգլիական «Թայմս» թերթը, «խաբված ժողովուրդը» «կարիճի պես իր պոչի մեջ խայթոց ունի, որ վիրավորում է հաճոյակատարությունը բոլոր նրանց, ովքեր խոստացան ավելին, քան ի վիճակի էին կատարելու»[45]։

[44] Տե՛ս «Նոր ուղի», 1929 թ., № 1, էջ 350։

[45] Նույն տեղում, 1930 թ., № 4—5, էջ 48։



Դա բնավ պատահական բնութագրում չէր, այլ պատկերավոր կերպով ակնարկվում էր այն սուր քննադատությունը, որ Նանսենը ծավալել էր իր գրքի վերջին էջերում անգլիական կառավարության ու պետական գործիչների, ինչպես նաև Ազգերի լիգայի հասցեին։ Ազգերի լիգայի մասին Նանսենը մասնավորապես գրել է. «Ինչո՞ւ է Ազգերի լիգան հանձնաժողովներ նշանակում հարցն ուսումնասիրելու համար, թե ի՞նչ նվազագույն բան կարելի է անել հայրենազուրկ հայ գաղթականների օգտին։ Արդյոք ոմանց անմաքուր խիղճը հանգստացնելո՞ւ, իբր թե որևէ բան է արվում։

Բայց ի՞նչ նպատակով, քանի որ եղելությանը լավատեղյակ և գործը հասկացողների բարեխիղճ ուսումնասիրությունների հետևանքով արված ու շատերի կողմից ջերմորեն ընդունված առաջարկությունները չարժանացան մեծ տերությունների պաշտպանությանը, որոնք սառնասրտորեն մերժեցին ամենափոքր զոհողությունը՝ օգնելու համար ողորմելի գաղթականներին, որոնց նկատմամբ նրանք հանձն էին առել այնքան ծանր պարտականություններ։ Այս հարցին պատասխանում են, թե չի կարելի զոհողություններ կատարել ուրիշի համար, երբ մարդիկ հազիվհազ իրենց ցավն են հոգում։ Բայց արդյոք ավելի լավ չէ՞ր լինի այդ մասին խորհել այն ժամանակ, երբ հաստատ խոստումների և պատվի անունով կոչ էր արվում այդ դժբախտներին՝ Անտանտի գործի համար զոհաբերել ոչ միայն իրենց դրամը և ունեցվածքը, այլև իրենց կյանքը»[46]։

Այնուհետև, վերլուծելով հայ գաղթականության հարցի շուրջը տեղի ունեցած անց ու դարձը, եղած, բայց չիրականացված բազմաթիվ խոստումները, Նանսենը գրում է. «Մարդ տարակուսած հարցնում է, թե ի՞նչն էր իրոք այդ բոլորի նպատակը։ Արդյո՞ք այդ ամենը իսկապես դատարկ խոսքեր էին։ Դատարկ խոսքեր, առանց լուրջ հիմքերի։

Իսկ Ազգերի լիգա՞ն։ Միթե նա նույնպես չէր զգում ոչ մի պատասխանատվություն»[47]։

Իմպերիալիստական տերությունները Ազգերի լիգայում դընելով հայ գաղթականության հարցը, իրականում ցանկանում էին խաբել հասարակայնությանը, թե իբր իրենք մտածում են

[46] Fridtjof Nansen, Betrogenes Volk, էջ 331։

[47] Նույն տեղում, էջ 333։

հայ տարագիրների մասին։ Այդ ճանապարհով նրանք ցանկանում էին Սովետական Հայաստանում երկարատև ժամանակով իրենց ձեռքը գցել տնտեսական կարևոր ձեռնարկներ և, այնուհետև կախման մեջ գցելով սովետական իշխանությանը, իրենց կամքը թելադրել նրան։ Սովետական կառավարությունը, հանուն օտարության մեջ տառապող աշխատավոր հայ գաղթականության հարցի լուծման, ընդառաջելով Ազգերի լիգային, միաժամանակ ճշտորեն կռահեց իմպերիալիստական տերությունների իսկական նպատակները, ժամանակին հակահարված տվեց նրանց ստոր մեքենայություններին և կանխեց նրանց սպեկուլյատիվ հաշիվների իրականացումը։ Ահա թե ինչու Ազգերի լիգան և այնտեղ բազմած դիվանագետները հրաժարվեցին որևէ բան անել հանուն հայ գաղթականության։ Ահա թե ինչն էր իրոք այդ բոլորի նպատակը։ Հենց այս էր, որ ժամանակին չէր կարողացել ըմբռնել Ֆր. Նանսենը։ Հետո միայն նա հասկացավ, որ հայ գաղթականության հարցում Ազգերի լիգայի բռնած դիրքը ոչնչով չի տարբերվում մեծ տերությունների վերաբերմունքից և խիզախորեն բողոքեց Անտանտի ու լիգայի դեմ, կըրքոտ կերպով մերկացրեց նրանց ստոր գործունեությունը։

Վերջում Նանսենը գրում է. «Եվրոպայի ժողովուրդները և պետական գործիչները հոգնել են հավերժական հայկական հարցից։

Ինքնին հասկանալի է։

Այս հարցում նրանք միայն ձախողում կրեցին։ Հայերի անունն անգամ նրանց նիրհող խիղճերում արթնացնում է հիշողություն խորտակված կամ անկատար հանդիսավոր խոստումների ծանր շղթաների մասին, խոստումներ, որոնց կատարման համար նրանք մատը մատին չէին խփել։

Այժմ խոսքը վերաբերում է այն փոքր, արյունոտ, սակայն նվիրված ժողովրդին, առանց նավթի ու ոսկու։

Վա՜յ հայ ժողովրդին, որ նրան ներքաշեցին եվրոպական քաղաքականության մեջ։ Նրա համար ավելի լավ կլիներ, որ նրա անունը երբեք ոչ մի եվրոպական դիվանագետի շուրթերին չլիներ։

Սակայն հայ ժողովուրդը երբեք չհուսահատվեց։ Մշտական,



համառ աշխատանքում նա սպասում էր, սպասում երկար։ Նա սպասում է մինչև օրս էլ»[48]։

Այո՛, հայ ժողովուրդն սպասում էր, սպասում էր, բայց արդեն ոչ երբեք եվրոպական իմպերիալիստներից, այլ ռուսական հորիզոնում վեր բարձրացած կարմիր ու հրաբորբ դրոշից և Արարատի ստորոտում ծնունդ առած Հայաստանի անկախ ու սոցիալիստական պետությունից էր ակնկալում իր բաղձանքների իրականացումը։

Հայաստանում կատարած իր ուսումնասիրությունների ընթացքում Նանսենը եկավ այն հաստատ համոզման, որ «միակ վայրը, ուր ներկայումս կարելի է տեղավորել ընչազուրկ հայ գաղթականներին՝ դա Սովետական Հայաստանն է։ Այստեղ, ուր մի քանի տարի առաջ թագավորում էին ավերածությունը, թըշվառությունը, սովը, այժմ, սովետական կառավարության հոգատարության շնորհիվ, հաստատված է խաղաղություն և կարգ ու կանոն, բնակչությունը որոշ չափով նույնիսկ ունևոր է դարձել»[49]։

1927 թ. կեսերին Նանսենը տեղեկություն է ստանում, որ Սովետական Հայաստանի կառավարությունը, այլևս չսպասելով Ազգերի լիգայի կեղծ որոշումներին, մտադիր է իր ներքին հնարավորությունների մոբիլիզացումով միջոցներ կուտակել Ղոների, Սև ջրի, Զանգիբասարի և մյուս հողամասերի ճահիճների չորացման ու ոռոգման համար։ Ստանալով այդ ուրախալի լուրը, Նանսենն անմիջապես դիմում է ՀՍԽՀ Ժողկոմխորհին, հայտնելով, որ, եթե այդ ճիշտ է, ապա չնայած ինքը դեռևս չի կարողացել ոռոգման ծրագրի իրագործման և գաղթականների տեղավորման նպատակով գումար ձեռք բերել, պիտի փորձի վարկեր ստանալ՝ գոնե գաղթականությանը Սովետական Հայաստան տեղափոխելու համար[50]։

Նանսենը մեծ գովասանքով է խոսում դեպի հայ գաղթականությունը սովետական կառավարության ցուցաբերած ուշադիր և հոգատար վերաբերմունքի մասին՝ նշելով, թե «մենք տեսնում ենք, որ դուք գաղթական եղբայրների համար անում եք ավելին, քան կարող եք։ Ցանկանում ենք, որպեսզի ձեր գաղ-

[48] Նույն տեղում, էջ 333—334։

[49] Ֆր. Նանսեն, «Ֆրամ»-ը Բևեռային ծովում, էջ 42։

[50] Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՃ ՊԿԱ, ֆ. 40/113, ց. 3, գ. 820, թ. 4։

թական եղբայրները շուտով միանան ձեզ հետ»[51]։ Նա միաժամանակ Ազգերի լիգայի խորհրդում հայտարարում է, որ եվրոպական տերությունների քաղաքականությունը ոչնչով չի նպաստում հայ գաղթականներին Սովետական Հայաստան տեղափոխելու հարցի լուծմանը, հետևապես պետք է վերջ տալ այդ խաբեությանը[52]։

Հայ ժողովրդի տարագիր հատվածի նկատմամբ հոգսը Նանսենը մոռացության չտվեց մինչև իր կյանքի վերջը։ 1928 թ. նա շրջագայություն կատարեց ԱՄՆ-ում, որի ընթացքում դասախոսություններ ու զեկուցումներ կարդաց հայերի օգտին հանգանակություն ծավալելու նպատակով[53]։ Այդ ժամանակ էլ հենց վերջնականապես համոզվելով, որ կապիտալիստական աշխարհը քար անտարբերությամբ է վերաբերվում հայ գաղթականության տառապանքներին և չհանդուրժելով, որ Ազգերի լիգան շարունակի խաբել հայ տարագիրներին, Նանսենը 1929 թ. աշնանը առաջարկ մտցրեց լիգայի ընդհանուր ժողով՝ այլևս անօգուտ կերպով չզբաղվել Սովետական Հայաստանում հայ գաղթականների տեղավորման ծրագրով։ Ազգերի լիգայի 1929 թ. սեպտեմբերի 21-ի նիստում ընդունվում է Նանսենի առաջարկը, և 1920 թ. ի վեր լիգայի շրջանակներում ապարդյուն կերպով արծարծված այդ հարցը հանվում է օրակարգից[54]։

Միաժամանակ որոշվում է Գերմանիային, Նորվեգիային, Ռումինիային և Հունաստանին «զերծ կացուցանել նախապես իրենց ստանձնած հանձնառություններեն» և Լյուքսեմբուրգի կառավարությանն ու երկու անհատ անձնավորությունների ետ վերադարձնել հայ գաղթականների տեղափոխության ֆոնդին հատկացրած չնչին գումարները[55]։

Ըստ տեղեկությունների, մոտ մի հնգամյակի ընթացքում (1925—1929 թթ.) Նանսենին հաջողվել էր հայ գաղթականների տեղափոխման և նախատեսված հողամասերի ոռոգման համար հավաքել հազիվ 1,6 միլիոն ռուբլի[56], աննշան մի գումար նման

[51] Նույն տեղում, գ. 373, թ. 17։

[52] Տե՛ս ««Правда», 28 սեպտեմբերի, 1927 թ., № 221։

[53] Տե՛ս «Հայաստանի կոչնակ», 12 մայիսի, 1928 թ., № 19, էջ 599։

[54] Տե՛ս «Միություն», 1929 թ., № 135, էջ 237։

[55] Տե՛ս նույն տեղում։

[56] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 11 ապրիլի, 1929 թ., № 83։



ձեռնարկի իրականացման համար։ Այնպես որ, բնավ չարդարացան այդ ճանապարհով հայ գաղթականության հարցի լուծման Նանսենի հույսերը։ Ինչպես ժամանակին ճիշտ կերպով նշվել է սովետահայ մամուլում, մեծ մարդասերի բոլոր ձեռնարկումները՝ օգնություն հասնելու հայ գաղթականներին՝ «շարժելով Եվրոպայի և Ամերիկայի գութը», ջուրն ընկան։ Դա մի ավելորդ անգամ ապացուցեց, որ միանգամայն արդարացի է եղել սովետական կառավարությունը՝ իմպերիալիստական տերություններին և նրանց դիվանագետներին համարելով հայ ժողովրդի ոխերիմ թշնամիներ՝ ոչ մի հույս չկապելով նրանց հետ և ուրիշներին թողնելով նրանցից «բարիքներ» ակնկալելու պարտականությունը։

Ինչպես տեսանք, օտարության մեջ դեգերող սփյուռքահայ աշխատավորների մի զգալի մասի հայրենադարձությունը իրականացվեց ո՛չ թե Ազգերի լիգայի միջոցով (որին սովետական կառավարությունը ամեն կերպ ընդառաջում էր հանուն հայ գաղթականության հարցի շուտափույթ լուծման, բայց որն իրականում ոչինչ չկարողացավ կամ չցանկացավ գլուխ բերել), ո՛չ թե իմպերիալիստական տերությունների օգնությամբ (որոնք ուղղակի պատասխանատվություն էին կրում հայ գաղթականության աննախանձելի վիճակի համար), այլ սովետական կառավարության գործադրած գերագույն ջանքերի շնորհիվ և Սովետական Հայաստանի աշխատավորների՝ դեպի իրենց տարագիր եղբայրներն ու քույրերն ունեցած ջերմ հոգատարության և հանուն նրանց կատարած զոհողությունների։

## ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՐԵՆԻՔ—ՍՓՅՈՒՌՔ ԿԱՊԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

Քայքայված երկիրը վերաշինելու, Հանրապետությունում կուտակված արևմտահայ գաղթականությանն օգնելու, Հայրենիքի և սփյուռքի միջև կապերը զարգացնելու, ինչպես նաև հայրենադարձությունն իրականացնելու գործում որոշակի դրական դեր է կատարել Հայաստանի օգնության կոմիտեն (ՀՕԿ)։

Հայաստանի օգնության կոմիտեն կազմակերպվել է 1921 թ. սեպտեմբերին, Երևանում, մի խումբ հասարակական գործիչների ու մտավորականների նախաձեռնությամբ, որոնք խորապես մտահոգված լինելով մեր ժողովրդի ճակատագրով, ցանկանում էին միավորել ազգի բոլոր կենսունակ ուժերը՝ շուտափույթ կերպով երկիրը ոտքի կանգնեցնելու նպատակով[1]։

ՀՕԿ-ի հիմնադիր անդամների թվում էին Ս. Կասյանը, Ս. Համբարձումյանը, Ս. Տեր-Գաբրիելյանը, Ար. Երզնկյանը, Դ. Շահվերդյանը, Ս. Փիրումյանը. Ս. Մարտիկյանը, Հովհ. Թումանյանը, Նար-Դոսը, Դ. Դեմիրճյանը, Մ. Սարյանը, Եղ. Թադևոսյանը, Ռ. Մելիքյանը, Հ. Մանանդյանը, Մ. Աբեղյանը, Լեոն, Ստ. Մալխասյանը, Վ. Արծրունին, Գր. Ջուբարյանը և ուրիշներ։

ՀՕԿ-ի հիմնադիրների նպատակն էր մի կողմից՝ շինարար աշխատանքի ներգրավել այն բոլոր խավերին, որոնք զանազան պատճառներով հեռու էին կանգնել երկրում կատարվող վերափոխություններից, իսկ մյուս կողմից՝ ճշմարտացի ինֆորմացիայի բազմազան միջոցներով ցրել սովետական իշխանության

[1] Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՃ ՊԿԱ, ֆ. 178, ց. 1, գ. 249, թ. 21—26։



շուրջը թշնամական տարրերի կողմից տարածվող զրպարտությունների ու ստահոդ լուրերի հետևանքով սփյուռքում ստեղծված անվստահության մթնոլորտը։ Այն ժամանակվա դժվարին պայմաններում նման մի անկուսակցական, հասարակական կազմակերպության միջոցով հատկապես սփյուռքահայության կենսունակ ուժերը միավորելու, նրան հայրենիքի շուրջը համախմբելու խնդիրը ուներ խիստ կարևոր նշանակություն։

ՀՕԿ-ի նման մի կազմակերպության ստեղծումը, անշուշտ, արդյունք էր նաև այն շրջահայաց ու խոհեմ քաղաքականության, որն իրականացվում էր սփյուռքահայության նկատմամբ հանրապետության կուսակցական ու պետական ղեկավարության կողմից։ Այն ժամանակ ՀՍԽՀ Ժողկոմխորհի նախագահ Ալ. Մյասնիկյանը, կուսակցական ու պետական մեծ գործչին հատուկ հեռատեսությամբ և նրբանկատությամբ, ՀՕԿ-ին մեծ կարևորություն էր տալիս ոչ այնքան նրա բերելիք նյութական օժանդակության, որքան արտասահմանի հայ զանգվածներին Սովետական Հայաստանի մասին ճշմարտացի տեղեկություններ հաղորդելու և հայրենիքի հետ նրանց կապերը զարգացնելու իմաստով։ Իր առջև դրված նպատակներն իրականացնելու համար ՀՕԿ-ը պետք է ունենար իր կենտրոնական վարչությունը Երևանում, իսկ սկզբնական կազմակերպությունները կամ մասնաճյուղերը՝ սովետական մյուս հանրապետությունների հայաբնակ վայրերում ու արտասահմանյան հայկական գաղթօջախներում, որոնց միջոցով էլ արտերկրի հայությունը կկարողանար կապվել մայր հայրենիքի հետ։

ՀՕԿ-ի հիմնադիր համագումարից անմիջապես հետո ստեղծվեցին նրա տեղական մասնաճյուղերը՝ Թիֆլիսում (1921 թ. հոկտեմբեր), Բաթումում (1921 թ. նոյեմբեր), Մոսկվայում և Բաքվում (1922 թ. փետրվար)։ ՀՕԿ-ի բազմաթիվ մասնաճյուղեր կազմակերպվեցին հատկապես նրա երրորդ համագումարից (1923 թ. հոկտեմբեր) հետո՝ Աստրախանում, Խարկովում, Կիևում, Օդեսայում և Հյուսիսային Կովկասի ու Միջին Ասիայի գրեթե բոլոր հայաշատ քաղաքներում։

Գաղութահայությանը դեպի Սովետական Հայաստան տրամադրելու, նրա կողմից երկրին օգնություն կազմակերպելու և ՀՕԿ-ի մասնաճյուղեր հիմնադրելու տեսակետից կարևոր նշանակություն ունեցավ ՀՕԿ-ի կենտրոնական վարչության կողմից 1921 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին ՀՕԿ-ի առաջին

նախագահ, բանաստեղծ Հովհ. Թումանյանի գլխավորած պատվիրակությունը Կ. Պոլիս։ Պատվիրակության նպատակն էր, ինչպես այդ մասին գրել է Հովհ. Թումանյանը, «...մեր կոմիտեին համանման մի մարմին ստեղծել Պոլսում, կապել մերինի հետ, և նրա հետ միասին ազդել ավելի հեռու մեր գաղութների վրա, առաջ բերելու նույն տեսակի մարմիններ»[2]։ ՀՕԿ-ի պատվիրակությանը հաջողվեց միավորել մինչ այդ Կ. Պոլսում գոյություն ունեցող մի շարք բարեգործական ու մշակութային կազմակերպությունների միմյանցից անջատ ծավալած գործունեությունը և այն ուղղել հայրենիքի օգտին։ **Հովհ.** Թումանյանի պատվիրակությունը հատկապես սերտ կապեր հաստատեց այսպես կոչված «Հայրենիքի օգնության մարմնի» (ՀՕՄ) հետ, որն ստեղծվել էր 1920 թ. հոկտեմբերին և բացի Կ. Պոլսից մասնաճյուղեր ուներ նաև Ռումինիայում, Բուլղարիայում և այլ վայրերում։ ՀՕՄ-ի նպատակն էր նյութական ու բարոյական աջակցություն կազմակերպել Հայաստանին։ Սակայն, երբ ՀՕԿ-ի պատվիրակությունը Կ. Պոլիս հասավ, ՀՕՄ-ին գտավ խիստ երերուն, փաստորեն անգործության մատնված վիճակում՝ դաշնակների հակասովետական պրոպագանդայի և որոշ չափով նաև ռամկավարների անտարբեր վերաբերմունքի հետևանքով։ ՀՕԿ-ի պատվիրակությանը հաջողվեց կարճ ժամանակամիջոցում պոլսահայությանը ծանոթացնել հայրենիքի իրական դրությանը և սովետական կառավարության ճիշտ քաղաքականությանը՝ բեկում առաջ բերելով դեպի Սովետական Հայաստանն ունեցած նրանց վերաբերմունքի մեջ։ Այդ ամենի շնորհիվ զգալի չափով ամրապնդվեցին նաև ՀՕՄ-ի դիրքերը, աշխուժացավ նրա գործունեությունը։ 1921 թ. դեկտեմբերի 1-ին ՀՕԿ-ի և ՀՕՄ-ի ներկայացուցիչների ստորագրություններով Կ. Պոլսից մի շրջաբերական ուղարկվեց գաղութահայ բոլոր կարևոր կենտրոնները։ Այդ շրջաբերականում կոչ էր արվում տեղերում ստեղծել Հայաստանի օգնության կոմիտեի մասնաճյուղեր, կապվել նրա կենտրոնական վարչության հետ և ամեն կերպ նպաստել երկրի վերաշինության ու գաղթականության նյութական վիճակի բարելավման գործին[3]։ Վերոհիշյալ կոչը լայն արձագանք գտավ սփյուռքահայության մեջ։ Ամենուրեք սկսեցին կազմակերպվել հայրենիքի օգտին հանգանակու-

² Տե՛ս նույն տեղում, գ. 393, թ. 15։

³ Տե՛ս նույն տեղում։



թյուններ ու նվիրատվություններ։ Անցավ մի երկու ամիս և Հայաստան հասան ալյուր, դեղորայք, հագուստեղեն և այլ միջոցներ[4]։ Շուտով Կ. Պոլսի հայկական կարմիր խաչի ընկերությունը Երևան ուղարկեց հինգ հոգուց բաղկացած բժշկական մի ջոկատ՝ երեք վագոն դեղորայքով և հիվանդանոցի ու դեղատան սարքավորումներով։ ՀՕՄ-ը Հայաստան գործուղեց հատուկ պատվիրակություն՝ երկրի դրությանը ծանոթանալու և ավելի արդյունավետ օգնություն կազմակերպելու միջոցառումներ մշակելու նպատակով[5]։

Սակայն մինչև 1924 թ. սկզբները ՀՕԿ-ը արտասահմանում գրեթե չկարողացավ մասնաճյուղեր կազմակերպել։ Ինչպես և պետք էր սպասել, գաղութահայ ունևոր խավերն ու հետադիմական հակասովետական ուժերը մեծ մասամբ բացահայտ թշնամական, մասամբ էլ անտարբեր դիրք բռնեցին «պոլշևիկյան» Հայաստանի հանդեպ և նրան համակրող կազմակերպությունների ստեղծման գործում։ Այդ տեսակետից բացառություն էր կազմում իրանահայ գաղթօջախը, ուր շնորհիվ Սովետական Հայաստանի լիազոր-ներկայացուցչության և տեղի առաջադիմական ուժերի ջանքերի ՀՕԿ-ի մասնաճյուղեր էին կազմակերպվել դեռևս 1922 թ. փետրվարին։ Նման վիճակը, հասկանալի է, որ ՀՕԿ-ի կենտրոնական վարչությանը բավարարել չէր կարող, ուստի նա վճռական քայլեր էր կատարում արտասահմանում մասնաճյուղեր ստեղծելու ուղղությամբ, մանավանդ որ այդ գործում մեծ ակտիվություն էին ցուցաբերում նաև սփյուռքահայ լայն զանգվածները։ Ահա այդ համառ ջանքերի շնորհիվ 1924—1925 թթ. ՀՕԿ-ի արտասահմանյան մասնաճյուղեր կազմակերպվեցին Մերձավոր արևելքի, Բալկանների, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի և այլ երկրների հայկական գաղթօջախներում[6]։ Հունաստանի հայ աշխատավորները առաջիններից մեկը հիմնեցին ՀՕԿ-ի տեղական մասնաճյուղեր և, չնայած իրենց քաղաքական ու տնտեսական անբարենպաստ կացությանը, զգալի միջոցներ տրամադրեցին ՀՕԿ-ի կենտրոնական վարչությանը[7]։ Եվ այ-

⁴ Տե՛ս նույն տեղում, ֆ. 4/114, ց. 1, գ. 3, թ. 101—102։

⁵ Տե՛ս նույն տեղում։

⁶ Տե՛ս «ՀՕԿ-ի տեղեկատու», ամսագիր, օրգան ՀՕԿ-ի կենտրոնական վարչության, Երևան, 1928 թ., № 1, էջ 56—60։

⁷ Տե՛ս «Հրավիրակ», ամսագիր, օրգան ՀՕԿ-ի կենտրոնական վարչության, Երևան, 1925 թ., № 1, էջ 18։

պես գնալով աշխուժանում էր ՀՕԿ-ի գործունեությունը, այն դառնում էր հայրենիքի և սփյուռքի միջև կապի կարևոր օղակ։

* * *

Հայաստանի օգնության կոմիտեն իր 16-ամյա գոյության ընթացքում անցել է գործունեության երեք հիմնական փուլ։ Առաջին փուլն ընդգրկում է 1921—1923 թթ., երբ ՀՕԿ-ի հիմնական ուշադրությունը կենտրոնացվում էր կազմակերպական հարցերի վրա, ինչպես նաև բնակչության՝ հատկապես գաղթականության համար պարեն, հագուստ, դեղորայք և առաջին անհրաժեշտության այլ ապրանքներ ձեռք բերելու ու բաշխելու վրա։

ՀՕԿ-ի գործունեության աշխուժացման իմաստով կարևոր նշանակություն ունեցավ նրա երկրորդ համագումարը, որը կայացավ 1922 թ. հուլիսին, Երևանում։ Համագումարի աշխատանքներին մասնակցում էին նաև ՀՕՄ-ի և գաղութահայ այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ։ Ամփոփելով կատարված աշխատանքները, համագումարը հանձնարարեց կենտրոնական վարչությանը՝ այսուհետև ևս շարունակելով կարիքավոր բնակչությանն օգնություն ցույց տալու գործը, առաջիկայում առավել գործուն մասնակցություն ունենալ երկրում ծավալված շինարարական աշխատանքներին։

ՀՕԿ-ի գործունեության այդ կողմը ավելի շեշտվեց նրա երրորդ համագումարի կողմից (հոկտեմբեր, 1923 թ.), որին նույնպես մասնակցում էին արտասահմանյան տարբեր երկրների հայկական գաղթօջախների ներկայացուցիչներ։ Համագումարը, նկատի ունենալով բնակչության նյութական դրության որոշ բարելավումը, խնդիր դրեց վերջ տալ միջոցների օգտագործման սպառողական բնույթին և որդեգրել գործունեության այնպիսի ուղիներ, որոնք մնայուն ազդակ հանդիսանային երկրի տնտեսական ու մշակութային կյանքում։

ՀՕԿ-ի գործունեության երկրորդ փուլում՝ 1923—1931 թթ., ուշադրության կենտրոնում էր սփյուռքահայ աշխատավորներին կազմակերպչորեն համախմբելու գործը։ Երկրի ներսում ՀՕԿ-ը այդ շրջանում իրականացրեց շինարարական ու մշակութային կարևոր միջոցառումներ։ Կազմակերպական եռանդուն գործունեության ծավալման շնորհիվ արդեն 30-ական թվականների



սկզբին ՀՕԿ-ն արտասահմանում ուներ մոտ 200 մասնաճյուղեր, ավելի քան 10.000 անդամներով[8]։

Այդ փուլում ՀՕԿ-ի կենտրոնական վարչության կողմից արտասահման մեկնեցին մի շարք պատվիրակություններ ու անտասահման մեկնեցին... 

ՀՕԿ-ի գործունեության երրորդ փուլն սկսվեց 1931 թվականից, երբ մեծ թափ ու լայն ծավալ ստացավ նրա կենտրոնական վարչության ղեկավարությամբ հայրենակցական միությունների կողմից նախորդ տարիներին սկսված նոր ավանների կառուցումը Հայաստանում։ Երկրի տնտեսական կյանքի բարելավմանը զուգընթաց՝ լայն հնարավորություններ ստեղծվեցին նաև ավելի մեծ մասշտաբով ներգաղթի կազմակերպման համար։ Հայրենադարձության իրականացման գործում ՀՕԿ-ի կենտրոնական վարչությունն ու նրա արտասահմանյան մասնաճյուղերը ունեցան գործուն մասնակցություն։ ՀՕԿ-ի նախաձեռնությամբ 1933 թ. հունիսին Փարիզում ստեղծվեց համազգային մասշտաբով «Ներգաղթի և բնակարանային շինարարության ֆոնդ», որի կենտրոնական մարմնի կազմում ընդգրկված էին Արշակ Չոպանյանը, այն ժամանակ Փարիզում տարագրության մեջ գտնվող Ավետիք Իսահակյանը և ուրիշներ։ Այդ ֆոնդում հավաքվող գումարները ՀՕԿ-ի կենտրոնական վարչության միջոցով հատկացվում էին ներգաղթի իրականացմանը և հայրենադարձների համար բնակարանների կառուցմանը[9]։

* * *

1926 թ. սկզբներին, երբ արդեն ՀՕԿ-ը լայնորեն իր կազմակերպություններն էր տարածել արտասահմանյան հայկական

[8] Տե՛ս «ՀՕԿ», ամսագիր, օրգան արտասահմանյան ՀՕԿ-երի, Փարիզ, 1935 թ., № 2, էջ 583—584։

[9] Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՏ ՊԿԱ, ֆ. 326, ց. 1, գ. 45, թ. 1—5։

գաղթօջախներում, երբ արդեն երկրի բնակչությունը բնավ կա-
րիք չուներ ՍՍՀՄ-ում գոյություն ունեցող մասնաճյուղերից
ստացվող աննշան օժանդակությունների, կենտրոնական վար-
չությունը որոշեց դադարեցնել վերջիններիս գործունեությունը։
Այդ շրջանում զգալի չափով փոխվել էր նաև ՀՕԿ-ի ար-
տասահմանյան մասնաճյուղերի գործունեության բովանդակու-
թյունը։ Նրանք հիմնականում դարձել էին գաղութահայության
մայր հայրենիքի հետ կապող առաջադիմական մասսայական
կազմակերպություններ։ Սփյուռքահայության Սովետական Հա-
յաստանի հետ կապելու և նրա մասին ճշմարտացի տեղեկու-
թյուններ տալու իմաստով այդ տարիներին մեծ դեր են կատա-
րել ՀՕԿ-ի կենտրոնական վարչության կողմից արտասահման
մեկնած պատվիրակությունները։ Այսպես, 1924 թ. վերջերին
արտասահման գործուղվեց ՀՕԿ-ի կենտրոնական վարչության
նախագահ, ՀՍԽՀ հողագործության ժողկոմ Ար. Երզնկյանը։ Նա
եղավ Գերմանիայում, Ֆրանսիայում, Բելգիայում և Անգլիայում։
Ամենուրեք նա բազմաթիվ հանդիպումներ ունեցավ գաղութահայ
աշխատավորության ներկայացուցիչների հետ, հանդես եկավ
Սովետական Հայաստանի մասին հանգամանալից զեկուցումնե-
րով ու ելույթներով, օգնեց հիմնելու ՀՕԿ-ի մասնաճյուղեր և
Բարեգործական միության հետ կնքեց մի շարք համաձայնա-
գրեր՝ Հայաստանին կտակված որոշ գումարների օգտագործման
վերաբերյալ[10]։

Հայաստան վերադառնալուց հետո, 1925 թ. փետրվարին,
ՀՕԿ-ի կենտրոնական վարչության ընդլայնված պլենումում Ար.
Երզնկյանը հանդես եկավ հանգամանալից զեկուցմամբ, որի
մեջ մանրամասնորեն անդրադարձավ իր ուղևորության ար-
դյունքներին։ Նա իր զեկուցման մեջ ներկայացրեց գաղութա-
հայության թշվառ կյանքի տխուր պատկերը, նրա աշխատավո-
րական խավերի անվերապահ համակրանքը Սովետական Հա-
յաստանի նկատմամբ։ Ար. Երզնկյանը նշեց, որ սփյուռքահա-
յության ամենահիմնական հոգսերից մեկը որևէ տեղ դեռևս
չհիմնավորված տարագիրների ու որբերի խնդիրն է։

Հատկապես խիստ մտահոգիչ էր հայ որբերի հարցը, քանի
որ նրանց խնամքով զբաղվելու կոչված գաղութահայ բարեգոր-
ծական հաստատությունները փաստորեն նրանց ցրում էին գա-

[10] Տե՛ս նույն տեղում, ֆ. 178, ց. 1, գ. 66, թ. 66—68։



նազան ֆիրմաների ու անհատների միջև՝ Ֆրանսիայից մինչև
Կանադա։ Հասկանալի է, թե ինչ տխուր հետևանքների կարող էր
հասցնել հայ որբուկների ճակատագրի նկատմամբ նման ան-
հոգի վերաբերմունքը։ Զեկուցողը խնդիր դրեց, որպեսզի ներ-
գաղթողների մեջ ավելի շատ որբեր բերվեն հայրենիք, որտեղ
նրանք կկարողանան ստեղծել սեփական օջախներ՝ վայելելով
պետական լայն հոգատարություն[11]։

Սովետական Հայաստանի և սփյուռքահայության կապերի
ամրապնդման, ինչպես նաև արտասահմանում ՀՕԿ-ի մասնա-
ճյուղերի գործունեության հետագա աշխուժացման իմաստով
կարևոր դեր խաղաց ՀՕԿ-ի կենտրոնական վարչության կող-
մից 1925 թ. վերջերին հայկական գաղթավայրերը մեկնած նոր
պատվիրակությունը։ Այդ պատվիրակությունը, որի կազմի մեջ
մտնում էին կենտրոնական վարչության քարտուղար Գրիգոր
Վարդանյանը, վարչության անդամ Կարեն Միքայելյանը և Հա-
յաստանի Կարմիր խաչի նախագահ բժիշկ Սպանդարատ Կամ-
սարականը, արտասահման մեկնեց 1925 թ. նոյեմբերի 5-ին
և հայրենիք վերադարձավ 1926 թ. դեկտեմբերի 1-ին, գրեթե
13 ամիս շրջագայելով հայկական գաղթօջախներում։ Պատվի-
րակությունը եղավ Գերմանիայի, Բելգիայի, Շվեյցարիայի,
Ֆրանսիայի, Անգլիայի ու Ամերիկայի գրեթե բոլոր հայաշատ
քաղաքներում և ծանոթացավ սփյուռքահայության կյանքի
տարբեր կողմերին։ Պատվիրակության անդամները հանգամա-
նորեն ուսումնասիրեցին ՀՕԿ-ի արտասահմանյան մասնաճյուղե-
րի գործունեությունը, հիմնադրեցին նորերը և այլ ազգօգուտ
գործեր կատարեցին։ Նրանք ամենուրեք հանդես եկան Սովե-
տական Հայաստանի նվաճումների և ՀՕԿ-ի հետագա անելիք-
ների մասին դասախոսություններով ու զեկուցումներով, որոնք
ուղեկցվում էին Հայկինոյի նկարահանած ֆիլմերով կամ ուրիշ
ցուցադրական նյութերով։ Պատվիրակությունն իր հետ արտա-
սահման էր տարել նաև մի փոքրիկ շրջիկ ցուցահանդես, գե-
ղարվեստական բազմաթիվ պատկերազարդ ալբոմներ ու դիա-
գրամներ, որոնք որոշակի գաղափար էին տալիս հանրապետու-
թյան տնտեսական ու մշակութային վերելքի մասին։ Հատկա-
պես մեծ հաջողություն ունեցավ ՀՕԿ-ի կենտրոնական վարչու-
թյան պատվերով Հայկինոյի նկարահանած «Խորհրդային Հա-

[11] Տե՛ս նույն տեղում։

յաստան» վավերագրական կինոնկարը, որն ընդգրկում էր Հանրապետության բազմաբովանդակ կյանքի բոլոր բնագավառները։ Ինչպես հաղորդում են պատվիրակության անդամներն իրենց տպավորություններում, ամեն անգամ, երբ դահլիճում մարում էր լույսը և խավարի մեջ պայծառորեն երևում էին Սովետական Հայաստանի գերբն ու պետական դրոշը, հայրենակարոտ հուզված սրտերը հրճվանքի գերագույն պահ էին ապրում և խանդավառ օվացիա սարքում ի պատիվ ազատագրված հայրենիքի։ Սփյուռքահայության վրա այդ կինոնկարի գործած ազդեցությունն այնքան ուժեղ էր, որ մի շարք երկրներում դաշնակները դիմել էին տեղական իշխանություններին, խնդրելով արգելել նրա ցուցադրումը։

Պատվիրակության ծավալած եռանդուն գործունեության շնորհիվ ամրապնդվում են ՀՕԿ-ի մասնաճյուղերը, կազմակերպվում են նորերը։ Այդ շրջանում արդեն դրանց թիվը Ֆրանսիայում հասնում էր 32-ի, ԱՄՆ-ում՝ 45-ի, բազմաթիվ մասնաճյուղեր էին ստեղծվել նաև հայկական այլ գաղթավայրերում։ ՀՕԿ-ի շուրջն էին համախմբվում հատկապես աշխատավորական տարրերը, որի շնորհիվ այն դառնում էր սովետական օրիենտացիայով սփյուռքահայ զանգվածների անկուսակցական ամենաբազմանդամ կազմակերպությունը։

Հայրենիք—սփյուռք կապերի ամրապնդումից և սփյուռքահայության բարոյական աջակցությունից բացի, պատվիրակությունը ձեռք բերեց նաև նյութական որոշակի արդյունքներ։ ՀՕԿ-ի Ֆրանսիայի, Անգլիայի և ԱՄՆ-ի մասնաճյուղերը զգալի գումարներ տրամադրեցին ներգաղթողների համար Հայաստանում բնակարաններ կառուցելու ֆոնդին։ Այդ միջոցներով հետագայում Երևանում կառուցվեցին մի քանի շենքեր, որտեղ օթևան գտան տարագրությունից հայրենիք վերադարձած հարյուրավոր ընտանիքներ։ Այսպես, օրինակ՝ ԱՄՆ-ում կազմակերպված Մալաթիայի հայրենակցական միությունը Հայաստան ներգաղթող մալաթիացիների համար պատվիրակությանը հանձնեց 30000 դոլար։ Էջմիածնի շրջանի Էվջիլարի նորակառույց ջրանցքով ոռոգվող հողերի վրա հիմնադրված Նոր Եվդոկիա ավանի համար Բելգիայի հայ գաղութը տրամադրեց 27000 բելգիական ֆրանկ։ Այլ գաղութներից ու հաստատություններից ստացվեց 20000 դոլար Հայաստանում մի քանի գյուղական դպրոցներ կառուցելու համար, 24000 ռուբլի՝ մեղվաբուծական



դպրոց հիմնելու, 70000 ֆրանկ՝ Երևանում ակնաբուժական կլինիկա կազմակերպելու համար և այլն։ Պատվիրակությունը Հայաստան բերեց նաև մեծ քանակությամբ լաբորատոր սարքավորումներ՝ Երևանի համալսարանի համար և ժողովրդական հերոս Անդրանիկի սուրը, որը զորավարը նվիրել էր հայրենի թանգարանում պահելու համար[12]։

Պատվիրակության անդամները արտասահմանում զբաղվեցին նաև մի քանի տասնյակի հասնող հայկական կտակների, նվիրատվությունների և ազգային այլ գումարների խնդրով։ Նրանց հավաքած նյութերի և ՀՍԽՀ ժողկոմխորհին առընթեր «կտակների ուսումնասիրության հանձնաժողովի» ձեռք բերած փաստաթղթերի հիման վրա 1928 թ. ՀՕԿ-ը Մոսկվայում հրատարակեց պատվիրակության անդամ Կարեն Միքայելյանի գրած «Հայ ժողովրդական հարստությունները արտասահմանում» գրքույկը։ Վերջինս մեծ իրարանցում ու շփոթ առաջացրեց գաղութահայ «բարեգործների» շրջանում։ Այդ գրքույկը հնարավորություն տվեց սփյուռքահայությանը ճանաչելու իր կեղծ «բարերարներին», որոնք տարիներ շարունակ ժողովրդից թաքցրած էին պահում իրականում հենց նրան պատկանող ազգային հսկայական գումարները։ Դրա շնորհիվ սփյուռքահայ առաջադիմական խավերը հնարավորություն ստացան իրենց արդար բողոքի ձայնը բարձրացնելու հանրային միջոցները շահագործողների դեմ և ըստ կարելվույն այն օգտագործելու ազգային մշակութային նպատակներով։

1928 թ. ամռանը ՀՕԿ-ի կենտրոնական վարչությունը մի նոր պատվիրակություն (Գրիգոր Վարդանյան, Արամայիս Մուսայելյան) գործուղեց արտասահման։ Այդ պատվիրակությունը նույնպես շուրջ մեկ տարի շրջագայեց Եվրոպայի և Ամերիկայի հայկական գաղթօջախներում, ծանոթացավ սփյուռքահայ աշխատավորության վիճակին և ՀՕԿ-ի արտասահմանյան մասնաճյուղերի գործունեությանը։ Պատվիրակությունը զեկուցումներով, նկարներով, լուսանկարների և ցուցադրական այլ նյութերի միջոցով սփյուռքահայությանը ներկայացրեց հանրապետության

---

12 Մանրամասն տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 178, ց. 1, գ. 298, թ. 10—14 (պատվիրակության հաշվետվությունը տրված ՀՕԿ-ի կենտրոնական վարչության 1926 թ. դեկտեմբերի 31-ի նիստում), նաև՝ «Խորհրդային Հայաստան», 21 դեկտեմբերի, 1926 թ., № 291։



11—1181

*կյանքը[13]։ Պատվիրակությունն իր հետ արտասահման էր տարել նաև «Խորհրդային Հայաստանն այսօր» վավերագրական ֆիլմը, որը մեծ հետաքրքրությամբ դիտվում էր սփյուռքահայերի կողմից։ Այդ նույն ժամանակ ԱՄՆ-ում և այլ երկրներում հաջողությամբ ցուցադրվում էին Հայպետլուսկինոյի արտադրած «Նամուս» և «Զար ոգի» գեղարվեստական կինոնկարները[14]։*

*Այսպիսով, ՀՕԿ-ի պատվիրակությունների, ինչպես նաև Սովետական Հայաստանի ղեկավար գործիչների ու մտավորականների արտասահմանյան ուղևորությունները, պրոպագանդայի և ինֆորմացիայի այլ բազմազան միջոցները արդեն 20-ական թվականների վերջերին մեծապես ուժեղացրին ՀՕԿ-ի դիրքերը հայկական գաղթօջախներում գոյություն ունեցող ուրիշ կազմակերպությունների համեմատությամբ։*

*Սփյուռքահայությանը Սովետական Հայաստանի մասին ճշմարտացի ինֆորմացիա տալու տեսակետից կարևոր դեր էին կատարում ՀՕԿ-ի պարբերականներն ու այլ հրատարակությունները։ ՀՕԿ-ի կենտրոնական վարչության առաջին պարբերականը «Հրավիրակ» ամսագիրն էր, որը լույս էր տեսնում 1925—1926 թվականներին։ Ընդառաջելով արտասահմանյան մասնաճյուղերի և սփյուռքահայ աշխատավորների ցանկություններին՝ ՀՕԿ-ի կենտրոնական վարչությունը 1928 թ. հրատարակում է «ՀՕԿ-ի տեղեկատու» ամսագիրը։ Տարբեր ժամանակներում մի քանի պարբերականներ են լույս ընծայել նաև ՀՕԿ-ի Թիֆլիսի և Մոսկվայի մասնաճյուղերը («Օգնիր Հայաստանին», «Հայրենաշեն»,* «Вестник комитета Помощи Армении», «Возрождающаяся Армения», *«Լրաբեր»)։*

*Իրենց տպագիր օրգաններն ունեին նաև ՀՕԿ-ի Ամերիկայի կենտրոնական վարչությունը («Շինարար» հանդեսը, որը լույս էր տեսնում 1927 թ. սկսած), Եգիպտոսի մասնաճյուղը («ՀՕԿ» ամսագիրը)։ ՀՕԿ-ի Ֆրանսիայի կենտրոնական վարչությունը 1933—1935 թթ. Փարիզում հրատարակում էր «ՀՕԿ» ամսագիրը՝ որպես ՀՕԿ-ի արտասահմանյան մասնաճյուղերի օրգան։ Սովետական Հայաստանի վերելքը, սփյուռքահայության կյանքը և ՀՕԿ-ի գործունեությունը մանրամասնորեն լուսաբանում էր նաև 1925—1930 թթ. Փարիզում հրատարակվող «Երևան» թերթը։ ՀՕԿ-ի բոլոր պարբերականները, ինչպես նաև*

[13] *Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՄՇ ՊԿԱ, ֆ. 178, ց. 1, գ. 463, թ. 7—10։*

[14] *Տե՛ս նույն տեղում, գ. 432, թ. 6։*



*սփյուռքահայ ամբողջ առաջադիմական մամուլը նպաստում էին հայրենիք—սփյուռք կապերի ամրապնդմանը, Սովետական Հայաստանի համակիրների աճին, ՀՕԿ-ի մասնաճյուղերի գործունեության հաջող ծավալմանը և հայրենադարձության իրականացմանը։*

*1925 թ. սկզբին ՀՕԿ-ի կենտրոնական վարչությունը հիմնեց գեղարվեստական հրատարակչության բաժին, որը մեծ թվով ուսումնասիրություններ, գեղարվեստական երկեր, նկարներ, ալբոմներ և այլ գործեր լույս ընծայեց, դրանով իսկ խթանելով երկրի մշակութային կյանքի վերելքին։ Այդ բոլոր հրատարակությունների միջոցով ՀՕԿ-ը նպատակ ուներ աշխարհով մեկ ցրված հայությանը բազմակողմանի ու ճիշտ գաղափար տալ Սովետական Հայաստանի մասին և նրա մեջ վառ պահել սերը հայրենի երկրի նկատմամբ, վերջին հաշվով նպաստել հայապահպանության գործին։*

*ՀՕԿ-ի հայրենասիրական գործունեությունը առաջ էր բերում գաղութահայ հետադիմական ուժերի և հատկապես դաշնակցության կատաղի թշնամանքը։ Բազմաթիվ փաստեր կան դաշնակների կողմից ՀՕԿ-ի մասնաճյուղերի ու անդամների նկատմամբ կատարված մատնությունների, զրպարտությունների ու սպանությունների մասին։ Դեռևս 1921 թ. վերջերին, երբ նոր էր կազմակերպվել ՀՕԿ-ը, Կ. Պոլսում հրատարակվող դաշնակների «Ճակատամարտ» թերթը պրովոկացիոն լուրեր էր տարածում, թե իբր նրա հիմնադիրները «Չեկայի սպառնալիքների տակ են ստորագրել և անդամագրվել կոմիտեին» և ոչ թե իրենց կամքով ու ցանկությամբ[15]։*

*Հենց նման պրովոկացիաների ու բանսարկությունների պատճառով էր, որ ՀՕՄ-ը սկզբում իր նյութական առաքումները Հայաստան կատարում էր ոչ թե ուղղակի ՀՕԿ-ի կենտրոնական վարչության հասցեով, այլ Մերձավոր արևելքի Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի Երևանի բաժանմունքի միջոցով[16]։*

*Դաշնակները լավ էին տեսնում, որ սփյուռքահայ զանգվածների շրջանում Սովետական Հայաստանի ձեռք բերած լայն համակրանքի և ՀՕԿ-ի մասնաճյուղերի մասսայականության*

[15] *Տե՛ս նույն տեղում, գ. 6, թ. 5—6։*

[16] *Տե՛ս նույն տեղում, թ. 24։*

հետևանքով իրենք արագորեն կորցնում են վերջին հենարանը։ Ուստի ձգտում էին ամեն կերպ արգելակել ՀՕԿ-ի մասնաճյուղերի ստեղծմանն ու նրանց գործունեության ծավալմանը, ժողովրդական զանգվածներին հեռու պահել Սովետական Հայաստանին համակիր ՀՕԿ-ի կազմակերպություններից։ Ահա արտասահմանում ՀՕԿ-ի մասնաճյուղերի ստեղծմանը դաշնակների խանգարելու բազմաթիվ փորձերից մեկը. 1924 թ. հոկտեմբերի 23-ին Բեռլինի «Հայ ուսանողական միությունը» ժողով էր հրավիրել ՀՕԿ-ի մասնաճյուղ հիմնելու նպատակով։ Ժողովին ներկա էին շուրջ 70 մարդ, և, ինչպես նշված է այդ մասին եղած փաստաթղթում, եկել էին նաև հայ գաղութի «թափառական հերոսները» (խոսքը դաշնակների մասին է), որոնց նպատակն էր խանգարել ՀՕԿ-ի մասնաճյուղի կազմակերպմանը։ Ժողովը տևում է մինչև կեսգիշեր, բայց դաշնակների պարագլուխ Արշակ Ջամալյանի և նրա համախոհների դիմադրության պատճառով հնարավոր չի լինում դրական արդյունքի հասնել։ Նախաձեռնողները հարկադրված հրավիրում են երկրորդ ժողովը և իրականացնում ՀՕԿ-ի մասնաճյուղի կազմակերպումը[17]։

Դաշնակներն իրենց մատնություններով, սպառնալիքներով ու սպանություններով հասան այն բանին, որ տեղական իշխանությունները արգելեցին ՀՕԿ-ի Բեյրութի, Կահիրեի, Ալեքսանդրիայի և Ալժիրի մասնաճյուղերի գործունեությունը։ Խիստ զավեշտական է հնչում իրենց «ազգասեր» ու «հայրենասեր» հորջորջող դաշնակների՝ Ալժիրի իշխանություններին արած այն զրպարտությունը, թե իբր երկրաշարժից տուժած Լենինականի բնակչության օգտին ՀՕԿ-ի տեղական մասնաճյուղի կողմից հանգանակվող գումարը «կոմունիստական կուսակցության համար է»[18]։

Պայքարի նույն խարդախ մեթոդներին էին դիմում դաշնակները նաև Հունաստանում, Հարավային Ամերիկայում և այլ երկրներում։ Այսպես, օրինակ, Բուենոս Այրեսի մասնաճյուղը ՀՕԿ-ի կենտրոնական վարչությանն ուղարկած իր զեկուցագրերից մեկում այդ մասին հայտնում է հետևյալը. «Հանրածանոթ են այն մատնությունները, որոնք կատարվեցան մեր «Զարենց գրադարանի» վրա, որու բերումով ձերբակալվեցան երեք տասնյակ մը ժողովականներ Պուենոս Այրեսի մեջ, ժողովրդային վարժարանի և ՀՕԿ-ի գրադարանի վրա՝ Մոնթեվիտեոյի մեջ, ուր բանտ առաջնորդվեցան մեր կարգ մը ընկերներեն ու համակիրներեն։ Հարձակումները զերծ չեղան Պրազիլի ու Ցլորենսի մեր ընկերները։ Մանավանդ Ցլորենսի մեջ մատնիչ ստոր արարածները չի վարանեցան ոստիկանատան մեջ հայտարարել իրենց ֆաշիստ ըլլալը և նույնիսկ եկեղեցական քաղաքացիներին զըրպարտել իբրև հեղափոխական, հակակառավարականներ»[19]։ Ինչ խոսք, որ այլ վարքագիծ չէր էլ կարելի սպասել նրանցից, ովքեր նույնիսկ Նյու Յորքում հրատարակվող հայ բողոքականների օրգան «Հայաստանի կոչնակ»-ի տարածումը Սիրիայում արգելել տալու նպատակով կառավարությանը հավատացնում էին, թե իբր այն «...ծառայում է խորհրդային իշխանության պրոպագանդին»։ Բանն այն էր, որ «Կոչնակը» երբեմն լուրեր էր տպագրում Սովետական Հայաստանում ծավալված շինարարական աշխատանքների ու մշակութային նորությունների վերաբերյալ, քաղվածքներ էր կատարում սովետական մամուլից և այլն[20]։ Զգալով, որ Սովետական Հայաստանի մասին սփյուռքահայությանը հասնող ամեն մի ճշմարիտ խոսք կործանարար հարված է իրենց համար, դաշնակները ՀՕԿ-ը տեղական իշխանությունների մոտ ներկայացնում էին որպես «համայնավար» կազմակերպություն, իսկ նրա անդամներին՝ որպես «պոլշևիկներ», արգելել էին տալիս Սովետական Հայաստանի վերելքի մասին պատմող գրականության ու մամուլի տարածումը, կինոֆիլմերի ցուցադրումը և այլն, մի խոսքով, ամեն կերպ խոչընդոտում էին ՀՕԿ-ի գործունեությանը։

Չնայած այդ բոլոր դավերին, արտասահմանում շարունակում էին աճել ՀՕԿ-ի մասնաճյուղերը, իրենց շուրջը համախմբելով սփյուռքահայ առաջադիմական ուժերին և դառնում սփյուռքահայ կյանքի աշխուժացման ու ազգային գոյատևման կարևոր ազդակներից մեկը։ Սփյուռքահայության շրջանում լայն ժողովրդականություն էին վայելում ՀՕԿ-ի մասնաճյուղերի ստեղծած մշակութային միությունները, գրադարանները, ակումբները, թատերական ու երգի-պարի ինքնագործ խմբերը և ազգային այլ օջախները։ Այդպիսի ճանապարհով ընթանալով

---

[17] Տե՛ս նույն տեղում, գ. 289, թ. 18։

[18] Տե՛ս նույն տեղում, գ. 374, թ. 13—15։

[19] Նույն տեղում, գ. 741, թ. 8։

[20] Տե՛ս «ՀՕԿ», Փարիզ, 1934 թ., № 4, էջ 249։

ՀՕԿ-ը սկսեց էական դեր կատարել սփյուռքահայության ղեկավարման գործում։ Դաշնակները՝ տեսնելով, որ դրսից չկարողացան խանգարել ՀՕԿ-ի գործունեությանը, փորձեցին թափանցել նրա մասնաճյուղերի ղեկավարության մեջ և իրենց ձեռնտու հունով տանել դրանց աշխատանքը, այսինքն՝ ՀՕԿ-ի կազմակերպությունները հակադրել Սովետական Հայաստանին։ Այդ վտանգի դեմ պայքար կազմակերպելու նպատակով ՀՕԿ-ի կենտրոնական վարչությունը 1926 թ. մարտին քննարկեց արտասահմանյան մասնաճյուղերում տիրող դրության հարցը։ Այդ առթիվ ընդունված որոշման մեջ նշված էր, որ ՀՕԿ-ի ղեկավար օրգաններում անթույլատրելի է այն մարդկանց մասնակցությունը, ովքեր թշնամական վերաբերմունք ունեն Սովետական Հայաստանի հանդեպ։ Կենտրոնական վարչությունն իր արտասահմանյան մասնաճյուղերին ցուցում տվեց, որ ՀՕԿ-ի ղեկավար օրգաններում մասնակցության իրավունք չեն կարող ունենալ նաև այն անձինք, ովքեր անորոշ կամ երկդիմի դիրք են բռնել Սովետական Հայաստանին պատկանող գումարների ու գույքը նրանց օրինական տիրոջը հանձնելու հարցում[21]։ Այդ ժամանակ արտասահմանում կային հայ ժողովրդին պատկանող, նրան կտակված խոշոր գումարներ, որոնց միակ օրինական տերը Սովետական Հայաստանն ու հայ գաղթականությունն էին։ Սակայն այդ գումարները, գտնվելով զանազան բարեգործական հիմնարկների ու կտակակատարների տրամադրության տակ, մեծ մասամբ ծառայում էին ոչ իրենց անմիջական նպատակներին։ Մինչդեռ այդ գումարների ձեռք բերումով կարելի կլիներ Սովետական Հայաստանում տեղավորել տասնյակ հազարավոր նոր տարագիրների։ Նկատի ունենալով այդ հանգամանքը, ՀՕԿ-ի կենտրոնական վարչությունն իր վերոհիշյալ որոշման մեջ հանձնարարում է բոլոր մասնաճյուղերին՝ հաշվի առնելով գաղթականական հարցի սրությունը, պայքար ծավալել, որպեսզի «արտասահմանում կուտակված բոլոր հասարակական, ազգային գումարները և կտակները հատկացվեն գերազանցորեն գաղթականական հարցի լուծմանը և խորհրդային Հայաստանում այն հիմնական շինարարությանը, որը հնարավորություն կտա

[21] Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 178, ց. 1, գ. 418, թ. 4—5։



լուծելու գաղթականների հարցը և ստեղծելու նրանց համար տնտեսություն»[22]։

Այս որոշումն ստանալուց հետո ՀՕԿ-ի մասնաճյուղերը ամենուրեք ակտիվ գործունեություն ծավալեցին նրա իրականացման ուղղությամբ։ Ազգային գումարները Սովետական Հայաստանին տրամադրելու մասին ՀՕԿ-ի մասնաճյուղերի ու նրանց շուրջը համախմբված սփյուռքահայ աշխատավորների միահամուռ պահանջները վկայում էին, որ ՀՕԿ-երը իրոք դարձել էին սփյուռքահայության կենսական շահերի արտահայտիչները և Սովետական Հայաստանին աջակցող խավերի բարոյական շեփորները արտասահմանում։

Հարկ է նշել, որ այդ բուռն բողոքների շնորհիվ հաջողվեց անտեղի փոշիացումից փրկել Մելքոնյան ֆոնդի որոշ մասը և այն տրամադրել Սովետական Հայաստանում շինարարական մի շարք կարևոր ձեռնարկների իրականացման (հանրային գրադարանի կահավորման և այլն), Կովկասի ու Մերձավոր արևելքի վերաբերյալ եղած գրականության ձեռք բերման և հայագիտական արժեքավոր ուսումնասիրությունների հրատարակման գործին։

Սփյուռքահայ զանգվածների զգոնության բարձրացման շնորհիվ դաշնակները չկարողացան շատ թե քիչ հաջողության հասնել։ Զախողվեցին նրանց մտադրությունները՝ խանգարելու ՀՕԿ-ի ժողովրդականացմանը հատկապես գաղութահայ կարևորագույն կենտրոններում։ Բոստոնում հրատարակվող դաշնակցական «Հայրենիք» թերթում Ս. Մասուրյանը (Ս. Վրացյանը) 1925 թ. դեկտեմբերին լույս ընծայած իր մի հոդվածում անզուսպ չարությամբ փորձում էր ապացուցել, թե իբր ՀՕԿ-երը ԱՄՆ-ում ժողովրդականություն չունեն։ Բայց փաստերը միանգամայն հակառակն էին վկայում։ Ահա դրա կոնկրետ ապացույցներից մեկը. 1925 թ. հոկտեմբերի 25-ին, իրենց կուսակցության հիմնադրման 35-ամյակի առթիվ, դաշնակները Նյու Յորքում հայտարարել էին «դաշնակցական օր»։ Սակայն 10 հազարից ավելի հայություն ունեցող գաղութից հազիվ 300—350 մարդ էր հավաքվել նրանց «ձրի մուտքով» երեկույթին։ Մինչդեռ նույն օրը ՀՕԿ-ի կազմակերպած հանդեսին, որի տոմսերն, ի դեպ, արժեին 1—2 դոլար, մասնակցելու էր եկել

[22] Նույն տեղում։

ավելի քան 1000 մարդ և հենց նույն տեղում էլ 75 հոգի անդամագրվել ՀՕԿ-ին[23]:

ՀՕԿ-ի դեմ պայքարում դաշնակները նույնիսկ դիմում էին նրա ակտիվ անդամների նկատմամբ տեռորիստական ակտերի։ 30-ական թվականներին դաշնակ թափթփուկների այդ նողկալի գործունեությունն այնպիսի չափերի էր հասել, որ առաջադիմական ուժերը անհրաժեշտ համարեցին այդ տեռորի դեմ պայքարելու համար ստեղծել հատուկ կոմիտե։ 1933 թ. Փարիզում հիմնվեց «Դաշնակ տեռորի զոհերի պաշտպանության կենտրոն», որը սփյուռքահայության ուշադրությունը հրավիրեց դաշնակների կազմակերպած տեռորիստական գործունեության դեմ ավելի վճռական պայքար մղելու անհրաժեշտության վրա։ Սփյուռքահայությանն ուղղված նրա կոչերից մեկում նշված էր, որ շուրջ 10 տարվա ընթացքում դաշնակ տեռորիստների ձեռքով ՀՕԿ-ի շարքերից բազմաթիվ զոհեր ընկան Բեյրութում, Աթենքում, Լիոնում և այլ վայրերում[24]։ 1933 թ. փետրվարի 26-ին ֆրանսիական Գրենոբլ քաղաքում դաշնակներն սպանեցին ՀՕԿ-ի ակտիվիստ Մանուկ Մարուքյանին և վիրավորեցին հինգ ուրիշ անդամների այն բանի համար, որ նրանք ժողովի ժամանակ, հակառակ Սովետական Հայաստանի նկատմամբ դաշնակների զրպարտչական ելույթներին, բացականչել էին՝ «Կեցցե՜ խորհրդային Հայաստանը»։ «Դաշնակ տեռորի զոհերի պաշտպանության կենտրոնը», անդրադառնալով այդ փաստերին, իր հրապարակած կոչերից մեկում գրում է. «Գրենոբլի զոհ Մարուքյանից հետո զոհվեց Գըլըճյանը Աթենքում. Ալեքսանդրիո մեջ կհարվածվի տորթ. Թաշճյան, մինչ Ամերիկա Գույումճյան հարձակման կենթարկվի եռագույնի (դաշնակների դրոշը.— Հ. Մ.) դեմ արտահայտված ըլլալու համար»[25]։ Այնուհետև կոչում սփյուռքահայ աշխատավորներին խորհուրդ էր տրվում ամենուրեք ստեղծել դաշնակցական տեռորի զոհերի պաշտպանության հանձնախմբեր և միասնական պայքար մղել այդ ազգադավ քաղաքականության դեմ, «...որովհետև միայն ժողովրդական ցասումի հսկա ալիքին առջև է, որ վրացյանները և ջամալյանները պիտի մտնեն իրենց որջերը ու պիտի չվրդովեն՝ իրենց քա-

[23] Տե՛ս «Երևան», Փարիզ, 3 դեկտեմբերի, 1925 թ., № 18։

[24] Տե՛ս «ՀՕԿ», Փարիզ, 1933 թ., № 8, էջ 56—59։

[25] Նույն տեղում։



ղաքական արկածախնդիր խաղերով, գաղութահայ հասարակու-
թյան հանգիստն ու ապագան»[26]։
Միջազգային ասպարեզում ռեակցիայի հետագա ուժեղա-
ցումը, մասնավորապես ֆաշիզմի հանդես գալը, մեծ աշխու-
ժություն առաջ բերեց դաշնակցության գործունեության մեջ՝
ընդդեմ հայկական առաջադիմական դեմոկրատական կազմա-
կերպությունների։ Ամենուրեք դաշնակցությունն աշխատում էր
կեղծ ամբաստանությունների ու մատնությունների միջոցով
հասնել առաջադիմական կազմակերպությունների, այդ թվում
և ՀՕԿ-ի մասնաճյուղերի լիկվիդացմանը։ Դրա հետևանքով 1934
թ. վերջերին և 1935 թ. սկզբներին հայկական մի շարք գաղթ-
օջախներում լայն հարձակում սկսվեց ՀՕԿ-երի դեմ։ Ահա նման
բազմաթիվ փաստերից մեկը. 1934 թ. վերջերին անգլո-եգիպ-
տական իշխանությունները դաշնակների մատնությունների հի-
ման վրա ձերբակալեցին ՀՕԿ-ի Ալեքսանդրիայի մասնաճյուղի
ղեկավարներին ու բազմաթիվ անդամների՝ մոտավորապես 80
հոգու։ Ձերբակալվածների դեմ որպես մեղադրող հանդես էր գա-
լիս Սովետական Հայաստանի երդվյալ թշնամիներից մեկը՝ դաշ-
նակների «Հուսաբեր» թերթի արտոնատեր Օննիկ Մաճառյանը։
Վերջինս նախաքննության ժամանակ եգիպտական դատախազին
անպատկառորեն հայտարարում է, թե «ՀՕԿ-իստները համայն
աշխարհի մեջ ՀՕԿ-ի դիմակին տակ գործող ամենավտանգավոր
համայնավարներն են»[27]։
Գնալով ուժեղանում են հալածանքները ՀՕԿ-ի մասնաճյու-
ղերի դեմ նաև Եվրոպայում, Ամերիկայում և այլ վայրերում։
Սակայն, չնայած դրան, ՀՕԿ-ի շարքերում համախմբված
սփյուռքահայ աշխատավորները դժվարին պայմաններում շա-
րունակում էին իրենց պայքարը հանուն հայապահպանության
և Սովետական Հայաստանի հետ հարաբերությունների սեր-
տացման։ Եվ, թեպետ «Հայաստանի օգնության կոմիտե» ան-
վանումը այլևս չէր համապատասխանում այդ կազմակերպու-
թյան էությանը, այնուամենայնիվ, այն շարունակում էր կարևոր
դեր կատարել հայրենիքի հետ սփյուռքահայության կապերի
ամրապնդման ու զարգացման գործում։

[26] Նույն տեղում։

[27] Նույն տեղում, 1935 թ., № 2, էջ 68, տե՛ս նաև «Միություն», շաբաթաթերթ, Հայֆա, 3 փետրվարի, 1946 թ., № 21։

Ուստի անհատի պաշտամունքի շրջանում առաջ եկած կամայականություններով ու Անդրկովկասում ղեկավար դիրքեր գրաված ժողովրդի թշնամի Բերիայի սոոր գործունեությամբ պետք է պայմանավորել ՀՕԿ-ի նման կարևոր դեր խաղացող առաջադիմական մի կազմակերպության լիկվիդացիան 1937 թվականին։ Անհիմն կերպով ՀՕԿ-ը որակվեց որպես օտարերկրյա գործակալությունների ու լրտեսների կազմակերպություն, իսկ նրա ղեկավարները՝ «ժողովրդի թշնամիներ»։ Շինծու մեղադրանքներով ձերբակալվեցին ՀՕԿ-ի ղեկավար շատ գործիչներ։ ՀՍՍՀ ժողկոմխորհի 1937 թ. դեկտեմբերի 3-ի որոշմամբ դադարեցվեց ՀՕԿ-ի գործունեությունը[28]։ Չնայած նման անհիմն ու զրպարտչական պիտակավորմանը, ՀՕԿ-ի շարքերում համախմբված սովետական օրիենտացիա ունեցող սփյուռքահայ աշխատավորները երբեք չկորցրին իրենց հավատը արդարության վերականգնման և մայր հայրենիքի նկատմամբ։ Շատ երկրներում նրանք ստեղծեցին առաջադիմական նոր կազմակերպություններ («Ֆրանսահայ ժողովրդական միություն», «Ամերիկահայ առաջադիմական լիգա» և այլն) և շարունակեցին իրենց պայքարը սփյուռքահայ աշխատավորության ու Սովետական Հայաստանի ամեն գույնի ու երանգի թշնամիների դեմ։

Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ սփյուռքի հայության նյութական ու բարոյական աջակցությունը մեր հայրենիքին, որոշակի իմաստով արդյունք էր նաև նախորդ տարիներին արտասահմանում ՀՕԿ-ի ծավալած հայրենանվեր գործունեության։ ՀՕԿ-ի շարքերում թրծված ու կոփված սփյուռքահայ հայրենասեր աշխատավորներ ակտիվորեն պայքարի ելան մարդկության մեծագույն թշնամու՝ ֆաշիզմի դեմ։ Նրանցից շատերը իրենց կյանքը զոհեցին օտար ափերում, հանուն ազատության ու առաջադիմության, հանուն մայր հայրենիքի անկախության, հանուն սփյուռքահայության փրկության։

Այսպիսով, Հայաստանի օգնության կոմիտեն իր գործունեությամբ որոշակի դրական դեր կատարեց, նպաստելով սոցիալիստական հայրենիքի հետ սփյուռքահայ աշխատավորների կապերի ամրապնդմանը, նրանց սովետական օրիենտացիայով դաստիարակմանը և հայրենադարձության իրականացմանը։

---

[28] Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 178, ց. 1, գ. 939, թ. 2։



### ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

## ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅԵՐԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ 1946—1948/49 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Համաշխարհային երկրորդ պատերազմում Սովետական Միության տարած պատմական հաղթանակից հետո Սովետական Միության կուսակցական ու պետական մարմինները և ողջ Հայաստանի կուսակցական ու պետական մարմինները և ողջ

Հայաստանի կուսակցական ու պետական մարմինները և ողջ աշխատավորությունը, հանրապետության առջև ծառացած սոցիալ-տնտեսական կարևոր խնդիրների լուծման հետ մեկտեղ, մեծ ու լարված աշխատանք կատարեցին նաև օտարության մեջ դեգերող սփյուռքահայության զանգվածային հայրենադարձություն իրականացնելու ուղղությամբ։ Սփյուռքահայերի զանգվածային հայրենադարձության կազմակերպումը, անշուշտ, թելադրվում էր մի շարք հանգամանքներով։

Երկրորդ համաշխարհային պատերազմի դժվարին տարիներին սփյուռքահայ աշխատավորներն ամենուրեք ակտիվորեն հանդես եկան որպես Սովետական Միության և նրա անբաժան մասը կազմող Սովետական Հայաստանի անկեղծ պաշտպաններ։ Նրանք արիաբար մարտնչեցին ֆաշիզմի դեմ ոչ միայն զանգվածաբար զինվորագրվելով մեր դաշնակիցների բանակներում, այլև շատ երկրներում զենքը ձեռքներին հանդես եկան դիմադրական-պարտիզանական շարժման մեջ։ Նրանցից շատերն իրենց կյանքը զոհաբերեցին հանուն ազատության՝ այն հաստատ համոզմամբ, որ դրանով իսկ պաշտպանում են իրենց մայր հայրենիքի և ժողովրդի պատիվն ու անկախությունը։

Այդպես գործեցին Միսաք Մանուշյանն ու Գեղամ Աթմաճյանը, Արփեն Դավթյանն ու Հայկ Դպիրյանը՝ Ֆրանսիայում, Հակոբ Պարոնյանն ու Հերմինե Ռաղգրադլյանը՝ Բուլղարիայում, Անդրանիկ Ղուկասյանն ու Վահրամ Սարքայանը՝ Հունաստա-

նում, բազմաթիվ ուրիշ պայծառ հայորդիներ Հարավսլավիայում, Ռումինիայում և այլուր:

Սիրով արձագանքելով մայր հայրենիքի կոչին, Հայրենական մեծ պատերազմի ամբողջ ընթացքում, սփյուռքահայ աշխատավորները, բոլոր երկրներում անխտիր, հանդես եկան Սովետական Միության պաշտպանության դիրքերում, նրա հերոսական զինված ուժերի հաջողություններով ուրախացողի ու հպարտացողի դերում: Նրանք միաժամանակ նյութական ու բարոյական ամեն տեսակ օգնություն ու աջակցություն կազմակերպեցին մեր երկրին՝ այն դիտելով որպես նաև իրենց իսկական հայրենիքը: Դրա կոնկրետ վկայությունները հանդիսացան սովետական բանակի համար դյուցազնական «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան ստեղծման և այլ նպատակներով դրամների հանգանակումը, հագուստեղենի, դեղորայքի, սննդամթերքի և այլ միջոցների առաքումը մեր երկիր: Այդ ամենը ցույց տվեց, որ սփյուռքահայությունը ջերմորեն համակրում է և անկեղծորեն նվիրված է իր սովետական հայրենիքին: Ահա սա էր այն հիմնական դրդապատճառներից մեկը, որը պատերազմից հետո սովետական կառավարությանը թելադրեց ընդառաջել հայրենասիրաբար տրամադրված սփյուռքահայության հայրենադարձվելու բուռն ցանկություններին և կազմակերպել նոր զանգվածային ներգաղթ:

Սփյուռքահայերի զանգվածային հայրենադարձության մյուս կարևոր դրդապատճառը հանդիսացավ Թուրքիայի կողմից զավթված հայկական հողերի ետ պահանջումը, որը այդ ժամանակ առաջ քաշեց սփյուռքահայությունը, և այն ըմբռնումով ընդունեց ու պաշտպանեց սովետական կառավարությունը:

Ինչպես հայտնի է, երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ և առավել ևս ֆաշիզմի ջախջախումից հետո, սփյուռքահայ գաղթօջախների մեծ մասում հայկական առաջադիմական ուժերը կազմակերպեցին ազգային միասնական ճակատներ, Սովետական Հայաստանի բարեկամների միություններ ու ընկերություններ, հայկական ազգային խորհուրդներ, որոնք առաջ քաշեցին Թուրքիայի կողմից ապօրինաբար զավթված տերիտորիաները Սովետական Հայաստանին վերադարձնելու պահանջը, որպեսզի դրանով իսկ ստեղծվի աշխարհասփյուռ հայությանը իր հայրենիքում համախմբվելու իրական հնարավորություն:



Թուրքիայի կողմից զավթված հայկական տերիտորիաների՝ մասնավորապես Կարսի, Արդվինի, Արդահանի շրջանների ետ պահանջումը կոնկրետ քննարկման առարկա դարձավ 1945 թ. ՍՍՀՄ-ի և Թուրքիայի կառավարությունների միջև, ինչպես նաև դաշնակից երեք մեծ տերությունների ղեկավարների Բեռլինի (Պոտսդամի) կոնֆերանսում (հուլիս—օգոստոս, 1945 թ.)[1]:

1925 թ. դեկտեմբերի 17-ի սովետա-թուրքական բարեկամության և չեզոքության պայմանագրի ժամկետը լրանալու կապակցությամբ, 1945 թ. մարտի 19-ին սովետական կողմը Թուրքիային ծանուցում տվեց նրա դենոնսացիայի մասին: Այդ առթիվ տեղի ունեցան բանակցություններ՝ սկզբում Անկարայում, իսկ ապա Մոսկվայում, որտեղ թուրքական կողմն առաջարկեց կնքել սովետա-թուրքական նոր պայմանագիր: Ի պատասխան դրա, սովետական կառավարությունը պայման դրեց վերանայել և կարգավորել սովետա-թուրքական սահմանը Կարսի, Արդվինի և Արդահանի շրջաններում: Սովետական կառավարությունը հայտարարեց, որ 1921 թ., թուրքերն օգտվելով սովետական պետության թուլությունից, անարդարացի կերպով զավթեցին Սովետական Հայաստանի տերիտորիայի մի մասը: Ինչպես 1945 թ. Պոտսդամի կոնֆերանսի ժամանակ Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի մինիստր Ա. Իդենի հետ ունեցած զրույցում նշել է ՍՍՀՄ արտաքին գործերի ժողկոմ Վ. Մ. Մոլոտովը, դրանից հայերը վիրավորված են, որի համար էլ սովետական կառավարությունը բարձրացրել է օրինական կերպով ՍՍՀՄ-ին պատկանող այդ տերիտորիաները իրենց իսկական տիրոջը վերադարձնելու հարցը: ՍՍՀՄ արտաքին գործերի ժողկոմը միաժամանակ հայտնեց, որ պետք է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ արտասահմանում գտնվում է մեկ միլիոնից ավելի հայ և, երբ այդ հողերը վերադարձվեն Սովետական Հայաստանին ու նրա տերիտորիան ընդարձակվի, շատ սփյուռքահայեր, որոնք ցանկություն են հայտնել վերադառնալ հայրենիք, հնարավորություն կունենան կրկին հաստատվելու իրենց պապենական օջախներում: Դա միանգամայն արդարացի կլինի, ուստի անգլիական կառավարությունը, որը նախկինում բազմիցս հանդես է եկել թուրքական տիրապետության տակ գտնվող հայ

1 Տե՛ս «Советский Союз на международных конференциях периода Великой Отечественной войны (1941—1945 гг.)», сборник документов, т. 6, изд. политической литературы, М., 1980.

բնակչության պաշտպանությամբ, ներկայումս չպետք է զլանա այդ հարցում նրան աջակցել[2]։

Հայկական հողերը Թուրքիայից պահանջելու և տարագիր հայության հայրենադարձությունը կազմակերպելու անհրաժեշտության հարցը սովետական կառավարության առջև որոշակիորեն դրեցին նաև 1945 թ. ամռանը Ամենայն հայոց կաթողիկոսի ընտրությանը մասնակցելու համար սփյուռքահայ գրեթե բոլոր համայնքներից ժամանած աշխարհիկ ու հոգևոր պատգամավորները[3]։

Այդ հարցը քննարկվեց նաև 1947 թ. ապրիլին Նյու Յորքում բացված հայկական համաշխարհային կոնգրեսում, որին մասնակցում էին սփյուռքահայ շատ գաղթօջախների և հասարակական-քաղաքական հոսանքների ու կազմակերպությունների ներկայացուցիչներ։ Քննարկելով ներգաղթի ու հայրենիքի վերաշինության շուրջը բոլոր հայ գաղութների միջև միություն և համագործակցություն ստեղծելու հարցերը, կոնգրեսը որոշեց ավելի զորացնել մշակութային ու հոգևոր կապերը գաղութների ու մայր հայրենիքի միջև և հասարակական նպատակավոր կարծիք ստեղծել հայկական հողային իրավունքների նկատմամբ, հետապնդելով դրանց արդարացի լուծումը Միավորված ազգերի կազմակերպության միջոցով։ Կոնգրեսն ավարտվեց 3 հազար մարդու մասնակցությամբ կայացած մասսայական մեծ միտինգով, որտեղ ընդունված բանաձևում նույնպես խնդիր դրվեց **ՄԱԿ-ի միջոցով հասնել հայկական տերիտորիալ պահանջների բավարարման, որպեսզի հնարավոր լինի կազմակերպել սփյուռքահայերի հայրենադարձությունը**[4]։

Ընդառաջելով սփյուռքահայ առաջադիմական ուժերի արդարացի ցանկություններին, հայկական տերիտորիալ պահանջները ամենայն սրությամբ և հետևողականությամբ առաջ քաշվեց նաև Սովետական Հայաստանի ղեկավարության կողմից։ Թեպետ այդ հարցը քննարկվեց ՄԱԿ-ում, սակայն Թուրքիային հովանավորող արևմտյան տերությունների բռնած բացասական

---

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 39—41։

[3] Տե՛ս «Լրաբեր», երկօրյա թերթ, Նյու Յորք, 8—15 հունվարի, 1946 թ., № 73—76։

[4] Տե՛ս «Էջմիածին», ամսագիր, 1947 թ., մայիս-հունիս, էջ 82—83։



դիրքի հետևանքով հնարավոր չեղավ հասնել դրական արդյունքի։

Այսպիսով, սփյուռքահայերի հետպատերազմյան զանգվածային հայրենադարձության կազմակերպման կարևոր շարժառիթներից մեկն էլ հանդիսացավ Թուրքիայից հայկական տերիտորիաների պահանջումը, որի դրական ընթացքը իրական հնարավորություն կստեղծեր դրանց օրինական տերերի՝ աշխարհով մեկ սփռված տարագիր հայերի հայրենիք վերադառնալու բնական ցանկության իրականացման համար։

Երրորդ կարևոր պատճառը, որը թելադրում էր սովետական կառավարությանը վերսկսել արտասահմանում ապրող հայերի զանգվածային ներգաղթը, մի շարք երկրներում նրանց զգալի մասի տնտեսական ու քաղաքական ծանր կացությունն էր։ Այդ հանգամանքը մի շարք այլ գործոնների հետ միասին պայմանավորված էր նաև երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ առաջադիմական ուժերի հակաֆաշիստական պայքարին սփյուռքահայերի ակտիվ մասնակցությամբ։ Ետպատերազմյան շրջանում շատ երկրներում իշխանության գլուխ անցած ռեակցիոն կառավարությունները խիստ թշնամական ու անհանդուրժողական վերաբերմունք էին դրսևորում հայերի նկատմամբ։ Պատահական չէ, որ սփյուռքի տարբեր անկյուններից ստացվում էին բազմաթիվ դիմումներ, որոնցում թախանձագին խնդրվում էր վերսկսել ներգաղթը, թույլատրել վերադառնալ մայր հայրենիք՝ Սովետական Հայաստան, դրանում տեսնելով իրենց փրկության միակ ուղին։

Ահա թե ինչ էին գրում այդ մասին 1945 թ. հունիսի 18-ին Երևան ուղարկած իրենց դիմումի մեջ մի խումբ հայ երիտասարդներ Սիրիայի Հալեպ քաղաքից։ Ներկայացնելով օտարության մեջ իրենց թշվառ վիճակը, նրանք հայտարարում էին. «...Մենք կպահանջենք՝ հանուն որդիական իրավունքներու, հանուն հայրենաբաղձ զավակներու իղձերու գոհացման արդար հատուցումի՝ հայրենի պետութենեն մեր երազին իրականացումը։ Կպահանջենք, անշուշտ, այնպե՛ս, ինչպես զավակը իր հորմեն։

... Այլապես մենք մահվան եռին հարվածը ստացած կըլլանք արդեն։ Կմեռնի՛նք, հայրենիքի և ուսումի կարոտը մեր

բա՛ց աչքերում։ Այլապես մենք կդառնանք հողմակոծ, մենք կըդառնանք փոշի, մենք կդառնանք անիմա՛ստ»[5]։

Իրենց տանջալից վիճակից փրկությունը նույնպես ներգաղթի մեջ տեսնելով, մի խումբ հունահայեր, որոնք զրկված էին աշխատանքից և վաճառել էին իրենց վերջին ունեցվածքը սովից չմեռնելու համար, 1946 թ. մարտին սովետական կառավարությանը հղած դիմումի մեջ գրում էին. «Այլևս ոչինչ ունինք ծախելու, որպեսզի կարենանք մեր գոյությունը քաշկռտել գոնե մինչև այն ատեն, երբ ներգաղթի կենսատու լույսը վերջ պիտի տա մեր առօրյա տառապանքին»[6]։ Դիմումի հեղինակներն այնուհետև նշում էին, որ հունահայությունը գտնվում է քաղաքական ու տնտեսական խիստ աննպաստ պայմանների մեջ, որովհետև հակաֆաշիստական պայքարին ակտիվորեն մասնակցելու համար հալածվում է իրար հաջորդող ու հանրապետական կառավարությունների կողմից և հունահայ աշխատավորների հանդեպ սաստիկ հակակրանք է առաջացել բոլոր ռեակցիոն շրջանների մեջ[7]։ Հունաստանի տնտեսական ողբալի վիճակը առաջին հերթին առավել ծանր էր անդրադառնում հայ աշխատավորների վրա, որոնք մեծ մասամբ մատնված էին գործազրկության, ինչպես «նանսենյան անձնագրեր» ունեցողները, որոնք կազմում էին հունահայության 95 տոկոսը։ Տնտեսական ու քաղաքական այդպիսի հեղձուցիչ կացության մեջ ընկած հարյուրավոր հայ ընտանիքներ Հունաստանի տարբեր գավառներից եկել, կուտակվել էին Աթենքում և այլ քաղաքներում, հուսալով որևէ աշխատանք գտնել կամ մեկնել հայրենիք, ինչի մասին նրանք բազմիցս դիմել էին տեղի սովետական դեսպանությանը և հայրենի կառավարությանը։ Այդ տագնապալի վիճակը, որը վերաբերում էր ողջ հունահայությանը, շատ ճշմարտացի է ներկայացրել Աթենքի «Նոր կյանք» օրաթերթը իր բազմաթիվ հոդվածներում[8]։

Սակայն հունահայությունը բացառություն չէր կազմում։

5 ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 362, ց. 2, գ. 3, թ. 70—72։

6 Նույն տեղում, գ. 18, թ. 13։

7 Տե՛ս նույն տեղում։

8 Տե՛ս «Նոր կյանք», օրաթերթ, Աթենք, 15 փետրվարի, 1946 թ., № 266 և այլն։



Նման ծանր վիճակում էին գտնվում հայերը նաև Իրանում, Սիրիայում, Լիբանանում, Եգիպտոսում, Իրաքում, Պաղեստինում, Կիպրոսում և այլ երկրներում։

Ահա այս ամենը նկատի առնելով, սովետական կառավարությունը ձեռնարկեց սփյուռքահայերի նոր, զանգվածային հայրենադարձության իրականացումը։

## 1. Սփյուռքահայերի հայրենադարձության նախապատրաստումը

Խորապես մտահոգված լինելով բազմահազար տարագիրների ճակատագրով՝ Սովետական Հայաստանի կուսակցական և պետական ղեկավար մարմինները դիմեցին ՀամԿ(բ)Կ Կենտկոմին և ՍՍՀՄ Ժողկոմխորհին՝ առաջարկելով կազմակերպել սփյուռքահայերի զանգվածային հայրենադարձություն։ Ընդառաջելով արտասահմանի հայության հայրենադարձվելու բուռն ցանկություններին և ՀՍՍՀ ղեկավարության միջնորդությանը, ի նշանավորումն Հայաստանում սովետական իշխանության հաստատման 25-ամյակի, ՍՍՀՄ Ժողովրդական կոմիսարների խորհուրդը 1945 թ. նոյեմբերի 21-ին որոշում ընդունեց սփյուռքահայերի զանգվածային ներգաղթ կազմակերպելու մասին։ Այդ պատմական որոշման մեջ ասված էր. «Ուշադրության առնելով արտասահմանում ապրող հայերի դիմումները նրանց հայրենիք՝ Սովետական Հայաստան վերադառնալու թույլտվության մասին և ՀՍՍՀ ղեկավար մարմինների միջնորդությունը, թույլատրել ՀՍՍՀ Ժողկոմխորհին կազմակերպել արտասահմանյան երկրներում ապրող հայերի վերադարձը, որոնք այդ մասին ցանկություն են հայտնել»[9]։

Ի կատարումն ՍՍՀՄ կառավարության վերոհիշյալ որոշման և ներգաղթի աշխատանքների գործնական իրականացման համար ՀՍՍՀ Ժողկոմխորհը 1945 թ. դեկտեմբերի 8-ին ստեղծեց Ժողկոմխորհին առընթեր արտասահմանից ներգաղթող հայերի ընդունման և տեղավորման կոմիտե, հետևյալ կազմով.

9 ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 326, ց. 1, գ. 74, թ. 1, տե՛ս նաև «Սովետական Հայաստան», օրաթերթ, Երևան, 2 դեկտեմբերի, 1945 թ., № 259։ Քաղվածքը մեջ է բերված ըստ արխիվային փաստաթղթի։



12—1181

պետական-կուսակցական ճանաչված գործիչ Բ. Ա. Աստվածատրյան (նախագահ), ՀՍՍՀ ժողկոմխորհի նախագահի տեղակալ Հ. Հ. Մարջանյան (նախագահի տեղակալ), ժողովրդական նկարիչ Մ. Ս. Սարյան (նախագահի տեղակալ), ՀՍՍՀ արտաքին գործերի ժողկոմ Ս. Կ. Կարապետյան և բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արտ. Ալ. Մելիք-Ադամյան՝ անդամներ[10]։ Մի փոքր անց՝ 1946 թ. հունվարին, կոմիտեի կազմի մեջ մտցվեց նաև ՀՍՍՀ ներքին գործերի ժողկոմ Ի. Ի. Մաթևոսովը[11]։

Հրապարակելով ներգաղթի կոմիտեի ստեղծման մասին ՀՍՍՀ ժողկոմխորհի որոշումը, «Սովետական Հայաստան» թերթն իր 1945 թ. դեկտեմբերի 9-ի համարում «Պատմական որոշում» խորագրով ընդարձակ խմբագրականում գրել է. «Մեր հանրապետության կուսակցական, սովետական և հասարակական կազմակերպությունների առաջ կանգնած է պատասխանատու, ոչ հեշտ, բայց շնորհակալ խնդիր՝ բարձր կազմակերպվածությամբ նախապատրաստել և իրագործել քաղաքական հսկայական կարևորություն ունեցող սովետական կառավարության որոշումը։

Մեր հանրապետության յուրաքանչյուր աշխատավոր, յուրաքանչյուր հայրենասեր պետք է բազմակողմանի օգնություն ցույց տա հայրենիք վերադարձող մեր հայրենակիցներին ընդունելու և տեղավորելու գործին»[12]։

Միաժամանակ կազմակերպվեց ՀՍՍՀ ժողկոմխորհին առընթեր վերաբնակեցման վարչություն (նախագահ՝ Գ. Տ. Գևորգյան) և կատարվեց վերջինիս ու ներգաղթի կոմիտեի ֆունկցիաների սահմանազատում[13]։ Ներգաղթի կոմիտեի խնդիրն էր սփյուռքահայերի հայրենադարձության կազմակերպումը արտասահմանում և նրանց ընդունումը ՍՍՀՄ տերիտորիայում ստեղծված կայաններում (Բաթում, Ջուլֆա և Բաքու), իսկ վերաբնակեցման վարչությանը՝ ներգաղթածների տեղաբաշխումը հանրապետությունում, նրանց բնակարանային ու աշխատանքային

[10] Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 362, ց. 1, գ. 4, թ. 1, նաև՝ «Սովետական Հայաստան», 9 դեկտեմբերի, 1945 թ., № 264։ Հետագայում ներգաղթի կոմիտեի նախագահի տեղակալներ են եղել նաև Վ. Հ. Ծաղիկյանը և Բ. Ա. Ներսիսյանը։

[11] Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 362, ց. 1, գ. 4, թ. 19։

[12] «Սովետական Հայաստան», 9 դեկտեմբերի, 1945 թ., № 264։

[13] Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 362, ց. 1, գ. 15, թ. 40—42։



հարցերի կարգավորումը, նոր ավանների և բնակելի տների կառուցումը։

Շուտով մշակվեց և հաստատվեց ՀՍՍՀ ժողկոմխորհին առընթեր արտասահմանից ներգաղթող հայերի ընդունման և տեղավորման կոմիտեի կանոնադրությունը[14]։

1945 թ. դեկտեմբերի 25-ին ՀՍՍՀ ժողկոմխորհին առընթեր ներգաղթի կոմիտեն սփյուռքահայ առաջադիմական հասարակական-քաղաքական կազմակերպություններին և բարեգործական հաստատություններին հղեց ներգաղթի նախապատրաստման աշխատանքներն սկսելու մասին իր հրահանգ-դիմումը, որը ցնծությամբ ընդունվեց գաղթաշխարհի բոլոր անկյուններում։ Այդ փաստաթղթի մեջ ասվում էր, որ ընդառաջելով տարագիր հայության հայրենիք վերադառնալու բուռն ձգտումներին, ՍՍՀՄ ժողկոմխորհը որոշում է ընդունել թույլատրել նրա ներգաղթը Սովետական Հայաստան։ Միաժամանակ հաղորդվում էր, որ սովետական կառավարությունը ձեռնարկել է ներգաղթողների համար բնակարանային լայն շինարարություն՝ ինչպես պետական, այնպես էլ անհատական միջոցներով։ Ընդորում անհատական կարգով բնակարանային շինարարություն կատարողներին պետության կողմից հատկացվելու էր երկարաժամկետ վարկ՝ կառուցվող բնակելի տան արժեքի 50 տոկոսի չափով կամ քաղաքներում 30 հազար, իսկ գյուղական վայրերում՝ 25 հազար ռուբլու սահմաններում[15]։

Այնուհետև ներգաղթի կոմիտեն նշում էր, որ արտասահմանում գործող հայկական բոլոր առաջադիմական և բարեգործական կազմակերպությունների համար ներկայումս չկա ավելի կարևոր ու պատվավոր խնդիր, քան սփյուռքահայերի հայրենիք վերադառնալու գործի կազմակերպումը, դրան նպաստումը։ Առաջադիմական ու բարեգործական կազմակերպությունների գործունեությունը, ասված էր դիմումի մեջ, որը մինչև այժմ ընթացել է հիմնականում Սովետական Հայաստանի հետ կուլտուրական կապեր պահպանելու ուղղությամբ, այսուհետև պետք է ամբողջովին ենթարկվի ներգաղթի կազմակերպման և հայրենադարձների նյութական ապահովման հարցերին։

[14] Տե՛ս նույն տեղում, թ. 79—80։

[15] Այստեղ և հետագայում բերված գումարների չափերը արտահայտված են այն ժամանակվա դրամական կուրսով։

Ելնելով այս նկատառումներից, ներգաղթի կոմիտեն անհրաժեշտ էր գտնում, որպեսզի այն գաղթօջախներում, որոնցից նախատեսվում էր առաջին հերթին հայրենադարձություն կազմակերպել, անմիջապես ստեղծվեն ներգաղթին աջակցող տեղական կոմիտեներ։ Դրանց հիմնական խնդիրը պետք է լիներ հայրենիք վերադարձողների նյութական ապահովման և տեղերում հայրենադարձության նախապատրաստման հետ կապված բոլոր հարցերի լուծումը։ Այդ կոմիտեները փաստորեն պետք է գործեին ՀՍՍՀ ժողկոմխորհին առընթեր արտասահմանից ներգաղթող հայերի ընդունման և տեղավորման կոմիտեի տեղական մարմինների իրավունքներով։ Ահա թե ինչու խորհուրդ էր տրվում, որպեսզի դրանց գլխավորեին տվյալ գաղութի հայկական առաջադիմական կազմակերպությունների ղեկավարները, մարդիկ, որոնք ֆաշիզմի դեմ մղվող պայքարում ցույց էին տվել իրենց նվիրվածությունը սովետական հայրենիքին, ունեին կազմակերպչական որոշակի ունակություններ և վայելում էին մեծ հեղինակություն։ Ինչպես ցույց տվեց պրակտիկան, այդ կոմիտեները մեծ դեր կատարեցին ներգաղթողների ցուցակագրման, նրանց տարեկրյա քաղաքացիությունից դուրս գալու, փոխադրության կազմակերպման, անհրաժեշտ միջոցների հայթայթման, բացատրական աշխատանքներ տանելու և այլ հարցերում։

Ներգաղթի տեղական կոմիտեների ստեղծումից հետո առաջարկվում էր ձեռնարկել հայրենիք վերադառնալ ցանկացողների ցուցակագրման աշխատանքները, դրանք ավարտելով բատ կարելվույն կարճ ժամկետներում և ցուցակների մեկ օրինակը ուղարկել Երևան, որպեսզի ՀՍՍՀ ժողկոմխորհին առընթեր ներգաղթի կոմիտեն կարողանար պլանավորել իր հետագա անելիքները։

Միաժամանակ նշվում էր, որ բարեգործական և այլ կազմակերպությունների կողմից հօգուտ ներգաղթի հանգանակվող գումարների հաշվին պետք է հոգալ հայրենիք վերադարձող կարիքավոր ընտանիքների հագուստի, փոխադրության, ճանապարհի ննդի ծախսերը և հայրենադարձության հետ կապված մյուս պետքերը։

Ներգաղթողների ցուցակագրման և ընդհանրապես հայրենադարձության նախապատրաստման ընթացքում ծագող բոլոր հարցերում համապատասխան օժանդակություն ստանալու հա-



մար խորհուրդ էր տրվում դիմել տվյալ երկրում սովետական
դեսպանություններին և հյուպատոսություններին։ Դրանց այդ
մասին անհրաժեշտ հրահանգներ էին տրված ՍՍՀՄ արտաքին
գործերի ժողովրդական կոմիսարիատում 1946 թ. սկզբներին
ստեղծված հայրենադարձության հանձնաժողովի կողմից, որը
ՀՍՍՀ կառավարության հետ մեկտեղ ղեկավարում էր սփյուռքա-
հայերի ներգաղթի անշուշտ արտասահմանում իրականաց-
վող գործնական ամբողջ աշխատանքը[16]։ Այդ հանձնաժողովի
կազմի մեջ մտնում էին ՍՍՀՄ արտաքին գործերի մինիստրու-
թյան մերձավորարևելյան բաժնի վարիչ Ի. Վ. Սամիլովսկին
(նախագահ), Գ. Ա. Հովհաննիսյանը (ՀՍՍՀ Մինիստրների խոր-
հրդի ներկայացուցիչ) և Գ. Բ. Հովակիմյանը (ՍՍՀՄ ՊԱՄ
ներկայացուցիչ)[17]։

Սովետական կառավարությունը շատ մեծ ուշադրություն էր
դարձնում սփյուռքահայերի ներգաղթի իրականացման գործին և
բազմիցս անդրադառնում էր նրա նախապատրաստման ըն-
թացքին։ 1946 թ. փետրվարի 22-ին ՍՍՀՄ ժողկոմխորհը ծա-
վալուն որոշում ընդունեց «Արտասահմանից հայերի Սովետա-
կան Հայաստան ներգաղթելու պրակտիկ միջոցառումների մա-
սին»[18]։ Այդ որոշման համաձայն մշակվեցին կոնկրետ հրահանգ-
ներ, որով ղեկավարվելու էին ինչպես ԱԳԺԿ-ի հայրենա-
դարձության հանձնաժողովը, այնպես էլ արտասահմանում
ՍՍՀՄ ներկայացուցչությունները՝ 1946 թ. ներգաղթի պրակտիկ
աշխատանքները նախապատրաստելու և իրականացնելու ժա-
մանակ։ ՍՍՀՄ ներկայացուցչությունների խնդիրն էր նաև բսփ-
յուռքահայ առաջադիմական կազմակերպությունների հետ հա-
մատեղ ներգաղթին աջակցող տեղական կոմիտեների ստեղծու-
մը և նրանց գործունեությանը անհրաժեշտ ուղղություն տալը։
Հայրենադարձությունը նախապատրաստելու, մասնավորա-
պես համապատասխան կոնտինգենտի ընտրության համար Բուլ-
ղարիա, Ռումինիա, Հունաստան, Սիրիա, Լիբանան և Իրան գոր-
ծուղվեցին ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի երկուական ներկայա-
ցուցիչներ, իսկ այդ երկրների ՍՍՀՄ դեսպանություններում (մի-
սիաներում) առանձնացվեցին երկուական պատասխանատու աշ-

[16] Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 362, ց. 2, գ. 2, թ. 5 և գ. 6, թ. 2—4։

[17] Տե՛ս նույն տեղում, ֆ. 326, ց. 1, գ. 145, թ. 1։

[18] Տե՛ս նույն տեղում, ֆ. 362, ց. 2, գ. 20, թ. 1—8։

խատակիցներ՝ խորհրդականներ կամ առաջին քարտուղարներ և հյուպատոսական բաժնի վարիչներ։

ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի վերոհիշյալ որոշմամբ, այսպիսով, 1946 թ. նախատեսված ներգաղթի իրականացման ամբողջ պատասխանատվությունը դրվեց սովետական ներկայացուցչությունների և ՀՍՍՀ Ժողկոմխորհի վրա։ Սովետական ներկայացուցչություններին հանձնարարվեց վերը նշված երկրների արտաքին գործերի մինիստրությունների առջև հարց հարուցել հայերի ներգաղթին աջակցելու, նրանց հպատակության փոփոխության, շարժական ու անշարժ գույքի տնօրինման և այլ հարցերում դյուրություններ ստեղծելու կապակցությամբ[19]։

Հանրապետության կուսակցական և պետական մարմինները մեծ կարևորություն էին տալիս և ամենայն լրջությամբ նախապատրաստվում սփյուռքահայության զանգվածային հայրենադարձության իրականացմանը։ Ահա թե ինչու 1946 թ. փետրվարին ՀԿ(բ)Կ Կենտկոմի հերթական պլենումը հատուկ քննարկեց «Արտասահմանյան երկրներից վերադարձող հայերի ընդունումը և տեղավորումը նախապատրաստելու միջոցառումների մասին» ՀՍՍՀ Ժողկոմխորհի նախագահ Ա. Ս. Սարգսյանի զեկուցումը[20]։

Սփյուռքահայերի նոր, զանգվածային հայրենադարձությունը թույլատրելու վերաբերյալ ՍՍՀՄ Ժողկոմխորհի որոշումը ՀԿ(բ)Կ Կենտկոմի պլենումը գնահատեց որպես հսկայական քաղաքական կարևորություն ունեցող ակտ, որպես Սովետական Հայաստանի և ամբողջ հայ ժողովրդի նկատմամբ մեծ ուշադրության ու հոգատարության կոնկրետ արտահայտություն[21]։ Պլենումը արձանագրեց, որ ՍՍՀՄ կառավարության այդ պատմական որոշման կենսագործումը, արտասահմանյան մի շարք երկրներից մեծ թվով հայրենադարձների ընդունումը, տեղավորումը և աշխատանքով ապահովումը պետք է լինի հանրապետության կուսակցական, սովետական ու տնտեսական կազմակերպությունների առջև կանգնած կարևորագույն և առաջնահերթ խնդիրներից մեկը։ Պլենումը գտավ, որ արտասահմանից վերադարձող

[19] Տե՛ս նույն տեղում, ֆ. 326, ց. 1, գ. 117, թ. 1—5։

[20] Տե՛ս ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 1, ց. 35, գ. 1, թ. 111—161, նաև՝ «ՀԿԿ պատմության ուրվագծեր», էջ 568։

[21] Տե՛ս ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 1, ց. 35, գ. 3, թ. 26—32։



հայերին ընդունելու և բնակարաններով ու աշխատանքով ապահովելու գործում պետք է անմիջականորեն ամենագործուն մասնակցություն ունենան բոլոր կուսակցական, սովետական, հասարակական կազմակերպությունները, արդյունաբերական ձեռնարկությունները, կոլտնտեսությունները, սովխոզները և հանրապետության բոլոր աշխատավորները։ Պլենումը այդ գործը ուղղակի հայտարարեց համաժողովրդական հայրենասիրական կարևոր միջոցառում։ ՀԿ(բ)Կ Կենտկոմի պլենումը հանրապետության կուսակցական, սովետական և տնտեսական մարմինների առջև խնդիր դրեց ծավալել բնակարանային լայն շինարարություն, առանձնացնել ֆինանսական ու նյութական անհրաժեշտ միջոցներ՝ հայրենադարձների կենցաղային և կուլտուրական կարիքները հոգալու համար։

Սփյուռքահայերի զանգվածային հայրենադարձության վերաբերյալ սովետական կառավարության որոշումը անհուն գոհունակությամբ և մեծ ոգևորությամբ ընդունեց համայն հայությունը ինչպես հայրենիքում, այնպես էլ սփյուռքում։ Այդ առթիվ սովետական կառավարությանն ուղղված շնորհակալական ջերմ խոսքով և սփյուռքահայ տարագիրներին հասցեագրված ողջույններով հանդես եկան մեր մտավորականության անվանի դեմքեր Ավ. Իսահակյանը, Դ. Դեմիրճյանը, Հր. Աճառյանը, Մ. Սարյանը, Ա. Խաչատրյանը, Ա. Սարգսյանը, բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության բազմաթիվ ներկայացուցիչներ։

Հայ գրականության ճանաչված նահապետ Ավետիք Իսահակյանը «Բարի գալուստ թանկագին հարազատներին» վերնագրով իր ողջույնի խոսքում այդ առթիվ գրեց. «Արտասահմանից հայերի Սովետական Հայաստան վերադառնալու մասին ՍՍՀՄ Ժողկոմխորհի որոշումը մեր բոլորի սրտերը լցնում է շատ մեծ ուրախությամբ։ Անվերապահ խնդությամբ ողջունում ենք այս նշանակալից ակտը։ Ոչ մի ազնիվ հայ, բացի ցնծագին գնահատականից, ուրիշ վերաբերմունք չի կարող ունենալ այս որոշման հանդեպ»[22]։ Մեծ գրողը սրտի ցավով արձանագրում էր, որ բռնությունների, կոտորածների և հայրենիքից վտարումների հետևանքով հայ ժողովրդի կեսը հարկադրված է եղել ցրվել աշխարհով մեկ, սակայն ոչ մի թշնամական ուժ

[22] «Սովետական Հայաստան», 4 դեկտեմբերի, 1945 թ., № 260։

չի կարողացել մեռցնել նրա ազգային միասնության զգացումը, հանգցնել նրա սերն ու կարոտը դեպի հայրենի երկիրը և վերստին հայրենիքում հավաքվելու ձգտումը։ Գաղութահայության հայրենաբաղձ հայացքները միշտ ուղղված են եղել Սովետական Հայաստանին, ուր ապրում և աշխատում են իր արյունակից եղբայրներն ու քույրերը։ Թափառական հայ բազմությունների անպարտելի տենչանքն է օր առաջ թողնել օտար երկրները, ուր մաշվում է նրանց կյանքը և գալ հայրենիք, միանալ իրենց եղբայրներին, միասին աշխատել ու կառուցել և իմաստավորել իրենց վաստակը միահամուռ ջանքերով ծաղկող հայրենիքում։ «Մեր վերադարձող եղբայրների սիրակարոտ զգացմունքներին, մենք՝ Սովետական Հայաստանի հայերս,— այնուհետև գրում էր Ավ. Իսահակյանը,— կդիմավորենք նույն եղբայրակարոտ զգացմունքներով։ Դաժան ճակատագրով իրարից բաժանված քույրեր և եղբայրներ, որ կռվել ենք զանազան ճակատներում մեր թշնամիների դեմ, մեր ընդհանուր նպատակի համար՝ հայրենիքի և ազատության, ազգային և մարդկային միևնույն իդեալների, այսօր երկու իրավատեր հարազատներ գրկաբաց փարվում ենք իրար ազատագրված հայերի տան մեջ»[23]։

Բազմավաստակ վիպասան Դերենիկ Դեմիրճյանն իր խոսքում գրեց. «Հայրենազուրկ հայությունը հայրենիք է վերադառնում։ Դա ամենաբնական գործն է։ ... Նա պիտի ապրի իր հայրենիքում, ջանա, ստեղծագործի իր սեփական տանը։ Այստեղ միայն իմաստ ունի նրա կյանքը։ Միայն Սովետական Հայաստանի բախտի հետ կարող է կապել իր կյանքն ու հույսերը համայն հայությունը։ ... Թող գա տուն և ծաղկի տարագիր հայությունը»[24]։

Ավելի քան երկու տասնամյակ առաջ հայրենիքում տարագրության ցուպը դեն նետած ականավոր լեզվաբան Հրաչյա Աճառյանը, հայրենադարձության առթիվ դիմելով սփյուռքահայերին, գրում է. «Այն օրից, երբ տաճկական յաթաղանից հազիվ ազատված, ձեր սիրտն արյունով և ձեր աչքերը արցունքով լցված հայրենի տան ծխացող կրակներից փախաք՝ ապաստան որոնելու օտար աստղերի տակ,— սպասում էինք ձեզ։ ... Դուք չմոռացաք ձեր երկիրը, ձեր մարմնական վերքերը բուժվեցին, բայց ձեր ոգին չբուժվեց. դուք միշտ հիշում էիք հայրենի երկիրը։ ....Ձեր սրտի իղձը կատարվեց. դուք իրավունք և արտոնություն ստացաք հայրենիք վերադառնալու։ Մեր սրտերը հույզերով, մեր աչքերը լույսերով, մեր հոգիները անձկալի կարոտով ու մեր ձեռքերը ծաղկի պսակներով լցված, սպասում ենք ձեզ»[25]։

Ֆրանսահայ մշակութային ու հասարակական անվանի գործիչ Արշակ Չոպանյանը, արձագանքելով իր հայրենի գրչեղբայրների խոսքին և անդրադառնալով հայ տարագիրների նկատմամբ սովետական կառավարության ուշադրությանն ու հոգատարությանը, գրեց. «Խորհրդային Հայաստանը մեր մեկ հատիկ կենդանի հայրենիքն է, մեր մայրն է. մայր մը խորթություն չի ըներ իր զավակներուն միջև. կսպասենք ուրեմն ու կհուսանք, որ ան ամենուս հանդեպ վարվի մայրաբար»[26]։

Սփյուռքահայերի հայրենադարձության վերաբերյալ որոշումը հայրենասիրական մեծ վերելք առաջ բերեց հանրապետության աշխատավորության մեջ։ Արդյունաբերական ձեռնարկություններում, կոլտնտեսություններում, սովխոզներում, ուսումնական ու գիտական հիմնարկներում տեղի էին ունենում աշխատավորների միտինգներ, որոնցում գոհունակություն էր հայտնվում այդ առթիվ։ 1946 թ. ապրիլի սկզբին Արտաշատի շրջանի կոլտնտեսականները, բանվորներն ու ծառայողները հատուկ կոչով դիմեցին հանրապետության բոլոր աշխատավորներին՝ առաջարկելով ամեն ինչով աջակցել ներգաղթին։ Այդ կոչի մեջ նրանք գրում էին. «Մենք, Արտաշատի շրջանի աշխատավորներս, որոշել ենք ստեղծել արտասահմանից վերադարձող հայերի տեղավորմանը օգնելու ֆոնդ, այդ նպատակով տալով բանվորների ու ծառայողների 4—5 օրվա աշխատավարձը և յուրաքանչյուր աշխատունակ կոլտնտեսականի խնայողություններից որոշ գումար։ ...Մենք արդեն հավաքել ենք ավելի քան մեկ միլիոն ռուբլի և շրջանի 44 գյուղերում ու շրջկենտրոնում առանձնացրել ենք 569 սենյակ՝ վերադարձող հայերին տեղավորելու համար, սկսել ենք 186 նոր բնակարանի շինարարությունը։ Մենք՝ արտաշատցիներս կոչ ենք անում մեր հանրա-

[23] Նույն տեղում։
[24] Նույն տեղում։



[25] Նույն տեղում։
[26] «Անահիտ», հանդես, Փարիզ, հուլիս-դեկտեմբեր, 1946 թ., № 5—6, էջ 58։

պետության բոլոր աշխատավորներին, բանվորներին, ծառայողներին, կոլտնտեսականներին, մտավորականությանը, հետևել մեր օրինակին...»[27]։

Արտաշատցիները այնուհետև վստահություն էին հայտնում, որ հանրապետության ոչ մի աշխատավոր հեռու չի մնա հայրենասիրական այդ մեծ գործից և ամեն ինչ կանի տարագիր հայության հայրենադարձությունը հաջողությամբ իրականացնելու համար։

Եվ իրոք, Սովետական Հայաստանի բոլոր շրջաններում ու քաղաքներում արագորեն ծավալվեց հայրենասիրական լայն շարժում՝ հայրենադարձների համար բնակարաններ առանձնացնելու, նրանց համար տներ կառուցելու և նյութական ու դրամական միջոցներ կուտակելու ուղղությամբ։ Ահա այդ մասին վկայող մի քանի կոնկրետ փաստեր։ Հայրենադարձության ֆոնդի օգտին Սիսիանի շրջանում մեկ օրվա՝ 1946 թ. ապրիլի 5-ի հատկացումների գումարը կազմեց 700 հազար, Երևանի Լենինյան շրջանի միայն 12 արդյունաբերական ձեռնարկությունների կոլեկտիվների բանվոր-ծառայողները տրամադրեցին 630 հազար[28], Բասարգեչարի շրջանի աշխատավորները՝ 300 հազար ռուբլի[29] և այլն։ Մայրաքաղաքի շինարարները պարտավորվեցին իրենց միջոցներով հայրենադարձների համար կառուցել 500 նոր բնակարան, իսկ Կոտայքի (այժմ՝ Աբովյանի) շրջանի աշխատավորները հատկացրին 350 հազար[30], Ստեփանավանի շրջանի կոլտնտեսականները՝ կես միլիոն, բանվոր-ծառայողները՝ 150 հազար, Հոկտեմբերյանի աշխատավորները՝ 850 հազար[31], լենինականցիները՝ 1 միլիոն 22 հազար ռուբլի[32]։ Այդպես էր պատկերը նաև հանրապետության մյուս շրջաններում ու քաղաքներում։ Ջերմորեն պաշտպանելով արտաշատցիների հայրենասիրական նախաձեռնությունը, հանրապետության բանվոր դասակարգը, կոլտնտեսային գյուղացիությունը, գիտության ու արվեստի մշակները, սովետական ծառայողները իրենց խնայո-

[27] «Սովետական Հայաստան», 5 ապրիլի, 1946 թ., № 81։

[28] Տե՛ս նույն տեղում, 7 ապրիլի, 1946 թ., № 83։

[29] Տե՛ս նույն տեղում, 6 ապրիլի, 1946 թ., № 82։

[30] Տե՛ս նույն տեղում, 7 ապրիլի, 1946 թ., № 83։

[31] Տե՛ս նույն տեղում, 9 ապրիլի, 1946 թ., № 84։

[32] Տե՛ս նույն տեղում, 10 ապրիլի, 1946 թ., № 85։



ղություններից սիրով հատկացումներ էին կատարում հայրենադարձության ֆոնդի օգտին։

Հայրենադարձությանն աջակցելու գործում միանգամայն խրախուսելի դիրքորոշում ցուցաբերեց նաև Էջմիածնի Ամենայն հայոց կաթողիկոսությունը։ Սովետական կառավարության վերոհիշյալ որոշումը հայ առաքելական եկեղեցին ողջունեց սրտանց, խորին երախտագիտության անկեղծ զգացմունքով։ Մայր աթոռի օրգան «Էջմիածին» ամսագիրը, հայրենադարձությունը համարելով ազգահավաքման կարևորագույն միջոց, գրեց. «Վերջապես իրականանում է սփյուռքի ցիրուցան հայության նվիրական իղձը, նրա վեհ տենչը՝ համախմբվել իր ազատագրված պապենական օջախի շուրջը և իր հարազատ եղբայրների հետ ձեռք-ձեռքի տված լծվել նրա վերելքին, ապրել նրա բարձր ազգային կուլտուրայով»[33]։ Կաթողիկոսական տեղապահ Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանը այդ առթիվ արտասահմանյան հայկական եկեղեցական թեմերի առաջնորդներին հղած կոնդակներում և ուղերձներում կոչ արեց գործարար կերպով օգնել ներգաղթի տեղական կոմիտեներին՝ հայրենադարձության նվիրական գործը կազմակերպված ձևով և հաջողությամբ իրականացնելու համար։

Հայրենիքի ջերմ ու հոգատար վերաբերմունքը աննախընթաց խանդավառության ու հայրենասիրության ալիք առաջ բերեց սփյուռքահայ բոլոր գաղթօջախներում։ Այդ առթիվ կայացած բազմաթիվ միտինգներում ու ժողովներում ընդունված բանաձևերում, անհատ ու կոլեկտիվ նամակներում և հեռագրերում սփյուռքահայ աշխատավորները խորին երախտագիտություն էին հայտնում սովետական կառավարությանը՝ օտարության մեջ դժնդակ պայմաններում տառապող, քաղաքական ու քաղաքացիական ամենատարրական իրավունքներից զուրկ հայությանը փրկության ձեռք մեկնելու և հայ ժողովրդի ազգային վերամիավորման բաղձանքը իրականացնելու համար։

Հայրենադարձության մասին սովետական կառավարության որոշումը առաջին ողջունողներից մեկը եղավ Իրանի Ղազվին քաղաքի հայությունը։ 1945 թ. դեկտեմբերի 9-ին Երևանում ստացվեց ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության և Ժողկոմխորհի հասցեով Ղազվինի հայերի դեկտեմբերի 6-ին

[33] «Էջմիածին», ամսագիր, 1946 թ., հունվար-փետրվար, էջ 9։

կայացած միտինգում 300 հայ ընտանիքների անունից ընդունված հեռագիրը, ուր անկեղծ գոհունակություն էր հայտնվում ներգաղթի թույլատրման առթիվ[34]։

Անդրադառնալով ներգաղթի վերաբերյալ սովետական կառավարության որոշմանը, հեռավոր Ամերիկայից գրում էին. «Այս մեծ ավետիսը էլեկտրականացուց բովանդակ հայությունը։ Մեր պատմական և պատվական երազը իրականացած է այլևս։ Այս արևափառ իրականության ի տես մեր աչքերը ցնծության արցունքներով լեցվեցան, մեր սրտերը տրոփանուշ սարսուռներով փղձկեցան և մեր վտարանդի հոգիները սկսան բոցավառվիլ»[35]։ Այնուհետև նշվում էր, որ հայը երկար ու ձիգ հարյուրամյակներ անգթաբար ստիպված էր հեռանալ «իր հայրենիքեն պանդխտության երկաթե ցուպը ձեռքը՝ թափառելով անհայրենիք՝ հյուսիսեն դեպի հարավ, արևելքեն դեպի արևմուտք, ապահովության և ազատության ի խնդիր»։ Սակայն «հայ գաղութներու ճակատագիրը ամենուրեք եղած է դժնդակ, անողոք և մռայլ, ինչպես Ճենովայի, Լեհաստանի, Հունգարիո, Ռումինիո և այլ գաղութները պատմության թատերաբեմին վրա եկան ու գացին իրենց ետին թողնելով հազիվ ցուրտ տապանաքարեր միայն»։ Իսկ այժմ, ներգաղթի վերաբերյալ սովետական կառավարության կայացրած որոշմամբ, «հայկական գաղթականական կարքին անիվը վերջապես հետաշրջեցավ միանգամայն ընդմիշտ։ Հայը այլևս օտարութենեն դեպի մայր հայրենիք կըվերադառնա։ Արդարև, ինչ լուսավոր և աննախընթաց դարաշրջան, զոր կպարտինք խ. Հայաստանի կառավարության իմաստուն ղեկավարներուն և ռուս մեծ ազգին անշեղ բարեկամության։ Փառք ու պատիվ անոնց, որոնք երկնեցին այս երանավետ օրը»[36]։

Արտահայտելով սփյուռքահայերի իղձերն ու ցանկությունները, բուլղարահայ «Երևան» առաջադիմական թերթը գրում էր. «Սովետական կարգերի շնորհիվ հայ ժողովրդի համար փակվեցավ արտագաղթի և պանդխտության ողբալի շրջանը և սկսավ վերադարձը դեպի մայր Հայաստանի խանդակաթ գիրկը։ Տեսնելե հետո սույն պայծառ իրողությունը, ամեն ողջամիտ հայու ու-

34 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 362, ց. 1, գ. 4, թ. 6—7։

35 Նույն տեղում, ց. 2, գ. 9, թ. 97—98։

36 Նույն տեղում։



րիշ բան չի մնար ընել, եթե անվերապահ համակրությամբ ողջունել Հայաստանի կառավարության վարած քաղաքականությունը, որը հայ ազգային քաղաքականությունն է։ Ճշմարիտ հայրենասիրությունը այս կպահանջե։ Տարբեր վերաբերում՝ կնշանակե դեմ երթալ հայկական շահերուն»[37]։

1945 թ. դեկտեմբերի 18-ին Պլովդիվից «Սևան» կոչկակարական արտելի վարչությունը ՀՍՍՀ ժողկոմխորհին առընթեր ներգաղթի կոմիտեին գրում էր, թե բուլղարահայությունը անսահման հրճվանքով տեղեկացավ հայրենադարձության մասին սովետական կառավարության որոշմանը, որը «գալիս է վերջ դնելու գաղթականի ու օտարականի անարգ մակդիրի տակ տվայտող հայերի աստանդական, անորոշ վիճակին ու միաժամանակ գոհացում տալիս նրանց հայրենատռչոր սրտերի հայրենակարոտ պապակին»[38]։ Հայրենիք վերադառնալու շարժումը բուլղարահայ գաղթօջախում այնքան լայն թափ էր ստացել, որ արդեն մինչև 1946 թ. մայիսը ներգաղթելու համար ցուցակագրվել էր 3256 ընտանիք կամ 11532 մարդ, և այդ թիվը շարունակում էր աճել[39]։

Սովետական Հայաստան կատարված նախորդ ներգաղթից արդեն անցել էր շուրջ մեկ տասնամյակ և սփյուռքահայ զանգվածներին այն մի տեսակ հեռու և անիրականանալի երազ էր թվում։ Այժմ ահա այն նորից շոշափելի իրականություն էր դառնում և ոտքի հանում համայն սփյուռքահայությանը։ Անդրադառնալով վերսկսվող հայրենադարձությանը, Ալեքսանդրիայում հրատարակվող «Արաքս» շաբաթաթերթը գրում էր. «...Ներգաղթի խնդիրը այլևս իրականություն դարձած է, և այդ մասին պաշտոնական հրահանգը արդեն հասած է արտասահման և մոտ է այն օրը, որ սփյուռքի հայությունը պիտի վերադառնա իր մայր հայրենիքը և ձեռք ձեռքի տված Հայաստանի մեր եղբայրներուն հետ, պիտի շենցնեն ու ծաղկեցնեն հայուն պատմական հայրենիքը»[40]։

Ներգաղթ թույլատրելու վերաբերյալ սովետական կառավարության որոշման հրապարակումից կարճ ժամանակ անց, ար-

37 «Երևան», եռօրյա թերթ, Սոֆիա, 2 փետրվարի, 1946 թ., № 21։

38 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 362, ց. 2, գ. 14, թ. 44—46։

39 Տե՛ս նույն տեղում։

40 «Արաքս», շաբաթաթերթ, Ալեքսանդրիա, 9 փետրվարի, 1946 թ., № 5։

դեն 1946 թ. փետրվարին, հայրենիք վերադառնալու ցանկություն էին հայտնել ավելի քան 130 հազար հայեր, այդ թվում՝ Սիրիայում և Լիբանանում՝ 50 հազար, Հարավային Ամերիկայի գաղթօջախներում՝ 32 հազար, Իրանում՝ 21 հազար, Թուրքիայում՝ 19 հազար, Հունաստանում՝ 8 հազար մարդ[41]։

Դիմում էին թե՛ անհատորեն, թե՛ խմբերով՝ ամբողջ արտելներով ու հայրենակցական միությունններով։ Բոլորը միաբերան խնդրում էին որքան հնարավոր է արագացնել հայրենադարձության վերսկսումը։ Ահա թե ինչ էր գրում Իրանից Հրանտ Համբարձումյանը Երևան ուղարկած իր դիմումի մեջ. «Բառեր չեմ գտնում հայտնելու մեր անսահման շնորհակալությունը ձեզ՝ Սովետական Հայաստանի ղեկավարներից, որ ի կատար ածեցիք մեր դարավոր երազը՝ դառնալ դեպի հայրենիք։ Երջանիկ ենք մենք և անհամբեր... խնդրում ենք արագացրեք ներգաղթը...»[42]։

Բեյրութի ֆրանսիական համալսարանի շուրջ 50 հայ ուսանողներ, ցնծությամբ տեղեկանալով հայրենադարձության վերսկսման մասին, նամակով դիմեցին ՀՍՍՀ Ժողկոմխորհին առընթեր ներգաղթի կոմիտեին, խնդրելով իրենց առաջին հերթին հայրենիք վերադառնալու հնարավորություն տալ, «...որպեսզի մեր ջանքերը միացուցած մեր բախտավոր եղբայրներու աշխատանքներուն, հաճույքով և անձնվիրությամբ կատարենք Սովետ Հայաստանի մշակութային ու գիտական ապագայի կերտումը»[43]։

Նույնպես հուզիչ է Բեյրութի ամերիկյան համալսարանի 41 հայ ուսանողուհիների դիմումը՝ ուղղված ներգաղթի կոմիտեին, ուր նրանք գրում էին. «Լացին մեր հոգիները հաճախ ու մնացին հայ հողին, հայ գիրքին, հայ պատմության կարոտով, և սակայն քաղցր հույս մը, երջանիկ օր մը անոնց մոտ ըլլալու հույսը, տվավ տոկալու կորով մեզի։ Սպասեցինք քաղցրաշունչ կանչի մը, հայրենիքի կանչին, և ահա լսեցինք այդ շատ սիրելի, երազված կոչը։ Եվ հիմա կբոցավառի մեր մեջ խանդավառությունը շուտով մեր քույրերուն միանալու։ Կուզենք քալել մեր հայրենիքի ճամբաներեն, քսանհինգ տարվան անոր մեծաքանչ

---

[41] Տե՛ս ՄԼԻ ՀՄԳԱ, ֆ. 1, ց. 35, գ. 1, թ. 113—114։

[42] ՀՍՍՀ ՀՀՄԾ ՊԿԱ, ֆ. 362, ց. 2, գ. 17, թ. 15—16։

[43] «Արարատ», օրաթերթ, Բեյրութ, 8 փետրվարի, 1946 թ., № 1475։



վերելքին դրոշմած հպարտությունը մեր ճակատներուն, և մոռանալ, մոռանալ մեր կրած անտիրական հալածանքը»[44]։

Ամերիկահայ ազգային խորհրդին կից հայերի ներգաղթի օգնության հանձնախումբը հայրենակիցներին ուղղված իր կոչերից մեկում գրում էր. «Դե՛պի երկիր, խորհրդային Հայաստան, երկիր դրախտավայր։

Ի՜նչ անուշ և ի՜նչ հոգեպարար շեշտ մը կա այդ խոսքին մեջ։ Այդ հայրենավանդ խոսքը Երևանի արևափառ երկինքեն մեզի կուգա ծավալվելով հորիզոնե հորիզոն, հույսի և լույսի սարսուռներով ալեցուն։

Դարերով աղոթեցինք, դարերով երազեցինք և դարերով երգեցինք այս նվիրական օրը։ Մեր հայրերը անցյալին մեջ, մեր քույրերն ու եղբայրները դեռ երեկ այս երանավետ օրվան համար ողջակիզվեցան և զոհաբերվեցան հավատքի կայծը իրենց հոգիին խորը և հույսի ժպիտը իրենց շուրթերուն վրա։

Ներգաղթը ՀԽՍՀ կառավարության պատմական մեկ որոշումն է, որ թե՛ խորհրդային Հայաստանի մեջ և թե՛ սփյուռքի հայերուն վտարանդի հոգիները անհուն խանդավառությամբ կբոցավառե։ Ներգաղթի շարժումը արտասահմանի մեջ օվկիանոսի հոսանքներուն պես կտարածվի ալիք ալիք։ Բովանդակ արտասահմանի հայ գաղութը ոտքի ելած է դեպի երկիր»[45]։

ՀՍՍՀ Ժողկոմխորհին առընթեր արտասահմանից ներգաղթող հայերի ընդունման և տեղավորման կոմիտեի հրահանգների հիման վրա շուտով սփյուռքահայ գաղթօջախներում ստեղծվեցին ներգաղթի տեղական կոմիտեներ, որոնք և ձեռնամուխ եղան նախապատրաստական աշխատանքներին և հայրենիք վերադառնալ ցանկացողների ցուցակագրմանը։ Ներգաղթին աջակցող տեղական առաջին կոմիտեներից մեկը կազմակերպվեց Սիրիա-Լիբանանում։ 1946 թ. փետրվարի 16-ին Բեյրույթից Երևան՝ ՀՍՍՀ Ժողկոմխորհին առընթեր ներգաղթի կոմիտեին ուղարկված նամակում հայտնվում էր, որ «Սովետ Հայաստանի Լիբանանի բարեկամներու ընկերության և Սուրիո ու Լիբանանի հայ ազգային խորհուրդներու նախագահներուն ուղղած 25/12—1945 թվակիր ձեր նամակը ստացված է և հրատարակված Սուրիո և Լիբանանի հայկական մամուլին մեջ»։ Այդ նամակի հրա-

---

[44] «Զարթոնք», օրաթերթ, Բեյրութ, 8 փետրվարի, 1946 թ., № 2730։

[45] ՀՍՍՀ ՀՀՄԾ ՊԿԱ, ֆ. 362, ց. 2, գ. 9, թ. 66—67։

հանգներին համապատասխան կազմվել է ներգաղթի կենտկոմ, «որուն մաս կկազմեն առաջադիմական կազմակերպությանց և միությանց ղեկավար անդամները»[46]։ Սիրիայի և Լիբանանի ներգաղթի կենտկոմի կազմի մեջ մտնում էին Մկրտիչ Մսըրլյանը (պատվավոր նախագահ), Հրանտ Դևեճյանը (նախագահ), Հրաչ Սեդրակյանը (Ա քարտուղար), Վահրիճ Ճերեճյանը (Բ քարտուղար), Բագրատ Պագալյանը (գանձապահ), Եփրեմ Էլլեզյանը, Գևորգ Պապոյանը, Ադամ Մանվելյանը, Լևոն Ալթունյանը, Հարություն Չլլաքյանը, Հովսեփ Եողղատլյանը, Հարություն Պեղճյանը՝ խորհրդականներ։ Հետագայում այդ կազմի մեջ որոշ փոփոխություններ եղան ոմանց հայրենիք մեկնելու կամ ոմանց հրաժարվելու պատճառով։ Մ. Մսըրլյանի փոխարեն կոմիտեի պատվո նախագահ դարձավ Բ. Պագալյանը[47], անդամներ՝ Հակոբ Թրյանցը, Հայկաշեն Ուզունյանը, Նահապետ Նահապետյանը, Արմենակ Փոլատյանը, Արմեն Ղարիպյանը, Խաչատուր Փիլավճյանը, Հարություն (Արթին) Մատեյանը և ուրիշներ[48]։

Ներգաղթի տեղական կոմիտեներ ստեղծվեցին նաև Դամասկոսում և Հալեպում։ Դամասկոսի կոմիտեն կազմվել էր 1946 թ. փետրվարի 10-ին, հետևյալ կազմով. Հրանտ Գրիգորյան՝ նախագահ, Ավագ Ջերչենյան՝ փոխնախագահ, Հարություն Մատեյան՝ Ա քարտուղար, Լևոն Փաթուզյան՝ Բ քարտուղար, Ավետիս Եազուպյան՝ գանձապահ, Պողոս Պեշիրյան, Հովհաննես Սիմոնյան և Մեսրոպ Մեսրոպյան՝ հաշվեքննիչներ, Հովհաննես Մաճառյան, Գրիգոր Հարությունյան, Հայկ Ջեպեյան, Նուպար Նաճարյան և Երվանդ Մարգարյան՝ խորհրդականներ[49]։ Դամասկոսում ներգաղթի նախապատրաստական աշխատանքներին զգալի չափով նպաստում էին նաև կոմիտեին կից ստեղծված պրոպագանդայի, հպատակության փոփոխության, հանգանակիչ, արդյունաբերական, կալվածական, առողջապահական, փոխադրական, գեղարվեստական և այլ հանձնախմբերը, որոնցից յուրաքանչյուրը ղեկավարվում էր կոմիտեի մեկ անդամի կող-

46 Տե՛ս նույն տեղում, գ. 4, թ. 13։
47 Տե՛ս Զ. Մսըրլյան, Մկրտիչ Մսըրլյանի ազգային-քաղաքական գործունեությունը, էջ 314։
48 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 362, ց. 2, գ. 4, թ. 13 և 66, գ. 30, թ. 76, գ. 32, թ. 46։
49 Տե՛ս նույն տեղում, գ. 4, թ. 57։



մից։ Այդ հանձնախմբերում ակտիվ աշխատանք էին կատարում Ճեպեճյանը, Ինճեյանը, Մարգարյանը, Մեհրաբյանը, Գոճայանը և ուրիշներ[50]։ 1946 թ. փետրվարի 10-ին կազմվում է նաև Հալեպի և շրջակայքի հայերի ներգաղթի կոմիտեն, հետևյալ կազմով. Արշակ Գալեմքեարյան՝ Ա ատենապետ, Ահարոն Խաչատուրյան՝ Բ ատենապետ, Ավետիս Տեր-Սահակյան՝ Ա ատենադպիր, Հարություն Մախյան՝ Բ ատենադպիր, Խաչիկ Թուխմանյան՝ Գ ատենադպիր, Հակոբ Ներսոյան՝ հաշվակալ, Գուրգեն Համալյան՝ գանձապահ։ Կոմիտեին կից կազմվել էին նաև կալվածական, բժշկական-առողջապահական, փոխադրական և տնտեսական հանձնախմբեր, որոնցում ակտիվ աշխատանք էին կատարում վերապատվելի Տիգրան Խրլոպյանը, Դանիել Յուսուֆյանը և ուրիշներ[51]։

Նույն ժամանակ ներգաղթի ենթակոմիտեներ կազմվեցին Ջեզիրեում և Հոմսում։ Հոմսի ենթակոմիտեի մեջ մտան Միսաք Ճերեճյանը՝ նախագահ, Սուրեն Կարճյանը՝ քարտուղար, Փանոս Երնեքյանը՝ փոխնախագահ, Աբրահամ Թոփճյանը՝ փոխքարտուղար, Տիրան Մալումյանը՝ գանձապահ, Միհրան Ազանիքյանը՝ հաշվապահ, Գևորգ Հիտոյանը, Սարգիս Թենքերյանը, Լևոն Քեսոյանը՝ խորհրդականներ[52]։ Ջեզիրեի ենթակոմիտեն կազմում էին՝ Նորայր Ինճեյանը, Խաչո աղա Շառոյանը, Մուրատ աղա Ղազարյանը և ուրիշներ[53]։

1946 թ. փետրվարի 18-ին բուլղարահայ «Երևան» առաջադիմական միության կենտրոնական վարչության ատենապետ Գաբրիել Գաբրիելյանը և ատենադպիր Գրիգոր Դաբբինյանը հայտնում են ՀՍՍՀ ներգաղթի կոմիտեի նախագահ Բ. Աստվածատրյանին, որ կազմված է Բուլղարիայի հայերի ներգաղթի կոմիտե, հետևյալ կազմով. Գաբրիել Գաբրիելյան՝ նախագահ, Մարտիրոս Խաչիկյան՝ նախագահի տեղակալ, Գրիգոր Դաբբինյան՝ քարտուղար, Դավիթ Դավթյան՝ փոխնախագահ, Հակոբ Ջաքըրով, Լևոն Մեծատուրյան, Գևորգ Մեքթուպճյան, Պարույր Մալըրմյան, Վարդան Սարգիսով, Սարգիս Փաշաճյան և Արմենակ Գալայճյան՝ անդամներ։ Կոմիտեի պատվո անդամ էր բուլ-

50 Տե՛ս նույն տեղում, թ. 58։
51 Տե՛ս նույն տեղում, թ. 64—65։
52 Տե՛ս նույն տեղում, թ. 64։
53 Տե՛ս նույն տեղում, գ. 30, թ. 76։



13—1181

ղարահայ թեմի առաջնորդ գեր. Գրիգոր եպիսկոպոս Կարապետյանը։ Բուլղարահայ ներգաղթի կոմիտեն իր մասնաճյուղերն ուներ հայաշատ բոլոր քաղաքներում[54]։

Ինչպես Բուխարեստից հայտնում էր Հայաստանյան ճակատ առաջադիմական կազմակերպության նախագահ Վահան Դանիելյանը, 1946 թ. սկզբներին կազմակերպվել էր նաև Ռումինիայի հայերի ներգաղթի կոմիտեն Հարություն Պապոյանի նախագահությամբ[55]։ Կոմիտեի անդամների մի մասի 1946 թ. հայրենիք մեկնելու կապակցությամբ, 1947 թ. գարնանը ընտրվում է կոմիտեի նոր կազմ՝ վարչական, արձանագրական և ֆինանսական բաժիններով։ Նրանում ակտիվ աշխատանք էին կատարում Աղասի Ժամկոչյանը (վարչական բաժնի նախագահ), Գևորգ Եղիգարյանը (արձանագրական բաժնի նախագահ), Հարություն Գազազյանը (ֆինանսական բաժնի վարիչ), Արտաշես Գասարճյանը, Երվանդ Իսրայելյանը, Հակոբ Գայսերլյանը, Անդրանիկ Յութուճյանը, Միհրան Մեսրոպյանը, Եղնիկ Գարագաշյանը, Ստեփան Պայպուրթլյանը, Գևորգ Տիրացյանը, Երվանդ Սրապիոնյանը և ուրիշներ[56]։

1946 թ. մայիսի 10-ին Փարիզից Ֆրանսահայ ազգային ընդհանուր միության նախագահ Հանրի (Գևորգ) Մարմարյանը և քարտուղար Մեսրոպ Ասատուրյանը հայտնում են Երևան՝ ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր արտասահմանից ներգաղթող հայերի ընդունման և տեղավորման կոմիտեին, որ Ֆրանսահայ ազգային ճակատը, որը մինչ այդ ղեկավարում էր ներգաղթի նախապատրաստական աշխատանքները, ստեղծել է ֆրանսաբնակ հայերի ներգաղթի կենտրոնական կոմիտե՝ բաղկացած 21 հոգուց։ Կենտկոմի կազմում ընդգրկված էին կոմունիստներ Շահե Տատուրյանը, Ազատ Ազամյանը, Միհրան Մավյանը, Ալեքսանդր Կոստանդինյանը և ուրիշներ։ Կենտկոմի դիվանի կազմում էին Արտակ Դարբինյանը՝ նախագահ, Հայկ Գալճյանը և Պողոս Արսլանյանը՝ փոխնախագահներ, Դավիթ Դավթյանը՝ քարտուղար, Կարապետ Թուլումճյանը՝ փոխքարտուղար, Վահե Ֆրենկյանը, Առաքել Ջաքրյանը (մի կարճ ժամանակ անց

[54] Տե՛ս նույն տեղում, գ. 14, թ. 2—3, գ. 32, թ. 17, նաև՝ «Երևան», 19 փետրվարի, 1946 թ., № 26։

[55] Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 362, ց. 2, գ. 13, թ. 2—5 և 22։

[56] Տե՛ս նույն տեղում, գ. 28, թ. 51։



վերջին երկուսին փոխարինեցին Մանուել Ոսկերիչյանը և Սարգիս Սաղըրյանը), Աբրահամ Տեր-Անդրեասյանը, Լևոն Ջորմիսյանը, Անդրանիկ Կենճյանը և Մեսրոպ Ասատուրյանը՝ անդամներ։ Ֆրանսահայ գաղթօջախը բաժանվել էր չորս շրջանի՝ Փարիզի, Մարսելի, Լիոնի և Վալանսի, որոնք նույնպես ունեին ներգաղթի տեղական կոմիտեներ։ Սրանց ենթարկվում էին ենթակոմիտեները, որոնք ստեղծվել էին հայաբնակ բոլոր վայրերում։ Այդ ձևով ֆրանսահայերի ներգաղթի կոմիտեների մեջ ընդգրկված էր շուրջ 70 մարդ[57]։

Ֆրանսահայերի ներգաղթի կենտկոմը իր հրապարակած առաջին կոչում գրում էր. «Հայ ժողովրդի պատմության մեջ ներգաղթը նշական երևույթ մըն է։ Հայ ժողովուրդը միշտ իր երկրէն գաղթել ստիպված է պատմության ընթացքին։ Այսօր սակայն, շնորհիվ եղբայրական Սովետական մեծ Միության աջակցության, փառավոր էջ մը կբացվի մեր ժողովուրդի պատմության մեջ։ Ի սփյուռս աշխարհի ցրված հայերը այսօր կպատրաստվին հայրենիք վերադառնալ։ Գաղութի մեջ արդեն արձանագրված են տասնյակ հազարավոր հայեր և արձանագրությունները կշարունակվին։ Վստահ ըլլալով գաղութիս հայրենաբաղձության զգացումներուն, կսիրենք հուսալ, որ ամեն հայ պարտականություն պիտի համարե բարոյական և նյութական իր օժանդակությունը բերել ներգաղթի կեդրկոմիտեին, դյուրացնելու և հաջողությամբ գլուխ հանելու համար այս մեծապես հայրենասիրական պարտականությունը»[58]։

1946 թ. հունվարի 24-ին Հայֆայից Պաղեստինի Սովետական Հայաստանի պաշտպանության լիգայի ատենապետ Սարգիս Ատուրը և ատենադպիր Կարապետ Ջալըգյանը ՀՍՍՀ ներգաղթի կոմիտեի նախագահ Բ. Աստվածատրյանին գրում էին. «Անհուն ուրախությամբ ողջունեցինք պատվարժան կոմիտեիդ կազմության լուրը, որը արտասահմանի հայրենաբաղձ և տարագիր հայության միակ բաղձանք ներգաղթը եկավ իրականացնելու... Այս երջանիկ առիթով Սովետ Հայաստանի պաշտպանության լիգան կուգա շնորհավորելու և մաղթելու ձեզ հաջողություն և արդյունավորություն։ Այս բարեպատեհ առիթով

[57] Տե՛ս նույն տեղում, գ. 6, թ. 36, գ. 31, թ. 43, գ. 32, թ. 16, նաև՝ «Արևմուտք», շաբաթաթերթ, Փարիզ, 26 մայիսի, 1946 թ., № 63։

[58] ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 362, ց. 2, գ. 6, թ. 38։

ձերդ ուշադրության կհանձնենք մեր գաղութին բացարձակ մեծամասնության իղձը՝ օր առաջ հայրենիք վերադառնալու...»[59]։ 1946 թ. փետրվարի 16-ին կազմվում է Պաղեստինի հայերի ներգաղթի կոմիտեն՝ Հովհաննես Թորեյանի նախագահությամբ և Հովհաննես Գաֆեսյանի քարտուղարությամբ[60]։ Կոմիտեին անդամակցում էին նաև Ջորջ Կարապետյանը (հետագայում դարձավ կոմիտեի նախագահ), Գուրգեն Եալընըզյանը, Կարապետ Ջալըգյանը, Ճենոն Ճըռյանը, Եղիկ Պոյաճյանը, Պետրոս Նշանյանը, Սարգիս Աստուրը, Սարգիս Էպպերյանը, Հակոբ Մարտիրոսյանը, Հրանտ Ջալըգյանը, Նուպար Տետլյանը, Պողոս Տըրդատյանը, Պետրոս Խանճյանը, Գեորգ Փոլատյանը, Գրիգոր Աբարտյանը, Լևոն Ունճյանը և Պարգև Պլպուլյանը[61]։

Շուտով ներգաղթի հանձնախմբեր են կազմվում նաև Երուսաղեմում, Յաֆայում և Հայֆայում։ Յաֆայի հանձնախմբի մեջ մտնում էին ներկայացուցիչներ ՀԲԸՄ մասնաճյուղից, Հայաստանի օգնության հանձնախմբից, Հայկաշեն միությունից, գեղարվեստասիրաց միությունից, ՀԵՄ-ից։ Հանձնախմբի դիվանն ուներ հետևյալ կազմը. Թ. Թաղեոսյան՝ ատենապետ, Ս. Հովհաննիսյան՝ փոխատենապետ, Պ. Լեփենյան՝ ատենադպիր, Կ. Գարաճյան՝ փոխատենադպիր, Ա. Սարգիսյան՝ գանձապահ, Դ. Մարգարյան և Ա. Աչճյան՝ խորհրդականներ[62]։

Քանի որ նախատեսված էր 1946 թ. ամենազանգվածային հայրենադարձությունն իրականացնել Իրանից, ուստի ներգաղթի տեղական անդրանիկ կոմիտեներից մեկը կազմվեց հենց այդ գաղթօջախում։ Իրանահայերի ներգաղթին աջակցող կենտկոմը կազմված էր 31 հոգուց։ Այն իր բաժանմունքներն ուներ Համադանում, Փեհլևիում, Մեշեդիում, Արաքում, Ռեշտում, Ահվազում, Սպահանում և երկրի այլ հայաբնակ նահանգներում ու գավառներում։ Դեռևս 1946 թ. փետրվարի 16-ին կազմվել էր Ատրպատականի նահանգի 15 հոգուց բաղկացած ներգաղթի կենտկոմ՝ Բաբկեն Ղուրուխչյանի նախագահությամբ և Հրաչ Հովհաննիսյանի քարտուղարությամբ[63]։

[59] Նույն տեղում, գ. 16, թ. 3—4։

[60] Տե՛ս նույն տեղում, թ. 8—9։

[61] Տե՛ս նույն տեղում, նաև՝ գ. 32, թ. 18 և «Միություն», շաբաթաթերթ, Հայֆա, 2 հունիսի, 1946 թ., № 38։

[62] Տե՛ս «Արարատ», 10 օգոստոսի, 1946 թ., № 1648։

[63] Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 362, ց. 2, գ. 17, թ. 3—5։



Իրանահայերի ներգաղթին աջակցող կենտկոմի նախագահության մեջ մտնում էին գերապատիվ Վահան եպիսկոպոս Կոստանյանը՝ պատվո նախագահ, Ռոման Իսաևը (Ռոմանոս Եսայան)՝ նախագահ, Հովսեփ խան Ղարախանյանը, Հայկ Գարագաշը և Ղազար Սիմոնյանը՝ փոխնախագահներ, Սեդրակ Աբղալյանը՝ պատասխանատու քարտուղար, Հովհաննես Բարսեղյանը՝ գանձապահ, Սուրեն Սևոյանը և Խաչիկ Աբրահամյանը՝ անդամներ[64]։

Իրանահայերի ներգաղթի կենտկոմը Երևան ուղարկած իր առաջին իսկ գրության մեջ նշում էր, որ հայրենադարձության վերաբերյալ սովետական կառավարության որոշումը գաղութի հայության կողմից ընդունվել է մեծ ցնծությամբ, առաջ բերելով աննախընթաց հայրենասիրական վերելք։ Այն բնութագրվում էր որպես հայ ժողովրդի պատմության մեջ նոր վառ էջ, որի շնորհիվ իրականություն կդառնա աշխարհասփյուռ հայ տարագիրների իրենց հայրենիքում վերամիավորվելու դարավոր իղձը։ Այդ առթիվ իրանահայերը «սրտանց երախտագիտություն են հայտնում սովետական իշխանությանն ու ռուս մեծ ժողովրդին օգնության և արտասահմանյան հայերին նորից իրենց հայրենիքը ձեռք բերելու հնարավորություն ընձեռնելու համար»[65]։

1946 թ. սկզբին Նյու Յորքում կազմվում է Ամերիկահայ ազգային խորհրդին կից հայերի ներգաղթի օգնության հանձնախումբ (ՀՆՕՀ), որի մեջ մտան՝ Ջեմս Ջանդալյան (ատենապետ), Արմեն Միրիճանյան (փոխատենապետ), Մկրտիչ Բնակունի (վարիչ-քարտուղար), Մարտիրոս Թարայան (քարտուղար), Տիգրան Սմսարյան (գանձապահ), Մանիկ Խոճասարյան, Արշավիր Քաղցրունի, Սարգիս Սարգսյան, Արմենակ Վասպուրականցի և Հակոբ Ուրլյան՝ անդամներ[66]։

1946 թ. մայիսի կեսերից սկսվեց ներգաղթել ցանկացողների արձանագրումը։ Այդ առթիվ հանձնախումբը հրատարա-

[64] Տե՛ս նույն տեղում, գ. 32, թ. 3—15։

[65] Տե՛ս նույն տեղում, գ. 17, թ. 87—88։

[66] Տե՛ս նույն տեղում, գ. 9, թ. 52ա—53։ «Լրաբեր» թերթի 1946 թ. փետրվարի 16-ի № 113-ում հրապարակված է Ամերիկայի հայերի ներգաղթի օգնության հանձնախմբի կազմը, որտեղ վերը թվարկածներին ավելացված են վերապատվելի Եղնիկ Ազնակյան, Պետրոս Պոնտացի, վեր. Մ. Թ. Դալալճյան, տիկ. Արուսյակ Ճերահյան, տիկ. Ոսկինե Եանեկյան, Միհրդատ Թիրեաքյան, Արմենակ Կյուրեղյան, Հայկ Պարոնյան, Սահակ Ավետիսյան, Ս. Մ. Արտունի և Արամ Միրիճանյան։

կից և Ամերիկահայ ազգային խորհրդի մասնաճյուղերի միջոցով ԱՄՆ-ի հայաշատ վայրերում տարածեց 50 000 հարցարաններ: Ինչպես հայտնում էր ՀՆՕՀ-ը, «արձանագրվողներե շատեր, մայր երկրի վերելքին նպաստել կարենալու համար կփափագին միասին զանազան գործիքներ, մեքենայական կազմվածներ, ապրանքներ բերել և արտել կազմել»[67]:

Հայրենիք ներգաղթելու բուռն ցանկություն էին հայտնում նաև Եգիպտոսում ապրող հայերը: 1946 թ. ապրիլի 14-ին եգիպտահայ երիտասարդական 9 կազմակերպություններ, բացառությամբ դաշնակցական երիտասարդական միության, հեռագիր են ուղարկում ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր ներգաղթի կոմիտեին՝ խնդրելով Եգիպտոսից նույնպես հայրենադարձություն կազմակերպել[68]: Շուտով կազմվում է եգիպտահայ ներգաղթի կենտկոմ՝ եգիպտահայոց կրոնական թեմի առաջնորդ գերաշնորհ Մամբրե արքեպիսկոպոս Սիրունյանի նախագահությամբ: Կենտկոմին անդամակցում էին Հակոբ Արամյանը, Խաչիկ Հովհաննիսյանը, Ասատուր Պողիկյանը, Լևոն Տաճյանը, Հրաչ Գալըճյանը, Համբար Դավիթը, Ստեփան Շահպազը և Պերճ Պապիկյանը[69]: Ներգաղթողների արձանագրման համար Կահիրեում կազմվել էին նաև թաղային ենթակոմիտեներ, որոնցում ակտիվ աշխատանք էին կատարում Առաքել Պատրիկը, Ստեփան Ումեդյանը, Հարություն Մեքերյանը, Հովսեփ Թութունճյանը, Նորայր Պեյլերյանը և ուրիշներ: Ներգաղթել ցանկացողների ցուցակագրումն սկսելու հրահանգը մամուլում հրապարակվելուց կարճ ժամանակ անց, օգոստոսի 15-ից մինչև հոկտեմբերի սկիզբն ընկած ժամանակամիջոցում, արձանագրվածների թիվը հասավ 10 հազար մարդու: Եգիպտահայ գաղթօջախում նույնպես լայն ծավալ ստացավ արտադրական արտելների կազմակերպման գործը[70]:

Եգիպտահայ ներգաղթի կենտկոմի հետ սերտ համագործակցության մեջ էին նաև Եթովպիայի, Սուդանի և աֆրիկյան մի քանի այլ երկրների հայկական գաղթօջախները, որոնք կրոնական առումով մտնում էին եգիպտահայոց թեմի մեջ: Նրանցում նույնպես բազմաթիվ հայեր հայրենիք ներգաղթելու ցանկություն հայտնեցին, ուստի կազմվեցին ներգաղթի տեղական կոմիտեներ, որոնք և ղեկավարում էին այդ աշխատանքը:

[67] ՀՀՕՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 362, ց. 2, գ. 9, թ. 53:

[68] Տե՛ս նույն տեղում, գ. 10, թ. 23:

[69] Տե՛ս նույն տեղում, ց. 8, գ. 3, թ. 8—10:

[70] Տե՛ս նույն տեղում:



Այսպես. եթովպահայ ներգաղթի կոմիտեն, որն ստեղծվել էր 1946 թ. հոկտեմբերին, ուներ հետևյալ կազմը. Հովհաննես քահանա Կեհերյան՝ նախագահ, Գևորգ Քեհեայան՝ Ա ատենապետ, Վահան Փողարյան՝ Բ ատենապետ, Հակոբ Նալպանտյան՝ Ա ատենադպիր, Արշակ Խաչատուրյան՝ Բ ատենադպիր, Արսեն Աճեմյան՝ խորհրդական: 1946 թ. աշնան վերջին ներգաղթելու համար Եթովպիայում ցուցակագրվել էր 464 մարդ[71]:

Սուդանահայ ներգաղթի կոմիտեի մեջ ընդգրկված էին Վահրամ Մալումյանը, Ժիրայր Պալյանը և Կարապետ Օհանյանը: Մինչև 1947 թ. մարտը հայրենադարձվելու համար Սուդանում ցուցակագրվել էր 502 մարդ[72]:

Մեծ էր հայրենադարձվելու ձգտումը նաև իրաքահայերի մեջ: Իրաքում նույնպես ստեղծվել էր ներգաղթի հանձնաժողով, որի կազմի մեջ մտնում էին՝ Թորոս Բարաղամյանը, Սեդրակ Տեր-Եղիայանը, Սարգիս Ջոլոպյանը, Իսրայել Ջոքյանը, Հակոբ Վարդապետյանը, Հովհաննես Իսպիրյանը, Հովհաննես Ճիվանյանը և Կոստան Չարխչյանը[73]: Մինչև 1947 թ. գարունը այդ հանձնաժողովը ներգաղթելու համար արձանագրել էր Իրաքում ապրող շուրջ 14000 հայերից ավելի քան 9000 հոգու[74]:

Նկատի ունենալով հունահայության խիստ ծանր կացությունը, սովետական կառավարությունը լրջորեն մտահոգված էր նրա հոգսերի թեթևացմամբ: Մինչև հունահայ ներգաղթի կոմիտեի ստեղծումը հայրենադարձության հարցերով զբաղվում էր 1945 թ. հոկտեմբերին կազմակերպված Հունահայերի ազգային ժողովրդական միության (ՀԱԺՄ) կենտրոնական վարչությունը (ատենապետ՝ Ստեփան Քյութներյան, ատենադպիր՝ Սերբուհի Պերպերյան)[75]: Միության նպատակն էր «անկեղծ սեր և գործակցության ոգի մշակել Սովետական Հայաստանի հան-

[71] Տե՛ս նույն տեղում, գ. 8, թ. 2 և 5—12:

[72] Տե՛ս նույն տեղում, գ. 4, թ. 6:

[73] Տե՛ս «Եփրատ», օրաթերթ, Հալեպ, 3 օգոստոսի, 1946 թ., № 2698:

[74] Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 362, ց. 1, գ. 198, թ. 1—3:

[75] Տե՛ս նույն տեղում, ց. 2, գ. 18, թ. 13:

դեպ», նրա հետ հաստատել մշակութային կապ և կազմակերպել ներգաղթ[76]։

1946 թ. մարտի 13-ին «Նոր կյանք» առաջադիմական թերթում հրապարակվում է ՀԱԺՄ կենտրոնական վարչության հայտարարությունը՝ հայրենիք ներգաղթել ցանկացողների ցուցակագրումը սկսելու մասին[77]։ 1946 թ. մայիսի վերջերին կազմվում է հունահայ ներգաղթի կենտրոնական հանձնախումբը՝ մասնակցությամբ ՀԱԺՄ-ի, Բարեգործականի, Ազգային կենտրոնական վարչության, ինչպես նաև մի խումբ ազգային գործիչների[78]։ Հունահայ ներգաղթի կենտրոնական հանձնախմբի կազմում էին ՀԱԺՄ կենտր. վարչության փոխատենապետ Առաքել Պետրոսյանը (ատենապետ), Պետրոս Հովնանյանը (փոխատենապետ), Հ. Կյուրումլյանը (ատենադպիր)[79], Վահան Դաքեսյանը, Մովսես Պագարյանը, Ստեփան Քյումներյանը, Ստեփան Ցեսչյանը, Փ. Գոլանճյանը, Պ. Սարգիսյանը և ուրիշներ[80]։ ՀԲԸՄ նախաձեռնությամբ Հունաստանում կազմակերպվեց նաև ներգաղթի ֆոնդի հանգանակիչ մարմին (ատենապետ՝ Ա. Գալփագյան), որի մասին հունահայ ներգաղթի կենտրոնական հանձնախումբը 1946 թ. հունիսի 20-ին հանդես եկավ այդ կապակցությամբ հունահայությանն ուղղված հատուկ կոչով[81]։

Հայրենիք ներգաղթելու բուռն ցանկություն էին հայտնում նաև Կիպրոսում ապաստանած հայերը, մասնավորապես Մելքոնյան կրթական հաստատության աշակերտները, որոնք 1946 թ. փետրվարի 23-ին այդ մասին կոլեկտիվ նամակ էին ուղարկել Երևան՝ ներգաղթի կոմիտեին, հակառակ որոշ տարրերի խանգարիչ գործունեությանը[82]։

Կիպրոսի Հայաստանի բարեկամների միության վարիչքարտուղար Սմբատ Տեռվլաթյանը, ՀՍՍՀ ներգաղթի կոմիտեի նախագահ Բ. Աստվածատրյանին հասցեագրած դիմումի մեջ հայտնելով կիպրահայերի ծանր դրության մասին, նույնպես խնդրում էր իրականացնել նրանց հայրենադարձությունը։ «Կիպ-

76 Տե՛ս նույն տեղում, թ. 11—13։

77 Տե՛ս «Նոր կյանք», Աթենք, 13 մարտի, 1946 թ., № 287։

78 Տե՛ս նույն տեղում, 2 հունիսի, 1946 թ., № 354։

79 Տե՛ս նույն տեղում, 27 դեկտեմբերի, 1946 թ., № 530։

80 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՏ ՊԿԱ, ֆ. 326, ց. 1, գ. 200, թ. 5—9։

81 Տե՛ս «Նոր կյանք», 22 հունիսի, 1946 թ., № 354։

82 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՏ ՊԿԱ, ֆ. 362, ց. 2, գ. 19, թ. 22—23։



րահայությունը,— գրում էր Ս. Տեռվլաթյանը,— մեծ հուզումով հետևեցավ ամբողջ 25 տարի արյունով և քրտինքով շահված մեր հայրենիքի հրաշափառ վերելքին և պատերազմի ժամանակ ան իր կարելին ըրավ՝ իր մասնակցությունը և օգնությունը հայտնելու հայրենիքի եղբայրներուն՝ կազմակերպելով Սասունցի Դավիթ հրասայլային շարասյունը, Ստալինկրատի (ճակատամարտի) և հայրենական պատերազմի ընթացքին ինկած ռազմիկներու զավակներու ֆոնտերուն ի նպաստ հանգանակությունը», ուստի հուսով է, որ այժմ հայրենիքն իր գիրկը կառնի կիպրահայ տարագիրներին[83]։

1947 թ. ամռանը կազմվում է կիպրահայ ներգաղթի կոմիտե, որը օգոստոսի 1-ից սկսում է ներգաղթողների ցուցակագրումը։ Կիպրահայ ներգաղթի կոմիտեի մեջ ընդգրկված էին Սամվել Մուրատյանը, Էդվարդ Պոտիկյանը, Կարապետ Թաշճյանը, Հակոբ Աճեմյանը և Սմբատ Տեռվլաթյանը[84]։

Ինչպես հայտնում էր 1946 թ. հոկտեմբերի 18-ին Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Զ-ին գրած իր նամակում Կ. Պոլսի հայոց պատրիարքական տեղապահ Գևորգ արքեպիսկոպոս Արսլանյանը, հայրենիք ներգաղթելու մեծ փափագ ունեին նաև Թուրքիայում գտնվող հայերը, որոնք «տեղվույս ՍՍՀ Միության ընդհանուր հյուպատոսարանը ներկայացած և արձանագրված են», ուստի «...անհրաժեշտ է, առաջին առիթով, որ հոսկե ներգաղթելիքներու փոխադրության հնարավորությունը ներկայանա, նախապատվություն տալ այն բազմահազար հայերուն, որոնք Անատոլուի զանազան գավառներու մեջ, առավելապես գյուղերու և շեներու մեջ, ցրքուն ու դառն վիճակի մը մեջ կգտնվին»[85]։

Հայրենադարձությունը վերսկսելու լուրը խանդավառությամբ համակեց նաև հեռավոր Լատինական Ամերիկայի հայկական գաղթօջախներին, որոնք նույնպես ձեռնամուխ եղան ներգաղթի նախապատրաստական աշխատանքներին։ Այդ առթիվ ահա թե ինչ էր գրում «Հայ մամուլ» շաբաթաթերթը. «Ներգաղթի արտոնության բերկրալի լուրը անսահման ուրախությամբ կհամակե սրտերը բոլոր անոնց, որոնք մաքուր համո-

83 Տե՛ս նույն տեղում, գ. 18, թ. 74—78։

84 Տե՛ս «Նոր Արաքս», շաբաթաթերթ, Նիկոզիա, 2 օգոստոսի, 1947 թ., № 31—140։

85 ՀՍՍՀ ՀՀՍՏ ՊԿԱ, ֆ. 362, ց. 2, գ. 22, թ. 13—15։

զումբ ունեցան Սովետ Հայաստանի լուսապայծառ իրականության, և որոնք Սովետ Միության Հայրենական պատերազմի դժվարին օրերուն անխախտ հավատքը ունեցան ժողովուրդներու արդար դատի հաղթանակին, անձկանոք սպասելով բախտավոր ու երջանիկ օրվան, դեպի հայրենիք ներգաղթին»[86]։

Արգենտինայում ՍՍՀՄ լիազոր-դեսպանորդ Մ. Գ. Սերգեևի և գլխավոր հյուպատոս Բուդարինի հետ համատեղ հայկական գաղթօջախի առաջադիմական կազմակերպությունները 1947 թ. օգոստոսին կազմակերպում են Արգենտինայի հայերի ներգաղթին աջակցող կենտկոմ, հետևյալ կազմով. Թոնիկ Շիրակյան՝ նախագահ, Կարապետ Էքշիյան՝ փոխնախագահ, Արամ Դեյիրմենչյան՝ քարտուղար, Պարգև Էֆենյան՝ փոխքարտուղար, Բյուզանդ Գուշյան՝ գանձապահ, Պողոս Էքմեքճյան՝ փոխգանձապահ, Գևորգ Սարաֆյան, Աբրահամ Էլմեսեկյան և Մուշեղ Արխանյան՝ խորհրդականներ[87]։

Ներգաղթի ենթահանձնախմբեր են կազմվում նաև Ռոսարիոյում և Կորդոպայում, որոնցում ընդգրկված էին Տիրան Ծուսուֆյանը, Մովսես Արզարյանը, Հովհաննես Գրաճյանը, Ծատյի Տումանյանը և ուրիշներ[88]։

Արգենտինահայերի ներգաղթին աջակցող կոմիտեն Երևան ուղարկած իր դիմումի մեջ նշում էր, որ հայրենադարձության անշեղ կայծը սկսել է «...կիզել սփյուռքի հայրենակարոտ գաղթականներու սիրտը», ուստի ինքը թարգման է դառնում «հայրենաբաղձ հասարակության համառ պնդումներուն ու անգամ մը ևս դիմում ձեզի՝ խնդրելու համար, որ գեթ սակավագույն թվով հայրենադարձի շարժում սկսի Լատին Ամերիկայեն»[89]։ Կոմիտեն միաժամանակ հայտնում էր, որ Արգենտինայի հայության 80 տոկոսը ցանկանում է մեկնել Սովետական Հայաստան և կազմակերպվել են մի շարք արտելներ՝ հայրենիքում աշխատելու համար[90]։

[86] «Հայ մամուլ», շաբաթաթերթ, Բուենոս Այրես, 8 դեկտեմբերի, 1945 թ., № 14։

[87] Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՃ ՊԿԱ, ֆ. 362, ց. 2, գ. 41, թ. 5—7, նաև՝ «Հայ մամուլ», 23 օգոստոսի, 1947 թ., № 100։

[88] Տե՛ս «Հայ մամուլ», 4 և 11 սեպտեմբերի, 1947 թ., №№ 106 և 107։

[89] ՀՍՍՀ ՀՀՍՃ ՊԿԱ, ֆ. 362, ց. 2, գ. 44, թ. 13։

[90] Տե՛ս նույն տեղում, գ. 41, թ. 7։



Նույնն էր պատկերը նաև Ուրուգվայի և Բրազիլիայի հայկական գաղթօջախներում։ Ուրուգվայում հայերի ներգաղթի կոմիտեի նախագահն էր Հարություն Երկաթգործյանը, քարտուղարը՝ Կարպիս Կեցոյանը[91], իսկ Բրազիլիայի հայերի ներգաղթի հանձնախմբի նախագահն էր Թագվոր Կիրակոսյանը, քարտուղարը՝ Ներսես Պոյաճյանը[92]։ Ինչպես վկայում են եղած փաստերը, 1947 թ. Լատինական Ամերիկայի հայկական գաղթօջախներում արձանագրված ներգաղթել ցանկացողների թիվը հասնում էր շուրջ 32 հազարի[93]։

ՀՍՍՀ կառավարության մշակած նախնական պլանով որոշված էր 1946 թ. հայրենադարձնել 8930 ընտանիք կամ 28800 մարդ, այդ թվում Իրանից՝ 4930 ընտանիք (15800 մարդ), Սիրիայից և Լիբանանից՝ 1450 ընտանիք (4950 մարդ), Հունաստանից՝ 600 ընտանիք (3450 մարդ), Ռումինիայից՝ 800 ընտանիք (2550 մարդ) և այլ երկրներից՝ 50 ընտանիք (150 մարդ)[94]։ Սակայն, հաշվի առնելով Իրանի, Սիրիայի, Լիբանանի և Հունաստանի հայության դժվարին կացությունը, արդեն 1946 թ. մայիսի 10-ին ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը լրացուցիչ որոշում կայացրեց սփյուռքահայերի հավելյալ ընդունելության մասին և մշակեց կոնկրետ միջոցառումներ այդ ուղղությամբ[95]։

Արդեն 1946 թ. փետրվարից Սիրիայում, Լիբանանում, Իրանում, Հունաստանում, Բուլղարիայում, Ռումինիայում և այլ երկրներում սկսվել էր ներգաղթողների արձանագրումը։ Այդ աշխատանքները մեծ թափով էին ընթանում հատկապես Սիրիայում և Լիբանանում, ուր ներգաղթի տեղական կոմիտեները կազմվել էին լայն ներկայացուցչական հիմունքներով։ Հայաշատ բնակավայրերում բացվել էին ցուցակագրման բազմաթիվ գրասենյակներ, որոնք ամբողջ օրը լեցուն էին արձանագրվելու եկած հոծ բազմությամբ։ Հենց միայն Հալեպում կազմակերպվել էր ցուցակագրման 21 գրասենյակ[96]։ Ներգաղթել ցանկացողների ցուցակագրումն սկսելու առաջին երկու օրվա

[91] Տե՛ս նույն տեղում, թ. 8։

[92] Տե՛ս նույն տեղում, գ. 44, թ. 6։

[93] Տե՛ս նույն տեղում, գ. 9, թ. 67։

[94] Տե՛ս նույն տեղում, գ. 12, թ. 7։

[95] Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 12, թ. 5—7։

[96] Տե՛ս «Ժողովուրդի ձայն», օրաթերթ, Բեյրութ, 28 փետրվարի, 1946 թ., № 1073։

ընթացքում Դամասկոսում ապրող 1800 հայ ընտանիքներից շուրջ հազարը արձանագրվեցին[97]։ Հալեպում և նրա շրջակայքում բնակվող հայերից կարճ ժամանակամիջոցում արձանագրվեցին 15500 ընտանիք կամ շուրջ 75000 մարդ, որը կազմում էր այդ շրջանի հայության գրեթե 92 տոկոսը[98]։

1946 թ. մայիսի 2-ի տվյալներով ներգաղթելու համար Լիբանանում արձանագրված ընտանիքների թիվը հասել էր 14 հազարի, որը կազմում էր լիբանանահայության մոտ 90 տոկոսը[99]։ Սիրիայում և Լիբանանում ներգաղթի նախապատրաստական աշխատանքները շատ ավելի գործնական բնույթ ստացան և կազմակերպված հունի մեջ դրվեցին ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի հատուկ ներկայացուցիչ, ՀՍՍՀ արդարադատության մինիստր Գառնիկ Նազարյանի այնտեղ ժամանելուց հետո, որը գաղթօջախներում առաջ բերեց մեծ ոգևորություն։ Գ. Նազարյանը բազմաթիվ հրապարակային բանախոսություններով, զեկուցումներով, հարցազրույցներով հանդես եկավ Բեյրութում, Հալեպում, Դամասկոսում և այլուր, սփյուռքահայությանը պարզաբանելով ներգաղթի հետ կապված բազմաթիվ հարցեր[100]։

Խիստ հուզիչ, սրտաշարժ դեպքեր ու խոսակցություններ էին տեղի ունենում ցուցակագրման գրասենյակներում։ Օրինակ, Աճարլուխի գրասենյակի առաջ վաթսունամյա մի գեյթունցի խնդրում էր իրեն անպայման արձանագրել, որովհետև «դեռ Հայաստանի մեջ զինվոր կրնամ ըլլալ»,— ասում էր նա։ Իսկ մի ուրիշը, դիմելով Կիլիկյան վարժարանի առջև ցուցակագրվելու համար հերթի սպասողներին, թախանձագին խնդրում էր՝ «Քառասուն տարի է, որ կսպասեմ այսօրվան, ձգեցեք, որ առաջին անգամ ես արձանագրվիմ»[101]։ Թե ինչպիսի ոգևորությամբ ու խանդավառությամբ էին ցուցակագրվում տարագիր հայերը հայրենիք մեկնելու համար, վկայում է այն փաստը, որ միայն Սիրիայում և Լիբանանում 25 օրվա ընթացքում՝ 1946 թ. փետրվարի 1-ից մինչև 26-ը, ցուցակագրվել էր 12600 ընտանիք կամ 65 հազար մարդ[102]։

97 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 362, ց. 2, գ. 4, թ. 38։
98 Տե՛ս նույն տեղում, թ. 64։
99 Տե՛ս նույն տեղում, թ. 66։
100 Տե՛ս նույն տեղում, թ. 67։
101 Տե՛ս «Ժողովուրդի ձայն», 28 փետրվարի, 1946 թ., № 1073։
102 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 362, ց. 2, գ. 4, թ. 12։



Ցուցակագրումը լայն ծավալ ընդունեց նաև Հունաստանում։ Մոտ 30 հազար հայ ընդգրկող հունահայ գաղութում կարճ ժամանակամիջոցում, մինչև 1946 թ. մայիսը, ներգաղթելու համար արձանագրվել էր 23100 մարդ[103]։

Պաղեստինում բնակվող 12 հազար հայերի 96 տոկոսը նույնպես արձանագրվել էր հայրենիք մեկնելու համար։ Հետաքրքիր է, որ այդ օրերին անգլիական «Դեյլի տելեգրաֆ» թերթի Երուսաղեմի թղթակիցը ճգնում էր ապացուցել, թե իբր ներգաղթի արձանագրությունները Պաղեստինում ձախողվել են, քանի որ «հայ համայնքին 90 տոկոսը երջանիկ են Պաղեստինի մեջ և մտադիր չեն հեռանալու երկրեն»։ Տեղի հայերից միայն «300-ը ցարդ արձանագրված են ներգաղթի ցանկին վրա»[104],— չարախնդորեն նենգափոխում էր իրականությունը անգլիական թղթակիցը։ Սակայն, ինչպես նշվեց վերը, փաստերը միանգամայն հակառակն էին վկայում։ Պաղեստինի Սովետական Հայաստանի պաշտպանության լիգան ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր ներգաղթի կոմիտեին այդ նույն ժամանակ գրում էր. «...Ձերդ ուշադրության կհանձնենք մեր գաղութին բացարձակ մեծամասնության (որը գրեթե ամբողջությամբ բանվորներն բաղկացած է և քիչ է թիվը բարեկեցիկներու) իղձը՝ օր առաջ հայրենիք վերադառնալու»[105]։

Այսպիսով, արդեն մինչև 1946 թ. գարունը հայրենիք գալու ցանկություն էին հայտնել տասնյակ հազարավոր տարագիրներ, որը ակնհայտորեն վկայում էր սփյուռքահայության Սովետական Հայաստանում համախմբվելու հաստատ վճռականությունը։ Սփյուռքահայ աշխատավորները ամենուրեք տառացիորեն գրոհում էին ներգաղթի արձանագրության գրասենյակների վրա, հակառակ որոշ ուժերի կողմից հարուցվող բոլոր խոչընդոտներին ու դավերին։

Ինչպես պատկերավոր կերպով բնութագրել է Հալեպում հրատարակվող «Դեպի երկիր» ամսագիրը՝ «ժողովուրդն է, որ կու գա իր չունեցած ամբողջ հարստությամբ և ունեցած ամբողջ աղքատությամբ։ Կու գա և՛ կուսակցականը, և՛ չեզոքը, և՛ անհատը», մի խոսքով, բոլորն էլ ցուցակագրվում են «դեպի

103 Տե՛ս «Նոր կյանք», 12 մայիսի, 1946 թ., № 336։
104 Տե՛ս «Եփրատ», 27 հոկտեմբերի, 1946 թ., № 2771։
105 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 362, ց. 2, գ. 16, թ. 3—4։

նոր կյանք մը, դեպի անմահություն, դեպի Կարմիր Հայրենիք» մեկնելու համար[106]։

Հայրենադարձության վերսկսման լուրը լայն արձագանք գտավ նաև նրանց մոտ, ովքեր դաժան ճակատագրի բերումով մոռացել էին իրենց մայրենի լեզուն, անվանափոխվել, և նրանց անունները ավելի շուտ հիշեցնում էին թուրքի, արաբի և այլ ազգերի, քան հայի։ Այդպիսիք շատ կային հատկապես արաբական անապատներում, սիրիական հեռավոր գյուղերում։ Դրանց մասին էր ակնարկում «Արարատ» թերթը, գրելով. «Հայերեն չեն գիտեր, կթվեն անուններ՝ Թաշո, Օսման, Պավե, Արգըլ և այլն։ Ու չես հավատար, որ հայ են, սակայն ինքնության թուղթին վրա գրված է «էրմեն»[107]։

Հայրենադարձության առաջ բերած խանդավառության ալիքը հասել էր Սիրիայի արաբախոս Արամո, Յաղուբիե, Ջըսըր, Շղուր հայկական գյուղերը, տարածվել մինչև հեռավոր Ղամըշլի և նրա շրջակայքի քրդախոս գյուղերի հայերը, որոնք «... ի լուր ՍՍՀՄ Գերագույն խորհրդի պատմական մեծ որոշման» չէին կարողանում «զսպել ուրախության արցունքները» և պաղատագին խնդրում էին արագացնել ներգաղթը, իրենց փրկել անխուսափելի ուծացման դաժան վտանգից[108]։

Ամերիկահայ «Լրաբեր» թերթի թղթակիցը Ղամըշլիից հաղորդում էր, որ երբ արձանագրող հանձնախմբերը շրջում են գյուղերում, ամենուրեք նրանց դիմավորում են «տավուլով-զուռնայով։ Ոչխարներ կմորթվին, բաժակներ կպարպվին գաղթական հայը իր ծոցը ընդունող մայր հայրենիքի կենացը» և «ղամըշլըցիները սրտատրոփ կսպասեն այն օրվան, երբ ոտք պիտի դնեն հայրենի հողի վրա, այնտեղի իրենց քույրերուն և եղբայրներուն հետ լծվելու համար շինարար աշխատանքի»[109]։

Զանգվածային ներգաղթի իրականացումը դեպի դաժան պատերազմի բոցերից նոր դուրս եկած մեր երկիրը, պահանջում էր նյութական հսկայական միջոցներ ու ջանքեր։ Ուստի միանգամայն տեղին ու օրինական կլիներ, որպեսզի այդ մեծ

106 Տե՛ս «Դեպի երկիր», պարբերաթերթ, Հալեպ, ապրիլ, 1946 թ., № 4—5, էջ 201։

107 «Արարատ», 11 մայիսի, 1946 թ., № 1562։

108 Տե՛ս «Ժողովուրդի ձայն», 8 փետրվարի, 1946 թ., № 1060։

109 «Լրաբեր», 11 մայիսի, 1946 թ., № 123։



նպատակն իրականացնելու համար օգտագործվեին եղած բոլոր նյութական միջոցներն ու աղբյուրները, այդ թվում նաև սփյուռքահայ բարեգործական հաստատությունների տրամադրության տակ եղած ազգային գումարները։ Հայտնի է, որ Հայկական բարեգործական ընդհանուր միությունը սփյուռքահայ ֆինանսապես ամենահարուստ կազմակերպությունն է։ Այդ հանգամանքը նկատի ունենալով, ՀՍՍՀ Ժողկոմխորհին առընթեր ներգաղթի կոմիտեն 1945 թ. դեկտեմբերի 25-ին դիմեց ՀԲԸՄ Նյու Յորքի կենտրոնական և Փարիզի եվրոպական վարչություններին՝ առաջարկելով գործուն մասնակցություն ցուցաբերել զանգվածային հայրենադարձության իրականացման գործում։ Ներգաղթի կոմիտեն գտնում էր, որ ՀԲԸՄ, ինչպես և մյուս բոլոր բարեգործական ու հասարակական կազմակերպությունների համար տվյալ պահին ամենակարևոր ու պատվավոր խնդիրը և նրանց տրամադրության տակ եղած գումարների օգտագործման լավագույն եղանակը կլինի օգնությունը արտասահմանի հայերի հայրենիք վերադառնալու գործի կազմակերպմանն ու նրանց տեղավորմանը[110]։

1946 թ. մարտի 19-ին ՀԲԸՄ կենտրոնական վարչության նախագահ Արշակ Կարագյոզյանը Նյու Յորքից հայտնեց ՀՍՍՀ Ժողկոմխորհին առընթեր ներգաղթի կոմիտեի նախագահ Բ. Աստվածատրյանին, որ ՀԲԸՄ ողջունում է հայրենադարձությունը վերսկսելու որոշումը, քանի որ դրա շնորհիվ «աշխարհի չորս անկյունները ցրված վտարանդի հայության երազն է, որ կկատարվի...», ուստի իրենք սիրահոժար ընդունում են ներգաղթողներին օգնելու առաջարկը[111]։ Այդ նպատակով «միության կեդր. վարչ. ժողովը,— այնուհետև գրում էր Ա. Կարագյոզյանը,— որոշեց ձեռնարկել ներգաղթի մեկ միլիոն տոլարի հանգանակություն», ինչպես նաև «նախորդ հանգանակութեններեն և Հայաստանին տրամադրելի գումարները ևս ներգաղթի հատկացնել, որպես անմիջական վարկ...»[112]։

1946 թ. մարտի 6-ին ՀԲԸՄ կենտրոնական վարչությունը հրատարակեց կոչ-շրջաբերական՝ ներգաղթի օգտին մեկ մի-

110 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՏ ՊԿԱ, ֆ. 362, ց. 2, գ. 30, թ. 1—3։

111 Տե՛ս նույն տեղում, թ. 14։

112 Նույն տեղում։

լիոն դոլարի հանգանակություն սկսելու մասին[113], որն անց էր կացվում «արտագաղթին և բռնագաղթին տեղ ներգաղթ» և «ամեն հայ պետք է գոնե հայ մը, եթե ոչ ընտանիք մը, Հայաստան ղրկելու երջանկությունը վայելե» նշանաբանով[114]։ Հետագայում, 1947 թ. ապրիլին, ՀԲԸՄ կենտրոնական վարչությունը հայտարարեց ներգաղթի օգտին ևս կես միլիոն դոլարի լրացուցիչ հանգանակություն՝ «Հայրենադարձը կմնա օրվան կարգախոսը» նշանաբանով, որպեսզի հնարավոր լիներ ավելի մեծ թվով տարագիրներ փոխադրել հայրենիք[115]։

Ներգաղթի նախապատրաստական աշխատանքները տեղերում ավարտելու և սփյուռքահայերի դեպի հայրենիք ճանապարհումը կատարելու համար շուտով Իրան, Սիրիա, Լիբանան, Հունաստան, Բուլղարիա և Ռումինիա մեկնեցին ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի հայրենադարձության գծով երկուական ներկայացուցիչներ։ ՀՍՍՀ ներգաղթի կոմիտեի 1946 թ. մարտի 3-ի նիստում հայրենադարձության գծով լիազոր-ներկայացուցիչներ հաստատվեցին Ռ. Քալանթարը և Ռ. Ղազարյանը (Իրանում), Հ. Հարությունյանը և Հ. Խաչատրյանը (Սիրիայում), Ջ. Ջարչյանը և Մ. Կարապետյանը (Լիբանանում), Գ. Գևորգյանը և Ս. Մանուկյանը (Հունաստանում), Ա. Խրիմլյանը և Մ. Օթարյանը (Բուլղարիայում), Բ. Ջարչյանը և Գ. Մուրադյանը (Ռումինիայում)[116]։ Հետագայում որպես ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի հայրենադարձության գծով լիազոր-ներկայացուցիչներ են եղել նաև Ա. Հինայեկյանը (Ֆրանսիայում)[117], Հ. Հակոբջանթանը[118] և Թ. Կատարյանը[119] (Եգիպտոսում), Ա. Շահնազարյանը (ԱՄՆ-ում)[120], Ալ. Հովհաննիսյանը[121], Ռ. Ասրյանը, Ռ. Հակոբյանը[122] (Սիրիայում և Լիբանանում), Հ. Մելքոնյանը և Գր. Ասատրյանը (Հունաստանում)[123] և ուրիշներ։

[113] Տե՛ս նույն տեղում, գ. 29, թ. 33։
[114] Տե՛ս նույն տեղում, գ. 30, թ. 16։
[115] Տե՛ս նույն տեղում, գ. 29, թ. 1—3։
[116] Տե՛ս նույն տեղում, գ. 12, թ. 5—6։
[117] Տե՛ս նույն տեղում, գ. 31, թ. 43։
[118] Տե՛ս նույն տեղում, ց. 8, գ. 23, թ. 29։
[119] Տե՛ս նույն տեղում, գ. 6, թ. 44։
[120] Տե՛ս նույն տեղում, ց. 2, գ. 28, թ. 69—72։
[121] Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 15, թ. 86։
[122] Տե՛ս նույն տեղում, ց. 2, գ. 41, թ. 41։
[123] Տե՛ս նույն տեղում, գ. 18, թ. 83։



Իրենց բարդ ու դժվարին աշխատանքում ՀՍՍՀ կառավարության արտասահման գործուղված լիազոր-ներկայացուցիչները և ներգաղթին աջակցող տեղական կոմիտեները ամենօրյա բազմակողմանի օգնություն էին ստանում տվյալ երկրում ՍՍՀՄ դեսպանություններից ու հյուպատոսություններից։ Այդ ուղղությամբ գնահատելի աշխատանք են կատարել Լիբանանում ՍՍՀՄ միսիայի ղեկավար Դ. Սոլոդը, Բեյրութում ՍՍՀՄ հյուպատոս Ռ. Ահարոնովը, Դամասկոսում ՍՍՀՄ հյուպատոս Վ. Կիրիևը, Սիրիայում և Լիբանանում սովետական ներկայացուցչությունների աշխատակիցներ Կլիմովը, Ա. Սարգսյանը, Վ. Խանգուլովը, Իսագուլովը, Եգիպտոսում ՍՍՀՄ դեսպան Ա. Շապորինը, դեսպանության աշխատակից Գ. Շահնազարյանը, Իրանում ՍՍՀՄ դեսպան Սադչիկովը, Սպահանում ՍՍՀՄ հյուպատոս Կրյուչկովը, դեսպանության աշխատակիցներ Ջենինը, Գասպարովը, Միրզաբաբաևը, Սեիդ-Ջադեն, Սադովը, Ֆրանսիայում ՍՍՀՄ դեսպան Ա. Բոգոմոլովը, Հունաստանում ՍՍՀՄ դեսպան Կ. Ռոդիոնովը, դեսպանության աշխատակիցներ Ն. Չերնիշևը, Կուլաժենկովը, Ռումինիայում ՍՍՀՄ դեսպան Ս. Քավթարաձեն, դեսպանության աշխատակիցներ Յակովլևը, Ֆեոդորովը, Շուտովը, Իրաքում ՍՍՀՄ միսիայի ղեկավար Գ. Զայցևը, Բուլղարիայում ՍՍՀՄ դեսպանության աշխատակիցներ Լյովիչկինը, Շնյուկովը, առևտրական ներկայացուցիչ Վ. Զայցևը, Նյու Յորքում ՍՍՀՄ գլխավոր հյուպատոս Յա. Լոմակինը և ուրիշներ։

Սփյուռքահայ գաղթօջախներում ներգաղթի նախապատրաստման ուղղությամբ տարվող աշխատանքներին զուգընթաց Սովետական Հայաստանի կուսակցական, սովետական և տնտեսական մարմինները լարված գործունեություն էին ծավալել նաև հանրապետությունում։ Այստեղ ներգաղթողների համար պատրաստվում էին բնակարաններ, նրանց աշխատանքով ու նյութական միջոցներով ապահովելու պայմաններ։ Կազմակերպվեցին, կահավորվեցին և լրիվին նախապատրաստվեցին ներգաղթողներին ընդունող կայաններ Բաթումում, Ջուլֆայում և Բաքվում (վերջինս 1946 թ. օգոստոսի 31-ին լուծարքի ենթարկվեց), ինչպես նաև Երևանում, Լենինականում, Կիրովականում և Արտաշատում[124]։

1946 թ. հունիսի 21-ին ՍՍՀՄ Մինիստրների խորհուրդը

[124] Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 4, թ. 39։

անդրադարձավ արտասահմանից ներգաղթող հայերի ընդունման ու տեղավորման ուղղությամբ Հայկական ՍՍՀ-ում տարվող նախապատրաստական աշխատանքների ընթացքին և լրացուցիչ միջոցառումներ մշակեց հայրենադարձների համար մեծ ծավալի բնակարանային շինարարություն կատարելու նպատակով[125]։ Որոշվեց այդ նպատակով հենց միայն 1946 թ. կառուցել 135 հազար քմ բնակելի տարածություն, որից 40 հազարը՝ գյուղական վայրերում։ Բացի այդ հանձնարարվեց համապատասխան մարմիններին՝ գոյություն ունեցող բնակարանային ֆոնդից առանձնացնել և վերանորոգել 3000 քմ տարածություն, ինչպես նաև կառուցել 3 նոր ավան՝ յուրաքանչյուրը 250 տնտեսության համար[126]։ Դրա հետ մեկտեղ, ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի որոշմամբ, սահմանվեց ներգաղթողների համար իրականացնել անհատական բնակարանային լայն շինարարություն։ Այդ նպատակով հատկացվեց 40 միլիոն ռուբլու վարկ, որից 34 միլիոն ռուբլի՝ գյուղատնտեսական և 6 միլիոն ռուբլի՝ կոմունալ բանկի միջոցով։ Սեփական բնակարան կառուցող յուրաքանչյուր հայրենադարձի տրվելու էր քաղաքներում 30 հազար ռուբլի, իսկ գյուղական վայրերում 25 հազար ռուբլու վարկ՝ 15 տարի ժամանակով, այն ստանալու 3-րդ տարվանից սկսած աստիճանաբար մարելու պայմանով[127]։ ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի որոշմամբ կոնկրետ միջոցառումներ մշակվեցին նաև հայրենադարձների համար կատարվող բնակարանային շինարարությունը անհրաժեշտ շինանյութերով ապահովելու ուղղությամբ։

ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր արտասահմանից ներգաղթող հայերի ընդունման և տեղավորման կոմիտեն, նախնական տեղեկություններ ստանալով հայրենիք մեկնելու ցանկություն հայտնածների թվի մասին, լուրջ մտահոգությունների մեջ ընկավ, քանի որ գաղութահայության ճնշող մեծամասնությունը ցանկանում էր հայրենադարձվել։ Հասկանալի է, որ հայրենի երկիրը ի վիճակի չէր այդքան մարդ միանգամից ընդունել, ուստի ներգաղթին աջակցող տեղական կոմիտեները զգուշաց-

---

[125] Տե՛ս նույն տեղում, ց. 2, գ. 5, թ. 7։

[126] Տե՛ս «Սովետական Հայաստան», 12 հուլիսի, 1946 թ., № 162։

[127] Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 362, ց. 2, գ. 2, թ. 7։ Ի դեպ, հետագայում սովետական կառավարությունը բոլոր հայրենադարձներին ամբողջովին զիջեց վարկերի գումարներն ու գոյացած տոկոսները։



վեցին, որ առաջին հերթին հայրենադարձներ կընդունվեն այն գաղթօջախներից, որոնցում հայ բնակչությունը գտնվում է առավել ծանր վիճակում։ Այդ հանգամանքը ճիշտ ըմբռնեցին նաև սփյուռքի առաջադիմական կազմակերպություններն ու գործիչները, որոնք սովետական կառավարությանը հասցեագրած իրենց դիմումների մեջ խնդրում էին «ներգաղթի ժամանակ նախընտրությունը տալ անգործներին»,— ինչպես գրում էր Սիրիայի և Լիբանանի հայերի ներգաղթի կենտկոմը, 1946 թ. փետրվարի 17-ին[128]։ Նույն միտքն էր պաշտպանում Ալեքսանդրիայում լույս տեսնող «Արաքս» թերթը, գրելով. «Առաջին հերթին պետք է խորհրդային Հայաստան փոխադրել չունևորները, կարոտյալները, զանոնք ամփոփելու, խնամելու, տեղավորելու, հայրենիքի թևերուն տակ պատսպարելու համար»[129]։

## 2. Հայրենադարձների քարավանների ժամանումը և նրանց տեղավորումը հանրապետությունում

Եվ այսպես, լարված նախապատրաստական աշխատանքներից հետո, 1946 թ. հունիսի 23-ին, Բեյրութի նավահանգստից Բաթում ուղևորվեց «Տրանսիլվանիա» շոգենավը՝ հայրենադարձների առաջին քարավանով, որի մեջ գտնվում էր 1806 մարդ։

Սկսվեց սփյուռքահայերի զանգվածային մեծ հայրենադարձությունը։ Այդ մասին Սիրիայի և Լիբանանի հայերի ներգաղթի կենտկոմը, հեռագրելով Երևան, հատուկ «երախտապարտություն և շնորհակալություն» հայտնեց սովետական կառավարությանը[130]։ Այդ «երախտապարտությունն ու շնորհակալությունը» արտահայտում էին ոչ միայն առաջին քարավանի անդամների զգացմունքները, այլև հայրենաբաղձ ողջ գաղութահայության անկեղծ երախտագիտությունը մայր հայրենիքին։

Այդ առթիվ սփյուռքահայ «Անի» ամսագիրը գրել է. «Կմեկնի առաջինը՝ հայրենադարձ հայերու մեծ կարավանին... Եվ ժամանակը կմնա ապշահար՝ երևույթի մը դեմ, որ օտա՛ր է իրեն՝

---

[128] Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 362, ց. 2, գ. 4, թ. 30։

[129] Տե՛ս «Արաքս», 5 հոկտեմբերի, 1946 թ., № 38։

[130] Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 362, ց. 2, գ. 4, թ. 82։

իմաստի և համեմատությունները այս մեծությամբ: Կմեկնի առաջին նավը: Ու կփոխվի պատմությունը հին ու հալածված, բայց ապրելու հանճարն ունեցող ժողովուրդի մը: Կփակվի պատմություն մը, որ գրված էր արյունով ու արցունքով, հերով ու հառաչանքով— սև պատմություն մը կորուստի և կորանքի:

Սկիզբ կառնե պատմություն մը ուրիշ՝ որուն էջերուն մեջ արևը պիտի գա բնակիլ, և պիտի ըլլա անիկա շողարձա՜կ, ժըպտո՜ւն, հպա՜րտ: Տուն կդառնան պանդուխտ հայերը...»[131]:

1946 թ. հունիսի 27-ին «Տրանսիլվանիան» խարիսխ նետեց Բաթումի նավահանգստում, իր ուղևորությունների ընթացքում երևի առաջին անգամ արժանանալով այդպիսի ջերմ ու հուզմունալից դիմավորման:

Հայրենադարձների առաջին քարավանի պետ բժիշկ Գևորգ Մանուշակյանը Բեյրութ—Երևան ճանապարհորդության ընթացքում կազմել է մի օրագրություն-տեղեկագիր, ուր շատ հուզիչ էջեր կան օտարությունից տուն դարձող հայրենակարոտ մարդկանց ապրած զգացմունքների, սովետական հողում նրանց ցույց տրված ջերմ ու սիրալիր ընդունելության մասին[132]:

Հայրենադարձներին ընդունելու համար Բաթում էին ժամանել Հայաստանի կառավարության և աշխատավորության ներկայացուցիչներ, ներգաղթողների հարազատներ, գրողներ, մշակույթի գործիչներ:

Առաջին քարավանով հայրենիք վերադարձողները Բաթումից շնորհակալական հեռագրեր ուղարկեցին Մոսկվա և Երևան: ՍՍՀՄ կառավարությանը հասցեագրված հեռագրում ասված էր. «Մտնելով սովետական հողը, մեր սրտերը լցվեցին անսահման երախտագիտության զգացմունքներով... Սովետական Միության եղբայրական բոլոր ժողովուրդների և առաջին հերթին՝ հերոսական ու ազնիվ ռուս ժողովրդի նկատմամբ, ...որը կորստից փրկեց հայությանը և ամեն կերպ օգնեց նրա ազգային լիակատար վերածնմանը: Մենք, առաջին քարավանով հարազատ Սովետական Հայաստան վերադարձող արտասահմանյան հայերս, հայտնում ենք... մեր խորին երախտագիտությունը» մայր Հայրենիք վերադառնալու մեր վաղեմի իղձը իրականություն դարձնելու համար[133]:

ՀԿ(բ)Կ Կենտկոմի, ՀՍՍՀ Գերագույն սովետի և Մինիստրների խորհրդի հասցեով հղած հեռագրում ասված էր. «Մեր մայր հայրենիք՝ Սովետական Հայաստան մտնելուց առաջ մենք հայտնում ենք Ձեզ և Հայաստանի աշխատավորներին մեր երախտագիտության զգացմունքները, մեծ երջանկության՝ մեր արյունակից եղբայրների ու քույրերի հետ վերամիավորվելու մասին մեր էղձերի իրագործմանը ցույց տված օգնության համար»[134]:

ՀՀԳ-ի թղթակցի հետ ունեցած հարցազրույցում քարավանի պետ Գ. Մանուշակյանը հայտարարեց. «Արտասահմանյան հայերի առաջին քարավանի ուղևորությունը հեռավոր օտարությունից սովետական հայրենիք՝ չտեսնված ոգևորություն և հայրենասիրական խանդավառություն առաջացրեց գաղութի բոլոր հայերի մեջ: Նրանք տառացիորեն պաշտպանում էին մեզ բոլոր կողմերից: Չափազանցություն չի լինի, եթե ասեմ, որ յուրաքանչյուր հայ ցանկանում էր մտնել դեպի հայրենի ափերը գնացող առաջին քարավանի կազմի մեջ»[135]:

Հունիսի 29-ին հայրենադարձների գնացքը Բաթումից շարժվեց դեպի Սովետական Հայաստան: Գ. Մանուշակյանը մանրամասնորեն նկարագրել է Սովետական Հայաստանի տերիտորիան մտնելուց հետո հայրենադարձների ապրած ուրախության հուզիչ պահերը: «Գնացքի Սովետական Հայաստանի սահմաններեն ներս մտնելը սրտահույզ դեպքերու պատճառ կըդառնա,— գրում է Գ. Մանուշակյանը:— Շոգեկառքը կանգ կառնի: Երիկ մարդ, կին, երեխա, ծերունի վագոններեն դուրս կնետվին և կհամբուրեն հայրենի սրբազան հողը: Արտասահմանեն վերադարձողները և մեզ դիմավորելու եկող եղբայրները լալով, հեծկլտալով իրար կհամբուրեն, ժողովուրդը իրարմե չի ուզեր բաժանվի, կուշանանք, շոգեկառքը կսուլե և վերջապես կքալենք»[136]:

Հուլիսի 2-ին, ցերեկվա ժամը 11-ին, հայրենադարձների

---

131 «Անի», ամսագիր, Բեյրութ, հունիս, 1946 թ., № 3, էջ 160:
132 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 362, ց. 2, գ. 4, թ. 85—96:

133 Տե՛ս նույն տեղում, թ. 93—94:
134 Նույն տեղում, թ. 94:
135 «Սովետական Հայաստան», 30 հունիսի, 1946 թ., № 152:
136 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 362, ց. 2, գ. 4, թ. 95:

գնացքը ուրախ աղաղակների տակ հանդիսավոր կերպով մոտավ Երևանի կայարան, ուր այդ օրը արտակարգ բազմություն էր հավաքվել։ Հայրենիք վերադարձողների առաջին խմբին ուրախության արցունքներով և ծաղկեփնջերով է դիմավորում հայոց մայրաքաղաքը։ Հանդիսավոր հնչում են ՍՍՀՄ և ՀՍՍՀ պետական հիմները, հպարտության և երջանկության սարսուռով լցնելով պանդխտությունից հայրենիք դարձած և սեփական պետականության դրոշին փարված մարդկանց հոգիները։ Աննկարագրելի էր բոլոր հայրենադարձների ուրախությունը, ինչպես նախկին հաճընցի Մինաս Օրուջյանի հուզմունքը, որն իր 360 հոգուց բաղկացած գերդաստանի թուրքական յաթաղանից հրաշքով փրկված միակ ներկայացուցիչն էր և երջանկությունից երեխայի նման արտասվում էր։ Բեյրութից հայրենիք ներգաղթած մետաղագործ վարպետ Ղազարոս Ճերեճյանը, որը կիլիկեցի էր, ՀՀԳ-ի թղթակցին հայտարարեց. «Տարագրության մեջ մեր սրտում ծնվեց ու աճեց մեր միակ փափագը՝ ամեն լծից, ամեն կոտորածից ազատ մեր սովետական երկիրը գալ։ Մեր փափագն էր տեսնել հայոց պետությունը, չէ՞ որ Կիլիկիո մեր պետության կործանումից հետո աչա վեց դար է, մենք հայկական ազատ պետություն կերազենք։ Ու ահավասիկ մեր դեմ մեր պետության մայրաքաղաքն է»[137]։

Ներգաղթն այնքան մեծ ոգևորություն էր առաջ բերել, որ շատերն իրենց ուրախությունն արտահայտում էին ձոն-բանաստեղծություններով։ Դրանցից մեկում, որը վերածվել էր երգի և երգվում էր որպես ներգաղթի հիմն, ասված էր.

«Այ կարավան, ջան կարավան,
Քշե դեպի լույս Երևան,
Ինձի համար կյանքի մը նոր
Ալ կ'երևա այգը բասոր։
Ետև ձգած արցունք ու վիշտ
Եվ պանդուխտի ցավը ընդմիշտ
Երթանք մեր մոր գրկին մեջ տաք
Եվ Մասիսի հովանույն տակ,
Տքնինք, կերտենք, ըլլանք վստահ,
Որ ալ չի կա մեզ համար վախ,

[137] «Սովետական Հայաստան», 3 հուլիսի, 1946 թ., № 154։



Թե մեր քիրտին վաստակն արդար
Պիտ վայելեն մարդիկ օտար...»[138]։

Ներգաղթի առաջին քարավանին հետևեցին երկրորդը, երրորդը և բազմաթիվ ուրիշները։ 1946 թ. հուլիսի կեսերին սկսվեց ռումինահայերի հայրենադարձությունը։ Հուլիսի 19-ին Բուխարեստում տեղի ունեցավ փաստաթղթերի հանդիսավոր հանձնումը Սովետական Հայաստան մեկնող 1100 ռումինահայերի։ Այդ արարողությունը վերածվեց խնջական տոնախմբություն։ Տեղի ունեցած միտինգում ելույթ ունեցավ «Հայաստանյան ձակատ» կազմակերպության նախագահ Վահան Դանիելյանը, որը հայտարարեց. «Արտասահմանյան հայերը պատմական օրեր են ապրում, նրանք նորից հայրենիք են ձեռք բերել»[139]։

Այդ նույն ժամանակ սկսվեց նաև բուլղարահայերի հայ-
րենադարձությունը։ 1946 թ. հուլիս-օգոստոս ամիսներին «Անի-
վա», «Ռոսիա» և «Վերխոյանսկ» շոգենավերով Բուլղարիայից
Սովետական Հայաստան ժամանեցին 4383 հայրենադարձներ[140]։
Ուշագրավ է, որ բուլղարական կառավարությունը հայերին
թույլատրել էր իրենց հետ հայրենիք տանել եկեղեցական դույք,
արքապատկերներ, գրքեր և ընդհանրապես հայկական ազգային
մշակույթի համար արժեք ներկայացնող այլ առարկաներ։
Դրանք միաժամանակ ազատվում էին մաքսից։ Բուլղարահայ
ներգաղթողներից շատերը կազմել էին մի շարք արտելներ,
ինչպես օրինակ՝ կոշկակարական, մետաղաձուլական և
այլն, հայրենիքում անմիջապես կազմակերպված աշխատանքի
անցնելու և իրենց նվիրված ու համերաշխ գործունեությամբ
երկրի վերելքին մասնակցելու համար[141]։

1946 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսների ընթացքում
Հունաստանից հայրենիք եկավ 4974 մարդ[142]։ 1946 թ. ամենա-

[138] «Զարթոնք», 24 հունիսի, 1946 թ., № 2821։
[139] «Պահակ», շաբաթաթերթ, Բուխարեստ, 21 հուլիսի, 1946 թ., № 30։
[140] Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 362, ց. 2, գ. 14, թ. 53—60։
[141] Տե՛ս նույն տեղում, գ. 8, թ. 24—25։
[142] Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 14, թ. 27։

մեծ թվով հայրենադարձությունը կատարվեց Իրանից՝ 20597 մարդ[143]։

Այսպիսով, 1946 թ. հունիս-հոկտեմբեր ամիսներին Իրանից, Սիրիայից, Լիբանանից, Հունաստանից, Բուլղարիայից և Ռումինիայից Սովետական Հայաստան ներգաղթեց 10801 ընտանիք կամ 50945 մարդ, այսինքն՝ նախապես պլանավորվածից 22145 մարդով ավելի[144]։ Դրանից 20597 մարդ հայրենիք եկավ Ջուլֆայով, իսկ 30348 մարդ՝ Բաթումով։ Այստեղ անհրաժեշտ է նշել, որ հայրենիք ժամանելուց կարճ ժամանակ անց, հայրենադարձ որոշ ընտանիքների տրոհման և բնական աճի հետևանքով վերը բերված թվերը, ինչպես երևում է ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր ներգաղթի կոմիտեի կազմած մի շարք տեղեկանքներից, փոփոխություն են կրել և 1946 թ. ներգաղթած ընտանիքների թիվը ցույց է տրված 11035, իսկ շնչերի թիվը՝ 51060[145]։

Ըստ առանձին երկրների 1946 թ. ներգաղթածների թիվը ներկայացնում է հետևյալ պատկերը. Իրանից՝ 3870 ընտանիք (20597 մարդ), Սիրիայից և Լիբանանից՝ 3794 ընտանիք (19253 մարդ), Հունաստանից՝ 1372 ընտանիք (4974 մարդ), Բուլղարիայից՝ 1248 ընտանիք (4382 մարդ), Ռումինիայից՝ 517 ընտանիք (1738 մարդ)[146]։

Սովետական Հայաստանի աշխատավորությունը տուն վերադարձող իր տարագիր եղբայրներին ու քույրերին ընդունեց գրկաբաց, սիրով և գուրգուրանքով։ Սովետական կառավարությունը հայրենադարձների տեղավորման ու աշխատանքով ապահովման համար ստեղծեց հնարավոր ու անհրաժեշտ բոլոր պայմանները։ Չնայած առկա դժվարություններին, մեծ աշխատանք կատարվեց այդ ուղղությամբ, թեպետ եղան նաև որոշ վրիպումներ ու սխալներ։ Մի խոսքով, կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը անում էին հնարավոր ամեն բան, որպեսզի հայրենադարձները որքան կարելի է արագ կարողանային ստեղծել իրենց սեփական օջախները, նրանց համար ապահովվեին ըստ մասնագիտության աշխատանք և կրթություն ստանալու լիակատար պայմաններ։ Սովետական հայրենիքը հայրենադարձների առջև բացեց իրենց ընդունակությունները լայնորեն դրսևորելու և նոր կյանքին ակտիվորեն հաղորդակից դառնալու մեծ հնարավորություններ։

1946 թ. ժամանած հայրենադարձները տեղաբաշխվեցին հանրապետության 32 քաղաքներում և շրջաններում։ Քաղաքներում տեղավորվեց 21704 (այդ թվում Երևանում՝ մոտ 14000), շրջկենտրոններում՝ 3994, կոլտնտեսություններում՝ 17863, սովխոզներում՝ 3185 մարդ։ Հայրենադարձների ընդհանուր թվի մեջ աշխատունակները կազմում էին 20855 մարդ։ Ըստ զբաղմունքի նրանք բաժանվում էին հետևյալ կատեգորիաների. գյուղացիներ՝ 9405, տարբեր մասնագիտության շինարարական բանվորներ՝ 1138, դերձակներ՝ 1483, կոշկակարներ՝ 1459, տեքստիլ բանվորներ՝ 672, վարորդներ՝ 791, ոսկերիչներ՝ 191, այլ մասնագիտության բանվորներ և արհեստավորներ՝ 4280, մտավորականներ՝ 343, այդ թվում՝ ուսուցիչներ՝ 160, բժիշկներ և ատամնաբույժներ՝ 61, գերասաններ՝ 39, նկարիչներ և քանդակագործներ՝ 32, ինժեներներ՝ 15, երգիչներ և երաժիշտներ՝ 19, գրողներ և լրագրողներ՝ 12, պրոֆեսորներ՝ 2 մարդ[147]։ Նրանք աշխատանքի տեղավորվեցին արդյունաբերական ձեռնարկություններում, կոլտնտեսություններում, սովխոզներում, պետական հիմնարկներում, գիտության, կուլտուրայի օջախներում։ Ուսումնակարոտ երիտասարդները ընդգրկվեցին զանազան տիպի դպրոցներում, տեխնիկումներում ու բուհերում։

ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր ներգաղթի կոմիտեի 1947 թ. փետրվարի 1-ի տվյալներով գրեթե բոլոր աշխատունակ, ինչպես նաև սովորելու հասակ ունեցող հայրենադարձները տեղավորվել էին աշխատանքի կամ ընդգրկվել էին ուսումնական հաստատություններում։

Գյուղատնտեսության մեջ ընդգրկված էին 9405, արդյունաբերության մեջ՝ 3875, շինարարությունում՝ 1133, արհեստագործական կոոպերացիայի արտելներում՝ 3448, առևտրի ցանցում՝ 234 մարդ, մնացածները այլ հիմնարկ-ձեռնարկություններում[148]։

ՀՍՍՀ լուսավորության մինիստրության 1947 թ. փետրվարի

[143] Տե՛ս նույն տեղում, ց. 2, գ. 25, թ. 1—3։
[144] Տե՛ս նույն տեղում, գ. 12, թ. 7 և գ. 25, թ. 1—3։
[145] Տե՛ս նույն տեղում, ց. 2, գ. 24, թ. 12—27 և գ. 25, թ. 32—35։
[146] Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 14, թ. 27—34։

[147] Տե՛ս նույն տեղում, ց. 2, գ. 25, թ. 1—3։
[148] Տե՛ս նույն տեղում, թ. 32—35։

1-ի տվյալներով 1946 թ. հայրենադարձ երեխաներից հանրակրթական դպրոցներում սովորում էին 7454-ը, բաներիտ դպրոցներում՝ 174 և գյուղերիտ դպրոցներում՝ 392 երիտասարդներ: Արհեստագործական ուսումնարաններում և ֆաբգործուսի դըպրոցներում ընդգրկված էին 704 հայրենադարձ պատանիներ ու աղջիկներ[149]: Միաժամանակ հետևողական աշխատանք էր տարվում նաև մեծահասակ հայրենադարձների կիսագրագիտությունն ու անգրագիտությունը վերացնելու ուղղությամբ: Հաշվառման ենթարկված 4073 անգրագետներից առ 1-ը ապրիլի 1947 թ. 3833 մարդ ընդգրկված էին անգրագիտության վերացման խմբակներում: Հաշվառման վերցված 2874 կիսագրագետներից 2719-ը նույնպես ներգրավված էին ուսուցման ցանցի մեջ, իսկ 544 մարդ արդեն դարձել էին լրիվ գրագետ: Այդ նույն ժամանակ հայրենադարձ երիտասարդներից 203 մարդ սովորում էր հանրապետության բուհերում, 94 մարդ՝ տեխնիկումներում[150]:

1946 թ. ներգաղթածների մեծ մասը՝ 9865 ընտանիք, տեղավորվեց հիմնականում բնակչության կողմից տրամադրված վերանորոգված ու հարմարեցված սենյակներում, իսկ 936 ընտանիք՝ նոր կառուցված բնակարաններում[151]:

1946 թ. վերջերին, ներգաղթող քարավանները ընդունելուց հետո, ՀԿ(բ)Կ Կենտկոմը և ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը կազմեցին հատուկ բրիգադներ՝ հայրենադարձների վիճակը մանրամասն ուսումնասիրելու համար: Դրա նպատակն էր որքան կարելի է ճիշտ պատկերացում կազմել հայրենադարձների իրական վիճակի մասին, միջոցառումներ մշակել նրանց համար կուլտուր-կենցաղային նորմալ պայմաններ ստեղծելու և նրանց լայնորեն սոցիալիստական շինարարության մեջ ներգրավելու համար: Միաժամանակ միջոցառումներ իրականացվեցին հայրենադարձ բանվորների վերաորակավորման, նրանց կուլտուր-տեխնիկական մակարդակի բարձրացման ուղղությամբ: Մասնագիտություն չունեցող հազարավոր հայրենադարձներ հնարավորություն ստացան ձեռք բերելու իրենց ցանկացած մասնագիտությունը և, կարճ ժամանակամիջոցում հմտանալով, դառնալու արտադրության որակյալ վարպետներ:

149 Տե՛ս նույն տեղում, թ. 1—3:

150 Տե՛ս նույն տեղում:

151 Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 14, թ. 29:



Որոշ ժամանակ անց ՀԿ(բ)Կ Կենտկոմի և Հանրապետության կառավարության հանձնարարությամբ ներգաղթի կոմիտեն և վերաբնակեցման վարչությունը կազմակերպեցին համապատասխան սովետների գործկոմների նախագահներից, կուսակցության քաղկոմ-շրջկոմների երկրորդ քարտուղարներից և ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի ներկայացուցիչներից բաղկացած հատուկ հանձնաժողովներ, որոնք մանրամասնորեն ուսումնասիրեցին բոլոր հայրենադարձների կենցաղային և աշխատանքային պայմանները: Այդ հանձնաժողովների կատարած ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ չնայած ընդհանուր առմամբ բավարար է հայրենադարձների բնակարանով և աշխատանքով ապահովման վիճակը, տեղական սովետները, հիմնարկ-ձեռնարկություններն ու ՀՍՍՀ ներգաղթի կոմիտեն սիստեմատիկ նյութական, դրամական ու այլ կարգի օգնություն են ցույց տալիս հայրենադարձներին, այնուամենայնիվ այդ գործում տեղ են գտել նաև մի շարք լուրջ թերություններ: Առանձին հայրենադարձ ընտանիքներ տեղավորված են ոչ հարմար բնակարաններում, ժամանակին չեն ապահովվել աշխատանքով և կարիք ունեն նյութական լուրջ օգնության[152]:

Հատկապես ծանր էր Արտաշատի, Էջմիածնի, Վեդու, Զանգիբասարի (այժմ՝ Մասիսի) շրջաններում և «Արարատ» տրեստի ու կոնսերվտրեստի սովխոզներում տեղավորված Իրանից ներգաղթած գյուղացիական տնտեսությունների վիճակը: Նրանց մեծ մասը չքավոր էր, եկել էր առանց պարենի ու որևէ ունեցվածքի: Տեղական կազմակերպությունները զգալի օգնություն էին ցույց տվել նրանց, ներգաղթի կոմիտեն հատկացրել էր հագուստ, կոշիկ, օճառ և այլ ապրանքներ: Սակայն այդ շրջանները, չլինելով հացահատիկային, հնարավորություն չունեին հայրենադարձներին ապահովել հացով: Անհրաժեշտ էր այդ նպատակով ամսական մինչև 35 տոննա լրացուցիչ ալյուր հատկացնել այդ շրջաններին, որը և կատարվեց ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի 1947 թ. փետրվարի 3-ի կարգադրությամբ[153]:

Երևանի Լենինյան շրջսովետի գործկոմում հայրենադարձներից ստացված դիմում-բողոքներին տրված ընթացքի ուսում-

152 Այդ մասին մանրամասն տե՛ս նույն տեղում, գ. 10, թ. 1—143, գ. 14, թ. 4—6, 10—15, 23—26, գ. 15, գ. 17, թ. 1—112, գ. 20, թ. 1—126 և այլն:

153 Տե՛ս նույն տեղում, գ. 15, թ. 9—11 և 32—39:

նասիրությունը ցույց տվեց, որ 1946 թ. հուլիսից մինչև 1947 թ. ապրիլը այդ շրջանում տեղավորված 1260 հայրենադարձ ընտանիքներից (4924 շունչ) ստացվել է տարբեր բնույթի 6398 դիմում: Այդ դիմումներից 1564-ը՝ հողամաս և 119-ը՝ շինանյութեր ձեռք բերելու խնդրանքով, 446-ը՝ դրամական օժանդակություն, 1100-ը՝ վառելիք, 260-ը՝ վառարաններ, 2967-ը՝ նյութական օգնություն ստանալու մասին էին, որոնցից բավարարվել էր 2927-ը[154]:

Հանձնաժողովների կատարած ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ հայրենադարձների տեղավորման, աշխատանքային ու նյութական-կենցաղային ապահովման գործում նկատված թերություններն ու դժվարությունները հիմնականում հետևյալներն են.

1. Քաղաքներում բավականաչափ ազատ բնակելի տարածության բացակայության հետևանքով որոշ թվով քաղաքաբնակ հայրենադարձներ տեղավորվել են գյուղերում: Թեպետ նրանց աշխատանք էր տրվել կոլտնտեսություններում, ինչպես նաև շրջանային կենցաղային սպասարկման կոմբինատներում ու արտելներում, այնուամենայնիվ, հասկանալի պատճառներով, բոլորին հնարավոր չէր եղել աշխատանքի տեղավորել հիմնական մասնագիտությամբ: Բնականաբար, այդպիսիները դժգոհ էին գյուղական շրջաններում տեղավորվելուց և ձգտում էին տեղափոխվել քաղաքներ, գլխավորապես՝ Երևան: Չնայած նրանց որոշ մասը հետագայում ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի վերաբնակեցման վարչության թույլտվությամբ փոխադրվել էր քաղաքներ, սակայն շատերն էլ նման քայլի էին դիմում ինքնակամ կերպով, տեղավորվելով ծանոթների ու ազգականների մոտ կամ մասնավոր կարգով վարձակալած բնակարաններում: Նման ձևով քաղաքներում կուտակվելու հետևանքով հայրենադարձների որոշ մասն ընկնում էր բնակարանային վատ, հատկապես ձմռանը ապրելու համար աննպաստ պայմանների մեջ, որը առաջ էր բերում նոր դժգոհություններ:

2. Որոշակի դժվարություն էր առաջացել հայրենադարձ ընտանիքների որոշ մասին վառելիքով ապահովելու գործում: Չնայած քաղաքներում և շրջաններում նրանց համար նախապես առանձնացվել էր վառելիք (փայտ, քարածուխ, տորֆ և այլն),

[154] Տե՛ս նույն տեղում, գ. 14, թ. 23—26:



սակայն 1946—1947 թթ. խիստ ձմռան պայմաններում տրամադրված քանակով վառելիքը չէր բավարարում հայրենադարձների պահանջարկը, որը նույնպես դժգոհությունների տեղիք էր տալիս:

3. Լուրջ թերություններ կային նաև հայրենադարձներին պարենամթերքներով ապահովելու գործում: Թեպետ միութենական կառավարությունը այդ նպատակով լրացուցիչ ֆոնդեր էր բաց թողել և տեղական կազմակերպությունները սիստեմատիկ օգնություն էին ցույց տալիս հայրենադարձներին, այնուամենայնիվ մի շարք կոլտնտեսություններում և սովխոզներում որոշակի դժվարություններ էին առաջացել նրանց պարենամթերք մատակարարելու գործում:

4. Որոշ դժվարություններ էին ծագել մի շարք մասնագիտությունների գծով (ոսկերիչներ, վարորդներ և այլն) հայրենադարձների աշխատանքի տեղավորման հարցում: Դա նույնպես առաջ էր բերում որոշակի դժգոհություններ:

Թեև հայրենադարձների հիմնական զանգվածը ֆիզիկապես առողջ էր, սակայն Իրանից եկած գյուղացիների մի մասի մոտ նկատվել էին անդրադարձ տիֆով և տրախոմայով հիվանդության փաստեր: ՀՍՍՀ առողջապահության մինիստրության ձեռնարկած միջոցառումների շնորհիվ կանխվեց տիֆի տարածման վտանգը և բուժվեցին հիվանդները: Կազմակերպվեցին հակատրախոմային մի քանի բրիգադներ, որոնք սիստեմատիկաբար լինելով համապատասխան շրջաններում, բուժում էին հիվանդներին և իրականացնում կանխարգելիչ միջոցառումներ: Արտաշատի, Հոկտեմբերյանի, Էջմիածնի, Վեդու, Ջանգիբասարի և այլ շրջաններում կազմակերպվել էին հակատրախոմային կայաններ և առանձնացվել լրացուցիչ ակնաբույժներ[155]:

Չնայած նշված թերություններին ու դժվարություններին, հայրենադարձների բացարձակ մեծամասնությունը գոհ էր հայրենիք վերադառնալու համար, ճիշտ էր ըմբռնում վերաբնակման հետ կապված դժվարությունները և ձգտում հարմարվել կյանքի ու կենցաղի նոր պայմաններին, ջանում ոչ միայն սեփական աշխատանքով բարելավել իր դրությունը, այլև նպաստել հայրենի երկրի զարգացմանը:

[155] Տե՛ս նույն տեղում, թ. 27—34:

Սակայն առանձին հայրենադարձների մոտ նկատվում էին նաև բացասական տրամադրություններ՝ կապված մասամբ կենցաղային և աշխատանքային դժվարությունների, մասամբ էլ նոր պայմանների ոչ ճիշտ ընկալման հետ։ Հանրապետության կուսակցական և սովետական ղեկավար մարմինները, անդրադառնալով նման երևույթներին, մշակեցին լրացուցիչ գործնական միջոցառումներ՝ հայրենադարձների աշխատանքային ու կենցաղային պայմանները բարելավելու, նրանց նկատմամբ ամենօրյա ուշադրություն և հոգատարություն ցուցաբերելու, ինչպես նաև նրանց շրջանում քաղաքական-դաստիարակչական աշխատանքները ուժեղացնելու ուղղությամբ։ Մեծ կարևորություն տալով այդ գործին, ՀԿ(բ)Կ Կենտկոմի ագիտացիայի և պրոպագանդայի բաժնում ստեղծվեց հայրենադարձների շրջանում տարվող աշխատանքի սեկտոր[156]։

Հայրենադարձներին օգնելու նպատակով ՀՍՍՀ կառավարության խնդրանքով ՍՍՀՄ Մինիստրների խորհուրդը 1946 թ. չորրորդ եռամսյակում Հայաստանին հատկացրեց արդյունաբերական ապրանքների և պարենամթերքների լրացուցիչ ֆոնդ։ Այդ ֆոնդից, որպես միանվագ օգնություն, հայրենադարձներին տրվեց 600 տ ալյուր, 80 տ ձավար, 42,5 տ շաքար և հրուշակեղեն, 15 տ միս և ձուկ, 3 տ կենդանական և բուսական յուղ, 106,8 տ տնտեսական օճառ, 38050 մ բրդյա և բամբակյա կտոր, 16300 կտոր տղամարդու, կանացի և մանկական հագուստ, 8350 զույգ կոշիկ, 63,6 տ նավթ, 2600 հատ վառարան, 2268187 ռ. դրամ և այլն[157]։ Դրան զուգընթաց, արդյունաբերական ձեռնարկությունները, կոլտնտեսությունները, սովխոզները և հիմնարկությունները իրենց մոտ աշխատող հայրենադարձներին սեփական միջոցներից պարբերաբար ցույց էին տալիս դրամական, նյութական և այլ կարգի օգնություն[158]։ Բացի այդ, արտասահմանյան բարեգործական հաստատություններից ստացված և ՀՍՍՀ կառավարության տրամադրության տակ գտնվող միջոցներից 1946 թ. ներգաղթածներին տրվել է

[156] Տե՛ս ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 1, ց. 35, կ. 7, գ. 73, թ. 2—9, նաև՝ ՀՍՍՀ ՀՀՍԾ ՓԿԱ, ֆ. 362, ց. 1, գ. 29, թ. 94 և 112։

[157] Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍԾ ՓԿԱ, ֆ. 362, ց. 1, գ. 14, թ. 30—34 և ց. 2, գ. 25, թ. 32—35։

[158] Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 14։



7816 զույգ կոշիկ, 24555 կտոր հագուստ, 5212 մ կտոր, 8780 կտոր տնտեսական օճառ և այլն[159]։

Սովետական կառավարությունը հայրենադարձների համար սահմանեց լրացուցիչ մի շարք արտոնություններ ու առանձնաշնորհումներ։ Այսպես, օրինակ, ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի 1946 թ. հունիսի 21-ի, ինչպես նաև ՀԿ(բ)Կ Կենտկոմի ու ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի 1946 թ. հուլիսի 9-ի համատեղ որոշումների համաձայն գյուղական վայրերում բնակություն հաստատած հայրենադարձները 2—5 տարի ժամանակով ազատվում էին գյուղատնտեսական հարկից, մյուսները՝ անզավակության, եկամտի և այլ հարկերից[160]։ 1946 թ. հոկտեմբերի 8-ին ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը որոշում ընդունեց ներգաղթած բազմազավակ և միայնակ մայրերին պետական նպաստներ նշանակելու և վճարելու[161], ինչպես նաև հայրենադարձներին թոշակավորելիս արտասահմանում աշխատած ժամանակամիջոցը նույնպես որպես ստաժ հաշվի առնելու մասին և այլն[162]։ Դեռևս 1946 թ. ապրիլի 23-ին ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը որոշում էր կայացրել թույլատրել կոլտնտեսություններին անբաժանելի ֆոնդերից հայրենադարձների համար բնակարաններ կառուցելու նպատակով միջոցներ առանձնացնել։ Այդ որոշման համաձայն հանրապետության 28 շրջաններում հատկացվեց շուրջ 40 միլիոն ռուբլի[163]։

1946 թ. մայիսի 14-ին ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը որոշում ընդունեց հայրենադարձների համար երեք նոր ավաններ կառուցելու մասին։ Դրանցից երկուսը կառուցվելու էին Ստորին Հրազդանի ջրանցքով ոռոգվող հողերի վրա, իսկ մեկը՝ Վեդու շրջանում, յուրաքանչյուրը 250 տնտեսության համար։ Այդ գործը դրվեց ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր վերաբնակեցման վարչության վրա և հանձնարարվեց դրանցում բնակելի տների շինարարությունն ավարտել մինչև 1946 թ. հոկտեմբերը[164]։

[159] Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 14 և ց. 2, գ. 25։

[160] Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 18, թ. 103։

[161] Տե՛ս նույն տեղում, գ. 8, թ. 96։

[162] Տե՛ս նույն տեղում, գ. 13, թ. 4։

[163] Տե՛ս նույն տեղում, գ. 4, թ. 30—32։

[164] Տե՛ս նույն տեղում, թ. 53։

ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի 1946 թ. հունիսի 7-ի կարգադրությամբ առաջարկվեց Հայկոնսերվտրեստին իր ենթակայության սովխոզներում հայրենադարձների ընդունումն ու տեղավորումը ապահովելու նպատակով հուլիսին ավարտել 47 անհատական տների և բազմահարկ շենքերում 34 բնակարանների շինարարությունը, ինչպես նաև եղած բնակարանային ֆոնդից հարմարեցնել 170 սենյակ[165]։

1946 թ. սեպտեմբերի 6-ին ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը անդրադարձավ հայրենադարձների համար կատարվող բնակարանային շինարարության ընթացքին և արձանագրեց, որ ծայրահեղ անբավարար է վիճակը այդ բնագավառում։ Մինիստրների խորհուրդը գործնական միջոցառումներ մշակեց դրությունը կտրուկ կերպով բարելավելու ուղղությամբ[166]։

Նկատի ունենալով բնակարաններով ապահովելու գործում առաջացած դժվարությունները՝ ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը 1946 թ. նոյեմբերի 25-ի որոշումով այլ կազմակերպություններին հատկացված միջոցներից կրճատեց կես միլիոն ռուբլի և այն ներդրեց քաղաքներում հայրենադարձների համար բնակելի տների կառուցման ֆոնդի մեջ։ 1600 ընտանիքներ ստացան հողամաս և վարկ՝ անհատական բնակարաններ կառուցելու համար[167]։

Կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության այս հոգատարությանը հայրենադարձների ճնշող մեծամասնությունը պատասխանում էր բարեխիղճ և նվիրված աշխատանքով։ Հանրապետության կոլտնտեսություններում տեղավորված հայրենադարձներից շատերը 3—4 ամսում վաստակել էին 150—200 աշխօր, տեր դարձել նյութական զգալի միջոցների։ Օրինակ, Թալինի շրջանի Զառինջա գյուղի կոլտնտեսությունում հայրենադարձ Վահան Ասլանյանը իր ընտանիքով վաստակել էր 700, Մինաս Երանյանը՝ 500, Փիրմալաք (այժմ Արեգ) գյուղում Խաչիկ Թևանյանը՝ մոտ 450, Եղեգնաձորի շրջանում Ջհանգիր Կասումյանը՝ 700 աշխօր[168]։

Արդյունաբերության և շինարարության մեջ նույնպես շատ

165 Տե՛ս նույն տեղում, թ. 56։
166 Տե՛ս նույն տեղում, գ. 8, թ. 85—87։
167 Տե՛ս նույն տեղում, գ. 12, թ. 74։
168 Տե՛ս նույն տեղում, ց. 2, գ. 24, թ. 12—27։



հայրենադարձներ աչքի էին ընկնում իրենց ազնիվ աշխատանքով, կատարում էին 2—3 արտադրական նորմա։ Կարելի է հիշատակել Երևանի Ստ. Շահումյանի անվան կաշվի գործարանի բանվոր, Իրանից հայրենիք եկած Արշակ Սահակյանի, գյուղգործիքների գործարանի արտադրամասի վարիչ, Բուլղարիայից հայրենադարձ Գրիգոր Պապալեճյանի և այլոց հայրենանվեր աշխատանքը[169]։

Հայրենիք վերադարձած սովետական նոր քաղաքացիները ակտիվորեն մասնակցում էին նաև երկրի հասարակական-քաղաքական կյանքին։ ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության 1946 թ. հոկտեմբերի 19-ի հրամանագրի համաձայն Սովետական Միության տերիտորիա մտնելու պահից սկսած ներգաղթողներն ստանում էին ՍՍՀՄ քաղաքացիություն և, բնականաբար, օգտվում դրանից բխող բոլոր իրավունքներից[170]։

* * *

1946 թ. հայրենադարձության հանրագումարը ավելի պարզորոշ դարձրեց այն իրողությունը, որ թեպետ գրեթե ամբողջ սփյուռքահայությունը ձգտում է կենտրոնանալ Սովետական Հայաստանում, այնուամենայնիվ դաժան պատերազմից նոր դուրս եկած մեր երկիրը դեռևս ի վիճակի չէ լիովին իրականացնել այդ ցանկությունը։ Ուստի սովետական կառավարությունը որոշեց 1947 թ. և հետագա տարիներին շարունակել իրականացնել առաջին հերթին սփյուռքահայ այն զանգվածների հայրենադարձությունը, որոնք գտնվում էին քաղաքական ու տնտեսական առավել աննպաստ պայմաններում։

Այդ տեսակետից շարունակում էր խիստ ծանր մնալ Հունաստանի հայության վիճակը։ Եվ բնավ պատահական չէր, որ սփյուռքահայ շատ կազմակերպություններ սովետական կառավարությանը խնդրում էին ամեն կերպ արագացնել «հունահայերի ներգաղթը, որոնց վիճակը ողբալի է»[171]։ Սակայն բարվոք չէր դրությունը նաև հայկական մյուս գաղթօջախներում։ Սիրիայի և Լիբանանի հայերի ներգաղթի կենտ-

169 Տե՛ս նույն տեղում, ֆ. 709, ց. 2, գ. 589, թ. 1—21։
170 Տե՛ս նույն տեղում, ֆ. 326, ց. 1, գ. 145, թ. 1—19։
171 Տե՛ս նույն տեղում, գ. 18, թ. 27—28, գ. 30, թ. 28։



15—1181

կոմի նախագահի տեղակալ Հրաչ Սեդրակյանը և քարտու-
ղար Հարություն Մաղեյանը 1947 թ. սկզբներին ՀՍՍՀ ներգաղ-
թի կոմիտեին հասցեագրած նամակում գրում էին. «Վերջին
շրջանին առաջ եկած և տակավ զարգացող մի շարք փոփոխու-
թյուններ հետզհետե ծանրացող լուրջ կացություն մը ստեղծած
են մեր երկրներու մեջ ապրող հայության համար։ Պաղեստինի
ներգաղթի կոմիտեեն ստացած ենք հատուկ նամակ մը, ուր կը-
նկարագրվի իրենց շրջանին մեջ ստեղծված լուրջ կացության հե-
տևանքով հայության մատնված խիստ դժվարին վիճակը և կը-
խնդրվի, մայիս ամսեն առաջ իսկ, մեծ թիվով պաղեստինա-
հայերուն ներգաղթը։
Ջգալի չափով վատթարացած են և կշարունակեն ավելի
վատթարանալ աշխատավոր մասսաներուն ապրուստի պայման-
ները, կաճին անգործությունն ու թշվառությունը, իրենց բոլոր
հետևանքներով»[172]:
Իրաքի հայերի ներգաղթի կոմիտեն, դիմելով Բաղդադում
ՍՍՀՄ միսիայի ղեկավար Գ. Զայցևին, գրում էր. «Ուսումնասի-
րելով դիմողներուն (ներգաղթելու համար.—Հ. Մ.) տնտեսական
վիճակը, կոմիտեն ասոնցմե առնվազն 4000 հոգի այս տարի
մեկնելու խիստ անհրաժեշտություն կգտնե»[173]: Եգիպտահայերի
ներգաղթի կոմիտեն խնդրում էր 1947 թ. նախատեսված 3000
հոգու փոխարեն անպայման հայրենադարձնել առնվազն 5000
մարդ[174]։
Հաշվի առնելով սփյուռքահայության այդ ծանր կացությու-
նը, սովետական կառավարությունը որոշեց 1947 թ. ևս հայրենիք
տեղափոխել մի քանի հազար տարագիրների։ ՍՍՀՄ Մինիս-
տրների խորհուրդը 1946 թ. դեկտեմբերի 3-ին քննարկեց 1947
թ. Հայկական ՍՍՀ կատարվելիք ներգաղթի հարցը և որոշեց
ընդունել շուրջ 63 հազար սփյուռքահայերի[175]։ Դրա հիման վրա
ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը մշակեց կոնկրետ պլան, որի
համաձայն նախատեսվում էր 1947 թ. հայրենիք տեղափոխել
Իրանից՝ 20 հազար, Հունաստանից՝ 15 հազար, Սիրիայից և Լի-
բանանից (այդ թվում նաև Իրաքից, Պաղեստինից և Կիպրոսից,

¹⁷² Տե՛ս նույն տեղում, գ. 41, թ. 37—38։
¹⁷³ Տե՛ս նույն տեղում, թ. 28։
¹⁷⁴ Տե՛ս նույն տեղում, ց. 8, գ. 23, թ. 29—30։
¹⁷⁵ Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 12, թ. 82։



որովհետև այդ գաղթօջախներից նույնպես Բեյրութով էին հայ-
րենիք գալու)՝ 15 հազար, Ֆրանսիայից՝ 7 հազար, Եգիպտո-
սից՝ 3 հազար, Հարավային Ամերիկայի երկրներից՝ 2 հազար
և ԱՄՆ-ից՝ 1 հազար մարդ[176]։
Միաժամանակ որոշվեց 1947 թ. ժամանող հայրենադարձ-
ների համար միութենական և հանրապետական ենթակայու-
թյան ձեռնարկությունների գծով կառուցել և շահագործման
հանձնել 147350 քմ բնակելի տարածություն։ Պետական վար-
կերի հաշվին անհատական բնակարանային շինարարության
գծով նախատեսվում է կառուցել 8400 տուն, այդ թվում՝ գյու-
ղական վայրերում՝ 4400, քաղաքներում և բանավաններում՝
4000 տուն։ Սահմանվեց այդ նպատակով բաց թողնել 156 մի-
լիոն ռուբլու վարկ, որից գյուղբանկի գծով՝ 76 և կոմունալ բան-
կի գծով՝ 80 միլիոն ռուբլի։ Նախատեսվում էր հայրենադարձնե-
րի համար կառուցել 4 նոր ավաններ՝ նոր յուրացված հողերի
վրա։ Հայրենադարձներին աշխատանքով անմիջապես ապահովե-
լու նպատակով ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին թույլատրվում էր
նրանց համար կազմակերպել նոր արտադրական արտելներ և իր
հայեցողությամբ հաստատել դրանց հաստիքները։ Հայրենա-
դարձության հաջող կազմակերպման համար ՀՍՍՀ Մինիստրնե-
րի խորհրդին առաջարկվում էր արտասահմանյան համապա-
տասխան երկրներ գործուղել իր ներկայացուցիչներին, այդ
թվում Իրան՝ 4, Ֆրանսիա՝ 3, Եգիպտոս՝ 3, Հարավային Ամերի-
կա՝ 2 և ԱՄՆ՝ 2 մարդ։ Միաժամանակ թույլատրվում էր առանձ-
նացնել ներկայացուցիչներ՝ հայրենադարձներին մեկնման նա-
վահանգիստներից մինչև ժամանման կայանները ուղեկցելու
համար, այդ թվում՝ Սիրիայից, Լիբանանից և Հունաստանից՝
2-ական, իսկ Ֆրանսիայից, Եգիպտոսից, ԱՄՆ-ից և Հարավային
Ամերիկայից՝ մեկական մարդ[177]։
Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր ներգաղ-
թի կոմիտեն, հաշվի առնելով Իրանում և Հունաստանում հա-
յերի առավել դժվարին կացությունը, Բուլղարիայի և Ռումի-
նիայի հետ համեմատած, որոշեց վերջին երկու երկրից 1947 թ.
ներգաղթ չկատարել, ավելացնելու համար առաջին երկու գաղթ-

¹⁷⁶ Տե՛ս նույն տեղում, ց. 2, գ. 20, թ. 18—24։
¹⁷⁷ Տե՛ս նույն տեղում։

օջախների քվոտան[178]։ Սակայն 1947 թ. ներգաղթի հետ կապված իրադարձությունները ծավալվեցին այնպես, որ հնարավոր չեղավ Իրանից հայրենադարձնել ոչ մի մարդ։ Իրանական կառավարությունը, չնայած իր նախնական համաձայնությանը, արգելեց հայերի հայրենադարձությունը։ Դրա հետևանքով ներգաղթելու նախապատրաստված և արդեն իրենց տներն ու գույքը վաճառած, գործերը լուծարքի ենթարկած իրանահայերը ընկան խիստ ծանր կացության մեջ։ Իրանահայերի ներգաղթի կոմիտեն, բարեգործական հաստատություններն ու սովետական կառավարությունը ձեռք առան արտակարգ միջոցներ՝ նրանց վիճակը ինչ-որ չափով թեթևացնելու ուղղությամբ[179]։

Որոշակի խոչընդոտներ առաջացան նաև ԱՄՆ-ից և Հարավային Ամերիկայի հայկական գաղթօջախներից հայրենադարձության իրականացման գործում։ ԱՄՆ-ի, Արգենտինայի, Բրազիլիայի և Ուրուգվայի կառավարությունները մերժեցին այդ երկրները մեկնելու վիզաներ տալ ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի հայրենադարձության գծով ներկայացուցիչներին։ Հարուցվեցին նաև այլ կարգի խոչընդոտներ[180]։ Սովետական կառավարության գործադրած հետևողական ջանքերի շնորհիվ հնարավոր եղավ ինչ-որ չափով կարգավորել ամերիկահայերի ներգաղթը, սակայն Հարավային Ամերիկայի հայ տարագիրների հայրենադարձությունը մնաց անկատար։ Այդ պայմաններում ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր ներգաղթի կոմիտեն, նկատի ունենալով ռումինահայերի և բուլղարահայերի հայրենադարձվելու բուռն խնդրանքները, որոշեց 1947 թ. որոշ թվով հայրենադարձներ ընդունել նաև այդ երկրներից[181]։

Եվ այսպես, նախապատրաստական լայն աշխատանքներ կատարելուց հետո, 1947 թ. հուլիսից վերսկսվեց սփյուռքահայերի հայրենադարձությունը և մինչև տարվա վերջը հայրենիք ժամանեց 8521 ընտանիք, 35401 մարդ[182]։ Ըստ առանձին երկրների ներգաղթել են. Սիրիայից և Լիբանանից՝ 2525 ընտանիք, 12985 մարդ, Հունաստանից՝ 3478 ընտանիք, 13241 մարդ,

[178] Տե՛ս նույն տեղում, գ. 15, թ. 6 և գ. 28, թ. 52։

[179] Տե՛ս նույն տեղում, գ. 41, թ. 16։

[180] Տե՛ս նույն տեղում, գ. 28, թ. 69—72 և գ. 41, թ. 2—3։

[181] Տե՛ս նույն տեղում, գ. 13, թ. 38—43։

[182] Տե՛ս նույն տեղում, գ. 25, թ. 7—10։



Ֆրանսիայից՝ 1518 ընտանիք, 5260 մարդ, Եգիպտոսից՝ 486 ընտանիք, 1669 մարդ, Պաղեստինից՝ 243 ընտանիք, 1250 մարդ, Իրաքից՝ 177 ընտանիք, 856 մարդ, ԱՄՆ-ից՝ 88 ընտանիք, 151 մարդ, Չինաստանից՝ 6 ընտանիք, 16 մարդ[183]։

Կարծում ենք, որ հետաքրքրությունից զուրկ չէ առանձին երկրներում ներգաղթի նախապատրաստման հետ կապված աշխատանքների մասին որոշ տեղեկությունների հաղորդումը։

Ֆրանսաբնակ հայերի ներգաղթի կենտկոմի 1948 թ. նոյեմբերի 22-ին կազմած տեղեկագրում նշված է, որ ֆրանսահայ ներգաղթողները հայրենիք են մեկնել երկու խմբով, առաջինը՝ «Ռոսիա», իսկ երկրորդը՝ «Պոբեդա» շոգենավերով։ Նախապատրաստական շրջանում կենտկոմը կազմակերպել էր բանավոր և գրավոր պրոպագանդա, բացատրել ներգաղթի կարևորությունը և նշանակությունը հայ ժողովրդի ազգային վերամիավորման գործում։ Տեղի էին ունեցել բազմաթիվ հավաքույթներ, կարգացվել դասախոսություններ, զեկուցումներ, որոնց հաջողությանը մեծապես նպաստել էին ՀԲԸՄ տեղի մասնաճյուղը, երիտասարդաց ու կանանց միությունները, Հայ կարմիր խաչի կազմակերպությունը և հայրենակցական միությունները։ Փարիզի հայերի շրջանում մեծ հետաքրքրություն էր առաջ բերել «Ճանչընանք հայրենիքը» թեմայով դասախոսությունների շարքը։ Հրատարակվել էր «Ներգաղթը և խորհրդային սահմանադրությունը» գրքույկը։ Ներգաղթի հետ կապված հարցերը մանրամասնորեն լուսաբանվում էին ֆրանսահայ ազգային ընդհանուր միության օրգան «Ժողովուրդ» օրաթերթում և հայկական այլ պարբերականներում։ Ֆրանսահայ ներգաղթի կոմիտեն սերտ համագործակցության մեջ էր գտնվում Փարիզի սովետական դեսպանության, ներգաղթի գծով ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի լիազոր Անդրանիկ Հինայեկյանի, ինչպես նաև ՖՀԱՄ-ի և ՀԲԸՄ-ի հետ։ Ներգաղթի կենտկոմը իր ամփոփագրում նշում է, որ խիստ թերություններով իրականացվեց երկրորդ քարավանի մեկնումը։ Նախ շոգենավը Մարսել ժամանեց պայմանավորված ժամկետից բավական ուշ, որի հետևանքով ներգաղթողները շուրջ 40 օր անորոշ սպասողական վիճակում էին գտնվում, ապա հապճեպության պատճառով այնպես ստացվեց, որ շատերի բեռներն ուղարկվեցին, իսկ իրենք չկարողացան մեկնել, կամ

[183] Տե՛ս ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 1, ց. 38, գ. 85, թ. 78—81։

ընտանիքի անդամների մի մասը մեկնեց, իսկ մյուս մասին չհաջողվեց մեկնել և այլն[184]։ Ֆրանսահայերի ներգաղթի կենտկոմը միաժամանակ ներկայացրել է իր ֆինանսական հաշվետվությունը, որից պարզվում է, որ հավաքվել է ընդամենը 2,429,820 ֆրանկ, որը օգտագործվել է հայրենադարձության նախապատրաստման համար[185]։

Սիրիայի և Լիբանանի հայերի ներգաղթի կենտկոմի և շրջանային կոմիտեների միացյալ ժողովը, որը տեղի է ունեցել Բեյրութում, 1947 թ. դեկտեմբերի 20—21-ը, ամփոփելով կատարված աշխատանքը, արձանագրել է, որ 1947 թ. Բեյրութից հայրենիք է մեկնել 5 քարավան։ Առաջին քարավանը (4 հուլիսի, 1947 թ.) Լիբանանից հայրենիք է բերել 410 ընտանիք (2321 շունչ), երկրորդ քարավանը (25 հուլիսի, 1947 թ.)՝ Լիբանանից 23 ընտանիք (125 շունչ), Սիրիայից՝ 486 ընտանիք (2983 շունչ), ընդամենը 509 ընտանիք (3108 շունչ)։ Երրորդ քարավանով (11 օգոստոսի, 1947 թ.) հայրենիք են մեկնել Լիբանանից 415 ընտանիք (2113 շունչ), Սիրիայից՝ 185 ընտանիք (1041 շունչ), ընդամենը՝ 600 ընտանիք (3154 շունչ), չորրորդ քարավանով (6 սեպտեմբերի, 1947 թ.) Լիբանանից՝ 53 ընտանիք (315 շունչ), Սիրիայից՝ 459 ընտանիք (2288 շունչ), ընդամենը՝ 512 ընտանիք (2603 շունչ), հինգերորդ քարավանով (25 հոկտեմբերի, 1947 թ.) Լիբանանից՝ 199 ընտանիք (1011 շունչ), Սիրիայից՝ 150 ընտանիք (758 շունչ), Իրաքից՝ 181 ընտանիք (857 շունչ), Պաղեստինից՝ 261 ընտանիք (1305 շունչ), (Նրանք ավտոմեքենաներով հասցվում էին Բեյրութ և այնտեղից նավով մեկնում Բաթում), ընդամենը՝ 2822 ընտանիք, 15117 շունչ, որից արական՝ 7816, իգական՝ 7301 շունչ[186]։

Անդրադառնալով տեղ գտած դժվարություններին՝ Սիրիայի և Լիբանանի ներգաղթի կոմիտեն նշում է հատկապես դրամական միջոցների սղությունը։ Այդ երկրներում ներգաղթի կոմիտեների եկամտի գրեթե միակ աղբյուրը եղել է ներգաղթողնե-

[184] Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 362, ց. 2, գ. 31, թ. 43—48։

[185] Տե՛ս նույն տեղում, թ. 50—51։

[186] Տե՛ս նույն տեղում, գ. 41, թ. 44—45։ Պետք է նշել, որ վերը բերված թվերի և ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր ներգաղթի կոմիտեի ներկայացրած թվերի միջև կան որոշ տարբերություններ։ Ավելի ստույգ պետք է համարել ներգաղթի կոմիտեի տվյալները։



րից գանձվող գումարը։ Սակայն քանի որ ներգաղթողների մեծ մասը ոչ մի կոպեկ չէր մուծել, ներգաղթի կենտկոմը հայրենադարձներին փոխադրող նավերին պարտք էր մնացել 855700 լիբանանյան ոսկի։ Լիբանանից 1947 թ. հայրենիք մեկնած 1100 ընտանիքից (5885 շունչ) միայն 53-ն (278 շունչ) էր լրիվ վճարել իր ճանապարհածախսը, որը կազմել է 48120 լիբ. ոսկի։ 60 ընտանիք (266 շունչ) միայն կիսով չափ էր վճարել ճանապարհածախսը՝ 25751 լիբ. ոսկի, 95 ընտանիք (1244 շունչ) կատարել էր միայն մասնակի վճարումներ՝ 26579 լիբ. ոսկի, իսկ մնացած 992 ընտանիքը (2776 շունչ) մեկնել էր ամբողջովին ձրի[187]։ Եթե 10 տարեկանից բարձր յուրաքանչյուր ներգաղթող վճարեր իր ճանապարհածախսը, կստացվեր 624600 լիբ. ոսկի, մինչդեռ մուտք էր եղել ընդամենը 90450 լիբ. ոսկի։

Սիրիայից ներգաղթած ընտանիքներից անվճար հայրենիք են մեկնել 400-ը, ճանապարհածախսը լրիվ մուծել են 143-ը, մասնակիորեն՝ 591-ը, որով կոմիտեի գանձարկղը մուտք է եղել 248596 լիբ. ոսկի, մինչդեռ, եթե բոլոր չափահասները վճարեին ճանապարհածախսը, կստացվեր 768250 լիբանանյան ոսկի[188]։ Հասկանալի է, որ հայրենադարձներից չգանձված ճանապարհավարձի գումարը նավային ընկերություններին մուծում էր նույնպես սովետական կառավարությունը։

Սիրիայից և Լիբանանից 1947 թ. ներգաղթողների թվում հայրենիք եկան երկու արտելներ՝ մեկը Բեյրութից՝ 6, իսկ մյուսը՝ Հալեպից՝ 14 բեռնատար ավտոմեքենաներով, ինչպես նաև Ջեզիրեից ներգաղթող երկու ընտանիք բերեցին 2 ավտոմեքենա, իսկ Բեյրութի Զեյթունցիների հայրենակցական միությունը Նոր Զեյթուն ավանի շինարարական կազմակերպություններին նվեր ուղարկեց մեկ բեռնատար ավտոմեքենա[189]։

1947 թ. ներգաղթողների թիվը, անշուշտ, ավելի մեծ կլիներ, եթե արհեստականորեն ստեղծված մի շարք խանգարիչ հանգամանքներ չխոչընդոտեին հայրենադարձությանը։ Այսպես, Իրանի կառավարությունը արգելեց մոտ 25 հազար հայերի հայրենադարձությունը[190], ԱՄՆ-ի, Արգենտինայի, Բրազիլիայի

[187] Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 362, ց. 2, գ. 30, թ. 65—78։

[188] Տե՛ս նույն տեղում, գ. 41, թ. 43։

[189] Տե՛ս նույն տեղում, թ. 47։

[190] Տե՛ս նույն տեղում, թ. 19—20։

և Ուրուգվայի կառավարությունները բացասաբար վերաբերվեցին հայերի ներգաղթին[191], 1947 թ. աշնանը Եգիպտոսում բռնկվեց հնտախտի (խոլերա) համաճարակ, որի հետևանքով շուրջ հազար հոգուց բաղկացած եգիպտահայերի երկրորդ քարավանի մեկնումը հետաձգվեց անորոշ ժամանակով[192], Պաղեստինում ծագած ժանտախտի համաճարակի պատճառով այնտեղից նույնպես կասեցվեց հայերի ներգաղթը[193] և այլն։

1947 թ. Սովետական Հայաստան ժամանած հայրենադարձները տեղավորվեցին քաղաքներում՝ 21719 մարդ, շրջկենտրոններում՝ 2250 մարդ, բանավաններում՝ 1624 մարդ, կոլտնտեսություններում՝ 7344 մարդ, սովխոզներում՝ 2464 մարդ[194]։

Հայրենադարձների ընդհանուր թվից աշխատունակ էին 15100 մարդ, որից շինարարներ՝ 1521, մետաղագործներ՝ 1465, տեքստիլագործներ՝ 1175, կոշկակարներ՝ 1564, դերձակներ՝ 1756, վարսավիրներ՝ 242, վարորդներ և տրակտորիստներ՝ 715, հողագործներ՝ 2698, այլ արհեստավորներ և բանվորներ՝ 2917, ոսկերիչներ՝ 108, առևտրականներ՝ 392, քահանաներ՝ 11, մտավորականներ՝ 536, այդ թվում՝ բժիշկներ՝ 43, ուսուցիչներ՝ 208, գրողներ՝ 4, ինժեներներ և տեխնիկներ՝ 25, գյուղատնտեսներ՝ 7, քիմիկոսներ՝ 5, երաժիշտներ և երգիչներ՝ 72, նկարիչներ և քանդակագործներ՝ 11 և այլն[195]։

1947 թ. ժամանած հայրենադարձներին նույնպես նյութական մեծ օգնություն ցույց տվեցին հանրապետության կոլտնտեսությունները, սովխոզները, հիմնարկ-ձեռնարկությունները։ Դրան զուգընթաց սովետական կառավարությունը նրանց տրամադրեց դրամական օգնություն՝ 4100500 ռուբլի, ձրի հագուստեղեն՝ 16982 կտոր, կոշիկ՝ 1720 զույգ, անկողին՝ 1339 հատ, կահույք՝ 1052 կտոր։ Մինչև պարենամթերքների քարտային սիստեմի վերացումը և դրամական ռեֆորմի անցկացումը (դեկտեմբեր, 1947 թ.) հայրենադարձներին վաճառվեցին լրացուցիչ մթերքներ և արդյունաբերական ապրանքներ, այդ թվում՝ ալյուր՝ 552 տ, ձավար՝ 84 տ, շաքար՝ 28 տ, օճառ՝ 102 տ, բյազ՝

191 Տե՛ս նույն տեղում, թ. 2—3։

192 Տե՛ս նույն տեղում, գ. 11, թ. 64—65։

193 Տե՛ս նույն տեղում, գ. 5, թ. 77—84։

194 Տե՛ս ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 1, ց. 38, գ. 85, թ. 78—81։

195 Տե՛ս նույն տեղում։



200 հազար մետր, կոշիկ՝ 10 հազար զույգ, կարտոֆիլ՝ 1500 տ, տարբեր տեսակի բանջարեղեն՝ 550 տ, 5 հազար խմ վառելափայտ, 9 հազար տ քարածուխ, 4 հազար հատ թիթեղյա և թուջե վառարաններ[196]։

Հայրենադարձների բնակելի տների շինարարության համար գյուղատնտեսական և կոմունալ բանկերի կողմից 1947 թ. բաց թողնվեց 212464 հազար ռուբլի[197]։ Նրանց համար կառուցվեց և շահագործման հանձնվեց 2140 տուն և 2221 սենյակ[198]։

1947 թ. հայրենիք վերադարձած սփյուռքահայերը նույնպես մեծ եռանդով էին աշխատում հանրապետության կոլտնտեսություններում, սովխոզներում և արդյունաբերական ձեռնարկություններում։ Բազմաթիվ հայրենադարձներ հայրենանվեր աշխատանք էին կատարում հանրային դաշտերում, 4—5 ամսում վաստակելով 200—300 աշխօր։ Այսպես, օրինակ, 1947 թ. ներգաղթած Լ. Թոսունյանը (Ստեփանավանի շրջանի Հորարձի գյուղում) վաստակել էր մոտ 240 աշխօր, Մ. Թաղևոսյանը (Ազիզի շրջանի Գուսանագյուղում)՝ 300 աշխօր, Գ. Ազամալյանի ընտանիքը (Հրազդանի շրջանի Ֆոնտան գյուղում)՝ 1200 աշխօր, Ն. Մինասյանի ընտանիքը (Արտաշատի շրջանի Այգեզարդ գյուղում)՝ մոտ 1000 աշխօր, որի դիմաց ստացել էր 1,5 տ հացահատիկ, 2,5 տ խաղող, 700 կգ չամիչ, 25 հազար ռուբլի դրամ և այլ մթերքներ։ Արդյունաբերական ձեռնարկություններում աշխատող հայրենադարձ բանվորներ Ս. Գրիգորյանը, Գ. Ութուճկյանը և շատ ուրիշներ իրենց արտադրական նորմանները սիստեմատիկաբար կատարում էին 400—600 տոկոսով[199]։ Ստեղծագործական գործունեության անհրաժեշտ պայմաններ էին ստեղծված գիտության, արվեստի և մշակույթի մյուս բնագավառներում աշխատող հայրենադարձների համար։

Հսկայական աշխատանք կատարվեց հայրենադարձների դպրոցական հասակի երեխաներին դպրոցներում ընդգրկելու և մեծահասակների անգրագիտությունն ու կիսագրագիտությունը վերացնելու ուղղությամբ։ Առ 1-ը հունվարի 1948 թ. 1946—1947 թթ. ժամանած հայրենադարձների 16726 երեխաներ սովո-

196 Տե՛ս նույն տեղում։

197 Տե՛ս նույն տեղում։

198 Տե՛ս նույն տեղում։

199 Տե՛ս նույն տեղում։

րում էին մասսայական դպրոցներում, 1556 հոգի՝ բանվորական և գյուղերիտ դպրոցներում, 698 հոգի՝ արհեստագործական և ֆաբզավուսի ուսումնարաններում, 377 հոգի՝ բուհերում, ավելի քան 7000 հոգի՝ անգրագիտության և կիսագրագիտության վերացման խմբակներում։ Հայրենադարձների՝ ուսման մեջ ետ մնացող երեխաներին օգնելու նպատակով մասսայական դպրոցներում կազմակերպվել էին 123 խմբակներ, ուր ընդգրկված 1362 աշակերտների հետ լրացուցիչ պարապմունքներ էին անցկացնում 298 ուսուցիչներ[200]։ Ռուսաց լեզվին տիրապետելու նպատակով հայրենադարձների համար կազմակերպվել էին բազմաթիվ խմբակներ[201]։

Հայրենադարձների շրջանում մասսայական-քաղաքական, կուլտուրական և դաստիարակչական զգալի աշխատանք էին տանում կուսակցական, կոմերիտական և արհմիութենական կազմակերպությունները։ Այդ աշխատանքները սկսվում էին հենց ընդունման կայաններից։ Բաթումի, Ջուլֆայի և մյուս ընդունման կայաններում ստեղծված էին ագիտկետեր, գրադարան-ընթերցարաններ, ռադիոհանգույցներ և այլն, որոնք կազմակերպում էին հայրենիք ժամանող ներգաղթողների կուլտուրական հանգիստը, նրանց շրջանում ծավալում քաղաքական-բացատրական աշխատանք։ Ներգաղթողների կուլտուրական սպասարկման նպատակով սիստեմատիկաբար ընդունման կայաններն էին գործուղվում գեղարվեստական կատարողական կոլեկտիվների հատուկ բրիգադներ։ Հայրենադարձների մեջ մասսայական-քաղաքական աշխատանք տանելու համար կոլխոզներում, սովխոզներում, հիմնարկ-ձեռնարկություններում և նրանց բնակության վայրերում աշխատում էին մեծ թվով ագիտատորներ։ Հայրենադարձների համար կազմակերպվում էին զրույցներ, զեկուցումներ, դասախոսություններ՝ ՍՍՀՄ սահմանադրության, աշխատանքային օրենսդրության, սոցիալիստական դեմոկրատիայի և այլ հարցերի շուրջը։ Շատ տեղերում ստեղծվել էին քաղխմբակներ ու քաղդպրոցներ, որոնցում ուսումնասիրվում էին Վ. Ի. Լենինի կենսագրությունը, մեր երկրի ներքին ու արտաքին քաղաքականությունը և այլ հարցեր։ Հայրենադարձ

[200] Տե՛ս նույն տեղում։

[201] Տե՛ս ՀԿ(բ)Կ Կենտկոմի հաշվետվությունը XIV համագումարին, Երևան, 1948, էջ 108։



մտավորականներից շատերը սովորում էին մարքսիզմ-լենինիզմի համալսարաններում։

Հայրենադարձների քաղաքական ակտիվության բարձրացման լավ դպրոց հանդիսացան սովետների ընտրությունները։ 1947 թ. ընտրական կամպանիայի ժամանակաշրջանում կուսակցական և կոմերիտական կազմակերպությունները ավելի ուժեղացրին հայրենադարձների շրջանում տարվող քաղաքական-մասսայական աշխատանքը։ Նախընտրական կամպանիայի օրերին հայրենադարձների շրջանում ագիտացիոն աշխատանք էին տանում 1772 մարդ, որից 150-ը հայրենադարձ ակտիվիստների թվից։ Օկրուգային և տեղամասային հանձնաժողովներում աշխատում էին մոտ 1000 հայրենադարձներ։ Բոլոր հայրենադարձները միահամուռ կերպով իրենց ձայնը տվեցին կոմունիստների ու անկուսակցականների բլոկի թեկնածուների օգտին։ Սովետական նոր քաղաքացիներից 383 մարդ ընտրվեց սովետների դեպուտատ, որից 264-ը՝ գյուղական, 17-ը՝ ավանային, 42-ը՝ շրջանային, 57-ը՝ քաղաքային սովետների, իսկ 3-ը՝ Լիբանանից ներգաղթած բժիշկ Գևորգ Մանուշակյանը, Սիրիայից ներգաղթած, Լենինականի ջսի կոմբինատի բանվոր Մարտիրոս Ղարաբաչակյանը և Իրանից ներգաղթած, Արտաշատի շրջանի Դալար գյուղի կոլտնտեսության անդամ Մաթևոս Խաչատրյանը՝ հանրապետության իշխանության բարձրագույն օրգանի՝ ՀՍՍՀ Գերագույն սովետի դեպուտատ[202]։

Երեկվա փտարանդի հայը, որը օտարության մեջ իրավազուրկ հազիվ քարշ էր տալիս իր գոյությունը, այսօր իր հայրենիքում արժանանում էր հանրապետության բարձրագույն իշխանության կազմում ընտրվելու պատվին։ Կարելի՞ է բերել ավելի վառ վկայություն այն բանի, թե ինչպիսի լայն հնարավորություններ էր բացում հայրենիքը ամեն մի ազնիվ հայրենադարձի առջև։

Ինչպես տեղական կուսակցական ու սովետական մարմինները, այնպես էլ Հայաստանի կոմկուսի Կենտկոմի բյուրոն և ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը բազմիցս անդրադարձել են հայրենադարձների շրջանում տարվող աշխատանքներին, ուսումնասիրել նրանց վիճակը, կազմակերպել սիստեմատիկ օգ-

[202] Տե՛ս «ՀԿԿ պատմության ուրվագծեր», էջ 568 և ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 362, ց. 2, գ. 50, թ. 17։

նություն։ 1947 թվականի ընթացքում ՀԿ(բ)Կ Կենտկոմի բյուրոն քննարկել է Լենինական քաղաքում, ինչպես նաև ընդունման կայաններում հայրենադարձների մեջ տարվող քաղաքական-մասսայական աշխատանքների վիճակը, միջոցառումներ մշակել դրանց բովանդակությունը բարձրացնելու և ավելի նպատակասլաց դարձնելու ուղղությամբ։

Դրա հետ մեկտեղ, հանրապետության կուսակցական և սովետական մարմինները հետևողական աշխատանք էին տանում հայրենադարձների նոր խմբերի ընդունման ուղղությամբ։ Հայրենադարձության հետագա ընթացքի վրա շատ կարևոր դեր էր խաղում հանրապետությունում բնակարանային խնդրի սրությունը։ Ինչպես նշված է 1947 թ. վերջերին ՀամԿ(բ)Կ Կենտկոմին ներկայացված զեկուցագրում, 1946—1947 թթ. ժամանած հայրենադարձների հիմնական զանգվածը տեղավորվել էր գոյություն ունեցող բնակֆոնդից առանձնացված սենյակներում և միայն որոշ մասն էր բնակարան ստացել նոր կառուցված տներում։ Երկու տարվա ընթացքում հայրենիք եկած 19322 ընտանիքից նոր տներում տեղավորվել էր 5172, իսկ նախկինում եղած բնակելի ֆոնդում՝ 14150 ընտանիք[203]։

Հայրենադարձների համար կատարվող բնակարանային շինարարությունը ընդլայնելու նպատակով, պետական ներդրումների հաշվին կառուցվող շենքերի հետ միասին, գնալով լայն ծավալ է ստանում նաև սեփական միջոցներով և պետական վարկերով անհատական բնակարանների կառուցումը։

1947 թ. դեկտեմբերի 10-ին ՍՍՀՄ Մինիստրների խորհուրդը որոշում ընդունեց՝ «1948 թ. արտասահմանյան հայերին Հայկական ՍՍՀ ընդունելու և տեղավորելու միջոցառումների մասին»։ Այդ որոշմամբ նախատեսվում էր 1948 թ. ՀՍՍՀ սահմաններն ընդունել մոտ 15000 հայրենադարձներ, այդ թվում Սիրիայից և Լիբանանից՝ 5000, Եգիպտոսից՝ 2000, Ֆրանսիայից՝ 3000, Ռումինիայից՝ 1500, Բուլղարիայից՝ 1500, ԱՄՆ-ի և Հարավային Ամերիկայի հայկական գաղթօջախներից՝ 1000-ական մարդ[204]։

ՀԿ(բ)Կ Կենտկոմի բյուրոն 1947 թ. դեկտեմբերի 23-ին քննարկելով ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի վերոհիշյալ որոշման

[203] ՀՍՍՀ ՀՀՍՃ ՊԿԱ, ֆ. 362, ց. 2, գ. 49, թ. 1—7։
[204] Տե՛ս նույն տեղում, գ. 20, թ. 39—44 և գ. 25, թ. 76։



կենսագործման հարցը՝ գտավ, որ անցած երկու տարում ներգաղթածների բնակարանային և աշխատանքային ապահովման գործում առաջացել են մի շարք դժվարություններ, ուստի նպատակահարմար կլինի 1948 թ. ընդունել 10 հազարից ոչ ավելի սփյուռքահայերի։ Կենտկոմի բյուրոն միաժամանակ պարտավորեցրեց հանրապետության կառավարությանը, կուսակցական քաղկոմ-շրջկոմներին, տեղական սովետների գործկոմներին, համապատասխան մինիստրություններին ու գերատեսչություններին՝ առաջիկայում հիմնական ուշադրությունը կենտրոնացնել 1946—1947 թթ. ժամանած հայրենադարձների բնակարանային և աշխատանքային պայմանների արմատական բարելավման վրա։ Միաժամանակ սահմանվեց 1948 թ. համար բնակարանային շինարարության կոնկրետ պլան։ Որոշվեց 1946—1947 թթ. եկած հայրենադարձների բնակարանային պայմանները բարելավելու և նոր ժամանողներին տեղավորելու նպատակով 1948 թ. շահագործման հանձնել ավելի քան 84 հազ. քմ բնակտարածություն։ Դրանից հանրապետական ենթակայության մինիստրությունների ու գերատեսչությունների և տեղական սովետների գծով՝ 27 հազ., միութենական-հանրապետական մինիստրությունների գծով՝ 14300, միութենական ենթակայության կազմակերպությունների գծով՝ 42700 քմ բնակտարածություն։ Նախատեսվեց «Արարատ» տրեստի սովխոզներում կառուցել 400 մեկ սենյականոց բնակարան, իսկ բանկային վարկերի հաշվին անհատական բնակարանային շինարարության գծով՝ 9036 բնակելի տուն, որից քաղաքներում՝ 6093, իսկ գյուղական վայրերում՝ 2943։

Հանձնարարվեց համապատասխան կազմակերպություններին ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի կողմից հատկացված լրացուցիչ 6 միլիոն ռուբլու հաշվին հայրենադարձներով բնակեցված ավաններում ու թաղամասերում կառուցել դպրոցներ, հիվանդանոցներ, ջրմուղներ, ճանապարհներ և այլն[205]։ Բանկային վարկերի հաշվին հայրենադարձների համար ավելի մեծ ծավալով բնակարանային շինարարություն կատարելու նպատակով ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը հանձնարարեց կոմունալ բան-

[205] Տե՛ս նույն տեղում, գ. 20, թ. 9—17։

կին՝ 1948 թ. համար նախատեսված 130 միլիոն ռուբլու վարկի գումարից 125 միլիոնը հատկացնել հայրենադարձներին[206]։

1948 թ. հունիսի 10-ին ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը հաստատեց հայրենադարձների բնակչին կոոպերատիվների օրինակելի կանոնադրությունը։

Վերոհիշյալ միջոցառումներից հետո ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը վերջնականապես հաստատեց 1948 թ. ընթացքում շուրջ 10 հազար հայրենադարձների ընդունելության պլանը։ Որոշվեց 1948 թ. ընդունել ԱՄՆ-ից, Բուլղարիայից և Ռումինիայից՝ 1000-ական, Եգիպտոսից՝ 1500, Սիրիայից և Լիբանանից՝ 3500, Ֆրանսիայից՝ 2000 մարդ[207]։ Սակայն նշված գաղթօջախներից թախանձագին խնդրում էին հայրենի կառավարությանը, ինչ գնով էլ լինի, ավելացնել իրենց երկրներից ներգաղթողների թիվը։ Այսպես, օրինակ, Ռումինիայում «Հայաստանյան ճակատի» ներգաղթի կոմիտեի նախագահ Աղ. Ժամկոչյանը և քարտուղար Հ. Գայսերլյանը խնդրում էին ընդունել դեռևս անցյալ տարվանից հայրենիք մեկնելու պատրաստված 1540 հոգուն, որոնք ամեն ինչ վաճառել, բեռները կապել և անորոշ վիճակում սպասում էին հայրենադարձվելու[208]։ Չնայած այդ խնդրանքներին, մի շարք նոր հանգամանքների ծագման հետևանքով, 1948 թ. հնարավոր եղավ հայրենիք վերադարձնել նախատեսվածից էլ պակաս թվով սփյուռքահայերի։ 1948 թ. Եգիպտոսից, Ռումինիայից և Չինաստանից հայրենադարձվեց ընդամենը 897 ընտանիք, 3092 մարդ[209]։

ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր ներգաղթի կոմիտեն նախապես պլանավորել էր 1949 թ. ընդունել մոտ 10 հազար հայրենադարձներ, այդ թվում Լիբանանից և Եգիպտոսից՝ 6000, Հունաստանից՝ 1500, Ֆրանսիայից՝ 1000 և ԱՄՆ-ից՝ 1500 մարդ։ Ինչպես վկայում են այդ կապակցությամբ կազմված նախահաշիվները, դրա համար միայն ծովային տրանսպորտի գծով կատարվելիք ծախսերը կազմելու էին 26 միլիոն 752175 ռուբլի[210]։

[206] Տե՛ս նույն տեղում։
[207] Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 25, թ. 54—55։
[208] Տե՛ս նույն տեղում, ց. 2, գ. 13, թ. 63—64։
[209] Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 225, թ. 1—2։
[210] Տե՛ս նույն տեղում, գ. 13, թ. 113։



Սակայն 1946—1948 թթ. ժամանած հայրենադարձների բնակարանային և աշխատանքային ապահովման հոգսերը մի կողմից և միջազգային իրադրության սրումը մյուս կողմից՝ հնարավորություն չտվեցին իրականացնել այդ պլանները։

1949 թ. ԱՄՆ-ից հայրենիք եկավ 93 ընտանիք, 162 շունչ։ Նրանք փաստորեն 1948 թ. ներգաղթողների խմբից ետ մնացածներ էին։ Ինչպես այդ մասին 1948 թ. հոկտեմբերի 8-ին ՀՍՍՀ ներգաղթի կոմիտեի նախագահ Բ. Աստվածատրյանին հայտնում է Ամերիկայի հայերի ներգաղթի օգնության հանձնախմբի վարիչ Գ. Սոլագյանը, շուրջ 260 ամերիկահայեր դեռևս հուլիսին պատրաստ էին «Պոբեդա» ջերմանավով մեկնելու հայրենիք։ Սակայն Նյու Յորքի նավահանգստի վարչությունը, հայերի հայրենադարձությանը խանգարելու դիտավորությամբ, պատրվակ բռնեց «Պոբեդայի» վրա եղած փրկարար նավակների իբր թե ոչ բավարար քանակը և արգելեց այդ ջերմանավով ներգաղթողների փոխադրումը[211]։ Այդ պայմաններում, երբ ներգաղթողները վաճառել էին իրենց տուն ու տեղը և ընդունել սովետական քաղաքացիություն, այլևս չէին կարող մնալ ԱՄՆ-ում։ Ամերիկահայ միջհայրենակցական միությունը հարկադրված իր միջոցներով նրանց մի քանի ամիս պահեց մի մասնավոր պանդոկում, հոգալով նրանց բոլոր ծախսերը։ Վեց ամիս անց, 1949 թ. հունվարի 21-ին, 162 ամերիկահայ ներգաղթողները, վերջապես, Նյու Յորքից Գդինիա ամերիկյան ընկերության «Սոպիեսքի» նավով մեկնեցին Իտալիայի Նեապոլ նավահանգիստը, ուր հասան փետրվարի 5-ին։ Վեց օր հետո նրանք այնտեղից ուղևորվեցին դեպի Բաթում և փետրվարի 21-ին ոտք դրին սովետական հողի վրա։ 1949 թ. փետրվարի 23-ին ամերիկահայ հայրենադարձների այդ խումբը գնացքով մեկնեց Երևան[212]։

Այսպիսով, սփյուռքահայերի ետպատերազմյան զանգվածային հայրենադարձությունը կամ մեծ հայրենադարձը տեղի ունեցավ հիմնականում 1946—1948 թթ.։ Սակայն, քանի որ մի փոքր խումբ հայրենիք եկավ 1949 թվականին, անհրաժեշտ է ժամանակագրական վերջին շրջանակը հասցնել այդ տարեթիվը և մեծ հայրենադարձի վերջը համարել 1949 թվականի սկիզբը։

[211] Տե՛ս նույն տեղում, ց. 2, գ. 44, թ. 37—39։
[212] Տե՛ս նույն տեղում, թ. 68—70։

Ամփոփելով մեծ հայրենադարձի արդյունքները, անհրաժեշտ ենք համարում ներկայացնել ստորև բերված աղյուսակը[213], որը կոնկրետ պատկերացում է տալիս այդ տարիներին տեղի ունեցած ներգաղթի մասին (տե՛ս էջ 241)։

Հարկ է նշել, որ ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր ներգաղթի կոմիտեի կազմած որոշ տեղեկանքներում 1946 թ. ներգաղթած ընտանիքների թիվը ցույց է տրված 11035, իսկ շնչերինը՝ 51060։ Այդ 334 ընտանիքի և 113 մարդու տարբերությունը առաջացել է բնական աճի և որոշ ընտանիքների տրոհման հետևանքով[214]։ Ուստի ճիշտ կլինի 1946 թ. ներգաղթած ընտանիքների թիվը հաշվել 11035, իսկ շնչերինը՝ 51060, որով 1946—1948/49 թվականներին ներգաղթած ընտանիքների ընդհանուր թիվը կկազմի 20646, իսկ շնչերի թիվը՝ 89750։

1949 թ. սկզբներից աստիճանաբար կրճատվում են ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր ներգաղթի կոմիտեի հաստիքները, լուծարքի են ենթարկվում նրա ընդունման կայանները։ Ներգաղթի կոմիտեի նախագահի հրամանով 1949 թ. հունվարի սկզբներին լիկվիդացվում է Ջուլֆայի ընդունման կայանը, կրճատվում է Բաթումի կայանի և ներգաղթի կոմիտեի հաստիքների մեծ մասը[215]։ 1949 թ. օգոստոսի վերջերին լրիվին իր գործունեությունը դադարեցրեց ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր արտասահմանից ներգաղթող հայերի ընդունման և տեղավորման կոմիտեն[216]։

1946—1949 թթ. արտասահմանյան 12 երկրից 89750 հայրենադարձների տեղափոխման և տեղավորման ծախսերը հիմնականում կատարվել են Սովետական Հայաստանի կառավարության միջոցներից։ Որոշ գումարներ ստացվել են սփյուռքահայ բարեգործական ու հայրենակցական հաստատությունների անգկացրած հանգանակություններից, նվիրատվություններից, ճանապարհածախսի համար ներգաղթողների մի մասի կատարած վճարումներից, ինչպես նաև հայրենաբնակ աշխատավորների

[213] Տե՛ս նույն տեղում, ֆ. 326, ց. 1, գ. 225, թ. 1—2 և գ. 231, թ. 1—16։

[214] Տե՛ս նույն տեղում, ֆ. 362, ց. 2, գ. 24, թ. 12—27 և գ. 25, թ. 32—35։

[215] Տե՛ս նույն տեղում, գ. 26, թ. 36—37։

[216] Տե՛ս նույն տեղում, թ. 40։



Տեղեկություններ
1946—1948/49 թթ. կատարված զանգվածային հայրենադարձության մասին

| Երկրի անվանումը | 1946 | | 1947 | | 1948 | | 1949 | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ընտանիքների թիվը | շնչերի թիվը | ընտանիքների թիվը | շնչերի թիվը | ընտանիքների թիվը | շնչերի թիվը | ընտանիքների թիվը | շնչերի թիվը | ընտանիքների թիվը | շնչերի թիվը |
| 1—2. Սիրիա-Լիբանան | 3794 | 19253 | 2525 | 12985 | — | — | — | — | 6319 | 32238 |
| 3. Բուլղարիա | 1248 | 4383 | — | — | — | — | — | — | 1248 | 4383 |
| 4. Իրան | 3870 | 20597 | — | — | — | — | — | — | 3870 | 20597 |
| 5. Ռումինիա | 517 | 1738 | — | — | 308 | 1046 | — | — | 825 | 2784 |
| 6. Հունաստան | 1372 | 4974 | 3478 | 13241 | — | — | — | — | 4850 | 18215 |
| 7. Ֆրանսիա | — | — | 1518 | 5260 | — | — | — | — | 1518 | 5260 |
| 8 Եգիպտոս | — | — | 486 | 1669 | 580 | 2023 | — | — | 1066 | 3692 |
| 9. Պաղեստին | — | — | 243 | 1260 | — | — | — | — | 243 | 1260 |
| 10. Իրաք | — | — | 177 | 856 | — | — | — | — | 177 | 856 |
| 11. ԱՄՆ | — | — | 88 | 151 | — | — | 93 | 162 | 181 | 313 |
| 12. Չինաստան | — | — | 6 | 16 | 9 | 23 | — | — | 15 | 39 |
| Ընդամենը | 10801 | 50945 | 8521 | 35438 | 897 | 3092 | 93 | 162 | 20312 | 89637 |
| Առավել ճշտված տվյալներով | 11035 | 51060 | | | | | | | 20646 | 89750 |

կողմից հայրենադարձների օգնության ֆոնդին հատկացրած միջոցներից: 1949 թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ ՀՍՍՀ կառավարությունը միայն որպես հայրենադարձների ճանապարհավարձ 1946—1949 թթ. ծախսել է 76,8 միլիոն ռուբլի[217]:

Հայրենադարձների համար պետական բնակարանային շինարարության, ինչպես նաև անհատական բնակարանների կառուցման գծով սովետական կառավարությունը բաց է թողել ավելի քան 300 միլիոն ռուբլի, չհաշված կոլտնտեսությունների տրամադրված գումարները: Հարկ է նշել, որ 50-ական թվականների կեսերին ՍՍՀՄ կառավարությունը հայրենադարձներին ազատեց վարկերի ամբողջ չմուծված գումարը և գոյացած տոկոսները (շուրջ 160 միլիոն ռուբլի) վճարելու պարտականությունից[218]:

Արտասահմանում մնացած իրենց բարեկամներին գրած նամակներում շատ հայրենադարձներ հաղորդում էին իրենց նկատմամբ ցուցաբերվող ջերմ հոգատարության մասին և հորդորում, որպեսզի նրանք ևս շտապեն վերադառնալ երկիր, ձեռնամուխ լինեն նրա պայծառ ապագայի կերտման գործին:

Ամերիկահայ գրող Հակոբ Գույումճյանը, հետագայում այցելելով հայրենիք և այստեղ ականատես լինելով հայրենադարձների կյանքին, գրել է. «Գոհունակությամբ համակվեցա տեսնելով տասնյակ հազարավոր հայրենադարձներու նոր կյանքը: Հայրենադարձները իրենց համար ստեղծած են գոհունակ ու բարեկեցիկ կյանք. ավելի ուրախառիթ պարագան այն է, որ հայրենադարձներու զավակները, որոնք արտասահմանի մեջ բոլոր պատեհություններեն զրկված էին, Մայր Հայրենիքին մեջ հնարավորություն ունեցած են համալսարանական ուսում ստանալու և իբրև գիտնականներ, ինժեներներ, երկրագործական մասնագետներ, գրողներ, երգիչներ և որակավոր աշխատավորներ իրենց մասնակցությունը կբերեն մեր երկրի շինարարության և բարգավաճման»[219]:

Ի նշան հայրենիքի նկատմամբ ջերմ սիրո և նվիրվածության, սփյուռքահայ բազմաթիվ կազմակերպություններ ու ան-

[217] Տե՛ս նույն տեղում, ֆ. 326, ց. 1, գ. 257, թ. 1—3:

[218] Տե՛ս նույն տեղում:

[219] Տե՛ս «Սովետական Հայաստանը արտասահմանյան հյուրերի աչքերով», Երևան, 1960, էջ 130:



հատներ ՀՍՍՀ ներգաղթի կոմիտեի միջոցով ամեն տեսակ նվերներ էին ուղարկում կամ հայրենադարձվելիս իրենց հետ Սովետական Հայաստան բերում աշխատանքի գործիքներ, մեքենաներ, կազմում արտելներ և այլն՝ հայրենի երկրին ավելի մեծ նպաստ մատուցելու նպատակով: Մի խոսքով, դրանք բազմազան ու բազմաբնույթ նվերներ էին՝ սկսած հաստոցներից ու բժշկական սարքավորումներից մինչև արաբական ընտիր նժույգներ ու մասունք դարձած սուրճի գավաթներ: Այսպես, օրինակ, Եգիպտոսից հայրենիք եկած Դուլաբչյան գերդաստանը 1947 թ. նոյեմբերին Սովետական Հայաստանի կառավարությանը նվիրեց Լիվերպուլում գնված բրդեղեն հյուսող 63 սնդուկ անգլիական առաջնակարգ հաստոցներ, որոնք տրվեցին ՀՍՍՀ տեղական արդյունաբերության մինիստրության Երևանի մահուդի ֆաբրիկային[220]: 1947 թ. երրորդ և չորրորդ քարավաններով հայրենիք եկան Հալեպում կազմակերպված ավտոտրանսպորտի 17 հոգուց բաղկացած արտելի անդամները[221]: ԱՄՆ-ի Համասեբաստացիական շինարար միությունը հայրենիք ուղարկեց բեռնատար 2 ավտոմեքենա, Արաբկիրցիների հայրենակցական միությունը (ԱՄՆ)՝ «Նոր Արաբկիր» կարի արտելին նվիրեց էլեկտրական 3 մկրատ, բարեգործական մի շարք կազմակերպություններ ՀՍՍՀ առողջապահության մինիստրությանը տրամադրեցին մեծ քանակությամբ բժշկական սարքավորումներ և դեղորայք[222]: Ռումինահայեր Մ. Շլուկյանը և Ս. Պայպուրթլյանը հայրենիք ուղարկեցին ասեղնագործող մեքենաներ, ուրիշները՝ ներկեր և տանիքի ծածկի թիթեղներ, «Հայաստանյան ճակատ» միությունը՝ 3 հազար խմ շինափայտ և 60 մահճակալով հոսպիտալ՝ իր ամբողջ կահավորումով և այլն[223]:

ԱՄՆ-ում գործող միջհայրենակցական միությունը 1947 թ. օգոստոս-նոյեմբեր ամիսներին հայրենիք ուղարկեց 1217 հոս-

[220] Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 362, ց. 1, գ. 18, թ. 93—96 և ց. 2, գ. 11, թ. 2—15:

[221] Տե՛ս նույն տեղում, ց. 2, գ. 5, թ. 73—76 և 96:

[222] Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 15, թ. 4—5, գ. 25, թ. 25, ց. 2, գ. 5, թ. 98:

[223] Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 15, թ. 1, ց. 2, գ. 37, թ. 1, գ. 13, թ. 17 և 22—23:

պիտալային վրան[224], իսկ ՀԲԸՄ կենտվարչությունը՝ 10 էքսկավատոր[225]:

Սիրիայում ապրող Հովհ. Ղոնթարչյանը Հայաստանի պատմության պետական թանգարանին նվիրեց Կիլիկիայի Ռուբինյան դինաստիային պատկանող պղնձյա դրամների հարուստ հավաքածու (104 հատ), Նյու Յորքից Երանուհի Ասատրյանը՝ պարսկական երկու ծխամորճ և ուրիշ գեղարվեստական իրեր, այդ թվում՝ դերասանուհի Սիրանույշին պատկանած սուրճի սպասք և այլ իրեր, իսկ Սիրիայի Ջեզիրեի շրջանից ներգաղթած Պարունակ Շիշիկյանը և Սարգիս Օսիկյանը հայրենիքին նվիրեցին արաբական 5 ձի[226]:

1948 թ. Նյու Յորքից հայրենիք բերվեցին նշանավոր նկարիչ Արշակ Ֆեթվաճյանի անձնական իրերը և գեղանկարները[227], Բուլղարիայից՝ թանգարանային արժեքավոր գորգեր[228], ռումինահայ Վարդան և Զինաիդա Բարակյանները Հայաստանի պետական պատկերասրահին նվիրեցին երկար տարիների ընթացքում ձեռք բերած հնագիտական ու գեղարվեստական իրերի ճոխ հավաքածուն (16 արկղ, 747 անուն)[229], իսկ նրանց հայրենակից Հարություն ավագ քահանա Սարգսյանը Երևան ուղարկեց իր հարուստ գրադարանը[230]: Այսպիսով, 1946—1948/49 թթ. ներգաղթը ոչ միայն դաժան ճակատագրի բերումով աշխարհով մեկ սփռված արևմտահայ տարագիրների հայրենադարձություն էր, այլև հայ մշակույթի մասունքների տունդարձ, որը շարունակվում է առ այսօր:

Դեռ այն օրերին, մեծ հայրենադարձի իրականացման անմիջական տպավորությունների տակ, ճշմարիտ հայրենասերները իրավացիորեն շատ բարձր գնահատեցին ազգահավաքման ու ազգապահպանման գործին սատարող ներգաղթի պատմական խոշոր նշանակությունը: Այդ կապակցությամբ Սիրիայի և Լիբանանի հայերի ներգաղթի կենտկոմը գրել է, որ չնայած

224 Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 25, թ. 56 և ց. 2, գ. 43, թ. 29:
225 Տե՛ս նույն տեղում, ց. 2, գ. 29, թ. 89—90:
226 Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 18, թ. 134—146:
227 Տե՛ս նույն տեղում, գ. 25, թ. 26:
228 Տե՛ս նույն տեղում, ց. 2, գ. 15:
229 Տե՛ս նույն տեղում, գ. 37, թ. 3:
230 Տե՛ս նույն տեղում, թ. 103—104:



ամեն տեսակ խոչընդոտներին ու բարդություններին, չնայած քառամյա դաժան պատերազմից նոր դուրս եկած ու դրանից անմիջապես հետո խիստ երաշտի ենթարկված Սովետական Միության մեջ բնականորեն առաջ եկած ժամանակավոր դժվարություններին, ընդամենը 2—3 տարվա ընթացքում սովետական կառավարությունը իրականացրեց մոտ 90 հազար տարագիրների հայրենիք փոխադրումը, որը կազմում էր հայրենադարձվելու համար արձանագրվածների շուրջ մեկ հինգերորդը: Դա հիրավի անուրանալի մեծ հոգատարություն էր օտարության մեջ ընչազուրկ վիճակում տառապող սփյուռքահայ աշխատավորների նկատմամբ և դրական խոշոր դեր ունեցավ նաև դեռևս գաղթաշխարհում մնացողների ազգապահպանման պայքարի հետագա հաջողության համար:

«Արդարև, Ամերիկայեն, Ֆրանսայեն, Եգիպտոսեն, Սուդանեն, Ճեզիրեեն, Իրաքի անապատներեն և Պաղեստինեն ամեն մի հայուն հայրենադարձը,— արձանագրել է Սիրիայի և Լիբանանի հայերի ներգաղթի կենտկոմը,— զորավոր ազդակ մըն է հաջողությամբ պայքարելու համար այդ երկիրներու հայության ազգային այլասերման դեմ, ազգայնորեն ուծացող հոգիներու մեջ ան կվերարծարծե և կզորացնե հավատքը հանդեպ հայության, հայկականության, անոր ներքային և ապագային, և զանոնք ամրապես կկապե հայրենի մայր հողին և ազգին:

Արդարև, մեր օրերուն հայրենադարձը ազգային պատմական այնպիսի խոշորագույն շարժում մըն է, որ ոչ միայն ավելի հզոր կդարձնե մեր մայր հայրենիք Սովետ. Հայաստանը, ավելի կզորացնե անոր շինարարության և վերելքին թափը, կ՚ամրացնե միակ ամուր կռվանը մեր բռնագրավված հողերու ազատագրության համար, այլ նաև ան ամենեն ազդեցիկ միջոցն է հայը հայ պահելու համար սփյուռքի մեջ»[231]:

231 Տե՛ս նույն տեղում, գ. 30, թ. 75:

# ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅԵՐԻ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ 1962—1982 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ*

*40-ական թվականների վերջերին, սառը պատերազմի առաջացման և միջազգային իրադրության կտրուկ սրման հետևանքով, կապիտալիստական մի շարք երկրների կառավարությունների քաղաքականության մեջ տեղի ունեցան որոշակի փոփոխություններ դեպի Սովետական Միությունն ընդհանրապես, սփյուռքահայերի հայրենադարձությունը՝ մասնավորապես։ Մի շարք երկրներ, որոնցից կատարվում էր սփյուռքահայերի հայրենադարձություն, սկսեցին որոշակի ու բացահայտ խոչընդոտներ հարուցել այդ միջոցառման դեմ, ամեն կերպ փորձելով արգելակել այն։ Այդ պայմաններում, ՍՍՀՄ դիրեկտիվ օրգանների որոշմամբ, 1949 թ. կեսերից նպատակահարմար համարվեց դադարեցնել սփյուռքահայերի 1946 թվականին սկսված* **զանգվածային հայրենադարձությունը**, *մանավանդ որ արդեն հայրենիք ժամանած ներգաղթածների որոշ մասի բնակարանային և աշխատանքային ապահովման գործում ևս առաջացել էին որոշակի դժվարություններ։*

*Չնայած այդ որոշմանը, այնուամենայնիվ ընդառաջելով սփյուռքահայ բազմաթիվ կազմակերպությունների ու աշխատավորների թախանձագին խնդրանքներին, 1950 թ. սկսած միութենական և հանրապետական համապատասխան մարմինների թույլտվությամբ, շարունակվել է առանձին հայ ընտանիքների* **անհատական հայրենադարձությունը**, *որի շնորհիվ շատ սփյուռքահայեր դարձյալ հանգրվանել են Սովետական Հայաստան։*

*Ինչպես վկայում են արխիվային մի շարք վավերագրեր, մասնավորապես 50-ական թվականներին տեղի ունեցած հայրենադարձության վերաբերյալ ՀՍՍՀ արտաքին գործերի մինիստրության 1958 թ. օգոստոսի 27-ին կազմած պաշտոնական տեղեկանքը և այդ մինիստրության 1961 թ. տարեկան հաշվետվությունը, 1950—1961 թթ. ընթացքում, արտասահմանյան տարբեր երկրներից, անհատական կարգով Սովետական Հայաստան են ներգաղթել մոտ 4000 սփյուռքահայեր[1]։ ՀՍՍՀ դիրեկտիվ օրգանների որոշմամբ նախատեսվել էր 1959 թվականին Արգենտինայից հայրենադարձնել 500—600 ընտանիք, մոտ 3000 մարդ[2]։ Այդ որոշման կատարման ընթացքի մասին դժբախտաբար մեզ չհաջողվեց անհրաժեշտ տեղեկություններ գտնել ո՛չ պարբերական մամուլում և ո՛չ էլ արխիվներում։ Ըստ երևույթին, ինչ-ինչ պատճառներով, այն տեղի չի ունեցել, սակայն հենց միայն այդպիսի որոշում կայացնելու փաստն իսկ ինքնին նշանակալից է։ Վերը բերված փաստերը խոսում են այն մասին, որ հայրենաբաղձ սփյուռքահայության մայր հայրենիքում հավաքվելու մի անգամ արդեն ընթացք առած անկեղծ ձգտումն այլևս հնարավոր չէր, թեկուզ ժամանակավորապես, կասեցնել, և գաղթաշխարհում շարունակում էր ամենուրեք թևածել տունդարձի սրբազան կանչը։ Ահա թե ինչու Սովետական Հայաստանի կուսակցական ու պետական համապատասխան օրգանները, հատկապես ՍՄԿԿ XX համագումարից հետո ստեղծված նպաստավոր իրադրության պայմաններում, հետևողականորեն նախապատրաստում էին նոր զանգվածային հայրենադարձության վերսկսման գործը, քանի որ այդ մասին սփյուռքահայ աշխատավորներից շարունակում էին ստացվել բազմաթիվ դիմումներ։ ՀՍՍՀ արտաքին գործերի մինիստրության 1952 թ. ապրիլի 29-ին կազմած տեղեկանքում այդ մասին արձանագրված է, որ մինիստրությունը և սովետական այլ հիմնարկներ բազմաթիվ դիմումներ են ստացել արտասահմանում ապրող սովետական և ոչ սովետական քաղաքացիներից՝ անհատական կարգով հայրենադարձվելու կամ Սովետական Հայաստան մշտական բնակության գալու խնդրանքով։ Այսպես օրինակ, խարբինում ՍՍՀՄ քաղաքացիների ընկերության հայկական բաժանմունքը 1951 թ. մարտի 27-ին ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին*

* Ժամանակագրության խախտման մասին բացատրությունը տե՛ս էջ 299-ի 131 ծանոթագրությունում։



[1] Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 326, ց. 1, գ. 257, թ. 1—3 և գ. 327, թ. 12—23։

[2] Տե՛ս նույն տեղում, գ. 257, թ. 1—3։

տարնեթեր նախկին ներգաղթի կոմիտեի նախագահի անունով գրած դիմումի մեջ խնդրում էր թույլատրել ՀՍՍՀ մշտական բնակության գալ Մանջուրիայում ապրող 90 ՍՍՀՄ քաղաքացիների և 31 ոչ ՍՍՀՄ քաղաքացիների։ Համանման՝ դիմումներ ստացվել էին նաև ուրիշ երկրներում եղած սովետական առանձին քաղաքացիներից[3]։ Բուլղարիայում ապրող 40 հայ բնտանիքներ 1950 թ. մարտի 15-ին դիմել էին ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին՝ խնդրելով թույլատրել ներգաղթել Սովետական Հայաստան։ ՀՍՍՀ արտաքին գործերի մինիստրությունում մեծ թվով դիմումներ էին ստացվել հատկապես 1946—1948 թթ. Բուլղարիայից, Ռումինիայից, Հունաստանից, Իրանից, Սիրիայից և Լիբանանից ներգաղթած սովետական քաղաքացիներից իրենց ծնողների կամ ընտանիքի այլ անդամների (որոնք տարբեր պատճառներով չէին կարողացել ժամանակին հայրենադարձվել) Սովետական Հայաստան գալուն աջակցելու խնդրանքով։ 1950—1951 թթ. ընթացքում ՀՍՍՀ արտաքին գործերի մինիստրությունում ստացվել էր այդպիսի 50 դիմում[4]։

ՀՍՍՀ արտաքին գործերի մինիստրությունը ՍՍՀՄ արտաքին գործերի մինիստրությունից այդ նույն ժամանակամիջոցում ստացել էր 37 հարցումներ, որոնցում խնդրվում էր հայտնել հանրապետության համապատասխան օրգանների կարծիքը տարբեր երկրներում ապրող որոշ թվով հայերի ՍՍՀՄ քաղաքացի ընդունելու և նրանց ՀՍՍՀ մշտական բնակության գալը թույլատրելու հնարավորության մասին։

Եվ, վերջապես, 1946—1948 թվականներին Իրանից հայրենադարձված շատ հայեր 1952 թվականին դիմել էին ՀՍՍՀ արտաքին գործերի մինիստրություն, հայտնելով, որ Իրանում ՍՍՀՄ հյուպատոսությունը հայտարարել է, թե՝ եթե իրանահայերի Սովետական Հայաստանում ապրող ազգականները համապատասխան պաշտոնական տեղեկանքներ ուղարկեն այն մասին, որ իրենք կարող են անհրաժեշտ բնակտարածություն հատկացնել, ապա նման անձանց կթույլատրվի մեկնել Սովետական Հայաստան։

Այսպիսով, 1950 թվականից մինչև 1952 թվականի գարունն ընկած ժամանակամիջոցում ՀՍՍՀ արտաքին գործերի մինիստ-

---

[3] Տե՛ս նույն տեղում, գ. 234, թ. 1—2։

[4] Տե՛ս նույն տեղում։



րությունում ստացվել էր ավելի քան 250 դիմում սովետական քաղաքացի և օտարահպատակ հայերից՝ անհատական կարգով հայրենադարձվելու խնդրանքով[5]։

ՀՍՍՀ արտաքին գործերի մինիստրությունը 1955 թ. մայիսի 18-ին ՍՍՀՄ արտաքին գործերի մինիստրությանը հայտնում էր, որ վերջին շրջանում Բուլղարիայից և Ռումինիայից ստացվում են բազմաթիվ դիմումներ, որոնց հեղինակները, տեղեկացնելով 1946—1948 թթ. Սովետական Հայաստան ներգաղթած ազգականների մոտ ազատ բնակտարածություն լինելու մասին, խնդրում են իրենց թույլատրել հայրենադարձվելու Սովետական Հայաստան։ Հայտնելով այդ մասին, ՀՍՍՀ արտաքին գործերի մինիստրությունը իր վերագասից խնդրում էր համապատասխան կարգադրություն անել այդ երկրներում սովետական դեսպանություններին՝ արագացնելու այդպիսիների գործերի ձևակերպումը։ Ի պատասխան դրա, 1955 թ. հուլիսի 25-ին ՍՍՀՄ արտաքին գործերի մինիստրությունից հայտնում են, որ ինչպես կապիտալիստական մի շարք երկրներից (Լիբանան, Սիրիա, Եգիպտոս, Իրան, Ֆրանսիա, Բելգիա, Շվեյցարիա, Ավստրիա, Շվեդիա, Կանադա, Արգենտինա, Ուրուգվայ, Հոլանդիա), այնպես էլ Բուլղարիայից ու Ռումինիայից ՍՍՀՄ-ին կատան), այնպես էլ Բուլղարիայից ու Ռումինիայից ՍՍՀՄ-ին լոյալ վերաբերվող և սովետական քաղաքացիություն ունեցող բոլոր հայերին, ՀՍՍՀ իրավասու օրգանների դրական կարծիքի առկայության դեպքում, կթույլատրվի հայրենադարձվել[6]։

Վերագաս օրգանների առջև բարձրացնելով նոր հայրենադարձության վերսկսման հարցը՝ Սովետական Հայաստանի կուսակցական ու պետական մարմինները միաժամանակ նկատի էին առնում այն հանգամանքը, որ մի շարք գաղթօջախներում (Եգիպտոս, Սիրիա, Լիբանան, Հորդանան, Կիպրոս, Հունաստան, Իրաք, ինչպես նաև Լատինական Ամերիկայի երկրներում) հայերի համար ստեղծվել էր խիստ աննպաստ, նույնիսկ տագնապալի կացություն, որից սփյուռքահայությանը դուրս բերելու լավագույն ելքը կլիներ զանգվածային հայրենադարձության վերսկսումը։ 50-ական թվականների կեսերին հատկապես մտահոգիչ վիճակ էր ստեղծվել եգիպտահայության համար։ Այդ առթիվ եգիպտահայ թեմի առաջնորդ արքեպիսկոպոս

---

[5] Տե՛ս նույն տեղում։

[6] Տե՛ս նույն տեղում, գ. 241, թ. 1—2։

Մամբրե Սիրունյանը 1957 թ. փետրվարի 11-ին Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ին գրած նամակում վերջինիս խնդրում էր միջնորդել ՀՍՍՀ կառավարության առջև՝ եգիպտահայերին հայրենիք վերադառնալու թույլտվություն տալու համար, որպեսզի նրանք հարկադրված չլինեն հեռանալ դեպի օտար հորիզոններ՝ դեպի Կանադա, Ավստրալիա, Աֆրիկա և Լատինական Ամերիկա, որը կնշանակեր անդառնալի կորուստ հայության համար[7]։

Բանն այն է, որ 1956 թվականի հոկտեմբեր-նոյեմբերի հայտնի իրադարձությունների հետևանքով այլ քրիստոնյաների հետ միասին հայերը նույնպես հարկադրված էին հեռանալ Եգիպտոսից դեպի Կանադա, Հարավային Ամերիկա և այլուր։ Սակայն, ինչպես պարզորոշ երևում է ՄԱՀ-ում ՍՍՀՄ դեսպանության կցորդ Ս. Առաքելյանի և Մ. Սիրունյանի միջև 1960 թ. դեկտեմբերի 13-ին կայացած զրույցից, եգիպտահայության բացարձակ մեծամասնությունը վճռական կերպով ցանկանում էր ներգաղթել հայրենիք[8]։ Այդ մասին Վազգեն Ա-ին գրած իր մի ուրիշ նամակում (22 դեկտեմբերի, 1960 թ.) նկարագրելով եգիպտահայության տագնապահար ու մոլորյալ վիճակը, Մ. Սիրունյանը կրկին պնդում էր նոր հայրենադարձություն կազմակերպելու խիստ անհրաժեշտության վրա։ Նա գրում էր, որ 1947—1948 թթ. երկու քարավանների հայրենիք մեկնելուց հետո եգիպտահայերը շարունակում են ապրել հայրենադարձության վերսկսման հույսով։ Բայց քանի դեռ այն չի վերսկսված, Եգիպտոսում առաջացած նոր իրադրության հետևանքով հայերն սկսել են ստիպմանաբար արտագաղթել ուրիշ երկրներ։ Եթե մինչև վերջերս այդ պարագան առանձին մտահոգություն չէր պատճառում, որովհետև հայերի արտագաղթը մեծ չափեր չէր ընդունել, ապա օտարերկրացիներին (այլազգիներին) աշխատանքի տեղավորելու մասին 1960 թ. նոյեմբերին ՄԱՀ-ի իշխանությունների հրապարակած օրենքից հետո, վիճակը կտրուկ կերպով փոխվել է։ Այդ նացիոնալիստական օրենքի համաձայն եգիպտական քաղաքացիություն չունեցող օտարերկրացիները, որպեսզի աշխատանքի տեղավորվեին, պետք է անպայման ՄԱՀ-ի հասարակական աշխատանքների մինիստրությու-

[7] Տե՛ս նույն տեղում, ց. 2, գ. 14, թ. 1—4։
[8] Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 257, թ. 1—4։



նից ստանային դրա իրավունքը։ Օտարերկրացիներ էին հաշվում նույնիսկ նրանց, ովքեր ծնվել ու երկար տարիներ ապրել էին Եգիպտոսում։ Եգիպտահայերի մեծ մասը չուներ եգիպտական քաղաքացիություն և այդ նոր օրենքը առաջին հերթին բարդացնում էր հենց նրանց վիճակը։ Սակայն եգիպտական հպատակություն ունեցող հայերը ևս ենթարկվում էին խտրականության և ամենուրեք առավելությունը տրվում էր մահմեդականներին։ Ահա այս շարժառիթների հետևանքով հայերի մեծ մասը մտադրվել էր հեռանալ Եգիպտոսից և իր բախտը փնտրել ուրիշ երկրներում։ Ինչպես գրում էր Մ. Սիրունյանը, վերջին շրջանում ակտիվ շարժում էր սկսվել Հարավ-Աֆրիկյան միություն մեկնելու համար։ Այդ երկրի Կահիրեում գտնվող «սպիտակ» հյուպատոսությունը լայնորեն բացել էր իր դռները այնտեղ քրիստոնյաների առջև և հրապուրում էր նրանց դեպի այնտեղ։ Շատերն էլ փորձում էին մեկնել Բրազիլիա, Արգենտինա, Ավստրալիա, ԱՄՆ և այլ երկրներ, որը իրոք կնշանակեր անդառնալիորեն կորցնել այդ հայությանը։ «Մեր կարծիքով,— վերջում իրավացիորեն գրում էր Մ. Սիրունյանը Վազգեն Ա-ին,— հեռավոր երկրներ մեկնող հայերին սպառնում է ասիմիլացիայի և իր հարազատ ազգությունը կորցնելու վտանգը, ուստի հարկավոր է, որ դուք դիմեք մեր հարազատ կառավարությանը, որպեսզի թույլատրվի մոտ 2000 եգիպտահայերի ներգաղթը դեպի հայրենիք»[9]։

Եգիպտահայ թեմի առաջնորդն այնուհետև նշում էր, որ եգիպտական իշխանությունները, որպես այլազգիների, այդպես են վարվում նաև իտալացիների և հույների նկատմամբ։ Սակայն Կահիրեում գտնվող իտալական ու հունական դեսպանները իրենց ազգակիցներին խոստացել են ուղարկել հայրենիք։ Նման պարագայում Մ. Սիրունյանը խիստ ցանկալի էր գտնում, որ սովետական կառավարությունն ու դեսպանությունը նույնպես իրենց դրական վերաբերմունքը արտահայտեին հայերի հանդեպ, որոնք Սովետական Հայաստանը դիտում են որպես իրենց միակ հայրենիքը։

Այդ նույն ժամանակ հայրենադարձվելու բուռն ցանկություն էին հայտնում նաև իրաքահայերը[10]։ Քիչ չէին դիմումնե-

[9] Տե՛ս նույն տեղում, ց. 2, գ. 32, թ. 1—4։
[10] Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 291, թ. 5—6։

րը հեռավոր Արգենտինայից, Ուրուգվայից, ԱՄՆ-ից և այլ երկրներից[11]։ Եվ այսպես, գնալով օրավուր աճում էին հայրենադարձության հետ առնչվող հարցերը։ Ուստի, դրանց ընթացք ու լուծում տալու նպատակով անհրաժեշտ դարձավ ունենալ կառավարական հատուկ օրգան։ 1958 թ. հոկտեմբերին ստեղծվեց ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր արտասահմանից վերադարձող հայերի ընդունման կառավարական հանձնաժողով (այսուհետև այն կրճատ կանվանենք հայրենադարձության հանձնաժողով)։ Հանձնաժողովի նախագահը հանդիսանում էր ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահի առաջին տեղակալը կամ տեղակալը, իսկ նրա կազմի մեջ մտնում էին ՀԿԿ Կենտկոմի ներկայացուցիչը, ՀՍՍՀ արտաքին և ներքին գործերի մինիստրները, պետական անվտանգության կոմիտեի նախագահը, ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր վերաբնակեցման վարչության պետը, ՀԱՄԽ-ի նախագահը, ապա հայրենադարձության կոմիտեի նախագահը և պաշտոնական այլ անձինք[12]։

Այդ հանձնաժողովը քննարկում էր հայրենիք վերադառնալ ցանկացողներից ստացված դիմումները և անհատական կարգով որոշում նրանց թույլատրելու կամ մերժելու հարցը։ Հանձնաժողովի որոշումներն այնուհետև հաստատվում էին ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի կողմից, ապա գործադրվում որպես կառավարական կարգադրություններ։ Հանձնաժողովի կողմից հայրենիք գալու թույլտվություն ստացածների ցուցակները և հարակից մյուս նյութերը ուղարկվում էին ՍՍՀՄ արտաքին գործերի մինիստրություն, որը համապատասխան երկրի մեր դեսպանության միջոցով իրականացնում էր տվյալ անձի կամ ընտանիքի հայրենադարձությունը։

Այսպես, հայրենադարձության հանձնաժողովի 1958 թ. հոկտեմբերի 6-ի նիստում (արձանագրություն № 1) քննարկվում են մի խումբ սփյուռքահայերի դիմումներ՝ Սովետական Հայաստան ներգաղթելու թույլտվություն ստանալու մասին։ Որոշվում

[11] Տե՛ս նույն տեղում, ց. 2, գ. 21, թ. 1—2։

[12] Տե՛ս նույն տեղում։ Տարբեր ժամանակ հանձնաժողովի աշխատանքները գլխավորել են ՀՍՍՀ Մինիստրների նախագահի տեղակալներ կամ առաջին տեղակալներ Հ. Վ. Հովհաննիսյանը, Լ. Ա. Ստեփանյանը, Ս. Հ. Մովսիսյանը, Յա. Ն. Զարոբյանը, Գ. Ա. Մարտիրոսյանը, Ա. Մ. Կիրակոսյանը։ Երկար ժամանակ հանձնաժողովի քարտուղարն է եղել ՀՍՍՀ արտաքին գործերի մինիստրության պատասխանատու աշխատակից Ն. Վ. Գասպարովը։



է թույլատրել Իրանից՝ 4 ընտանիք (20 շունչ), ԱՄՆ-ից՝ 1 ընտանիք (1 շունչ), Ուրուգվայից՝ 1 ընտանիք (5 շունչ) որպես անհատական վիզաներով հայրենադարձներ մշտական բնակության գալ Սովետական Հայաստան իրենց ազգականների մոտ, որոնք նրանց ապահովում են բնակտարածությամբ։ Միաժամանակ հանձնարարվում է ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր վերաբնակեցման և բանվորների կազմակերպված հավաքագրման գլխավոր վարչությանը՝ ներգաղթողներին ապահովել ըստ մասնագիտության աշխատանքով[13]։ Նույն թվականի նոյեմբերի 13-ին տեղի է ունեցել հայրենադարձության կառավարական հանձնաժողովի երկրորդ նիստը, ուր որոշվել է թույլատրել 9 ընտանիքների (26 շունչ) Իրանից, ՄԱՀ-ից, Բուլղարիայից, Ռումինիայից և ԱՄՆ-ից ներգաղթել Սովետական Հայաստան[14]։ Արխիվում մեզ չհաջողվեց գտնել 3-րդ նիստի արձանագրությունը։ 1959 թ. փետրվարի 4-ին տեղի է ունեցել 4-րդ նիստը[15], իսկ մինչև 1960 թ. նոյեմբերի 17-ն ընկած ժամանակամիջոցում կայացել է ևս 17 նիստ, այսինքն՝ 21-րդը[16]։ Այնուհետև, 1961 թ. հունվարից սկսած, այդ հանձնաժողովի նիստերի արձանագրությունները համարակալվել են ըստ տարիների[17]։ Հայրենադարձության կառավարական հանձնաժողովը ներկայումս էլ գոյություն ունի և նրա միջոցով են ամենից առաջ ընթացք ու լուծում ստանում հայրենադարձության, ինչպես նաև սովետական քաղաքացիության մեջ վերականգնվելու հետ կապված բոլոր հարցերը։

Թեպետ այդ հանձնաժողովի արձանագրությունները հայրենադարձության և նրան հարակից այլ հարցերի վերաբերյալ ընդհանրապես բավականաչափ հարուստ նյութեր են պարունակում, այնուամենայնիվ դրանցից հնարավոր չէ թվական ստույգ տվյալներ քաղել մինչև 1962 թվականը տեղի ունեցած ներգաղթի վերաբերյալ։

Ավելի քան մեկ տասնամյակի (1950—1961 թթ.) ընթացքում իրականացված անհատական հայրենադարձության փորձը

[13] Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 326, ց. 2, գ. 21, թ. 1։

[14] Տե՛ս նույն տեղում, թ. 2։

[15] Տե՛ս նույն տեղում, գ. 24, թ. 1—3։

[16] Տե՛ս նույն տեղում, թ. 4—33, և գ. 28, թ. 1—60։

[17] Տե՛ս նույն տեղում, գ. 35, թ. 1 և հետո։

ցույց տվեց, որ այդ եղանակով բնավ հնարավոր չէ բավարարել ստացվող բազմաթիվ խնդրանքները։ Ինչպես նշված է ՀՍՍՀ արտաքին գործերի մինիստրության 1961 թ. տարեկան հաշվետվության մեջ, սփյուռքահայ բազմաթիվ կազմակերպություններից և արտասահմանյան մի շարք երկրների սովետական դեսպանություններից ու միսիաներից շարունակում էին ստացվել բազմաթիվ միջնորդություններ՝ մեծ խմբերով հայերի հայրենադարձություն թույլատրելու մասին։ Այդ հարցը, այսինքն զանգվածային նոր հայրենադարձություն կազմակերպելու հարցը, շատ որոշակիորեն բարձրացրին նաև Հայաստանում սովետական իշխանության 40-ամյակի տոնակատարությունների առթիվ հայկական գրեթե բոլոր գաղթօջախներից հայրենիք ժամանած պատվիրակությունները։

Հաշվի առնելով այդ ցանկությունները և հանրապետության ժողովրդական տնտեսության զարգացման հեռանկարները՝ Սովետական Հայաստանի կուսակցական ու պետական ղեկավար օրգանները միութենական համապատասխան մարմինների առջև հարց հարուցեցին 1960—70-ական թվականներին արտասահմանյան երկրներից մի քանի տասնյակ հազար սփյուռքահայերի հայրենադարձություն կազմակերպելու մասին։ ՍՄԿԿ Կենտկոմը և ՍՍՀՄ Մինիստրների խորհուրդը, ընդառաջելով Սովետական Հայաստանի կառավարության և սփյուռքահայ աշխատավորների ցանկություններին, 1961 թ. օգոստոսի 12-ին որոշում ընդունեցին Մերձավոր ու Միջին արևելքի, ինչպես նաև ամերիկյան մայրցամաքի երկրներից հայերի նոր զանգվածային հայրենադարձություն կատարելու մասին[18],

Դրանով փաստորեն սկսվեց սփյուռքահայերի զանգվածային հայրենադարձության երրորդ փուլը, որը շարունակվում է մինչև այժմ։ Պետք է նշել, որ այդ որոշումը, որպես կարևոր քաղաքական միջոցառում, դրական լայն արձագանք գտավ թե՛ հայրենիքում և թե՛ սփյուռքում։ Այն նկատելիորեն նպաստեց հայրենիք—սփյուռք կապերի աշխուժացմանը, ավելի ուժեղացրեց համակրանքը սովետական հայրենիքի նկատմամբ և նոր եռանդ ու թափ հաղորդեց հայապահպանման համար սփյուռքահայ առաջադիմական ուժերի պայքարին։ Այսպիսով, սովետական կառավարությունն իր կարևոր խնդիրներից մեկը դարձրեց տարագիր հայերի հայրենիք վերադառնալու գործի կազմակերպումը, այստեղ նրանց ապահովելով բոլոր պայմանները բարեկեցիկ կյանքի և ստեղծագործական աշխատանքի համար։

[18] Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 514, թ. 3—6։



ՀԿԿ XXII համագումարը (սեպտեմբեր, 1961 թ.) առանձնահատուկ ուշադրություն նվիրեց նոր հայրենադարձության կազմակերպման խնդրին։ ՀԿԿ Կենտկոմի հաշվետու զեկուցման առթիվ համագումարի ընդունած բանաձևում այդ մասին ասված է. «Նշելով, որ հայ ժողովրդի բախտի նկատմամբ կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության հայրական հոգատարության շնորհիվ մոտ ժամանակներս կսկսվի արտասահմանյան հայերի նոր մասսայական վերադարձը Սովետական Հայաստան, համագումարը Հայաստանի կոմկուսի Կենտկոմին, Մինիստրների խորհրդին, հանրապետության բոլոր կուսակցական ու սովետական օրգաններին առաջարկում է օրինակելիորեն նախապատրաստվել սովետական նոր քաղաքացիների ընդունմանը, նրանց լրիվ տեղավորմանը, նրանց համար ստեղծել անհրաժեշտ բնակարանային-կենցաղային պայմաններ, ակտիվ աշխատանք կատարել նրանց սոցիալիստական վերադաստիարակության ուղղությամբ»[19]։

Ելնելով ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի վերոհիշյալ որոշումից, ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը նախատեսեց 1962—1965 թթ. հայրենիք վերադարձնել ավելի քան 40 հազար սփյուռքահայերի, այդ թվում՝ Եգիպտոսից՝ 8 հազ., Սիրիայից՝ 10 հազ., Կիպրոսից՝ 2 հազ., Լիբանանից՝ 6500, Իրաքից՝ 2 հազ., Իրանից՝ 6200, Հունաստանից՝ 2 հազ., Թուրքիայից՝ 1000, Ուրուգվայից՝ 500, Արգենտինայից՝ 1500 և այլ երկրներից՝ 1000 մարդ։ Նախատեսվում էր ըստ տարիների հայրենադարձնել՝ 1962 թ.՝ 5 հազ., 1963 թ.՝ 8 հազ., 1964 թ.՝ 12 հազ., և 1965 թ.՝ 15 հազ. մարդ[20]։ Հայրենադարձներին ընդունելու և տեղավորելու համար միութենական և հանրապետական համապատասխան օրգանները ծավալեցին նախապատրաստական լայն աշխատանք։ Հայրենադարձության հետ կապված գործնական ամբողջ աշխատանքը ղե-

[19] ՀԿԿ XXII համագումարի բանաձևը Հայաստանի կոմկուսի Կենտկոմի հաշվետու զեկուցման առթիվ, Երևան, 1961, էջ 34։

[20] Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 326, ց. 2, գ. 61, թ. 2—3։

խավորելու համար, ՀԿԿ Կենտկոմի և ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի 1961 թ. օգոստոսի 29-ի համատեղ որոշմամբ, կազմակերպվեց ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր արտասահմանից վերադարձող հայերի ընդունման և տեղավորման կոմիտե (այսուհետև այն կրճատ կանվանենք հայրենադարձության կոմիտե)։

Հայրենադարձության կոմիտեն ստեղծվեց ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր վերաբնակեցման և բանվորների կազմակերպված հավաքագրման գլխավոր վարչության բազայի վրա[21]։ Հայրենադարձության կոմիտեն, չհաշված նրա ընդունման կայանները, սկզբում ուներ հետևյալ կազմը՝ ղեկավարություն, ընդունման և տեղավորման բաժին, կուլտ-մասսայական աշխատանքի բաժին, վարչա-տնտեսական մաս՝ ընդամենը 18 հաստիք[22]։

ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր արտասահմանից վերադարձող հայերի ընդունման և տեղավորման կոմիտեի ֆունկցիաների մեջ մտնում էր մինչև հայրենադարձների ժամանումը համապատասխան կազմակերպություններից նրանց համար բնակարանների ստացումն ու պահպանումը, ըստ նրանց մասնագիտությունների աշխատանքային տեղերի հայթայթումը, նրանց երեխաների ու երիտասարդների ուսուցման, ինչպես նաև հասակավոր բնակչության անգրագիտության ու կիսագրագիտության վերացման գործի կազմակերպումը, հայրենադարձների թոշակավորման և բազմազավակ ընտանիքների նպաստավորման հարցերի լուծումը, հայրենադարձների շրջանում կուլտ-մասսայական աշխատանքների կազմակերպումը և այլն։

Հայրենադարձությունը նախապատրաստելու գործում արտասահմանյան հայկական գաղթօջախներում որոշակի աշխատանք էին կատարում ՍՍՀՄ և ՀՍՍՀ արտաքին գործերի մի-

[21] Տե՛ս նույն տեղում, ֆ. 362, ց. 10, գ. 1, թ. 1 և գ. 20, 11։

[22] Տե՛ս նույն տեղում, դ. 36, թ. 1—6։ Հայրենադարձության կոմիտեի առաջին նախագահն է եղել Գ. Տ. Գևորգյանը՝ մինչև 1967 թ. կեսերը, 1967—1969 թթ.՝ Ս. Տ. Գասպարյանը, իսկ 1969—1984 թթ.՝ Դ. Հ. Հովհաննիսյանը, 1984 թ. հուլիսից՝ Լ. Պ. Մանասերյանը։ Տարբեր ժամանակներում կոմիտեում ղեկավար աշխատանք են կատարել նաև Հ. Ռ. Այվազյանը, Լ. Ե. Հայրապետյանը, Խ. Ա. Մովսեսյանը և ուրիշներ։ Ներկայումս կոմիտեի նախագահի տեղակալներ են Հ. Ա. Հովսեփյանը և Ս. Հ. Բարայանը։



նիստրությունները, մեր դեսպանություններն ու հյուպատոսությունները։ Շահագրգռված կազմակերպությունների հետ միասին ՀՍՍՀ արտաքին գործերի մինիստրությունը մշակել էր հայրենադարձության կազմակերպման վերաբերյալ մանրամասն հրահանգներ, որոնք հանրապետության ղեկավար օրգանների կողմից հաստատվելուց հետո ուղարկվել էին ՍՍՀՄ ԱԳՄ և այն երկրների մեր դեսպանությունները, որոնցից նախատեսվում էր հայերի հայրենադարձություն կատարել։ ՀՍՍՀ ԱԳՄ հայրենադարձության հարցով սերտ կապեր էր պահպանում ՍՍՀՄ ԱԳՄ համապատասխան բաժինների հետ և մասնակցում ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի հայրենադարձության գծով ներկայացուցիչների ուղարկմանը այն երկրները, որոնցից պետք է կատարվեր հայրենադարձություն։

Սփյուռքահայության զանգվածային հայրենադարձություն կատարելու մասին սովետական կառավարության այս նոր նախաձեռնությունը սփյուռքահայ աշխատավորների շրջանում առաջ բերեց մեծ խանդավառություն։ Նրանք զանգվածաբար դիմում էին իրենց բնակության երկրի սովետական դեսպանությանը՝ խնդրելով թույլատրել հայրենադարձվելու Սովետական Հայաստան։

1961 թ. նոյեմբերին ՍՍՀՄ արտաքին գործերի մինիստրությունը ցուցում տվեց Եգիպտոսում, Սիրիայում, Լիբանանում, Կիպրոսում, Իրաքում և Իրանում սովետական դեսպաններին՝ այդ երկրների կառավարությունների առջև բարձրացնել նրանց մոտ Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի հայրենադարձության գծով երկուական ներկայացուցիչ ուղարկելու հարցը և հասնել դրա դրական լուծմանը։ Շուտով դրականապես լուծվեց այդ հարցը, և այդ երկրները մեկնած ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի ներկայացուցիչները սկսեցին հայրենադարձների կոնտինգենտի նախապատրաստումը[23]։

Ինչպես այդ մասին տեղեկացնում է ՄԱՀ-ում (Եգիպտոս) ՍՍՀՄ դեսպան Վ. Երոֆեևը 1962 թ. սկզբում կազմած զեկուցագրի մեջ, հայրենադարձության գծով ՀՍՍՀ ներկայացուցիչների Կահիրե ժամանումը և հայրենիք մեկնելու համար ցուցակագրումը մեծ ոգևորություն առաջացրին հայրենասիրաբար տրամադրված եգիպտահայերի շրջանում։ Կարճ ժամանակա-

[23] Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 362, ց. 1, գ. 305, թ. 1։



17—1181

միջոցում մեծ թվով հայեր, խմբերով ու անհատորեն, այցելեցին սովետական դեսպանություն և հայտնեցին հայրենադարձվելու իրենց բուռն ցանկությունը։

Հայրենադարձվել ցանկացողների ցուցակագրումը սկսելուց ընդամենը քսանհինգ օր հետո ՍՍՀՄ դեսպանության հյուպատոսական բաժնում արձանագրվել էր 350 ընտանիք, մոտ 2000 մարդ[24]։ Եգիպտոսում հայրենադարձության նախապատրաստմանը ակտիվորեն աջակցում էին հայոց թեմական խորհուրդը և ռամկավարական կուսակցության տեղական կազմակերպության ղեկավարությունը։ Մինչդեռ գաղթօջախի ռեակցիոն խավերը, մասնավորապես դաշնակցականները, հայրենադարձությանը վերաբերվում էին խիստ թշնամանքով։ Նրանք ավելի էին ուժեղացրել զրպարտությունների ու ահաբեկումները ինչպես «Հուսաբերի» էջերում, այնպես էլ հայրենիք ներգաղթելու ցանկություն հայտնած հայերի հասցեներով չարամիտ բովանդակությամբ անստորագիր նամակներ ուղարկելով։ Այդ շրջանում շատ հայեր իրենց փոստարկղներում հայտնաբերում էին Կահիրեից կամ նույնիսկ այլ վայրերից ուղարկված հայերեն, անգլերեն ու ֆրանսերեն գրված անստորագիր նամակներ, որոնցում շռայլ գույներով ներկայացվում էր կյանքն Արևմուտքի երկրներում և հայերին խորհուրդ էր տրվում մեկնել ոչ թե Սովետական Հայաստան, այլ Ավստրալիա, Կանադա, Լատինական Ամերիկա և այլուր։

Այդ անստորագիր նամակների ոչ անհայտ հեղինակները ձգնում էին ապացուցել, թե ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի հայրենադարձության գծով ներկայացուցիչների ժամանումը Եգիպտոս կատարվել է ոչ թե իսկապես առաջիկա ներգաղթը նախապատրաստելու համար, այլ լոկ այդ մասին եղած խոսակցությունները հաստատելու նպատակով։ Դաշնակների այդ հերյուրանքները, որոնք հավանաբար տարածվում էին ոչ առանց արևմտյան տերությունների ներկայացուցիչների թելադրանքի, եգիպտահայության վրա որևէ ազդեցություն չունեցան։

Ինչպես տեղեկացնում էր Ավստրալիայում ՍՍՀՄ դեսպանության հյուպատոսական բաժնի վարիչի պաշտոնակատար Վ. Պրոնինը, ավստրալիական իշխանությունները ամեն կերպ խրախուսում էին հայերի մուտքը այնտեղ, քանի որ նրանք ո-

[24] Տե՛ս նույն տեղում, թ. 1—14։



րակյալ մասնագետներ էին, տիրապետում էին մի քանի լեզուների, մասնավորապես անգլերենի, որը շատ կարևոր է տեղի պայմաններում։ Շահագրգռված լինելով դրանով, ավստրալիական կառավարությունը, եգիպտական իշխանությունների թույլտվությամբ, Կահիրեում բացել էր հատուկ ներգաղթի բյուրո՝ հայերին, ինչպես նաև հույներին հավաքագրելու համար[25]։

ՄԱՀ-ից հայերին արևմտյան երկրներ արտագաղթեցնելու գործում որոշակի դեր էր խաղում նաև կաթոլիկ եկեղեցին, մասնավորապես քահանա Շեղակը, որն օգնում էր ամերիկյան դեսպանությանը հայերի ԱՄՆ մեկնումը կազմակերպելու գործում։ Հռոմի կաթոլիկ եկեղեցին էլ զբաղված էր հայերի Կանադա մեկնումը կազմակերպելու հոգսերով։ Այդ գործում ակտիվ մասնակցություն ուներ նաև հայ կաթոլիկ քահանա Աղաջանյանը։ Կաթոլիկ եկեղեցին արևմտյան երկրներ մեկնող հայերին նույնիսկ նյութական որոշ օգնություն էր ցույց տալիս, կաշառում նրանց։

Հակառակ դրան, հայ լուսավորչական եկեղեցին միանգամայն դրական էր վերաբերվում հայերի Սովետական Հայաստան հայրենադարձվելուն։ ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի հայրենադարձության գծով ներկայացուցիչների Կահիրե ժամանելու հենց հաջորդ օրը արքեպիսկոպոս Մ. Սիրունյանն իր քարոզի մեջ հայերին կոչ էր անում չմեկնել Արևմուտք, այլ վերադառնալ հայրենիք՝ Սովետական Հայաստան։ Մ. Սիրունյանը կտրականապես հրաժարվել էր արևմտյան երկրները մեկնելու համար հայերին համոզելու՝ այդ տերությունների ներկայացուցիչների բազմաթիվ առաջարկներից։ Ընդհակառակը, նա որոշակի աշխատանք էր ծավալել հայրենադարձվող հայերի բեռները Կահիրեից Ալեքսանդրիայի նավահանգիստը փոխադրելու և կարիքավորներին օգնելու համար հայ համայնքից 1000 եգիպտական ֆունտ գումար հավաքելու ուղղությամբ[26]։

Եթե մինչև ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի ներկայացուցիչների Կահիրե ժամանումը դաշնակները հայտարարում էին, թե իբր ոչ մի ներգաղթ էլ չի լինի, ապա դրանից հետո «Հուսաբե-

[25] Տե՛ս նույն տեղում, ֆ. 875, ց. 1, գ. 8, թ. 2—3։
[26] Տե՛ս նույն տեղում, ֆ. 326, ց. 1, գ. 326, թ. 1—14։

բի» էջերում ձգնում էին եգիպտահայերին սարսափեցնել Սովետական Հայաստանում կյանքի պայմանների անտանելիության վերաբերյալ առասպելներով ու սուտ հերյուրանքներով։ ԱՄՆ-ի, Կանադայի, Բրազիլիայի, Արգենտինայի և Ավստրալիայի՝ Կահիրեում գտնվող ներկայացուցչությունները միտումնավոր կերպով դյուրացրել էին հայերի իրենց երկրները մեկնելու ձևակերպումները, որպեսզի որքան հնարավոր է շատ ընտանիքներ գաղթեցնեին։ Այդ գործում ոչ երկրորդական դեր էր խաղում նաև այսպես կոչված «Հայ գաղթականների ամերիկյան կոմիտեն»՝ ԱՆՉԱ-ն, որը գլխավորում էր ոչ անհայտ դաշնակցական «խոհարարապետ» Ջորջ Մարտիկյանը։ Սակայն, չնայած այդ բոլոր խարդավանքներին, եգիպտահայերի մեծամասնության անկեղծ ձգտումն էր վերադառնալ մայր հայրենիք՝ Սովետական Հայաստան։

Զանգվածային հայրենադարձության վերսկսման կապակցությամբ մեծ էր նաև իրանահայերի խանդավառությունը։ Ինչպես այդ առթիվ հայտնում էր Իրանում ՍՍՀՄ դեսպան Ն. Պեգովը, հայրենադարձության վերսկսման մասին Երևանի ռադիոյի հաղորդումը լսելուց անմիջապես հետո, սկսվեց տեղի հայերի մասսայական հոսանքը դեպի սովետական դեսպանատուն։ Ընդամենը երկու օրվա ընթացքում ավելի քան 2000 մարդ արձանագրվեց հայրենիք մեկնելու համար[27]։

Այդ նույն ժամանակ Ստամբուլի ՍՍՀՄ գլխավոր հյուպատոսը հաղորդում էր, որ իրեն է ներկայացել տեղի հայ համայնքի ներկայացուցիչը և հայտնել, որ մոտ 1000 հայեր, գլխավորապես երիտասարդներ, պատրաստ են անմիջապես մեկնել Սովետական Հայաստան[28]։

Կիպրոսի հանրապետությունում ՍՍՀՄ դեսպան Պ. Երմոշինը նույնպես հայտնում էր, որ հայ համայնքի ներկայացուցիչները խնդրում են շուտափույթ կերպով կիպրահայերին փոխադրել հայրենիք, դրանում տեսնելով նրանց փրկությունը։ Սովետական դեսպանության ունեցած տվյալներով, 3200 հոգուց բաղկացած կիպրահայ համայնքի 80 տոկոսից ավելին ցանկանում էր ներգաղթել հայրենիք[29]։

---

27 Տե՛ս նույն տեղում, գ. 322, թ. 5։

28 Տե՛ս նույն տեղում, թ. 5—6։

29 Տե՛ս նույն տեղում։



Անգլիայից նույնպես ՍՍՀՄ դեսպանությունը հաղորդում էր, որ այնտեղ բնակվող հայերը ՀԿԿ XXII համագումարում կենտկոմի առաջին քարտուղար Յա. Ն. Զարոբյանի զեկուցումից տեղականալով հայրենադարձության վերսկսման մասին, խնդրում են իրենց ևս թույլատրել ներգաղթել Սովետական Հայաստան։ Սովետական դեսպանը խնդրում էր ՀՍՍՀ արտգործմինիստրությանը՝ իրեն տեղյակ դարձնել Անգլիայից հայերի հայրենադարձության պլանի մասին[30]։

Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհուրդը 1961 թ. նոյեմբերի 5-ին որոշում ընդունեց «Արտասահմանից 1962—1965 թվականներին ժամանող հայերին ՀՍՍՀ բնակավայրերում տեղավորելու մասին»[31]։ Այդ որոշմամբ Սովետական Հայաստան ներգաղթող սփյուռքահայերին բնակարաններով ապահովելու և նրանց համար կուլտուր-կենցաղային անհրաժեշտ պայմաններ ստեղծելու նպատակով պարտավորեցվում էին ՀՍՍՀ ժողտնտխորհը, ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր սովխոզների գլխավոր վարչությունը, Կիրովականի քաղսովետի գործկոմը, Իջևանի և Հրազդանի շրջսովետների գործկոմները՝ 1962—1965 թթ. ընթացքում պատրաստել 280 հազար քմ բնակտարածություն, որից 1962 թ. համար՝ 15000 քմ։ Այդ թվում Կիրովականում՝ 3000, Իջևանում՝ 1000, Լուսավանում (1967 թ. Չարենցավան)՝ 2400, Հրազդանում՝ 5000, Արզնի ավանում՝ 600, ժողտնտխորհի գծով՝ 3000 քմ բնակտարածություն[32]։

Երբ փոխվեց ավելի վաղ մշակված պլանը և ավելացվեց 1962 թվականին ներգաղթողների թիվը, ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը 1962 թ. ապրիլի 9-ին կայացրեց լրացուցիչ որոշում, որի համաձայն սահմանվում էր հայրենադարձվողների համար 1962 թվականին պատրաստել 43650 քմ բնակտարածություն։ Դրանից Երևանում՝ 1000, Լենինականում՝ 600, Կիրովականում՝ 12000, Ալավերդում՝ 150, Ղափանում՝ 100, Իջևանում՝ 3000, Լուսավանում՝ 7000, Հրազդանում՝ 10800, Արզնիում՝ (ապակյա տարաների գործարանի բանավանում)՝ 300, Նոր Հաճընում՝ 700 և հանրապետության սովխոզների ավաններում՝ 8000 քմ բնակտարածություն[33]։ Այդ նույն որոշմամբ,

---

30 Տե՛ս նույն տեղում։

31 Տե՛ս նույն տեղում, ֆ. 362, ց. 10, գ. 1, թ. 1—2։

32 Տե՛ս նույն տեղում, թ. 3—5։

33 Տե՛ս նույն տեղում, թ. 13—19։

հայրենադարձների դպրոցահասակ երեխաներին դպրոցներում ընդգրկելու նպատակով, սահմանվում էր 1962—1965 թթ. ընթացքում Հրազդան, Ալավերդի, Լուսավան քաղաքներում, Իջևան, Արզնի, Էլառ (այժմ՝ Աբովյան քաղաք) և Մասիս ավաններում շահագործման հանձնել 5960 աշակերտական տեղով դպրոցական շենքեր։ Այդ նույն ժամանակամիջոցում կառուցվելու էին 1800 տեղով նախադպրոցական հիմնարկներ, ինչպես նաև հիվանդանոցներ, դիսպանսերներ, պոլիկլինիկաներ, սանէպիդ կայաններ, մանկական կոնսուլտացիաներ, մեքենայացված կաթնախոհանոցներ և այլն[34]։

Ըստ նախնական պլանի վերջնական տարբերակի որոշվեց 1962 թվականին հայրենադարձել 1250 ընտանիք (մեկ ընտանիքը միջին հաշվով ենթադրելով 4 հոգուց բաղկացած), 5000 մարդ, այդ թվում Իրանից՝ 750 ընտանիք (3000 մարդ), Եգիպտոսից՝ 250 ընտանիք (1000 մարդ), Կիպրոսից՝ 125 ընտանիք (500 մարդ), Իրաքից՝ 125 ընտանիք (500 մարդ)։ Այդ նպատակով նախատեսվում էր ծախսել մեկ միլիոն 83 հազար ռուբլի[35]։

Հայրենադարձներին սովետական տերիտորիայում ընդունելու համար Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի 1962 թ. փետրվարի 28-ի կարգադրությամբ հայրենադարձության կոմիտեն Բաթումում և Ջուլֆայում կազմակերպեց երկու կայան՝ յուրաքանչյուրը 500 մարդու հաշվով[36]։ Այդ կայանները կահավորելու նպատակով հայրենադարձության կոմիտեն ձեռք բերեց անհրաժեշտ պարագաներ[37]։

Ջուլֆայի կայանը նախատեսված էր Իրանից եկող հայրենադարձներին ընդունելու համար։ Սակայն այն բանից հետո, երբ իրանական կողմը չհամաձայնվեց սահմանային Ջուլֆա կայարանով բաց թողնել հայրենադարձներին, հայրենադարձության կոմիտեն ժամանակավորապես կոնսերվացիայի ենթարկեց Ջուլֆայի կայանը և նրա փոխարեն կազմակերպեց Բաքվի կայանը[38]։ Հետագայում, երբ վերսկսվեց Իրանից հայերի զանգվածային հայրենադարձությունը, Ջուլֆայի կայանը նորից վերաբացվեց։ Ինչպես երևում է Բաթումի կայանի 1962 թվականի տարեկան հաշվետվությունից, այն իր գործունեությունը սկսել է նույն թվականի մայիսից։ Մայիս-սեպտեմբեր ամիսներին կատարվեց ծովային նավահանգստի և երկաթուղային կայարանի պահեստների, հայրենադարձների ընդունման կայանին հատկացված շենքերի վերակառուցումն ու վերանորոգումը։ Ստեղծվեցին բարեկարգ հանրակացարաններ, ճաշարան և բժշկական կայան։ Հոկտեմբերից արդեն Բաթումի կայանը սկսեց ընդունել հայրենիք ժամանող հայրենադարձների քարավանները։

1962 թ. հոկտեմբերի 7-ին Բաթում հասավ հայրենադարձների առաջին խումբը Կիպրոսից՝ 80 ընտանիք (336 շունչ), իսկ հոկտեմբերի 25-ին՝ ՄԱՀ-ից (Եգիպտոս)՝ 80 ընտանիք (213 շունչ)։ Բաքվի կայանի միջոցով Իրանից հայրենիք եկավ 14 ընտանիք (58 շունչ)։ Այսպիսով, 1962 թվականին Բաթումի և Բաքվի կայաններով խմբակային կարգով հայրենիք եկավ 174 ընտանիք (607 մարդ)[39]։ Բացի այդ, աշխարհի 10 երկրներից (Լիբանան, Սիրիա, Ֆրանսիա, Ուրուգվայ, Արգենտինա, Իրաք, Իրան, Թուրքիա, Հունաստան, Կիպրոս) անհատական կարգով հայրենիք եկավ ևս 46 ընտանիք (144 մարդ)։ Այսպիսով, ըստ ներգաղթի կոմիտեի 1962 թ. տարեկան հաշվետվության, սփյուռքից հայրենիք է ներգաղթել 220 ընտանիք (751 շունչ)[40]։ Սակայն 1962—1982 թթ. տեղի ունեցած հայրենադարձության վերաբերյալ կոմիտեի կազմած ընդհանուր աղյուսակի մեջ 1962 թվականին ներգաղթածների թիվը ցույց է տրված 217 ընտանիք (757 շունչ), այդ թվում Կիպրոսից՝ 81 ընտ. (338 շունչ), ՄԱՀ-ից (Եգիպտոս)՝ 75 ընտ. (213 շունչ), Սիրիայից՝ 4 ընտ. (14 շունչ), Իրանից՝ 38 ընտ. (137 շունչ), Լիբանանից՝ 8 ընտանիք (29 շունչ), Կիպրոսից՝ 1 ընտանիք (2 շունչ), Իրաքից՝ 1 ընտանիք (1 շունչ), Ուրուգվայից՝ 1 ընտանիք (2 շունչ), Արգենտինայից՝ 4 ընտանիք (11 շունչ), Ֆրանսիայից՝ 2 ընտանիք (3 շունչ), Թուրքիայից՝ 2 ընտանիք (6 շունչ), Հունաստանից՝ 1 ընտանիք (3 շունչ)[41]։ Մեր կարծիքով

34 Տե՛ս նույն տեղում, թ. 6—8։
35 Տե՛ս նույն տեղում, գ. 22, թ. 11։
36 Տե՛ս նույն տեղում, թ. 10։
37 Տե՛ս նույն տեղում, գ. 1, թ. 11։
38 Տե՛ս նույն տեղում, գ. 2, թ. 20—21։



39 Տե՛ս նույն տեղում, գ. 21, թ. 29։
40 Տե՛ս նույն տեղում։
41 Տե՛ս ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր արտասահմանից վերադարձող հայերի ընդունման և տեղավորման կոմիտեի ընթացիկ արխիվ, «Տեղեկություններ 1962—1982 թթ. կատարված հայրենադարձության մասին» գործը։

ավելի ստույգ և ճշգրտված պետք է համարել վերջին թիվը, այսինքն՝ աղյուսակում նշված ընտանիքների և շնչերի քանակը։

Կիպրահայ և եգիպտահայ հայրենադարձների ընդունելության վրա (Բաթումի ընդունման կայան ժամանելու պահից մինչև նշանակված բնակավայր հասնելը) ծախսվել է 66887 ռ. 88 կոպ.[42]։ Սովետական տերիտորիա ժամանելուց հետո ներգաղթողներն ստանում էին միանվագ դրամական նպաստ՝ անձը 30 ռ., օրական երեք անգամ ձրի սնունդ (ընդունման կայանի կարանտինում ներգաղթողները մնում էին 4—7 օր) և Բաթումից մինչև նշանակված բնակավայրը հասնելու համար չոր սննդի երկու օրվա նորմա[43]։

Այսպիսով, նախապես պլանավորված 5 հազարի դիմաց 1962 թ. խմբակային վիզաներով հայրենադարձվեց ընդամենը 607 մարդ[44]։ Բանը նրանումն էր, որ մի շարք երկրներում ստեղծված քաղաքական իրադրությունը ուղղակի աննպաստ եղավ զանգվածային հայրենադարձության համար։ Այդ պատճառով էլ Սիրիայում, Լիբանանում և Իրաքում ՍՍՀՄ դեսպանությունները նպատակահարմար չգտան այդ երկրների կառավարությունների առաջ տվյալ պահին դնել զանգվածային հայրենադարձության հարցը։ ՍՍՀՄ դեսպանությունների այդ կարծիքին համաձայնեցին նաև մեր հանրապետության համապատասխան օրգանները, ուստի 1962 թ. հայերի զանգվածային հայրենադարձություն կատարվեց միայն Կիպրոսից, Եգիպտոսից և Իրանից։

Պետք է նշել, որ հատկապես Իրանում, հայերի հայրենադարձությունը հանդիպեց լուրջ խոչընդոտների։ Փաստորեն այնտեղ նույնպես քաղաքական իրադրությունը անսպասելիորեն աննպաստ եղավ հայրենադարձության համար։ Իրանական իշխանությունները, խոսքով համաձայնելով հայերի զանգվածային հայրենադարձությանը, գործնականում բազմաթիվ խոչընդոտներ հարուցեցին դրա դեմ։ Երբ հայրենադարձությունը նախապատրաստելու նպատակով Իրան ժամանեցին ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի ներկայացուցիչները, իրանական իշխանությունները սկսեցին անհիմն կերպով ձգձգել հայրենադարձու-

[42] Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 362, ց. 10, գ. 21, թ. 61։
[43] Տե՛ս նույն տեղում, թ. 63։
[44] Տե՛ս նույն տեղում, թ. 61 և գ. 22, թ. 11։



թյան հետ կապված հարցերի լուծումը։ ՀՍՍՀ ներկայացուցիչներին չէին թույլատրում մեկնել այն քաղաքներն ու շրջանները, ուր հայեր էին ապրում, երկար ժամանակ ձգձգում էին հայերի իրանական հպատակությունից դուրս գալու ձևակերպումը և այլն։ Անկասկած է, որ այդ գործում որոշակի բացասական դեր էին խաղում Թեհրանում ամերիկյան դեսպանության աշխատակիցներն ու դաշնակները, որոնք ձգտում էին ամեն կերպ արգելակել Իրանից հայերի հայրենադարձությունը։ Այդ էր պատճառը, որ Իրանից խմբակային հայրենադարձության միջոցով 1962 թվականին հայրենիք եկավ նախատեսված 3000-ի դիմաց ընդամենը 58 մարդ։ Չնայած ՄԱՀ-ի իշխանությունները սկզբունքորեն համաձայնել էին հայերի հայրենադարձությանը, սակայն դրանք նույնպես մի շարք դժվարություններ ստեղծեցին զանգվածային հայրենադարձության գործնական իրականացման ժամանակ (հայերին չէին թույլատրում իրենց հետ տանել ամբողջ ունեցվածքը, ձգձգում էին նրանց մեկնման գործերի ձևակերպումը և այլն)։ Այդ տեսակետից համեմատաբար բարենպաստ եղավ մթնոլորտը Կիպրոսում.

Հիմնականում վերը նշված պատճառներով է բացատրվում այն հանգամանքը, որ պլանավորված 5000-ի փոխարեն խմբակային հայրենադարձության միջոցով 1962 թ. հայրենիք եկավ շուրջ **607 մարդ՝ Իրանից, Կիպրոսից և ՄԱՀ-ից**[45]։

Կիպրահայ հայրենադարձները տեղավորվեցին Լենինականում և Կիրովականում, իսկ եգիպտահայերը՝ Ալավերդի, Կիրովական, Լենինական և Երևան քաղաքներում[46]։

Ի նշան անկեղծ երախտագիտության, 1962 թ. հոկտեմբերին, ներգաղթին աջակցող կիպրահայ կոմիտեի նախագահ Տիգրան Ջանիկյանի ստորագրությամբ հայրենադարձվողների անունից Նիկոզիայից հեռագիր ուղարկվեց ՍՍՀՄ կառավարությանը, ուր ասված էր. «Մենք, նախկինում Կիպրոսում ապրող հայերս, այս հանդիսավոր րոպեներին հայտնում ենք ամենաանկեղծ երախտագիտություն և շնորհակալություն սովետական կառավարությանը, մեր մայր հայրենիքին՝ Սովետական Հայաստանին, մեր մասին հոգատարության և մեզ մեր հայրենի-

[45] Տե՛ս նույն տեղում, ֆ. 326, ց. 1, գ. 327, թ. 1—14։
[46] Տե՛ս նույն տեղում, ֆ. 362, ց. 10, գ. 21, թ. 63։

քը, որից երկար տարիներ կտրված էինք, վերադառնալու երջանիկ հնարավորություն տալու համար։

Մենք վստահեցնում ենք սովետական կառավարությանը և մեր մայր հայրենիքին, որ վերադառնալով Սովետական Հայաստան, մեր բոլոր ուժերը կտանք մեր սիրելի հայրենիքի առաջադիմության ու ծաղկման գործին, հանուն խաղաղության պայքարի գործին»[47]։

1962 թ. դեկտեմբերի 13-ին Կիպրոսում ՍՍՀՄ դեսպանության կցորդ Ա. Պրիպխանովի և հայերի ներգաղթին աջակցող կոմիտեի անդամ Գրիգոր Բեքերյանի միջև կայացած զրույցի ժամանակ վերջինս հայտնում է, որ հայրենիք մեկնած կիպրահայերից ստացված նամակներում հաղորդվում է այնտեղ նրանց ցույց տված ջերմ ընդունելության և հոգատարության մասին[48]։

Սովետական կառավարությունը իսկապես մեծ հոգատարություն էր ցուցաբերում հայրենադարձների նկատմամբ, նրանց ապահովելով ձրի, հարմարավետ բնակարաններով, արտոնյալ կարգով հատկացնելով կահույք և այլ միջոցներ։ Ինչպես երևում է հայրենադարձության կոմիտեի 1962 թ. հաշվետվությունից, այդ տարվա համար առանձնացված մեկ միլիոն 83 հազար ռուբլուց ծախսվել է ընդամենը 296800 ռուբլի[49]։ 1962 թվականին հայրենադարձության կոմիտեն ընդունման կայանների հետ միասին ուներ 45 հաստիքային միավոր, որից Բաթումի կայանում` 20, իսկ Ջուլֆայում` 19 աշխատակիցներ[50]։ Ջուլֆայի կայանը նախատեսված էր Իրանից երկաթուղով հայրենադարձվողների ընդունման համար և 1962 թ. երկրորդ եռամսյակից պատրաստ էր։ Սակայն այդ տարի Ջուլֆայով Իրանից ոչ մի հայրենադարձ չեկավ, թեպետ պլանավորված էր ընդունել 750 ընտանիք կամ 3000 մարդ և այդ նպատակով կազմված էր 214510 ռուբլու նախահաշիվ[51]։

1963 թ. մայիսի 6-ին Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհուրդը քննարկեց նույն թվականին հայրենադարձների ընդունման, տեղավորման և աշխատանքով ապահովման հարցը։ Սահմանվեց ընդունելության ընդհանուր պլանը` 3500 մարդ, այդ թվում Իրանից` 1000, ԱՄՆ-ից` 700, Կիպրոսից` 600, Հունաստանից` 500 և այլ երկրներից` 700 մարդ։ Որոշվեց հայրենադարձներին տեղավորել Լենինականում` 750, Կիրովականում` 700, Հրազդանում` 700, Լուսավանում` 500, Ալավերդում և Իջևանում` 200-ական, Ստեփանավանում` 50, Ղափանում` 100, Արովյանում` 300 մարդ։ Նախատեսվում էր, որ եթե հաջողվի լրացուցիչ հայրենադարձնել ևս 2000 հոգու, նրանց տեղավորել հանրապետության սովխոզներում[52]։

ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը միաժամանակ հանձնարարեց համապատասխան մինիստրություններին ու գերատեսչություններին` հայրենիք ժամանողներին անմիջապես ապահովել ըստ մասնագիտության աշխատանքով և կազմակերպել երեխաների ու երիտասարդների ուսուցման, ինչպես նաև մեծահասակների անգրագիտության ու կիսագրագիտության վերացման գործը[53]։

Նույն թվականի ապրիլի 22-ին ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը կրկին անդրադարձավ 1963 թ. հայրենիք ժամանող հայրենադարձներին բնակարաններով ապահովելու հարցին։ Որոշվեց 1963 թ. բնակֆոնդը բաշխելիս հայրենադարձների համար առանձնացնել 41000 քմ բնակտարածություն, որից Երևանում` 4000, Լենինականում` 8000, Կիրովականում` 6000, Ալավերդում` 2000, Ղափանում` 1000, Հրազդանում` 3000, Իջևանում` 2000, Լուսավանում` 400, գյուղմթերքների արտադրության և մթերումների մինիստրության սովխոզների ավաններում` 6600 քառ. մետր[54]։ Այդ որոշմամբ միաժամանակ հանձնարարվում է համապատասխան քաղսովետների գործկոմներին նախորդ տարիներին հայրենիք եկած հայրենադարձներին բնակտարածությամբ լրիվին բավարարելու նպատակով 1963 թվականին հայրենադարձության կոմիտեին հատկացնել լրացուցիչ բնակֆոնդ` Երևանում` 24,000, Լենինականում` 1740 և Կիրովականում` 1080 քմ[55]։

---

[47] Տե՛ս նույն տեղում, ֆ. 326, ց. 2, գ. 50, թ. 7։
[48] Տե՛ս նույն տեղում, գ. 61, թ. 6—7։
[49] Տե՛ս նույն տեղում, ֆ. 362, ց. 10, գ. 21, թ. 28։
[50] Տե՛ս նույն տեղում, գ. 22, թ. 1 և 9։
[51] Տե՛ս նույն տեղում, թ. 2 և 11։



[52] Տե՛ս նույն տեղում, գ. 2, թ. 18—24։
[53] Տե՛ս նույն տեղում։
[54] Տե՛ս նույն տեղում, թ. 2—5։
[55] Տե՛ս նույն տեղում, թ. 6։

1963 թվականին սփյուռքահայ 16 գաղթօջախներից ընդունվել է 2304 հայրենադարձ (619 ընտանիք)[56]։ Դրանից 412 ընտանիք (1732 մարդ) եկավ Իրանից, 45 ընտանիք (152 մարդ)՝ Կիպրոսից, 24 ընտանիք (44 մարդ)՝ Հունաստանից և 90 ընտանիք (243 մարդ)՝ Եգիպտոսից, խմբակային վիզաներով։ Մնացածները հայրենիք եկան անհատական վիզաներով Թուրքիայից, Լիբանանից, Ուրուգվայից, Իսրայելից, Եթովպիայից, Սիրիայից, Իտալիայից, Իրաքից, Իրանից, Արգենտինայից և Բրազիլիայից[57]։

1963 թ. հոկտեմբերի 11-ին ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը անդրադարձավ արտասահմանից վերադարձող հայերի ընդունելության, տեղավորման և աշխատանքով ապահովման հարցերին։ Մինիստրների խորհուրդը նշեց, որ հայրենադարձության կոմիտեն և տեղական սովետները այդ ուղղությամբ որոշակի աշխատանք են կատարել։ Հանրապետության քաղաքներում և ավաններում, ուր նախատեսված է եղել տեղավորել հայրենադարձներին, նախօրոք պատրաստվել են բնակարաններ, միջոցառումներ են ձեռնարկվել աշխատունակներին համապատասխան աշխատանքով ապահովելու ուղղությամբ, դպրոցական երեխաներին ու երիտասարդներին հանրակրթական դպրոցներում և այլ ուսումնական հաստատություններում ընդգրկելու համար և այլն։

Դրա հետ մեկտեղ Մինիստրների խորհուրդն արձանագրեց, որ այդ գործում տեղ են գտել նաև մի շարք թերություններ։ Երբեմն ժամանակին շահագործման չէին հանձնվում բնակարանները, բավարար քանակությամբ պարենային և արդյունաբերական ապրանքներ չէին մատակարարվում հայրենադարձներով բնակեցված ավաններին ու թաղամասերին և այլն[58]։

Հայրենադարձների սպասարկումը և կուլտուր-կենցաղային պայմանները անբավարար էին հատկապես Հրազդանի նոր թաղամասում։ Այնտեղ ժամանակին շահագործման չէր հանձնվել տաք ջրի մատակարարումը, չկար հասարակական բաղնիք, նորաբնակները զրկված էին անհրաժեշտ սանիտարահիգիենիկ հարմարություններից։ Նոր շահագործման հանձնված խանութ-

[56] Տե՛ս նույն տեղում, գ. 23, թ. 37։

[57] Տե՛ս նույն տեղում։

[58] Տե՛ս նույն տեղում, գ. 2, թ. 28—35։



ները լավ չէին սարքավորված, չկար կապի բաժանմունք, անբարեկարգ, ուղղակի բարձիթողի վիճակում էին ճանապարհները, չկային կինոթատրոն, ակումբ և այլ կուլտուրական հիմնարկներ։ Լուրջ թերություններ կային հայրենադարձների բժշկական սպասարկման բնագավառում։ Բացահայտելով այս և մի շարք այլ թերություններ, ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը կոնկրետ միջոցառումներ մշակեց դրությունը արմատապես բարելավելու ուղղությամբ[59]։

1964 թվականին տեղի ունենալիք հայրենադարձության նախապատրաստման հարցը քննարկվեց ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի նույն թվականի մարտի 6-ի նիստում։ Այնտեղ սահմանվեց 1964 թ. Իրանից, ԵԱՀ-ից, Կիպրոսից և այլ երկրներից սփյուռքահայերի ընդունելության պլանը՝ 2500 մարդ[60]։ Հայրենադարձության հանձնաժողովին հանձնարարվեց որոշել ժամանողների թիվն ըստ առանձին երկրների։ Նախատեսվեց հայրենադարձներին տեղավորել Երևան, Լենինական, Կիրովական, Իջևան քաղաքներում և հանրապետության այլ բնակավայրերում։ Այդ նպատակով 1964 թ. բնակարանային ֆոնդից հայրենադարձության կոմիտեին հատկացվեց 34200 քմ բնակտարածություն, որից Երևանում՝ 5000, Լենինականում՝ 8000, Կիրովականում, Լուսավանում և Հրազդանում՝ 2000-ական, Սևանում՝ 200 և հանրապետության սովխոզային ավաններում՝ 15000 քմ։ Միաժամանակ հանձնարարվեց հայրենադարձության կոմիտեին՝ համապատասխան քաղսովետների, մինիստրությունների ու գերատեսչությունների հետ համատեղ երկամսյա ժամկետում որոշել այն ձեռնարկություններն ու կազմակերպությունները, որոնցում պետք է ըստ մասնագիտությունների աշխատանքի տեղավորվեին 1964 թ. ժամանող հայրենադարձները։ Այդ առիթով առաջարկվեց ժողտնտխորհի թեթև արդյունաբերության վարչությանը՝ մինչև մարտի 15-ը Հրազդանում շահագործման հանձնել տրիկոտաժի ֆաբրիկա, իսկ մինչև օգոստոսի 1-ը՝ Լենինականում և Կիրովականում կոշիկի կարման լրացուցիչ արտադրամասեր։ Հայրենադարձ կանանց աշխատանքով ապահովելու նպատակով որոշվեց թեթև արդյունաբերության ձեռնարկություն բացել Լուսավանում։ Մշակվեցին

[59] Տե՛ս նույն տեղում։

[60] Տե՛ս նույն տեղում, գ. 3, թ. 2—3։

նաև մի շարք այլ միջոցառումներ՝ հայրենադարձների աշխատանքային և կուլտուր-կենցաղային պայմանները բարելավելու համար[61]։

Նախապատրաստական այս աշխատանքները կատարելուց հետո սկսվեց հայրենադարձների ընդունումը։ 1964 թ. հայրենիք եկավ 281 ընտանիք (1088 մարդ), որից խմբակային վիզաներով 251 ընտանիք (1005 մարդ), այդ թվում՝ 58 ընտանիք (139 մարդ)՝ ԵԱՀ-ից, 6 ընտանիք (10 մարդ)՝ Կիպրոսից և 187 ընտանիք (836 մարդ)՝ Սիրիայից։ 30 ընտանիք (83 մարդ) հայրենիք եկավ անհատական վիզաներով, աշխարհի 11 երկրից[62]։ 1964 թ. կատարվելիք ներգաղթի վրա նախատեսված էր ծախսել 2 միլիոն 800 հազար ռուբլի, փաստացի ծախսը կազմել է 259283 ռուբլի[63]։

Ինչպես իր զեկուցագրում հաղորդում է 1964 թ. ԵԱՀ-ում հայրենադարձության գծով ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի ներկայացուցիչ Խ. Մոսինյանը, դաշնակները և ԱՆՁԱ-ն շարունակում էին հայրենադարձությունը ձախողելու ուղղությամբ իրենց խլուրդային գործունեությունը։ Նա գրում է, որ ԱՆՁԱ-ի նախագահ Ջորջ Մարտիկյանը, Պերճ Մարյանը և Ավետիս Զարջյանը 1964 թ. մայիսի սկզբին, որպես դաշնակցական կուսակցության ներկայացուցիչներ, մեկնել են Ավստրալիա և Կանադա՝ ԵԱՀ-ից և Մերձավորարևելյան մյուս հայկական գաղթավայրերից դեպի այդ երկրները հայերի ձրի մեկնումը հաջողացնելու, ինչպես նաև արտագաղթող հայերի համար այդ երկրներում հող ստանալու նպատակով։ Սակայն նրանց այդ ձեռնարկը ձախողվել է։

Դատելով Ավստրալիայից և Կանադայից ստացված նամակներից, այնտեղ մեկնածների մեծամասնությունը դժգոհ էր իր վիճակից։ Ավստրալիա և Կանադա գնացողները իրենց հետ չէին կարող տանել իրենց ծեր ծնողներին, քանի որ նշված երկրները չէին ընդունում նրանց։ Այնտեղ հիմնականում գնում էր աշխատունակ երիտասարդությունը, իսկ զառամյալ հասակ ունեցող մարդիկ զանազան պատրվակներով մերժվում էին։ Չնայած դրան, Եգիպտոսում ԱՆՁԱ-ի ներկայացուցիչ, ամերիկյան բանակի բրիգադային գեներալ Հայկ Շեքերճյանը, որը հաճախ էր լինում Կահիրեում և ղեկավարում դաշնակների գործունեությունը, դաշնակցական «Հուսաբերի» հետ միասին շարունակում էր գովերգել արևմտյան երկրները և խանգարել հայրենադարձությանը[64]։

Խ. Մոսինյանը նշում է, որ ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 1964 թ. դաշնակները շարունակում են «Հուսաբերի» էջերում և այլ միջոցներով պրոպագանդա մղել հայրենադարձության դեմ, իրենց էմիսարներին ուղարկում են այն ընտանիքները, որոնք ձևակերպում են հայրենիք մեկնելու վիզաներ, որպեսզի ամեն կերպ ձախողեն նրանց հայրենադարձությունը։ Այս շրջանում եգիպտական իշխանությունները ընդհանուր առմամբ թեպետ չէին խոչընդոտում ԵԱՀ-ից հայերի մեկնելուն, բացառությամբ բժշկի, ինժեների, մեխանիկի և այդ կարգի այլ մասնագիտությունների տեր անձանց, այնուամենայնիվ փաստաթղթերի ձևակերպման այնպիսի բարդ կարգ էին սահմանել, որով անցնելու համար պահանջվում էր առնվազն 4 ամիս։

ՍՍՀՄ դեսպանությունը և նրա հյուպատոսական բաժինը մի շարք քայլեր ձեռնարկեցին հայերի հայրենիք մեկնելու ձևակերպման արարողությունները թեթևացնելու, ինչպես նաև հայրենադարձվողների կողմից հայրենիք տարվող թանկարժեք իրերի ու այլ գույքի քանակը ավելացնելու ուղղությամբ։ Պետք է ասել, որ այդ ձեռնարկումները դրական որոշ արդյունքներ ունեցան[65]։

Կոմիտեի 1965 թ. տարեկան հաշվետվությունից պարզվում է, որ 1965 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին խմբակային վիզաներով հայրենադարձվել է 503 ընտանիք (2576 շունչ), որից 40 ընտանիք (108 շունչ) ԵԱՀ-ից, 463 ընտանիք (2468 շունչ) Սիրիայից։ Անհատական վիզաներով եկել է 35 ընտանիք (124 շունչ), որից 10 ընտանիք (38 շունչ) Իրանից, 1 ընտանիք (8 շունչ) Իսրայելից, 4 ընտանիք (8 շունչ) Իրաքից, 10 ընտանիք (40 շունչ) Թուրքիայից, 1 ընտանիք (3 շունչ) Արգենտինայից, 2 ընտանիք (5 շունչ) Ֆրանսիայից, 1 ընտանիք (1 շունչ) Բուլղարիայից։ Երկուսը միասին կազմում է 538 ընտանիք (2700 շունչ), որից 2556 շունչ հայրենիք է եկել Բաթու-

[61] Տե՛ս նույն տեղում։
[62] Տե՛ս նույն տեղում, գ. 25, թ. 34։
[63] Տե՛ս նույն տեղում, թ. 35։



[64] Տե՛ս նույն տեղում, ֆ. 326, ց. 1, գ. 363, թ. 9—10։
[65] Տե՛ս նույն տեղում, գ. 326, թ. 1—14։

մով։ Այդ ամենի վրա 1965 թ. ծախսվել է 532622 ռուբլի, որից 82435 ռ. տրվել է որպես միանվագ դրամական նպաստ, իսկ 96970 ռուբլի՝ այլ կարգի օգնություն[66]։

1965 թ. նախատեսված էր Իրանից, ՍԱՀ-ից և ՄԱՀ-ից հայրենադարձել 6000 մարդ, այդ թվում Իրանից՝ 4000։ Սակայն իրանական իշխանությունները չթույլատրեցին այդ և 1965 թ. զանգվածային հայրենադարձություն տեղի ունեցավ միայն Սիրիայից և Եգիպտոսից։

Ընդհանրապես պետք է նշել, որ սովետական կառավարությունը շատ մեծ և սիստեմատիկ օգնություն էր ցույց տալիս հայրենադարձներին։ Բացի յուրաքանչյուր հայրենադարձին հասանելիք միանվագ նպաստից, որը տրվում էր հայրենիք ոտք դնելուց անմիջապես հետո, հայրենադարձության կոմիտեն, տեղական սովետներն ու հիմնարկ-ձեռնարկությունները շարունակում էին սիստեմատիկ նյութական օգնություն ցույց տալ սովետական նոր քաղաքացիներին։

Հայրենադարձների նկատմամբ հոգատարության դրսևորման կոնկրետ օրինակ է ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի 1963 թ. փետրվարի 5-ի կարգադրությունը, որով պարտավորեցվում էին ՀՍՍՀ սոցապմինիստրությունը և Երևանի, Լենինականի, Կիրովականի, Հրազդանի քաղաքային ու Իջևանի շրջանային սովետների գործկոմները՝ մինչև փետրվարի 20-ը հաշվի առնել 1962 թվականին Եգիպտոսից, Իրանից և Կիպրոսից հայրենիք եկած պետական կենսաթոշակի իրավունք ունեցող բոլոր հայրենադարձներին և լուծել նրանց թոշակավորման հարցերը։

Նկատի ունենալով միջազգային իրադրության որոշ պատճառով արտասահմանյան մի շարք երկրներում լուրջ դժվարությունների առաջացումը հայրենադարձների թոշակավորման հետ կապված փաստաթղթերի ստացման ու օրինականացման գործում, ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը թույլատրում է հանրապետության սոցապի օրգաններին՝ վերոհիշյալ երկրներից 1962 թ. հայրենիք վերադարձած քաղաքացիներից բացառության կարգով ընդունելու ստաժի մասին չօրինականացված փաստաթղթեր, ինչպես նաև վկայությունների հիման վրա ո-

66 Տե՛ս նույն տեղում, ֆ. 362, ց. 10, գ. 27, թ. 28—29 և 59։



րոշել պահանջվող աշխատանքային ստաժը և սահմանված կարգով լուծել նրանց կենսաթոշակների հարցը[67]։

1963—1964 թթ. ընթացքում ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը հայրենադարձության կոմիտեին և Լենինականի, Կիրովականի, Հրազդանի, Ղափանի քաղսովետներին ու Իջևանի շրջսովետին լրացուցիչ հատկացրել է 56500 ռուբլի՝ կարիքավոր հայրենադարձներին դրամական օգնություն ցույց տալու համար, միաժամանակ նրանց տրամադրելով մահճակալներ, անկողնային պարագաներ և այլ գույք[68]։ Այդ կարգի օգնությունը շարունակվում էր նաև հետագայում, մինչև որ հայրենադարձ ընտանիքները կկարողանային սեփական աշխատանքի արդյունքներով գոհացում տալ իրենց բոլոր հոգսերին։

ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր հայրենադարձության հանձնաժողովը 1965 թ. հուլիսի 21-ի նիստում լսեց Լուսավանի և Հրազդանի քաղսովետների գործկոմների նախագահների հաղորդումները՝ հայրենադարձների բնակ-կենցաղային վիճակի և աշխատանքով ապահովման մասին։ Հանձնարարվեց հայրենադարձության կոմիտեին՝ մեկ ամիս հետո ստուգել ընդունված որոշման կատարման ընթացքը և վերացնել այդ գործում եղած թերությունները[69]։

Հայրենադարձներին օգնելու ուղղությամբ շատ լուրջ քայլ կատարվեց ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի 1965 թ. հուլիսի 7-ի որոշմամբ, որի նպատակն էր լրիվին ապահովել 1946—1962 թթ. ժամանակամիջոցում հայրենիք եկած դեռևս բնակարանային կարիք ունեցող բոլոր հայրենադարձներին։ Ինչպես արձանագրված է այդ որոշման մեջ, հանրապետության հիմնարկ-ձեռնարկություններում հայրենադարձներից բնակարանային պահանջով ստացված 2587 դիմումների ուսումնասիրությունից պարզվել է, որ դրանցից 595 ընտանիք իրոք հանդիսանում է սուր կարիքավոր, 951 ընտանիք կարիք ունի բնակարանային պայմանների բարելավման՝ հիմնականում ընտանիքի անդամների թվի աճի հետ կապված, իսկ մնացած մասը առայժմ ապրում է բնակարանային շատ թե քիչ տանելի պայմաններում։

67 Տե՛ս նույն տեղում, ֆ. 113, ց. 80, գ. 53, թ. 10։
68 Տե՛ս նույն տեղում, ֆ. 362, ց. 10, գ. 2, թ. 26—27, 41—42 և գ. 3, թ. 4—5։
69 Տե՛ս նույն տեղում, ֆ. 326, ց. 2, գ. 87, թ. 32։



18—1181

Բնակարանի կարիք ունեցող հայրենադարձ ընտանիքներին ապահովելու նպատակով Մինիստրների խորհուրդը ավելի քան 7000 քմ բնակտարածություն հատկացրեց Երքաղսովետի գործկոմին։ Հանձնարարվեց մինիստրություններին, գերատեսչություններին ու կազմակերպություններին՝ իրենց մոտ աշխատող հայրենադարձներին բնակարաններով ապահովել առաջին հերթին[70]։

Միաժամանակ շարունակվում էր հայրենադարձների նոր քարավանների ժամանումը, ուստի անհրաժեշտ էր նախորդ տարիներին ներգաղթածների կենցաղային-բնակարանային պայմանների բարելավմանը զուգընթաց մտածել նաև նոր եկողների մասին։ Ահա թե ինչու, 1966 թ. մարտի 18-ին, ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը որոշում կայացրեց սփյուռքից ժամանող հայրենադարձների ընդունման և տեղավորման հետ կապված հարցերի մասին։ Որոշման մեջ նշված է, որ Լենինականի, Կիրովականի, Աբովյանի քաղսովետների և Հոկտեմբերյանի, Թալինի, Էջմիածնի, Վեդու շրջսովետների գործկոմները, ինչպես նաև հայրենադարձության կոմիտեն զգալի աշխատանք են կատարել վերջին տարիներին հայրենիք ժամանողների ընդունումը նախապատրաստված կատարելու, բնակ-կենցաղային և աշխատանքային նորմալ պայմաններ ապահովելու ուղղությամբ[71]։ Մինիստրների խորհուրդը արձանագրեց, որ 1962 թվականից հետո եկած բոլոր հայրենադարձները ստացել են նոր բնակարաններ, խիստ կարիքավոր ընտանիքներին ցույց է տրվել նյութական օգնություն, հատկացվել է տնային կահույք (մահճակալներ, սեղաններ, աթոռներ), աշխատունակները հիմնականում ապահովված են ըստ մասնագիտության աշխատանքով և այլն։ Ձեռնարկություններում հետևողական աշխատանք է տարվում նրանց որակավորումը բարձրացնելու և վերաորակավորելու ուղղությամբ։ Հայրենադարձների դպրոցահասակ բոլոր երեխաները ընդգրկված են հանրակրթական դպրոցներում և այլն։

Մինիստրների խորհուրդը միաժամանակ նշեց, որ դեռևս անբավարար են լուծվում հայրենադարձների կենցաղային մի շարք հարցեր։ Բարեկարգված չեն հայրենադարձներով բնա-

70 Տե՛ս նույն տեղում, գ. 3, թ. 7—8։
71 Տե՛ս նույն տեղում, գ. 4, թ. 2—7։



կեցված թաղամասերը, փողոցներն ու բակերը Լենինական, Կիրովական քաղաքներում և Հոկտեմբերյանի, Էջմիածնի, Թալինի, Աշտարակի, Վեդու շրջանների մի շարք սովխոզների ավաններում։ Նշված վայրերում հայրենադարձներին տրամադրված բնակելի շենքերը երբեմն շահագործման են հանձնվում սանիտարատեխնիկական, էլեկտրամոնտաժային և այլ աշխատանքների շատ թերություններով։

ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը հանձնարարեց համապատասխան քաղսովետներին ու շրջսովետների գործկոմներին և շինարարության մինիստրությանը՝ մեկամսյա ժամկետում վերացնել բնակելի շենքերում եղած բոլոր թերավարտությունները, բարեկարգել հայրենադարձներով բնակեցված թաղամասերն ու փողոցները, շահագործման հանձնել կուլտուր-կենցաղային օբյեկտները, բարելավել կապի գործը, հայրենադարձների աշխատանքային ապահովման հարցերը, վարկեր տրամադրել սովխոզներում տեղավորված հայրենադարձներին՝ անասուններ ձեռք բերելու համար և այլն։ Խիստ կարիքավոր հայրենադարձներին նյութական օգնություն ցույց տալու և տնային օգտագործման իրերով ապահովելու համար, Մինիստրների խորհրդի ռեզերվային ֆոնդից բաց թողնվեց 35 հազար ռուբլի։

Հանձնարարվեց ՀՍՍՀ գյուղատնտեսության մինիստրությանը՝ մինչև 1966 թ. ապրիլի 1-ը գյուղական վայրերում ապրող հայրենադարձներին ապահովել տնամերձով, սերմերով և տնկանյութերով։ Լուսավորության մինիստրությանն առաջարկվեց հայրենադարձների բոլոր երեխաներին դպրոցներում ընդգրկելու համար բացել լրացուցիչ դասարաններ և միջոցներ ձեռնարկել հասակավոր բնակչության անգրագիտությունը վերացնելու ուղղությամբ։ Երկու տարով հայրենադարձները ազատվելու էին գիշերօթիկ դպրոցներում ընդգրկված երեխաների համար վարձ վճարելուց։

Առևտրի մինիստրությանը և Հայկոոպին հանձնարարվեց բարելավել մատակարարումը և առևտուրը հայրենադարձների բնակավայրերում։ Առողջապահության մինիստրությանն առաջարկվեց ավելի մեծ ուշադրություն դարձնել հայրենադարձների բուժսպասարկման գործի վրա։

Հայրենադարձների շրջանում աշխատանքները բարելավելու և ավելի օպերատիվ դարձնելու նպատակով հայրենադարձության կոմիտեին հանձնվում է ներգաղթածների կենցաղա-

յին և աշխատանքային տեղավորման հարցերով զբաղվող ավագ տեսուչի հինգ հաստիք՝ Արովյանի, Հոկտեմբերյանի, Թալինի, Էջմիածնի և Վեդու (այժմ՝ Արարատի) շրջաններում աշխատելու համար[72]։ Մինչ այդ մի շարք քաղսովետների գործկոմներում կոմիտեն ուներ բաժիններ։

1965 թ. վերջին ավարտվեց միութենական ինստանցիաների կողմից սահմանված սփյուռքահայերի մասսայական հայրենադարձության մասին 1961 թ. օգոստոսի 12-ի որոշման ժամկետը, ուստի հանրապետության կառավարության խնդրանքով 1966 թ. օգոստոսի 9-ին այդ կապակցությամբ ընդունվեց նոր որոշում։ Այնտեղ ասված էր. «Թույլատրել ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին՝ աշխատանք տանելու 1966—1970 թվականներին արտասահմանյան երկրներից հայերի ՍՍՀՄ հայրենադարձության ուղղությամբ։ Հայրենադարձությունն իրականացնել միայն ազգությամբ հայ օտարերկրյա քաղաքացիների անհատական ընտրության հիման վրա, հաշվի առնելով հայրենադարձություն կատարելիք երկրների քաղաքական իրադրությունը, ինչպես նաև հանրապետությունում նրանց աշխատանքի տեղավորման և բնակարանով ապահովման համապատասխան պայմանները»[73]։

Միաժամանակ սահմանվեց, որ 1966—1970 թթ. ընթացքում տարեկան պետք է հայրենադարձել 1000 մարդ։ ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին հանձնարարվեց բարելավել հայրենադարձվողների կոնտինգենտի ընտրությունը, որպես կանոն, թույլ չտալ առանց ծնողների կամ երեխաների ՍՍՀՄ գալը։ ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը միաժամանակ պարտավոր էր հայրենադարձվողների համար ժամանակին ապահովել բնակարաններ և աշխատատեղեր՝ հաշվի առնելով նրանց մասնագիտությունը։ Թույլատրվում էր ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին, ՍՍՀՄ արտգործմինիստրության հետ համաձայնեցրած, 1966—1970 թթ. արտասահմանյան համապատասխան երկրներն ուղարկել ներկայացուցիչներ՝ հայրենադարձությունը կազմակերպելու համար։ 1966—1970 թթ. հայրենիք վերադարձողների վրա տարածվելու էին այն բոլոր արտոնությունները, որոնք

[72] Տե՛ս նույն տեղում։

[73] Տե՛ս նույն տեղում, ֆ. 326, ց. 1, գ. 514, թ. 1—2։



սահմանված էին ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի 1961 թ. օգոստոսի 12-ի որոշմամբ[74]։

Անդրադառնալով սփյուռքահայերի հայրենադարձությանը, ՀԿԿ XXIV համագումարին տված Կենտկոմի հաշվետու զեկուցման մեջ ասված է. «Իրագործելով սփյուռքահայերի հայրենադարձությունը, Հայաստանի կոմկուսի Կենտկոմը և հանրապետության Մինիստրների խորհուրդը բոլոր միջոցները ձեռք են առնում, որպեսզի մեր նոր քաղաքացիներին ճիշտ տեղաբաշխեն հանրապետության քաղաքներում ու շրջաններում, նրանց համար ստեղծվեն աշխատանքային, բնակարանային ու կենցաղային նորմալ պայմաններ։ Այս խնդրի լուծման ուղղությամբ մեզ մեծ և անգնահատելի օգնություն են ցույց տալիս ՍՄԿԿ Կենտկոմը և սովետական կառավարությունը»[75]։

1966 թ. մայիսի 30-ին ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը և ՀԱՄԽ-ը համատեղ որոշում ընդունեցին հանրապետության 1966 թ. բնակարանային ֆոնդից այդ տարվա ներգաղթողների համար հայրենադարձության կոմիտեին հատկացնել 36500 քմ բնակտարածություն, որից Երևանում՝ 1000, Լենինականում՝ 6000, Կիրովականում՝ 3800, Լուսավանում՝ 3500, Արովյանում՝ 3500, Հրազդանում՝ 500, Սպիտակում՝ 200, Հոկտեմբերյանում՝ 600 և սովխոզներում՝ 15000 քմ[76]։

Սակայն մի շարք երկրներում, որոնցից նախատեսված էր կատարել հայերի զանգվածային հայրենադարձություն, անսպասելիորեն աննպաստ պայմաններ առաջացան։ Այդ էր պատճառը, որ 1966 թ. զանգվածային հայրենադարձություն իրականացվեց միայն Սիրիայից, ուր մեկնել էր ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի հայրենադարձության գծով ներկայացուցիչ[77]։

1966 թ. սփյուռքից հայրենիք ներգաղթեց ընդամենը 223 ընտանիք (1423 մարդ), որից խմբակային վիզայով ՍԱՀ-ից (Սիրիա)՝ 191 ընտանիք (1311 մարդ) և անհատական վիզաներով այլ երկրներից 32 ընտանիք (112 մարդ), այդ թվում՝ Լի-

[74] Տե՛ս նույն տեղում։

[75] ՀԿԿ Կենտկոմի հաշվետու զեկուցումը ՀԿԿ XXIV համագումարին, Երևան, 1966, էջ 71։

[76] Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 362, ց. 10, գ. 3, թ. 13—16։

[77] Տե՛ս նույն տեղում, ֆ. 326, ց. 1, գ. 389։

բանանից՝ 2 ընտանիք (7 մարդ), Իրանից՝ 16 ընտանիք (61 մարդ), Թուրքիայից՝ 6 ընտանիք (23 մարդ), Իրաքից՝ 3 ընտանիք (8 մարդ), ԵԱՀ-ից՝ 1 ընտանիք (3 մարդ), Քուվեյթից՝ 1 ընտանիք (3 մարդ), Ուրուգվայից՝ 1 ընտանիք (1 մարդ), Ֆրանսիայից՝ 1 ընտանիք (1 մարդ), Հարավսլավիայից՝ 1 ընտանիք (6 մարդ)։ 1966 թ. հայրենադարձների ընդունելության վրա ծախսվեց 268088 ռուբլի[78]։

1967 թ., կապված մի շարք հանգամանքների հետ, մասնավորապես արաբական երկրների դեմ Իսրայելի ագրեսիայի հետևանքով, սփյուռքահայերի խմբակային հայրենադարձություն տեղի չունեցավ։ Միայն անհատական վիզաներով 8 երկրներից հայրենիք եկավ 148 ընտանիք (734 մարդ), այդ թվում՝ 128 ընտանիք (679 մարդ) Իրանից, 8 ընտանիք (27 մարդ) Լիբանանից, 2 ընտանիք (4 մարդ) Իրաքից, 4 ընտանիք (10 մարդ) Թուրքիայից, 2 ընտանիք (4 մարդ) ԱՄՆ-ից, 1 ընտանիք (3 մարդ) Արգենտինայից, 2 ընտանիք (2 մարդ) Անգլիայից, 1 ընտանիք (1 մարդ) Ֆրանսիայից։ Նրանց ընդունման համար կատարված ծախսը կազմել է 71333 ռուբլի[79]։

Հայրենադարձության հանձնաժողովը 1967 թ. սեպտեմբերի 9-ի նիստում, որին մասնակցում էին նաև Լենինականի, Կիրովականի, Հրազդանի, Չարենցավանի և Աբովյանի քաղսովետների գործկոմների նախագահները, ինչպես և մի շարք մինիստրությունների ներկայացուցիչներ ու սովխոզների դիրեկտորներ, քննարկեց հայրենադարձության կոմիտեի նախագահ Ս. Գասպարյանի զեկուցումը «1967 թ. հայրենադարձների ընդունման և տեղավորման ընթացքի մասին»։ Նշվեց, որ չնայած 1967 թ. համեմատաբար ավելի փոքր է հայրենադարձների թիվը, քան անցյալ տարիներին, այնուամենայնիվ հայրենադարձության կոմիտեն և թվարկված քաղսովետների գործկոմները թուլացրել են աշխատանքը հայրենադարձների շրջանում, ինչպես ընդունման, այնպես էլ տեղավորման գործում։

Հանձնաժողովը հանձնարարեց վերը նշված քաղսովետների գործկոմների նախագահներին և սովխոզների դիրեկտորներին՝ ավելի մեծ ուշադրություն դարձնել հայրենադարձների ընդունման, տեղավորման, աշխատանքով ապահովման հարցե-

[78] Տե՛ս նույն տեղում, ֆ. 362, ց. 10, գ. 29, թ. 22—23։

[79] Տե՛ս նույն տեղում, գ. 31, թ. 12։



րի վրա և կարճ ժամանակամիջոցում վերացնել եղած թերությունները։ Առաջարկվեց հետևողական աշխատանք կատարել նաև նրանց երեխաներին մանկապարտեզներում և դպրոցներում ընդգրկելու ուղղությամբ[80]։

Երբ ավարտվեց սփյուռքահայերի զանգվածային հայրենադարձության նոր, երրորդ փուլի առաջին վեցամյակը, 1968 թ. հունվարին ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր արտասահմանից վերադարձող հայերի ընդունման և տեղավորման կոմիտեն ամփոփեց 1962—1967 թթ. ընթացքում կատարված հայրենադարձության արդյունքները, անելով մի շարք ընդհանրացումներ ու եզրակացություններ։ Կոմիտեն մի շարք գործնական առաջարկներ ներկայացրեց հայրենադարձների ընդունելությունն ու տեղավորումը առաջիկայում բարելավելու ուղղությամբ[81]։

Այդ մասին կոմիտեի զեկուցագրում նշվում էր, որ 1962—1967 թթ. ընթացքում սփյուռքահայ տարբեր գաղթօջախներից հայրենիք է վերադարձել ավելի քան 9 հազար մարդ, այդ թվում Սիրիայից՝ 4673, Իրանից՝ 2699, ԵԱՀ-ից՝ 708, Կիպրոսից՝ 500, այլ երկրներից՝ 426 մարդ[82]։ Հայրենադարձների հիմնական զանգվածը տեղավորվել էր հանրապետության հետևյալ քաղաքներում և շրջաններում. Երևանում՝ 544 մարդ, Լենինականում՝ 1910, Կիրովականում՝ 1640, Չարենցավանում՝ 1004, Աբովյանում՝ 820, Հրազդանում՝ 495, Իջևանում՝ 70, Ղափանում՝ 39, այլ քաղաքներում՝ 162, Էջմիածնի շրջանի սովխոզներում՝ 571, Հոկտեմբերյանի՝ 564, Վեդու՝ 425, Թալինի՝ 408, Աշտարակի՝ 354 մարդ[83]։

Ուշադրություն էր գրավում այն պարագան, որ գնալով նվազում էր ոչ միայն հայրենադարձվողների թիվը, այլև այն երկրների թիվը, որոնցից կատարվում էր ներգաղթը[84]։ Այդ հանգամանքը բացատրվում էր նրանով, որ մի շարք երկրների կառավարություններ (Լիբանան, Իրաք, Թուրքիա, մասնակիորեն նաև Սիրիա և Եգիպտոս) հայերի հայրենադարձությանը

[80] Տե՛ս նույն տեղում, ֆ. 326, ց. 2, գ. 116, թ. 47—50։

[81] Տե՛ս նույն տեղում, գ. 5, թ. 4—23։

[82] Տե՛ս նույն տեղում, թ. 5։

[83] Տե՛ս նույն տեղում, թ. 5—6։

[84] Տե՛ս նույն տեղում, գ. 121, թ. 1—5։

վերաբերվում էին կամ խիստ անբարյացակամորեն կամ էլ բնավ թույլ չէին տալիս այն։ Մյուս կողմից նկատվում էր, որ այդ երկրներում մեր դիվանագիտական ներկայացուցիչները սփյուռքահայերի հայրենադարձության հետ կապված հարցերի լուծման գործում ոչ միշտ էին ցուցաբերում անհրաժեշտ հետևողականություն և համառություն։ Ակնհայտ էր նաև հայրենադարձության նկատմամբ հայկական մի շարք գաղթօջախներում առաջադիմական, դեմոկրատական կազմակերպությունների գործունեության որոշ թուլացում։ Վերջապես մեր հանրապետության մի շարք գերատեսչություններ ու կազմակերպություններ, որոնք իրենց գործունեությամբ կապված էին սփյուռքի հետ, նույնպես բավարար ակտիվ աշխատանք չէին ծավալում հայրենադարձությանը նպաստելու ուղղությամբ։ Որոշ իմաստով նաև հենց այս հանգամանքներով պետք է բացատրել այն անցանկալի իրողությունը, որ Մերձավոր ու Միջին արևելքի մի շարք երկրներից հայերի մի մասը Սովետական Հայաստան գալու փոխարեն արտագաղթում էր դեպի Ավստրալիա, Կանադա, ԱՄՆ, Լատինական Ամերիկայի երկրներ և այլուր։

Հայրենադարձության ընթացքի վրա հաճախ բացասաբար էին ազդում նաև որոշ երկրներում անհատական մեկնումների ձևակերպումների հետ կապված դժվարությունները։ Մի շարք երկրներից անհատական կարգով ՍՍՀՄ մեկնելու համար յուրաքանչյուր ընտանիքի ձևակերպումը ձգձգվում էր մի քանի ամիս։ Նկատի ունենալով այն հանգամանքը, որ որոշ երկրներից զանգվածային հայրենադարձությունը տարբեր պատճառներով այժմ անհնարին էր դառնում, կոմիտեի կարծիքով անհրաժեշտ էր ավելի լայնորեն օգտագործել անհատական ձևով ներգաղթը, գտնելով այն դյուրացնելու կոնկրետ ուղիներ։ Այդ իմաստով կոմիտեն նպատակահարմար էր համարում նաև ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի հայրենադարձության գծով ներկայացուցիչների անպայման գործուղումը Իրան, Իրաք, Լիբանան, Սիրիա, ԵԱՀ և այլ երկրներ՝ տեղում հարցերը հանգամանորեն ուսումնասիրելու և ներգաղթի գործը ավելի ակտիվացնելու նպատակով։

Հայրենադարձության նախորդ փուլում ներգաղթողները տեղավորվում էին ամբողջ հանրապետությունում։ 1962 թվականից սկսած՝ հայրենադարձները հիմնականում տեղավորվում էին Լենինականում, Կիրովականում, Հրազդանում, Չարենցավա-



նում, Աբովյանում և Էջմիածնի, Հոկտեմբերյանի, Աշտարակի, Թալինի ու Արարատի շրջանների սովխոզներում։ Ժամանելով բնակության վայրը, հայրենադարձները ապահովվում էին սահմանված չափով բնակտարածությամբ և 2—3 օրվա ընթացքում՝ նաև աշխատանքով։ Սակայն, երբեմն, շինարարության ժամկետների խախտման հետևանքով, բնակարանային հարցում ծագում էին որոշ դժվարություններ։ Խիստ բարելավման կարիք ունեին շինարարական աշխատանքների որակը։ Այդ կարգի թերությունները առաջ էին բերում հայրենադարձների արդարացի դժգոհությունները։ Աշխատանքի տեղավորման գործում որոշ դժվարություններ էին առաջանում հատկապես դերձակներին, ավտովարորդներին և մի քանի այլ մասնագիտությունների տեր անձանց տեղավորելիս, ինչպես նաև թոշակավորման ու նպաստավորման ժամանակ՝ անհրաժեշտ փաստաթղթերի բացակայության պատճառով։

Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի սահմանած կարգի համաձայն յուրաքանչյուր հայրենադարձի տրվում էր միանվագ նպաստ՝ 30 ռուբլու չափով։ 1962—1967 թթ. եկած հայրենադարձներին տրվել էր 270180 ռուբլի ընդհանուր գումարով միանվագ նպաստ։ Բացի այդ, խիստ կարիքավորներին, որպես անվերադարձ օգնություն, տրվել էր 201450 ռուբլի[85]։ Հայրենադարձները երկու տարով ազատվում էին եկամտահարկից և անզավակության հարկից։ Չնայած որ դա նույնպես կարևոր օժանդակություն էր նրանց համար, այնուամենայնիվ, անհրաժեշտություն էր զգացվում հայրենադարձների համար սահմանել նոր արտոնություններ։ Դա վերաբերում էր հատկապես այն բազմանդամ՝ 7—10 հոգանոց ընտանիքներին, որոնցում աշխատում էր միայն ընտանիքի գլուխը։ Որպես կանոն, խիստ կարիքավոր էին հատկապես Իրանից և Սիրիայից ներգաղթած շատ ընտանիքներ։ Նրանց եկամտի չափը, հատկապես սկզբնական շրջանում, երբ պահանջվում էր ոմանց վերաորակավորում կամ նոր մասնագիտության ձեռք բերում, համեմատաբար մեծ չէր և, բնականաբար, չէր բավարարում։ Հատկապես այդ պատճառով երբեմն հայրենադարձները հրաժարվում էին իրենց երեխաներին ուղարկել մանկական հիմնարկներ կամ գիշերօթիկ դպրոցներ։ Որոշակի դժվարություններ էին առաջանում

85 Տե՛ս նույն տեղում, ֆ. 362, ց. 10, գ. 5, թ. 4—23։

նաև կոմունալ ծախսերի վճարման գործում և մի շարք այլ հարցերում։

Պետք է նշել, որ արտասահմանից եկած այն ընտանիքների համար, որոնք տեղավորվում էին հանրապետության սովխոզներում, ծագում էին աշխատանքի և կյանքի յուրահատուկ, անսովոր պայմաններ։ Այնտեղ կարևոր նշանակություն էր ձեռք բերում գյուղացիների համար տնամերձ հողամասերի ստացման ու օգտագործման, օժանդակ տնտեսությունների ստեղծման խնդիրը։ Սակայն այդ կարևոր հարցը շատ սովխոզներում անբավարար կամ էլ դանդաղ էր լուծվում։ Բանը նրանումն էր, որ սովխոզային ավաններում, որպես կանոն, նույնպես բազմահարկ տներ էին կառուցվում և նրանցում, հատկապես վերին հարկերում տեղավորված տնտեսությունները, դրանից առաջացող անհարմարությունների հետևանքով, զրկվում էին հողամասի հետ կապվելու, անասուններ և տնային թռչուններ պահելու հնարավորությունից։ Երբեմն նրանց հողամասեր էին հատկացվում տնից մի քանի կիլոմետր հեռավորության վրա, որը նույնպես որոշակի անհարմարություններ էր առաջ բերում։ Այդ էր պատճառը, որ մի շարք սովխոզներում հայրենադարձներից ոմանք խուսափում էին տնամերձ հողամասեր ստանալուց (օրինակ, էջմիածնի շրջանի Այգր լճի (այժմ՝ Ակնա լճի) և Աշտարակի շրջանի № 37 սովխոզներում)։ Կարևոր հանգամանք էր նաև սովխոզային ավաններում տեղավորված հայրենադարձների մատակարարումը պարենային և արդյունաբերական առաջին անհրաժեշտության ապրանքներով, մինչդեռ այդ գործում ևս նկատվում էին էական թերություններ։

Հայրենադարձների հիմնական զանգվածը տեղավորվում էր Կիրովականում, Լենինականում, Հրազդանում, Չարենցավանում և Աբովյանում։ Դա պայմանավորված էր նրանով, որ այդ քաղաքները, լինելով արդյունաբերական խոշոր կենտրոններ, հնարավորություն էին ընձեռում հաջողությամբ լուծել հայրենադարձներին աշխատանքով ապահովելու խնդիրը։ Սակայն համեմատաբար շոգ և ցածրադիր երկրներից (Իրան, Սիրիա, Եգիպտոս, Կիպրոս և այլն) եկող հայրենադարձների համար, կլիմայական պայմանների տեսակետից, այդ քաղաքներից մի քանիսն ունեին որոշակի անհարմարություններ։ Հատկապես այդ պատճառաբանությամբ հայրենադարձության կոմիտեն շատ դիմումներ էր ստանում ներգաղթածներից՝ իրենց այլ, ավելի



տաք կամ ցածրադիր շրջաններ փոխադրելու խնդրանքով։ Շատերը վկայակոչում էին զանազան հիվանդություններ, ներկայացնում բժշկական փաստաթղթեր՝ աշխատելով հիմնավորել իրենց դիմումները։ Հայրենադարձներին սկզբնապես նշանակված մեկ բնակավայրից մյուսը փոխադրելու հարցերը ծագում էին նաև այլ պատճառներով՝ բարեկամական կապերի, երբեմն նաև արտադրության մեջ մասնագետներին առավել նպատակահարմար օգտագործելու նկատառումներով և այլն։

1962—1967 թվականների ընթացքում կոմիտեն հարկադրված է եղել կատարել 295 ընտանիքի (1170 մարդ) տեղափոխություն, որը, անկասկած, լրացուցիչ հոգսեր է պատճառել նրան։ Նշանակված բնակավայրերից այլ տեղ փոխադրվելու մտայնության առաջացման գործում որոշակի նշանակություն ուներ նաև այն իրողությունը, որ հայրենադարձների մի մասը, եկած լինելով խոշոր քաղաքներից, ինչպես ասենք՝ Թեհրանից կամ Կահիրեից, և արդեն վարժված լինելով մեծ կենտրոններին հատուկ կյանքին, ձգտում էր անպայման հաստատվել Երևանում։ Հասկանալի է, որ կոմիտեն չէր կարող բավարարել այդ կարգի բոլոր խնդրանքները, ինչը և առաջ էր բերում որոշակի դժգոհություններ։ Նման փաստերից խուսափելու նպատակով կոմիտեն առաջարկում էր վերադաս օրգաններին՝ առաջիկայում պայմաններ ստեղծել ավելի մեծ թվով հայրենադարձների էջմիածնում և Արարատյան դաշտի ուրիշ վայրերում, ինչպես նաև մայրաքաղաքին մոտիկ Աբովյանում տեղավորելու համար[86]։

Նշված ժամանակաշրջանում կոմիտեի կողմից մեծ աշխատանք էր կատարվել նաև մինչև 1962 թվականը ներգաղթած և Երևանում տեղավորված հայրենադարձ ընտանիքների բնակարանային պայմանների բարելավման ուղղությամբ։ Կոմիտեի կողմից ուսումնասիրվել էր շուրջ 2800 հայրենադարձ ընտանիքների բնակարանային վիճակը և դրանցից 777-ի գործերը ներկայացվել էին Երքաղսովետի գործկոմ՝ նրանց բնակարաններով արտահերթ ապահովելու համար։ Մինչև 1962 թվականը եկած հայրենադարձ ընտանիքների բավարարման համար 1965—1967 թթ. ընթացքում ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի կողմից Երքաղսովետին տրամադրվել էր 28 հազար քմ բնակելի տարածություն։ ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի 1964 թ. մարտին

86 Տե՛ս նույն տեղում, թ. 1—3։

ընդունած որոշման համաձայն Հանրապետության այլ քաղաքներում և ավաններում բնակվող հայրենադարձներին թույլատրվում էր ցանկության դեպքում բնակկոոպերատիվի անդամ դառնալ Երևանում։

Կուսակցական, սովետական և հասարակական կազմակերպությունների կողմից շատ բան էր արվում Հանրապետության նոր քաղաքացիներին հասարակական-քաղաքական ակտիվ գործունեության մեջ ներգրավելու ուղղությամբ։ Հայրենադարձներից ոմանք ընտրվել էին ՍՍՀՄ և ՀՍՍՀ գերագույն սովետների, շատերը՝ տեղական սովետների դեպուտատներ, դարձել արտադրության առաջավորներ, գիտնականներ, մանկավարժներ, արվեստագետներ, մշակույթի տարբեր բնագավառների ճանաչված դեմքեր։

Ինչ խոսք, որ կապիտալիստական տարբեր երկրներից միանգամից սոցիալիստական հասարակարգ եկած նոր քաղաքացիների շրջանում պահանջվում էր ծավալել բազմակողմանի աշխատանք, ցույց տալ ամեն տեսակ հոգատարություն ու աջակցություն, որպեսզի նրանք կարողանային որքան հնարավոր է արագ հաղթահարել այն դժվարությունները, որոնք անխուսափելիորեն առաջանում են ընդհանրապես մի երկրից մեկ ուրիշը մշտական բնակության տեղափոխվելիս։ Նաև դրանով էր բացատրվում այն փաստը, որ միայն 1966—1967 թթ. ընթացքում հայրենադարձության կոմիտեն ներգաղթածներից ստացել էր տարբեր խնդրանքներով մոտ 3 հազար դիմում[87]։

Հայրենադարձության կոմիտեն բաժիններ ուներ Երևանի քաղաքային ու շրջանային սովետներում, Լենինականում և Կիրովականում, ավագ տեսուչներ Հոկտեմբերյան-Թալինում, Էջմիածին-Աշտարակում, Չարենցավանում, Հրազդանում, Աբովյան-Վեդիում և Ալավերդում, որոնց միջոցով տեղերում իրականացնում էր աշխատանքը հայրենադարձների շրջանում։ Նրանց միջոցով և տեղական կուսակցական ու սովետական օրգանների օգնությամբ կոմիտեն օպերատիվ կերպով լուծում էր հայրենադարձների կենցաղային, կուլտ-մասսայական, թոշակավորման, երեխաներին մանկական ու դպրոցական հիմնարկներում տեղավորելու, հողամասեր հատկացնելու, նյութական օգնություն կազմակերպելու և բազմապիսի այլ հարցեր։

87 Տե՛ս նույն տեղում, գ. 24, թ. 1—3։



Կոմիտեի և տեղական կուսակցական ու սովետական օրգանների աշխատանքը հայրենադարձների հետ չէր ավարտվում նրանց Հանրապետությունում ընդունելով, բնակարան ու աշխատանք հատկացնելով։ Նրանց հետ իսկական աշխատանքը փաստորեն սկսվում էր այդ ամենից հետո։ Դրանից հետո էր, որ կոմիտեն և մյուս կազմակերպությունները հայրենադարձների շրջանում տանում էին քաղդաստիարակչական և կուլտ-մասսայական աշխատանքներ, կազմակերպում էին գրողների, կոմպոզիտորների, նկարիչների, գիտնականների ու արտադրության առաջավորների հետ հանդիպումներ և այլ միջոցառումներ։ Հասարակական-քաղաքական և գիտահանրամատչելի թեմաներով հայրենադարձների համար կազմակերպվում էին զեկուցումներ, զրույցներ, դասախոսություններ, էքսկուրսիաներ՝ դեպի Հանրապետության տեսարժան վայրերը, արդյունաբերական ձեռնարկությունները և այլուր։

Օրինակ, տեղական կուսակցական և սովետական օրգանների հետ համատեղ կոմիտեն հայրենադարձների հետ հանդիպման երեկոներ է կազմակերպել Կիրովականում, Հոկտեմբերյանի, Թալինի և Վեդու շրջաններում, որոնց մասնակցել են նաև գիտնականներ, գրողներ, արվեստագետներ։ Այդ հավաքներում խրախուսվել են իրենց լավ աշխատանքով աչքի ընկած հայրենադարձները։ Վերոհիշյալ շրջաններում և Կիրովական քաղաքում նշվել է 235 հայրենադարձների հայրենանվեր աշխատանքը, որի համար նրանք արժանացել են տեղական սովետների պատվոգրերի, ստացել դրամական պարգևներ, թանկարժեք նվերներ, առողջարաններ կամ Մոսկվա մեկնելու անվճար ուղեգրեր[88]։

Հանրապետության նոր քաղաքացիներին եղբայրական Վրաստանի և Ադրբեջանի տնտեսության ու մշակույթի հետ ծանոթացնելու նպատակով հայրենադարձության կոմիտեն 1968 թ. հոկտեմբերին կազմակերպեց Երևան—Թբիլիսի—Ռուսթավի—Սուխումի—Երևան և Երևան—Բաքու—Սումգաիթ—Երևան ուղերթերով «Բարեկամության» տուրիստական գնացքներ[89]։

Պետք է նշել, որ հայրենադարձների շրջանում քաղաքական, դաստիարակչական և կուլտ-մասսայական աշխատանք-

88 Տե՛ս նույն տեղում, գ. 6, թ. 67 և գ. 10, թ. 1—2։
89 Տե՛ս նույն տեղում, ֆ. 326, ց. 2, գ. 121, թ. 40։

*ները տարվում էին կյանքի, առօրյա գործնական խնդիրների հետ սերտորեն շաղկապված, նրանց կողմից բարձրացվող և լուծում պահանջող հարցերի հետ առնչված։ Օրինակ, 1967 թ. Զարենցավանում և Իջևանում հայրենադարձների հետ անցկացված զրույցներից հետո, կոմիտեի ներկայացուցիչները, շրջսովետների գործկոմների ու կուսշրջկոմների ղեկավարների հետ միասին կազմակերպել են հայրենադարձների կոլեկտիվ ընդունելություն։ Այստեղ, լսելով հայրենադարձներին հուզող հարցերի մասին, համապատասխան հիմնարկ-ձեռնարկությունների միջոցով, հենց տեղում ընթացք են ստացել բնակարանով ապահովման, աշխատանքի տեղավորման, աշխատավարձի կարգավորման, թոշակավորման և այլ հարցեր[90]։*

*ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի հանձնարարությամբ հայրենադարձության կոմիտեն և գյուղատնտեսության մինիստրությունը 1968 թ. գարնանը ուսումնասիրեցին Թալինի շրջանի Արագածի, Արտենիի ու Քարակերտի և Հոկտեմբերյանի շրջանի Մայիսյան ու Մյասնիկյանի անվան սովխոզներում 1965—1966 թթ. բնակություն հաստատած հայրենադարձների նյութական-կենցաղային պայմանները։ Այդ ուսումնասիրությունների արդյունքները ամփոփվեցին ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին ներկայացված զեկուցագրում, որտեղ նշվում էր, որ հայրենադարձ ընտանիքների որոշ մասը գտնվում է նյութական ոչ բարվոք վիճակում։ Դրա հիմնական պատճառներից մեկն այն էր, որ այդ ընտանիքները բազմանդամ էին, մեծ մասամբ անչափահաս երեխաներ ունեցող, իսկ աշխատունակները մեկ-երկու հոգի, որոնց եկամուտները չէին կարող լիովին բավարարել նրանց կարիքները։ Այդպիսի ընտանիքների թիվը նշված սովխոզներում 23 էր, որոնց ցույց էր տրվել նյութական-դրամական օգնություն։ Թեպետ բոլորին հատկացվել էին տնամերձ հողամասեր, սակայն շատերը չէին մշակում, պատճառաբանելով, թե դրանք հեռու են բնակավայրերից, իրենք ապրում են բազմահարկ շենքերում, ուստի հարմար չեն իրենց համար և այլն։ Այդ ընտանիքները չունեին նաև անասուններ։ Ուսումնասիրության ընթացքում խիստ կարիքավորներին ցույց տրվեց 1200 ռուբլի դրամական օգնություն։ Արտենիում 20 ընտանիքների հատկացվեցին երկհարկանի տներ՝ կից հողամասերով։ Քարակեր-*

[90] Տե՛ս նույն տեղում։



*տի սովխոզում 24 հայրենադարձ ընտանիքների համար հանձնարարվեց կառուցել նույնպես երկհարկանի առանձնատներ, կից հողամասերով։ Հաշվի առնվեցին նաև անասուն պահելու ցանկություն հայտնած տնտեսությունները՝ նրանց անասուններ հատկացնելու համար[91]։*

*Հայրենադարձության հանձնաժողովը 1968 թ. մայիսի 13-ի իր նիստում լսեց հայրենադարձության կոմիտեի նախագահի հաղորդումը այդ միջոցառումների կատարման ընթացքի մասին և հավանություն տվեց դրանց[92]:*

*ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը 1968 թ. հունիսի 5-ին հատուկ կարգադրություն արեց 1964—1966 թթ. հայրենիք վերադարձած և Էջմիածնի, Հոկտեմբերյանի, Թալինի, Աշտարակի շրջանների սովխոզներում բնակվող հայրենադարձներին լրացուցիչ օգնություն ցույց տալու մասին։ Այդ կարգադրությամբ հանձնարարվեց ՀՍՍՀ գյուղատնտեսության և գյուղական շինարարության մինիստրություններին՝ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել 1968 թ. շահագործման հանձնվելիք երկհարկանի տների ժամանակին կառուցման համար և դրանք հատկացնել 1964—1966 թթ. հայրենիք ժամանած հայրենադարձներին։ Առաջարկվեց նաև արագացնել ջրմուղի երկու գծերի շահագործման հանձնումը Հոկտեմբերյանի և Թալինի շրջաններում՝ հայրենադարձների ավանները ջրով ապահովելու համար։ Թույլատրվեց հայրենադարձության կոմիտեին՝ 1968 թ. Թալինի, Էջմիածնի, Հոկտեմբերյանի, Արարատի և Աշտարակի շրջգործկոմներին հատկացնել 45 հազար ռուբլի՝ կարիքավոր հայրենադարձ տնտեսություններին օգնելու անասուններ ձեռք բերելու համար։ Առաջարկվեց իրականացնել մի շարք ուրիշ միջոցառումներ՝ հայրենադարձներին թոշակավորելու, վառելիքով ապահովելու և այլ կարգի օգնություն կազմակերպելու ուղղությամբ[93]:*

*1968 թ. դեկտեմբերի 12-ին ՀԿԿ Կենտկոմը և ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը համատեղ ընդարձակ որոշում կայացրին հայրենադարձների ընդունումն ու տեղավորումը բարելա-*

[91] Տե՛ս նույն տեղում, ֆ. 362, ց. 10, գ. 8, թ. 9—11։

[92] Տե՛ս նույն տեղում, ֆ. 326, ց. 2, գ. 121, թ. 13—18։

[93] Տե՛ս նույն տեղում, ֆ. 362, ց. 10, գ. 10, թ. 1—3։

վելու և նրանց շրջանում ավելի նպատակասլաց աշխատանքներ տանելու վերաբերյալ[94]։

1969 թ. գարնանը ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի կողմից առանձնացված հատուկ բրիգադները ուսումնասիրեցին հայրենադարձների ընդունման, տեղավորման և աշխատանքով ապահովման վիճակը հանրապետությունում։ Այդ բրիգադները մեծ աշխատանք կատարեցին ոչ միայն տեղերում իրական պատկերը պարզելու իմաստով, այլև գործնական օգնություն ցույց տվեցին գոյություն ունեցող թերությունների վերացման ուղղությամբ։ Հայրենադարձության հանձնաժողովը 1969 թ. մայիսի 14-ի նիստում, շահագրգռված կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ, քննարկեց այդ բրիգադների կատարած ուսումնասիրությունների արդյունքները և հանձնարարեց համապատասխան գործկոմների նախագահներին ու սովխոզների դիրեկտորներին՝ կարճ ժամկետում ավարտել հայրենադարձների համար կառուցվող շենքերի շինարարությունը և լուծել նրանց աշխատանքի տեղավորման հարցերը[95]։ ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահությունը հավանություն տվեց հայրենադարձներին նյութական օգնություն կազմակերպելու և նրանց կուլտուր-կենցաղային սպասարկումը բարելավելու վերաբերյալ հանձնաժողովի մշակած ծրագրին և միջոցներ հատկացրեց դրա իրականացման համար[96]։

Ինչպես վկայում են հայրենադարձության կոմիտեի Լենինականի, Կիրովականի և Հոկտեմբերյանի լիազորների 1969 թ. կազմած զեկուցագրերը՝ հայրենադարձների շրջանում տարվող աշխատանքների մասին, տեղերում սովետական և տնտեսական կազմակերպությունները լրացուցիչ մի շարք արտոնություններ էին սահմանել սովետական նոր քաղաքացիների համար[97]։ Այսպես, Կիրովականի քաղսովետի գործկոմի որոշմամբ 1968—69 թթ. հայրենիք ժամանածները ազատվել էին կոմունալ բոլոր վարձերից՝ բնակարանի, ջրի, գազի, ջեռուցման և այլն։ Որոշ հիմնարկ-ձեռնարկություններ իրենց մոտ աշխատող հայրենադարձներին հատկացրել էին կահույք և այլ իրեր[98]։

---

[94] Տե՛ս նույն տեղում, գ. 13, թ. 2։

[95] Տե՛ս նույն տեղում, ֆ. 326, ց. 2, գ. 131, թ. 13—15։

[96] Տե՛ս նույն տեղում, ց. 1. գ. 380։

[97] Տե՛ս նույն տեղում, ֆ. 362, ց. 10, գ. 13։

[98] Տե՛ս նույն տեղում, գ. 13, թ. 7—8։



1964—1969 թթ. ընթացքում Հոկտեմբերյանի շրջանի յոթ սովխոզներում բնակություն հաստատած 150 հայրենադարձ ընտանիքների (862 մարդ) համար ձեռնարկությունների ադմինիստրացիայի օգնությամբ գնվել էին մանր և խոշոր եղջերավոր անասուններ[99]։

1968 թ. մայիսին հայրենադարձության կոմիտեի հանձնաժողովի կողմից ստուգվեցին նաև Լենինականում բնակվող հայրենադարձների բնակ-կենցաղային և աշխատանքային պայմանները։ Ստուգող հանձնաժողովը պարզեց, որ հայրենադարձների բնակարանային հարցերը համեմատաբար լավ են լուծված, սակայն աշխատանքով ապահովելու գործում, մասնավորապես վարորդների աշխատանքի տեղավորման գործում, կան որոշ դժվարություններ։

ՀԿԿ Լենինականի քաղկոմը 1966—1968 թթ. ընթացքում երկու անգամ անդրադարձել էր հայրենադարձների հարցին, կազմել էր հատուկ հանձնաժողով՝ նրանց շրջանում տարվող աշխատանքները գլխավորելու համար։ Սակայն այդ հանձնաժողովը միայն մեկ նիստ էր ունեցել և փաստորեն ոչ մի ծրագրված աշխատանք չէր կատարել։ Լենինականի քաղսովետի գործկոմը երեք անգամ քննել էր հայրենադարձների ընդունման և տեղավորման հարցերը, բացահայտել այդ գործում եղած թերությունները և համապատասխան կազմակերպություններին տվել կոնկրետ հանձնարարություններ ու առաջադրանքներ։

Ստուգող հանձնաժողովը լուրջ թերություններ բացահայտեց հատկապես Լենշինտրեստի կողմից հայրենադարձների համար Անտառավան և Նոր Ափան թաղամասերում կառուցվող շենքերում, որոնք անորակ էին, շենքերի բակերն ու ճանապարհները անբարեկարգ և այլն։

Հայրենադարձների կուլտսպասարկումը օրինակելիորեն էր կազմակերպված հատկապես Անտառավանի կուլտուրայի տան Գրիգոր Զոհրապի անվան գրադարանում։ Այստեղ հաճախակի կազմակերպվում էին դասախոսություններ, զեկուցումներ, զրույցներ, հարց ու պատասխանի երեկոներ, գրքերի քննարկումներ, հետաքրքիր հանդիպումներ և այլն։

Դպրոցական երեխաների մեծ մասին տրվել էր հագուստ, 1—4-րդ դասարանների բոլոր աշակերտներին՝ ձրի սնունդ,

---

[99] Տե՛ս նույն տեղում, գ. 10, թ. 1—2։

դասագրքեր և գրենական պիտույքներ։ Լենքաղսովետի գործկոմի 1966 թ. ապրիլի 22-ի որոշմամբ գիշերօթիկ դպրոցներում սովորող հայրենադարձ երեխաները երկու տարով ազատվել էին ուսման վարձից։

Հանձնաժողովը միաժամանակ արձանագրեց, որ Լենքաղսովետի գործկոմը դրամական միջոցների մեծ մասը տվել է որպես միանվագ օգնություն և չի ապահովել հայրենադարձների համար մահճակալներ, սեղաններ, աթոռներ և այլ տեսակի տնային գույք ու կահույք գնելու առաջադրանքների կատարումը։ Օրինակ, 1967 թ. հայրենադարձության կոմիտեի կողմից Լենինականին հատկացված 8600 ռուբլուց 5757 ռուբլին բաշխվել էր որպես օգնություն[100]։

1969 թ. հունիսի 17-ին հայրենադարձության հանձնաժողովը քննարկեց հայրենադարձների բնակարանային ապահովվածության հարցը և արձանագրեց, որ այդ գործում դեռևս գոյություն ունեն որոշակի թերություններ։ Այսպես, Աբովյան քաղաքում բնակարանով դեռևս ապահովված չէին 36 հայրենադարձ ընտանիքներ, իսկ 34-ը բավարարված էին ժամանակավորապես։ Այդ 70 ընտանիքներին բնակարանով ապահովելու համար անհրաժեշտ էր 3020 քմ բնակտարածություն։ Աբովյանի քաղսովետի հայտարարության համաձայն 36 ընտանիքի բավարարման հարցը պետք է լուծվեր մեկ շաբաթվա, իսկ մնացած 34-ինը՝ երկու ամսվա ընթացքում։ Լենինականում բոլոր հայրենադարձները ստացել էին բնակարաններ, սակայն 17 ընտանիքներ դեռևս բավարարված չէին իրենց հասանելիք նորմայի չափով, որը պետք է կատարվեր կարճ ժամանակամիջոցում։ Կիրովականում 17 ընտանիքներ տեղավորված էին ժամանակավոր բնակարաններում, իսկ 3-ը՝ ազգականների մոտ։ Ջարենցավանում 5 ընտանիքներ տեղավորված էին ժամանակավոր բնակարաններում, իսկ 18-ը՝ ազգականների մոտ։ Հրազդանում 27 ընտանիքներ նույնպես տեղավորվել էին ժամանակավորապես, իսկ 9-ը՝ ազգականների մոտ։ Աշտարակում դեռևս բնակարան չէր հատկացված 5 ընտանիքի։ Հայրենադարձության հանձնաժողովը առաջարկեց նշված քաղսովետների գործկոմներին՝ կարճ ժամկետներում հայրենադարձ ընտանիքներին ապահովել համապատասխան բնակտարածու-

[100] Տե՛ս նույն տեղում, գ. 9, թ. 1—9։



թյամբ և հուլիսի սկզբին անդրադառնալ այդ հանձնարարության կատարման ընթացքին[101]։

1969 թ. մայիսի 23-ին ՀԿԿ Կենտկոմի քարտուղարությունը նույնպես անդրադարձավ արտասահմանից վերադարձող հայերի ընդունման, տեղավորման և աշխատանքով ապահովման հարցերին և այդ մասին ընդունեց կոնկրետ որոշում[102]։

1969 թ. սեպտեմբերի 18-ին հայրենադարձության կառավարական հանձնաժողովը լսեց հայրենադարձության կոմիտեի հաղորդումը ՀԿԿ Կենտկոմի քարտուղարության վերոհիշյալ որոշման կատարման ընթացքի մասին։ Հանձնաժողովը արձանագրեց, որ Լենքաղսովետը դեռևս չի կատարել 25 հայրենադարձ ընտանիքի տեղավորման վերաբերյալ ՀԿԿ Կենտկոմի քարտուղարության հանձնարարությունը։ Որոշ քաղսովետներ և շրջսովետներ նույնպես թերացել էին հայրենադարձների համար նախատեսված բնակելի շենքերը ժամանակին շահագործման հանձնելու գործում։ Հանձնաժողովը կոնկրետ հանձնարարություններ տվեց հայրենադարձության կոմիտեին ու Լենինականի, Աբովյանի և այլ քաղսովետներին՝ շուտափույթ կերպով հայրենադարձներին բնակարաններով ապահովելու վերաբերյալ[103]։

1970 թ. փետրվարի 25-ին հայրենադարձության հանձնաժողովը լսեց հայրենադարձության կոմիտեի նախագահի հաշվետվությունը՝ 1969 թ. ընթացքում և 1970 թ. հունվարին ժամանած հայրենադարձների ընդունման, տեղավորման և աշխատանքով ապահովման մասին։

Պարզվեց, որ դեռևս 205 հայրենադարձ ընտանիքներ ապահովված չեն բնակարանով, այդ թվում Լենինականում՝ 70, Ջարենցավանում՝ 42, Հրազդանում՝ 34, Արարատում՝ 16, Էջմիածնում՝ 10, Երևանում՝ 5, Արտաշատում՝ 3 և Աշտարակում՝ 2 ընտանիք։ 75 ընտանիք ժամանակավորապես ապրում էր ազգականների մոտ, այդ թվում՝ Լենինականում՝ 27, Կիրովականում՝ 7, Հրազդանում՝ 17, Ջարենցավանում՝ 14, Էջմիածնում՝ 12, Երևանում՝ 2 ընտանիք։ Բացի Կիրովականից, վերը նշված մյուս քաղսովետները 1969 թ. հատկացվելիք բնակ-

[101] Տե՛ս նույն տեղում, ֆ. 326, ց. 2, գ. 131, թ. 21—22։
[102] Տե՛ս նույն տեղում, թ. 23—29։
[103] Տե՛ս նույն տեղում, թ. 39—48։

ֆոնդի հաշվից հայրենադարձության կոմիտեին պարտք էին մնացել 5620 քմ բնակտարածություն[104]։

Միաժամանակ արձանագրվեց, որ մի շարք տեղերում դեռևս ոչ բոլոր հայրենադարձներն են տեղավորված աշխատանքի։ Հանձնաժողովը հանձնարարեց Լենինականի, Հոկտեմբերյանի, Դիլիջանի, Ցարենցավանի, Իջևանի, Ղափանի, Արարատի քաղսովետների գործկոմներին՝ 10-օրյա ժամկետում մարել իրենց պարտքերը հայրենադարձության կոմիտեին բնակֆոնդ առանձնացնելու գծով և համապատասխան աշխատանքով ապահովել բոլոր հայրենադարձներին[105]։

Արտասահմանից հայրենիք եկածների մեջ զգալի թիվ էին կազմում անգրագետներն ու կիսագրագետները[106]։ Ավելին. Սիրիայից 1965 թ. ներգաղթածների մեծ մասը (հատկապես Ղամըշլիի շրջանից եկածները), ինչպես նաև Թուրքիայից ժամանածների որոշ մասը նույնիսկ հայերեն խոսել չգիտեր։ Հայրենադարձության կոմիտեն, ժողովրդական կրթության օրգանները տեղերում կազմակերպում էին հատուկ խմբակներ մեծահասակ հայրենադարձների անգրագիտությունն ու կիսագրագիտությունը վերացնելու համար։ Հասկանալի է, որ դա նույնպես հոկայական ջանքեր ու միջոցներ պահանջող գործ էր։

Հայրենադարձների նյութական դրության և նրանց շրջանում տարվող աշխատանքների հետագա բարելավման նպատակով կոմիտեն հանրապետության ղեկավար օրգաններին առաջարկում էր ավելացնել յուրաքանչյուր հայրենադարձին տրվող 30 ռուբլի միանվագ նպաստի գումարը՝ այն հասցնելով 50 ռուբլու։ Այնուհետև առաջարկվում էր հայրենիքում գտնվելու առաջին տարվա ընթացքում հայրենադարձներից չգանձել կոմունալ ծախսերը, նրանց հիվանդության դեպքում անաշխատունակության թերթիկներով վճարել աշխատավարձի ոչ թե 50 %-ի, այլ մինիմում 80 %-ի չափով, նրանց երեխա-

———

104 Տե՛ս նույն տեղում, գ. 143, թ. 4—9։

105 Տե՛ս նույն տեղում։

106 Տե՛ս ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր արտասահմանից վերադարձող հայերի ընդունման և տեղավորման կոմիտեի ընթացիկ արխիվ, «Տեղեկություններ 1962—1982 թթ. կատարված հայրենադարձության մասին» գործը։



ներին մանկական հիմնարկներում և գիշերօթիկ դպրոցներում ընդգրկել անվճար կամ զեղչված վճարով։

Ուշադրվել էր նաև գյուղական վայրերում տեղավորվող հայրենադարձների համար 1—2 հարկանի տներ կառուցելու մասին առաջարկը, որի շնորհիվ, անշուշտ, նպաստավոր պայմաններ կստեղծվեին անամերձ օժանդակ տնտեսություններ կազմակերպելու համար։ Կոմիտեն նպատակահարմար էր գտնում հետագայում հայրենիք ներգաղթողներին տեղավորել հիմնականում Արարատյան դաշտի բնակավայրերում և Արովհյան քաղաքում[107]։ Այդ առաջարկների մեծ մասը ամբողջովին կամ մասամբ հավանության արժանացավ վերադաս օրգանների կողմից և դրանց կենսագործումը դրական նշանակություն ունեցավ հայրենադարձության հետագա ընթացքի վրա։

ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր արտասահմանից վերադարձող հայերի ընդունման և տեղավորման կոմիտեն, օգտագործելով անցած տարիների ընթացքում կուտակած իր փորձը, շարունակեց ավելի կազմակերպված ձևով իրականացնել սփյուռքահայերի հայրենադարձությունը։ Այսպես, 1968 թվականին անհատական վիզաներով հայրենիք եկավ 482 ընտանիք (2350 մարդ)։ Հայրենադարձների մեծ մասը՝ 452 ընտանիք (2254 մարդ) եկավ Իրանից, 9 ընտանիք (30 մարդ)՝ Լիբանանից, 6 ընտանիք (15 մարդ)՝ Ֆրանսիայից, 4 ընտանիք (14 մարդ)՝ Իրաքից, 2 ընտանիք (2 մարդ)՝ Հունաստանից, 2 ընտանիք (2 մարդ)՝ ԱՄՆ-ից, 6 ընտանիք (31 մարդ)՝ Թուրքիայից, 1 ընտանիք (2 մարդ)՝ ՍԱՀ-ից։ Հայրենադարձների ընդունման և տեղավորման վրա 1968 թ. կատարված ծախսը կազմել է 242887 ռուբլի[108]։ 1968 թ. ժամանած հայրենադարձներին բնակարաններով ապահովելու նպատակով ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի և ՀԱՄԽ-ի համատեղ որոշմամբ հանրապետության տարբեր քաղաքներում և ավանների հայրենադարձության կոմիտեին հատկացվել է 27750 քմ բնակտարածություն[109]։

1969 թվականին, դարձյալ անհատական վիզաներով, հայրենիք եկավ 896 ընտանիք (4516 մարդ), որից 857 ընտանիք

———

107 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՊԾ ՓԿԱ, ֆ. 362, ց. 10, գ. 33, թ. 15—16։

108 Տե՛ս նույն տեղում։

109 Տե՛ս նույն տեղում, գ. 10, թ. 5։

(4365 մարդ) Իրանից, 2 ընտանիք (2 մարդ) ԽԱՀ-ից, 12 ընտանիք (30 մարդ) Լիբանանից, 12 ընտանիք (67 մարդ) Իրաքից, 1 ընտանիք (1 մարդ) Ֆրանսիայից, 10 ընտանիք (48 մարդ) Թուրքիայից, 1 ընտանիք (2 մարդ) Լիբիայից, 1 ընտանիք (1 մարդ) Կանադայից։ Հայրենադարձության գծով 1969 թ. ծախսվել է 456265 ռուբլի, որից 70003 ռուբլի տրվել է հայրենադարձներին որպես օգնություն[110]։

Ինչպես ցույց են տալիս բերված թվերը, ամենամեծ թվով հայրենադարձություն կատարվել էր Իրանից։ Եվ եթե չլինեին իրանական իշխանությունների կողմից տարբեր պատճառաբանություններով խոչընդոտների հարուցումը հայերի Հայրենիք մեկնելու ձևակերպումների գործում, ապա ավելի մեծ կլինեին իրանահայ հայրենադարձների թիվը։ Այդ խոչընդոտների հաղթահարման ուղղությամբ շատ ջանքեր են գործադրել Իրանում ՍՍՀՄ դեսպանությունը, նրա հյուպատոսական բաժինը և ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի Իրանում հայրենադարձության գծով ներկայացուցիչները[111]։

Հայրենիք մեկնելու համար իրենց փաստաթղթերի ձևակերպման ժամանակ հատկապես մեծ դժվարություններ էին կրում Իրանի գյուղական շրջաններում ապրող հայերը։ Այդ են վկայում Սպահանի նահանգի Հեզարջերիբ, Բոլորան, Շուրիշկան և այլ գյուղերի հայ բնակիչների կրած տառապանքները։ Լուրջ խոչընդոտների էին հանդիպում նաև Թավրիզում, Ղարադաղում և այլուր ապրող հայերը[112]։

Իրանում ՍՍՀՄ դեսպանության հյուպատոսական բաժնի վարիչ Ի. Կալիտայի 1967 թ. օգոստոսի հաղորդման համաձայն, մինչև 1966 թվականը իրանական հպատակությունից դուրս գալու համար պահանջվում էր 1—2 տարի ժամանակ։ ՍՍՀՄ դեսպանության գործադրած ջանքերի շնորհիվ համեմատաբար դյուրացվեց այդ պրոցեդուրան՝ դառնալով 5—6 ամիս, սակայն շարունակում էր մնալ որպես բավականին բարդ և նույնիսկ ստորացուցիչ ու վիրավորական մի արարողություն։

Բանն այն էր, որ ըստ գոյություն ունեցող օրենքների, իրանական հպատակությունից դուրս գալ ցանկացող ամեն մի քաղաքացի պետք է Մինիստրների խորհրդի անունով դիմում ներկայացներ և մուծեր 25 թուման գումար։ Սովետական դեսպանության գործադրած ջանքերի շնորհիվ դեռևս 1946 թվականին հայերն ազատվել էին այդ գումարը վճարելուց և կարող էին դիմել ուղղակի ոստիկանական գլխավոր վարչություն։ ՀՍՍՀ մեկնողներին թույլատրվել էր նաև առանց մաքսային տուրքեր ու հարկեր վճարելու իրենց հետ տանել մինչև 50000 ռիալի շարժական գույք։ Նշված գումարից ավելի արժեցող գույքը ենթակա էր մաքսային տուրքի[113]։ Սակայն 60-ական թվականներին, հայերի հայրենադարձությունը արգելակելու նպատակով, իրանական իշխանությունները սկսեցին դարձյալ արհեստականորեն բարդացնել հպատակությունից դուրս գալու արարողությունը։ Յուրաքանչյուրից, ով դիմում էր իրանական հպատակությունից դուրս գալու համար, պահանջվում էր մինչև 90 լուսանկար, բոլոր հարկերի մուծման և զինվորական ծառայությունից ազատված լինելու վերաբերյալ տեղեկանքներ և այլ փաստաթղթեր։ Այդ ամենի հետևանքով հպատակությունից դուրս գալու մասին դիմելու պահից մինչև հարցի վերջնական լուծումը անցնում էր առնվազն 6—7 ամիս։ Փաստաթղթերի ձևակերպումը, որպես կանոն, ուղեկցվում էր փող գրպանելով և կաշառքով։ Դրա հետ մեկտեղ, հպատակությունից դուրս եկող հայերը ենթարկվում էին խտրականության և հետապնդման։ Նրանց ազատում էին ծառայությունից, երեխաներին չէին ընդունում դպրոց, ոստիկանությունը նրանց տներում կատարում էր միտումնավոր խուզարկություններ, առանձին անհատների նկատմամբ սահմանվում էր հսկողություն և այլն։ Անվտանգության օրգանների (ՍԱՎԱԿ-ի) կողմից շատ հայեր ենթարկվում էին ստորացուցիչ հարցաքննությունների, արժանանում վիրավորանքների։ Հպատակությունից դուրս գալուց հետո հայերից վերցնում էին իրանական բոլոր փաստաթղթերը և ձերբակալման կամ արտաքսման սպառնալիքով նրանց առաջարկում ծայրահեղ սե՛ղմ՛ ափակ ժամկետներում (7—10 օրվա ընթացքում) հեռանալ Իրանի սահմաններից[114]։ Այդ պատճառով էլ սովետական դեսպանությունը հայրենադարձների խմբերը կոմպլեկտավորելու և նրանց թվի ու մասնա-

110 Տե՛ս նույն տեղում, գ. 35, թ 11—13։

111 Տե՛ս նույն տեղում, գ. 11, թ. 1—3։

112 Տե՛ս նույն տեղում։



113 Տե՛ս նույն տեղում, ֆ. 326, ց. 1, գ. 422, թ. 1—10։

114 Տե՛ս նույն տեղում, գ. 332, թ. 1—2։

գիտական կազմի մասին ժամանակին կենտրոն հաղորդելու հնարավորություն չէր ունենում։ Սովետական դեսպանությունը բազմիցս դիմել էր իրանական կառավարությանը այդ և այլ խոչընդոտներ վերացնելու մասին։ Հենց այդ հետևողական ջանքերի շնորհիվ էր, որ այնուամենայնիվ հաջողվեց Իրանից հայրենադարձնել մեծ թվով հայերի[115]։

Սակայն, ինչպես նշված է ՀՍՍՀ արտաքին գործերի մինիստրության 1970 թվականի տարեկան հաշվետվության մեջ, 60-ական թվականների վերջերից, միջազգային իրադրության սրման և հայերի հայրենադարձության նկատմամբ մի շարք երկրների կառավարող շրջանների բացասական վերաբերմունքի հետևանքով, գործնականորեն անհնարին դարձավ սփյուռքահայերի զանգվածային հայրենադարձության իրականացումը։ Միևնույն ժամանակ, հաշվի առնելով բազմահազար սփյուռքահայերի հայրենիք վերադառնալու անկեղծ ձգտումը, միութենական ինստանցիաները թույլատրեցին ՀՍՍՀ կառավարությանը՝ շարունակել արտասահմանյան երկրներից հայերի հայրենադարձությունը ոչ մեծ խմբերով և անհատական կարգով[116]։

1970 թվականին հայրենադարձվել է 812 ընտանիք (4019 մարդ) այդ թվում՝ 766 ընտանիք (3866 մարդ)՝ ոչ մեծ խմբերով և 46 ընտանիք (253 մարդ)՝ անհատական կարգով։ Խմբակային հայրենադարձությունը իրականացվել է միայն Իրանից՝ 766 ընտանիք (3866 մարդ), որից 729 ընտանիք (3520 մարդ)՝ քաղաքային և 83 ընտանիք (499 մարդ)՝ գյուղական[117]։ 1970 թ. ժամանած հայրենադարձներին բնակարաններով ապահովելու համար ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը հայրենադարձության կոմիտեին հատկացրեց 45 հազար քմ բնակտարածություն, որից 38 հազարը՝ քաղաքներում և 7 հազարը՝ գյուղական վայրերում՝ սովխոզների բանավաններում։ Գյուղական վայրերում տեղավորված հայրենադարձ ընտանիքներին տրամադրվեց նաև 800—1200 քմ տարածությամբ տնամերձ հողամաս՝ օժանդակ տնտեսություն ստեղծելու համար։ Խիստ կարիքավոր հայրենադարձներին, ինչպես միշտ, տրվեց նյութական օգնություն, անվճար կահույք և այլն[118]։

115 Տե՛ս նույն տեղում, գ. 514, թ. 3—6։
116 Տե՛ս նույն տեղում, գ. 564, թ. 1—36։
117 Տե՛ս նույն տեղում, գ. 477, թ. 1—47։
118 Տե՛ս նույն տեղում։



1971 թվականին տարբեր երկրներից հայրենիք ներգաղթեց 595 ընտանիք (2885 մարդ)[119], որից 2715 մարդ՝ Իրանից[120]։ 1972 թվականին ոչ մեծ խմբերով հայրենադարձություն կատարվեց միայն Իրանից՝ 535 ընտանիք (2653 մարդ), իսկ անհատական կարգով՝ 12 այլ երկրներից՝ 32 ընտանիք (81 մարդ)։ Այսպիսով, 1972 թ. հայրենիք է վերադարձել 567 ընտանիք (2734 մարդ), որից արական՝ 1479 հոգի, իգական՝ 1255 հոգի։ Նրանց բնակարաններով ապահովելու համար ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը 1972 թ. մարտի 1-ի որոշմամբ հատկացրել էր 70100 քմ բնակտարածություն, որից 59100 քմ՝ քաղաքներում, 11000 քմ՝ սովխոզներում[121]։ Սակայն շինարարության պլանների թերակատարման հետևանքով այդ գործում առաջացան լուրջ դժվարություններ, քանի որ առ 20-ը հունվարի 1973 թ. շահագործման էր հանձնվել ընդամենը 22750 քմ տարածություն քաղաքներում և 2400 քմ՝ սովխոզներում[122]։

Իրանում ՍՍՀՄ դեսպանության կազմած ցուցակի համաձայն հայրենադարձվելու համար պատրաստ սպասում էր դեռևս 12600 մարդ[123]։ Քանի որ 1973 թվականին ավարտվում էր ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի 1971 թ. հունիսի 25-ի որոշմամբ սահմանված հայրենադարձության ժամկետը, հանրապետական համապատասխան օրգանները հարց բարձրացրին միութենական կառավարության առջև՝ սփյուռքահայերի հայրենադարձության ժամկետը երկարացնելու, ինչպես նաև Իրանից եկողների տարեկան քվոտան ավելացնելու մասին[124]։

ՍՍՀՄ Մինիստրների խորհուրդը 1974 թ. մայիսի 28-ին որոշում ընդունեց սփյուռքահայերի հայրենադարձությունը ոչ մեծ խմբերով և անհատական կարգով շարունակելու մասին[125]։ Այդ որոշման հաջող կատարման նպատակով 1974 թ. հունիսի 19-ին ՀՍՍՀ Գերագույն սովետի արտաքին գործերի մշտական հանձնաժողովը մի շարք մինիստրությունների ու կազմակերպությունների ղեկավարների և քաղսովետների ու շրջսովետ-

119 Տե՛ս նույն տեղում, գ. 547, թ. 4—6։
120 Տե՛ս նույն տեղում, գ. 498, թ. 1—2։
121 Տե՛ս նույն տեղում, գ. 512, թ. 1—30։
122 Տե՛ս նույն տեղում։
123 Տե՛ս նույն տեղում, ց. 2, գ. 162, թ. 1—5։
124 Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 512, թ. 1—30։
125 Տե՛ս նույն տեղում։

ների գործկոմների նախագահների մասնակցությամբ քննարկեց հայրենադարձների ընդունման, տեղավորման, աշխատանքով ապահովման, կուլտուր-կենցաղային պայմանների հետագա բարելավման հարցը և այդ մասին համապատասխան առաջարկներ ներկայացրեց ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահությանը, որը և ընդունեց ծավալուն որոշում[126]։ Նույն թվականի դեկտեմբերի 11-ին ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը նույնպես անդրադարձավ այդ հարցին և մշակեց կոնկրետ միջոցառումներ հայրենադարձների ընդունումն ու տեղավորումը բարելավելու ուղղությամբ[127]։ Այդ որոշման մեջ Մինիստրների խորհուրդը հատուկ կերպով ընդգծեց հայրենադարձների ընդունման և տեղավորման գործի արմատական բարելավման խիստ կարևորությունը, հայրենադարձների կուլտուր-կենցաղային սպասարկման մակարդակի բարձրացման, նրանց շրջանում տարվող քաղաքական-բացատրական և կուլտ-մասսայական աշխատանքների ուժեղացման անհրաժեշտությունը։ Որոշման մեջ միաժամանակ լուրջ ուշադրություն հրավիրվեց հայրենադարձ պատանիների ու երիտասարդների ուսուցման, ինչպես նաև հասակավորների անգրագիտության ու կիսագրագիտության վերացման գործի վրա։ Համապատասխան հիմնարկներին առաջարկվեց հասակավոր բնակչության համար տեղերում կազմակերպել նաև հայոց և ռուսաց լեզուների ուսուցման խմբակներ։

Հայրենադարձներին հանրապետության քաղաքներում և ավաններում բնակարաններով ապահովելու նպատակով, ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը 1974 թ. մայիսի 20-ի և հուլիսի 1-ի որոշումներով առանձնացրեց 15000 քմ բնակտարածություն, որից 12500 քմ՝ քաղաքներում[128]։

Նախապատրաստական այս աշխատանքները կատարելուց հետո, սկսվեց հայրենադարձների ընդունումը։ 1974 թ. ոչ մեծ խմբերով և անհատական կարգով հայրենադարձվեց 241 ընտանիք (1124 մարդ), որից արական՝ 601 (53,5 %) և իգական՝ 523 հոգի (46,5 %)[129]։ Կարիքավոր հայրենադարձ ընտանիքներին օգնություն ցույց տալու համար հանրապետության կառավարությունը 1974 թ. բաց թողեց 35 հազար ռուբլի[130]։

Քանի որ 1974 թվականից հետո տեղի ունեցած հայրենադարձության վերաբերյալ արխիվային նյութերը դեռևս վերջնականապես մշակված ու սիստեմավորված չեն, նպատակահարմար ենք համարել մեջբերել ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր արտասահմանից վերադարձող հայերի ընդունման և տեղավորման կոմիտեի ընթացիկ արխիվից ձեռք բերած աղյուսակը, որտեղ ամփոփված են տեղեկություններ 1962—1982 թթ. կատարված հայրենադարձության մասին[131] (տե՛ս էջ 300)։

Ինչպես երևում է աղյուսակից, 1962—1982 թթ. հայրենադարձվել է 6795 ընտանիք կամ 31920 մարդ։ Ամենամեծ թվով հայրենադարձներ եկել են 1969 թվականին՝ 896 ընտանիք կամ 4516 մարդ, իսկ ամենափոքր թվով՝ 1981 թվականին՝ 35 ընտանիք կամ 140 մարդ։

Այդ տարիներին հայրենադարձություն է կատարվել 30 երկրից։ Ըստ առանձին երկրների հայրենադարձների թիվը հետևյալ կերպ է տեղաբաշխվում[132].

| | | | | |
|---|---|---|---|---|
| Իրանից | 5039 | ընտանիք, | 24283 | մարդ |
| Սիրիայից | 889 | » | 4848 | » |
| Եգիպտոսից | 275 | » | 727 | » |
| Թուրքիայից | 125 | » | 547 | » |
| Կիպրոսից | 134 | » | 505 | » |
| Լիբանանից | 113 | » | 378 | » |
| Իրաքից | 75 | » | 291 | » |
| Հունաստանից | 31 | » | 53 | » |
| ԱՄՆ-ից | 22 | » | 50 | » |

136 Տե՛ս նույն տեղում, գ. 564, թ. 1—36։

127 Տե՛ս նույն տեղում։

128 Տե՛ս նույն տեղում։

129 Տե՛ս նույն տեղում, ց. 2, գ. 194, թ. 1—5։

130 Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 564, թ 36։

131 Տե՛ս ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր արտասահմանից վերադարձող հայերի ընդունման և տեղավորման կոմիտեի ընթացիկ արխիվ, «Տեղեկություններ 1962—1982 թթ. կատարված հայրենադարձության մասին» գործը։ Թեպետ մեր աշխատության ժամանակագրական վերջը 1980 թվականով է սահմանափակվում, սակայն աղյուսակը չքանդելու նպատակով մենք տվյալներն ընդգրկել ենք մինչև 1982 թվականը։

132 Տե՛ս ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր արտասահմանից վերադարձող հայերի ընդունման և տեղավորման կոմիտեի ընթացիկ արխիվ, «Տեղեկություններ 1962—1982 թթ. կատարված հայրենադարձության մասին» գործը։

**Տեղեկություններ**
**1962—1982 թթ. արտասահմանից ժամանած հայրենադարձների մասին**

| Ժամանման տարեթիվը | ընտանիքների թիվը | շնչերի թիվը | Սեռը | | Տարիքը | | | | | Կրթությունը | | | Աշխատունակների մասնագիտությունը | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | արական | իգական | մինչև 7 | 8—16 | 17—30 | 31—45 | 46-ից բարձր | բարձրագույն և թերի բարձր. | տարր., թերի միջն. և միջնակարգ | կիսագրագետ և անգրագետ | արդ. և տրանսպ. աշխ. | շին. աշխ. | արհեստավ. | առևտրի աշխ. | արվեստի և գրակ. աշխ. | գյուղատնտ. բանվորներ | այլ բնագավ. ծառայողներ | բարձ. կրթ. մասն. |
| 1962 | 217 | 757 | 386 | 371 | — | 211 | 154 | 165 | 227 | 13 | 409 | 94 | — | — | — | — | — | — | — | — |
| 1963 | 619 | 2304 | 1220 | 1084 | — | 852 | 412 | 524 | 516 | 23 | 853 | 576 | — | — | — | — | — | — | — | — |
| 1964 | 281 | 1088 | 573 | 515 | — | 432 | 206 | 212 | 238 | 7 | 246 | 364 | 626 | 113 | 486 | 62 | 14 | 64 | 204 | 11 |
| 1965 | 538 | 2700 | 1414 | 1286 | — | 1199 | 583 | 482 | 436 | 2 | 486 | 1013 | 349 | 41 | 171 | 20 | — | 204 | 26 | — |
| 1966 | 223 | 1423 | 733 | 690 | 364 | 371 | 256 | 185 | 247 | 4 | 164 | 432 | 156 | 5 | 118 | 11 | 4 | 126 | 17 | 3 |
| 1967 | 148 | 733 | 385 | 348 | 160 | 185 | 115 | 153 | 120 | 5 | 150 | 162 | 56 | 19 | 151 | 6 | 2 | 27 | 11 | 3 |
| 1968 | 482 | 2350 | 1217 | 1133 | 457 | 687 | 391 | 456 | 359 | 4 | 415 | 713 | 186 | 19 | 290 | 29 | 1 | 195 | 39 | 1 |
| 1969 | 896 | 4516 | 2369 | 2147 | 876 | 1160 | 947 | 795 | 738 | 7 | 785 | 1415 | 462 | 155 | 360 | 35 | 15 | 280 | 50 | 1 |
| 1970 | 812 | 4019 | 2082 | 1937 | 801 | 1063 | 787 | 750 | 618 | 9 | 791 | 1182 | 558 | 62 | 465 | 80 | 10 | 144 | 63 | 2 |
| 1971 | 595 | 2885 | 1512 | 1373 | 565 | 757 | 575 | 496 | 492 | 6 | 600 | 881 | 367 | 79 | 417 | 75 | 14 | 128 | 50 | 2 |
| 1972 | 567 | 2734 | 1479 | 1255 | 543 | 620 | 601 | 421 | 549 | 11 | 592 | 846 | 343 | 155 | 449 | 27 | 15 | 91 | 32 | 7 |
| 1973 | 264 | 1282 | 658 | 624 | 223 | 259 | 318 | 218 | 264 | 1 | 347 | 369 | 187 | 63 | 251 | 63 | 3 | 14 | 20 | 1 |
| 1974 | 241 | 1124 | 601 | 523 | 220 | 232 | 272 | 187 | 207 | 12 | 313 | 293 | 149 | 51 | 177 | 51 | 4 | 3 | 19 | 12 |
| 1975 | 195 | 907 | 502 | 405 | 235 | 187 | 184 | 132 | 169 | 6 | 220 | 273 | 138 | 59 | 111 | 47 | 4 | 16 | 12 | 6 |
| 1976 | 201 | 922 | 494 | 428 | 208 | 207 | 174 | 142 | 191 | 1 | 168 | 322 | 143 | 56 | 153 | 61 | 3 | 19 | 16 | 1 |
| 1977 | 214 | 904 | 500 | 404 | 170 | 206 | 180 | 172 | 176 | 5 | 179 | 286 | 139 | 48 | 148 | 55 | 1 | 1[illegible] | 17 | 3 |
| 1978 | 92 | 390 | 212 | 178 | 61 | 99 | 66 | 65 | 99 | 2 | 97 | 109 | 46 | 23 | 63 | 10 | 2 | 18 | 7 | 1 |
| 1979 | 62 | 241 | 128 | 113 | 46 | 69 | 48 | 40 | 38 | 6 | 57 | 57 | 39 | 8 | 29 | 10 | — | 7 | 4 | 5 |
| 1980 | 43 | 206 | 103 | 103 | 60 | 34 | 42 | 20 | 50 | 2 | 32 | 73 | 28 | 15 | 7 | 2 | 1 | — | — | 1 |
| 1981 | 35 | 140 | 79 | 61 | 21 | 31 | 32 | 30 | 26 | 6 | 65 | 23 | 22 | 8 | 27 | 6 | — | — | 2 | 6 |
| 1982 | 70 | 295 | 160 | 135 | 51 | 66 | 60 | 59 | 59 | 7 | 86 | 71 | 45 | 18 | 57 | 1 | 2 | 2 | 5 | 7 |
| Ընդ. | 6795 | 31920 | 16807 | 15113 | 5067 | 8927 | 6403 | 5704 | 5819 | 139 | 8045 | 9548 | 4087 | 997 | 3930 | 651 | 95 | 1349 | 592 | 73 |



| | | | | |
|---|---|---|---|---|
| Ֆրանսիայից | 33 | » | 71 | » |
| Արգենտինայից | 18 | » | 49 | » |
| Իսրայելից | 6 | » | 25 | » |
| Բրազիլիայից | 3 | » | 10 | » |
| Ուրուգվայից | 4 | » | 6 | » |
| Բուլղարիայից | 5 | » | 10 | » |
| Քուվեյթից | 5 | » | 13 | » |
| Եթովպիայից | 1 | » | 4 | » |
| Իտալիայից | 2 | » | 7 | » |
| Չինաստանից | 1 | » | 5 | » |
| Հարավսլավիայից | 1 | » | 6 | » |
| Անգլիայից | 1 | » | 1 | » |
| Լիբիայից | 1 | » | 2 | » |
| Հորդանանից | 2 | » | 14 | » |
| Կանադայից | 1 | » | 2 | » |
| Ռումինիայից | 2 | » | 2 | » |
| Ավստրալիայից | 1 | » | 2 | » |
| ԳԴՀ-ից | 1 | » | 3 | » |
| ԳՖՀ-ից | 1 | » | 2 | » |
| Ավստրիայից | 1 | » | 2 | » |
| Շվեդիայից | 1 | » | 2 | » |

*Հայրենադարձները տեղավորվել են Հանրապետության ավելի քան 20 քաղաքներում՝ 5933 ընտանիք կամ 27092 մարդ և վարչական 9 շրջանների (Արարատի, Արտաշատի, Աշտարակի, Հոկտեմբերյանի, Էջմիածնի, Նաիրիի, Թալինի, Հրազդանի և Ղափանի) 27 ավաններում՝ 862 ընտանիք կամ 4828 մարդ։ Երևանում տեղավորվել է ընդամենը 339 ընտանիք (807 մարդ), Լենինականում՝ 1278 ընտանիք (5935 մարդ), Կիրովականում՝ 1020 ընտանիք (4729 մարդ), Հրազդանում՝ 762 ընտանիք (3775 մարդ), Աբովյանում՝ 780 ընտանիք (3720 մարդ), Չարենցավանում՝ 594 ընտանիք (2828 մարդ), Էջմիածնում՝ 262 ընտանիք (1224 մարդ), Մասիսում՝ 212 ընտանիք (1004 մարդ)։ Հայրենադարձների բնակեցումը կատարվել է հաշվի առնելով նրանց ցանկությունը, Հանրապետության ներքին հնարավորությունները և զարգացման հեռանկարները և մի շարք այլ գործոններ։*

*Բավականին խայտաբղետ պատկեր է ներկայացնում*

հայրենադարձների մասնագիտական կազմը։ Մեծ տոկոս են կազմում արհեստավորները, այնուհետև գալիս են արդյունաբերության և տրանսպորտի աշխատողները, շինարարները, առևտրի աշխատողները, ծառայողները, հողագործները և այլք։

Պետք է նշել, որ թեպետ հայրենադարձության նախորդ փուլերի հետ համեմատած 1962—1982 թթ. ներգաղթածների մեջ մեծ է կրթություն ունեցողների թիվը, այնուամենայնիվ դարձյալ շատ են կիսագրագետներն ու անգրագետները։ Այսպես, 1962—1982 թթ. Հայրենիք եկած դպրոցական տարիքից դուրս գտնվող 17926 հայրենադարձներից կիսագրագետ էին 3346-ը և անգրագետ՝ 6208-ը[133]։ Հայրենադարձության կոմիտեն, ժողովրդական կրթության մարմինները մեծահասակ հայրենադարձների անգրագիտությունն ու կիսագրագիտությունը վերացնելու համար տեղերում կազմակերպում էին հատուկ խմբակներ։ Հասկանալի է, որ դա նույնպես հսկայական ջանքեր ու միջոցներ պահանջող գործ էր։

Ինչպես երևում է վերը բերված աղյուսակից, գնալով տարեցտարի պակասում է հայրենադարձների թիվը։ Դրա պատճառներից մեկն այն է, որ վերջին տարիներին ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը հայկական գաղթօջախների մեծ մասում չի ունեցել հայրենադարձության գծով իր ներկայացուցիչները, որոնք նախապատրաստում են սփյուռքահայերի ներգաղթը։

Երկրորդ կարևոր պատճառը արաբա-իսրայելական և իրանա-իրաքյան ռազմական կոնֆլիկտներն են, որոնց հետևանքով խիստ դժվարացել է մերձավորարևելյան երկրներից զանգվածային հայրենադարձության իրականացումը։

Գնալով նկատելիորեն պակասում է նաև գյուղացիական ընտանիքների թիվը։ Օրինակ, 1972 թվականին նրանք կազմում էին հայրենադարձների ընդհանուր թվի հազիվ 1,5 տոկոսը։ Բանն այն է, որ գյուղացիական ընտանիքները գալիս են հիմնականում Իրանից, որոշ չափով նաև Սիրիայից։ Իրանահայ գյուղացիները Հայրենիք գալու համար ցուցակագրվում են իրենց գյուղերում, սակայն, որպեսզի կարողանան շուտ հայրենադարձվել, ընտանիքներով փոխադրվում են քաղաքներ, հատկապես Թեհրան՝ իշխանության կենտրոնական օրգաններին ավելի մոտ լինելու ու իրենց հայրենադարձության հետ կապ-

133 Տե՛ս նույն տեղում։



ված փաստաթղթերի ձևակերպումն արագացնելու նպատակով։ Սակայն քանի որ դա տևում է շատ երկար, այդ ժամանակամիջոցում նրանք՝ մասնավորապես երիտասարդները, ձեռք են բերում նոր՝ քաղաքային մասնագիտություններ և Հայրենիք են գալիս արդեն որպես քաղաքաբնակներ։

Քանի որ հանրապետության վերադաս օրգանները պլանավորում են մինչև 1990 թ. տարեկան 5000, իսկ հեռանկարում՝ մինչև 2000 թվականը, տարեկան 10 հազար մարդ հայրենադարձել[134], ապա անհրաժեշտ կլինի հանրապետության հետագա զարգացման հեռանկարներից ելնելով այնպես անել, որ նրանց մեջ որոշակի կշիռ ունենա գյուղական բնակչությունը՝ նրան նոր յուրացվող հողերի վրա կազմակերպվող խաղողագործական և պտղաբուծական սովխոզներում բնակեցնելու համար։ Նպատակահարմար կլինի ներգաղթողներին այսուհետև հիմնականում տեղաբաշխել հանրապետության նոր աճող քաղաքներում և քաղաքատիպ ավաններում։

Սփյուռքահայերի հայրենադարձությունը կարևոր քաղաքական միջոցառում է, բավականին բարդ մի գործ, որի նախապատրաստման ու իրականացման մեջ ակտիվ դեր են կատարում արտասահմանում եղած ՍՍՀՄ դեսպանությունները, նրանց հյուպատոսական բաժինները, սփյուռքահայ գաղթօջախները մեկնող ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի հայրենադարձության գծով ներկայացուցիչները, որոնք տեղերում աշխատում են հայկական առաջադիմական կազմակերպությունների և ներգաղթին աջակցող խմբերի կամ կոմիտեների հետ սերտ համագործակցությամբ։

Ուստի միանգամայն տեղին է, որ նրանց աշխատանքը ըստ արժանավույն գնահատվում է համապատասխան օրգանների կողմից։ ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր հայրենադարձության հանձնաժողովը 1968 թ. օգոստոսին հանձնարարեց հայրենադարձության կոմիտեին՝ թանկարժեք հուշանվերներով պարգևատրել Իրանից հայրենադարձության իրականացմանը ակտիվ մասնակցություն ցուցաբերած ՍՍՀՄ դեսպանության հյուպատոսական բաժնի վարիչ Ի. Կալիտային,

134 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 875, ց. 4, գ. 59, թ. 59—61։

դեսպանության կցորդներ Հ. Հովհաննիսյանին և Ռ. Արզումանովին[135]։

1962—1982 թթ. տեղի ունեցած հայրենադարձության ժամանակ տարբեր երկրներում ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի ներկայացուցիչներ են եղել Ա. Շահինյանը, Կ. Մելքումյանը, Լ. Գևորգյանը, Խ. Մոսինյանը (Եգիպտոսում), Ա. Կիրակոսյանը, Վ. Մելիքյանը, Ա. Խաչիկյանը (Իրանում), Ն. Գասպարովը, Գ. Փահլևանյանը, Ա. Նանագուլյանը (Սիրիայում), Ա. Իսկանդարյանը, Ե. Հովհաննիսյանը (Կիպրոսում) և ուրիշներ։ Նշված ժամանակաշրջանում հայրենադարձության իրականացման գործում կարևոր ավանդ են ներդրել նաև Իրանում, Եգիպտոսում, Սիրիայում, Լիբանանում, Կիպրոսում և այլ երկրներում ՍՍՀՄ դեսպաններ Ն. Պեգովը, Գ. Զայցևը, Վ. Երոֆեևը, Նիկիֆորովը, Պ. Երմոշինը, Ա. Բարկովսկին, հյուպատոսությունների աշխատակիցներ Ա. Զուբովը, Լ. Նոսկովը, Ի. Կալինան, Լ. Կոստրոմինը, Ս. Առաքելյանը, Պ. Թալալյանը, Վ. Պիսկունովը, Ա. Պրիպիխնովը, Ի. Ցարյովը, Ի. Շչերբակովը, Կ. Նովիկովը և ուրիշներ։

Պետք է հատուկ նշել, որ նախորդ փուլերի հետ համեմատած, 1962 թ. սկսված հայրենադարձությունը ավելի կազմակերպված և հաջող է իրականացվել։ Առանց բացառության բոլոր հայրենադարձներն անխտիր պետության կողմից ձրիաբար ստացել են հարմարավետ բնակարաններ, ըստ իրենց մասնագիտության ժամանակին տեղավորվել են աշխատանքի, ստացել բազմապիսի օգնություն և մի շարք առանձնաշնորհումներ։

Տեղական կուսակցական, սովետական և հասարակական կազմակերպությունները սիստեմատիկ աշխատանք են տանում հայրենադարձների շրջանում։ Նրանց ծանոթացնում են ՍՍՀՄ սահմանադրության, սովետական քաղաքացիների իրավունքների և պարտականությունների, մեր երկրի նվաճումների և այլ հարցերի հետ։ Հայրենադարձների հետ տարվող այդ աշխատանքները տալիս են դրական արդյունքներ։ Նրանք ավելի շուտ են ընտելանում նոր միջավայրին, ակտիվորեն մասնակցում իրենց կոլեկտիվների ու ամբողջ երկրի հասարակական-քաղաքական կյանքին, դառնում արտադրության առաջավորներ, հայրենի մշակույթի ճանաչված գործիչներ։ Եվ բնավ պատահական չէ, որ մեծ թվով հայրենադարձներ արժանացել են կառավարական պարգևների, ընտրվել ավանային, գյուղական շրջանային, քաղաքային սովետների, ինչպես նաև հանրապետության ու միության գերագույն սովետների դեպուտատներ։

Հայրենադարձների հանրապետական երկրորդ հավաքում, որը տեղի ունեցավ 1966 թ. ապրիլի 10-ին, Երևանում, բարձր գնահատականի արժանացավ հազարավոր հայրենադարձների հայրենանվեր աշխատանքը հանրապետության կոլտնտեսային ու սովխոզային դաշտերում, արդյունաբերական ձեռնարկություններում ու շինարարության մեջ, հայրենի մշակույթի ու գիտության օջախներում։

Սոցիալիստական հայրենիքը հայրենադարձության միջոցով անսահման լայն հնարավորություններ է բացում օտարության մեջ մի կերպ իրենց գոյությունը քարշ տվող հազարավոր տարագիրների տունդարձի համար, հայրենի հողի վրա նրանց ընդունակությունների անկաշկանդ դրսևորման ու տաղանդների ծաղկման համար։

Ահա թե ինչու, արհամարհելով հայրենադարձության հայրենասիրական միջոցառման դեմ եղած բոլոր գրպարտությունները և իրենց ճանապարհից դեն նետելով ամեն տեսակ խոչընդոտները, տարագիր հայության հոգնաբեկ քարավանները աննահանջ կերպով քայլում են դեպի հայրենիք։ Նրանց տունդարձի երթը շարունակվում է...

[135] Տե՛ս նույն տեղում, ֆ. 326, ց. 2, գ. 121, թ. 30—35։

## ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

# ՏԱՐԲԵՐ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ

Նախորդ էջերի բովանդակ շարադրանքը ակնբախ կերպով վկայում է, որ իր գոյության հենց սկզբից սովետական կառավարությունը մեծ ջանքեր է գործադրել ինչպես Հանրապետությունում կուտակված արևմտահայ գաղթականության և որբ ու անապաստան երեխաների հսկայական զանգվածի հարցի արմատական լուծման ուղղությամբ, այնպես էլ հոգատար վերաբերմունք է դրսևորել աշխարհով մեկ ցրված սփյուռքահայության ճակատագրի նկատմամբ՝ կազմակերպելով նրա որոշ մասի հայրենադարձությունը։

Իսկ ի՞նչ էին անում այդ ուղղությամբ գաղութահայ բարեգործական հաստատությունները, քաղաքական կուսակցությունները ու մյուս կազմակերպությունները։ Ուղղակի պետք է ասել, որ դրանց մեծ մասը այդ հարցում միանգամայն դատապարտելի անտարբերություն ու անհոգություն էր ցուցաբերում։ Գաղութահայ կազմակերպությունների նման վարքագիծը բավական հանգամանորեն քննադատվել է ժամանակի պարբերական մամուլում և բազմաթիվ անհատ գործիչների ելույթներում։

Թեպետ գաղութահայ բուրժուական ու բարեգործական շրջանները, քաջատեղյակ լինելով ժողովրդական զանգվածների պրոսովետական տրամադրություններին, իրենց չմերկացնելու համար գրավոր ու բանավոր հաճախ էին չեփորում Սովետական Հայաստանին ու գաղթականական զանգվածներին օգնելու մասին, սակայն գործնական շոշափելի ոչինչ չէին անում։ Նման վարքագծի մերկացման ու դատապարտման իմաստով խիստ բնորոշ են Հայկական բարեգործական ընդհանուր միու-



թյան կենտրոնական վարչության անդամ և ՀՕԿ-ի արտասահմանյան լիազոր Եսայի Կարիկյանի բազմաթիվ ելույթները, հոդվածները և խնդրո առարկա հարցին նվիրված նրա երկու գրքույկները[1]։

Ե. Կարիկյանը, որը 20-ական թվականների սկզբին եղել էր Սովետական Հայաստանում, լավատեղյակ էր այստեղ կատարվող վերափոխություններին և արևմտահայության բեկորների նկատմամբ ցուցաբերվող հոգատարությանը. վերլուծելով հայկական գաղթաշխարհի տրամադրությունները, նշում էր, որ սփյուռքահայերի «ջախջախիչ մեծամասնությունը այսօր աչքը հառած դեպի Հայաստան, մեկ բնաբան միայն իրեն կրոնք բրած է՝ վերաշինություն և ներգաղթ»[2]։ Մինչդեռ գաղութահայ բարեգործական հաստատություններն ու կազմակերպությունները, որոնք զգալի միջոցներ ունեն և ցանկության դեպքում ի վիճակի են օգնել այդ աշխատանքների իրականացմանը, դատարկահնչյուն խոսքերից այն կողմ չեն անցնում և գործի չեն կպչում։

Կոնկրետացնելով իր խոսքը, Ե. Կարիկյանը վկայակոչում է Հայկական բարեգործական ընդհանուր միության գործունեությունը, որը «երկու տարին ի վեր խոշոր ռեքլամներով ճամբա ելած է դեպի Հայաստան, կրակն ու կրակն և դեռ կեցած տեղն է, քայլ մը առաջ չառներ, մինչդեռ այս երկու տարվա մեջ դեպի արևմուտք հսկայաքայլ ճամբա կտրեց, առանց այդ մասին բառ մը ըսելու, առանց շշուկ մը անգամ հանելու»[3]։

Այն ժամանակ, երբ հայ գաղթականների ու որբերի անունով զանազան բարեգործներ ուղղակի ողորմություններ էին հայցում ուրիշներից, Հայկական բարեգործական ընդհանուր միությունն իր ձեռքում կենտրոնացրել էր նրանց օգտին եղած մի շարք կտակներ, նվիրատվություններ ու այլ գումարներ և շռայլորեն ծախսում էր իր բազմաթիվ գրասենյակների ու պաշտոնյաների վրա։ Հաշվումները ցույց են տալիս, որ միայն 1914—1922 թթ. գաղութահայ բարեգործական հաստատությունները զանազան աղբյուրներից ստացել են մոտ 10 մի-

---

1 Տե՛ս Ե. Կարիկյան, Հայաստանի երկրագործական պանքան, Հայ հարուստները և բարեգործական հաստատությունները, Փարիզ, 1924, նաև նույնի՝ Կեդրոնաձիգ և կեդրոնախույս, Փարիզ, 1925։

2 Ե. Կարիկյան, Կեդրոնաձիգ և կեդրոնախույս, էջ 5։

3 Նույն տեղում։

լիոն դոլար, մինչդեռ հանրօգուտ նպատակներով ծախսել են դրա չնչին մասը[4]։

Բարեգործականի վարիչների մեծախոստում ճառերի առթիվ շատ տեղին է Ն. Կարիկյանի դիպուկ հեգնանքը. «Եթե խոսքով փիլավ եփեր, ծովի չափ յուղ ալ ես կխոստանայի»[5]։ Այլապես ինչո՞վ բացատրել այն փաստը, որ 1921—1924 թթ. ընթացքում Բարեգործականը արտասահմանում ծախսել էր 192700 անգլիական ոսկի, իսկ Հայաստանի սովյալներին և իր կողմից այստեղ ուղարկված որբերին հատկացրել հազիվ 8475 անգլիական ոսկի[6]։

Անդրադառնալով գաղթականության օգնելու նպատակով ՀՍԽՀ գյուղատնտեսական բանկի բաց թողած փոխառության իրացման հանդեպ Բարեգործականի բռնած դիրքին, Ն. Կարիկյանը քննադատում է նրան, նշելով, որ այդ «երկրագործական պանքան այսօր բացեր է յուր աշքատիկ արկղը, մեր գաղթականներուն փոխառություն կընե, անոնց բահ ու բրիչ կուտա, որ իրենց արտերը մշակեն, ապրին ու ապրեցնեն իրենները, ասոր վկա է մեր ամբողջ մամուլը, մինչ անդին կեդր. վարչությունը հայ գաղթականին յումանները կհավաքե, օտար երկրագործներու փոխ կուտա և տոկոսներով կուռցնե բարեգործականի սնտուկը և կթողու, որ այդ պանդխտին հեռավոր եղբայրն ու անոր երեխաները վզերնին ծռած ուրիշին դուռը ափերնին բանան պատառ մը հաց մուրալու։

Թող Բարեգործականը հայեն հավաքե, օտարին օգնե, այդ պանդուխտ հայը, որ դռնե դուռ ընկեր է, այսօր լքված ու մուրացկան անտեր չէ բոլորովին... Նա ունի հայրենիքի մեջ միլիոն մը եղբայրներ ու քույրեր, որ անդադար կաշխատին վերականգնելու (երկիրը), հեռու չէ օրը, որ անոնք ոտքի կելլեն ու ձեռք կերկարեն իրենց հեռավոր եղբայրներուն ու քույրերուն ալ և կհանեն զիրենք այս դժբախտ օրերեն...»[7]։

Շոշափելի գրեթե ոչինչ չանելով, գաղութահայ բուրժուական խավերը միաժամանակ շատ էին թմբկահարում Սովետական Հայաստանին իրենց ցույց տված «օգնության» մասին։

[4] Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 178, գ. 66, թ. 66—68։

[5] Ն. Կարիկյան, Կեդրոնաձիգ և կեդրոնախույս, էջ 14։

[6] Նույն տեղում, էջ 6։

[7] Նույն տեղում, էջ 15։



Արտասահմանից ստացած «օգնության» մասին իրական գաղափար կազմելու համար ավելորդ չի լինի ծանոթանալ մի ոմն մեծահարուստ Աբրահամ Բոյաջյանի «բարեգործության» պատմությանը, որը խիստ բնորոշ ու զավեշտական փաստ է այդ տեսակետից։

1924 թ. գարնանը վիեննաբնակ գործավաճառ Աբր. Բոյաջյանը հանկարծ ցանկություն է հայտնում Հայաստանում բացել մեղվաբուծական դպրոց։ Շուտով նրա ներկայացուցիչը գալիս է Հայաստան և ՀՕԿ-ի կենտրոնական վարչության հետ կնքում համաձայնագիր՝ Ստեփանավանում այդպիսի դպրոց հիմնելու մասին։ Ըստ պայմանավորվածության, Բոյաջյանը նախնական ծախսերի համար հատկացնելու էր 11 հազար ռուբլի, իսկ այնուհետև՝ տարեկան 3700 ռուբլի, մինչև որ դպրոցը ինքնաբավ դառնար։ Այդ «զոհաբերության» դիմաց նա պահանջում էր ուսումնարանի շենքի ճակատին մեծ-մեծ տառերով գրել՝ «Մեղվաբուծական դպրոց։ Տուն Ա. Բոյաջյանի» և իր մեծադիր լուսանկարը կախել դպրոցի դահլիճի աչքի ընկնող տեղում, դպրոցում պահել մի դռնապան, որն իր գլխին անընդհատ «Բոյաջյան» ազգանունը կրող գլխարկ[8]։

Խոստացված նախնական գումարից միայն հազար ռուբլի նրա ներկայացուցիչը ծախսեց հատկացված շենքի վերանորոգման վրա, Վիեննայից ստացվեց Բոյաջյանի մեծադիր նկարը, որը փակցվեց դահլիճի աչքի ընկնող տեղում, դպրոցի ճակատին մեծ-մեծ տառերով գրվեց նրա անունը, բայց «բարերարից» այլևս ոչ մի տեղեկություն չստացվեց։ Գործին լավատեղյակ շրջանների վկայությամբ, այդ խորհրդավոր լռության պատճառը դպրոցում ժամացույց դնելն է եղել, որը «խիստ զայրացրել է» Բոյաջյանին։ Հետագա տեղեկությունները ցույց տվեցին, որ բարեգործի հռչակը Բոյաջյանին պարզապես հարկավոր է եղել ինչ-որ շահադիտական գործի հաջողությունն ապահովելու համար։ Այդ գործարքը գլուխ բերելուց հետո Բոյաջյանը «մոռացավ» իր հանձնառությունը։

Արտասահմանում Սովետական Հայաստանի հմայքը և նրան աջակցող կազմակերպությունների ու անձանց ժողովրդականությունը այնքան մեծ էին, որ անգամ գաղութահայ բուր-

[8] Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 178, գ. 35, թ. 1—22, նաև՝ Ալ. Մառտունի, Կուսակցությունները գաղութահայության մեջ, էջ 21։

ժուական խավերի որոշ ներկայացուցիչներ, «հանուն իրենց գործերի հաջողության», մեր երկրի հետ երբեմն համաձայնության եզր էին փնտրում և փորձում «ազնիվ բարերարի» անուն վաստակել։

Դժվար չէ նկատել, որ արտասահմանյան բարեգործական որոշ հաստատություններ ու անհատներ հայրենիքին օգնելու, գաղթականության ու որբերի վիճակը թեթևացնելու հարցերը փաստորեն միտումնավոր կերպով շահագործում էին որպես հավելյալ եկամտի աղբյուր։

Այդ իմաստով ուղղակի դատապարտելի էր դաշնակցության գործունեությունը։ Դաշնակցական վերնախավերը, օրինական ոչ մի իրավունք չունեցող «Հ. Հ. պատվիրակությունը» և այլ հաստատություններ իրենց գոյությունը պահում էին ծայրահեղ թշվառության մատնված գաղթականության ու որբերի հաշվին։ Ուստի պատահական չէր, որ այդ հաստատությունների վարիչներն իրենց գոյությունը երկարաձգելու նպատակով գաղութահայ աշխատավորությանը մղում էին նորանոր արկածախնդրությունների։ Այդ է վկայում թեկուզ 20-ական թվականներին դաշնակցության առաջ քաշած այսպես կոչված «էքստերիտորիալ հայկական կառավարություն» կամ «գաղութահայ կենտրոնական վարչություն» ստեղծելու ցնորամիտ գաղափարը։ Ըստ էության այդ վարչությունը պետք է հանդիսանար գաղութահայության միակ ղեկավար օրգանը, որի համար կարևոր չէր ունենալ որոշակի տերիտորիա, այլ՝ վարչական ապարատ, ուր տաքուկ պաշտոններ կստանային երբեմնի նախարար-դաշնակցականները[9]։

Պողոս Նուպարի, ապա Գաբրիել Նորատունկյանի գլխավորած Ազգային պատվիրակությունը 1924 թ. նոյեմբերի 30-ին մի հայտարարությամբ դադարեցրեց իր գոյությունը, ավելի ճիշտ՝ պարզապես անվանափոխությամբ փակեց իր քաղաքական խանութը և փոխարենը բացեց գաղթականական մի կրպակ՝ «Հայ գաղթականաց կենտրոնական հանձնախումբ» ցուցանակի տակ։ Այդ հանձնախմբի կնքահայրերի հայտարարությանը հավատալով, կարելի էր ենթադրել, որ դա արվում էր «գաղթականներու ու որբերու ընթացիկ խնդիրները անխնամ

[9] Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 178, գ. 66, թ. 66—88։



չթողնելու համար»[10]։ Բայց իրականում նրա հեղինակները հետապնդում էին գաղթականների անունը շահագործելու միջոցով իրենց գոյությունը արդարացնելու և երկարաձգելու նպատակ։

Սակայն, բարեբախտաբար, գաղութահայ ժողովրդական զանգվածներն այլևս չէին հետևում նրանց խաղերին, երես էին դարձրել նրանցից և մեկընդմիշտ ապավինել Սովետական Հայաստանին, որն իր բոլոր հնարավորությունները, ուժերն ու եռանդը գործադրում էր գաղթականության հարցը արմատապես լուծելու օգտին։

Սփյուռքահայ աշխատավորության և առաջադիմական բոլոր ուժերի քաղաքական-դասակարգային հասունության ցայտուն վկայությունը եղավ 1924 թ. սեպտեմբերի 1-ին Ժնևում բացված հայասիրական միջազգային կոնֆերանսին հայտարարված բոյկոտը։ Դեռևս 1924 թ. հուլիսին Հայասերների միջազգային ընկերությունն իր նախագահ էդվարդ Նավիլի ու քարտուղար Քրամֆ Բոնարի ստորագրությամբ մի կոչ էր հղել բոլոր հայկական գաղութները, հայանպաստ կազմակերպություններին ու մասնավոր անձանց, հրավիրելով մասնակցել սեպտեմբերի 1-ին Ժնևում բացվող հայասիրական միջազգային կոնֆերանսին։ Կոնֆերանսի գլխավոր զբաղմունքն էր լինելու հայ գաղթականների ու որբերի, ինչպես նաև մոտ 50 հազար տարագիրների Սովետական Հայաստան տեղափոխելու խնդիրը։ Սակայն կոնֆերանսի կազմակերպիչները «մոռացել» էին հրավեր ուղարկել նաև սովետական կառավարությանը։ Գաղտնիք չէր, որ կոնֆերանսի հրավիրման իսկական նախաձեռնողները դաշնակներն էին։ Դրանով նրանք փաստորեն ձգտում էին իրականացնել համագաղութային համագումար հրավիրելու բազմիցս ձախողված իրենց փորձերը, իսկ «հայասեր» նավիլներն ու բոնարները սոսկ գործիք էին դարձել նրանց ձեռքին։ Ժամանակին կռահելով գաղութահայության ղեկավարությունն իրենց ձեռքը գցելու դաշնակցական վնասակար խաղերի իմաստը, սփյուռքահայ առաջադիմական բոլոր կազմակերպություններն ու հոսանքները վճռական բողոք հայտնեցին նման կոնֆերանսի հրավիրման դեմ և հրաժարվեցին մասնակցել նրա աշխատանքներին։ Ամեն կողմից մեկուսացված դաշնակներն ու նրանց «պատվարժան հայասերները», մի քանի օրվա վշտա-

[10] Տե՛ս «Մարմարա», օրաթերթ, Կ. Պոլիս, 23 դեկտեմբերի, 1924, № 50։

բեկ զրույցներից հետո, առանց որևէ արդյունքի հասնելու, ստիպված եղան դադարեցնել կոնֆերանսի աշխատանքները[11]:

Սփյուռքահայ առաջադիմական ուժերն իրենց այդ վերաբերմունքով վերջնականապես ցույց տվեցին, որ գաղթականության անունից խոսելու իրավունքը պատկանում է միայն ու միայն իրենց՝ անլուր տառապանքների մեջ գտնվող հայ տարագիրներին և սովետական կառավարությանը, որը ոչ թե դատարկահնչյուն խոսքերով, այլ ռեալ գործերով է ապացուցում նրանց դեգերումներին ու թշվառություններին վերջ տալու իր անկեղծ պատրաստակամությունը:

Եվ բնավ պատահական չէր, որ ինչքան ավելի էր ուժեղանում սովետական կառավարության ուշադրությունը հայ տարագիրների նկատմամբ և կազմակերպվում էր նրանց որոշ մասի հայրենադարձությունը, այնքան ավելի կատաղի ու չարանենգ էր դառնում դաշնակների ու մյուս թշնամական հոսանքների պայքարը ընդդեմ Սովետական Հայաստանի: Նրանք ձգտում էին խանգարել հայրենադարձության իրականացմանը, վարկաբեկել Սովետական Հայաստանը, ժխտել երկրում ծավալված սոցիալիստական շինարարությունը, մոլորության մեջ գցել գաղութահայ զանգվածներին և այլն:

1924 թ. մայիսին Կ. Պոլսից ՀՍԽՀ Ժողկոմխորհին ուղարկած իր զեկուցագրում Դ. Շահվերդյանը հայտնում էր, որ «գաղթականների փոխադրությունը (Հայաստան) ժողովրդական մասսաների մեջ մեծ հետաքրքրություն է առաջացրել ինչպես այստեղ, այնպես էլ մյուս գաղութներում: Բայց վարիչ մարմինները (ակնարկում է գաղթականական ու բարեգործական ազգային հաստատությունների ղեկավար օրգանները.—Հ. Մ.) այնքան էլ գոհ չեն այդ փոխադրությունից: Բանն այն է, որ արտասահմանի բոլոր մարմինները ապրում են գաղթականներով և որբերով, սրանցով են արդարացնում իրենց գոյության իմաստը, սրանց շնորհիվ են ստանում պաշտոններ ու ապրուստի միջոցներ և այլն: Այսպիսի պայմանների շնորհիվ է, որ ղեկավարները փախել են իրենց դիրքերը:

Եթե առաջ աշխատում էին ամեն կերպ գաղթականներին ուղարկել Հայաստան, ներկայիս չեն ուզում մատը մատին

[11] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1924 թ., 25 սեպտեմբերի, № 219, 2 հոկտեմբերի, № 225 և 7 հոկտեմբերի, № 229:



խփել այդ գործին նյութական օժանդակություն հասցնելու համար: Ճիշտ է, հոդվածներ են գրում, ժողովներ են գումարում, ծրագրեր են կազմում և այլն: Բայց այդ բոլորն առերես, ներքուստ ամեն կերպ աշխատում են խանգարել գործին»[12]:

Խոսելով Սովետական Հայաստանի հակառակորդների կողմից ներգաղթի շուրջը ծավալված գրպարտչական կամպանիայի մասին, Դ. Շահվերդյանը նշում է, որ ոմանք այնքան են ատելությամբ լցված դեպի սովետական իշխանությունը, որ առաջարկում են երկրի վերաշինության ու ներգաղթի համար գաղութներում հանգանակված գումարները չուղարկել Հայաստան, այլ օգտագործել արտասահմանում: Իրենց շինծու պատճառաբանություններով հաճախ թե որքան ծիծաղելի վիճակի մեջ էին ընկնում այդ արկածախնդիրները, առանց մեկնաբանությունների վկայում է այն փաստը, որ Կ. Պոլսում գոյություն ունեցող ազգային իշխանությունները 1924 թ. իրենց գաղտնի ժողովներից մեկում որոշում էին կայացրել «գաղթականներին չփոխադրել Հայաստան, այլ տեղավորել Աֆրիկայում կամ Ամերիկայում, որովհետև այնտեղ կրոնը ազատ է»[13]:

Դաշնակցական մամուլի հետ միասին իր հակասովետական քարոզչությամբ և ներգաղթի դեմ ծավալած կամպանիայով այդ տարիներին աչքի էր ընկնում նաև Կ. Պոլսի անկուսակցական կամ չեզոք կոչված «Վերջին լուր» օրաթերթը: Խեղաթյուրելով իրականությունը, արևմտահայ վերնախավերի, մասնավորապես պոլսահայ առևտրական բուրժուազիայի, ձայնափող Հովհաննես Ասպետը «Վերջին լուրի» էջերից շեփորում էր, թե Սովետական Հայաստանում «ազատություն չկա», իսկ «երբ ազատությունն անհետացած է, կմնա երկիր մը, բայց այլևս հայրենիք մը գոյություն չունի»[14]:

«...Պարտինք չմոռնալ, որ Երևան ո՛չ քաղաքականապես, ո՛չ տնտեսապես, ո՛չ ալ բարոյապես հայության ամբողջության համար, կամ անոր ստվարագույն մասի համար, վերջնական հայրենիք մը հանդիսանալու պետք եղած ապահովության պայմանները չի ներկայացներ տակավին: Ուստի, արտասահմանի հայերուն պարտքն է հոգ տանիլ, որ ուրիշ բնակավայրեր, ուրիշ

[12] ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 54, թ. 10—11:

[13] Նույն տեղում, ֆ. 40/113, ց. 3, գ. 305, թ. 39—40:

[14] «Վերջին լուր», Կ. Պոլիս, 16 հունիսի, 1924 թ., № 3138:

բույներ ալ գտնվին, իբրև առ այժմ պահեստ մեր ժողովրդին վայրավատին հատվածներուն համար։

Վերջապես, Երևան ոչ միայն քաղաքական ու տնտեսական, այլև իմացական, հոգեկան, բարոյական ավելի նուրբ տեսակետներով ալ ի վիճակի չէ գոհացնելու հայկական հայրենիքի մը իտեալը»[15],— Հովհ. Ասպետին համահնչյուն ձայնակցում էր Բյուզանդ Քեչյանը։ Բարեբախտաբար, վերջինս չի ղլանում բացատրելու, թե ինչո՞ւ Երևանը, այսինքն՝ Սովետական Հայաստանը, չի կարող դառնալ պոլսահայ բուրժուազիայի «հայրենիքի մը իտեալը»։ Բանից պարզվում է, այն պատճառով, որ «այսօրվան Հայաստանին մեջ, ուր շուտով կդառնա, կըլլա պոլշևիքության միջազգային ատրուշան մը», ուր իբր թե «կրակի կտրվին, կոչնչացվին հայության բոլոր սրբազան նշխարները» և «պատվական ժողովուրդը, նամանավանդ արևմտահայ գաղութը, պետականորեն կոտարացվի հայութենե, աշխարհաքաղաքացիի լուծ տարրի մը վերածվելով»[16]։ Ահա արևմտահայ պահպանողականների տիպիկ ներկայացուցիչ Բյուզանդ էֆենդի Քեչյանի տեսակետներն ու բարբաջանքները հայ աշխատավորության սոցիալիստական հայրենիքի՝ Սովետական Հայաստանի մասին։ «Զգուշանանք նաև հայության բովանդակ նյութական ու բարոյական հաստատություններն ու դրամագլուխները և բոլոր որբերն ու նոր սերունդը Երևան փոխադրելէ, խորհելով, որ անոնք այլուր ոչ նվազ օգտակար կրնան ըլլալ բոլոր ցեղին և ավելի ապահով»[17],— գրում էր Բ. Քեչյանը՝ հակադըրվելով գաղութահայ այն շրջաններին, որոնք կողմնակից էին ազգային որոշ հարստություններ Սովետական Հայաստան տեղափոխելուն։

«Իր մոլեռանդորեն կիրարկած պոլշևիք սկզբունքները ուրացումն են հայության բնատոհմիկ նկարագրին, անոր իսկապես ազգային հատկանիշներուն»,— շարունակում էր Բ. Քեչյանը և հրահանգում, որ հայ գաղթականներն ու որբերը չտեղափոխվեն Հայաստան։ Նա առաջարկում էր՝ «ջանանք հայերը տեղավորել, ապրեցնել և կազմակերպել ուր որ կան, կամ ուր որ կրնան բնակիլ, սիրաշահելով տեղային իշխանությունը»[18]։

[15] Նույն տեղում, 21 հունիսի, 1924 թ., № 3143։

[16] Նույն տեղում։

[17] Նույն տեղում։

[18] Նույն տեղում։



«Մեր մատաղատի ու խոստումնալից որբերը դեպի կոմսոմոլ» մի ուղարկեք, «ուր սնանին սնամեջ վարդապետություններով ու տեսակ մը «բարոյագիտությունով», և վաղվան համար պատրաստվին հալածելու իրենց հայրերուն սուրբ կրոնքը և աղավաղելու ազգային սրբազան լեզուն»[19],— քարոզում էր Հովհաննես Ասպետը։

Հայ գաղթականն ու որբը թող գնան Արգենտինա, Բրազիլիա, Ուրուգվայ, Աֆրիկայի խորքերը, բայց ոչ երբեք Սովետական Հայաստան։ Սովետական Հայաստանը հայության իսկական հայրենիքը չէ, հարկավոր է որոնել ու ստեղծել նոր հայրենիքներ—ահա այդ թշվառականների հայտնաբերած գեղատոմսը, որն առաջարկում էին սատանայական հայ գաղթականին ու որբին։

Նրանք այդպես էին վարվում ամեն անգամ, երբ տեսնում էին, որ սովետական կառավարությունը կազմակերպում է սփյուռքահայ աշխատավորների հայրենադարձությունը, հայրենիքում տեղավորում, հողով ու այլ անհրաժեշտ միջոցներով ապահովում, հոգ տանում նրանց կարիքների մասին։ Իսկ երբ տնտեսական նկատառումներով, երբեմն ժամանակավորապես դադարեցվում էր ներգաղթը, դաշնակ ջոջերն ու նրանց սպասավորները ամբողջ ձայնով գոռում էին, թե «փակել են դռները», թե Սովետական Հայաստանի կառավարությունը թույլ չի տալիս գաղթականությանը երկիր վերադառնալու, որովհետև չի մտածում լուծել նրա հարցը և այլ հերյուրանքներ։

Մինչդեռ ռեալ փաստերը վկայում են, որ այն ժամանակ, երբ Հունաստանը, Բուլղարիան և այլ երկրներ զանգվածաբար տեղահան էին անում իրենց մոտ ապաստանած հայ տարագիրներին, երբ «մարդասեր ու դեմոկրատական» Ամերիկայում հայերից ազատվելու համար հորինում էին ինչ-որ «Կարտոզյանի գործ» և փորձում որոշել այն հարցը, թե հայերը սպիտակամորթ են թե՞ սևամորթ, և եթե սպիտակամորթ չեն, ապա չեն կարող ամերիկյան քաղաքացիներ համարվել ու Ամերիկայում ապրելու իրավունք ունենալ, այդ նույն ժամանակ Սովետական Հայաստանն ընդունում էր հազարավոր հայ տարագիրների։ Այնպես որ իզուր էր դաշնակ Ս. Մասուրյանը, նա իբր Ս. Վրացյանը, Կ. Պոլսի ճղճղան «Ճակատամարտի» էջերից սովե-

[19] Նույն տեղում, 16 հունիսի, 1924 թ., № 3138։

տական կառավարության հասցեին ազդարարում՝ թե «բացե՛ք դուռները»։ Այդ կարգախոսը դաշնակները մեջտեղ էին հանել հենց այն ժամանակ, երբ սովետական կառավարությունը, ընդառաջելով սփյուռքահայ աշխատավորների ցանկություններին, հայտնել էր իր համաձայնությունը զանգվածային նոր ներգաղթ կազմակերպելու մասին, սակայն այն պայմանով, որ նախօրոք հոգացվեին հայրենադարձների ճանապարհի և որոշ ժամանակ նաև երկրում ապրելու նրանց ծախսերը։

Ս. Վրացյանն անդրադառնալով այդ հարցին, դեմագոգիկ կերպով գրում էր. «Գործնականի մեջ ասիկա կնշանակե, թե Երևանի կառավարությունը գաղթականներու առջև ամուր կրփակե Հայաստանի դուռները, որովհետև շատ պարզ է, որ հայ գաղթականներու ճնշիչ մեծամասնությունը չի կրնար ապահովել իր «մեկ տարվան ապրուստը»[20]։ Այդ կապակցությամբ «մեղադրելով» սովետական կառավարությանը և շանթ ու որոտ թափելով նրա հասցեին, դաշնակցական գրչակն անմեղ ու միամիտ տեսք էր ընդունում։ Նա ձևացնում էր, թե բնավ գլխի չի ընկնում, որ ներգաղթողների «մեկ տարվան ապրուստը» հոգալու խնդիրն առաջ էր քաշված արտասահմանում եղած տասնյակ միլիոնների հասնող հայկական հարստությունները, գաղթականների ու որբերի հարցի շահագործումից հղփացած բարեգործական հաստատությունների կուտակած միջոցները և հայ ժողովրդի անունով կուտակված գումարները հայրենադարձությունը հատկացնելու համար։ Եվ մի՞թե վրացյաններին պարզ չէր, որ սովետական կառավարությունը չէր կարող առանց ներգաղթողների նյութական միջոցների ապահովման մասին հոգալու, հախուռն կերպով հայրենադարձություն կազմակերպել և նոր դժվարությունների մատնել հազարավոր տարագիրների։

Դաշնակցությունը խիստ դժգոհություն էր հայտնում նաև այն բանի համար, որ Սովետական Հայաստանը բոլորի առաջ չէր բացում իր դռները, ուստի նրա օրգան «Ճակատամարտն» իր խմբագրականում եզրակացնում էր, որ «մեր երկիրը փակված է երկաթյա փեղկերով»[21]։ Այո՛, պարոնայք դաշնակցականների և բոլոր նրանց համար, ովքեր անկեղծ չէին մեր հայրենիքի նկատմամբ, այլ չարամտորեն գրպարտում էին

[20] Տե՛ս «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 16 ապրիլի, 1924 թ., № 1656։
[21] Տե՛ս նույն տեղում, 15 ապրիլի, 1924 թ., № 1655։



նրան, ուղղակի պայքարում էին նրա դեմ, նրանց առջև «երկաթյա փեղկերով» փակված էին բոլոր դռները։

Հունաստանում ՍՍՀՄ դեսպան Ա. Մ. Ուստինովի կողմից 1925 թ. նոյեմբերի 11-ին արտգործժողկոմատ հղված զեկուցագրում հայտնվում էր, որ հունահայերի հայրենադարձությանը զգալի չափով խոչընդոտում են տեղի դաշնակցական կազմակերպությունները, այդ գործում ստանալով Սալոնիկում Ազգերի լիգայի ներկայացուցիչ Ցվեռների աջակցությունը։

Սալոնիկում հրատարակվող «Ալիք» թերթի էջերում, ինչպես նաև բանավոր կերպով, դաշնակները մեծ աղմուկ էին բարձրացրել հայրենադարձության դեմ։ Մասսաներին մոլորեցնելու համար նրանք հորինել էին, թե իբր հունահայերը բռնությամբ են ուղարկվում Հայաստան և ոչ թե իրենց կամքով, թե հայրենադարձության համար հանգանակված գումարները ծախսվում են ոչ թե ներգաղթողների ուղևորությունը կազմակերպելու, այլ արտասահմանում պրոսովետական անլեգալ կազմակերպություններ ստեղծելու ու պահպանելու վրա և այլն[22]։ Հայրենադարձությունը խափանելու նպատակով նրանք դիմում էին ամեն տեսակ ստոր միջոցների, նույնիսկ ՀՕԿ-ի ակտիվ անդամներին կեղծ մատնություններով բանտարկել տալու և ուրիշ զազրելի մեթոդներ գործադրելու փորձերի[23]։ Օգտագործելով ստի ու կեղծիքի իրենց հարուստ զինանոցը, դաշնակները արտասահմանյան մամուլում լուրեր էին տարածում այն մասին, թե իբր 1925 թ. սկզբներին Հունաստանից հայրենիք ներգաղթածներից շատերը սովետական կառավարության կողմից ենթարկվել են ռեպրեսիաների, իսկ նրանցից մի քանիսը կախաղան են բարձրացվել։ Նրանք նույնիսկ նշել էին կոնկրետ անուններ, չնայած այդ հայրենադարձները հանգիստ ու խաղաղ ապրում էին Լենինական քաղաքում։ Տեղեկանալով այդ խեղկատակությունը, բարեբախտաբար միայն դաշնակցական մամուլի էջերում «կախաղան հանված» հայրենադարձները «Խորհրդային Հայաստան» թերթում հրապարակեցին մի զայրալից բողոք, ուր կոչ էին անում արտասահմանի իրենց եղբայրներին, որ չհավատան «գաղութահայության սիրտը պղտորող

[22] Տե՛ս ՀՍՍՀ ՀՍՏԾ ՊԿԱ, ֆ. 40/113, ց. 3, գ. 204, թ. 15 և գ. 517, թ. 62—63։
[23] Տե՛ս նույն տեղում, գ. 517, թ. 62—63։

*ու նրա քրտինքը ծծող այդ ինքնակոչ խնամակալներին ու տղրուկներին», որովհետև նրանք իրենց «մշտնջենական արհեստ են ընտրել կեղծիքը, սուտն ու պրովոկացիան»*[24]*:*

*Բարեբախտաբար գաղութահայ աշխատավորությունն արդեն լավ էր ճանաչում իր իսկական բարեկամներին ու թշնամիներին և իր ճանապարհից վճռականորեն դեն նետելով բոլոր խոչընդոտները, ձգտում էր ներգաղթել Սովետական Հայաստան:*

*Ավելորդ համարելով մանրամասնորեն թվարկել դաշնակների բոլոր զրպարտությունները, որպես դրանց պատասխան, բավականանանք Վառնայում հրատարակվող «Լուսարձակ» թերթից հետևյալ քաղվածքի մեջբերումով, որն ըստ էության ճշտորեն է բացահայտում ներգաղթի իսկական կողմնակիցներին ու հակառակորդներին: «Լուսարձակն» իր 1924 թ. հուլիսի 23-ի համարում այդ կապակցությամբ գրել է. «Կ. Պոլսեն 10 հազար հայ գաղթականներու մասին կխոսվեր, սակայն որքան ատեն որ հայ կառավարությունը ճամբա չէր տար, մամուլը և Կ. Պոլսո ազգային իշխանությունները կպնդեին զանոնք Հայաստան փոխադրելու: Հիմա, որ Հայաստանի կառավարությունը դռները բացած է, կտեղեկանանք թե ոչ ոք չի մտածեր ատոր վրա և անկե ի վեր 7 ամիս է, որ այդ թշվառներուն (Կ. Պոլսում գավառներից կուտակված գաղթականներին.— Հ. Մ.) նպաստ կտրվի, մինչդեռ այս ծախսված դրամին կեսը կբավեր զանոնք Հայաստան փոխադրելու:*

*Կիմանանք, որ Կ. Պոլսո ջոջերը, երբ մեկ կողմե առերես պ. Շահվերդյանի հետ կբանակցին, մյուս կողմե գաղտնի ժողովի մը մեջ խնդիր ըրեր են, որ գաղթականները Մարոք փոխադրեն, քանզի հոն կրոնքը ազատ է եղեր:*

*Գարակյոզյանն ալ իր Կ. Պոլսո որբանոցը Ֆրանսա կփոխադրե եղեր և Փարիզի շրջակայքը հին պալատ մը գնելու վրա է եղեր:*

*Ահա թե ինչպես հայ գաղթականները և որբերը կմղվին դեպի օտարացում, դեպի ապազգայնացում բոլոր անոնց կողմե, որոնք կերդնուն հանուն ազգության»*[25]*:*

---

[24] *«Խորհրդային Հայաստան», 6 օգոստոսի, 1925 թ., № 177:*

[25] *Քաղվածքը բերված է ըստ Ալ. Մարտունու «Կուսակցությունները գաղութահայության մեջ» գրքի, էջ 44—45:*



*Հետևապես, հայրենադարձությանը իրականում դեմ էին դաշնակցությունն ու գաղութահայ բուրժուական շրջանները: Նրանք լավ էին հասկանում, որ ամեն մի գաղթականի ու որբի երկիր տեղափոխությունը լուրջ սպառնալիք է ստեղծում իրենց հետագա գոյության համար, որովհետև ներգաղթի հետևանքով նրանք զրկվում էին այն միջավայրից, որ դեռևս հնարավորություն ունեին գործելու և ապրելու: Ինչպես ժամանակին նշել է Ալ. Մյասնիկյանը, դաշնակցականներին ձեռնտու էր, «որպեսզի գաղթականությունը Հայաստան չգնա, որովհետև մեկ՝ այդ գաղթականության անունով դաշնակցությունը հանգանակություն կանի հօգուտ իր դրամարկղի, երկու՝ աջ ու ձախ հայհոյանքներ կթափի մեր գլխին ու կփառաբանի իրեն,— չէ՞ որ բոլշևիկները գաղթականներին «չեն ընդունում», իսկ բարի դաշնակցականները նրանց մասին այրա՜ն են «մտածում»»*[26]*:*

*Բայց հակառակ բոլոր բարբաջանքներին ու ստոր զրպարտություններին, գաղութահայ աշխատավորությունը, մերկացնելով իր թշնամիների նենգ դավերը, բուռն կերպով ձգտում էր դեպի հայրենիք: Անընդհատ սովետական կառավարությունը բազմաթիվ դիմումներ էր ստանում բոլոր գաղթօջախների տարագիր երկրագործներից, բանվորներից ու արհեստավորներից, որոնք պատրաստականություն էին հայտնում ներգաղթել հայրենիք և այստեղ կառուցել գյուղեր ու ավաններ, ակտիվորեն մասնակցել երկրի վերաշինության կենսական գործին: Շատ դիմումներ էին ստացվում նաև զանազան մասնագիտության տեր մտավորականներից և հատկապես երիտասարդներից՝ համալսարանում կամ որևէ այլ ուսումնական հաստատությունում սովորելու ցանկությամբ:*

*Պատասխանելով դաշնակցական պրովոկացիաներին, Հունաստանից հայրենիք ներգաղթող մի խումբ աշխատավորներ 1925 թ. հունվարին գրում էին. «Մեր վերջնական օթևանի՝ ՍսՀ Միության ցավագար և անակուռ թշնամիները ալ սուտ ու զրպարտություն չմնաց, որ չգրեին ու չխոսեին ներգաղթին շուրջը:*

*Մենք, ներկա ստորագրյալքս, մոտ օրեն Հին Հունաստանի այլևայլ վայրերեն Խ. Հայաստան պիտի մեկնինք, մեր որբա-*

---

[26] *Նույն տեղում, էջ 44:*

ղան պարտականությունը կհամարինք սույն կոչով զգուշացնել դեպի մեր պաշտած հայրենիքը մեկնողները, որ շրջան ընող չարանենգ գրույցներուն և ըսի ըսավներուն ընավ կարևորություն չտան...»[27]։

Այնուհետև կոնկրետ փաստերով մերկացնելով դաշնակներին, կոչի հեղինակները շարունակում էին. «Հայրենակիցնե՛ր, զգույշ և միշտ զգույշ մեր տունն ավերող և մեզ մոխիրներու վրա նստեցնող օտար, կեղծ մարդասերներէն և տարաբախտաբար հայ կոչվող խառնակիչներէն, որոնք խիղճերնին սպանած և ամոթի ու պատասխանատվության զգացումնին կորսնցուցած ըլլալով խպառ, իրենց աղտոտ ձեռքերով կուզեն խառնել ձեր խիղճին անդորրությունը։

Զոհ մի ըլլաք բանսարկու լեզուներու և վաճառված գրիչներու խարկանքներուն, որոնք կմիտին ձեր մեջ թշնամանքի որոմ սերմանել։ Վստահ ըլլալով, որ մոտ է այլևս ձեր փրկության ժամը, կազմ ու պատրաստ եղեք դեպի Ավետյաց աշխարհը մեկնելու»[28]։

Սովետական Հայաստանի մի խումբ համակիրներ հունահայ գաղութի աշխատավորներին ուղղված 1925 թ. հոկտեմբերի 28-ին հրապարակված մի այլ կոչի մեջ, արտահայտելով իրենց անսահման ուրախությունը ներգաղթի առթիվ, գրել էին.

«Ցնծա հայ ժողովուրդ։

Մեծ անձկությամբ սպասած ժամդ հասավ։

Ամեն ինչ պատրաստ է։ Շաբաթ օրը (հոկտ. 31-ին) պիտի ուղղվիս Ավետյաց երկիրը։ Իրականացան քո բոլոր հույսերը։ Իրականացան քո երազները։ Իրականացավ ներգաղթը։ Հասավ ժամը, որ դու անգամ մըն ալ խորհուրդ. Հայաստանի և հայ ժողովուրդի սրտի, մտքի ու կյանքի հետ խաղացող դավաճան դաշնակցականները ճանչնաս»[29]։ Կոչը առաջարկում էր մեկընդմիշտ երես դարձնել այդ բախտախնդիրներից և վստահորեն ընթանալ դեպի հայ աշխատավորության միակ հայրենիքը հանդիսացող Սովետական Հայաստան։

Այնուհետև կոչի հեղինակները գրում էին. «Անոնք խաղա-

[27] ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 40/113, ց. 3, գ. 496, թ. 46։

[28] Նույն տեղում։

[29] Նույն տեղում, թ. 47։



ցին քո զգացմունքներուն հետ։ Թունոտ սլաքներով խոցոտեցին սիրտդ, պղտորեցին միտքդ։

Այսօր դու ճակատ առ ճակատ կանգնած ես քեզ խաբող, քո զգացմունքները անարգող և քո կյանքի հետ խաղացող դավաճաններուն հետ։

Այսօր խոսելու կարգը քուկդ է։

Դավաճանը պետք է դիմակազերծ ըլլա։

Դավաճանը պետք է հաշիվ տա իր ըսածներուն ու գրածներուն։

Դու՝ հայ ժողովուրդ, ընական հատկություններդ արժեցուր։

Դու ցույց տուր, որ քո սեփական դատողությունը ունիս։

Ցույց տուր, որ իրականությունը կտեսնես։ Ցույց տուր, որ պատրաստ ես ամեն ճակատի վրա հարվածելու քո հայրենիքի դավաճանները։

Ներգաղթի իրականացումը անգամ մըն ալ երևան հանեց «մարտական կուսակցության» բարոյական սնանկությունը։

Անկցի՛ն ուրեմն օտար զրպարտիչները։

Անկցի՛ն դավաճան դաշնակցականները։

Կեցցե՛ Խորհուրդ. Հայաստանը և հայ ժողովուրդի միակ պաշտպան հայ կառավարությունը»[30]։

Ահա այսպես էր մտածում ու գործում գաղութահայ աշխատավորության ճնշող մեծամասնությունը։ Եվ սովետական կառավարությունը, չնայելով ոչ մի խոչընդոտի, զրպարտության ու պրովոկացիայի, ժողովրդական տնտեսության մեջ ձեռք բերված հաջողություններին զուգընթաց իրականացնում էր սփյուռքահայ աշխատավորների հայրենադարձությունը։

* * *

Զանգվածային նոր հայրենադարձություն կազմակերպելու մասին սովետական կառավարության 1945 թ. նոյեմբերի 21-ի որոշումը, ինչպես իր տեղում տեսանք, համընդհանուր խանդավառությամբ ընդունվեց սփյուռքահայության բոլոր խավերում։ Սփյուռքահայ աշխատավորները, առաջադիմական բոլոր կազմակերպությունները ու խմբավորումները, առաջնորդվելով հայ ժողովրդի վերամիավորման հայրենասիրական գաղափա-

[30] Նույն տեղում։



21—1181

րով, իրենց ջանքերն ուղղեցին այդ մեծ գործի իրականացմանը։ Սակայն հայրենիքում ազգահավաքման այդ հայրենասիրական շարժման հանդեպ դարձյալ միանգամայն դատապարտելի ու թշնամական դիրք բռնեց դաշնակցությունը։ Այդ պատճառով էլ, որպեսզի հաջողությամբ իրականացվեր հայրենադարձությունը, անհրաժեշտ էր հետևողականորեն մերկացնել դաշնակների բոլոր դավերը, համախմբել առաջադիմական բոլոր ուժերը՝ ստեղծելով նրանց ընդհանուր, միասնական ճակատ։

Սփյուռքահայ առաջադիմական ուժերի միասնական ճակատները սկսել էին ձևավորվել դեռևս երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին և շատ գաղթօջախներում իրենց մեջ միավորում էին կոմունիստներին, հնչակյաններին, ռամկավարներին և երիտասարդական միությունների անդամներին։ Դրանք իրենց առջև նպատակ էին դնում հնարավոր բոլոր միջոցներով պաշտպանել տարագիր հայության իրավունքները և աշխատել հասնել նրանց վերաբնակեցմանը Թուրքիայի կողմից ապօրինաբար զավթված հայկական հողերի վրա, դրանք կցելով Սովետական Հայաստանին։ Նշված պլատֆորմի վրա կանգնած հայկական ազգային ճակատներ կամ ազգային խորհուրդներ էին կազմակերպված սփյուռքահայ գրեթե բոլոր գաղթօջախներում՝ ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Սիրիայում, Լիբանանում, Հունաստանում, Բուլղարիայում, Ռումինիայում, Եգիպտոսում, Պաղեստինում, Կիպրոսում, Իրանում և այլուր։

Սփյուռքահայ առաջադիմական ուժերի համախմբման ճանապարհին կարևոր քայլ հանդիսացավ 1947 թ. ապրիլի 30-ից մայիսի 4-ը Նյու Յորքում տեղի ունեցած Հայկական համաշխարհային կոնգրեսը, որին մասնակցում էին հայկական 22 գաղթօջախների 715 աշխարհիկ և հոգևոր պատգամավորներ, որոնք ներկայացնում էին տարբեր քաղաքական կուսակցություններ ու հոսանքներ[31]: Կոնգրեսի հրավիրման կապակցությամբ հրատարակված պաշտոնական կոչում ասված էր. «Վերածնվող մայր հայրենիքի վերելքին լավագույն չափով օգնելու և արտասահմանի հայոց բարօրության, ներգաղթի և հողային արդար իրավունքներու վերստացումին օգտին կատարված աշխատանքները ներդաշնակելու և համադրելու համար Ամերի-

[31] Տե՛ս «Եփրատ», օրաթերթ, Հալեպ, 4 օգոստոսի, 1947 թ., №3006։



կահայ ազգային խորհուրդս նախաձեռնած է համաշխարհային հայկական քոնկրես մը գումարել»[32]:

Կոնգրեսի բացումը հեռագրերով շնորհավորեցին ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահությունը, ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը, ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի նախագահությունը, Ամենայն հայոց կաթողիկոսը և այլք։

Սփյուռքահայության ներկայացուցիչների այդ բազմամարդ համաժողովը միահամուռ հավանություն տվեց հայրենադարձության իրականացմանը և որոշեց նրա օգտին անցկացնել հանգանակություն՝ կարիքավոր ներգաղթող հայրենակիցներին օգնելու համար[33]:

Համաշխարհային հայկական կոնգրեսի ընդունած որոշումները մի անգամ ևս հաստատեցին այն փաստը, որ սփյուռքահայության հիմնական զանգվածը անվերապահորեն պաշտպանում է հայրենադարձության գաղափարը, այն համարելով արտասահմանի հայությանը ապազգայնացումից փրկելու ամենաէական ու կարևոր ուղին։

Ետպատերազմյան զանգվածային հայրենադարձությունը լուրջ քննություն հանդիսացավ սփյուռքահայ բոլոր հոսանքների ու խմբավորումների համար, հատկապես քաղաքական կուսակցությունների համար։

Սփյուռքահայ զանգվածները, անկախ իրենց դասակարգային ու կուսակցական պատկանելիությունից, համատարած կերպով ձգտում էին անվերապահորեն ներգաղթել Սովետական Հայաստան։ Այդ հանգամանքը կհանգեցներ այն բանին, որ ի վերջո լուծարքի կենթարկվեին սփյուռքահայ քաղաքական կուսակցությունները։

Հնչակյան և ռամկավար ազատական կուսակցությունները այդ հարցում ընտրեցին միանգամայն ճիշտ ուղեգիծ՝ իրենց անդամներին թույլատրելով դուրս գալ կուսակցությունից և մեկնել հայրենիք։ Ներգաղթի կազմակերպման հենց սկզբից ռամկավար ազատական և հնչակյան կուսակցությունները հանդես եկան պաշտոնական հայտարարություններով, որոնցում ողջունելով ներգաղթը, իրենց անդամներին թույլատրում էին

[32] «Նոր Արաքս», շաբաթաթերթ, Նիկոզիա, 8 մարտի, 1947 թ., № 10—119։

[33] Տե՛ս «Նոր օր», եռօրյա թերթ, Ֆրեզնո, 16 մայիսի, 1947 թ., № 38։

ազատորեն դուրս գալու կուսակցությունից և մեկնելու հայրենիք։ Օրինակ՝ ռամկավարների Հալեպի կոմիտեի հայտարարության մեջ ասված էր. «Ռամկավար ազատական կուսակցության տեղական կոմիտեն այսու կհայտարարե, թե՝ իրենց դիմումներուն ընթացք տալով և համաձայն կուսակցությանս որոշման զերծ կկացուցանե իրենց կուսակցական երդումեն և պարտավորություններեն այն բոլոր ներգաղթող ընկերները՝ որոնք Սովետական Հայաստան մեկնեցան կամ կմեկնին»[34]։ Նման հայտարարություններով հանդես եկան ռամկավար ազատական և հնչակյան կուսակցությունների նաև մյուս տեղական կոմիտեները։ Տեսնելով ներգաղթի նկատմամբ ռամկավարների ու հնչակյանների այս միանգամայն դրական հայրենասիրական վարքագիծը և դաշնակցական կուսակցության ղեկավարության թշնամական դիրքորոշումը, շատ շարքային դաշնակցականներ սկսեցին զանգվածաբար հրաժարվել կուսակցությունից և նույնպես արձանագրվեցին հայրենիք մեկնելու համար։ Իրանում, Լիբանանում, Սիրիայում և այլուր այդ օրերի սփյուռքահայ մամուլը լի է շարքային դաշնակցականների և դաշնակցության ազդեցության տակ գտնվող ՀՄԸՄ անդամ երիտասարդների անհատական ու խմբակային բազմաթիվ հրաժարականներով։ Ահա թե ինչ էր գրում այդ մասին շարքային դաշնակցական Եսայի Բարիկյանը. «1940-են ի վեր Հ. Հ. դաշնակցության շարքային անդամ, հրապարակով կհրաժարիմ ու բոլոր կապերս կխզեմ կուսակցութենես, որ չի քաշվիր ազգահավաքումի ամենեն կենսական որոշումը տվող և զայն ներգաղթով գործադրող մեր թանկագին հայրենիքին՝ Սովետական Հայաստանին դեմ գործելե։ Իբրև կիլիկեցի հայ, տեսնելե հետո տառապանքի բոլոր տեսակները, չեմ կրնար միատեղ քալել դաշնակ ընկերներու հետ, որոնք հայրենիքի դռներուն լայնորեն բացվիլը տեսնելե հետո իսկ կ՚ուզեն զայն գոցել Հայաստանի կարոտովն այրվող ինծի պես պանդուխտ հայորդիներուն։ Ո՛չ, իր մայր հայրենիքին ուրացող դաշնակ շարքերուն մեջ չեմ կրնար մնալ»[35]։

Դաշնակցության ղեկավարության հայրենադավ քաղաքականության դեմ հայրենասիրական ընդվզումի կոլեկտիվ ելույթով հանդես եկան դաշնակցության ենթակայության տակ գտնվող ՀՄԸՄ-ի Հալեպի մասնաճյուղի 46 մարզիկներ ու սկաուտներ, մամուլում հրապարակելով հետևյալ հայտարարությունը. «Ստորագրյալներս, մարզիկ կամ սկաուտ անդամներ ՀՄԸՄ-ի, ներկա գրությամբ կուզանք ներկայացնել մեր հավաքական հրաժարականը, տրված ըլլալով, որ ՀՄԸՄ-ի հիմնական նպատակները այլափոխված են ներկա ղեկավարներու հայրենադավ կուսակցական հաշիվներու հետևանքով։

Մենք, ըլլալով հայրենասեր և գիտակից զավակները բազմաչարչար ժողովրդի մը, ՀՄԸՄ-ի միջոցով կկարծեինք ծառայել անոր ֆիզիկական, բարոյական և ազգային վերելքին, ինչպես նաև մեր պանծալի հայրենիքի՝ Սովետական Հայաստանի հառաջադիմության։

Բայց ներգաղթի այս սրբազան պահուն, երբ սփյուռքի վտարանդի մեր բոլոր եղբայրները տոգորված են հայրենակարոտ ազնիվ զգացումներով, ներելի պիտի չըլլար որևէ պարկեշտ հայու համար, կամա, ակամա մեղսակցիլ ափ մը համառ և արկածախնդիր ղեկավարներու հայրենադավ քաղաքականության, որմե տուժողը կ՚ըլլա մեր ժողովուրդն ու հայրենիքը։

Արդ, մեր հավաքական հրաժարականը ներկայացնելով, մենք այն խոր հավատքը ունինք, թե կկատարենք ազգային և հարազատ ՀՄԸՄ-ականի մեր լավագույն պարտականությունները, անշեղորեն շարունակելու և իրագործելու համար մեր սրբազան ուխտը, որ է—ծառայել հայրենիքին...»[36]։

Եվ այսպես, ամեն օր տասնյակներով մարդիկ հրաժարվում էին դաշնակցությունից ու նրա ազդեցության տակ եղած միություններից, դատապարտելով այդ կուսակցության հակահայաստանյան և հականերգաղթյան ազգակործան ուղղությունը։

Ռամկավար ազատական կուսակցությունը գտնում էր, որ հայրենադարձությունը բնավ պատահական երևույթ չէ, այլ հայրենի երկրում հաստատված նոր վարչակարգի հետապնդած սկզբունքային քաղաքականությունն է։

«Այն պահուն,— գրում էր Բեյրութում հրատարակվող «Ժողովուրդի ձայն» թերթը,— երբ մենք հազիվ կկարողանայինք թոթվել Հայաստանի մը գոյության մասին, թեև սկսած էինք

[34] «Ժողովուրդի ձայն», օրաթերթ, Բեյրութ, 14 հուլիսի, 1946 թ., № 1159։
[35] «Եփրատ», 26 հոկտեմբերի, 1946 թ., № 2770։
[36] Նույն տեղում, 29 հունիսի, 1946 թ., № 2669։

միշտ հավատով գիտել գալ և հոն տեսնել մեր փրկությունը, Սովետական Հայաստանի կառավարությունը իր առաջին մտահոգություններեն մեկը կնկատե սփյուռքի բեկորներու հայրենադարձը և հայ ժողովուրդի միախմբումը իր հայրենի երկրին մեջ»[37]:

Ռամկավար ազատական կուսակցության պաշտոնական օրգան «Միություն» թերթը, բարձր գնահատելով տարագիր հայության համար ներգաղթի փրկարար դերը, 1946 թ. նոյեմբերյան համարներից մեկում գրում էր, որ «...ան պայմանավորվեց այն վիթխարի նվաճումներով, որ Սովետ Հայաստանը ձեռք բերեց վերջին 25 տարիների ընթացքում: **Արտասահմանի հայության համար ներգաղթը այն է, ինչ որ նոյեմբերի 29-ը եղավ երկրի հայության համար**»[38] (ընդգծումը մերն է.—Հ. Մ.):

Ռամկավար ազատական կուսակցությունը ձուլումից ու անհետացումից սփյուռքահայության փրկությունը պայմանավորում էր երկու կարևոր գործոններով՝ Թուրքական լծից Արևմըտյան Հայաստանի ազատագրումով ու նրա Սովետական Հայաստանին կցումով և սփյուռքահայերի հայրենիք ներգաղթով: Ավելին. ռամկավարները ներգաղթի մեջ էին տեսնում հենց արևմտահայկական հողերը Թուրքիայից պահանջելու միջոցը, այդ խնդրի լուծումը անպայմանորեն կապելով Սովետական Միության հետ:

Ռամկավար ազատական կուսակցության ութերորդ համագումարը, որը տեղի ունեցավ 1947 թ. փետրվարին, հատուկ հուշագրով դիմեց ՄԱԿ-ին, Անգլիայի, ԱՄՆ-ի և ՍՍՀՄ կառավարություններին, որտեղ ասված էր. «Ժամանակն է նմանապես, որ ի վերջո ըլլա արդարություն Հայաստանի և հայերուն, վերջ տալու համար մեկուն ամենափշոտ հարցերեն, որոնք մեկ դարե ի վեր ծանրորեն ճնշված են միջազգային քաղաքականության վրա և խորապես ցնցած քաղաքակիրթ մարդկության խիղճը: Այս արդարությունը կպահանջե. Ա. Փրկել, միանգամընդմիշտ, թրքական տիրապետութենեն Թրքահայաստանի նահանգները: Բ. Կցել զանոնք Հայ Սովետ Հանրապետության..., բան մը, որուն մասին համաձայն են Հանրապետության ծոցին մեջ

---

[37] «Ժողովուրդի ձայն», 27 փետրվարի, 1947 թ., № 1071:

[38] «Միություն», օրաթերթ, Հայֆա, 29 նոյեմբերի, 1946 թ., № 64:



ապրող և թե բովանդակ աշխարհի մեջ ցրված բոլոր հայերը»[39]:

Ահա թե ինչու հայրենադարձության վերսկսման հենց առաջին օրերից ռամկավարական կուսակցությունը ընդգծեց այդ երևույթի պատմական բախտորոշ նշանակությունը և իր գործուն մասնակցությունը բերեց նրա կազմակերպման աշխատանքներին:

«Ներկայիս յուրաքանչյուր հայու համար չկա ավելի պատվավոր և հայրենասիրական գործ, քան հայրենիք դարձը: Բոլոր հայերը, առանց դավանական և հատվածական խտրության, առանց անսալու ձախեն-աջեն եկող փրոփագանդներուն, մանավանդ դաշնակ պարագլուխներու տարածած սուտ զրույցներուն, պետք է արձանագրվին»[40],— գրում էր «Ժողովուրդի ձայնը»:

Հայրենադարձությանը խանգարելու ուղղությամբ դաշնակցության գործունեությունը ռամկավարները իրավացիորեն որակեցին որպես մեծագույն ոճրագործություն հայ ժողովրդի կենսական շահերի դեմ:

1946—1948 թթ. զանգվածային հայրենադարձության ժամանակ ռամկավարների հետ միևնույն դիրքերում կանգնեցին հնչակյանները: Նրանք նույնպես հանդես եկան Սովետական Հայաստանի պաշտպանությամբ, ներգաղթին ամեն կերպ աջակցելու նախաձեռնությամբ: Հնչակյանները ևս այն կարծիքին էին, որ սփյուռքահայության փրկությունը ներգաղթի մեջ է, նրա ապագան կապված է Սովետական Հայաստանի հետ: Հնչակյան կուսակցությունը բոլոր միջոցներով սատարում էր ներգաղթի իրականացմանը, միաժամանակ հետևողականորեն մերկացնում դրա դեմ դաշնակցության ծավալած գործունեությունը: Հնչակյան կուսակցության առաջատար օրգանները պրոպագանդում էին այն միտքը, թե որքան մեծ լինի Հայաստանում ապրող հայոց թիվը, այնքան ավելի կզորեղանա գաղութների կապը հայրենիքի հետ, այնքան ավելի արդյունավետ կլինի նաև սփյուռքում մնացած հայության՝ պայքարը օտարացման ու ձուլման դեմ, ուստի անպայման պետք է ներգաղթել Սովետական Հայաստան, որտեղ խարսխված է հայ ժողովրդի ապագան: Հնչակյանները ևս ներգաղթի մեջ էին տեսնում հայկա-

---

[39] «Եփրատ», 17 մարտի, 1947 թ., № 2888:

[40] «Ժողովուրդի ձայն», 20 հունվարի, 1946 թ., № 1046:

կան բռնագրավված հողերի ազատագրման բանալին, միասնության կոչ անելով սփյուռքահայ բոլոր հասարակական-քաղաքական ուժերին[41]։

Ներգաղթը ողջունեցին նաև սփյուռքի մյուս բոլոր առաջադիմական կազմակերպությունները և հատկապես հայրենակցական միությունները։ Ներգաղթի սկսման կապակցությամբ Վասպուրականցիների հայրենակցական միության կենտրոնական վարչությունը հրապարակեց մի կոչ՝ ուղղված սփյուռքի բոլոր վասպուրականցիներին, որտեղ գրում էր. «Մեր արդի Սովետական մայր Հայաստանը... այժմ դռները լայն բացած է անխտիր, վայրավատի իր բոլոր զավակներու առջև։

Դեպի՛ հայրենիք, դեպի՛ շինարարություն, դեպի՛ ազգային հզորացման ու փառքի ուղին. այս է համայն ազգասեր ու հայրենասեր հայության և ևս առավել վասպուրականցի ժողովուրդի կարգախոսը։

...Արդ, ժամը հնչած է, որ Վասպուրական միությունը կոչ ուղղե սփյուռքի համայն վասպուրականցիներուն, որ անոնք պատրաստվին վերադառնալ դեպի իրենց հարազատ ու հոյակապ մայր հայրենիքը, դեպի շինարարական աշխատանք ու դեպի ազգային համախմբում, խորհր. Հայաստանի կառավարության անմիջական հսկողության ու պաշտպանության տակ և անոր օգնությամբ։ Վստահ եղեք, որ միությունս պատրաստ է ձեզ աջակցելու, որ միջոցներ ունենաք դեպի մայր հայրենիք ներգաղթելու։

Վասպուրական միությունը, որպես գործնական հայրենասեր կազմակերպություն, իր նպատակը ընտրած է օգնել իր հայրենակիցներուն, որ անոնք օր առաջ թոթափեն գաղթային իրենց անկայուն և անապահով վիճակը և ներգաղթի ու շինարար աշխատանքի փարին իրենց մայր հայրենիքի մեջ, իրենց նախահարց աշխարհը։

Ո՛ն դեպի մեր տեսիլքի երկիրը, դեպի մեր մեծ հայրենիք Սովետական Հայաստան, դեպի նոր կյանք և դեպի ազգային համախմբում մայր հողի վրա»[42]։ Նույնպիսի հայտարարություններով հանդես եկան նաև Տարոն-Տուրուբերանի, Ճնպել-Մուսացիների և այլ հայրենակցական միությունները[43]։

[41] Տե՛ս «Երիտասարդ Հայաստան», 26 նոյեմբերի, 1946 թ., № 59 և «Արարատ», 8 փետրվարի, 1947 թ., № 1802։

[42] «Հայաստանի կոչնակ», 27 հուլիսի, 1946 թ., № 30, էջ 717։



Փարիզում հրատարակվող «Արևմուտք» ազգային և գրական անկախ շաբաթաթերթը, ողջունելով ներգաղթը, իր խմբագրականում գրում էր. «Այսօր, վաղը և հավիտյան ապատանը՝ այլևս Հայաստանն է։ Այսօր, վաղը և մի՛շտ այլևս մեր ազգային քաղաքականության առանցքը, միա՛կ առանցքը, պետք է կազմե միակ գործողություն մը—գումարումը»[44], այսինքն՝ ի մի հավաքվելը հայրենիքում։ Թերթը կոչ էր անում բոլորին իրենց ուժերը ի սպաս դնել այդ վեհ գործի իրականացմանը։

Այսպիսով, փաստորեն միայն դաշնակցությունը դեմ դուրս եկավ հայրենադարձությանը։ Իհարկե, նա սկզբնական շրջանում չէր համարձակվում բացահայտ դեմ արտահայտվել այդ ազգօգուտ գործին, որը վայելում էր սփյուռքահայ բոլոր խավերի պաշտպանությունը։ Դաշնակցությունը նույնիսկ իրեն հայտարարեց ներգաղթի «ջերմ» կողմնակից։

Ֆրանսահայ ազգային ճակատի օրգան «Ժողովուրդ» օրաթերթը հեգնանքով գրում էր, թե «Թրքահայ դատ, ներգաղթ և Հ. Հ. Դաշնակցություն կուսակցություն երրորդություն մը կկազմեն և մեկը մյուսեն կարելի չէ բաժանել, իսկ մյուս կողմեն, իր նոր սերունդներով, կապույտ խաչերով, ՀՄԸՄ-ի մեջ կուսակցականության էնթրիկներով, կջանա ներքին ճակատը պառակտել, սփյուռքի հայության միասնականությունը ջլատել...»[45]։ «Ժողովուրդը» գրում էր, որ «արտասահմանի զանգվածային ներգաղթը և հայ դատի հետապնդումը հնարավոր դարձավ միայն ու միայն մեր սովետական հայրենիքի աշխարհասասան պատերազմեն հաղթական դուրս գալովը...»[46]։

Մերկացնելով ներգաղթի նկատմամբ դաշնակցության բռնած երկդիմի վարքագիծը, Աթենքում հրատարակվող «Նոր կյանք» թերթը գրում էր. «Դաշնակցությունը խոսքով, երևութապես—իբր թե—կ'ուզե ներգաղթը։ Եվ այդ երևույթով կներկայանա հայրենասեր զանգվածներուն, անուղղակի կերպով զանոնք շփոթի մատնելու, անոնց անաղարտ հայրենասիրական զգա-

[43] Տե՛ս «Զարթոնք», 10 փետրվարի, 1946 թ., № 2731։

[44] «Արևմուտք», շաբաթաթերթ, Փարիզ, 24 նոյեմբերի, 1946 թ., № 2(89)։

[45] «Ժողովուրդ», օրաթերթ, Փարիզ, 22 ապրիլի, 1947 թ., №776։

[46] Նույն տեղում։

ցումները թունավորելու համար։ Տարբեր կարգախոսով չէր կրնար ներկայանալ արդեն։ Ի վիճակի չէ բացահայտորեն ներգաղթի դեմ ճակատ հարդարել։ Հայրենասեր ժողովուրդը այն ատեն կքարկոծե, լինչի կ'ենթարկե զինքը։

Ուրեմն, ներգաղթ կուզենք կեղծ դիմակ մըն է լոկ, ժողովուրդը խաբելու, մոլորեցնելու համար»[47]։

Եվ իսկապես, որոշ ժամանակ անց, երբ այդ տակտիկան ցանկալի արդյունք չտվեց, այլևս չհամբերելով, դաշնակցությունը բացահայտեց ներգաղթի հանդեպ իր իսկական դիրքը։ Կեղծելով ու զրպարտելով բազմահազար հայ տարագիրների նկատմամբ սովետական կառավարության մարդասիրական քաղաքականությունը, նա սկսեց բացահայտորեն հանդես գալ հայրենադարձության դեմ։

Կարծես հատուկ ազդանշանով, դաշնակցական մամուլն սկսեց չարամիտ զրպարտությունների մի իսկական հեղեղ, որը նպատակ ուներ սփյուռքահայ զանգվածներին հիասթափեցնել սովետական իրականությունից և դրանով իսկ խանգարել ներգաղթի իրականացմանը։ Մի դեպքում դաշնակները փորձում էին իրենց ևս ներգաղթի կողմնակիցներ ձևացնել, բայց վարկաբեկում էին ներգաղթն իրականացնող կազմակերպություններին ու մարդկանց, քանի որ իրենց չէին ընդգրկում այդ աշխատանքներում։ Մի այլ դեպքում՝ որոնում, գտնում էին մանրմունր թերություններ ու վրիպումներ, ուռճացնում էին դրանք՝ փորձելով մարդկանց ուշադրությունը կենտրոնացնելով դրանց վրա, դարձյալ վարկաբեկել ներգաղթի նման ազգօգուտ, հայրենասիրական շարժումը, սևացնել ազգահավաքի գործը։

1946 թ. վերջերին, երբ այդ տարվա համար նախատեսված թվից ավելի ներգաղթողներ ընդունեց Սովետական Հայաստանը և միայն ձմեռվա պայմաններում ժամանակավորապես դադարեցրեց ներգաղթը, դաշնակների Հալեպի «Արևելք» թերթը փորձեց մոլորության մեջ գցել սփյուռքահայությանը, գրելով, թե իբր այլևս ընդհանրապես ներգաղթ չի լինելու։ «...Հայ ժողովուրդը պետք է գիտենա այլևս, թե ճիշտ ամիս մը առաջ, «կոմիտե» կոչված այս մարդիկը գիտեին՝ թե այլևս մարդ պիտի չկրնան ղրկել այս տարի, որովհետև Երևանեն եկած էր ճեռագիր մը, որով կհրահանգվեր դադրեցնել աշխատանքները... և որևէ նավու չսպասել այլևս»[48]։

[47] «Նոր կյանք», 12 ապրիլի, 1946 թ., № 312։



Հայրենադարձության առաջ բերած համընդհանուր հայրենասիրական տրամադրությունները չեզոքացնելու նպատակով դաշնակցական մամուլը ամենուրեք ճգնում էր թունավորել ներգաղթողների միտքը։ Դաշնակցական պարագլուխները մի կողմից հայտարարում էին, թե իրենք դեմ չեն ներգաղթին, իսկ մյուս կողմից տարածում էին չարամիտ բամբասանքներ, թե «ռուսերը իրենց երկիրը վերաշինելու համար է, որ մեր աշխատավորները կտանին։ Ներգաղթողները Հայաստանի մեջ պիտի չմնան, Ռուսիո խորերը պիտի տարվին, Սուրիո և Լիբանանի մեջ ավելի լավ հայեր կմնանք, քան Հայաստանի մեջ, հայ ժողովուրդը մեծագույն սխալ կգործե իր տունն ու տեղը ձգել մեկնելով», թե ներգաղթի հետևանքով տնտեսապես կքայքայվեն գաղութները և գնացողների նյութական հարստությունները կլցվեն Ռուսաստան ու այս կարգի այլ բարբաջանքներ[49]։

Դեմ կանգնելով սփյուռքահայերի Սովետական Հայաստան ներգաղթելուն, միևնույն ժամանակ դաշնակները մեծ ճիգեր էին գործադրում նրանց Ավստրալիա, Հարավային Ամերիկա, Կանադա, Նոր Զելանդիա, Մադագասկար ու այլ երկրներ արտագաղթեցնելու ուղղությամբ։ Երբ հայրենադարձների առաջին քարավանները ուղևորվեցին դեպի հայրենիք, դաշնակներն սկսեցին աղբ ու վայնասուն բարձրացնել, թե գաղութներում քայքայվում է հայ կյանքը, տեղի է ունենում զարհուրելի սպանդ՝ ուղղված հայ տնտեսական կյանքի, հայ բարոյականի, ոգու և հավաքականության դեմ։ Դաշնակ պարագլուխներն այնպիսի կույր հակասովետիզմով էին լցված, որ նրանք հայրենադարձությունը որակում էին որպես «նոր ապրիլ 24», իսկ դեպի Մադագասկար, Նոր Զելանդիա կամ արևմտյան աշխարհի այլ հեռավոր անկյուններ կատարվող արտագաղթը՝ փրկություն «դրախտավայրում»։ Դաշնակցության որդեգրած այդ դավաճանական ուղեգծի իսկական էությունը ճիշտ կռահեցին սփյուռքահայ զանգվածները և անարգանքի սյունին գամեցին նման տեսակետների հեղինակներին։ Արտահայտելով սփյուռքահայ զանգվածների տրամադրությունները, հունահայ «Նոր կյանք» թեր-

[48] «Եփրատ», 6 նոյեմբերի, 1946 թ., № 2779։

[49] Տե՛ս «Ժողովուրդի ձայն», 24 հուլիսի, 1946 թ., № 1166։

թը գրում էր, որ «Անոնց (դաշնակների.— Հ. Մ.) փափաքն է հայ ժողովուրդը Հայաստանեն դուրս ոևէ տեղ համախմբված տեսնել, որպեսզի իրենց սնանկացած քաղաքական և անձնական շահերուն գործածեն» նրան[50]։

Դատապարտելով տարագիր հայության դեպի արևմտյան երկրներ արտագաղթի մղելու դաշնակների պլանները, «Հայաստանի կոչնակը» իրավացիորեն գրում էր. «Արտագաղթը հայության համար անարյուն կոտորածի մը դեր կկատարե»[51]։

Դաշնակները հայերին արևմտյան երկրներ տեղափոխելու համար ստեղծել էին «անկուսակցական» հորջորջվող մի հանձնաժողով, նրա գլուխ կանգնեցնելով Նյու Յորքի «Օմար խայամ» ճաշարանի տնօրեն, միլիոնատեր Ջորջ Մարտիկյանին և Սուրեն Սարոյանին։ Իր ազգադավ միսիան կատարելու համար միջոցներ հայթայթելու նպատակով այդ հանձնաժողովը դիմեց ՀԲԸՄ-ին, հայրենակցական միություններին ու հայ մեծահարուստներին, սակայն բոլորն էլ մերժեցին այդ կարգի առաջարկները։ Այն ժամանակ դաշնակցությունը դիմեց ԱՆՋԱ-ին («Անհայրենիք հայերի օգնության ամերիկյան ազգային կոմիտե»), որն ստեղծվել էր 1945 թ. Ջորջ Մարտիկյանի և ամերիկյան բանակի բրիգադային գեներալ Հայկ Շեքերճյանի ակտիվ մասնակցությամբ։ ԱՆՋԱ-ն անմիջական կապի մեջ էր «Գաղթականության միջազգային կոմիտեի» հետ, որը ԱՄՆ էր գաղթեցնում տարբեր երկրներից դասալիք վտարանդիներին, նպատակ ունենալով նրանց օգտագործել իմպերիալիստական շրջանների նվաճողական պլանների մեջ։ ԱՆՋԱ-ն տարիներ շարունակ կազմակերպում էր Մերձավոր արևելքի երկրներում և այլուր հաստատված հայերի արտագաղթը դեպի արևմտյան «դրախտավայրերը», որտեղ ավելի շատ պարարտ հող կար տարագիր հայության ձուլման համար, դրանով իսկ փորձելով խոչընդոտել սփյուռքահայության մայր հայրենիքում՝ Սովետական Հայաստանում կենտրոնանալու, այսինքն՝ հայրենադարձվելու գործին։

Այսպիսով, այն պահին, երբ սփյուռքահայությունը հայրենադարձության բերկրանքով ու հոգսերով էր ապրում, երբ այն դարձել էր համազգային կարևոր իրադարձություն, դաշնակ-

[50] «Նոր կյանք», 17 հոկտեմբերի, 1946 թ., № 470։

[51] «Հայաստանի կոչնակ», 16 նոյեմբերի, 1946 թ., № 46, էջ 1088։



ցական պարագլուխները, դավաճանելով ազգային շահերին, կազմակերպում էին հայերի արտագաղթ դեպի նոր ու անծանոթ երկրներ, որոնցում անխուսափելի էր նրանց ապազգայնացումն ու ձուլումը։

Դաշնակցության այդ փորձերի դեմ անկեղծ զայրույթով հանդես եկան սփյուռքահայ առաջադիմական բոլոր ուժերը, գտնելով, որ «հայը իբրև ազգ ապրելու և զարգանալու հնարավորություն ունի միմիայն սովետ եղբայրության դրոշակին տակ, այսօրվա փոքրիկ և վաղվա մեծ խորհրդային Հայաստանի մեջ»[52]։

Հնչակյան «Երիտասարդ Հայաստան» թերթը «Ներգաղթի հարցը» վերնագրով իր խմբագրականում գրում էր, որ աշխարհում ցրված բոլոր հայերը պետք է վերադառնան հայրենի երկիր, քանի որ դա է միակ փրկությունը, ուստի ազգային շահերին բացահայտ դավաճանություն է ներգաղթի դեմ պայքարելը։ «Ներգաղթը հայ ժողովուրդին համար կենսական հարց է... և այդ պատճառով՝ ավելորդ է անոր դեմ կուսակցական պայքար ստեղծել։ Ով որ մտքերը կպղտորե և պատճառ կհանդիսանա, որ թրքական անարգ բռնակալության և ջարդերուն հետևանքով պանդխտացած հայ բեկորները իրենց երկիրը չվերադառնան, ան հայության մեծագույն թշնամին է։

... Անիկա (Ներգաղթը.— Հ. Մ.) օտարության մեջ տառապող, հյուծվող ու մաշող հայ գաղթականի համար նոր կյանքի և վերադարթնումի շրջանն է։

... Ով որ ներգաղթը կհարվածե, ուղղակի կամ անուղղակի կերպով կհարվածե նաև հայ ժողովուրդը։ Ով որ դեմ է ներգաղթին, դեմ է նաև ազգահավաքման սրբազան գործին։

Պատմական անհերքելի իրողություն է, որ ժողովուրդ մը իր սեփական հայրենիքին մեջ միայն կրնա հարատևորեն աճիլ ու բարգավաճիլ։ Օտար երկիրներուն մեջ գաղթականի կյանք ապրող ժողովուրդներ, ուշ կամ կանուխ դատապարտված են սպիտակ ջարդի մանգաղով հնձվելու և ոչնչանալու։

... Դժբախտաբար սակայն, սփյուռքի մեջ բույն դրած է դաշնակցություն կոչված խմբակ մը, որ կուսակցական կույր ատելությունե և մենատիրական սնապարծ հավակնություններե մղված, ամենազազրելի և ամենաստորին միջոցներով պայքար

[52] Նույն տեղում, 28 սեպտեմբերի, 1946 թ., № 39, էջ 945։

կմղե ներգաղթի շարժման դեմ և ամեն անգամ, որ ներգաղթը վերսկսելու լուրեր տարածվեին, իրար կանցնի և գայլերու ոհմակին հատուկ ոռնոցներ կարձակե»[53]։

Դաշնակների կարծիքով իսկական և լավ հայերը նրանք էին, ովքեր չէին ներգաղթում Սովետական Հայաստան։ Դաշնակցական «Ազդակը» նույնիսկ աղիողորմ արցունք էր թափում այն «խաբված» հայերի համար, ովքեր արձանագրվել էին հայրենիք մեկնելու։ «Ազդակը» փորձում էր հավատացնել, որ «ներգաղթի ամեն մի փորձ դատապարտված է անիրագործելի բաղձանք մը մնալու», իսկ եթե, այնուամենայնիվ, այն տեղի ունենա, ապա ներգաղթողները Սովետական Հայաստանում պիտի կորցնեն իրենց աղոթելու ազատությունը։

Ներգաղթի իրականացումը կապելով անպայման տերիտորիալ պահանջների բավարարման հետ, դաշնակները հայտարարում էին. «Պետք է ներգաղթել, բայց քանի որ հողերը (Արևմտյան Հայաստանի.— Հ. Մ.) չեն առնված, ապա ներգաղթել հնարավոր չէ»[54]։ Այդ առթիվ շատ ավելի հեռուն գնացող առաջարկ էր անում դաշնակցական նախկին կառավարության ռազմական նախարար Ռուբեն Տեր-Մինասյանը։ Ռուբեն փաշան հայտարարում էր, որ ներկա Հայաստանը փոքր է, ի վիճակի չէ նոր բնակիչներ ընդունելու, ուստի պետք է Սովետական Հայաստանը «բաժանվի Սովետական Միութենեն, որպեսզի ավելի դյուրին ըլլա «անկախ Հայաստանի» մը հիման վրա հայկական բռնագրավված հողերը պահանջել։ Անիկա կըսե թե անգլո-սաքսոնները այժմու Հայաստանը Սովետական Միության մեկ մաս նկատելով, պիտի առարկեն՝ թե անկախ Հայաստան մը գոյություն չունի և հետևաբար կարելի չէ Հայաստանի հողեր տալու մասին հարց հարուցանել։ Անկախ և միացյալ Հայաստանը, իբրև մի օղակը Միջին արևելքի՝ ավելի հնարավորություններ ունի իրագործելու... սահմաններուն ընդարձակումը»[55]։ Ահա թե ինչ էին ուզում դաշնակցական նախկին նախարարները. նախ և առաջ Հայաստանն անջատել Սովետական Միությունից, այն հռչակել «անկախ» և ապա, իր վրա հրավիրելով

[53] «Երիտասարդ Հայաստան», 31 օգոստոսի, 1954 թ., № 30։

[54] «Ժողովուրդի ձայն», 11 դեկտեմբերի, 1946 թ., № 1264։

[55] «Ժողովուրդի ձայն», 15 դեկտեմբերի, 1946 թ., № 1267 և «Ժողովուրդ», 27 փետրվարի, 1947 թ., № 731։



անգլո-սաքսերի ուշադրությունը, նրանց օրհնությամբ տիրանալ հայկական հողերին, ուր կարելի կլինի մտածել նաև ներգաղթի մասին։ Սակայն այդ առաջարկները վճռականորեն մերժվեցին հենց սփյուռքահայ առաջադիմական շրջանների կողմից, որոնք վաղուց էին դադարել արևմտյան տերությունների օգնության հետ կապված դաշնակցության հորինած հեքիաթներին հավատալուց։

Դաշնակցական մեկ այլ պարագլուխ՝ Ս. Վրացյանը, ներգաղթը համարում էր անիրագործելի այն պատճառաբանությամբ, թե իբր սփյուռքահայերը Հայաստանի հայերի հետ չեն կարող հաշտ ապրել, որովհետև նրանք ներկայացնում են տարբեր աշխարհներ[56]։ Ըստ Ս. Վրացյանի նույնպես ներգաղթը հնարավոր չէր առանց «ազատ ու անկախ» Հայաստանի ստեղծման։ Առանց թաքցնելու իրենց փորացավը, Ս. Վրացյանն ու նրա համախոհները հայտարարում էին, որ իրենց նպատակն է Հայաստանի անջատումը Սովետական Միությունից, որից հետո միայն կարելի է մտածել ներգաղթի մասին[57]։ Առաջ քաշելով «անկախ ու ազատ» Հայաստանի մաշված գաղափարը, որը միայն, ըստ դաշնակների, հնարավորություն կստեղծեր ներգաղթի կազմակերպման համար, նրանք նպատակ ունեին սփյուռքահայ զանգվածներին տանել իրենց ետևից։ Սակայն, բարեբախտաբար, սփյուռքահայությունը այլևս չէր հավատում դաշնակների և ոչ մի խոսքին։ Որքան մեծանում էր սփյուռքահայության համակրանքը Սովետական Հայաստանի և հայրենադարձության նկատմամբ, այնքան ավելի կատաղությամբ էին լցվում դաշնակները, դիմելով բացահայտ շանտաժի։ Այսպես, օրինակ, Թավրիզի շրջանի Գյուրջի գյուղի գյուղացիների անունից դաշնակները 1946 թ. ամռանը կեղծ հեռագիր հղեցին Իրանի վարչապետ Ղավամ Սալթանեին և սովետական դեսպանությանը այն մասին, որ չեն ուզում ներգաղթել Սովետական Միություն։ «Իրանահայերը,— ասված էր հեռագրում,— չեն փափագի Հայաստան երթալ, քանի որ իրենք Իրան ծնած են և կսիրեն զայն»[58]։

[56] Տե՛ս Հր. Սիմոնյան, Դաշնակցությունը հակահեղափոխության ծառայության մեջ, էջ 84։

[57] Տե՛ս «Ժողովուրդ», 29 մարտի, 1947 թ., № 757։

[58] Տե՛ս «Վերածնունդ», 16 հուլիսի, 1946 թ., № 54։

Երբ հիշյալ գյուղի գյուղացիներին հայտնի դարձավ դաշնակների այդ խարդախությունը, նրանք սովետական դեսպանին դիմեցին հետևյալ հայտարարությամբ. «Խոր ցավով իմացանք, որ չորս հոգու ստորագրությամբ գրգռիչ հեռագրեր ուղարկված են վարչապետին և սովետ դեսպանատուն։ Մենք բոլորս սրտանց հաղորդում ենք, որ վաղուց երազել ենք ներգաղթել դեպի մայր հայրենիք։ Մենք ամբողջ գյուղով դիմել ենք ներգաղթի կոմիտեին, առաջին հերթին և մեր ծախսերով ճանապարհվելու Հայաստան։ Մենք բոլորս համատացած ենք, որ մեզ չեք մերժի Սովետական Հայաստան ներգաղթելու»[59]։

Դաշնակները ներգաղթի դեմ ծավալած իրենց կամպանիայում դիմում էին ամեն տեսակ ստի ու ստորությունների։ Ահա այդ մասին վկայող մի երկու փաստ՝ Դամասկոսում դաշնակցական էննիկ Արթին Գաբըլյանը իր շեֆերի դրդումով մի քանի անգամ բողոքագրեր ուղարկեց ոստիկանատուն, թե իբր իրեն սպառնում են և իր կամքին հակառակ ստիպում ներգաղթել Սովետական Հայաստան։ «Թաղին կոմունիստները,— գրում էր նա,— ամեն օր մեր տան վրա կհարձակվին և կստիպեն, որ Հայաստան երթանք։ Ես չեմ երթար. խալամ կըլլամ, թուրք կըլլամ, չեմ երթար»[60]։

Լիբանանի պառլամենտի անդամ, դաշնակցական Հայրապետյանը ներգաղթի առնչությամբ պատասխանելով թուրք լրագրողի հարցերին, հայտարարել է. «Մեր (իմա՝ դաշնակցականների— Հ. Մ.) և ձեր միջև տարբերություն չկա։ Ես իմ տանս մեջ թուրքերեն կխոսիմ. ինչպես բոլոր դաշնակցականները, նույնպես ես կնախընտրենք Թուրքիա երթալ, քան թե Հայաստան»[61]։

Շուտով դաշնակները զրպարտություններից ու սպառնալիքներից անցան ավելի վճռական գործողությունների, մինչև իսկ դիմեցին տեռորիստական ակտերի։ 1945 թ. նոյեմբերի սկզբներին Բեյրութում նրանք սպանեցին կոմունիստ Հարություն Կյուպենկյանին և վիրավորեցին Հակոբ Պետոյանին ու Հայկ Կարմիրյանին (Հաչի Հայկ)[62]։ 1946 թ. հունվարին, դարձ-

[59] Նույն տեղում։

[60] Տե՛ս «Արարատ», 21 սեպտեմբերի, 1946 թ., № 1554։

[61] Տե՛ս «Ժողովուրդ», 21 օգոստոսի, 1947 թ., № 875։

[62] «Ժողովուրդի ձայն», 15 նոյեմբերի, 1945 թ., № 1002։



յալ Բեյրութում, նրանք գիշերային մի շարք հարձակումներ կատարեցին հայկական թաղամասերի վրա։ Այդ առթիվ «Ժողովուրդի ձայնը» գրել է. «Հասկանալի է, թե ինչ կհետապնդեն դաշնակ պարագլուխները։ Անոնք կուզեն ներգաղթի առթիվ ստեղծված ժողովրդական խանդավառությունն արյունի մեջ խեղդել»[63]։

1946 թ. ամռանը դաշնակների հրահրումներով ցույցեր կազմակերպվեցին Բեյրութում՝ ներգաղթին աջակցող տեղական կազմակերպությունների ...

Դաշնակների կեղծ ամբաստանությունգրասենյակների առջև։ Դաշնակների կեղծ ամբաստանությունների ու մատնությունների հիման վրա լիբանանյան և սիրիական իշխանությունները ձերբակալեցին ներգաղթի տեղական կոմիտեներում աշխատող մի քանի տասնյակ երիտասարդների, որոնց մեղադրում էին նույնիսկ պետական հանցագործությունների մեջ[64]։

Վերևում նշված էննիկ Արթինի տղաները դաշունահարեցին ներգաղթելու համար արձանագրված Վարդգես Իսկանդարյանին և Եփրեմ Քեստենյանին։ Ինչպես հաղորդում էր «Ժողովուրդի ձայն» թերթը իր 1946 թ. հոկտեմբերի 1-ի համարում, մի խումբ զինված դաշնակցականներ գիշերով հարձակվել էին Պուրճ Համուտի հայկական թաղամասի վրա, ներս խուժել տները և ծեծի ենթարկել հայրենասեր հայ ծերունիներին, կրակել արձանակներից և հայհոյանքներ տեղացել ներգաղթի ու Սովետական Հայաստանի հասցեին[65]։

1947 թ. մայիսի 12-ին դաշնակները Բեյրութում սպանեցին կոմունիստ Պողոս Նաթրյանին և վիրավորեցին Միսակ Թելալյանին, մի քանի օր անց դաշունահարեցին Լիբանանի և Սիրիայի հայերի ներգաղթի կենտկոմի նախագահ կոմունիստ Հրանտ Դևեճյանին։

Միայն 1946 թ. ընթացքում դաշնակցական տեռորիստները Սիրիայում և Լիբանանում «սպանեցին և խոշտանգեցին ութ հոգի։ Կ. Բլուրի մեջ (Բեյրութի թաղամասերից.— Հ. Մ.) սպանեցին Հարություն Կյուպենկյան անունով երիտասարդը, Թրիփոլիի մեջ որբ Հակոբ Աշճյանը։ Հալեպի ներգաղթի օրերուն խոշտանգեցին «Եփրատ»-ի օգնական խմբագիր Ազատ Եափուճյա-

[63] Նույն տեղում, 20 հունվարի, 1946 թ., № 1046։

[64] Տե՛ս «Հայ մամուլ», 21 դեկտեմբերի, 1946 թ., № 50։

[65] Տե՛ս «Եփրատ», 6 նոյեմբերի, 1946 թ., № 2279։

նը և ապա գլխավոր խմբագիր Մարտիրոս Տեր-Ստեփանյանը։ Ռումբով մահափորձ մը սարքեցին տորթ. Պասմաճյանի դեմ։ Իսկ անցյալ շաբաթվա ընթացքին Պեյրությի մեջ գործեցին երկու ոճիր— մին՝ Պողոս Նաթրյանի սպանությունը և մյուսը Տեհճյանի դեմ կատարված մահափորձը»[66]։

Տեռորիստական հարձակումներ կատարվեցին նաև Թեհրանի «Վերածնունդ» թերթի խմբագիր Հայկ Գարագաշի, Կահիրեի ռամկավարական «Արև» թերթի նախկին խմբագիր Գրիգոր Հաբեկյանի և այլոց դեմ[67]։

Ներգաղթի իրականացմանը խանգարելու նպատակով դաշնակները կանգ չէին առնում ոչ մի միջոցի առջև, անգամ գործարքի մեջ էին մտել Լիբանանի պրոֆաշիստական ղովմիների կուսակցության հետ։ Վերջիններս, միացած դաշնակների հետ, «խորհուրդ» էին տալիս հայերին չմեկնել Հայաստան, որովհետև այնտեղ իբր թե սով է ու համաճարակ և ներգաղթողների համար կյանքն ուղղակի անտանելի կլինի։ Ղովմիների մամուլը նույնպես ներգաղթի դեմ խաչակրաց արշավանք էր ծավալել։

Սակայն, ինչպես ասում են՝ չկա չարիք, առանց բարիքի։ Ներգաղթի դեմ դաշնակցական ղեկավարության ծավալած պայքարը խոր հիասթափություն առաջ բերեց այդ կուսակցության շարքային անդամների մեջ, որոնցից շատերը հրապարակորեն հեռացան դաշնակցությունից։ Դաշնակցությունից հրաժարվողները միաժամանակ ցանկություն էին հայտնում վերադառնալ հայրենիք։ Միայն 1946 թ. ընթացքում Լիբանանում և Սիրիայում դաշնակցությունից հեռացավ ավելի քան 1200 մարդ[68]։ Իրանի Սալմաստի գավառի 40 գյուղերի դաշնակցության մեջ եղած գյուղացիները նույնպես զանգվածաբար հրաժարվեցին այդ կուսակցությունից՝ այն անվանելով «հակահայկական»[69]։

Ներգաղթը խանգարելու և այն կասեցնելու դաշնակների բոլոր փորձերը ձախողում կրեցին։ Ամենուրեք հակահարված տալով դաշնակներին, հայրենասիրաբար տրամադրված սփյուռքահայությունը անկասելի կերպով ձգտում էր դեպի հայրենիք։

---

66 «Ժողովուրդ», 12 հունիսի, 1947 թ., № 817։

67 Տե՛ս «Սովետական Հայաստան», ամսագիր, № 8, 1948 թ., էջ 52։

68 Տե՛ս «Ժողովուրդ», 12 հունիսի, 1947 թ., №17։

69 «Վերածնունդ», 2 սեպտեմբերի, 1946 թ., № 217։



Դրա կոնկրետ հաստատումը կարող է լինել եգիպտահայ աշխատավորների վերաբերմունքը։ Երբ 1947 թ. սեպտեմբերի վերջերին խոլերայի համաճարակի հետևանքով անորոշ ժամանակով հետաձգվեց եգիպտահայերի երկրորդ քարավանի հայրենիք մեկնումը, շատ ծանր դրություն ստեղծվեց գաղթօջախում։ Շատերն արդեն վաճառել էին իրենց տները, ազատվել աշխատանքից և բեռները կապած սպասում էին մեկնման, երբ հայտնի դարձավ խոլերայի տարածման փաստը։ Եգիպտահայ գաղթօջախի ազգային առաջադիմական կազմակերպությունները, մասնավորապես եգիպտահայ ներգաղթողների միությունը, շատ ջանքեր գործադրեցին կարիքավոր հայրենադարձներին օգնելու, նրանց վիճակը թեթևացնելու ուղղությամբ։ Այդ առթիվ իր վերաբերմունքը դրսևորեց նաև Կահիրեի դաշնակցական «Հուսաբերը»։ 1947 թ. հոկտեմբերի 30-ի «Ներգաղթի նոր կերպարանքը» վերնագրով իր խմբագրականում «Հուսաբերը» փորձեց չարախնդալ դժբախտության մեջ ընկած ներգաղթողների վրա և զրպարտել Սովետական Հայաստանին ու ներգաղթը։ Վրդովված «Հուսաբերի» այդ չարամիտ զրպարտությունից, մի մեծ խումբ ներգաղթողներ նոյեմբերի 6-ին հանդես եկան պատասխան խոսքով, որտեղ հայտարարեցին, թե իրենք բնավ կարիք չունեն «Հուսաբերի» նման «ինքնակոչ և ձրի փաստաբանի մը», որը փորձում է պաշտպանել ներգաղթողների իրավունքները։ Նրանք գրում են, որ ներգաղթի հանդեպ «Հուսաբերի» դիրքը նախապես հայտնի լինելով, պարկեշտություն կլիներ մարդկանց դժբախտության պահին գոնե լռել և ոչ թե հեգնել։ «Բայց այս պարագային անգամ մը ևս փնտրեցինք հասկանալ այն պատճառը, որ մղած էր «Հուսաբերի» խմբագրին «գթալ» մեր վրա և սիրահոժար գրիչ շարժել մեզի համար։ Գիտեինք թե հուսաբերականները հիմնովին կժխտեն այսօրվա մեր հայրենիքի գոյությունը, գիտեինք, որ կուրանան սովետական կառավարությունը, անգիտանալով անոր հասցուցած բարիքները հայ ժողովուրդին, գիտեինք, որ Հայաստան իրենց համար «Վայաստան» մըն է բռնության ու հալածանքի ու դեռ հույսեր ունեն, կերազեն «միացյալ» և «անկախ» Հայաստան մը եռագույնի հովանիին տակ։ Ուրեմն ի՞նչ կապակցություն և հետաքրքրություն կրնային ունենալ մանավանդ մեր ներգաղթողներուն նկատմամբ, երբ մենք հակառակ իրենց քարոզած «ճշմարտու-

*թյուններում» դարձյալ համարձակություն կունենանք անտեսել այդ բոլորը»*[70]:

*Հայտարարության հեղինակները այնուհետև նշում են, որ հայրենադարձության սկզբում թուրքական մամուլը նույնպես «խղճում էր» ներգաղթող «վաթանդաշներուն» և հորդորում «մի քանդեք ձեր բարեկեցիկ կյանքը, ձեր ազատությունն ու հանգիստը» և մի մեկնեցեք Սովետական Հայաստան: Թուրքական մամուլի նման վերաբերմունքի պատճառը ներգաղթի հանդեպ լիովին հասկանալի է ամեն մի հայի, բայց չէ՞ որ «Հուսաբերը» թուրքական մամուլ չէ, «...ուրեմն ի՞նչ էր իր տարբը, ինչո՞ւ իր քունը փախցուցեր է մեր հանգիստը հոգալու համար, երբ գացողները անուղղա, խաբվածներ, տգետ մոլորածներ, մինչդեռ «գիտակից» և «իրական հայրենասերները» իրենք դեռ ժամանակը հասած չէին նկատեր ներգաղթելու, որքան ատեն եռագույնը (դաշնակցական դրոշը.—Հ. Մ.) կպակասեր Արարատին գագաթեն»*[71]:

*Այնուհետև նշվում էր, որ դեպի հայրենիք «հազարներու մեկնումը կխռովե իր (դաշնակցության.— Հ. Մ.) հոգին, անհամբերության նշաններ ցույց կուտա, ...քաղաքական խաղ կտեսնե ներգաղթի գործին մեջ ու կսկսի կոկորդիլոսի արցունքով ներգաղթողներուն վրա լալ, քանի որ խոլերայով վարակված Եգիպտոսեն նավեր չեն «քարեհաճեր» տանել մեզ, կամ պարսկական կառավարությունը արգելած է հայերու ներգաղթը Իրանեն...»*[72]:

*Պատասխանի հեղինակները վճռականորեն հայտարարում են, որ ներգաղթողները, անկախ «Հուսաբերի» քարոզներից, «հանձն կառնեն ամեն զոհողություն, քանդել տուն, տեղ, գործ և բարեկեցիկ կյանք, հայրենիք վերադառնալու համար, այս զոհողությունը ինքնաբուխ է և գիտակցական, չի նմանիր կեղծ հայրենասիրության...»*[73]:

*Շարունակելով վերլուծել «Հուսաբերի» ինքնակոչ փաստաբանությունը, պատասխանի հեղինակները հայտարարում են, որ թերթի հոգսը ուրիշ է, նրա իսկական նպատակն է ընդվզեցնել ներգաղթողներին, սակայն մենք «թույլ չենք տար ներգաղթողներուս անունով խոսելու, մենք մեր ցավերը կրնանք չափել, պետք չունինք ձեր չափին, մենք մեր ընելիքները լավ գիտենք, պետք չունինք ձեր խորհուրդներուն, իսկ ձեր հոգածության՝ երբեք: Դուք մի անգամ ընդմիշտ բաժանված եք մեզմե ձեր հոգիով թե զգացումներով, հետևաբար ձեր զուրգուրանքը կնմանի կարիճի երախտագիտության, որ մեր անձնազոհությունը կվարձատրեք ձեր խայթոցով»*[74]:

*Հայտարարության հեղինակները գրում են, թե «խոլերայեն այնքան չենք վախենար և սարսափիր, որքան ձեր մեզի հանդեպ ցույց տված հետաքրքրութենեն: Մի փորձեք մեր բարոյական կորովը խաթարել, ան շատ բարձր է ու միշտ բարձր պիտի մնա, ժամանակավոր նեղություններ ոչ մեկ ազդեցություն կրնան ունենալ մեր հայրենասիրության վրա, մենք սիրով կըտանինք ու կտոկանք նույնիսկ ավելի ծանրին, որովհետև այս նեղությունները անցողակի են և ժամանակավոր:*

*Մեր երախտագիտութենեն ոչինչ կպակասի ներգաղթը ստեղծողներուն և ներգաղթին համար աշխատողներուն նկատմամբ: Մեր հոգիին վրա ճնշող ցավը այն է, որ հայության սրտին վրա անբուժելի պալար մը դարձած եք դուք և պիտի մնաք մինչև ներգաղթի ամբողջական իրականացումը»*[75]:

*Անդրադառնալով ներգաղթի դեմ դաշնակցության ծավալած գործունեությանը, Կահիրեի «Սավառնակ» շաբաթաթերթը գրում էր, թե դաշնակցական մամուլը, «որ պահ մը ցայլամի պարզամտության անձնատուր՝ առերես ներգաղթը կշտապովեր, իր կուսակցության վերջին պատգամ. ժողովի վաղորդայնին իսկ ձեռք առավ հականերգաղթի պայքարը, չար օրինակ հանդիսանալով շարքային տղերց, որպեսզի անոնք ալ պայքարին ներգաղթի դեմ, իրենց հասկցած ձևով...:*

*Այս նենգամիտ պայքարին մեկ երեսն էր անշուշտ Հալեպի «Եփրատի» խմբագրատան ու տպարանին խորտակումը, տեղվույն ներգաղթի գրասենյակին և Ս. Մ. Մ-ի ակումբին ավերումն ու կողոպուտը, որոնք ըստ ականատեսներու վկայության եղած են շարքային տղերց առաջնորդությամբ ու ցուցմունքով»: Թերթը եզրակացնում է, որ «Հ. Հ. Դաշնակցությունը*

---

70 ՀՍՍՀ ՀՍՍՃ ՊԿԱ, ֆ. 362, ց. 8, գ. 30, թ. 29—32:

71 Նույն տեղում:

72 Նույն տեղում:

73 Նույն տեղում:

74 Նույն տեղում:

75 Նույն տեղում:

անկարգապահ և քաոսային կազմակերպություն մըն է, որ կոչված է՝ ճշմարիտ պատուհաս մը դառնալու սփյուռքի հայության գլխուն»[76]:

Միանգամայն իրավացի էր ռամկավարական «Նոր օր» թերթը, երբ գրում էր. «Ներգաղթի շուրջն առաջացած պայքարը և պայքարը նրա դեմ ազգադավ ձեռնարկ մըն է և, բնականաբար, հայրենասեր հայերը իրենց ձայնը պիտի բարձրացնեին ճշմարտությունն աղաղակելով և ստերը քողազերծելով: Դրա դեմ դաշնակները դիմեցին վատերու անարգ զենքին, դաշույնին և խարազանին: Ան չէր կրնար լռեցնել ճշմարտության ձայնը, ուրեմն կփորձեր կտրել զայն աղաղակող կոկորդը»[77]:

Սփյուռքահայ առաջադիմական ուժերը անարգանքի սյունին գամեցին ներգաղթի դեմ ուղղված դաշնակների ազգադավ վարքագիծը, միահամուռ կերպով հայտարարելով, որ դաշնակները «նեխվող դիակ են, ան պետք է թաղել որքան կարելի է շուտ և ավելի խոր, որպեսզի գարշահոտությունը չթունավորի մեր մաքուր օդը»[78]:

Հայրենադարձության դեմ պատասպարտելի գործունեություն էր ծավալել նաև հայ կաթոլիկ հոգևորականության վերնախավը՝ կարդինալ Աղաջանյանի գլխավորությամբ: Այն ժամանակ, երբ հայ առաքելական եկեղեցին իր սրբազան ու առաջնահերթ պարտքը համարեց ամեն կերպ նպաստել ու աջակցել հայրենադարձության իրականացման գործին, այդ նույն ժամանակ Մերձավոր արևելքի երկրներում հայ կաթոլիկ հոգևորականության մի մասը թշնամական դիրք բռնեց նրա նկատմամբ:

1946 մայիսի 17-ին ՏԱՍՍ-ի թղթակցի հետ ունեցած զրույցում Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Զ-ն նշել է, որ էջմիածինը իր սրբազան ու առաջնահերթ պարտքն է համարում օգնել հայրենի կառավարությանը միասնական հայ ժողովրդի այն որդիների ու դուստրերի ընդունման և տեղավորման գործում, որոնք բազում տարիների ընթացքում բռնությամբ արտաքսվել են իրենց հայրենիքից:

«Սփյուռքահայերը,— ասում է կաթողիկոսը,— ձգտում են վերադառնալ Սովետական Հայաստան ոչ միայն նրա համար, որ այն հանդիսանում է իրենց հայրենիքը, այլ նաև նրա համար, որ այստեղ կան բոլոր հնարավորությունները նորմալ, երջանիկ կյանքի և վաղվա օրվա նկատմամբ վստահության»[79]:

Ահա թե ինչու Ամենայն հայոց կաթողիկոսը հատուկ շրջաբերականով ցուցում էր տվել արտասահմանյան հայկական թեմերի առաջնորդներին, որպեսզի նրանք ամեն կերպ աջակցեն ներգաղթի տեղական կոմիտեներին՝ հայրենադարձության հաջող նախապատրաստման և իրականացման գործում:

1947 թ. ապրիլի վերջերին Նյու Յորքում բացված Հայկական համաշխարհային կոնգրեսին հղած իր ողջույնի մեջ անդրադառնալով հայրենադարձությանը, Ամենայն հայոց հայրապետը գրել է. «Մեր հայրենիքի հարազատ իշխանությունը բացել է սփյուռքի տարագիր հայության առաջ հայրենիքի դռները, որով ոչ միայն ազատում է հայ ժողովրդին անխուսափելի ձուլման և ազգային դիմագրկման, օտարության մեջ հյուծվելու և անէանալու մեծ վտանգից, այլև լիակատար հնարավորություն ընձեռում թվով աճելու, ֆիզիկապես զորանալու հայրենի հողի վրա, զտենպնդված կուլտուրական ու տնտեսական մեծ հաղթանակներ տարած և վերելքի ճամբան բռնած հարազատների մերձավորությամբ, նոր զարկ ու թափ տալու հայ մշակույթի աննախընթաց զարգացման, հայ ժողովրդի բարեկեցության և ազգային հզորության ամրապնդման: Հայ ժողովրդի պարտականությունն է ամեն ինչ ստորադասել ազգահավաքման, հայրենադարձի նվիրական գաղափարի կենսագործման»[80]:

Այնուհետև կաթողիկոսը նշում էր, որ հետպատերազմյան տնտեսական վերականգնման ու զարգացման մեծագույն դըժվարությունների և բնության տարրերի՝ երաշտի պատճառած թերաբերրիության ծայրագույն պայմաններում անգամ լայնորեն բացվեցին Սովետական Հայաստանի դռները սրտաբաց ընդունելու համար անհարազատ հորիզոնների ներքո տարաբնակ, առժամապես հայրենազուրկ հայ հարազատների առաջ: Անձուկ սահմաններով և ազգաբնակչությամբ սակավաթիվ Սովետական Հայաստանը, հաղթահարելով բազում դժվարություններ, հայ-

[76] «Սավառնակ», շաբաթաթերթ, Կահիրե, 20 դեկտեմբերի, 1947 թ., № 6, տես՝ ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 362, ց. 8, գ. 53, թ. 19:

[77] «Նոր օր», եռօրյա թերթ, Ֆրեզնո, 24 հունվարի, 1947 թ., № 7:

[78] «Արևմուտք», 11 հունվարի, 1948 թ., № 10(146):



[79] ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 823, ց. 1, գ. 17, թ. 1—4:

[80] Նույն տեղում, գ. 4, թ. 7—11:

րենի նոր օջախներ է վառում բազմահազար աստանդական հայերի համար։ Բնաշխարհի հայությունը անձնազոհորեն իրեն նեղ արեց, բայց հարազատներին տեղ արեց։ «Անհավատալի հրաշագործություն է,— ասում է կաթողիկոսը լրագրողների հետ ունեցած զրույցի ժամանակ,— ամենակարճ ժամանակամիջոցում հաղթահարել անհաղթահարելին և հայրենատես ու հայրենաբնակ դարձնել հայրենադարձների բազմահազար բազմությունը։ Անհավատալի հրաշագործություն է թվում տեսնել և համոզվել, որ պես-պես երկրներից եկած, տարամերժ կարգերում սնված, շահագիտական մթնոլորտում դաստիարակված հայրենադարձ ժողովուրդը՝ առասպելորեն կարճ ժամանակում հաղթահարեց հասարակական կենցաղի փոխանցման դժվարությունները և հարազատացավ սովետական իրավակարգի, սոցիալիստական հանրակենցաղի պայմաններին։

Հոգեզմայլ է սփյուռքի պատմական հայրենադարձը, հոգեզըմայլ հարությունն է հայ տարագրության, խոշորագույն կռվանը հայ ազգահավաքի և հարահոս աղբյուրը հայ ժողովրդի հոգևոր միաձուլման և հայ հայրենիքի, հայրենական պետության հզորացման»[81]։

Կաթողիկոսը ուղղակի հայտարարում է, որ ով բացահայտ թե գաղտնի դավեր է լարում հայրենադարձության դեմ, նա կամա թե ակամա դուրս է մնում հայ ժողովրդի ազգային միասնությունից, դառնում է հայ ժողովրդի ջարդարարների զինակիցը։ Նա կոչ է անում, ասելով. «Հայ մարդու սրբազան պարտականությունն է՝ վառ, անշեջ պահել հայրենադարձի վեհ գաղափարը հայ ժողովրդի մեջ, զորավիգ լինել ազգահավաքման հայրենասիրական մեծ գործին, գուրգուրել, պահել ու ծավալել համազգային խանդավառությունը և միաժամանակ ապահովել ու երաշխավորել հայրենադարձի ծավալման տնտեսական, քաղաքական և բարոյական բոլոր կռվանները։ Հայ մարդը դատապարտված չէ մշտենջենապես մնալ «հայ մատլող» հայրենազուրկի անպատվաբեր վիճակում։

Հայը՝ հերոսամարտիկ զավակների սրբազան արյամբ և աշխատավոր զավակների ազնիվ քրտինքով սրբագործված և արգավանդյալ հայրենիք ունի արդեն։

[81] Նույն տեղում։



Հայրենադարձը հայրենասիրության ուղիղ և արդար ճամբան է հանդիսանում»[82]։

Այսպիսին էր հայ առաքելական եկեղեցու դիրքը հայրենադարձության նկատմամբ։ Մինչդեռ տրամագծորեն դրան հակառակ վերաբերմունք ուներ հայ կաթոլիկների պատրիարք, Մերձավոր և Միջին արևելքի հռոմեադավան եկեղեցիների պետ, կարդինալ Աղաջանյանը, որը հայ կաթոլիկ համայնքին ուղղված իր 1946 թ. հուլիսի 6-ի «Թուղթ հովվական» կոնդակում, զրպարտելով Սովետական Հայաստանը, ճգնում էր համոզել հավատացյալներին չներգաղթել հայրենիք, քանի որ այնտեղ կրոնը ազատ չէ։

Իր կարդինալության այդ անդրանիկ կոնդակում հայր Աղաջանյանը շոշափում էր այնպիսի խնդիրներ, որոնք կրոնական շրջանակների մեջ չէին մտնում։ Կարդինալ Աղաջանյանի կոնդակը թեպետ ըստ բովանդակության երկու մասից էր կազմված՝ Հռոմի պապի ու Վատիկանի հայասիրության գովերգությունից և Սովետական Հայաստանի հասցեին զրպարտություններից, այնուամենայնիվ հետապնդում էր մի նպատակ՝ բոլոր միջոցներով կասեցնել, խափանել սփյուռքահայության հայրենադարձությունը։ Իսկ որո՞նք էին այն դրդապատճառները, որ հայր Աղաջանյանին մղել էին հանդես գալու Վատիկանի և մասնավորապես Պետրոս XII պապի «հայասիրությունը» թմբկահարողի դերում, ի՞նչ հիմքեր ուներ նա ներգաղթի դեմ աղմկելու։

Իհարկե, պատմությունը երբեք չի արձանագրել ինչ-որ փաստ, որ հռոմեական որևէ քահանայապետ պաշտպան կանգնած լիներ հայությանը կամ Վատիկանը սեր ու հոգածություն տածած լիներ Հայաստանի ու հայ ժողովրդի հանդեպ։ Ընդհակառակը, դարերի ընթացքում Հռոմի եկեղեցին միշտ էլ աշխատել է օգտվել հայ ժողովրդի համար ստեղծված դժնդակ պայմաններից և ձգտել է ջլատել, մասնատել նրա ամբողջականությունն ու միասնականությունը, հարվածել նրա ազգային ինքնուրույնությանը՝ հրելով նրան լատինացման-կաթոլիկացման ուղու վրա։ Հակառակ այս իրողությանը, կարդինալ Աղաջանյանը գովերգում էր Վատիկանի ու նրա պետերի հայասիրությունը և հանուն կաթոլիկության իր հոտին խորհուրդ էր տալիս չդիմել հայրենադարձության, որովհետև դա կնշանակի ու-

[82] Նույն տեղում։

բանալ Հավատքը։ Իր կոնդակում նա գրում էր. «Ահավոր պատերազմի ընթացքին ուրեմն, երբ դաշնակից պետությունները կհայտարարեին, որ իրենց հաղթանակով պիտի ապահովվեր մարդկության, ի միջի այլոց, կրոնքի կատարյալ ազատություն, իրավունքով և անձկանոք մենք ալ ակնդետ կմնայինք այդ օրվան, որ հնարավորություն պիտի տար մեզի, անխախտ պահելով մեր կրոնական համոզումներն ու կարգերը, երթալու մայր հայրենիք մեր բաժինը բերելու անոր վերաշինության և բարոյական ու կրոնական վերելքին։

Բայց ոչ սակավ եղավ մեր հուսախաբությունը, երբ հայրենադարձի բանբերները և անոնց մունետիկները համազգային այս գործին հարանվանական շեշտված բնույթ մը տվին և հայ կաթողիկեության հանդեպ, որ ծարերու բռնատիրական ժամանակ անգամ, կվայելեր իր ազատ կազմակերպությունը, հայրենի գավառներու մեջ, կզլացվեր արդար և լիովին արժանացած ազատամիտ վերաբերում մը։

Ավելին կա. ըսվեցավ, օրինակի համար, թե պաշտոնական անձեր հայտարարած ըլլան, որ հայ կաթողիկե կղերը կրնա երթալ հայրենիք, պայմանով, որ խզե հպատակության կապը Հռոմա ս. Աթոռին հետ։ Սակայն ո՞վ չըմբռներ, որ նման պարտադրանք մը համասար է կաթողիկե հավատքի ուրացման»[83]։

Հայր Աղաջանյանի այս ճամարտակությունների նպատակն է ապացուցել, որ մայր հայրենիքում «կրոնքի կատարյալ ազատություն» գոյություն չի ունեցել և միայն պատերազմից հետո պետք է ստեղծվեր այդ ազատությունը։ Սակայն ինչպես բոլորին, այնպես էլ հայր Աղաջանյանին քաջ հայտնի էր, որ սովետական սահմանադրությամբ կրոնական պաշտամունքի ազատությունը վաղուց ի վեր ճանաչված էր բոլոր քաղաքացիների համար և բնավ կարիք չկար «անձկանոք» ու «ակնդետ» սպասելու «այն օրվան», երբ հնարավորություն կտրվի «անխախտ պահելով կրոնական համոզմունքներն ու կարգերը երթալու մայր հայրենիք»։ Հայր Աղաջանյանը շատ լավ գիտեր, որ մայր հայրենիքում ոչ ոք չի բռնանում ու հալածում անհատին իր կրոնական համոզմունքների համար։ Բայց իրականում նրան հարցի այդ կողմը շատ քիչ էր հետաքրքրում։ Այդ իրողության հանդեպ անգիտության չքմեղանք ընդունելով, նա

[83] Նույն տեղում, գ. 29, թ. 3։



աշխատում էր գրպարտությունների թանձր քողով պարուրել հայրենիքը, որպեսզի միամիտ հայրենադարձներին ցցեր երկընտրանքի ու վարանման մեջ և նրանց ետ պահեր այնտեղ ներգաղթելուց։

Հայր Աղաջանյանը ճգնում էր բամբասանքներով վարկաբեկել Սովետական Հայաստանի ղեկավարներին, որ իբր «պաշտոնական անձեր հայտարարած» են, թե Հայաստան մեկնող կաթոլիկները պետք է հրաժարվեն իրենց հավատքից կամ հայրենիքում կաթոլիկության հանդեպ այլ վերաբերմունք գոյություն ունի, քան այլ դավանանքների հանդեպ։ Թե ե՞րբ, որտե՞ղ և ո՞ր «պաշտոնական անձերն» էին այդպիսի հայտարարություններ արել, այդ մասին հայր Աղաջանյանը խորհրդավոր լռություն էր պահում։

Կարդինալի գրպարտությունների բուն նպատակը բացահայտվում է նրա կոնդակի այն տեղերում, որտեղ ասված է. «Ուրեմն մեզի կպարտադրվի տակավին պանդխտության մեջ մնալ, որպեսզի անաղարտ պահենք մեր կաթողիկե ս. հավատքը»[84]։

Այսպիսով, կարդինալ Աղաջանյանը իր հոտին քարոզում է մնալ պանդխտության մեջ և չմեկնել հայրենիք, քանի որ այնտեղ «կրոնքի ազատություն» չկա։ Սակայն ճարպիկ շրջանցում կատարելով, նա իսկույն աշխատում է կանխել այն հարցը, թե մինչև ե՞րբ հայ կաթոլիկները պետք է մնան պանդխտության մեջ ու պատասխանում է՝ «մինչև դարձը քրիստոնեական արշալույսի» և հորդորում է սպասել «հուսալից, թե պիտի հնչե Աստուծմե որոշված այդ ցանկալի ժամը», իսկ մինչ այդ «պիտի մնանք սփյուռքի մեջ, փայլելով ազնիվ և լայնամիտ ասպնջականությունը գաղթավայրերու»[85]։

Հայրենադարձության այն հիրավի պատմական օրերին, երբ հարյուր հազարավոր հայեր արձանագրվում էին հայրենիք մեկնելու համար, երբ նրանցից տասնյակ հազարավորներ արդեն փոխադրվել էին Սովետական Հայաստան՝ իրենց ոտքերից ընդմիշտ թոթափելով պանդխտության անհայտ ճանապարհների փոշին, իսկ մյուսները ակնդետ սպասում էին իրենց հերթին, Վատիկանի այդ բարձրաստիճան հոգևորականը իր կոնդակով

[84] Նույն տեղում, թ. 4։

[85] Նույն տեղում։

հորդորում էր չմեկնել հայրենիք, այլ շարունակել մնալ օտարության մեջ։ Հայր Աղաջանյանը, աչք փակելով իրականության հանդեպ, ներբողներ էր հյուսում գաղթական կյանքը հրապուրիչ ներկայացնելու համար։ Նա միտումնավոր կերպով մոռացության էր մատնում հայ պանդուխտի չարքաշ, հաճախ արհամարհված վիճակը, նրա իրավազրկությունը, գործազուրկ ու անօթևան, կիսաքաղց թափառումները երկրե-երկիր և քարոզում մնալ այդ վիճակում, չներգաղթել հայրենիք։

Սփյուռքահայ աշխատավորները, առաջադիմական բոլոր ուժերը միահամուռ կերպով հանդես եկան կարդինալ Աղաջանյանի այդ հայրենադավ հորդորների դեմ, նրա առաջ քաշած «մենք կմնանք աքսորի մեջ, պահելու համար մեր կրոնքն ու հավատը» վնասակար թեզի դեմ։

Կարդինալ Աղաջանյանի այդ կոնդակի դեմ Եգիպտոսից «Խումբ մը կաթոլիկ հայրենասերներ» ստորագրությամբ բողոքում հենց կաթոլիկ հավատացյալները գրում էին, որ դա փաստորեն նշանակում է ենթարկվել Վատիկանի քաղաքականությանը՝ դավաճանելով ազգային կենսական շահերին։

«Եթե կարտինալության ծիրանին կհարկադրե Վատիկանի քաղաքականության ենթարկվիլ,— գրում էին բողոքի հեղինակները,— բայց պետք է գիտենա ամենապատիվ կարտինալը, որ ինք զավակն է բազմաչարչար ազգի մը, որ առանց կրոնական խտրության հայ անունին, հայ հայրենիքին համար, աքսորվեցանք, կոտորվեցանք, թեև այն ատենները մեր կրոնավորներեն շատերը մեր միամտությունը օգտագործեցին համոզելու, թե կաթոլիկությունը բավարար միջոց մըն է հալածանքե և կոտորածե զերծ մնալու համար։

Մենք պարզ հավատացյալ կաթոլիկ հայերս, որ մեր հավատքին և ազգին համար զոհվեցանք, կրկին պատրաստ ենք զոհվելու, այս անգամ սակայն, մեր հայրենիքի մեջ և անոր համար, բայց երբեք աքսորանքի՝ օտարության և օտարներու հաշվույն։

Մեր դարավոր երազը իրականացած է, ունինք հայրենիք։ Ան, որ հայ է, պետք է վերադառնա, որովհետև հոն է միայն, ուր կարելի է հայը հայ պահել»[86]։

Սիրիայում ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի ներգաղթի լիա-

[86] Նույն տեղում, ֆ. 362, ց. 8, գ. 1, թ. 6։



զոր Ա. Հովհաննիսյանը, 1947 թ. կատարված հայրենադարձության վերաբերյալ կազմած իր զեկուցագրում նշել է, որ հայ կաթոլիկ հոգևորականությունը կարդինալ Աղաջանյանի ղեկավարությամբ ծավալած իր հականերգաղթյան գործունեությամբ ոչնչով չի զիջում դաշնակցականներին։ Հայ կաթոլիկ հոգևորականությունը, բացի Սովետական Հայաստանի դեմ կատարվող զրպարտություններից, դաշնակների հետ ձեռք ձեռքի տված չարամիտ ագիտացիա էր մղում ներգաղթի դեմ։ Դաշնակների հետ միասին նրանք իրենց արքեպիսկոպոսին ուղարկել էին Քեսապի շրջանի հայկական գյուղերը՝ ներգաղթը խանգարելու համար։ Այդ արքեպիսկոպոսը գյուղացիներին փորձում էր համոզել, թե Հայաստանում կատարյալ սով է, չկա կրոնի ազատություն և այլն, որպեսզի նրանք ետ կանգնեին ներգաղթելու իրենց մտադրությունից։

Հականերգաղթյան նման եռանդուն գործունեություն էր ծավալել նաև կաթոլիկ եպիսկոպոս Ջոհրաբյանը՝ Ջեզիրեի շրջանի գյուղերում։ Վերջինս համոզվելով իր քարոզների անհետևանք մնալու մեջ, հեռագրով խնդրում է սիրիական կառավարությանը՝ արգելել հայերի հայրենադարձությունը, պատճառաբանելով, թե իբր սովետական ներկայացուցիչների գործադրած ճնշման տակ են հայ գյուղացիները ցուցակագրվել ներգաղթելու համար։ Բարեբախտաբար սիրիական կառավարությունը անպատասխան թողեց եպիսկոպոսի այդ զրպարտությունները և ցուցում տվեց տեղական իշխանություններին՝ աջակցել հայերի հայրենադարձությանը[87]։

Սփյուռքահայ առաջադիմական ուժերի համատեղ պայքարի շնորհիվ ձախողում կրեցին ներգաղթի դեմ ուղղված այդ կարգի բոլոր բանսարկությունները և հաջողությամբ իրականացվեց տասնյակ հազարավոր տարագիրների հայրենադարձությունը։

* * *

Հայրենադարձությունը, որի իրականացումն անմիջականորեն առնչվում էր տարբեր երկրների հետ, մի շարք կառավարությունների կողմից հանդիպեց անբարյացակամ, ուղղակի

[87] Տե՛ս նույն տեղում, ֆ. 326, ց. 1, գ. 205, թ. 9—18։

թշնամական վերաբերմունքի։ Նկատելի էր հատկապես ԱՄՆ-ի, Անգլիայի, նրանց ճնշմամբ նաև Իրանի և, առանձնապես, Թուրքիայի կառավարող շրջանների թշնամական վերաբերմունքը տարագիր հայության Սովետական Հայաստան հայրենադարձվելու ցանկության նկատմամբ։ Եթե առաջին երկուսի վերաբերմունքը կարելի էր բացատրել զուտ քաղաքական մոտիվներով, ապա վերջինիս՝ Թուրքիայի դիրքորոշումը ավելի բազմաբնույթ պատճառներ ուներ։

Թե՛ սփյուռքում և թե՛ հայրենիքում համայն հայությունը զանգվածային հայրենադարձության իրականացումը դիտում էր որպես Թուրքիայի կողմից զավթված հայկական տերիտորիաները իրենց օրինական տիրոջը վերադարձնելու գործնական հիմնավորում։ Եվ հենց դա էր հիմնական պատճառը, որ թուրքական կառավարությունը բացահայտ ու կատաղի թշնամանքով ընդունեց արևմտահայության աշխարհասփյուռ բեկորների զանգվածային հայրենադարձությունը վերսկսելու մասին սովետական կառավարության որոշումը, հայ ժողովրդի ազգային համախմբման հնարավորության ստեղծումը։ Հենց որ հրապարակվեց հայրենադարձության վերաբերյալ ՍՍՀՄ ժողկոմխորհի որոշումը ու ամենուրեք, այդ թվում և Թուրքիայում, սկսվեցին ներգաղթի արձանագրությունները, թուրքական կառավարությունն ու մամուլը անցան հարձակման։

Թուրքական թերթերում սպառնալից հոդվածներ էին տպագրվում ներգաղթելու համար ցուցակագրվող հայերի դեմ։ Ոստիկանությունը նույնպես գործի էր անցել։ Թուրք ոստիկանները բռնությամբ, ծեծելով ցրում էին Ստամբուլի սովետական հյուպատոսարանի կամ հայկական պատրիարքարանի մոտ ցուցակագրվելու համար հավաքված հայերին։ Չնայած այդ ամենին, հայերը շարունակում էին ցուցակագրվել հայրենիք մեկնելու համար։ Հակառակ այդ իրողությանը, թուրքական մամուլը ճգնում էր ցույց տալ, թե իբր Թուրքիայում ապրող հայերը չեն ցանկանում հեռանալ երկրից և Ստամբուլում լիովին ձախողված է ներգաղթը։ Թուրքական «Սոն պոստա» և «Թասվիր» թերթերում լրագրող Էքրեմ Ուշագլըկիլը գրում էր, թե իբր հազիվ մի երկու հարյուր հոգի է արձանագրվել ներգաղթելու համար, որոնք «բոլորն ալ դատարկապորտներ, ծեր կիներ, արկածախնդիրներ են» և «Թուրքիո հայերը միակ բաղձանք մը ունին, այն է՝ թուրք ապրիլ թուրք հողերու վրա»։ Պատասխա-



նելով թուրք ազգայնամոլ լրագրողին, բուլղարահայ «Երևան» թերթը գրել է. «Ոչ ոք իրավունք ունի մեզի արգիլելու որպես մարդ ու որպես հայ ապրելէ, քանի որ հայ ենք ծներ, քանի դեռ կա Սովետ Հայաստանը»[88]։

Թուրքական կառավարող շրջանները ամեն կերպ ձգտում էին ստեղծել այն պատրանքը, թե հայրենադարձությունը Թուրքիայում ձախողված գործ է, քանի որ հայերն այնտեղ իբր հավասար իրավունքներ ունեն իրենց թուրք եղբայրների հետ և ապրում են մեծ սիրով։ Ահա թե ինչ էր գրում լրագրող Եալչընը «Ուլուս» թերթում. «Ներգաղթը տապալված է։ Սովետական հյուպատոսարանի մոտ կատարված դիմումներն ալ վերջ գտան, հալեցան ներգաղթող բազմությունները։ Եշուկները հմայք ունենալե դադրեցան»[89]։

Իհարկե, սա իրականության ուղղակի կեղծում էր, քանի որ հայկական աղբյուրները միանգամայն այլ բան էին հաղորդում։ Այդ նույն ժամանակի վերաբերյալ Բեյրութի «Արարատ» Ստամբուլից ստացված մի նամակից քաղվածք մեջբերելով, հաղորդում էր, որ թեպետ թուրքական իշխանություններն ու մամուլը գազազած են «ներգաղթի արձանագրությունների պատճառով և ամեն օր հազար լուտանք կհայտնեն... գրվողներուն (ներգաղթի համար ցուցակագրվողներին.— Հ. Մ.) և հազար ու մեկ շողոքորթություն մնալ ուզող հայ եղբայրներուն, միայն իմ արձանագրված օրս 4000 հոգի գրվեցան, մինչ թրքական թերթեր կգրեն թե մինչև հիմա արձանագրվողները 200 հոգին չանցնիր, բոլորն ալ դատարկապորտներ, արկածախնդիրներ։ Իրականությունը սա է, որ հյուպատոսարանին (սովետական.— Հ. Մ.) առջև սպասողներուն մեջ 2—3 հոգի դատարկապորտներ կան, վարձված թրքական կառավարության կողմե»[90]։

Բայց կամա թե ակամա, թուրքական մամուլը երբեմն հարկադրված էր խոստովանել ճշմարտությունը՝ այն, որ հայրենադարձությունը թուրքահայերի մեջ նույնպես առաջ է բերել մեծ աշխուժություն, որ հազարավորներ սրտատրոփ սպասում են մեկնման բերկրալի պահին և դա լրջորեն անհանգստաց-

---

88 «Երևան», 2 փետրվարի, 1946 թ., № 21(121)։

89 Տե՛ս «Ժողովուրդի ձայն», 10 դեկտեմբերի, 1946 թ., № 1263։

90 Տե՛ս «Արարատ», 4 հունվարի, 1946 թ., № 1454։

նում էր Անկարայի կառավարող շրջաններին ու թուրք ազգայնականներին։ Ահա թե ինչ էր գրում այդ մասին թուրքական «Թասվիր» թերթը իր 1945 թ. դեկտեմբերի 24-ի համարում, անդրադառնալով հայերի ներգաղթի արձանագրություններին. «Իստանպուլի մեջ հարյուրավորներ սրտատրոփ կսպասեն առաջին իսկ հրավերին, որպեսզի դուրս նետվեն մեր դռնեն և թակարդ լարեն մեր դրացիին սահմանին երկայնքին»[91]։

Թուրքական մամուլում հայրենադարձության և հայկական տերիտորիալ պահանջների առթիվ սկսված հակահայկական և հակասովետական կամպանիան իր գործնական արձագանքներն ունեցավ խավարամիտ տարրերի ու թունոտ ազգայնականների շրջանում։ Նրանք մի շարք հակահայկական ու հակասովետական ցույցեր կազմակերպեցին Անկարայում, Ստամբուլում, Իզմիրում, Տրապիզոնում և այլ վայրերում։ Դրանք, հրահրված լինելով հենց կառավարության կողմից, նպատակ ունեին ահաբեկել հայերին և նոր ջարդերի սարսափի տակ նրանց ետ պահել ներգաղթի համար ցուցակագրվելուց։ 1945 թ. դեկտեմբերի 4-ին այդպիսի մեծ ցույց տեղի ունեցավ Ստամբուլի սովետական հյուպատոսարանի առջև, որտեղ գտնվում էր նաև հայերի ներգաղթի կոմիտեի գրասենյակը։ Այդ նույն ժամանակ Անկարայից ավելի քան 200 հայ ընտանիքներ աքսորվեցին անհայտ ուղղությամբ[92]։

Ինչպես ճիշտ կերպով բնութագրել է «Հայաստանի կոչնակը», Թուրքիայի հայերի մեջ ներգաղթի շուրջն առաջացած հայրենասիրական «այս միահամուռ պոռթկումը անսպասելի չէր, որ ունենար իսկույն իր հակադարձությունը, ինչ որ չուշացավ Պոլսո, Կարինի և ուրիշ քաղաքներու մեջ կազմակերպված հակասովիեթ ցույցերով, անգամ մը ևս երևան բերելու, թե՝ հայկական պահանջները և հայ դատին միջազգային վերերևումը ո՛րքան հուզած են Էնկյուրիի կառավարությունը, որ, ավա՜ղ, դեռ այսօր ալ, այնքան անօգուտ փորձառություններե ետք՝ ազգային ուրույն շահերե դրդված ունի իր պաշտպան փաստաբանները»[93]։

[91] Տե՛ս «Առավոտ», օրաթերթ, Բեյրութ, 13 հունվարի, 1946 թ., № 51 (2042)։

[92] Տե՛ս «Արարատ», 4 հունվարի, 1946 թ., № 1454։

[93] «Հայաստանի կոչնակ», 16 փետրվարի, 1946 թ., № 7, էջ 174։



Հետաքրքիր է, որ գառան մորթի հագած թուրք լրագրող գայլերը հայերին զգուշացնում էին չներգաղթել Ռուսաստան, որովհետև այնտեղ սով է, տարածված են հիվանդություններ ու անկարգություններ, և գնացողները ծանր վիճակի մեջ կընկնեն։ Թուրքական թերթերը չքմեղանքով հարց էին տալիս, թե ինչո՞ւ են հայերը ուզում գաղթել «դրախտավայր, հանրապետական, դեմոկրատիկ Թուրքիայեն, միթե՞ նրանք երջանիկ չեն, ազատ չեն. մնում է կարծել, թե իրապես հիմարներ են հայերը, որ թուրքական դրախտը ձգած՝ Սովետական Հայաստանի դժոխքին մեջ ապրելու կերթան... մինչ Թուրքիո մեջ ամեն ինչի լավը հայունն է, գեշը՝ թուրքինը»[94]։

Հայերի ներգաղթի շուրջը Թուրքիայում ծավալված բուռն պայքարի շրջանում բանն այնտեղ հասավ, որ թուրք պատմաբան Սուֆեթ էնկը փորձեց ժխտել անգամ հայ ազգի և հայոց լեզվի գոյության փաստն իսկ։ Թուրք կեղծարարին ձայնակցեցին իրենց ազգային դիմագիծն ու արժանապատվությունը լիովին կորցրած որոշ հայ կոչվողներ։ Դրանցից էր, օրինակ, ատաբազարցի Պողոս Զինիլի անունը կրող մեկը, որը «Ենի Սապահ» թերթում հրապարակեց մի նամակ, որի մեջ նույնպես թուրքահայերին խորհուրդ էր տալիս չներգաղթել «ռուսական Հայաստան», քանզի Թուրքիայի հայերը «ոչ մեկ առնչություն կրնան ունենալ Կովկասի հայ հանրապետության և ընդհանրապես հայ ազգին հետ։ Մենք թուրք ենք, բայց կպատկանինք հայ դավանանքին, իսկ Երևանի հայ ազգին հետ ոչ մեկ կապ չունինք»[95],— այսպես էր ղառանցում այդ իսկապե՞ս իրականում գոյություն ունեցող, թե՞ զուտ երևակայական ողորմելի խրտվիլակը։

Չնայած թուրքական պաշտոնական շրջանների ու մամուլի այդ բոլոր ջղաձգություններին, Թուրքիայի հայ բնակչությունը շարունակում էր ցուցակագրվել ներգաղթելու համար։ Ահա թե ինչու թուրքական հետադիմությունը փոխեց իր տակտիկան։ Ներգաղթը վիժեցնելու նպատակով թուրքերն սկսեցին նոր հեքիաթներ հորինել։ Նրանք գրում էին «սովետական դժոխքի ծանր պայմաններից փախած», իբր թե բոլշևիկների կողմից

[94] Տե՛ս «Միություն», շաբաթաթերթ, Հայֆա, 29 դեկտեմբերի, 1946 թ., № 68։

[95] Տե՛ս «Նոր կյանք», 15 փետրվարի, 1946 թ., № 572։



23—1181

«Հալածված հազարավոր հայ եղբայրների» մասին։ «Սոն սաաթ» թերթը այդ առթիվ գրել է. «Ռուսիայեն առնված լուրերուն համաձայն ներգաղթող կարավանները ի տես իրենց հանդեպ ի գործ դրված սոսկեւո վարչաձևին, իրենց հույսերնին կտրած են»[96]։ «Հայերի ներգաղթը դադարած է այլևս, նրանք չեն ցանկանում ներգաղթել Ռուսաստան»[97],— «Սոն սաաթին» ձայնակցում էր «Ենի Սաբահը»։ Թուրքական թերթերը միտումնավոր կերպով չէին ուզում անգամ հայերի մեկնած երկիրը կոչել իր իսկական անունով՝ Հայաստան, այլ անվանում էին Ռուսաստան, քաջ իմանալով, որ Ռուսաստանն ու Հայաստանը հավասարազոր անդամներն են Սովետական Միության։

Թուրք շովինիստները շատ լավ էին գիտակցում ներգաղթի բոլոր հետևանքները, հայերի ազգահավաքման հեռանկարային արդյունքները և հենց այդ պատճառով էլ դեմ էին դուրս գալիս հայրենադարձությանը։ Այդ մասին շատ որոշակի արտահայտվեց «Ջումհուրիեթ» թերթը, գրելով. «Պարզ և որոշ պետք է ըլլա, որ ներգաղթը կապված է հայկական հողերու գրավման հետ»[98]։

Սփյուռքահայ գաղթօջախներում ստեղծված հայկական ազգային խորհուրդները և 1947 թ. գարնանը տեղի ունեցած Հայկական համաշխարհային կոնգրեսը, հայրենադարձության հետ կապված, ինչպես արդեն ասվել է, այդ ժամանակ դիմեցին ՄԱԿ-ին և մեծ տերությունների ղեկավարներին, կոչ անելով Սովետական Հայաստանի հետ վերամիավորել արևմտահայկական հողերը, որպեսզի աշխարհասփյուռ հայությունը հնարավորություն ունենա հավաքվելու իր հայրենիքում։

Պաշտպանելով հայ ժողովրդի այդ արդարացի պահանջը, ՍՄԿԿ Կենտկոմի օրգան «Պրավդա» թերթը գրեց. «Արտասահմանյան երկրներում գտնվում են մեկ միլիոն հայեր։ Նրանք ամբողջ հոգով ձգտում են դեպի հայրենիք։ Ամբողջ հայ ժողովուրդը հարց է դնում Թուրքիայի կողմից բռնագրավված հայկական հողերը Սովետական Հայաստանին վերադարձնելու մասին»[99]։

---

[96] Տե՛ս «Եփրատ», 22 հոկտեմբերի, 1946 թ., № 2767։

[97] Տե՛ս «Արարս», 2 նոյեմբերի, 1946 թ., № 45։

[98] Տե՛ս «Ժողովուրդի ձայն», 13 հունվարի, 1946 թ., № 1041։

[99] «Правда», 6 փետրվարի, 1946 թ., № 31։



Ահա այս էր՝ հայրենադարձության հետ կապված Թուրքիայից հայկական տերիտորիաների պահանջը, որ խիստ անհանգստացնում էր թուրքական կառավարող շրջաններին և նրանց հովանավորներին։ Ինչպես հայտնի է, հենց այս վերջիններիս՝ անգլո-ամերիկյան իմպերիալիստների ջանքերով էր, որ ՄԱԿ-ում դրական լուծում չստացավ հայկական տերիտորիաները Սովետական Հայաստանին վերադարձնելու արդարացի պահանջը։

* * *

Ինչպես հայրենադարձության նախորդ երկու փուլերում, այնպես էլ 60—70-ական թվականներին նրա շուրջը շարունակվում է լարված պայքարը սփյուռքահայ առաջադիմական ու հետադիմական ուժերի միջև։ Ինչպես անցյալում, այնպես էլ այս շրջանում հայրենադարձության դեմ խիստ վնասակար գործ է կատարում դաշնակցությունը, որի վերաբերմունքը զանգվածային նոր ներգաղթի հանդեպ մշակվել է 1963 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին Բեյրութում տեղի ունեցած նրա 18-րդ համագումարում։

Այդ համագումարը հրահանգ տվեց դաշնակցական տեղական կազմակերպություններին՝ բացահայտորեն հանդես չգալ հայրենադարձության դեմ, սակայն անպայման օգտագործել այդ գործում նկատվող ամեն տեսակ վրիպումներն ու թերությունները այդ միջոցառումը վարկաբեկելու և սովետական իշխանության դեմ պայքար ծավալելու նպատակով։

Եվ ահա, դաշնակցության տեղական կազմակերպությունները, ի կատարումն իրենց համագումարի դիրեկտիվների, ակտիվ կամպանիա ծավալեցին հայրենադարձության դեմ։ Այդ տեսակետից խիստ բնորոշ է դաշնակների գործունեությունը Իրանում, որտեղից 60—70-ական թվականներին կատարվել է ամենամեծ թվով հայրենադարձությունը։

Վերևից տրված հրահանգի համաձայն դաշնակցական էմիսարները շրջում էին Իրանի հայաբնակ գյուղերում և գյուղացիներին ագիտացիա անում հրաժարվել Սովետական Հայաստան ներգաղթելու մտադրությունից։ Իրենց ազգադավ նպատակին հասնելու համար նրանք գործադրում էին կաշառք, սպառնալիքներ, Սովետական Հայաստան մեկնած առանձին

հայրենադարձներից ստացված այնպիսի նամակներ, որոնցում խոսվում էր այս կամ այն դժվարության մասին և այլն[100]:

Հետագիմական առանձին թերթեր ու խմբակցություններ ոչ միայն զրպարտում են Սովետական Հայաստանը, այլև՝ ֆինանսավորվելով իմպերիալիստական հետախուզությունների կողմից, բացահայտ ու գաղտնի միջոցներով պայքարում են հայրենադարձության դեմ, որպեսզի տարագիր հայերին գաղթեցնեն դեպի արևմտյան երկրներ։

Այդ ճանապարհով Ավստրալիա, Բրազիլիա, Կանադա և արևմտյան այլ երկրներ մեկնած մոլորյալներից շատերը իրենց հարազատներին գրած նամակներում, մամուլում ու հրապարակային ելույթներում անիծում են նրանց, ովքեր գայթակղեցրել են իրենց և արտագաղթի մղել դեպի օտար ու հեռավոր ափեր։ Օրինակ՝ Կանադա մեկնած Հովհ. Ցաղչյանը, նկարագրելով իր ողբալի վիճակը, նամակն ավարտում է հետևյալ խոսքերով. «Ո՞վ դուք զտարյուն հայե՛ր և հարազատ զավակնե՛ր, սթափվեցե՛ք, թոթափեցե՛ք օտարամոլությունը ձեր ուսերեն։ Ձեռք-ձեռքի տվեք և ուխտեցեք հայ ժողովուրդը փոխանակ ասդին, անդին ցրելու, դեպի երկիր, դեպի հայրենիք, դեպի նորաստեղծ Հայաստան առաջնորդել։ Միայն հոն է, որ հայը հայ կրնա մնալ»[101]:

Գրեթե նույն միտքն է կրկնում Բրազիլիա մեկնած Բարույ Նազարյանը։ Մի ուրիշը Ավստրալիայից գրում է. «Այն մարդը, որ հայ է և հայու արյուն ունի, հոս չի գար, մանավանդ զավակ ունեցող ընտանիք մը հոս գալ՝ ոճրագործություն կըլլա բրածը»[102]:

Սովետական Հայաստանի հզոր առաջընթացը և սփյուռքահայության բացարձակ մեծամասնության վճռական շրջադարձը դեպի մայր հայրենիքը, գնալով ավելի մասսայականացող փոխայցելությունները և հայրենադարձությունը լուրջ տարաձայնություններ ու դրական խմորումներ են առաջացրել անգամ Սովետական Հայաստանի հանդեպ նախկինում թշնամաբար տրամադրված շրջաններում։

Հայրենադարձության դեմ դաշնակցության ծավալած գոր-

[100] Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 875, ց. 1, գ. 5, թ. 1—8։

[101] Նույն տեղում, գ. 32, թ. 19։

[102] Նույն տեղում, թ. 21։



ծունեությունը հաջողությամբ մերկացվում է հենց սփյուռքահայ առաջադիմական կազմակերպությունների և մամուլի կողմից։ Դրա կոնկրետ հաստատումն է Բուենոս Այրեսում լույս տեսնող «Սևան» շաբաթաթերթում 1964 թ. հուլիսի 15-ին տպագրված Տ. Պագալյանի «Ի՞նչ կընեն դաշնակ ղեկավարները» հոդվածը, որտեղ հեղինակը բազմաթիվ փաստերով մերկացնում է Միջին Արևելքից և Բալկաններից հայ տարագիրներին դեպի Ավստրալիա և այլուր արտագաղթեցնելու դաշնակների դատապարտելի գործունեությունը[103]:

Դաշնակցական որոշ գործիչներ երբեմն քննադատում են սովետական կառավարությանը, որ նա փոքր թվով հայրենադարձներ է ընդունում, տրտնջում են դրա դեմ, ինչպես Հրանտ Սամվելը Փարիզի դաշնակցական «Հառաջ»-ում կամ ոմն Արամայիսը Թեհրանի «Ալիք»-ում[104]։ Փարիզում լույս տեսնող առաջադիմական «Աշխարհ» թերթի 1964 թ. օգոստոսի 4-ի համարում տպագրած իր հոդվածում Աշոտ Քիպարյանը տեղին կերպով քննադատելով այդ կարգի դատողությունները, դրանք անվանել է «կոկորդիլոսի արցունքներ», գրելով, թե 1946—1948 թթ. դեպի Հայաստան կատարված ներգաղթի ժամանակ դաշնակները միաբերան բղավում էին, թե «մի երթաք... դժոխք է հոն», իսկ այժմ մեղադրում են սովետական կառավարությանը, որ նա մեծ թվով հայեր չի փոխադրում հայրենիք[105]:

Սակայն դրանք եղակի փաստեր են։ Դաշնակցական մամուլում հայրենադարձության դեմ հանդես են գալիս ավելի շատ այլ բնույթի՝ այն մերժող հոդվածներ։ Ահա դրանցից մի քանիսը։

Փարիզում լույս տեսնող «Խթան» թերթի 1964 թ. հուլիսի 14-ի համարում տպագրված է ոմն Մարգարիտ Հանչերյանի «Հայ երիտասարդության պատգամ» հոդվածը, որտեղ նա պարգացնում է այն միտքը, թե քանի դեռ Հայաստանին չեն վերադարձված նրա պատմական հողերը, «մենք իրավունք չունենք ուրանալ «Ֆրանսիայի պարգևած ազատությունները, քանդել տուն ու տեղ և կրկին ձեռք առնել գաղթականի ցուպը և ծայրեն սկսել բախտ փնտրել, նույնիսկ մայր հայրենիքի մեջ»։ Մ. Հան-

[103] Տե՛ս նույն տեղում, գ. 13, թ. 19։

[104] Տե՛ս նույն տեղում, թ 12—13։

[105] Տե՛ս նույն տեղում, թ. 23—24։

չերյանը երիտասարդությանը խորհուրդ է տալիս սփյուռքի պայմաններում հայ մնալու և զարգանալու համար համախմբվել եկեղեցու շուրջը[106]։

Հնչակյան «Երիտասարդ Հայաստան» թերթը, անդրադառնալով հայրենադարձության նկատմամբ դաշնակցության բռնած դիրքին, իրավացիորեն արձանագրում է, որ նա գործնականում միշտ էլ դեմ է եղել դրան։ Այդ կապակցությամբ թերթը վկայակոչում է Ս. Վրացյանի այն միտքը, որ նա արտահայտել է ֆրանսահայ դաշնակցական երիտասարդության «Նոր սերունդ» կազմակերպության օրգան «Հայաստան» շաբաթաթերթի 1964 թ. մայիսի 7-ի համարում։ Դաշնակցական պարագլուխը, դժգոհելով զանգվածային նոր հայրենադարձության իրականացումից, ջղաձգորեն բացականչել է՝ ո՞ւր են տանում սովետները «...այս խեղճ ժողովրդին. մենք այստեղ դպրոցներ, եկեղեցիներ, միություններ ունենք և մշակութային կյանք ենք վարում», մինչդեռ ներգաղթ կազմակերպելով, բոլշևիկները մեզ զրկում են դրանցից։

Պայքար ծավալելով հայրենադարձության դեմ, դաշնակները նպատակ են հետապնդում սփյուռքահայերին հեռու պահել Սովետական Հայաստանից, որպեսզի նրանք «զոհ չերթան բոլշևիկյան սուտ քարոզչության և հայրենիք վերադառնալու խենթությունը չընեն...»։ Վկայակոչելով դաշնակների այս խակամիտ «խենթությունները», «Երիտասարդ Հայաստանը» իրավացիորեն եզրակացնում է. «Ահա ձեզի Հայաստանի ազատագրության համար իբրև թե ծնունդ առած քաղաքական կուսակցության մը ողբալի ու եղերական վախճանը»[107]։

Սակայն, բարեբախտաբար, արհամարհանքով դեն նետելով հայրենադարձության դեմ տարածվող ամեն տեսակ հերյուրանքներն ու զրպարտությունները, հայրենապաշտ տարագիր հայության հոգնաբեկ քարավանները աննահանջ կերպով քայլում են դեպի հայրենիք։

Նրանց տունդարձի երթը շարունակվում է։

[106] Տե՛ս նույն տեղում, թ. 13—14։

[107] Տե՛ս «Երիտասարդ Հայաստան», 23 հունիսի, 1964 թ., № 16։

## ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

## ՀԱՅՐԵՆԻՔ—ՍՓՅՈՒՌՔ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԱԳԱ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԵՎ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻ ԿՈՄԻՏԵԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Անկասկած է, որ հայկական սփյուռքի ազգային դիմագիծը պահելու ամենակարևոր երաշխիքը հայրենիքն է, նրա հետ անխզելի կապը, որով կենսական ավյուն ու ավիշ է ներարկվում օտար միջավայրում ապրող տարագիր հայությանը։ Այդ է պատճառը, որ թե՛ հայրենի երկրի կուսակցական-պետական մարմինները, գիտական, մշակութային ու այլ հաստատությունները և թե՛ սփյուռքի առաջադիմական կազմակերպությունները միշտ էլ մեծ ուշադրություն են նվիրել հայրենիք—սփյուռք առնչությունների զարգացմանն ու ամրապնդմանը։

Ետպատերազմյան առաջին տարիներին հայրենիք—սփյուռք կապերն իրականացվում էին տարբեր օղակներով։ Դրանք հիմնականում արտահայտվում էին էջմիածնի Ամենայն հայոց կաթողիկոսության և 1944 թ. փետրվարին վերստեղծված Հայկական ՍՍՀ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատի (1946 թ. մարտի 15-ից մինիստրություն) գործունեության ոլորտներում։ Այդ գործում որոշակի ավանդ էր ներդնում նաև 1944 թ. նոյեմբերին հիմնադրված Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապի հայկական ընկերությունը (ԱՕԿՍ)։

Հայրենական մեծ պատերազմից հետո տեղի ունեցած զանգվածային հայրենադարձության հետ կապված, 1945—1949 թվականներին, նոր ձևեր ու բովանդակություն ստացան հայրենիք—սփյուռք առնչությունները՝ դառնալով Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր արտասահմանից ներգաղթող հայերի ընդունման և տեղավորման կոմիտեի գործունեության կոնկրետ ու կարևոր խնդիրներից մեկը։ Արտասահմանյան եր-

կրրներ մեկնող նրա ներկայացուցիչները գաղթօջախներում մեծ աշխատանք էին կատարում ոչ միայն ներգաղթի կազմակերպման ուղղությամբ, այլև սփյուռքահայությանը Սովետական Հայաստանի կյանքին ծանոթացնելու, հայրենիքի նվաճումները պրոպագանդելու, մի խոսքով, հայրենիք—սփյուռք առնչությունները սերտացնելու ուղղությամբ։ Սակայն ներգաղթի կոմիտեի լուծարքից հետո (օգոստոս, 1949 թ.) հայրենիք—սփյուռք փոխհարաբերությունները դարձյալ սահմանափակվեցին նախկին օղակների շրջանակներում, որոնք, տարբեր պատճառներով, չէին կարողանում անհրաժեշտ խորությամբ ընդգրկել սփյուռքին վերաբերող բոլոր հարցերը։ Օրինակ՝ ԱՕԿՍ-ը, կապեր հաստատելով ընդհանրապես արտասահմանյան երկրների հետ, հայկական գաղթօջախներին կամ նրանց հուզող խնդիրներին անդրադառնում էր միայն դեպքից դեպք, ոչ պարբերաբար ու հետևողականորեն։

Սակայն ՍՄԿԿ XX համագումարից հետո (փետրվար, 1956 թ.), ինչպես մեր երկրի ներքին կյանքում, այնպես էլ արտաքին աշխարհի հետ ունեցած փոխհարաբերություններում առաջացած նոր դիրքորոշումը վճռորոշ նշանակություն ունեցավ նաև հայրենիք—սփյուռք առնչությունների հետագա զարգացման, հայրենադարձության վերսկսման և ընդհանրապես սփյուռքահայության նկատմամբ նոր քաղաքականության մշակման ու իրականացման գործում։ Ինչ խոսք, որ դա այնքան էլ դյուրին գործ չէր, քանի որ աշխարհի շուրջ 33 երկրներում կային կազմակերպված հայկական գաղութներ, 24 երկրներում՝ հայկական խմբակցություններ և այլն։ Դրանք, գտնվելով հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական ու պետական-վարչական տարբեր պայմաններում, բնականաբար պահանջում էին յուրաքանչյուրի նկատմամբ ցուցաբերել խիստ շերտավորված վերաբերմունք, ծավալել կոնկրետ աշխատանք։ Նման աշխատանք իրականացնելիս անհրաժեշտ էր մշտապես նկատի ունենալ տվյալ երկրի սոցիալ-քաղաքական պայմանները, հայ ազգաբնակչության տնտեսական կյանքի մակարդակը, քաղաքական ու տնտեսական կյանքում նրա ունեցած տեղն ու դիրքը, ազգային մշակութային գործունեություն ծավալելու նրա իրական հնարավորությունները և այլ գործոններ։

Եթե անցյալում հայրենիք—սփյուռք փոխհարաբերություններում ավելի մեծ տեղ էին զբաղեցնում հիմնականում ներ-



գաղթի հետ կապված հարցերը, ապա 50-ական թվականների կեսերից սկսած դրանցում գերակշռություն ստացան մայր հայրենիքի և գաղթաշխարհի միջև ավելի բազմաբնույթ կապեր հաստատելու, հայապահպանության համար մղվող պայքարում տարագիր հայությանը Սովետական Հայաստանից ավելի մեծ օգնություն կազմակերպելու խնդիրները։

Հատկապես ՍՄԿԿ XX և հետագա համագումարների դիրեկտիվների լույսի տակ ՀԿԿ Կենտկոմը և ՀՍՍՀ կառավարությունը ավելի որոշակիորեն բարձրացրին սփյուռքահայության հետ կապերի հետագա խորացման ու ամրապնդման հարցերը, նշեցին սփյուռքահայությանն օգնելու կոնկրետ ուղիներն ու գործնական միջոցները և այդ բնագավառում հասած դրական զգալի արդյունքները։

Հայրենիք—սփյուռք առնչությունների սերտացման, սփյուռքահայության մեջ տարվող աշխատանքների բարելավման և հայկական գաղթօջախներին օգնելու գործում որոշակի նշանակություն ունեցավ ՍՄԿԿ Կենտկոմի 1957 թ. հոկտեմբերին ընդունած «Սփյուռքահայերի շրջանում մեր ազդեցությունն ուժեղացնելու ուղղությամբ միջոցառումներ իրականացնելու մասին» որոշումը[1]։ Ի կատարումն այդ որոշման, ՀԿԿ Կենտկոմը մշակեց մանրամասն պլան, որը նախատեսում էր իրականացնել միջոցառումներ սփյուռքահայ գաղթօջախներին գործնականում օգնելու, նրանց հետ ավելի սերտ կոնտակտներ հաստատելու վերաբերյալ։ Հանրապետության կուլտուրայի, լուսավորության, բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության մինիստրությունները, ռադիոկոմիտեն, գրողների ու կոմպոզիտորների միությունները, Հայպետհրատը, ԱՕԿՍ-ը և այլ կազմակերպություններ, որոշակի աշխատանք կատարեցին ՀԿԿ Կենտկոմի մշակած այդ միջոցառումների կենսագործման ուղղությամբ։ Դրա շնորհիվ նկատելիորեն աշխուժացան սփյուռքահայության հետ կապերը։ Որպես այդ միջոցառումների իրականացման անմիջական արդյունք Մերձավոր և Միջին արևելքի մի քանի երկրներ, ինչպես նաև Կիպրոս, Ռումինիա, Հունգարիա, Ալբանիա, Ֆրանսիա ուղարկվեցին Հանրապետության մի շարք գեղարվեստական խմբեր, երգի-պարի անսամբլներ, սպորտային կոլեկտիվներ, կոմպոզիտորներ, գիտնականներ, տուրիստական

[1] ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 362, ց. 1, գ. 308, թ. 7—10։

խմբեր և այլն։ Այդ ամենը, ինչպես վկայում են մեր դեսպանություններից ստացված ինֆորմացիաները և սփյուռքահայ մամուլը, տվեցին միանգամայն դրական արդյունքներ։ Դրանք որոշակիորեն նպաստեցին սփյուռքահայության հայրենասիրական տրամադրությունների ուժեղացմանը, ավելի վճռականորեն նրա դեպի հայրենիք ուղղվելու գործին։

ՀՍՍՀ ԱԳՄ միջնորդությամբ ՍՍՀՄ ԱԳՄ 1959 թ. ցուցում տվեց մեր արտասահմանյան դեսպանություններին, միսիաներին ու հյուպատոսություններին՝ պարբերաբար ինֆորմացիա ուղարկել ՀՍՍՀ ԱԳՄ՝ իրենց մոտ եղած հայկական գաղթօջախներում տեղի ունեցող անց ու դարձերի մասին։

Դրա հետ մեկտեղ, մեր դեսպանություններն ու միսիաները, ընդառաջելով հայկական գաղթօջախների առաջադիմական կազմակերպությունների խնդրանքներին, Սովետական Հայաստանի համապատասխան մարմինների առջև բարձրացրին սփյուռքահայությանն առնչվող մի շարք հարցեր։ Ամենից առաջ նրանք խնդրում էին իրենց նյութեր ուղարկել հայկական առաջադիմական կազմակերպություններին տրամադրելու համար ՍՍՀՄ և ՀՍՍՀ ժողովրդական տնտեսության, մշակույթի, գիտության և այլ բնագավառներում ձեռք բերած նվաճումների մասին։ Պահանջում էին ուղարկել հայկական կինոնկարներ, ձայնապնակներ, թերթեր, հանդեսներ, կուլտուրայի, գիտության և արվեստի ներկայացուցիչներ, ՀՍՍՀ բուհերն ու տեխնիկումներն ընդունել սփյուռքահայ առաջադեմ, հայրենասիրաբար տրամադրված երիտասարդների և այլն։

Սփյուռքահայության հետ մայր հայրենիքի կապերը խորացնելու և բազմապատկելու գործում կարևոր դեր ունեցավ մասնավորապես ՀԿԿ XXII համագումարը, որը բարձր գնահատելով այդ ուղղությամբ սփյուռքահայ առաջադիմական կազմակերպությունների կատարած աշխատանքը, մեծ նշանակություն տվեց հայրենիք—սփյուռք կապերի հետագա զարգացմանը։ Համագումարին ՀԿԿ Կենտկոմի տված հաշվետվության մեջ այդ մասին ասված էր. «Հայ առաջադիմական, մշակութային, երիտասարդական, մարզական կազմակերպությունները և մամուլի օրգանները արտասահմանում աշխատավոր հայերի մեջ մեծ աշխատանք են կատարում՝ նրանց Սովետական Հայաստանի նվաճումներին ծանոթացնելու ուղղությամբ, նրանց



ճշմարտացիորեն պատմում են մեր իրականության մասին»[2]։ Նկատի ունենալով այդ հանգամանքը, համագումարը համապատասխան կազմակերպություններին ուղղակի դիրեկտիվ տվեց ավելի «ընդլայնել և բարելավել մեր կապերը արտասահմանյան հայերի ու նրանց առաջադիմական կազմակերպությունների հետ»[3]։

Ի կենսագործումն այդ դիրեկտիվների, 1962 թ. ապրիլին ԱՕԿՍ-ում ստեղծվեց նոր՝ սփյուռքահայ գաղթօջախների հետ կապի բաժին, որի ձեռնարկումների շնորհիվ կարճ ժամանակամիջոցում զգալի տեղաշարժեր կատարվեցին հայրենիք—սփյուռք կապերի ընդլայնման գործում։ Եթե 1961 թ. ընկերությունը կապեր ուներ ընդամենը 171 սփյուռքահայ կազմակերպությունների ու անհատների հետ, ապա 1962 թ. վերջում այն անցավ 500-ից[4]։ Կապերն աճեցին ոչ միայն քանակապես, այլև որակապես։ Սկզբունքորեն փոխվեց ընկերության վերաբերմունքը սփյուռքահայ կազմակերպությունների, կրթական, մշակութային և այլ հաստատությունների նկատմամբ։ Եթե նախկինում մեծ մասամբ սփյուռքից ստացվող դիմումների ու խնդրանքների առիթով էին կապեր հաստատվում, ապա ՀԿԿ XXII համագումարից հետո նախաձեռնողը դարձավ ԱՕԿՍ-ը։ Դրա շնորհիվ այդ աշխատանքը զգալի չափով ընդլայնվեց և ավելի արդյունավետ դարձավ[5]։

Ինչ խոսք, որ դրան մեծապես նպաստում էր սփյուռքահայության որոշակի ձգտումը՝ ավելի սերտորեն համախմբվել մայր հայրենիքի շուրջը և վերջինիս օգնությունը ծառայեցնել հայապահպանության կենսական գործին։

Միանգամայն դրական տեղաշարժ էր և այն, որ նկատելիորեն ուժեղանում էր մեր հանրապետության լայն հասարակայնության հետաքրքրությունը սփյուռքի նկատմամբ։ Մեր մտավորականները, գիտական, մշակութային, ուսումնական, մարզական հաստատությունները օրավուր նորանոր կապեր էին հաստատում սփյուռքի առաջադիմական կազմակերպությունների ու գործիչների հետ։

---

2 Տե՛ս «ՀԿԿ Կենտկոմի հաշվետու զեկուցումը XXII համագումարին». «Հայաստան» հրատ., Երևան, 1961, էջ 122։

3 Նույն տեղում։

4 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՄԾ ՊԿԱ, ֆ. 709, ց. 3, գ. 150, թ. 13—22։

5 Տե՛ս նույն տեղում, գ. 151, թ. 1—18։

Կապերի ընդլայնմանը և ընդհանրապես սփյուռքահայ հասարակական-քաղաքական կյանքի նկատելի աշխուժացմանը մեծապես նպաստեց Սովետական Հայաստանի 40-ամյակի տոնակատարություններին մասնակցելու համար 1961 թ. Երևան հրավիրված սփյուռքահայ մեծ թվով գործիչների իրենց երկրները վերադարձից հետո հայրենիքի նվաճումները պրոպագանդելու ուղղությամբ ծավալած լայն գործունեությունը։ Հայրենիք—սփյուռք կապերի սերտացմանը, անշուշտ, զգալի նպաստ բերեցին նաև հազարավոր զբոսաշրջիկների, բարեկամների ու հարազատների փոխայցելությունները, Սովետական Հայաստանում սփյուռքահայ մի շարք պարբերականների ազատ վաճառքը, սփյուռքահայ գրողների ստեղծագործությունների հրատարակումը, գրողների, գիտնականների, մշակութային ու հասարակական գործիչների, ինչպես նաև մարզական կոլեկտիվների հաճախակի հրավիրումը հայրենիք, սփյուռքահայ անվանի մի խումբ գիտնականների ՀՍՍՀ ԳԱ կազմում ընտրելը, սփյուռքահայ արվեստագետների գործերի ցուցահանդեսների կազմակերպումը և բազմաթիվ այլ միջոցառումների իրականացումը։

Այդ գործում պակաս կարևորություն չունեին նաև Սովետական Հայաստանից ականավոր մտավորականների, ստեղծագործական ու մարզական խմբերի այցելությունները սփյուռքահայ գաղթօջախները։ Հայրենի երկրի ամեն մի անհատի կամ խմբի այցելությունը արտասահմանյան հայաբնակ վայրերը միշտ էլ առաջ է բերում տեղի հայության բուռն հետաքրքրությունը, թողնում խոր հետքեր։ Նման հանդիպումները հայրենակարոտ սփյուռքահայ աշխատավորների համար վերածվում են իսկական տոնախմբությունների, ազգային հպարտության անկեղծ զգացմունքներով լցնելով նրանց սրտերը։

Սփյուռքահայության հետ կապերի հիմնական միջոցներից մեկը, անշուշտ, հայաստանյան հրատարակությունների, պարբերական մամուլի և այլ նյութերի սփյուռք առաքումն է։ Այդ ճանապարհով ԱՕԿՍ-ը կարողացավ լայն կապեր հաստատել տասնյակ կազմակերպությունների, թերթերի խմբագրությունների, դպրոցների, գրադարանների, ակումբների, հայրենակցական միությունների ու անհատների հետ։ Այսպես, 1961 թ. հունիսից մինչև 1962 թ. հունիսն ընկած ժամանակամիջոցում ԱՕԿՍ-ը սփյուռքահայ կազմակերպություններին ու անհատ



գործիչներին է ուղարկել 559 անուն 20286 կտոր գիրք, 1783 օրինակ թերթ ու հանդես, մեծ քանակությամբ հայկական երաժշտության ձայնապնակներ, լուսանկարներ, բացիկներ, ալբոմներ, կինոֆիլմեր, զանազան ուղեցույցներ, հուշանվերներ և այլ նյութեր[6]։ Այդ ամենը շատ ավելի մոտեցրին հայրենիքը սփյուռքին, կենարար սնունդ ավին նրան, ըստ ամենայնի խթանելով հայապահպանության համար մղվող պայքարի հաջողությանը։

Սովետական Հայաստանի համապատասխան մարմինները միաժամանակ դրականորեն լուծեցին հայրենադարձության վերսկսման, հայրենի բուհերում և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում սփյուռքահայ երիտասարդների ուսման, Երևանում սփյուռքահայ դպրոցների ուսուցիչների վերապատրաստման ու որակավորման բարձրացման դասընթացների կազմակերպման, սփյուռքահայ դպրոցների համար դասագրքերի պատրաստման ու հրատարակման, նրանց լաբորատոր և այլ սարքավորումներով օգնելու, սփյուռքահայ մեծ թվով դպրոցականների ամառային հանգիստը հայրենիքում կազմակերպելու և այլ հարցեր։ Այս ամենի հետևանքով սփյուռքահայության հետ տարվող աշխատանքի ծավալն այնքան մեծացավ, նրա բնույթն ու բովանդակությունը այնքան բազմազան դարձան, որ անհրաժեշտություն զգացվեց այն ավելի օպերատիվ ղեկավարելու, մի շարք գործնական ու հեռանկարային հարցեր լուծելու և, ընդհանրապես, սփյուռքի հետ տարվող աշխատանքները կոորդինացնելու նպատակով ստեղծել առանձին կենտրոն։ Ահա այդպես առաջացավ «Արտասահմանյան հայրենակիցների հետ մշակութային կապերի հայկական կոմիտե» կոչվող կազմակերպության ստեղծման գաղափարը, որի բազմաբեղուն գործունեության լուսաբանմանն էլ նվիրված է մեր աշխատության սույն գլուխը։

* * *

Սովետական բազմազգ տերության, նրա անբաժան մասը կազմող Սովետական Հայաստանի հզորության ու վերելքի նոր պայմաններում «Արտասահմանյան հայրենակիցների հետ մշա-

6 Տե՛ս նույն տեղում։

կութային կապերի հայկական կոմիտեի» ստեղծումը եղավ կոնկրետ արտահայտություններից մեկը այն մեծ հոգատարության, որ կոմունիստական կուսակցությունն ու սովետական կառավարությունը ցուցաբերում են տարագրության մեջ գտնվող հայության նկատմամբ։

Եվ այսպես, սփյուռքի հետ կապերն ավելի ընդլայնելու ու խորացնելու, Սովետական Հայաստանի նվաճումներին սփյուռքահայության լայն շրջաններին հաղորդակից դարձնելու, նրանց մայր հայրենիքի շուրջը համախմբելու, մեր ժողովրդի հոգեկան միասնականությունը ամրապնդելու և, վերջին հաշվով, հայապահպանության գործը ավելի հաստատուն հիմքերի վրա դնելու նպատակով, Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի 1964 թ. մայիսի 26-ի որոշմամբ ստեղծվեց «Արտասահմանյան հայրենակիցների հետ մշակութային կապերի հայկական կոմիտեն»[7]։ Մայիսի 27-ին կոմիտեի նախագահ նշանակվեց ճանաչված հասարակական գործիչ, պատմաբան Վ. Ե. Համազասպյանը, նախագահի առաջին տեղակալ՝ Ա. Ս. Մարտիրոսյանը[8]։

Կոմիտեի հիմնադիր ժողովը կամ կոնֆերանսը տեղի ունեցավ 1964 թ. հունիսի 25-ին, Երևանում։ Ժողովին մասնակցում էին հանրապետության աշխատավորների և մտավորականության բազմաթիվ ներկայացուցիչներ։ Հիմնադիր ժողովին ներկա էին նաև Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ն և ՍՍՀՄ ժողովրդական նկարիչ, լենինյան մրցանակի դափնեկիր, սոցիալիստական աշխատանքի հերոս Մարտիրոս Սարյանը։ Հիմնադիր ժողովը բազմակողմանիորեն քննարկեց սփյուռքահայության հետ կապերի զարգացման հարցերը և ընտրեց 71 հոգուց բաղկացած «Արտասահմանյան հայրենակիցների հետ մշակութային կապերի հայկական կոմիտե» իր 15 հոգանոց նախագահությամբ[9]։

Հենց կոմիտեի հիմնադիր ժողովում էլ, Մարտիրոս Սարյանի առաջարկությամբ, այն վերակոչվեց «Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտե» ավելի բարեհնչյուն անու-

[7] Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՏ ՊԿԱ, ֆ. 875, ց. 1, գ. 2, թ. 1—2։

[8] Տե՛ս նույն տեղում, թ. 3։ Տարբեր ժամանակներում կոմիտեի նախագահի տեղակալներ են եղել նաև Վ. Դավթյանը, Մ. Մելքումյանը, Պ. Պետրոսյանը, Շ. Ղուկասյանը։ Ներկայումս կոմիտեի նախագահի տեղակալներ են Կ. Միքայելյանը և Ս. Բաղդասարյանը։

[9] Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՏ ՊԿԱ, ֆ. 875, ց. 1, գ. 11, թ. 1—18։



նով[10] (այսուհետև այն կրճատ կանվանենք Սփյուռքի կոմիտե)։ Որոշ ժամանակ անց, մշակվեց նաև կոմիտեի կանոնադրությունը, հաստատվեց ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի կողմից և դարձավ այն հիմքը, որի վրա խարսխվեց այդ կազմակերպության գործունեությունը[11]։

Ստանալով հանրապետության կուսակցական, պետական, հասարակական, մշակութային կազմակերպությունների ամենօրյա օգնությունը, կոմիտեն ծավալեց իր օգտաշատ գործունեությունը՝ հայրենիքի և սփյուռքի միջև լայն կապեր զարգացնելու ուղղությամբ։ Իր գոյության առաջին իսկ օրերից կոմիտեն աշխատեց բոլոր հնարավոր միջոցներով կենդանի ու գրավոր կապեր հաստատել սփյուռքահայ առաջադիմական, դեմոկրատական, հայրենասիրական կազմակերպությունների, նրանց մամուլի օրգանների, դպրոցների, մարզական, երիտասարդական միությունների և անհատների հետ, նպաստել հայրենիք—սփյուռք հետագա մերձեցմանը։

Սփյուռքի կոմիտեի ստեղծումը կարևոր իրադարձություն եղավ համահայկական իմաստով։ Այն ջերմորեն ընդունվեց թե՛ հայրենիքում և թե՛ սփյուռքում։ Հայրենի մտավորականները, ողջունելով կոմիտեի ստեղծումը, գործարար պատրաստակամություն հայտնեցին աշխատել նորաստեղծ կազմակերպության մեջ, ջանք ու եռանդ չխնայել նրա բաժինների ու հանձնախմբերի արդյունավետ գործունեության ծավալման համար։ Հանրապետության մտավորականներից ավելի քան 200 մարդ ընդգրկվեց կոմիտեի աշխատանքներում, նրանցից շատերը դարձան այդ նոր գործի կազմակերպիչներն ու ոգեշնչողները[12]։

Աշխարհի բոլոր ծայրերից սփյուռքահայ բազմաթիվ կազմակերպություններ, պարբերականներ ու անհատ գործիչներ իրենց բարեմաղթություններով նույնպես ողջունեցին կոմիտեի ստեղծումը՝ այն դիտելով որպես հայրենիքի ու սփյուռքի միջև ձգվող մի «ոսկե կամուրջ», որպես մի նոր հիմնավոր միջոցառում, որը կվերացնի անցյալում եղած բոլոր խոչընդոտները և սփյուռքը վերջնականապես կմոտեցնի մայր հայրենիքին, սերտորեն կկապի նրա հետ։ Սփյուռքահայության ներկայացուցիչ-

[10] Տե՛ս նույն տեղում, ց. 2, գ. 43, թ. 1։

[11] Տե՛ս նույն տեղում, գ. 24, թ. 7—8։

[12] Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 11, թ. 1—18 և գ. 37, թ. 1—60։

ները միաժամանակ անկեղծ երախտագիտություն էին հայտնում Հայրենի կառավարությանը՝ իրենց նկատմամբ ցուցաբերած հոգատարության համար։

Ահա թե ինչ էր գրում այդ առթիվ ԱՄՆ-ից հայ գրականության բարեկամների ընկերության վարչությունը. «Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի կազմակերպումը մեզ բոլորիս ուրախություն պատճառեց։ Այն սահմանված է ըլլալու հոգեկան կամուրջը սփյուռքի հայրենակարոտ միությունների և Հայրենիքի միջև...»[13]:

Փարիզում հրատարակվող «Բյուրակն» հանդեսը «Ողջամտության հաղթանակը» խորագրով խմբագրականում, գոհունակությամբ արձանագրելով կոմիտեի ստեղծումը և անդրադառնալով նրա դերին, գրել է. «Հայրենիքի և օտարաբնակ հայերու մշակութային հարաբերությանց պահպանումի ոգին և մեթոդը հիմնական հեղաշրջման ենթարկված է։ Երևանի մեջ կազմված է նոր մարմին մը՝ հատկապես օտարության մեջ բնակող թրքահայ ժողովուրդի զանազան հատվածներու հետ մշակութային կապ և հարաբերություն պահելու նպատակով...

Նոր կազմակերպության ստեղծումով, բոլորովին տարբեր նկարագիր և արժեք կստանա հայրենաբնակ և օտարաբնակ հայերու փոխադարձ հարաբերությունը։ Այս իրողությունը նոր քայլ մըն է հայ ժողովուրդի միության և ամբողջականության իրականացման ճամբուն վրա։ Ինչպես մենք Հայրենիքի կյանքին բոլոր արտահայտությունները մեր սեփականությունը կհամարենք, տեր կկանգնենք անոնց, կհպարտանանք և կհրճվինք անոնցմով, նույնպես ալ, եւ այսու մեր բոլոր խնդիրները պիտի համարվին Հայրենիքի և ժողովուրդին զբաղման առարկա դարձող հարցեր»[14]:

Բուենոս Այրեսի «Սևան» շաբաթաթերթը «Նոր երևույթ և անկյունադարձ մը հայրենիք—սփյուռք հարաբերություններու մեջ» խմբագրականում, մեծ ուրախություն հայտնելով Սփյուռքի կոմիտեի ստեղծման առթիվ, գրել է. «Մեր հայրենի եղբայրները խորապես գիտակցած սփյուռքի հայության օրհասական վիճակին, կհասնին օգնության, մշակութային ավելի սերտ կապերով, նոր ավիշ, եռանդ և հավատք ներարկելու, որպեսզի

13 Նույն տեղում, գ. 37, թ. 43։

14 «Բյուրակն», կիսամսյա հանդես, Փարիզ, 17 հուլիսի, 1964 թ., № 14։



տարագիր հայությունը ապրի, հարատևե հայրենադարձի բախտավոր օրվան համար, իրմեն խլված, հափշտակված, բռնագրավված իրավունքներու պաշտպանչի օրվան համար»[15]:

Շաբաթաթերթը իրավացիորեն գտնում էր, որ «պնդել թե արտահայտան կպահպանվի առանց մայր Հայրենիքի հետ կապ ունենալու, ոչ միայն ցնորք է, պոռոտախոսություն է, այլև հակագիտական է, առանց արմատի, առանց սնունդի ծառին ճյուղն ու տերևները դալար պահելու մանկամտություն է։ Իսկ եթե այդ ցնորքն ու մանկամտությունը, քաղաքական, աշխարհաչայացքային նկատառումներով կրառարավի՝ կրկնակի ան-գամներ հիմարություն է, պանդուխտ, հայրենակարոտ հայու-թյունը դեպի ձուլում, ինքնասպանություն առաջնորդող»[16]:

Բեյրութում լույս տեսնող ռամկավարական «Զարթոնքը» 1964 թ. սեպտեմբերի 10-ին և 11-ին հատուկ խմբագրական-ներ նվիրելով կոմիտեի ստեղծմանն ու նրա դերին, գրել է. «Պանդուխտ հայության հանդեպ հայրենի վերին իշխանությանց տածած սիրուն ու գուրգուրանքին ամենեն պերճախոս ու խորիմաստ արտահայտությունն էր Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի ստեղծումը...»[17]: Թերթը նշում է, որ «ձուլման և կորստյան դեմ պայքարելու կարիքը օրըստօրե ավելի կզգալի կը ըլլայ ամեն տեղ։ Անհրաժեշտ կդառնա ավելի մեծ կարևորություն ընծայել ազգապահպանման զենքերուն, որոնց շնորհիվ ցարդ կարելի եղած է դրական արդյունքներ ձեռք ձգել ու պահել գաղութներու մեծագույն մասին հայեցի դիմագիծը։ Ծանոթ են բոլորին ազգապահպանման այդ զենքերն ու ազդակները,— հայ դպրոց, հայ մամուլ, հայ մշակութային կազմակերպություններ, հայ եկեղեցի, հայ քաղաքական կազմակերպություններ ու մշակութային կապ մայր Հայրենիքի հետ։ Այս վերջին ազդակն է ահա, որ այսօր մեր ուշադրության առարկան կհանդիսանա՝ Երևանի մեջ «Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի» կազմակերպության առնչությամբ»[18]:

Այնուհետև թերթը գրում է. «Իրականության մեջ՝ սա

15 «Սևան», շաբաթաթերթ, Բուենոս Այրես, 15 հուլիսի, 1964 թ., № 151։

16 Նույն տեղում։

17 «Զարթոնք», 10 սեպտեմբերի, 1964 թ., № 292, նաև՝ ՀՍՍՀ ՀՀՄՃ ՊԿԱ, ֆ. 875, ց. 2, գ. 43, թ. 3։

18 Նույն տեղում։

կհանդիսանա կապի անպաշտոն նախարարություն մը։ Հայրենի իշխանությունները, որոնմ հիմա այնքան կարևորություն կընծայեն իրենց պանդուխտ հայրենակիցներուն, այնքան կմտահոգվին անոնց հայապահպանումով, որ ստեղծած են մասնավոր կազմակերպություն, զուտ ճայկական, և հետամուտ են զարկ տալու մշակութային բազմերես գործունեության մը»[19]։ Թերթը սրտանց ողջունում է Սփյուռքի կոմիտեի ստեղծումը և նրան մաղթում հաջողություններ՝ իր ազգօգուտ առաքելության մեջ, վստահություն հայտնելով, որ այն զարկ կտա հայ մշակույթի տարածմանը, կնպաստի ազգապահպանման բախտորոշ պայքարին և կամրապնդի մեր ժողովրդի հոգեկան միասնականությունը։

Ամերիկահայ առաջադիմական միության օրգան «Լրաբեր» թերթը գրել է. «Սփյուռքահայությունը դոտեպնդող, ճերմակ ջարդին դիմադրելու իր կամքը պողպատող ուրիշ մեկ գործոն մըն է մշակութային կապերու ամրապնդումն ու ընդլայնումը մայր հայրենիքին հետ։ Այդ կապերը այնպիսի լայն չափեր առացան, որ անհրաժեշտություն դարձավ ստեղծելու այս տարի առանձին ղեկավար կազմակերպություն մը—Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն՝ իր զանազան բաժիններով և հանձնախումբերով»[20]։

Սփյուռքի կոմիտեի ստեղծումը ողջունեցին և բարձր գնահատեցին նաև անվանի գրողներ Համաստեղը, Լևոն Զավեն Սուրմելյանը, Կարապետ Սիտալը, Բենիամին Նուրիկյանը, Ավետիս Ալիքսանյանը և շատ ուրիշներ։

Սակայն գաղթաշխարհում եղան նաև որոշ անհատներ ու կազմակերպություններ, որոնք թշնամաբար դիմավորեցին հայրենիքի այդ նոր նախաձեռնությունը, փորձեցին նենգորեն ցըրպարտել ու վարկաբեկել այն։ Խոսքը վերաբերում է մասնավորապես դաշնակցական կուսակցությանն ու նրա մամուլին։

Դաշնակցական մամուլը սկզբում համրի նման լուռ մնաց, բայց շուտով, զգալով, որ կոմիտեի կազմակերպումով հայրենիքի և սփյուռքի սերտացող հարաբերությունները անկասկած

[19] «Զարթոնք», 11 սեպտեմբերի, 1964 թ., № 293։

[20] «Լրաբեր», 1 դեկտեմբերի, 1964 թ., № 55, նաև՝ ՀՍՍՀ ՀՀՄՇ ՊՎԱ, ֆ. 875, ց. 4, գ. 1, թ. 3։



նոր մնաս կրերեն իր առանց այն էլ խաթարված դիրքին ու հեղինակությանը, անցավ հարձակման։

Զարախոսությունները սկսեց Սյունիսենի «Ազատություն» ռադիոկայանը, ապա նրան արձագանքեցին Թեհրանի դաշնակցականների «Ալիքն» ու այլ թերթեր, փորձելով ամեն կերպ նվաղեցնել Սփյուռքի կոմիտեի հիմնադրման առաջ բերած խանդավառությունը։ Իրեն սփյուռքահայության միակ ներկայացուցիչը պատկերացնող և այդպես էլ իր օտարերկրյա շեֆերին ներկայացող դաշնակցական կուսակցությունը խիստ վրդովված էր սփյուռքահայության նկատմամբ հայրենի կառավարության այս նոր ուշադրությունից։ Նա լավ էր հասկանում, որ Սփյուռքի կոմիտեի ստեղծումով ու հայրենիքի հետ օրեցօր սերտացող հարաբերությունների հետևանքով ինքը ավելի արագորեն պիտի հեղինակազրկվի ու կորցնի իր եկամուտների աղբյուրները, ուտի բացեց իր զրպարտությունների պարկը։ Սակայն դաշնակցության բարքաչանքներն ի վիճակի չեղան որևէ ազդեցություն ունենալ սփյուռքահայերի լայն շրջանների վրա, քանի որ նրանց բացարձակ մեծամասնությունը Սովետական Հայաստանը համարում է իր միակ հայրենիքը, իր փրկության իսկական ապավենը, որով հպարտանում և որին փարված նա շարունակում է հայ մնալ ամենակուլ օտար ափերում։

Միանգամայն իրավացի է հնչակյան «Արարատ» թերթը, որն իր խմբագրականներից մեկում գրել է. «Հայաստանը հայուն հոգին է ու հավատը։ Սփյուռքահայությունը ամբողջ հոգիով վերափարած է անոր, որ իր գոյության իմաստն է ու ավիշը։ Վերածնված Հայաստանը հայուն ազգային հպարտությունն է, անոր ներկան իմաստավորող և ապագան հիմնավորող գործոնը»[21]։

Անվանի գրող Համաստեղը Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեին ուղղած իր նամակում գրել է. «Հայաստանը մեզի, սփյուռքահայության համար, մարմնի չափ իրական է և ունի հեքիաթի մը գրավչությունը»[22]։

Ընդգծելով հայրենիքի կարևոր դերը սփյուռքահայության գլխին կախված ձուլման չարաղետ վտանգի դեմ պայքարում, Ֆրանսահայ երիտասարդական միության ղեկավարությունը գրել է. «Սփյուռքահայությունը իր համեստ միջոցներով մա-

[21] «Արարատ», 23 փետրվարի, 1966 թ., № 7291։

[22] Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՄՇ ՊՎԱ, ֆ. 875, ց. 1, գ. 32, թ. 15։

քառում է և կմաքառի այդ վտանգի դեմ, սակայն միշտ այն համոզումը ունեցած է, թե մայր Հայրենիքն է, որ իր հմայքով և գործնական միջոցներով միայն կրնա կասեցնել այդ ահավոր այլասերման վտանգը, մինչև այն բախտավոր օրը, որ հնարավոր պիտի ըլլա իր աստանդական զավակներուն իր ծոցին մեջ ընդունելու:

Ողջունելով նոր հիմնադրված կոմիտեն, ավելի քան վստահ ենք, որ այն իր լայնածավալ աշխատանքով մեծ պատմական դեր մը պիտի կատարէ ու պիտի դառնա սփյուռքահայության համար հույսի և լույսի հենարան»[23]:

Այսպիսով, Սփյուռքի կոմիտեի ստեղծումը, բացի թշնամաբար տրամադրված մի նեղ խմբի զրպարտություններից, **ամենուրեք գնահատվեց որպես հայրենասիրական շատ կարևոր քայլ հայրենիք—սփյուռք կապերի ամրապնդման գործում, որպես մի «ոսկե կամուրջ», որի միջոցով միմյանց կողջագուրվեն հայրենիքի և սփյուռքի հարազատները:**

Բազմաթիվ սփյուռքահայ մտավորականներ, հասարակական գործիչներ, գործարար շրջանների ներկայացուցիչներ և այլք, այցելելով հայրենիք, ականատես լինելով նրա առաջընթացին, անկեղծորեն ոգեշնչվեցին նրա վերածնությամբ, ավելի կապվեցին նրան, վարակիչ օրինակ ծառայելով ուրիշներին:

Անկասկած է, որ հայապահպանման բոլոր միջոցների ու գործոնների մեջ գլխավորն ու որոշիչը վերածնված հայրենիքն էր: Նա է հայկական գաղթօջախների գոյատևման և «սպիտակ ջարդի» դեմ մղվող պայքարի հաջողության գլխավոր պայմանը, ուստի պետք է հայրենիքով խանդավառել անոր սերունդը:

Հայրենիքը անգնահատելի, անփոխարինելի ուժ է սփյուռքահայության համար: Վերջինս, հակառակ իր համառ ջանքերին, դատապարտված է անխուսափելի կորստյան, եթե թուլացնի կապերը հայրենիքի հետ: Այս իմաստով միանգամայն իրավացի է Բեյրութում հրատարակվող ՀԲԸՄ պաշտոնաթերթ «Խոսնակը», գրելով, թե՝ «Սփյուռքի մեջ, ամենահրատապ հարցը հայապահպանումն է անտարակույս: Ուստի անհրաժեշտ է, որ անոր միտին մեր բոլոր ճիգերն ու ջանքերը:

Սակայն հայապահպանում հանուն ինչի՞: Մեր գոյամարտը ինքնանպատակ չէ: Անիկա հայրենիքին համար է: Ամբողջական

[23] Նույն տեղում, գ. 37, թ. 43—44:



հայության մը համար: Ահա հայապահպանման մեր սևեռակետը՝ հայը հայ պահել՝ հայրենիքին համար:

Մայր հողն է մեր գոյության ապահով երաշխիքը: Ան է մեր հույսերուն ու երազներուն ամուր կռվանն ու հաստատուն խարիսխը: Երկիր հայրենին, որ հաղթահարելէ ետք բազում խոչընդոտներ, այսօր, ավելի քան երբեք կենսունակ, կբոլորի ազգային, մշակութային ու տնտեսական ծաղկումի ու վերազարթնումի շրջան մը:

Առանց հայրենիքի հետ հոգեկան ու իմացական կապի, սփյուռքի մեջ ազգապահպանման համար թափած մեր ճիգերը կվերածվին հումպետս վատնված աշխատանքի: Հայրենիքը իր բոլոր միջոցներով—ձայնասփյուռ, մամուլ, գիրք, մշակութային հարաբերություններ, փոխայցելություններ—լիաբուռն կաջակցի «լինելության» մեր պայքարին»[24]:

Ահա թե ինչու սփյուռքը կենսունակ պահելու համար անհրաժեշտ է այն մշտապես սնել հայրենիքի «մայրական կաթով», անխառն հայրենասիրությամբ: Միանգամայն պարզ է, որ անհնարին է սնվել հայրենասիրությամբ, առանց դիմելու նրա բուն ակունքին՝ վերածնված հայրենիքին: Առանց հայրենիքի ցանկացած ժողովուրդը կամլանա, կդառնա արմատահանված մի ծառ, որը կանուխ կամ ուշ պետք է ոչնչանա, քանզի կտրված է մայր հողից: Շատ ճիշտ է նկատել Կահիրեի «Արև» օրաթերթը, գրելով. «Պիտի պատուհասվինք այն օրը, որ մենք օտարանանք հայրենիքին, կամ թշնամանանք անոր, և այդ պատուհասումը վախճանն է սփյուռքահայ մեր գոյության: Առանց հայրենիքի շոշափելի իրականության հայրենասիրությունը կդառնար սին երազանք, ավելորդ խարկանք և վնասակար պատրանք»[25]:

Սակայն հայրենիքը երբեք էլ վերացական հասկացություն չէ, այն ունի կոնկրետ կերպարանք, կենդանի ու շոշափելի մարմին, կենսունակ օրգանիզմ: Անդրադառնալով հայության կյանքում հայրենիքի ունեցած դերին, անվանի գրող Վիլյամ Սարոյանը մի առիթով ասել ու բազմիցս կրկնել է, թե՝ «եթե չլիներ Սովետական Հայաստանը, մենք դժբախտ կլինեինք: Մեզ համար մեծ բախտ է, որ մեզ զորավիգ է ռուս ժողովուրդը. մենք

[24] «Խոսնակ», ամսաթերթ, Բեյրութ, 1970 թ., № 4, էջ 121:
[25] ՀՍՍՀ ՀՀՕՇ ՊԿԱ, ֆ. 875, ց. 4, գ. 52, թ. 22:

չէր կարող գոյատևել առանց զորավոր պաշտպանության, իսկ դա Սովետական Միությունն է»[26]։ Մեծ գրողը միանգամայն իրավացիորեն հայության պահպանության և առաջադիմության գրավականը տեսնում էր սովետական ժողովուրդների եղբայրական համագործակցության ու սերտ դաշինքի մեջ։ Սփյուռքահայ առաջադիմական բոլոր խավերի համար միանգամայն պարզ է ու կասկածի ենթակա չէ, որ Սովետական Հայաստանը մեր ժողովրդի հավերժության, նրա ստեղծագործական ոգու կենսունակության իսկական մարմնավորումն է։

Անդրադառնալով գաղթաշխարհում ազգապահպանման գործում հայրենիքի ունեցած դերին, Նյու Յորքում հիմնված Հայ գրականության բարեկամների ընկերության «Հաղորդագրություն» պարբերականը 1968 թ. իր համարներից մեկում գրել է. «Հայրենիքի գաղափարը և հայրենիքի ոգևորիչ դերը սփյուռքի ազգապահպանման մեր մահու և կենաց պայքարին մեջ ամենեն առաջնահերթ, էական ու կենսական պայմանն է, իբրև ներշնչումի մշտածոր աղբյուր ու ավիշ»[27]։

Ահա հենց այդ հանգամանքը նկատի ունենալով, Սփյուռքի կոմիտեն իր կարևորագույն խնդիրը դարձրեց հայրենիքի հետ գաղթօջախների կապերի ընդլայնումն ու ամրապնդումը, դրանով իսկ նպաստելով հայապահպանության գործին։ Կոմիտեն միաժամանակ ձգտում է հնարավորին չափ կոորդինացնել առաջադիմական ուժերի պայքարը ընդդեմ գաղութահայ ռեակցիոն շրջանների և միջազգային իմպերիալիզմի, մերկացնել նրանց դավերը՝ ուղղված խաղաղության, դեմոկրատիայի և ազգային-ազատագրական շարժումների դեմ։ Ասպարեզ մտնելով պատմական այսպիսի կարևոր առաքելությամբ, Սփյուռքի կոմիտեն առաջադիմական ուժերի համընդհանուր համակրանքի ու աջակցության մթնոլորտում հաջողությամբ ծավալեց իր գործնական աշխատանքը սփյուռքահայ գաղթօջախներում։

Արտասահմանում աշխատանքի իրականացման ընթացքում կոմիտեն հենվել է առաջադիմական կազմակերպությունների վրա, օգտագործել նրանց ուժերը։ Այն երկրներում, ուր գոյություն ունեցող ռեակցիոն ռեժիմների կողմից դրանք արգելված են, կոմիտեն առավելապես օգտվել է հայրենասեր անհատ

[26] «Սովետական Հայաստան», 15 դեկտեմբերի, 1981 թ., № 287։
[27] Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 875, ց. 2, գ. 384, թ. 44։



գործիչների օգնությունից, նրանց միջոցով գրականություն ու մամուլ տարածելու և այլ կարգի աշխատանքներ կատարելու համար։ Դրա շնորհիվ Սփյուռքի կոմիտեն դարձել է ճանաչված ու հեղինակավոր մի կազմակերպություն գաղութահայ ամենալայն շրջաններում։

1964 թ. հունիսին, երբ նորաստեղծ Սփյուռքի կոմիտեն ԱՕԿՍ-ից ստացավ նրա սփյուռքի բաժնի գործերը, պարզվեց, որ այն կապ է ունեցել ընդամենը 631 կազմակերպությունների ու անհատ գործիչների հետ[28]։ Վեց ամիս անց, 1964 թ. վերջին, այդ թիվը հասավ 852-ի, ընդգրկելով 40 երկիր[29]։ Մեկ ու կես տարի անց՝ 1965 թ. վերջին, այդ կապերը հասան 1400-ի, ընդգրկելով 42 երկիր[30]։ Դրանցից 648-ը կազմակերպություններ էին (այդ թվում՝ 194 դպրոցներ), 87 թերթերի և ամսագրերի խմբագրություններ, 26 մշակութային և 37 հայրենակցական միություններ, 10 հասարակական, 8 մարզական, 20 երիտասարդական, 11 ուսանողական, 13 կանանց կազմակերպություններ, 2 բարեգործական միություններ (6 բաժանմունքներով), 3 գրական միություններ, 5 հայագիտական ամբիոններ, 26 եկեղեցական թեմեր, 29 գրադարաններ ու հայկական տներ, 20 գեղարվեստական-երաժշտական կոլեկտիվներ, 45 տարբեր բնույթի կազմակերպություններ և 752 անհատ գործիչներ[31]։

Կոմիտեի ստեղծումից հինգ տարի հետո, 1969 թ. հուլիսին, նրա կապերի ընդհանուր թիվը հասավ 4185-ի, որից 829-ը կազմակերպություն և 3350-ը՝ անհատ։ Ըստ աշխարհամասերի այդ կապերը բաշխվում էին հետևյալ կերպ. Ամերիկայում՝ 310 կազմակերպություն, 1130 անհատ, Եվրոպայում՝ 185 կազմակերպություն, 1110 անհատ, Մերձավոր և Հեռավոր արևելքի երկրներում, Ավստրալիայի հետ միասին՝ 384 կազմակերպություն, 1150 անհատ[32]։ Այդ ընթացքում՝ 1964—1969 թթ., Սփյուռքի կոմիտեն հայկական գաղթօջախներն է ուղարկել գեղարվեստական, հայագիտական, արվեստագիտական և այլ բնույթի 1207 անուն գրականություն՝ 149669 օրինակ, դասագրքեր՝ 96200 օրինակ, ձայնապնակներ՝ 11071 հատ, լուսա-

[28] Տե՛ս նույն տեղում, գ. 2, թ. 5.
[29] Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 11, թ. 1—18։
[30] Տե՛ս նույն տեղում, ց. 4, գ. 5, թ. 1։
[31] Տե՛ս նույն տեղում։
[32] Տե՛ս նույն տեղում, ց. 2, գ. 43, թ. 6։

նկարային ցուցահանդեսներ՝ 433 կոմպլեկտ, օրացույցներ՝ 11283 հատ, բազմաթիվ հուշանվերներ, ամսագրեր՝ 1965 թ.՝ 23 անուն, 7397 հատ, 1966 թ.՝ 24 անուն, 13243 հատ, 1967 թ.՝ 28 անուն, 18327 հատ, 1968 թ.՝ 26 անուն, 24290 հատ և 1969 թ.՝ 27 անուն, 24500 հատ[33]: Զրիարար սփյուռք առաքվող պարբերականների մեջ մեծ թիվ են կազմել կոմիտեի օրգաններ «Սովետական Հայաստան» ամսագիրը և «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթը։ Իսկ եթե դրան ավելացնենք նաև բաժանորդագրությամբ ուղարկվող հազարավոր օրինակները, ապա պարզ կդառնա, թե որքան մեծ տարածում է գտնում և հակայական ուժ ձեռք բերում հայրենական տպագիր խոսքը՝ թափանցելով գաղութահայ տարբեր անկյունները։

Այստեղից դժվար չէ նկատել, որ Սփյուռքի կոմիտեի գործունեության մեջ կարևոր տեղ է գրավում հայկական գաղթօջախները թերթերի, ամսագրերի, գրականության և այլ նյութերի ու սարքավորումների առաքումը, այդ թվում՝ գյուղական լաբորատորիաներ, դաշնամուրներ, երաժշտական գործիքներ, մարզական գույք ու հագուստ և այլն։

Կոմիտեի օգնությունը սփյուռքին միջին հաշվով տարեկան կազմել է մոտ մեկ ու կես միլիոն ռուբլի, իսկ եթե նկատի ունենանք նաև հայրենի մի շարք կազմակերպությունների օգնությունը ևս (գիտական, առողջապահական, մարզական, երիտասարդական, տուրիստական և այլն), ապա այդ գումարը կանցնի 2 միլիոն ռուբլուց[34]:

Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի այս առաքումները աննախընթաց բարերար ազդեցություն են ունեցել սփյուռքում։ Թե ուրախության ինչպիսի երջանիկ զգացմունքներ ու հուզումնալից պահեր են ապրել տարագիր հայերը հայրենիքից ամեն մի գիրք ու թերթ ստանալիս, պատմում են կոմիտեում ստացված բազմաթիվ շնորհակալական նամակները։ Օրինակ՝ ԱՄՆ-ից Հակոբ Ջամիկյանը գրել է. «Հեռավոր Ամերիկայի մեկ հեռավոր անկյունը հաստատված ու հայրենիքի անմար բոցը իմ սրտի մեջ մշտավառ, հոգեկան անհուն հրճվանքով ստացա ձեր ուղարկած զանազան գրքերու կապոցները, որոնց ծալքերուն մեջ հայրենիքիս կարոտալի սիրտը, «Արարատի» աչեր ծրարված կզգայի, ամկացած արցունքով կթղթատեի։ Խորին շնորհակալություն ձեր թանկագին այդ մեծարժեք գիրքերու և թերթերու համար»[35]։ Հալեպից Նուբրի Քեշիշյանը «Հայրենիքի ձայն» և «Սովետական Հայաստան» ստանալու առիթով գրել է հետևյալ տողերը. «Անկեղծորեն խոստովանինք, որ հայրենական այս հրատարակությունները նոր եռանդ, լույս և ջերմություն ներմուծեցին մեր հոգիներուն խորը, առավել ևս մոտեցնելով մեզ և սիրեցնելով բոլորին՝ Հոկտեմբերյան մեծ հեղափոխության հարազատ ծնունդ՝ ծաղկյալ ու շենացած մայր հայրենիք Սովետական Հայաստանը»[36]: ԱՄՆ-ի Չիկագո քաղաքից Սուրեն Հովհաննիսյանը գրել է. «Շնորհիվ մշակութային կապի կոմիտեի տարած աշխատանքների, սփյուռքահայության մեջ առաջացած է խոր բեկում հանդեպ հայրենիքի և հայապահպանման։ Եթե մի քանի տարի առաջ հայ երիտասարդներից ոմանք բոլորովին կտրված էին հայությունից և անգամ ուրացած իրենց հայությունը և հայ ծագումը, ապա այսօր նրանք հպարտանում են, որ իրենք հայ են և ունեն հզոր հայրենիք»[37]:

Սփյուռքի կոմիտեի գործունեության մեջ կարևոր տեղ են գրավում նրա կողմից արտասահմանյան հայկական թերթերին ու ամսագրերին ուղարկվող հոդվածները, նյութերը։ Այդ գործին զգալի չափով նպաստեց 1967 թ. դեկտեմբերին հաստատված Երևան—Բեյրութ մեկօրյա հեռատիպը[38]: Հետագայում ստեղծվեցին նաև Երևան—Փարիզ և Երևան—Նյու Յորք հեռատիպերը, որոնք ամենօրյա հաղորդումներ են տալիս Սովետական Միության և մեր հանրապետության կյանքի մասին։ Կոմիտեի մամուլի բաժնի միջոցով առաջադիմական և դեմոկրատական թերթերին ու պարբերականներին առաքվում է տարեկան ավելի քան 350 հոդված ու նյութ։

Իր գոյության առաջին հինգ տարվա ընթացքում կոմիտեն սփյուռքի 80 առաջադիմական թերթերի ու հանդեսների, ինչպես նաև հայկական ռադիոժամերի հասցեով ուղարկել է ա-

[33] Տե՛ս նույն տեղում, թ. 34—35։
[34] Տե՛ս նույն տեղում, թ. 35—36։
[35] Նույն տեղում, գ. 9, թ. 7։
[36] Նույն տեղում, թ. 7—8։
[37] «Սովետական Հայաստան», ամսագիր, № 4, 1977 թ., էջ 11։
[38] Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 875, ց. 2, գ. 28, թ. 4։

ավելի քան 2000 նյութ՝ քաղաքական, տնտեսագիտական, գեղարվեստական և այլ բովանդակությամբ[39]: Նշանավոր իրադարձությունների ու հոբելյանների առթիվ (Վ. Ի. Լենինի, Հովհ. Թումանյանի, Կոմիտասի 100-ամյակների, Երևանի 2750-ամյակի և այլն), կոմիտեի կողմից տարբեր երկրներ են ուղարկվել զեկուցումների նյութեր և այլն: Սփյուռքահայ որոշ պարբերականների ուղարկվել են տոնական համարների հատուկ էջերի մակետներ՝ համապատասխան նյութերով, իլյուստրացիաներով, կլիշեներով:

Արտասահմանում սովետական իրականության ճշմարտացի պրոպագանդման ուղղությամբ մեծ դեր են կատարում նաև 1947 թ. սկսած Երևանից սփյուռքահայերի համար տրվող ամենօրյա ավելի քան 8 ժամ տևող ռադիոհաղորդումները[40]: Տարագիր հայի մինչև հոգու խորքը թափանցող կոմիտասյան «Գարունի» կոչնակները ամեն օր ռադիոընդունիչի մոտ են հրավիրում հարյուր հազարավոր ունկնդիրների Թեհրանում և Փարիզում, Հալեպում և Ֆրեզնոյում, Բաղդադում և Բոստոնում, ամենուրեք, ուր կան հայրենակարոտ պանդուխտ հայ օջախներ: Այդ հաղորդումներին ակտիվ մասնակցություն է ունենում նաև Սփյուռքի կոմիտեն իր հատուկ՝ «Խոսում է Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն» հաղորդաշարով: Ի դեպ, արտասահմանյան բազմաթիվ երկրներում՝ ԱՄՆ-ում, Կանադայում, Արգենտինայում, Ուրուգվայում, Բրազիլիայում, Անգլիայում, Ֆրանսիայում, Լիբանանում, Եգիպտոսում, Կիպրոսում և այլուր, կազմակերպված են մի քանի տասնյակ հայկական ռադիո և հեռուստատեսային հաղորդումներ, որոնց նպատակն է տեղի հայերին օրվա նորությունները մայրենի լեզվով մատուցելու հետ մեկտեղ պատմել Սովետական Հայաստանի կյանքի, տնտեսական, մշակութային նվաճումների մասին[41]: Շատ դեպքերում դրանք փոխարինում են հայերեն թերթերին և անգամ դպրոցներին: Նրանց համար նույնպես Սփյուռքի կոմիտեն և Երևանի ռադիոն սիստեմատիկաբար առաքում են երաժշտական ձայնագրություններ, ռադիոբեմականացումներ և այլ նյութեր: Գնահատելով Երևանի ռադիոյի դերը սփյուռքա-

[39] Տե՛ս նույն տեղում, ց. 4, գ. 51, թ. 21:
[40] Տե՛ս նույն տեղում, գ. 56, թ. 21—22:
[41] Տե՛ս նույն տեղում, ց. 2, գ. 26, թ. 47—51:



հայության կյանքում, շատ ունկնդիրներ իրենց անկեղծ երախտագիտությունն են հայտնում այդ առթիվ: Ահա թե ինչ է գրում Բաղդադի հայոց հոգևոր հովիվ Օշական քահանա Քըլըճյանը. «Սփյուռքահայ կյանքի պայմաններուն մեջ չկա այնքան ուժեղ, հզոր ազդակ մը, որքան Երևանի ռադիոյի ձայնը, որը մեզ կլիցքավորե հայրենասիրությամբ, կբուժե մեր դեռ արյունոտ վերքերը՝ մեր լուռ ցավերը, կհագեցնե մեր կարոտի անմար կրակը և կբնորոշե մեր ինքնությունն իսկ»[42]:

Երևանի ռադիոն սփյուռքահայության ամենասիրելի հյուրն է, ամենաբեր ծիծեռնակը, որ իր թևերով գարուն է սփռում պանդուխտ հայությանը, պատմում հայրենիքի հաջողությունների մասին: Այդ է ակնարկում հալեպահայ Հովիկ Թութունջյանը, գրելով. «Հոկտեմբերը օժանդակեց ձևավորելու և կազմակերպելու կապը հայության ճղակոտոր բեկորներուն և մայր հողին միջև, ստեղծելու հոգևոր և մտավոր կապեր: Հոկտեմբերը խթան եղավ, որ հայրենիք—սփյուռք կապերը զարգանան ու տարագիր հայությունը հայրենիքի շուրջ ավելի սերտորեն համախմբվի, հայրենիքի նկատմամբ անոնց մեջ հավատ, սեր և ազգային հպարտության զգացումը զորանա և անոնք որպես լուսավոր և ազատարար փարոս, իրենց աչքերը սևեռեն դեպի մայր հողը, դեպի մեր փառապանծ հայրենիքը»[43]:

Հեռավոր ափերում ապրող բազմահազար հայերին Սովետական Հայաստանի մասին ճշմարտությունը պատմող այդ հաղորդումները, հասկանալի է, չէին կարող վրիպել արևմուտքի ռեակցիոն շրջանների ուշադրությունից: Նրանք մեծ գումարներ են ծախսում այդ հաղորդումները խանգարելու կամ էլ դրանց ղեկավարությունը իրենց ձեռքը գցելու համար: ԱՄՆ-ում գտնվող «Ամերիկայի ձայն», ԳՖՀ-ում գործող «Ազատության ձայն» և այլ ռադիոկայանների հայկական հաղորդումներն ուղղակի ֆինանսավորվում ու ղեկավարվում են ամերիկյան իշխանությունների կողմից:

Իրենց ազդեցությունն ու տնօրինությունը հայկական ռադիոժամերի վրա հաստատելու փորձեր էին կատարում մի ժամանակ դաշնակցականները նաև Լիբանանում և այլ երկրներում: Սակայն սփյուռքահայ առաջադիմական ուժերը ամեն

[42] «Սովետական Հայաստան», ամսագիր, № 5, 1978 թ., էջ 35:
[43] Նույն տեղում:

ցանք գործադրում են հակազդելու համար ռեակցիոն շրջանների նման ոտնձգություններին և շարունակում են հայրենասիրական ոգով իրենց հաղորդումները։ Այդ գործում առաջադիմական ուժերին զգալի օգնություն են հանդիսանում Սփյուռքի կոմիտեի կողմից նրանց ուղարկվող նյութերը՝ հոդվածները, ձայնագրությունները և այլն։

Հայրենասիրական դիրքերում կանգնած ռադիոհաղորդումներից պետք է նշել ամենից առաջ Ուրուգվայի մայրաքաղաք Մոնտեվիդեոյում դեռևս 30-ական թվականների կեսերից գործող «Ռադիո Արմենիան»։ Նրա երկարամյա տնօրեն, հայրենասեր գործիչ Հարություն Ռուբինյանը, որը սերտ կապերի մեջ է գտնվում մայր հայրենիքի հետ և բազմիցս այցելել է Երևան, իր կատարած գործի մասին գրում է. «Ազգապահպանման նվիրական տեսլականն է, որ մեզ կապած է այս դժվար, փուշոտ, սակայն անուշիկ գործին, որ կկատարենք անտրտունջ»[44]։

Մոնտեվիդեոյում վերջին տարիներին հայրենասիրական եռանդուն գործունեություն է ծավալել նաև «Հայաստանի արձագանք» ռադիոլսարանը, որը ջանք չի խնայում հայրենիք—սփյուռք կապերի ամրապնդման, հայ զանգվածներին հայրենիքին նվիրվածության ոգով դաստիարակելու և ընդհանրապես հայապահպանության ուղղությամբ։ Երկու հայկական ռադիոժամեր են գործում նաև Բրազիլիայում։ Նրանցից մեկը կոչվում է «Մելոդիաս Արմենիաս», իսկ մյուսը՝ «Հայաստանի ձայն»։

ԱՄՆ-ի Ֆրեզնո քաղաքի հայկական ռադիոժամի ղեկավարն է ազգային-հասարակական ակտիվ գործիչ Արա Շիրաղյանը, որի ջանքերով մեծապես ամրապնդվել է ամերիկահայ գործարար շրջանների կապը Սովետական Հայաստանի հետ։

Լոս Անջելոսում գործում է Հարություն Հագիկյանի գլխավորած «Ամերիկահայ ռադիո և հեռուստատեսության ժամը», որը պարբերաբար ցուցադրում է հայրենիքից ստացվող կինոնկարներ, հաղորդում ձայնագրություններ և այլն։ Դետրոյտ քաղաքում գործող «Հայկական ռադիոժամը» գլխավորում է Ալիս Տեր-Վարդանյանը։ Նման ռադիոժամեր կան ԱՄՆ-ի և Կանադայի նաև այլ քաղաքներում[45]։

Փորձը ցույց է տալիս, որ ռադիոժամերը և հեռուստատեսային հաղորդումները հաջողությամբ կկարողանան կատարել իրենց հայրենասիրական առաքելությունը և իրենց ներգործող խոսքն ուղղել սոցիալիստական երկրների ու ազգային-ազատագրական շարժումների դեմ ծավալվող գաղափարական դիվերսիաների դեմ, եթե մշտական ու հետևողական անհրաժեշտ օգնություն ստանան Սովետական Հայաստանից։

[44] Տե՛ս ՀՍՍՀ ՀՍՏԾ ՊԿԱ, ֆ. 875, ց. 2, գ. 26, թ. 47—51։

[45] Տե՛ս նույն տեղում։



Ինչպես արտասահմանում գործող հայկական ռադիո և հեռուստատեսային ժամերի, այնպես էլ այնտեղ հրատարակվող մոտ 150 հայկական պարբերականների համար բավականին լուրջ օգնություն են Սփյուռքի կոմիտեի մամուլի բաժնի կողմից սիստեմատիկաբար նրանց ուղարկվող նյութերը, որոնցով տարագիր հայությունը իրազեկ է դարձվում հայրենիքի վերելքին, ազգային հպարտություն և հավատ ներշնչվում նրան։

Վերջին տարիներին համեմատաբար ավելացել է օտար լեզուներով լույս տեսնող կամ հատուկ էջեր ունեցող սփյուռքահայ թերթերի թիվը։ Նրանց խմբագրությունները Սփյուռքի կոմիտեից խնդրում են իրենց նյութեր ուղարկել օտար լեզուներով։ Հենց այդ նպատակին են ծառայում կոմիտեի մամուլի բաժնի կողմից մի քանի լեզուներով սփյուռք ուղարկվող «Վահագն» երիտասարդական և «Անահիտ» կանանց համար էջերը, որոնցով մայրենի լեզուն չիմացողները ծանոթանում են հայրենիքի կյանքին։ Սփյուռքահայ մամուլին նյութական ու բարոյական մեծ օգնություն է նաև մի շարք թերթերի (Բեյրութի «Կանչ», «Զարթոնք», «Արարատ», Բուենոս Այրեսի «Սևան», Լոս Անջելոսի «Լրաբեր», Փարիզի «Աշխարհ», Սոֆիայի «Երևան», Բուխարեստի «Նոր կյանք» և այլն) ազատ վաճառքը և բաժանորդագրությունը Հայաստանում։ Բավականին օգնություն է ցույց տրվում նաև տառատեսակների, մայր տառերի կլիշեների առաքման միջոցով, սփյուռքահայ մամուլի որոշ թվով աշխատողների հայրենիք հրավիրելով, նրանց կատարելագործումը, հանգիստն ու բուժումը մեզ մոտ կազմակերպելով[46]։

Հայրենիք—սփյուռք առնչությունների մեջ կարևոր դեր են կատարում Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի տպագիր օրգանները՝ «Սովետական Հայաստան» ամսագիրը և «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթը։ 1964 թ. երբ «Սովետական Հայաստանը» ԱՕԿՍ-ի վարչության օրգան լինելուց

[46] Տե՛ս նույն տեղում, գ. 43, թ. 47։

գարձավ Սփյուռքի կոմիտեինը, հիմնովին վերակառուցեց իր աշխատանքը նոր խնդիրներին համապատասխան։ Այն իր էջերում ավելի բազմակողմանի ու խոր արտացոլեց հանրապետության և սփյուռքի կյանքը։ Արագորեն աճեց նաև նրա տպաքանակը՝ 1964 թվականի 2000-ից 1969-ին հասնելով 18000-ի[47], 1980 թ. նրա տպաքանակը կազմում էր 20000 օրինակ։ 1965 թ. օգոստոսի 1-ից լույս է ընծայում կոմիտեի օրգան «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթը, որը լայնորեն լուսաբանում է ինչպես մեր հանրապետության բազմաբովանդակ կյանքը՝ սփյուռքահայության հետաքրքրող տեսանկյունով, այնպես էլ գաղութահայության առօրյան, այնտեղ կատարվող անց ու դարձերը, օրավուր սերտացող հայրենիք—սփյուռք կապերը։ Վստահորեն կարելի է ասել, որ աշխարհագրական առումով այն հայկական ամենատարածված թերթն է աշխարհում։ Եթե 1965 թ. նրա տպաքանակը կազմում էր 7000, ապա 1969 թ. հասավ 73 հազարի[48], իսկ 1980 թ.՝ 31000 և տարածվում է ավելի քան 50 երկրում։ Շաբաթաթերթի դերը շատ լավ է բնութագրել ֆրանսահայ հասարակական գործիչ Միհրան Մավյանը, ասելով. «Գաղթօջախներու և մայր հայրենիքի հետ կենդանի կապ հաստատող ամենազորեղ կամուրջն է «Հայրենիքի ձայնը», որը կկատարի հսկայական դեր՝ ընդունող և հաղորդող։ Կընդունի հայ սփյուռքը՝ իր բոլոր շարժումներով—գրական, գեղարվեստական, կրթական և կցոլարձակե մայր հայրենիքի հուսադրիչ լույսերը, պայծառ իրականությունը»[49]։ Սփյուռքահայ արձակագիր Սմբատ Փանոսյանը (Հալեպ) այդ մասին գրել է. «...«Հայրենիքի ձայն» շաբաթաթերթը մեկն է հայապահպանման լավագույն ազդակներից։ Մեծվաչյան աշխատանքով խմբագրությունը կփորձե անկարելին՝ իր շաբաթաթերթը հասցնել սփյուռքի ամենամութ և կորած անկյունները, երբ այդ տեղեն լավին ամենաթույլ ճիչերն իսկ ազգապահպանման կանչերուն»[50]։

ԱՄՆ-ից ուսուցիչ Ներսես Բաբուրյանը գրել է, թե «կան թերթեր ու գրքեր, զորս կկարդանք մեր նկարագրի ու հոգու հայկականության ավնվացման համար։ Այդ թերթերեն է «Հայրենիքի ձայնը»։ Դա մեր վերածնված հայրենիքի ձայնն է, անոր կերտման քաղցրահնչյուն եղանակը։ Շնորհակալություն կհայտնենք իր «զավակունքը փնտրող» մայր հայրենիքի բարեխնամ կառավարությանը՝ մեզի պարգևած այս հրաշալի թերթին համար։ Օտար անապատներուն մեջ խանձվող մեր պանդուխտ հոգիներուն համար «Հայրենիքի ձայնը» իսկական օազիս մը եղավ»[51]։

Սիրիահայ նշանավոր ակնաբույժ, հայրենասեր հասարակական գործիչ Ռոբեր Ճեպեճյանը «Հայրենիքի ձայնը» անվանել է «նոր ոսկե կամուրջ հայրենիքի և սփյուռքի միջև»[52]։ Շատ դիպուկ և պատկերավոր է արտահայտվել Կահիրեի ռամկավարական «Արև» օրաթերթի նախկին խմբագիր Էդուարդ Կատալոզյանը, ասելով. «Ամբողջ աշխարհով մեկ սփռված հայերը ծարավի են «Հայրենիքի ձայնին»։ Թող այդ հնչեղ ձայնը էլ ավելի ոգևորի սփյուռքահայերի սրտերը»[53]։ Միանգամայն իրավացի է ամերիկահայ գրող Լևոն Զավեն Սուրմելյանը, երբ գրում է, թե՝ «այսօր դեռևս հնարավոր չէ բոլոր հայերին հավաքել հայկական հողի վրա, սակայն «Հայրենիքի ձայն» թերթը ամրացնում է հոգևոր կապերը հայրենիքի և ամբողջ աշխարհով մեկ սփռված հայերի միջև»[54]։

Անդրադառնալով շաբաթաթերթի նշանակությանն ու խաղացած դերին, Բեյրութի Ռուբինյան վարժարանի տնօրեն և «Նոր սերունդ մշակութային շարժում» միության նախագահ, բանաստեղծ Պեպո Սիմոնյանը գրել է. ««Հայրենիքի ձայնը» կգտնեմ վերին աստիճանի շահեկան։ Մեր հայրենի պետականությունը վերին աստիճանի երախտապարտ գործ կատարեց, ձեռնարկելով այս շաբաթաթերթի հրատարակությունը, որը մեծ դեր է կատարում սփյուռքահայությանը հայրենիքի շուրջը համախմբելու ուղղությամբ»[55]։

Խիստ ուշագրավ և բազմանշանակալի է նաև այն փաստը, որ սփյուռքահայ շատ թերթեր իրենց էջերում ոչ միայն արտատպում են «Հայրենիքի ձայնի» նյութերի մեծ մասը, դրանք օգ-

---

[47] Տե՛ս նույն տեղում, թ. 55։
[48] Տե՛ս նույն տեղում, թ. 51։
[49] Նույն տեղում, ց. 4, գ. 9, թ. 40։
[50] Նույն տեղում, ց. 2, գ. 43, թ. 50։
[51] Նույն տեղում, թ. 50—51։
[52] Նույն տեղում, ց. 4, գ. 5, թ. 13։
[53] Նույն տեղում։
[54] Նույն տեղում։
[55] Նույն տեղում, գ. 9, թ. 40։

տագործվում են նաև հայկական ռադիոհաղորդումներում, թարգմանվում են անգամ օտար լեզուներով, այլև երբեմն օգտագործվում են հայկական վարժարաններում որպես հայոց պատմության նյութեր, որով էլ՛ ավելի են մեծանում «Հայրենիքի ձայնի» տարածման շրջանակներն ու ներգործության ոլորտները։

* * *

Հայրենիք—սփյուռք կապերի մեջ առավել էական ու արդյունավետ են կենդանի կապերը, փոխադարձ կոնտակտները, փոխայցելությունները, անմիջական հանդիպումները։ Անձնական կոնտակտների հաստատումը զգալի նպաստ է բերում հայրենիք—սփյուռք առնչություններին։ Անձնական կոնտակտների հաստատման լավագույն միջոցներից մեկը տուրիզմն է, որը հատկապես վերջին տարիներին շատ լայն ծավալ է ստացել և այն հաճախ է օգտագործվում Սփյուռքի կոմիտեի կողմից։ Այդ նպատակով կոմիտեն սերտ կապեր է պահպանում Արտասահմանյան տուրիզմի հանրապետական վարչության հետ՝ մի կողմից սփյուռքահայ զբոսաշրջիկների շրջանում ավելի բովանդակալից աշխատանք տանելու, իսկ մյուս կողմից՝ արտասահման մեկնող տուրիստական խմբերը ավելի նպատակասլաց կերպով կոմպլեկտավորելու համար։

Կոմիտեի ստեղծումից հետո, 1964 թ. երկրորդ կեսին, նրա կողմից ընդունվել են 18 երկրներից հայրենիք այցելած ավելի քան 1000 զբոսաշրջիկներ, 8 երկրներից 58 հասարակական գործիչներ ու արվեստագետներ՝ որպես հյուրեր։ 1964 թ. առաջին անգամ Հայաստան եկավ սփյուռքահայ բժիշկների 7 հոգուց կազմված պատվիրակությունը, որը 10 օրվա ընթացքում հանգամանորեն ծանոթացավ հանրապետությունում առողջապահության գործի կազմակերպմանը, այցելեց մշակութային օջախներ, տեսարժան վայրեր և այլն[56]։ 1965 թ. Հայաստան այցելեցին 4000[57], իսկ 1966 թ.՝ 7300 հայ զբոսաշրջիկներ[58]։

Արտասահմանից ժամանող հայ զբոսաշրջիկների գրեթե բոլոր խմբերը, որպես կանոն, ընդունվում են Սփյուռքի կոմի-

56 Տե՛ս նույն տեղում, գ. 5, թ. 1—13։

57 Տե՛ս նույն տեղում։

58 Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 36, թ. 45։



տեում, ուր նրանց համար կազմակերպվում են դասախոսություններ, զրույցներ, հասարակայնության ներկայացուցիչների հետ հանդիպումներ, ցուցադրվում են հայկական կինոնկարներ, նրանց տրվում են հուշանվերներ, բուկլետներ, կրծքանշաններ, ձայնապնակներ, գրքեր և այլն։

1966 թվականին կոմիտեի հյուրերն են եղել Ամերիկահայ առաջադիմական միության նախագահ Արամ Ջարդարյանը, «Լրաբերի» այն ժամանակվա խմբագիր Վահան Ղազարյանը, Ֆրանսահայ մշակութային միության ակտիվ գործիչ Աղասի Դարբինյանը, բուլղարահայերի «Երևան» մշակութային միության ղեկավարներ Գաբրիել Գաբրիելյանը, Մարտիրոս Խաչիկյանը, Բենիամին Թյուֆենկչյանը, նրանց հետ շուրջ 200 հայրենակիցներ։ Հյուր են եղել նաև մի շարք հայրենակցական միությունների ներկայացուցիչներ, սիրիահայ հասարակական գործիչ, նշանավոր ակնաբույժ Ռուբեն Ճեպեճյանը, Բեյրութի «Ջահակիր» թերթի խմբագիր Սարգիս Պալյանը, արգենտինահայ հասարակական առաջադեմ գործիչ Տիրուհի Քոթահլյանը, Սան Պաուլոյի «Արարատ» հիվանդանոցի տնօրեն բժիշկ Ավետիս Կարապաշյանը և ուրիշներ[59]։

1967 թվականին Սփյուռքի կոմիտեի գործունեության կենտրոնում էր գտնվում Հոկտեմբերյան հեղափոխության 50-ամյակի արժանավայել նշումը։ Այդ առթիվ անհրաժեշտ նյութեր արտասահման առաքելուց բացի, կոմիտեն հայրենիք հրավիրեց մեծ թվով սփյուռքահայերի։ 1967 թ. կոմիտեի գծով սփյուռքից հյուր եկան 701 մարդ, որից 500 բուլղարահայեր՝ որպես գեղարվեստական ինքնագործ խմբերի անդամներ[60]։ Սփյուռքահայ բազմաթիվ հյուրեր մասնակցեցին նաև Հայաստանում սովետական իշխանության հաստատման 47-րդ տարելիցին, Եղիշե Չարենցի 70-ամյակին, Նոր Մալաթիայի և Նոր Սեբաստիայի հիմնադրման 40-ամյակների տոնակատարություններին և այլ միջոցառումների։

1967 թ. առաջին անգամ սփյուռքահայ բանվորական պատվիրակություն ժամանեց Հայաստան և մասնակցեց պաշտոնական հանդիսություններին։ Հալեպի Ազգային մշակութային միության 5 ներկայացուցիչներ ջերմ ու սրտագին հանդիպում-

59 Տե՛ս նույն տեղում, ց. 2, գ. 22, թ. 1—35։

60 Տե՛ս նույն տեղում, գ. 28, թ. 2։

ներ ունեցան հայրենի աշխատավորների հետ, այցելեցին մի շարք արդյունաբերական ձեռնարկություններ, պատմական հուշարձաններ, տեսարժան վայրեր։ Նրանք մեկնեցին հայրենական խոր տպավորություններով ու նոր լիցք ստացած[61]։

Հոկտեմբերյան հեղափոխության 50-ամյակի երևանյան տոնակատարություններին մասնակցեցին նաև այլ պատվիրակություններ։ Դրանց թվում էին՝ հնչակյան պատվիրակությունը (որի կազմի մեջ մտնում էին կուսակցության կենտրոնական վարչության ատենապետ Հարություն Կուժունին և ատենադպիր, «Արարատ» օրաթերթի խմբագրապետ Ժիրայր Նաիրին), Ֆրանսահայ մշակութային միության պատվիրակությունը (որի կազմի մեջ էին Միության գլխավոր քարտուղար Զարեհ Զարմիչյանը, «Աշխարհ» խմբագրապետ Ավետիս Ալիքսանյանը, նկարիչ Ռիշար Ժերանյանը և քանդակագործուհի Դարիա Կամսարականը)։ Հյուրերի թվում էին նաև ԺԱՖ-ի ներկայացուցիչ նկարիչ Արտավազդ Պերպերյանը (Ֆրանսիա), Արգենտինայից՝ բանաստեղծուհի Ալիսիա Կիրակոսյանը և ուրիշներ[62]։

Եղիշե Չարենցի ծննդյան 70-ամյակի հանդիսություններին, որպես Սփյուռքի կոմիտեի հյուրեր, մասնակցեցին ֆրանսահայ գրողների միության նախագահ Մառի Աթմաճյանը, լիբանանահայ «Գրական շրջանակ» առաջադիմական գրողների կազմակերպության նախագահ Գառնիկ Ադդարյանը, իտալահայ բանաստեղծ և Միլանի մշակութային հայ տան ղեկավար Արամայիս Սրապյանը, ֆրանսահայ արձակագիր Զարեհ Որբունին և ուրիշներ։

1967 թ. հայրենիք են հրավիրվել նաև Կիպրոսի հանրապետության պառլամենտում հայ համայնքի ներկայացուցիչ Պերճ Թիլեպյանը, Նիկոզիայի քաղաքագլխի տեղակալ Անդրանիկ Աշչյանը, Մելքոնյան կրթական հաստատության այն ժամանակվա տնօրեն Ասատուր Պետյանը, բանաստեղծ, հասարակական գործիչ Սմբատ Տեովլաթյանը, ֆրանսահայ կոմունիստական շարժման վետերան Միհրան Մավյանը, նկարիչ Զարեհ Մութաֆյանը, արգենտինահայ ճարտարապետներ, կոմունիստներ Ռոբերտ Տորաշյանն ու Խորեն Սարգսյանը, Նյու Յորքի

61 Տե՛ս նույն տեղում, ց. 4, գ. 9, թ. 18։
62 Տե՛ս նույն տեղում, ց. 2, գ. 26, թ. 5։



«Մետրոպոլիտեն-օպերայի» նշանավոր երգչուհի Լիլի Չուգասզյանը և ուրիշներ։

1969 թ., մի շարք միջոցառումների անցկացման հետ կապված, Սովետական Հայաստան են հրավիրվել սփյուռքահայ մշակութային ու հասարակական աչքի ընկնող 165 գործիչներ։ Այդ թվում եղել են Ստենֆորդի համալսարանի (ԱՄՆ)ականավոր ֆիզիկոս Զավեն Կիրակոսյանը, Գ. Կյուլպենկյան հիմնարկության հայկական ձեռնարկների բաժնի վարիչ Ռոպեր Կյուլպենկյանը և նույն բաժնի խորհրդական, գրող Վահրամ Մավյանը, Ամերիկահայ առաջադիմական միության կենտրոնական վարչության նախագահ Ալպերտ Ճանճիկյանը, ԱՄՆ-ի «Նոր աշխարհ» թերթի խմբագիր Սամվել Թումայանը, ամերիկահայ հասարակական գործիչ Հարություն Հազարյանը, որը Մատենադարանին նվիրել է 305 արժեքավոր ձեռագիր։

1969 թ. մայիս-հուլիս ամիսներին Երևանում հյուրընկալվել են Բեյրութից ժամանած հայ սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցության 12 մարդուց բաղկացած և Լիբանանի կոմունիստական կուսակցության հայ անդամներից կազմված 13 հոգանոց բանվորական պատվիրակությունները։ Ֆրանսիայից ժամանել են մեծանուն նկարիչ Գառզուն, ՀՍՍՀ ԳԱ արտասահմանյան անդամներ Ջատիկ Խանզադյանը, Սիրարփի Տեր-Ներսեսյանը և ուրիշներ։ Սփյուռքի կոմիտեն մեծ թվով հյուրեր ունեցավ հատկապես Հով. Թումանյանի և Կոմիտասի հարյուրամյակների առիթով[63]։

1970 թ., Սովետական Հայաստանի 50-ամյակի առիթով, կոմիտեի կողմից հայրենիք հրավիրվեցին վեց տասնյակից ավելի սփյուռքահայ հասարակական, մշակութային գործիչներ[64]։ Նույն թվին, որպես կոմիտեի հյուրեր, հանրապետությունում են գտնվել ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Արգենտինայի, Բրազիլիայի, Լիբանանի, ՍԱՀ-ի, ԵԱՀ-ի և այլ երկրների հայկական կազմակերպությունների մի շարք պատվիրակություններ։

Սփյուռքի կոմիտեի և Ամերիկահայ առաջադիմական միության նախաձեռնությամբ Սովետական Հայաստանի կեսդարյա հոբելյանի տարին հայկական բոլոր գաղթօջախներում հայտարարվեց զանգվածային ընթերցողական (կրոսաշրջիկության) տարի։ Ուշագրավ

63 Տե՛ս նույն տեղում, ց. 4, գ. 17, թ. 5—6։
64 Տե՛ս նույն տեղում, գ. 51, թ. 28։

էր այն հանգամանքը, որ զբոսաշրջիկների կազմում գնալով ավելի շատ երիտասարդներ էին ընդգրկվում։ Պետք է նշել, որ Սփյուռքի կոմիտեն միանգամայն ճիշտ է վարվում հատուկ ուշադրություն դարձնելով ընդհանրապես երիտասարդության հետ տարվող աշխատանքներին, քանի որ նրանից է կախված գաղթաշխարհի ապագան։

Բեյրութի «Դարուհի Հակոբյան» վարժարանի շրջանավարտները, որոնք կոմիտեի հրավերով եկել էին հայրենիք, Լիբանան վերադառնալուց հետո երախտագիտությամբ գրել են. «Մեր շրջապտույտի ընթացքին կարճ ժամանակի մեջ տեսանք շատ բան, հպարտացանք մեր հայրենիքի վերելքով, շլացանք անոր կախարդական գեղեցկություններով, հրճվեցանք անոր փառքով և հզորացանք անոր ավյունով։ Օտար ափերու մեջ ամեն մեկս այժմ դարձած ենք քիչ մը ավելի հզոր հայեր»[65]։ Նման բովանդակությամբ նամակները, որոնք բազմաթիվ են, վկայում են սփյուռքահայ աշխատավորների անկեղծ հայրենասիրության մասին, դեպի հայրենիքը նրանց ունեցած հավատի մասին, հավատ, որը նրանց մեջ ավելի է ամրապնդվում ու հզորանում սովետական իրականության շնորհիվ։

1970 թ. սկսած, ամեն տարի, կոմիտեի կողմից շուրջ մեկ ամիս հայրենիքում հյուրընկալվում են ԱՄՆ-ի Հայաստանյաց եկեղեցվո երիտասարդական կազմակերպության մի քանի տասնյակ հոգուց բաղկացած խմբերը։ Սփյուռքի կոմիտեի կողմից մշակված ծրագրով կազմակերպված դասընթացներում այդ խմբերի անդամները ուսումնասիրում են հայոց պատմություն, գրականություն և լեզու։ Ամերիկահայ երիտասարդները հաճույքով սովորում են նաև հայկական պարեր ու երգեր, շրջագայում են հանրապետությունում, հանդիպումներ ունենում գիտության ու մշակույթի գործիչների հետ և հայրենական վառ տպավորություններով վերադառնում իրենց բնակության վայրերը։ Նրանք հպարտությամբ իրենց տպավորություններն են հաղորդում հայրենակիցներին և դրանով նպաստում նորանոր խմբերի հայրենիք այցելելուն, նրա հետ կապվելուն[66]։

Սփյուռքի կոմիտեի կողմից որպես հյուրեր հայրենիք են հրավիրվում հատկապես հասարակական, մշակութային գործ-

[65] Նույն տեղում, ց. 6, գ. 9, թ. 9։

[66] Տե՛ս «Սովետական Հայաստան», ամսագիր, № 9, 1977 թ., էջ 35։



իչներ, գրողներ, լրագրողներ, որոնք գաղթօջախները վերադառնալուց հետո իրենց բանավոր ու գրավոր ելույթներում նկարագրում են հայրենի երկրի հաջողությունները, պրոպագանդում դրանք և սփյուռքահայ աշխատավորներին ավելի սերտորեն համախմբում Սովետական Հայաստանի շուրջը։

Սփյուռքի կոմիտեն մեծ աշխատանք է կատարում նաև արտասահման մեկնող տուրիստական խմբերի միջոցով։ Կոմիտեին տրամադրվող ուղեգրերը հատկացվում են մասնագիտական խմբերի կազմակերպմանը, որոնցում ընդգրկվում են հանրապետության մտավորականության ներկայացուցիչներ՝ գրողներ, արվեստագետներ, գիտնականներ։ Նրանք իրենց այցելած երկրների հայկական գաղթօջախներում կազմակերպում են բովանդակալից երեկոներ, զեկուցումներ, հայրենիքի կյանքի տարբեր բնագավառներին վերաբերող հարցազրույցներ, գեղարվեստական միջոցառումներ և այլն։ Անշուշտ, դրանք նույնպես իրենց նպաստն են բերում հայրենիք—սփյուռք կապերի զարգացմանը։ Նման մասնագիտական խմբերով տուրիստական արդյունավետ այցելություններ են կազմակերպվել ԱՄՆ, Արգենտինա, Ֆրանսիա, Լիբանան, Սիրիա, Եգիպտոս և այլ երկրներ։ Օրինակ, 1964 թ. Սփյուռքի կոմիտեի կողմից Թ. Ալթունյանի անվան երգի-պարի անսամբլի հետ Սիրիա և Լիբանան մեկնեցին բանաստեղծ Հրաչյա Հովհաննիսյանը, պրոֆեսոր Ռուբեն Զարյանը, լրագրող Գուրգեն Առաքելյանը, որոնք օգտակար ելույթներ ունեցան Հալեպում, Դամասկոսում, Բեյրութում և այլ քաղաքներում[67]։

Ֆրանսահայ մշակութային միության և ԺԱՖ-ի հրավերով 1965 թ. մեկ ամիս Ֆրանսիայում եղան Հայաստանի գրողների միության առաջին քարտուղար Էդվարդ Թոփչյանը, գրող Սերո Խանզադյանը և Սփյուռքի կոմիտեի նախագահ Վարդգես Համազասպյանը[68]։ Նրանք հանգամանորեն ծանոթացան տեղի հայկական կազմակերպությունների աշխատանքներին, միաժամանակ Փարիզում, Լիոնում, Տեսինում, Վալանսում և այլ քաղաքներում հանդիպումներ ունեցան մշակութային, հասարակական, գրական, կրթական ու երիտասարդական կազմակերպությունների ղեկավարների, մամուլի աշխատակիցների,

[67] Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՕՇ ՊԿԱ, ֆ. 875, ց. 1, գ. 37, թ. 72։

[68] Տե՛ս նույն տեղում։

եկեղեցականների և այլ խավերի ներկայացուցիչների հետ, ելույթներ ունեցան հայ համայնքների հավաքույթներում։ Մի խոսքով, արտասահմանում ապրող հայ ազգաբնակչության շրջանում Սովետական Հայաստանի նվաճումները պրոպագանդելու, սփյուռքահայության նոր հատվածներ մայր հայրենիքի հետ կապելու, մեր երկրի ու ժողովրդի բարեկամների թիվը մեծացնելու գործում մեծ նշանակություն են ունեցել հանրապետության հասարակական-քաղաքական գործիչների, գիտնականների, գրողների, արվեստագետների խմբերի այցելությունները հայկական գաղթօջախները։ Վերջիններիս կյանքի խորքերը թափանցելու, նրանց ավելի լավ ճանաչելու իմաստով դրանք շատ կարևոր նշանակություն ունեն։

* * *

Գաղթաշխարհում նոր սերնդի հայեցի կրթության ու դաստիարակության գործում, վերջին հաշվով ուծացման վտանգին դիմագրավման գործում, շատ կարևոր դեր ունի մայրենի լեզվով դպրոցը։ Սփյուռքահայ դպրոցը հայապահպանման ամենակարևոր օջախներից մեկն է։ Ուստի բնավ պատահական չէ, որ Սփյուռքի կոմիտեի գործունեության հիմնական բնագավառներից մեկը եղել է արտասահմանյան հայկական դպրոցների հետ տարվող աշխատանքը։

Սփյուռքի կոմիտեի 70-ական թվականների վերջերի տվյալներով աշխարհի տարբեր երկրներում գոյություն ունեցող շուրջ հինգ տասնյակ հայկական գաղթօջախներից 25-ում կան մոտ 600 հայկական կրթական հաստատություններ, որոնցում ընդգրկված են ավելի քան 200 հազար երեխաներ։ Կրթական այդ հաստատություններից մոտ 350-ը ամենօրյա դպրոցներ են, իսկ մնացածը՝ մեկօրյա կրթօջախներ, ուր հիմնականում երեխաները սովորում են հայերեն գրել-կարդալ[69]։

Հայկական դպրոցների համեմատաբար խիտ ցանց գոյություն ունի Մերձավոր և Միջին արևելքի երկրներում։ Այսպես, Լիբանանում մինչև իսրայելական վերջին ագրեսիան կար 80 հայկական դպրոց, որից 63-ը՝ Բեյրութում, Սիրիայում՝ 72, Իրանում՝ 25, Թուրքիայում, այսինքն Ստամբուլում՝ 22 և այլն։

[69] Տե՛ս նույն տեղում, ց. 4, գ. 5, թ. 2, գ. 6, թ. 1—12։



լատինական Ամերիկայի գաղթօջախներում կա մոտ 30 հայկական վարժարան։ Դրանց թիվը համեմատաբար մեծ է Արգենտինայում, միայն Բուենոս Այրեսում կա 12 հայկական դպրոց։ Ֆրանսիայում, ուր ապրում է մոտ 200 հազար հայ, գործում է ընդամենը 2 մշտական հայկական դպրոց[70]։ Արտասահմանյան ամենահայաշատ երկրում՝ ԱՄՆ-ում, հաշվում են մոտ 80 հայկական դպրոց, որից սակայն միայն 7-ն են ամենօրյա, իսկ մնացածները կիրակնօրյա վարժարաններ են[71]։

Միանգամայն հասկանալի է, որ անչափ դժվար է օտարության մեջ մայրենի լեզվով դպրոց պահելը։ Ամենուրեք առկա է նյութական միջոցների սղությունը, դպրոցական համար շենքերի բացակայությունը, դասագրքերի և ուսուցիչների պակասը և այլն։ Որպես կանոն, հայկական գաղթօջախներ ունեցող երկրների մեծ մասում իշխանությունները գրեթե միշտ էլ դժկամությամբ են թույլատրում ազգային փոքրամասնությունների դպրոցների գոյությունը։ Ոչ երկրորդական հանգամանք է նաև մեծ քաղաքների տարբեր ծայրերից երեխաներին հայկական վարժարան հասցնելու դժվարությունը։ Այս և այլ կարգի խոչընդոտները հաղթահարելու համար պահանջվում են մեծ, հիրավի անձնազոհ ջանքեր։

Ահա թե ինչու Սփյուռքի կոմիտեի, ՀՍՍՀ լուսավորության մինիստրության և հանրապետության այլ օրգանների ուշադրության կենտրոնում են եղել արտասահմանյան հայկական դպրոցները, նրանց աշակերտների հայեցի կրթության ու հայրենասիրական ոգով դաստիարակության հարցերը։

Հատկապես վերջին քսանամյակում սփյուռքահայ դպրոցներին մայր հայրենիքից կազմակերպվել է մեծ ու սիստեմատիկ օգնություն։ 1962—1980 թթ. ընթացքում նրանց համար պատրաստվել, հրատարակվել ու ձրիաբար առաքվել է 12 անուն ավելի քան 300 հազար դասագիրք։ 1962 թ. սկսած տարեկան մինչև 50 սփյուռքահայ ուսուցիչների համար հայրենիքում կազմակերպվում են վերապատրաստման ու որակավորման ամենամյա երկամսյա դասընթացներ, որտեղ սփյուռքահայ շատ մանկավարժներ բարձրացնում են իրենց որակավորումը, ծանոթանում հայրենի իրականությանը։ Այդ նույն ժամանակամի-

[70] Տե՛ս նույն տեղում։

[71] Տե՛ս նույն տեղում, ֆ. 326, ց. 2, գ. 204, թ. 1—15։

ջոցում ավելի քան 2000 սփյուռքահայ երեխաներ իրենց ամառային հանգիստն են անցկացրել հայրենի պիոներական ճամբարներում ու մանկական առողջարաններում[72]: Միայն 1964—1969 թթ. Սփյուռքի կոմիտեն, բացի առանձին հազարավոր դասագրքերից, արտասահմանյան հայկական վարժարաններին է ուղարկել 18 կոմպլեկտ լաբորատորիաներ, 3 կոմպլեկտ կինոապարատներ, 245 անուն 100 հազար կտոր ուսումնական, գեղարվեստական, մանկական ու այլ գրքեր, կինոֆիլմեր, երևանյան մակնիշի դաշնամուրներ և այլ երաժշտական գործիքներ, դիդակտիկ նյութեր, թերթեր, ամսագրեր և այլն, այն ամենը, ինչը նպաստում է ուսման պրոցեսի հաջող կազմակերպմանը, պատանեկության աշխարհայացքի ճիշտ ձևավորմանը, նրա դաստիարակության գործին[73]:

Սփյուռքի երեխաների կրթական գործին զգալի նպաստ եղավ Սովետական Հայաստանում նրանց համար արևմտահայերեն ուղղագրությամբ դասագրքերի պատրաստումը, հրատարակումն ու ձրիաբար առաքումը արտասահման: Սփյուռքահայ բազմաթիվ ուսուցիչներ սրտանց ողջունեցին այդ կարևոր միջոցառումը, որը զգալի օգուտ է բերում հայկական վարժարաններին, նպաստում մայրենի լեզվի ու գրականության դասավանդման բարելավմանը:

Ահա թե ինչ է գրել Հալեպի հայկական վարժարաններից մեկի տնօրեն Երվանդ Ակիշյանը. «Սույն նամակին տոն տվող պատճառը այն հոյակապ և աննախընթաց գործն է, որուն նախաձեռնողը եղավ Հայաստանի պետությունը: Խոսքս սփյուռքահայ վարժարաններու համար հրատարակված հայերեն լեզվի և գրականության դասագրքերու մասին է:

Այդ դասագրքերն ու այբբենարանները խիստ մատչելի գըտանք սփյուռքահայ աշակերտներու համար: Անոնք ամեն հարմարություններով օժտված հրատարակություններ են»[74]:

Սակայն սփյուռքահայ դպրոցների համար դասագրքերի հրատարակումը, ինչպես և հայրենիքից կատարվող մյուս ձեռնարկումները, դժգոհություն ու չարություն հարուցեցին որոշակի շրջաններում: Օրինակ՝ «Սփյուռք» թերթի խմբագիր Սիմոն Սիմոնյանը «Հայաստանյան դասագիրքերու մասին» խորագրով հոդվածաշարում վրդովմունք է հայտնում այդ առթիվ, այն համարելով անտեղի «ոտնձգություններ»[75]:

[72] Տե՛ս «Սովետական Հայաստան», ամսագիր, № 12, 1980 թ., էջ 15, 24—25:

[73] Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 875, ց. 2, գ. 43, թ. 25—26:

[74] Նույն տեղում, գ. 5, թ. 56:



Սփյուռքահայ դպրոցների նկատմամբ մեծ հետաքրքրություն են ցուցաբերում և գնահատելի աշխատանք կատարում նաև Երևանի ռադիոյի արտասահմանյան հաղորդումների խմբագրությունը, «Պիոներ կանչ» ու «Ավանգարդ» թերթերը: Վերջիններս պարբերաբար հրատարակում են «Ծիծեռնակ» և «Ծիածան» էջերը, որոնցում նյութեր են տպագրվում ինչպես սփյուռքահայ պատանեկության ու երիտասարդության կյանքի վերաբերյալ, այնպես էլ նրանց հետաքրքրող շատ հարցերի մասին: «Պիոներ կանչը» տպագրել և սփյուռքահայ դպրոցներին ու թերթերին է ուղարկել կոմիտեի երիտասարդական և պատանեկան հանձնախմբի նախաձեռնած մրցանակաբաշխությունը՝ «Սովետական Հայաստանն իմ պատկերացումներում», «Իմ ուսուցիչը» և այլ ուշագրավ թեմաներով: Լավագույն շարադրությունների ու նկարների հեղինակները, այսինքն՝ մրցանակաբաշխության հաղթողները, հրավիրվում են Հայաստան՝ ամռանը պիոներական ճամբարներում հանգստանալու, հայրենիքը ավելի մոտիկից ճանաչելու համար:

Այդ ուղղությամբ խրախուսելի ու հետաքրքիր նախաձեռնություններ են հանդես բերում նաև Երևանի պիոներների պալատի և պետական համալսարանի ինտերնացիոնալ ակումբներն ու հանրապետության բազմաթիվ դպրոցներ: Վերջիններս Սփյուռքի կոմիտեի երիտասարդական և պատանեկան հանձնախմբի միջոցով նամակագրական կապերի մեջ են մտել արտասահմանի հայկական վարժարանների հետ, նրանց ուղարկում են նվերներ՝ գրքեր, գրենական պիտույքներ, մանկապարտեզների համար՝ խաղալիքներ, տոնածառի զարդեր և այլ միջոցներ:

Մեծ օգնություն է եղել մի շարք վարժարանների որպես նվեր Սփյուռքի կոմիտեի և լուսավորության մինիստրության կողմից քիմիայի, ֆիզիկայի և բնագիտության լաբորատորիաներ հատկացնելը: Նման լաբորատորիաներ ուղարկվել են Եգիպտոսի Պողոսյան, Բեյրութի Թերեզյան, Մխիթարյան-Վիեննական,

[75] Տե՛ս նույն տեղում, թ. 59:

Հալեպի Թարգմանչաց ու Կիլիկյան վարժարաններին։ Բացի այդ, միայն 1964—1965 թթ. հայրենիքից սփյուռքի դպրոցներն են ուղարկվել 200 անուն 10 հազար կտոր գեղարվեստական ու մանկական գրքեր, նոտաներ, «Սովետական Հայաստանը 45 տարում» և «Բյուրականի աստղադիտարանը» լուսանկարային հավաքածուները։ 1965 թ. սփյուռքահայ շուրջ 165 դպրոցներ կոմիտեի կողմից ստացել են 10 անուն հազարավոր օրինակ թերթեր ու ամսագրեր[76]։

Նման օգնության առթիվ Բուենոս Այրեսի արվարձան Վիսենտե Լոպեսի հայ ազգային վարժարանի տնօրեն Արշամ Քահանա Բողոյանը գրել է. «...վարժարանի հոգաբարձության, ծնողաց հանձնախմբի, տնօրինության, ուսուցչական կազմի և աշակերտության անունով կուգամ շնորհակալության և երախտագիտության մեր զգացումները հայտնել Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեին, հայրենի պետության ու հարազատ ժողովրդին՝ այն անփոխարինելի օժանդակության համար, զոր կընծայեք սփյուռքի մեր կրթական օջախներուն (դասագրքեր, մանկագիտական և գեղարվեստական գրականություն, քարտեզներ, պատկերներ և այլն, և այլն)։

Ոչ մեկ հայրենիք իր հեռավոր զավակներուն հանդեպ չունի այն հոգածու կեցվածքը, ինչ որ կցուցաբերե մեր պաշտելի մայր հայրենիքը սփյուռքի գաղթօջախներուն նկատմամբ։ Ես կսոսկամ, երբ կպատկերացնեմ այն հոգեկոր սովն ու տագնապը, որոնք պիտի տիրեին սփյուռքահայ դպրոցական գործունեության մեջ, եթե չըլլար հայրենիքի կենարար նպաստը և չհասներ անոր գուրգուրոտ ձեռքը»[77]։

Սփյուռքահայ ուսուցիչներին տեղերում գործնական օգնություն ցույց տալու, ինչպես նաև որոշ առարկաներ դասավանդելու նպատակով հայրենիքից մի շարք գաղթօջախներ են գործուղվել բարձրորակ ուսուցչական ու դասախոսական կադրեր։

Իսկ որքա՜ն բազմախորհուրդ ու նշանակալի է սփյուռքահայ դպրոցականների ամառային հանգստի անցկացումը հայրենիքում։ Սկսած 1964 թ. Հայաստան են հրավիրվում մեծ թվով սփյուռքահայ դպրոցականներ՝ իրենց ամառային հանգիստը շուրջ երկու ամիս Ծաղկաձորի, Հանքավանի, Կիրովականի պիո-

76 Տե՛ս նույն տեղում, գ. 37։

77 «Սովետական Հայաստան», ամսագիր, № 2, 1978, թ., էջ 27։



ներական ճամբարներում ու մանկական առողջարաններում անցկացնելու համար։ Հայրենի բնության գրկում նրանք իրենց հայրենարնակ հասակակիցների հետ միասին կազդուրվում են, սովորում երգեր ու պարեր և անմոռաց տպավորություններով վերադառնում իրենց օջախները։ Այդ միջոցառման անցկացումը այնքան էլ դյուրին գործ չէ։ Եթե նկատի ունենանք, որ ամեն տարի հանգստի են հրավիրվում 10—15 տարեկան հասակ ունեցող 150—200 երեխաներ աշխարհի գրեթե բոլոր հայկական գաղթօջախներից, ապա պարզ կլինի, թե որքան մեծ դժվարություններ են հաղթահարում սփյուռքահայ կազմակերպությունները, սովետական դեսպանությունները ու հյուպատոսությունները, ՀԿԵՄ Կենտկոմն ու Սփյուռքի կոմիտեն այդ բարդություններով լի, բայց միանգամայն շնորհակալ ու խորիմաստ գործը հաջողությամբ գլուխ բերելու համար։

Վերադառնալով տուն, սփյուռքահայ երեխաներն ամենուրեք պատմում են այն վառ տպավորությունների մասին, որ ստացել են մայր հայրենիքում։ Ահա թե ինչ է գրում այդ մասին իր ամառային հանգիստը հայրենիքում անցկացրած լիբանանահայ դպրոցական Նաղելի Օզգայանը. «Իսկապես կյանքիս ամենաազդեցիկ և անմոռանալի օրերը անցուցի հայրենիքես ներս եղած քառասուն օրերուս շրջանին։ Նախքան հայրենիք այցելելս կսիրեի զայն, սակայն հիմա, հոն այցելելե ետքը շատ ավելի կսիրեմ զայն և անվարան կրսեմ, թե հրաշալի է մեր հայրենիքը»[78]։ Մի խոսքով, հայրենի երկիրն ամեն հնարավոր միջոցներով օգնում է սփյուռքահայ դպրոցներին՝ որպես հայապահպանության կարևոր օջախների և աշխատում այդ ճանապարհով սփյուռքահայ պատանեկությանը կապել Սովետական Հայաստանի պայծառ իրականության հետ։

Այդ գործում, անշուշտ, շատ կարևոր է նաև սփյուռքահայ ուսուցիչների դերն ու դիրքը։ Սփյուռքահայ դպրոցների նկատմամբ հայրենական օգնությունն ապարդյուն կանցնի և բնավ իր նպատակին չի ծառայի, եթե ուսուցչությունը տրամադրված չլինի հայրենասիրաբար, լավ չիմանա իր գործը։ Ահա թե ինչու Սովետական Հայաստանի համապատասխան մարմինները ամենայն հոգատարությամբ են շրջապատել նաև սփյուռքահայ ուսուցիչներին։

78 ՀՍՍՀ ՀՀՕՇ ՊԿԱ, ֆ. 875, ց. 1, գ. 37, թ. 54։

Գաղութահայ կյանքի յուրահատուկ պայմաններում, մատաղ սերնդի ազգային դիմագծի կազմավորման գործում կարևոր դեր ունի դպրոցական ուսուցիչը։ Ընտանիքից հետո դպրոցն ու ուսուցիչն են մանուկ հոգիների վրա առաջին և հիմնական ներազդողները։ Որպես կանոն, սփյուռքահայ դպրոցները գտնվում են քաղաքական տարբեր կուսակցությունների, բարեգործական հաստատությունների, հայրենակցական միությունների և կրոնական համայնքների անմիջական ազդեցության տակ։

Դրա հետևանքով սփյուռքում դպրոցները ոչ միայն սովորական ուսումնական հաստատություններ են, այլև հասարակական-քաղաքական գործունեության կարևոր օջախներ, որտեղ երեխաները ոչ միայն պարզապես կրթություն են ստանում, այլև դաստիարակվում, կոփվում են որպես ազգային կյանքի ապագա կադրեր։ Սփյուռքահայ ուսուցիչները, կրթական գործի մշակներ լինելու հետ մեկտեղ, մեծ մասամբ, միաժամանակ նաև գրական ու ազգային հասարակական-քաղաքական գործիչներ են, կուսակցական ղեկավարներ, կազմակերպիչներ։ Նաև դրանով է պայմանավորված այն, որ Սովետական Հայաստանի համապատասխան օրգանները սփյուռքահայ ուսուցիչների համար կազմակերպում են վերապատրաստման ու կատարելագործման դասընթացներ։ Այդ դասընթացները, որոնք նկատելիորեն ընդլայնեցին սփյուռքահայ դպրոցների ու մտավորականության կապերը հայրենիքի հետ, մեծ գոհունակություն են առաջացրել արտասահմանյան հայկական կրթական ու մշակութային կազմակերպություններում, պարբերական մամուլում և այլուր[79]։

Վերապատրաստման դասընթացներին մասնակցելու հրավիրված ուսուցիչների թվում հայրենիք են այցելել նաև սփյուռքում որպես կրթական գործի մշակներ աշխատող բազմաթիվ գրողներ, լրագրողներ, հասարակական գործիչներ։ Հայրենիք հրավիրված ուսուցիչները մեծ մասամբ եղել են դեպի Սովետական Հայաստանը բարյացակամորեն տրամադրված առաջադիմական խավերի ներկայացուցիչներ։ Սակայն նրանց թվում քիչ չեն եղել նաև սովետական իրականության նկատմամբ ոչ այնքան բարյացակամորեն տրամադրված անձինք, անգամ դաշ-

[79] Տե՛ս նույն տեղում, ց. 2, գ. 5, թ. 17—21, նաև՝ «Սովետական Հայաստան», ամսագիր, № 7, 1975 թ., էջ 29։



նակցական կուսակցության շարքերում գտնվողներ։ Այդ հանգամանքը շատ կարևոր ու դրական արդյունքներ է տվել և ունեցել անհրաժեշտ գործնական էֆեկտ։

Սովետական Հայաստանում գտնված ժամանակամիջոցում սփյուռքահայ ուսուցիչները ստանում են մեթոդական ու մասնագիտական գիտելիքներ, լսում են հանրապետության անվանի գիտնականների ու մանկավարժների դասախոսությունները, ղեկավար գործիչների զեկուցումները մեր ժողովրդական տնտեսության, գիտության ու մշակույթի զարգացման վերաբերյալ, ծանոթանում ձեռք բերված նվաճումներին։ Նրանք լինում են սովետական դպրոցներում, ուսումնասիրում դրանցում տարբեր առարկաների դասավանդման դրվածքը, այցելում հանրապետության պատմական ու տեսարժան վայրերը, մշակութային օջախները, ներկա գտնվում համերգների ու թատերական ներկայացումների։ Եվ վերադառնալով իրենց բնակավայրերը, սփյուռքահայ մանկավարժները ամենուրեք՝ դպրոցներում, մշակութային օջախներում, մամուլում և այլուր հանդես են գալիս հայրենական տպավորություններով, պատմում այն ամենի մասին, ինչին ականատես են եղել մայր հայրենիքում։ Հայրենիք այցելելով և անձամբ ականատես լինելով մեր ձեռքբերումներին, նրանք ավելի են մերձենում Սովետական Հայաստանին, թարմ լիցք, առողջ շունչ ու ջերմ հայրենասիրության ոգի տանում իրենց սաներին, վերածնված հայրենիքով ոգևորում ու ազգային հպարտություն ներարկում նրանց։

Երկամսյա շփումը հայրենիքի և սփյուռքի ուսուցիչների ու դպրոցականների միջև բարեկամական այնպիսի սերտ կապեր է առաջացնում, որ հրաժեշտը դառնում է խորապես հուզիչ ու թախծալի։ Սփյուռքահայ ուսուցիչների ու դպրոցականների մեջ հայրենական տպավորությունները դրոշմվում են այնքան ուժեղ, որ վերադարձից հետո էլ, երկար ժամանակ, հավանաբար իրենց ամբողջ կյանքում, նրանք ապրում են այդ տպավորություններով, հայրենական ներշնչանքով։ Սփյուռքահայ կրթական գործի շատ մշակներ իրենց ելույթներում, հոդվածներում և հայրենիք ուղարկված նամակներում երախտագիտության անկեղծ խոսք են ասում հայրենի կառավարությանը՝ իրենց նկատմամբ ցուցաբերված հոգատարության համար։ Այդ են վկայում սփյուռքահայ վարժարաններից մեկի տնօրենի գրած նամակի հետևյալ տողերը. «Արտասահմանի հայության և անոր կրթա-

կան գործի նկատմամբ ցույց տրված հայրենական հոգածությունը աչքառու և խորապես խանդավառող պատգամ մըն է, և մենք անհունապես երախտապարտ միայն կրնանք զգալ»[80]։ Իսկ Բեյրութի ՀԲԸՄ Դեմիրճյան վարժարանի հայոց լեզվի և գրականության ուսուցիչ Հակոբ Ավետիքյանը, որն, ի դեպ, ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետն ու ասպիրանտուրան, այդ առթիվ գրել է. «Հայրենիք կատարած մեր այս այցելությունը ուրիշ շատ օգուտների հետ մեկ օգուտ էլ տվեց. հայտնի է, որ սփյուռքը մեկ միասնական հասկացություն է, բայց տարբեր երկրներից բաղկացած։ Ամեն երկիր իր հոգսերն ու առանձնահատկություններն ունի։ Հայաստանում տարբեր երկրների ուսուցիչների հանդիպումը նպաստում է ոչ միայն հայրենիքի ճանաչմանը, այլ նաև սփյուռքի մյուս հատվածների իմացությանը։ Իրար հետ օգտակար հարաբերությունների մեջ ենք մտնում նաև մենք՝ տարբեր երկրներից ժամանած ուսուցիչներս։ Ստեղծվում են, եթե կարելի է այսպես ասել, միջգաղութային հարաբերություններ։ Այդ հանդիպումները, անշուշտ, օգնում են իրար լավ իմանալու, իրար փորձը փոխադարձաբար ընդօրինակելու գործին»[81]։

* * *

Սփյուռքի կոմիտեի գործունեության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում կապը հայրենակցական, բարեգործական, բարեսիրական, մշակութային, եկեղեցական, մարզական ու երիտասարդական կազմակերպությունների հետ։ Նրանք բոլորն էլ, թեպետ տարբեր ճանապարհներով, տարբեր ձևերով ու մեթոդներով պայքարում են հայապահպանության համար։

Ավելի քան 70 հայրենակցական միություններ ու նրանց մասնաճյուղեր, 100-ից ավելի մշակութային կազմակերպություններ մշտական կապի մեջ են Սփյուռքի կոմիտեի հետ։ Զգալի չափով դրանց ջանքերով է, որ սփյուռքում գոյատևում են հայ դպրոցը, եկեղեցին, մամուլը և մյուս ազգային օջախները։ Նրանց շնորհիվ է գաղթավայրերում պրոպագանդվում Սովետական Հայաստանը, նրանք են արձագանքում հայրենիքի բոլոր ձեռնարկումներին, ամեն տարի նշում Հայաստանում սովետական կարգերի հաստատման տարեդարձը և այլն։

[80] ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 875, ց. 2, գ. 17, թ. 14—15։

[81] «Սովետական Հայաստան», ամսագիր, 1976 թ., № 11, էջ 16։



Հայրենակցական միությունները հայրենասիրական ակտիվ գործունեություն ծավալեցին հատկապես համաշխարհային երկրորդ պատերազմի տարիներին։ Նրանք ակտիվորեն հանդես եկան ֆաշիզմի դեմ պայքարում, մասնակցեցին սովետական բանակի համար «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան և սովետական երկրի օգտին այլ միջոցների հավաքման կամպանիաներին։

Հայրենակցական միությունները ազգօգուտ գործ կատարեցին նաև մեծ հայրենադարձի տարիներին, նրա օգտին հանգանակելով 1,5 միլիոն դոլար և նպաստեցին ներգաղթի հաջող իրականացմանը։

Սակայն ժամանակի ընթացքում աստիճանաբար պակասում է հայրենակցական միությունների թիվը, խամրում նրանց գործունեությունը։ Դա պայմանավորված է նրանով, որ գնալով զգալի չափով նվազում է միությունների անդամների թիվը՝ եղեռնը տեսած սերնդի անհետացման հետևանքով։ Շատ միություններ ներկայումս հազիվ մի քանի անդամ ունեն։ Նոր անդամների՝ հատկապես երիտասարդների մուտքը նրանց շարքերը գրեթե դադարել է։ Որոշ միություններ էլ իրենց գործունեությունը սահմանափակելով միայն սփյուռքի շրջանակներում, կտրվել են հայրենի իրականությունից և դրանով իսկ ճանապարհ հարթել իրենց մահացման համար։

Ներկայումս սփյուռքում գոյություն ունեն մոտ յոթանասուն հայրենակցական միություններ, որոնցից սակայն ակտիվորեն գործում են շուրջ 4 տասնյակը։ Նրանց մեծ մասը գտնվում է ԱՄՆ-ում և միավորված է 1947 թ. ստեղծված միջհայրենակցական միության մեջ։ Պետք է նշել, որ ամերիկահայ հայրենակցականները մեծ ու շնորհակալ աշխատանք են կատարում, նյութապես օգնելով Մերձավոր արևելքի հայկական դպրոցներին, բազմաթիվ երիտասարդների հատկացնում են կրթաթոշակներ, օժանդակում ծերանոցների, օգնություն ցույց տալիս կարիքավոր հայրենակիցների, հովանավորում իրենց գավառի կամ քաղաքի մասին ստվարածավալ պատմագրքերի պատրաստման ու հրատարակման գործը, կարևոր ավանդ ներդնում համազգային նշանակություն ունեցող հանգանակությունների մեջ և այլն։ Ընդհանրապես խիստ գնահատելի է տարբեր միու-

թյունների բերած նպաստը սփյուռքահայ մշակութային կյանքին։

Հայրենակցական միությունների գործունեության աշխուժացման համար կարևոր ազդակ եղավ մայր հայրենիքի հետ կապերի սերտացումը, նրանց հանդեպ Սովետական Հայաստանից ցուցաբերված բարյացակամ և ուշադիր վերաբերմունքը։ Հայրենակցականների դերի ու հեղինակության մեծացման գործում կարևոր նշանակություն ունեցավ հատկապես վերածնված հայրենիքում Արևմտյան Հայաստանի ու Կիլիկիայի հայկական բնակավայրերի անուններով ավանների, թաղամասերի և փողոցների անվանակոչումը։ Վաղուց ի վեր, սկսած 1925 թ., Սովետական Հայաստանում լավ ավանդույթ է դարձել հարություն տալ հին, պատմական Հայաստանի գավառների, քաղաքների ու այլ բնակավայրերի անուններին։ Այդպես, «նոր» ածականի կցումով, Սովետական Հայաստանում ծնվեցին ու վերաշինվեցին բազմաթիվ բնակավայրեր։ Սովետական Հայաստանի տարածքում կյանք առած արևմտահայկական ամեն մի նոր ավան լուսաշող աստղ է, որը ճիշտ կողմնորոշում է տալիս պատմական հայրենիքի ավերված բնակավայրերի աշխարհով մեկ վայրավատին զավակներին։ Նրանց բոլորի հայացքներն այժմ կենտրոնացած են այն կիզակետին, որը կոչվում է ամենայն հայոց մայր հայրենիք՝ Սովետական Սոցիալիստական Հայաստան։

Սփյուռքի կոմիտեն մշտապես պաշտպանելով հայրենակցական միությունների խնդրանքները և հանրապետության վերադաս մարմինների առջև միջնորդելով Սովետական Հայաստանում նոր ավանների, թաղամասերի ու փողոցների անվանակոչման համար, հայրենասիրական օգտակար շարժում առաջ բերեց հատկապես հայրենակցականների մեջ միավորված ավագ ու միջին սերնդի շրջանում։ Դրա շնորհիվ պայմաններ ստեղծվեցին, որպեսզի չեզոքացվեն հետադիմական ուժերի ազդեցությունները և հայրենակցական միությունները սերտ կապերի մեջ մտնեն մայր հայրենիքում հիմնադրված իրենց ավանների հետ։ Եվ պատահական չէ, որ հատկապես վերջին տարիներին հայրենակցական միությունները կայուն բարեկամություն են հաստատել հանրապետության մի շարք ավանների, ուսումնական ու գիտական հաստատությունների և առողջապահական հիմնարկների հետ, նրանց օգտին կատարել են մի քա-



նի հարյուր հազար դոլարի նվիրատվություններ։ Արաբկիրի, Մալաթիայի, Սեբաստիայի, Խարբերդի, Եվդոկիայի, Մարաշի, Զեյթունի, Կեսարիայի, Այնթապի և բազմաթիվ այլ հայրենակցական միությունները կարծես մրցության մեջ են մտել միմյանց հետ հայրենանվեր ծրագրեր իրականացնելու ուղղությամբ։ Ետպատերազմյան տարիներին հայրենակցականների նախաձեռնությամբ և սովետական կառավարության աջակցությամբ հայրենի հողում այդպես բարձրացան Զեյթունն ու Կիլիկիան, Նոր Մարաշն ու Նոր Հաճընը և բազում այլ ավաններ, որոնցում իր սեփական օջախն ստեղծած նախկին տարագիր հայը դարձել է իր երկրի լիիրավ տերը։

Հայրենակցական միությունների գործունեության համար այժմ բնորոշը Սովետական Հայաստանի առաջադիմության ու վերելքի օգտին ծավալված շարժումն է։ Դրա ավելի մեծ աշխուժացմանը լայնորեն խթանել է նրանց զանազան խնդրանքներին Սովետական Հայաստանում դրական ընթացք տալը։ Շատ միություններ, որոնք գրեթե անգործության էին մատնվել կամ գտնվում էին ուղղակի կազմալուծված վիճակում (մանավանդ գյուղական հայրենակցական միությունները), իրենց նկատմամբ հայրենիքից ցուցաբերված վերաբերմունքից ոգևորված, վերակենդանացան և սերտ հարաբերությունների մեջ մտան Սովետական Հայաստանի հետ։ Այդ տեսակետից բնորոշ է, օրինակ, Պաղինի հայրենակցական միության գործունեությունը։ Նրա շարքերում հազիվ մի քանի անդամ էր մնացել և գրեթե անգործության մատնված վիճակում էր գտնվում։ Սակայն հայրենիքի հետ փոխհարաբերությունների մեջ մտնելով ոչ միայն ոտքի կանգնեց, այլև դարձավ նախաձեռնողը մի շարժման, որով միավորվեցին մի քանի հայրենակցական միություններ և ավելի մեծ ուժ կազմեցին։ Այդպես վերականգնվեց Համաբալուցիական հայրենակցական միությունը, իր մեջ ընդգրկելով շուրջ 30 գյուղական հայրենակցական միություններ։ Միության վարչությունը Սփյուռքի կոմիտեին հասցեագրած իր նամակի մեջ գրում էր, որ իրենք «բուռն բաղձանք ունեն կերպով մը մաս ու բաժին ունենալ հայրենիքի շինարարության ու փառավոր վերելքին մեջ»։ Միության վարչությունն այնուհետև «Լրաբեր» թերթում հրապարակեց բոլոր բալուցիներին ուղղված կոչ, որտեղ առաջարկվում էր վերակազմել միությունը և ավելի սեր-



26—1181

տորեն համախմբվել մայր հայրենիքի շուրջը[82]: Այդ ջանքերի շնորհիվ շուտով իրականացավ Համաբալուցիական Կեսարիայի և Երզնկայի հայրենակցական միությունների ցանկությունը. ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահությունը հանրապետության երեք բնակավայրերի շնորհեց Նոր Բալուհովիտ, Նոր Կեսարիա և Նոր Երզնկա անունները[83]: Վճռականորեն դեպի հայրենիք կողմնորոշվեցին նաև Հաճընի, Խույլու-Թլկատինի Դատեմի, Վարդաթիլի, Կյուրինի, Զնքուշի, Քղիի և ուրիշ հայրենակցական միությունները[84]: Համապատասխան հայրենակցական միությունների խնդրանքներով Երևանում փողոցներ են կոչվել Մալաթիայի և Սեբաստիայի անուններով, «Սեբաստիա» անունն են կրում նաև մայրաքաղաքի Շահումյանի շրջանի օրինակելի մանկապարտեզը և մեկ հյուրանոց: «Արաբկիր» անունն է տրվել Երևանի 26 կոմիսարների շրջանի հանրախանութին և արդիական սարքավորումներով գործող քիմիական չոր մաքրման ֆաբրիկային: Նոր Խարբերդ ավանի միջնակարգ դպրոցը կրում է եղեռնի զոհ, գրող, մանկավարժ Հովհաննես Թլկատինցու (Հարությունյան), իսկ մայրաքաղաքի Նոր Սեբաստիա թաղամասի դպրոցը՝ Դանիել Վարուժանի անունը: Նոր Խարբերդում փողոցներ են բացվել պատմական Դատեմի, Մորենիկի, Վարդաթիլի անուններով, Նոր Երզնկայում՝ նշանավոր գրող Հակոբ Մնձուրու ծննդավայր Արմտանի անունով[85]: Մի շարք հայրենակցականների խնդրանքներով ու նյութական օժանդակությամբ որոշ տեղերում կառուցվել են 1915 թ. ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված աղբյուր-հուշարձաններ և այլն:

Այսպիսով, սփյուռքահայության նկատմամբ հայրենի կառավարության դրսևորած հոգատարության շնորհիվ մեծապես բարձրացել է հայրենակցական միությունների գործունեության արդյունավետությունը: 60-ական թվականների կեսերից սկսած տարեցտարի ավելանում է այն հայրենակցական միությունների թիվը, որոնք սերտ կապերի մեջ են հայրենիքի հետ, նրա առանձին ավանների, ուսումնական, գիտական, մշակութային, առողջապահական հիմնարկների ու հաստատությունների հետ:

[82] Տե՛ս «Սովետական Հայաստան», ամսագիր, 1976 թ., № 12, էջ 26:
[83] Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 875, ց. 2, գ. 33, թ. 1—2 և գ. 43, թ. 38—39:
[84] Տե՛ս «Սովետական Հայաստան», ամսագիր, 1976 թ., № 12, էջ 27:
[85] Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 875, ց. 2, գ. 43, թ. 39:



Ընդառաջելով Արգենտինայում հաստատված Հաճնո հայրենակցական միության ցանկությանը ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության 1958 թ. դեկտեմբերի հրամանագրով Աբովյանի շրջանի քաղաքատիպ ավաններից մեկը կոչվեց Նոր Հաճըն: Այդ ակտը մեծ խանդավառությամբ ընդունվեց տարբեր երկրներում սփռված հաճընցիների կողմից: Հաճնո հայրենակցական միության կենտրոնական վարչության նախաձեռնությամբ Արգենտինայի, Ուրուգվայի, Բրազիլիայի, Ֆրանսիայի, Լիբանանի և ԱՄՆ-ի մասնաճյուղերը 2 միլիոն պեսո հանգանակեցին և հանձնեցին Արգենտինայում սովետական դեսպանությանը՝ խնդրելով այն ընդունել որպես հայրենի կառավարության ու ժողովրդի նկատմամբ հայրենասեր հաճընցիների երախտագետ սիրո խորհրդանշան[86]:

Մայր հայրենիքում «նոր» մասնիկի կցումով Արևմտահայաստանի ու Կիլիկիայի տարբեր բնակավայրերի անուններով ավանների հիմնադրման փաստի իմաստը շատ դիպուկ է մեկնաբանել «Արարատ» օրաթերթը Նոր Հաճընի անվանակոչման առթիվ հրապարակած խմբագրականում: Թերթը նշում է, որ թեպետ չկա այլևս կիլիկյան պատմական Հաճընը, բայց կա «խորհրդային Հայաստանի պայծառ արևի տակ» վերածնված Նոր Հաճընը: «Վերածնված մայր հայրենիքին որպես անբաժանելի մասնիկը,— այնուհետև շարունակում է թերթը,— Նոր Հաճընը օրե օր հասակ կառնե ու կգեղեցկանա այսօր, որպես կենդանի կոթող իր նահատակներու, որպես հաղթանակի կանչ՝ ուղղված իր պարտված դահիճին, և որպես բարոյական խարան՝ այն արևմուտքին, որ խաչով ու ավետարանով օգնություն խոստանալե ետք, զինք ձգեց միայնակ գազազած թուրքին առջև, ի վերջո անոր դաշնակիցը դառնալու և գործած ոճիրները ծածկելու համար»[87]:

Խմբագրականն այնուհետև պատգամում է սփյուռքահայ երիտասարդությանը՝ «...Սիրել, պաշտպանել հողի այն պատառը, որ վերածնված Հայաստանն է, հայության վերջին հույսն ու ապավենը, որ մեկնակետն է հայուն վաղվան ամբողջական հաղթանակին»[88]:

[86] Տե՛ս նույն տեղում, գ. 26, թ. 9—10:
[87] «Արարատ», 8 նոյեմբերի, 1964 թ., № 6900:
[88] Նույն տեղում:

Վերջին տարիներին հայրենիքում մեծ շուքով տոնվել են Նոր Արաբկիրի, Նոր Մալաթիայի, Նոր Սեբաստիայի և այլ ավանների հիմնադրման հոբելյանական տարեդարձները: Լավ ավանդույթ է դարձել ամեն տարի աշնանը հանդիսավոր պայմաններում յուրահատուկ ծեսերով նշել Մուսա լեռան հերոսամարտի տարեդարձը Արարատյան դաշտի սրտում վերածնված Մուսալեռ ավանում: Այդ տոնախմբություններին մասնակցում են համապատասխան հայրենակցական միությունների ղեկավարները և մեծ թվով զբոսաշրջիկներ՝ որպես ուխտավորներ:

Ընդհանրապես լավ ավանդույթ է դարձել հայրենիք այցելել հայրենակցական միությունների կողմից կազմված խմբերով, մասնակցել իրենց ավանների անվանակոչության տարեդարձներին և մոտիկից հաղորդակից լինել մեր առաջընթացին: Զբոսաշրջիկները անմոռաց օրեր են անցկացնում հայրենիքում և վերադարձին իրենց տեսածի ու զգացածի մասին պատմում միության մյուս անդամներին: Հայրենիք գալիս նրանք հաճախ իրենց հետ որպես նվերներ բերում են արխիվներ, թանգարանային արժեքներ, հնատիպ գրքեր, ձեռագրեր և այլն: Այսպիսով, ներգաղթին և հայրենիքի վերաշինությանը նպաստելուն զուգընթաց, հայրենակցական միությունները մեծ գործ են կատարում նաև հայ մշակույթի տարագիր գանձերը հայրենիք փոխադրելու ուղղությամբ: Նշանակալից են հայրենակցականների ծառայությունները հայ ժողովրդի պատմության ու մշակույթի կորուսյալ էջերի հավաքման ու հրատարակման գործում: Նման ջանքերի շնորհիվ արդեն հրապարակի վրա են մի շարք ստվարածավալ հատորներ՝ «Պատմություն Մալաթիո հայոց», «Խարբերդ և անոր ոսկեղեն դաշտը», «Պատմություն Եվդոկիո հայոց», «Պատմություն Չարսանչակի», «Պատմություն Այնթապի հայոց», Ուրֆայի, Հաճընի, Տարոնի, Պաղնատան և այլ գավառների ու քաղաքների պատմությունները:

Մայր հայրենիքի հետ մշակութային կապերի սերտացմանը զուգընթաց, վերջին տարիներին որոշակի ու մասսայական տրամադրություններ են նկատվում հայրենակցական, բարեգործական և այլ կազմակերպությունների ու անհատների մոտ՝ հայրենասիրական անկեղծ զգացմունքներից մղված մեծ չափերի հասնող գումարներ, սարքավորումներ, գրքեր և այլ արժեքներ նվիրել Սովետական Հայաստանի գիտական, մշակութային, առողջապահական հաստատություններին: Միայն 1967—1968 թթ.



ընթացքում այդ ճանապարհով ստացված սարքավորումների ու գիտական ապարատների արժեքը անցնում է կես միլիոն դոլարից[89]: Հայրենակցական միությունների նախաձեռնությամբ Փարիզում ստեղծվել է հատուկ ֆոնդ՝ շուրջ 80 հազար դոլար գումարով, որով Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի և հայրենակցական միությունների պայմանավորվածության համաձայն զանազան գնումներ են կատարվում արտասահմանում և առաքվում Սովետական Հայաստան:

Սփյուռքահայ բազմաթիվ անհատներ նույնպես իրենց նվիրական պարտքն են համարում որևէ օգտակար ծառայություն մատուցել մայր հայրենիքին: Օրինակ, Համասեբաստահայ վերաշինաց միության անդամ Նշան Պզտիկյանը հազար դոլար արժողությամբ ռադիոհանգույց է նվիրել Երևանի Դանիել Վարուժանի անվան դպրոցին, Մալաթիայի կրթասիրաց միության անդամներ Լևոն Փափազյանը և Ավետիս Ավետիսյանը 4 հազար դոլար են նվիրել Բյուրականի աստղադիտարանի տիեզերական հետազոտությունների մասնաճյուղին՝ գիտական արժեքավոր գրականություն և հազվագյուտ քարտեզներ ձեռք բերելու համար: ԱՄՆ-ում բնակվող Հրաչ Ղազարյանը և դոկտոր Սաթրլենդը 1969 թ. Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ակադեմիական թատրոնի սիմֆոնիկ նվագախմբին, ինչպես նաև Կոմիտասի անվան կոնսերվատորիային նվիրել են 11 խիստ արժեքավոր ջութակներ, որոնցից մի քանիսը 120—150 տարվա հնություն ունեն: Նույն անձնավորությունները Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանին նվիրել են մեկ արժեքավոր ձեռագիր[90]: Համաքղեցիական վերաշինաց միությունը գյուղատնտեսական մեքենաներ է նվիրել Նոր Հաճընին և ՀՍՍՀ ԳԱ հիդրոպոնիկայի լաբորատորիային, Բալու-Պաղինի և Մորենիկի միությունները՝ երաժշտական գործիքներ օպերայի և բալետի թատրոնին[91]: Համասեբաստահայ վերաշինաց միությունը, որը նախկինում ակտիվորեն մասնակցել էր Նոր Սեբաստիա ավանի կառուցմանը և հայրենիքի օգտին կատարված այլ ձեռնարկումների, 1963—1964 թթ. ՀՍՍՀ ԳԱ բիոքիմիայի լաբորատորիային (այժմ՝ ինստիտուտ) և մի շարք բժշկական հաստա-

89 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 875, ց. 2, գ. 2, թ. 12—14:
90 Տե՛ս նույն տեղում, ց. 4, գ. 17, թ. 16—17:
91 Տե՛ս նույն տեղում, ց. 2, գ. 26, թ. 37:

տությունների համար տրամադրել է 60 հազար դոլար, որով արտասահմանում գնվել են առաջնակարգ գործիքներ ու սարքավորումներ[92]:

1965 թ. Երևանի Նոր Մալաթիա թաղամասում բացվեց նույնանուն արդիական կլինիկական հիվանդանոցը, որի բժշկական սարքավորումները՝ շուրջ 30 հազար դոլար արժողությամբ, հատկացրել է Մալաթիո կրթասիրաց միությունը: Մինչ այդ Նոր Մալաթիայի դպրոցի համար միությունը ուղարկել էր 20 հազար դոլարի երաժշտական գործիքներ: Ընդհանրապես, մինչև 1966 թ. այդ ընկերությունը Նոր Մալաթիայի և Սովետական Հայաստանի մի շարք հաստատությունների ու այլ ազգօգուտ նպատակների համար տրամադրել է մոտ 500 հազար դոլար[93]:

Հաճնո հայրենակցական միությունը 1965 թ. բժշկական գործիքներ ուղարկեց Նոր Հաճընի հիվանդանոցին: 1968 թ. ևս այդ միությունը 5 հազար դոլար արժողությամբ բժշկական գործիքներ նվիրեց նույն հիվանդանոցին[94]:

Ստանալով հայրենիքի քաջալերանքը, Արաբկիրցիների հայրենակցական միությունը Երևանի «Նոր Արաբկիր» քիմիական չոր մաքրման ձեռնարկությանը նվիրեց մի ամբողջ ֆաբրիկայի սարքավորում[95]:

Հայրենի գիտահետազոտական և ուսումնական հաստատություններին գնահատելի նվերներ են տվել նաև Տարոն-Տուրուբերանի, Վասպուրականի, Համաբալուցիական, Համահրդնկացիական, Դատեմի, Կեսարիայի ու այլ հայրենակցական միություններ և բազմաթիվ անհատներ:

Այսպիսով, սփյուռք—հայրենիք կապերի սերտացման շնորհիվ բավականին աշխուժացավ հայրենակցական միությունների գործունեությունը: Նրանք դարձան վերաշինվող հայրենիքի իրենց ուժերի ներածին չափով ակտիվ կառուցողներ, նոր բնակավայրերի հիմնադիրներ, մեքենաներ ու սարքավորումներ մատակարարողներ, արդյունաբերության նոր ճյուղերի զարգացմանը նպաստող կազմակերպություններ: Իհարկե, այդ ամենը բնավ հարթ ու խաղաղ, հեշտ ու հանդիստ չի ստացվել:

[92] Տե՛ս նույն տեղում, թ. 33—34:
[93] Տե՛ս նույն տեղում, գ. 5, թ. 41—42:
[94] Տե՛ս նույն տեղում, գ. 26, թ. 9—10:
[95] Տե՛ս նույն տեղում:



Հարկ է եղել հաճախ այդ ճանապարհին հաղթահարել շատ արգելքներ ու խոչընդոտներ, որպեսզի հայրենակցական միությունները որդեգրեին գործունեության նման ճիշտ ուղեգիծ:

Հայրենակցական միություններից շատերն ունեն իրենց տպագիր պարբերականները («Նոր Արաբկիր», «Նոր Սեբաստիա», «Նոր Այնթապ», «Նոր Մալաթիա», «Նոր Հաճըն» և այլն), որոնցում ոչ միայն արտացոլվում է այդ միությունների գործունեությունը, այլև մեծ տեղ է տրվում Սովետական Հայաստանի առաջընթացը լուսաբանող նյութերի պրոպագանդմանը, կոչ է արվում համախմբվել հայրենիքի շուրջը: Դժվար է գերագնահատել այն շարժումը, որ հայրենակցական միությունները ծավալել են մայր հայրենիքի շուրջը սփյուռքահայությանը համախմբելու և հայապահպանության գործը հաջողությամբ առաջ տանելու ուղղությամբ:

Սփյուռքի կոմիտեի, առաջադիմական կազմակերպությունների, մասնավորապես հայրենակցական միությունների ու նրանց տպագիր օրգանների ծավալած բեղուն գործունեության, ձեռնարկած գործնական միջոցառումների շնորհիվ վերջին տարիներին որոշակի կազմալուծում է նկատվում սփյուռքահայության դաշնակցության ազդեցության տակ գտնված խավերի մեջ: Եթե դաշնակցության ղեկավարությունը առաջվա նման շարունակում է իր հակասովետիզմը, ապա երկար տարիներ նրա ազդեցության տակ եղած և հայրենիքի հետ կապեր չունեցած որոշ խավեր ու շարքայիններ այժմ փոխել են իրենց վերաբերմունքը Սովետական Հայաստանի հանդեպ: Շատերն սկսել են թղթակցել կոմիտեի հետ, խնդրում են իրենց ուղարկել հայաստանյան մամուլ ու գրականություն, ծանոթանում են հայրենիքի կյանքին, ուրախանում և հպարտանում են նրա հաջողություններով:

Երկար ժամանակ դաշնակցության ազդեցության տակ գտնված Տարոն-Տուրուբերանի, Մոբենիկի, Համավասպուրականի, Համաբալուցիական, Քղիի և այլ հայրենակցական միություններ վերանայել են իրենց գործունեությունը, ավելի մերձեցել Սովետական Հայաստանին, շատ հարցերում համագործակցության մեջ մտել նրա հետ:

Նույնիսկ դաշնակցությանը ենթակա Հայ օգնության մարմինը, որը սփյուռքահայ զանգվածային կազմակերպություններից է (70-ական թվականների սկզբին այն ուներ շուրջ 16 հա-

զար անդամ և 95 բաժանմունքներ տարբեր երկրներում), հայրենիքի հետ կապեր հաստատելու լուրջ փորձեր է կատարում[96]։

Այսպիսով, Սովետական Հայաստանի հետ սփյուռքահայության կապերի սերտացման շնորհիվ նկատելիորեն խարխլվել են դաշնակցական ղեկավարության հակասովետական դիրքերը։ Իր ազդեցության տակ եղած մասսաներին լիովին չկորցնելու նպատակով դաշնակցական մամուլը հարկադրված է իր էջերում որոշ տեղ հատկացնել Սովետական Հայաստանի նվաճումներին, մի բան, որն առաջներում բնավ չէր նկատվում։ Սակայն դա բոլորովին չի նշանակում, թե դաշնակցությունը հրաժարվում է հակասովետիզմի իր գլխավոր գծից, ուստի պայքարը նրա դեմ անհրաժեշտ է հետևողականորեն շարունակել։

* * *

Վերջին տարիներին բավականին սերտ գործնական կապեր են հաստատվել Սփյուռքի կոմիտեի և Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) միջև։ ՀԲԸՄ ներկայումս գաղութահայության ամենազանգվածային և հեղինակավոր կազմակերպություններից մեկն է։ Այն աշխարհի 20 երկրում ունի շուրջ 180 մասնաճյուղ, որոնցում միավորված է ավելի քան 20 հազար մարդ։

Դեպի հայրենիքը Բարեգործականի վերաբերմունքի մեջ նոր փուլի սկիզբ հանդիսացավ 1969 թվականը, երբ մայիսին Փարիզում կայացած նրա համագումարին մասնակցեց Սփյուռքի կոմիտեի պատվիրակությունը, որի կազմում էին կոմիտեի նախագահ Վարդգես Համազասպյանը և նախագահի տեղակալ Վահագն Դավթյանը։ Բարեգործականի պատմության մեջ դա առաջին դեպքն էր, որ մայր հայրենիքի ներկայացուցիչները մասնակցում էին նրա համաժողովին։ Այդ համագումարն անցավ հայրենասիրական ջերմ մթնոլորտում, դրսևորելով այն մեծ սերն ու համակրանքը, որ տածում են սփյուռքահայ զանգվածները հայրենիքի նկատմամբ։ Դրանով պետք է բացատրել նաև այն իրողությունը, որ մասամբ վերանայվեցին Բարեգործականի կանոնադրության մեջ 1955 թ. ի վնաս հայրենիքի կատարված փոփոխությունները[97]։

Վերջին տարիներին Բարեգործականի ղեկավարության դեպի հայրենիք կատարած շրջադարձը, նրա որդեգրած ճիշտ ուղեգիծը զգալի չափով նպաստեց նրա հեղինակության աճին։ Այդ շրջադարձը դրական օրինակ հանդիսացավ նաև սփյուռքահայ այլ կազմակերպությունների ու հոծ զանգվածների համար։ Նրանք հանձին Բարեգործականի տեսան այն կազմակերպությանը, որը հետևողականորեն պայքարում է հայապահպանման, հայ մշակույթի զարգացման ու տարածման, սփյուռք—հայրենիք կապերի սերտացման համար։ ՀԲԸՄ իր տրամադրության տակ եղած միջոցներով նյութական որոշակի օգնություն է ցույց տալիս սփյուռքահայ կազմակերպություններին, հատկապես դպրոցներին, սատարում հայրենասիրական ուժերի գործունեությանը։ Տարեցտարի ավելանում են Բարեգործականի կողմից կատարվող նյութական հատկացումները. այսպես, եթե 1967 թ. սփյուռքահայ համայնքների կարիքների համար նա ծախսել է 925351 դոլար, ապա 1971 թ.՝ 1 միլիոն 636 հազար դոլար, որի պատկառելի մասը՝ 1 միլիոն 242 հազար դոլարը, կրթական նպատակներով[98]։

ՀԲԸՄ ղեկավարությունը միաժամանակ խորապես գիտակցում է, որ սփյուռքահայության կրթական, մշակութային ու մյուս կարիքների համար գործադրած ջանքերը իմաստավորվում են մայր հայրենիքի գոյությամբ։ Բարեգործականի կենտրոնական վարչության նախագահ Ալեք Մանուկյանը, գնահատելով հայրենիքի դերը սփյուռքի կյանքում, ասել է. «Հայրենիքը հայապահպանության գլխավոր կռվանն է։ Սփյուռք—հայրենիք կապերի ընդլայնումը շատ դրական գործ կատարեց գաղթօջախներուն մեջ, սփյուռքի ազգային կյանքը մեծապես աշխուժացավ հատկապես վերջին տասնամյակին։ Խոսելով Ամերիկայի Միացյալ Նահանգներուն մասին, կուզեմ նշել, որ երիտասարդության շրջանակին մեջ հիմա մեծ հետաքրքրություն ստեղծված է հայրենիքի, հայկականի, հայ մշակույթի հանդեպ, բան մը, որ առաջ նկատելի չէր։ Ասիկա մեծ մասամբ արդյունք է երիտասարդական խմբերու դեպի հայրենիք կատարած այցելությա-

[96] Տե՛ս նույն տեղում, ց. 4, գ. 17, թ. 21։

[97] Տե՛ս նույն տեղում, ց. 2, գ. 39, թ. 14—22։

[98] Տե՛ս նույն տեղում, ց. 5, գ. 209, թ. 3—4։

նը։ Անոնք կվերադառնան գոտեպնդված, հպարտ այն գիտակցությամբ, որ իրենք ալ հայրենիք ու պետականություն ունին, բարձր մշակույթ։ Եվ այս խանդավառությունը զիրենք կմոտեցնե հայ կյանքին»[99]։

Սփյուռքում գործող մյուս խոշոր բարեգործական հաստատությունը Լիսաբոնի Գալուստ Կյուլպենկյան հիմնարկությունն է, որն ստեղծվել է 1955 թ. և հաջորդ տարի հաստատվել պորտուգալական կառավարության կողմից։ Գ. Կյուլպենկյանը, լինելով Իրաքի նավթային ընկերության բաժնետերերից մեկը, ստացել է ընդհանուր շահույթի 5% և դարձել աշխարհի հինգ նշանավոր հարուստներից մեկը։ Իր մահվանից մի փոքր առաջ Գ. Կյուլպենկյանը կազմել էր իր կտակը, որի համաձայն ստեղծվելու էր «Գ. Կյուլպենկյան հիմնարկությունը»։ Այն ֆինանսապես հզոր բարեգործական մի հաստատություն է և իր մեկ միլիարդ դոլար կազմող հիմնադրամով զիջում է միայն Ֆորդի ու Ռոկֆելլեր եղբայրների բարեգործական միություններին և հետապնդում է բարեսիրական, մշակութային ու գիտական նպատակներ։ Թեպետ կտակարարը հայկական ձեռնարկների համար հատուկ դրամագլուխ չէր նախատեսել, այնուամենայնիվ, հետագայում հիմնարկության վարչությունը ծնունդ տվեց «Հայկական ձեռնարկներ» կոչվող բաժնին, որը միջոցներ է հատկացնում հայագիտական նպատակների իրականացմանը։ Այդ բաժինը, որը վարում է Գ. Կյուլպենկյանի եղբորորդի Ռոպեր Կյուլպենկյանը, իր հայրենասիրական պարտքն է համարում օգտակար լինել նաև Սովետական Հայաստանի գիտական, ուսումնական, առողջապահական ու մշակութային հաստատություններին։

Գ. Կյուլպենկյանը հարում էր ռամկավար ազատական կուսակցությանը, ուստի բնական է, որ նրա հիմնարկության հատկապես հայկական բաժինը ևս գտնվում է ռամկավարական շրջանների ազդեցության տակ։ Հիմնարկության հարստությունը տարեկան միջին հաշվով աճում է շուրջ 70 միլիոն դոլարով։ Հայկական նպատակների համար հատկացված հիմնադրամը հասնում է մոտ 300 միլիոն դոլարի, որը տարեկան մինչև 12 միլիոն դոլար տոկոսային շահույթ է բերում[100]։ Հայկական ձեռնարկների գծով առ 31-ը դեկտեմբերի 1964 թ. հիմնարկությունը ծախսել է ավելի քան 7 մլն դոլար։ Սփյուռքահայ կրթական ու մշակութային կարիքների համար այդ հիմնարկությունը տարեկան հատկացնում է մինչև 1,5 միլիոն դոլար։ 1959 թ. հիմնադրվել է հատուկ մատենաշար՝ հայերեն և օտար լեզուներով հայ մշակույթի, լեզվի, քաղաքակրթության, հայոց պատմության ու գրականության վերաբերյալ ուսումնասիրություններ և հին ձեռագրեր հրատարակելու նպատակով[101]։

[99] Նույն տեղում։

[100] Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 41, թ. 22—26։



Գ. Կյուլպենկյան հիմնարկությունը հատկացումներ է կատարում նաև ՀՍՍՀ ԳԱ մի շարք ինստիտուտների, Երևանի պետական համալսարանին, Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանին, Ալ. Մյասնիկյանի անվան հանրային գրադարանին, պատմական հուշարձանների պահպանության ընկերությանը, Էջմիածնի Ամենայն հայոց կաթողիկոսությանը և այլ հաստատությունների՝ նրանց համար արտասահմանյան սարքավորումներ և գրականություն ձեռք բերելու եղանակով։ Հիմնարկության հայկական ձեռնարկների բաժինը Սովետական Հայաստանի տարբեր հաստատություններին կատարվող հատկացումները դիտում է ոչ թե որպես օգնություն, այլ՝ մասնակցություն հայրենի երկրի վերելքին ու առաջադիմությանը։

Գ. Կյուլպենկյան հիմնարկության հետ հաստատված կապերի շնորհիվ հանրապետության մի շարք ուսումնական, գիտական, մշակութային ու առողջապահական հիմնարկներ տարեկան մինչև 250 հազար դոլար արժողության սարքավորումներ և գրականություն են ստանում։ Հիմնարկությունը 1963—1968 թթ. ընթացքում միայն պետական համալսարանի, մատենադարանի, բժշկական, ֆիզկուլտուրայի, ագրոքիմիայի, կարդիոլոգիայի և սրտի վիրաբուժության ինստիտուտների, ՀՍՍՀ ԳԱ հիմնակազմ գրադարանի, հանրային գրադարանի, ՀՍՍՀ պատմական հուշարձանների պահպանության ընկերության և ՀՍՍՀ առողջապահության մինիստրության հակատուբերկուլյոզային դիսպանսերի համար որպես նվեր ուղարկել է 503 հազար դոլար արժողությամբ սարքավորումներ և գրականություն[102]։

[101] Տե՛ս նույն տեղում։

[102] Տե՛ս նույն տեղում, ց. 2, գ. 669, թ. 11։

* * *

Սփյուռքի կոմիտեի գործունեության մեջ որոշակի տեղ է զբաղեցնում արտասահմանում գոյություն ունեցող մշակութային միությունների, հայկական տների և նույնատիպ այլ կազմակերպությունների հետ տարվող աշխատանքը։ Դրա նպատակն է այդ կազմակերպություններին ցույց տալ այնպիսի օգնություն, որ նրանց գործունեությունը դառնա ավելի նպատակասլաց, ավելի բեղմնավոր ու արդյունավետ։ Նրանց հետ կապերի ձևերը տարբեր են՝ նամակագրական, ցուցադրական նյութերի տրամադրում, փոխայցելություններ և այլն։ Սիստեմատիկաբար նրանց ուղարկվում են թերթեր, ամսագրեր, գրքեր, ձայնապնակներ, կինոֆիլմեր, երաժշտական գործիքներ, ազգային տարազներ և այլն։ Կոմիտեն իր հերթին նրանցից ստանում է հնագույն հայկական ձեռագրեր, հնատիպ գրքեր, ամբողջական գրադարաններ, թանգարանային արժեքավոր իրեր, նկարներ, քանդակներ, արխիվային նյութեր և այլ գործեր։

Այդ հայրենանվեր գործում առանձնապես մեծ աշխատանք են կատարում Ֆրանսահայ մշակութային միությունը, ԺԱՖ-ը, ՅԱՆՑ-երը, բուլղարահայ «Երևան» մշակութային միությունը, Ամերիկահայ առաջադիմական միությունը, Միլանի և Լոնդոնի հայ մշակույթի տները, Բեյրութի Վահան Թեքեյան մշակութային միությունը, Ուրուգվայի հայերի ազգային կենտրոնը, Արգենտինահայ մշակութային միությունը, Մոնրեալի Մամիկոնյան մշակութային միությունը, ԱՄՆ-ի պոլսահայ մշակութային միությունը, ՀԲԸՄ տնօրինության տակ եղած մի շարք միություններ և ուրիշներ։ Պետք է նշել, որ դրանք միաժամանակ զբաղվում են Սովետական Հայաստանի տնտեսական ու մշակութային կյանքի պրոպագանդումով, գեղարվեստական ինքնագործունեության տարբեր խմբերի կազմակերպումով և այլ ազգօգուտ աշխատանքներով։ Մշակութային այդ միությունները ունեն բազմաթիվ երգչախմբեր, պարախմբեր, թատերախմբեր, որոնք տարածելով հայ երգը, պարն ու խոսքը, մի կողմից վառ են պահում ազգային ոգին հայրենիքից հեռու գտնվող հայրենակիցների շրջանում, չթողնելով, որ նրանք կտրվեն հարազատ ժողովրդի մշակույթից ու կորցնեն ազգային դիմագիծը, իսկ մյուս կողմից՝ նպաստում են հայրենի երկրի նվաճումների պրո-



պագանդմանը, որը նույնպես կարևոր նշանակություն ունի ազգապահպանման համար։

Սփյուռքահայ մշակութային միությունները, առաջադիմական այլ կազմակերպությունների հետ համագործակցած, ամեն տարի հանդիսավոր կերպով նշում են Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության, Հայաստանում սովետական իշխանության հաղթանակի տարեդարձները և այլ նշանավոր տարեթվեր ու իրադարձություններ։ Նրանց ջանքերով համազգային հռչակի տոնի վերածվեց Երևանի 2750-ամյակը։ Այն հայրենասիրական լայն շարժում առաջացրեց սփյուռքահայ բոլոր գաղթօջախներում։

Հատկապես վերջին տարիներին սփյուռքահայ առաջադիմական կազմակերպությունների ու մտավորականների կողմից հայրենիքի օգնությամբ նպատակասլաց կերպով պրոպագանդվում է մեր ազգային մշակույթը։ Մի շարք գաղթօջախներում տպագրվել են մեծ թվով բացիկներ, ալբոմներ, գրքեր, ուսումնասիրություններ, կազմակերպվել են ցուցահանդեսներ, փառատոներ՝ նվիրված հայ արվեստին ու գրականությանը։ Կարելի է հիշատակել Լևոն Զավեն Սուրմելյանի կողմից «Սասունցի Դավիթ» էպոսի թարգմանությունն ու հրատարակությունը ԱՄՆ-ում, Միշա Գյուտյանի կողմից «Սասունցի Դավիթ», «Լոռվա երգիչը» (նվիրված Հովհ. Թումանյանին) և այլ գրքերի լույս ընծայումը Լոնդոնում, նրա իսկ կողմից հիմնադրված «Մաշտոց» հրատարակչությունում։

Այդ ուղղությամբ աշխույժ աշխատանք է կատարվում նաև իտալահայ գաղթօջախում։ Վենետիկի Մխիթարյան միաբանությունը հրատարակել է հայ մանրանկարչությանը նվիրված շքեղ հատոր, Իտալիայի հայ մշակութային միության և մի խումբ ճարտարապետների նախաձեռնությամբ միջնադարյան հայկական ճարտարապետության ցուցահանդեսներ կազմակերպվեցին Հռոմում և Միլանում, ինչպես նաև այլ երկրներում։ Դրանք ցուցադրվեցին նաև իտալական ուրիշ քաղաքներում։ Միլանահայ գաղութի և հայ ու իտալացի մի խումբ ճարտարապետների ջանքերով սկիզբ դրվեց հայկական ճարտարապետության պատմության դասավանդմանը Միլանի և Հռոմի պոլիտեխնիկական ինստիտուտներում։ Այնտեղ պատրաստվեցին նաև «Հաղպատ», «Սանահին» հուշարձանախմբերի ու «Հայկական խաչքարերի» գունավոր ալբոմները։ «Էրեբունի» ընկերությունը գլուխ բերեց Հա-

յաստանի տեսարժան վայրերի մեծ քանակությամբ գունավոր բացիկների տպագրությունը։ Շատ գաղթօջախներում անցկացվեցին Մեսրոպ Մաշտոցի, Սայաթ-Նովայի, Հովհ. Թումանյանի, Կոմիտասի հոբելյանները և բազմաթիվ ու բազմարնույթ այլ միջոցառումներ, որոնք օր-օրի ավելի մեծ ծավալ են ստանում և նորանոր շրջաններ ներգրավում այդ ազգանվեր աշխատանքի մեջ։

Վերջին քանամյակում աշխարհի տարբեր երկրներում՝ ԱՄՆ-ում, Անգլիայում, Ֆրանսիայում, ԳՖՀ-ում, Իտալիայում, Ավստրիայում, ԳԴՀ-ում, Չեխոսլովակիայում, Բուլղարիայում, Հունգարիայում, Ռումինիայում և այլուր, մեծ աշխուժություն ապրեց հայագիտությունը, աննախընթաց հետաքրքրություն առաջացավ հայ արվեստի նկատմամբ։ Դրան որոշակիորեն նպաստեց հայ արվեստին նվիրված մի շարք ցուցահանդեսների կազմակերպումը Հռոմում, Վենետիկում, Միլանում, որոնք կրկնվեցին նաև Վիեննայում, Բուենոս Այրեսում, Լիսաբոնում, Բեյրութում, Թեհրանում, Մյունխենում և այլուր։ Այդ հետաքրքրությունների անմիջական արդյունքը եղավ հայ արվեստին նվիրված առաջին միջազգային սիմպոզիումը 1975 թ. հունիսին, իտալական Բերգամո քաղաքում։ Այդ օրերին այնտեղ բացվեց նաև IV—XVIII դարերի հայ ճարտարապետությանը նվիրված ցուցահանդես։ Գիտաժողովի աշխատանքներին մասնակցեցին 14 երկրների 120 գիտնականներ։ Գիտաժողովին գործուն մասնակցություն ունեցավ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պատվիրակությունը։ Գիտաժողովի և ցուցահանդեսի պատվավոր հանձնախմբի կազմում ընտրված էին նաև Իտալիայում ՍՍՀՄ դեսպան Ն. Ռիժովը, ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտ Վ. Համբարձումյանը և Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահ Վ. Համազասպյանը։ Գիտաժողովը լայն արձագանք գտավ մամուլում[103]։

1978 թ. սեպտեմբերին Երևանում տեղի ունեցավ հայ արվեստին նվիրված միջազգային երկրորդ սիմպոզիումը, որին մասնակցում էին գիտնականներ Սովետական Միության 12 քաղաքներից և արտասահմանյան 19 երկրներից։ Գիտաժողովի աշխատանքներն անցան 5 մասնաճյուղերում, ուր լսվեցին 138

[103] Տե՛ս «Սովետական Հայաստան», ամսագիր, № 12, 1978 թ., էջ 11—17, 24—25։



զեկուցումներ։ 1981 թվականին Իտալիայում տեղի ունեցավ 3-րդ սիմպոզիումը, որը նույնպես կարևոր դեր խաղաց հայ արվեստի ուսումնասիրման ու պրոպագանդման գործում։

Հայ կյանքի, մասնավորապես սփյուռքում տարվող աշխատանքների աշխուժացման իմաստով կարևոր նշանակություն ունեցավ նաև հայ երաժշտությանը նվիրված սիմպոզիումը, որը մեծ կազմակերպվածությամբ տեղի ունեցավ 1978 թ. ամռանը Անգլիայում, Լոնդոնի հայ երաժշտության ինստիտուտ կոչվող ընկերության նախաձեռնությամբ[104]։

Նման կարգի միջոցառումները ազգային ինքնաճանաչման ու հպարտության լայն հնարավորություններ են ստեղծում սփյուռքում ուծացման ուղին ընկած բազմաթիվ հայերի համար, ուստի դրանց նշանակությունը դուրս է գալիս գիտական նեղ շրջանակներից և ստանում քաղաքական կարևոր իմաստ, նպաստում ազգապահպանման կենսական գործին։

Սփյուռքի կոմիտեի և համապատասխան այլ կազմակերպությունների գրական աշխատանքներից է նաև օտարության մեջ եղած հայկական մշակութային արժեքների հայրենադարձության կազմակերպումը։ Ահա մի հասկացողություն ևս, որը արտահայտում է ոչ միայն մեր աշխարհասփյուռ քույրերի ու եղբայրների, այլև նրանց ստեղծած հոգևոր արժեքների տունդարձը։ Սփյուռքի կոմիտեի և հանրապետության այլ կազմակերպությունների ձեռնարկած միջոցների, ինչպես նաև արտասահմանում գործող մշակութային, հայրենակցական, բարեգործական միությունների ու անհատների հայրենասիրական ջանքերի շնորհիվ, հատկապես վերջին քանամյակում բազմաթիվ հայերեն ձեռագրեր, գրքեր, արխիվային վավերագրեր, արվեստի գործեր ու այլ արժեքներ փրկվել են անխուսափելի կորստից և ապահով հանգրվանել մայր հայրենիքում։

Այսպես, Ֆրանսահայ մշակութային միության վարչության ջանքերով Հայաստան են ուղարկվել Արշակ Չոպանյանի, Վահան Մալեզյանի, Սեմայի (Գեղամ Աթմաճյան), Զապել Եսայանի, Լևոն Մեսրոպի, Երվանդ Ճյուհերյանի և այլոց արխիվները, քանդակագործ Հակոբ Գյուրջյանի 300-ից ավելի

[104] Տե՛ս նույն տեղում։

աշխատանքները, Հովհաննես Այվազովսկու 40-ից ավելի նկարները և այլն[105]:

Արխիվային, ինչպես նաև այլ բնույթի արժեքավոր նյութեր են ստացվել նաև Բուլղարիայի, ԱՄՆ-ի, Մերձավոր ու Միջին արևելքի հայկական գաղթօջախներից։ Հայրենի կառավարությունը միշտ էլ բարձր է գնահատել սփյուռքահայ կազմակերպությունների հայրենասիրական ջանքերը։ Դրա արտահայտություններից մեկը եղավ Ֆրանսահայ մշակութային միության աշխատանքին տրված բարձր գնահատականը՝ 1974 թ. Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության պատվոգրով պարգևատրումը։ Մի խումբ սփյուռքահայ գործիչներ նույնպես պարգևատրվել են ՍՍՀՄ շքանշաններով և արժանացել ՀՍՍՀ պետական մրցանակների։

Հայրենիքի հետ սերտ կապերի մեջ է սփյուռքահայ նկարիչների ճնշող մեծամասնությունը։ Նրանցից շատերը (շուրջ 70 նկարիչ ու քանդակագործ), սկսած 1964 թ. Սփյուռքի կոմիտեի միջոցով իրենց լավագույն գործերից մի քանիսը նվիրել են հայրենի թանգարաններին ու պատկերասրահին։ Ֆրանսահայ նկարիչ Արմիսը (Արմենակ Մսիրյան) հայրենիքին է նվիրել 30 կտավներ ու գծանկարներ, Գարիա Կամսարականը (Ֆրանսիա)՝ իր հիանալի քանդակները, Եղիա Գասպարյանը (ԱՄՆ)՝ 15 գեղանկար և այլն[106]։ Մեծ թվով նկարիչներ ու քանդակագործներ, այդ թվում Գառզուն (Գառնիկ Զուլումյան), Զարեհ Մութաֆյանը, Ռիչար (Խաչատուր) Ժերանյանը, Արտավազդ Պերպերյանը, Պոլ Կիրակոսյանը, Գևորգ Հակոբյանը (Ֆր.), Նվարդ Զարյանը, Ժակ Օրագյանը (Իտալիա), Նունուֆար Պողոսյանը, Արմեն Տարոնին, Խորեն Տեր-Հարությանը, Մինաս Մինասյանը (ԱՄՆ), Օննիկ Ադամյանը (Անգլիա), Ալեքսանդր Սարուխանը, Սիմոն Սամսոնյանը (Եգիպտոս), Վազգեն Թութունջյանը (Լիբանան), Կարպիս Ղազարյանը (Շվեյցարիա), Երջան Պողոսյանը (Իրաք), Ջիկ Տամատյանը (Ռումինիա) և շատ ուրիշներ Սփյուռքի կոմիտեի նախաձեռնությամբ եղել են հայրենիքում և, ստանալով Հայաստանի նկարիչների միության օժանդակությունը, իրենց անհատական ցուցահանդեսներն են ունեցել Երևանում։ Հայրենիքում կազմակերպվել է նաև Լիբանանի, Սիրիայի և Եգիպտոսի 14 հայ նկարիչների կոլեկտիվ ցուցահանդեսը[107]:

105 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 875, ց. 1, գ. 37, թ. 68—69։

106 Տե՛ս նույն տեղում, գ. 11, թ. 1—18։



1969 թ. Սփյուռքի կոմիտեն Երևանում կազմակերպեց նկարիչներ Բյուզանդ Թոփալյանի և Ռիչար Ժերանյանի (Ֆրանսիա), Մարտա Մնդիկյանի (Իտալիա), Սալբի Մավյանի (ԱՄՆ), կանադահայ անվանի լուսանկարիչ Արթին Գավուքի (Հարություն Գավուքյան) գեղանկարների, գրաֆիկական գործերի և գունավոր լուսանկարների ցուցահանդեսները, որոնք լայն արձագանք գտան թե՛ հայրենիքում և թե՛ սփյուռքում։

Հայրենիք այցելած գեղանկարիչներն ու մյուս արվեստագետները այստեղ ոչ միայն ծանոթանում են հայրենի երկրին, նրա նվաճումներին, այլև ստանում են ստեղծագործական նոր լիցք, նկարում են հարազատ երկրի բազմաթիվ տեսարաններ ու մարդկանց և դրանք ցուցադրում սփյուռքում։ Կարելի է նշել, օրինակ, նկարիչ Զարեհ Մութաֆյանին, որը Ֆրանսիա վերադառնալուց հետո ստեղծեց հայրենի բնապատկերների մի ամբողջ շարք և դրանք ցուցադրեց բազմաթիվ երկրներում։ Նույնը կարելի է ասել նաև եգիպտահայ նկարիչ Օննիկ Ավետիսյանի, ամերիկահայ քանդակագործ Խորեն Տեր-Հարությանի, արվեստագետ-լուսանկարիչ Հովհաննես Ջերեջյանի (Լիբանան), ամերիկահայ Հարություն Զոլակի (Զոլակյան), լիբանանահայ կինոռեժիսյոր և օպերատոր Վահե Սուրյանի և այլոց կատարած աշխատանքների մասին։

Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն նախապատրաստական լայն աշխատանք կատարեց Վ. Ի. Լենինի ծննդյան 100-ամյա հոբելյանը հայկական գաղթօջախներում պատշաճ մակարդակով նշելու համար։ Նախօրոք կազմված պլանի համաձայն կոմիտեի կողմից սփյուռքահայ առաջադիմական կազմակերպություններին, երիտասարդական ու մշակութային միություններին ուղարկվեցին գրականություն, լուսանկարների ցուցահանդեսներ, բուկլետներ և այլն։ Կոմիտեի մամուլի բաժինը սփյուռքահայ առաջադիմական մամուլի և ռադիոժամերի 80 հասցեներով ուղարկեց լենինյան թեմաներով բազմաթիվ հոդվածներ, գեղարվեստական ստեղծագործություններ և այլ նյութեր[108]:

107 Տե՛ս նույն տեղում, ց. 2, գ. 43, թ. 16—17։

108 Տե՛ս նույն տեղում, ց. 4, գ. 49, թ. 1—4։



27—1181

Սփյուռքահայ առաջադիմական կազմակերպություններն ու մամուլը ըստ արժանվույն նշեցին Վ. Ի. Լենինի ծննդյան 100-ամյակը, և արտասահմանյան տասնյակ երկրներում ապրող հայությունը մասնակից եղավ պատմական այդ կարևոր իրադարձությանը։ Պատշաճ կերպով վեր հանվեց հայ ժողովրդի փրկության ու Սովետական Հայաստանի ստեղծման գործում Վ. Ի. Լենինի վճռական դերը, նրա անմար գաղափարների կենսագործումը Հայաստանում։

Վ. Ի. Լենինի, որպես բոլոր ճնշված ժողովուրդների անկեղծ բարեկամի, ծննդյան հարյուրամյակը հատկապես մեծ շուքով տոնվեց ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Լիբանանի, Եգիպտոսի, Արգենտինայի և այլ երկրների հայկական գաղթօջախներում։

Փարիզում հրատարակվող «Աշխարհ» առաջադիմական թերթը լենինյան օրերին իր 15 համարներում տպագրեց «Հայ ժողովրդի փրկությունը» վերնագրով ընդարձակ հոդվածաշար, այն ուղեկցելով Վ. Ի. Լենինի կենսագրականով և բազմաթիվ լուսանկարներով։ Բեյրութի հնչակյան «Արարատ» թերթը 1970 թ. ապրիլի 3-ի համարում տպագրել էր լենինյան հանդիսությունների լիբանանյան հանձնաժողովի մշակած միջոցառումների մասին մանրամասն հաղորդագրություն, ապա թերթի մի ամբողջ համար նվիրել Վ. Ի. Լենինի կյանքին ու գործին։ Թերթի 1970 թ. ապրիլի 22-ի համարում տպագրված էր Վ. Ի. Լենինին նվիրված «Անմահության դափնեկիրը» վերնագրով ուշագրավ առաջնորդողը։

Վ. Ի. Լենինի ծննդյան 100-ամյակին լայնորեն անդրադարձավ նաև Բեյրութի ռամկավարական «Զարթոնք»-ը։ Բեյրութում բացելով Վ. Ի. Լենինի ծննդյան 100-ամյակին նվիրված հայկական հանդիսությունները, առաջադիմական գործիչ Պարույր Երեցյանն ասաց. «Եթե ուրիշ ազգեր ու ժողովուրդներ օգտված են լենինիզմեն՝ իրենց պայքարի որոշ հանգրվաններուն, մենք հայերս մեր հայրենիքին ներկա ամբողջ գոյությունը կպարտինք լենինյան գաղափարներու հաղթանակին։ Առանց Լենինի ղեկավարած Հոկտեմբերյան հեղափոխության մենք չէինք ունենար մեր սիրելի, մեր սքանչելի Սովետական Հայաստանը»[109]։

ԱՄՆ-ում լույս տեսնող առաջադիմական «Լրաբեր» թերթը,

[109] Տե՛ս «Սովետական Հայաստան», ամսագիր, № 4, 1971 թ., էջ 8. Նաև՝ ՀՍՍՀ ՀՀՍՃ ՊԿԱ, ֆ. 875, ց. 4, գ. 52, թ. 21։



բացի մի շարք համարներում Վ. Ի. Լենինի մասին հրապարակած բազմաթիվ նյութերից, մի առանձին համար նվիրեց նրա ծննդյան 100-ամյակին։ Վ. Ի. Լենինի հեղափոխական գործունեությանը, ճնշված ժողովուրդների ճակատագրում նրա խաղացած դերին հանգամանորեն անդրադարձան նաև Բուենոս Այրեսում՝ «Սևանն» ու «Շարժումը», Կահիրեում՝ «Արևն» ու «Ջահակիրը», ԱՄՆ-ում՝ ռամկավարական «Պայքարն» ու հնչակյան «Երիտասարդ Հայաստանը» և սփյուռքահայ շատ ուրիշ պարբերականներ։

* * *

Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի գործունեության մեջ կարևոր տեղ է զբաղեցնում սփյուռքահայ արվեստագետների, երգի-պարի անսամբլների և թատերախմբերի ելույթների կազմակերպումը հայրենիքում։ Կոմիտեի և կուլտուրայի մինիստրության համատեղ ջանքերով Սովետական Հայաստանում կազմակերպվել են սփյուռքահայ նշանավոր երգիչ-երգչուհիներ Լիլի Չուգասզյանի, Հյուսի Իշխանյանի, Ժան Ալմուխյանի, Լուիզա Պողապալյանի, Շառլ Ազնավուրի, Ռոզի Արմենի, Լուսին Ամարայի, Սոնա Ղազարյանի, Արփինե Փեհլևանյանի, Մայքլ Քրմոյանի, Ժիրայր Սերգոյանի, Լին Դուրյանի, Էլիզ Թաշչյանի, Անգինե Մուրադյանի և ուրիշների մենահամերգները։

Հայրենիք այցելած սփյուռքահայ գեղարվեստական խմբերի թվում եղել են «Մասիս» պարի խումբը (Ֆրանսիա), Եղիշե Հարութի թատերախումբը (ԱՄՆ), «Շումեն» պարի խումբը (Բուլղարիա), Հալեպի հայ մարմնամարզական միության «Ռուպի» էստրադային նվագախումբը և այլն։

1972 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին հայրենիքում հյուրընկալվել և հանրապետության մի շարք քաղաքներում ներկայացումներ է տվել Բեյրութի ՀԲԸՄ հայ երիտասարդաց ընկերության «Վահրամ Փափազյան» թատերախումբը։ Այդ կարգի միջոցառումների շարքում հատկապես նշանակալից էր բուլղարահայ ինքնագործունեության խմբերի այցը հայրենիք՝ 1967 թ., Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 50-ամյակի կապակցությամբ։ Բուլղարահայ «Երևան» մշակութային միության նախաձեռնությամբ ավելի քան 500 հոգի

բարեկամության հատուկ գնացքով ժամանեցին Երևան և 10 օր շարունակ ելույթներ ունեցան հանրապետությունում։ Ռուսեի, Սոֆիայի, Պլովդիվի քառաձայն երգչախմբերի, Վառնայի, Շումենի երգի-պարի անսամբլների համերգները և թատերախմբերի ուշագրավ ընմադրությունները մեծ բավականություն պատճառեցին ունկնդիրներին[110]։ Դրանք միաժամանակ դրսևորեցին այն մեծ ուշադրության արդյունքները, որ հյուրընկալ բուլղար ժողովուրդն ու կառավարությունը ցուցաբերում են բուլղարահայ աշխատավորների և հայկական մշակույթի նկատմամբ։

Սփյուռքի կոմիտեի աշխատանքի կարևոր բնագավառներից մեկը եղել է սովետահայ գեղարվեստական, երիտասարդական, մարզական խմբերի, առանձին արվեստագետների, լրագրողների, գրողների, մշակութային, հասարակական գործիչների պատվիրակությունների այցելությունների կազմակերպումը սփյուռք։

Անցած շրջանում սփյուռքահայ մի շարք կազմակերպությունների օգնությամբ հնարավոր եղավ սփյուռք ուղարկել Թ. Ալթունյանի անվան երգի-պարի վաստակավոր անսամբլը (Սիրիա, Լիբանան), պետական պարի անսամբլը (Աֆրիկայի մի շարք երկրներ, Իրան, Ֆրանսիա, ԱՄՆ-ն և այլն), Գ. Սունդուկյանի անվան դրամատիկական թատրոնը (Սիրիա, Լիբանան, Բուլղարիա), գեղարվեստական մի քանի խմբեր (Ֆրանսիա, Բուլղարիա, Լեհաստան, Հունգարիա), մենակատարներ (ԱՄՆ, Ֆրանսիա, Անգլիա, Կանադա), դասախոսներ (Լիբանան, Սիրիա, Ֆրանսիա, Բուլղարիա), գրողներ (Լիբանան, Սիրիա, Ֆրանսիա, Հունգարիա, Եգիպտոս, Անգլիա), գիտնականներ (Ֆրանսիա, Անգլիա, Սիրիա, Լիբանան, ԱՄՆ, Եգիպտոս, Իրաք, Շվեյցարիա, Իտալիա), հասարակական, քաղաքական գործիչներ, լրագրողներ (Իրան, Լիբանան, Եգիպտոս, Իրաք, ԱՄՆ, Ֆրանսիա, Կանադա, Թուրքիա, Հունաստան, Իտալիա, Բուլղարիա, Հոլանդիա), մարզական խմբեր (Սիրիա, Լիբանան, Իրան, Ֆրանսիա, ԱՄՆ), բժիշկների խմբեր ու պատվիրակություններ (Սիրիա, Լիբանան, ԱՄՆ), որոնք հսկայական դեր են խաղացել ոչ միայն Սովետական Հայաստանի նվաճումների, հայ մշակույթի պրոպագանդման, այլև հայրենիք—սփյուռք առնչությունների ամրապնդման, սփյուռքահայ լայն զանգվածներին մայր

[110] Տե՛ս նույն տեղում։



հայրենիքի շուրջը համախմբելու և հայապահպանության գործին նպաստելու ուղղությամբ[111]։ Հայրենի ծիծեռնակների այցը խակական տոնական մթնոլորտ է ստեղծում գաղթօջախներում։ Սովետահայ գեղարվեստական ու մարզական խմբերի ամեն մի ելույթ վեր է ածվում հայրենի երկրի նկատմամբ անկեղծ սիրո և նվիրվածության վառ ցույցի։ Ահա թե ինչ է գրել «Զարթոնք» թերթը Գ. Սունդուկյանի անվան թատրոնի բեյրության հյուրախաղերի մասին. «Երեք շաբաթ շարունակ Սունդուկյանի թատերախումբը առանց րոպե մը իսկ զանց առնելու ամբողջ Հայաստանը փոխադրած էր Պեյրութի սրտի վրա և ամեն գիշեր, երբ հոգնաբեկ մարդիկ իրենց քայլերը կուղղեին դեպի համեստ սրահ մը, ամեն անգամ կունենային պատրանք, թե Հայաստան այցի կերթային ամեն գիշեր։ Ու կվերանորոգվեին, անսահմանուժ կատանային «փոքրիկ Հայաստանին» այցի երթալով։ Մոռանալով իրենց առօրյան, գոյությունը, անոնք կվերածնեին որպես նոր մարդ, որպես հայ ունկնդիր՝ իրենց հոգիներու մեջ ճնշող արժազանքին՝ դուք մեզի հայ բրիք նորեն...»[112]։

* * *

Կոմիտեն լայն կապեր է հաստատել սփյուռքահայ գրական կազմակերպությունների, գրողների և գրականագետների հետ։ Մի շարք գաղթօջախներում հայ գրողներն ունեն իրենց գրական կազմակերպությունները՝ Ֆրանսիայում, ԱՄՆ-ում, Իրանում, Լիբանանում և այլուր, որոնք իրենց շարքերում միավորում են առաջադիմական գրողների զգալի մասին։ Հայրենիք—սփյուռք կապերի սերտացման շնորհիվ Սովետական Հայաստանի նկատմամբ սերը, նրա վերելքը և պայծառ ներկան դարձել են սփյուռքահայ գրողների ստեղծագործությունների կարևոր թեմաները։ Հայրենիքի նկատմամբ սփյուռքահայ գրողների անկեղծ սիրո զգացմունքները շատ լավ է արտահայտել տաղանդավոր բանաստեղծուհի Ալիսիա Կիրակոսյանը «Նամակ առ Հայաստան» քերթվածում։ Նրանում բանաստեղծուհին շատ վեհ զգացմունքներով երգում է իր երազանքը, իր հավերժ սիրո աղբյուր մայր Հայաստանը, այն երկիրը, որ նա իր մեջ կրում է ամե-

[111] Տե՛ս նույն տեղում, թ. 1—100։

[112] Նույն տեղում, գ. 17, թ. 10—11։

նուրեք, ամեն օր, ամեն ժամ, երկիր, որը կա և ապրում է բոլոր հայերի սրտում ու արյան մեջ։

«Երկիր Հայաստան, դու կանչում ես ինձ,
Քեզ է պահանջում ու քեզ է կանչում նաև
արյունս»,—

գրում է բանաստեղծուհին։ Այդ արյան կանչը ներկայումս շատ ավելի կենսական ու զորավոր է դարձել ամեն մի սփյուռքահայի, օտարության մեջ ապրող ամեն մի հայ գրողի, արվեստագետի, գիտնականի, մտավորականի համար։

Սփյուռքի կոմիտեն և համապատասխան մյուս կազմակերպությունները, սովետահայ պարբերական մամուլը, հետևողականորեն անդրադառնալով սփյուռքի հայ գրողների գործունեության՝ գնահատելով նրանց վաստակը, ավելի են ոգևորում նրանց և ուղղում նորանոր հայրենանվեր գործերի։

Հատկապես վերջին քսանամյակում սփյուռքահայ գրողների կողմից հրատարակվեցին բազմաթիվ ճանապարհորդական նոթեր, գեղարվեստական-հրապարակախոսական ստեղծագործություններ նվիրված Սովետական Հայաստանին, նրա առաջընթացին։ Կարապետ Սիտալի «Տեսա իմ երկրի արևածագը», Վահե Վահյանի «Ոսկե կամուրջը», «Առավոտը», Անդրանիկ Անդրեասյանի «Սփյուռքը և հայրենիքը», «Խոհերը», Մառի Աթմաճյանի բանաստեղծությունները, Հրաչ Զարդարյանի «Հոկտեմբերյան խոհերը», Զարեհ Որբունու «Միծեռնակարերդը», Գառնիկ Ադդարյանի «Ապրիմ-մեռնիմ» գողարիկ բանաստեղծությունների ժողովածուն, Ավետիս Ալիքսանյանի ակնարկները և բազմաթիվ այլ գործեր կոնկրետ վկայություններն են այն մեծ սիրո, որ սփյուռքահայ գրողները տածում են դեպի մայր հայրենիքը։

1967 թ. ՀՍՍՀ մամուլի կոմիտեն հիմնադրեց «Սփյուռքահայ գրողներ» մատենաշարը, որի գրիֆով լույս են տեսել սփյուռքահայ գրողների բազմաթիվ ստեղծագործություններ ոչ միայն մայրենի լեզվով, այլև՝ ռուսերեն։

Սփյուռքում հայ գրողների ստեղծագործությունների տպաքանակը չի անցնում 500—1000 օրինակից, մինչդեռ հայրենիքում պարբերական մամուլում լույս տեսնելուց բացի, նրանք արժանանում են առանձին գրքերով տպագրության՝ տասնյակ հազար օրինակ տպաքանակով, մի բան, որը տարագրության մեջ ապրող հայ գրողը նույնիսկ երազել չէր կարող։



Սփյուռքի կոմիտեն և Հայաստանի գրողների միությունը պատշաճ ձևով նշել են նաև սփյուռքահայ մի շարք գրողների հոբելյանները (Վահան Մալեզյանի, Միսաք Մանուշյանի, Սեմայի (Գեղամ Աթմաճյան), Զարուհի Գալեմքեարյանի, Ալեքսանդր Սարուխանի, Վիլյամ Սարոյանի, Վահան Թեքեյանի, Արշակ Չոպանյանի, Հակոբ Մնձուրու, Վահե Վահյանի և այլոց), կազմակերպել են նրանց առանձին ստեղծագործությունների հրապարակային քննարկումներ, գրական երեկոներ (Ալիսիա Կիրակոսյանի, Անդրանիկ Անդրեասյանի, Գալուստ Խանենցի, Ռուբեն Մելիքի, Գառնիկ Ադդարյանի) և այլ միջոցառումներ։ Այդ ամենի շնորհիվ սփյուռքահայ գրողների բացարձակ մեծամասնությունը ներկայումս կանգնած է հայրենիքի կողքին, հայրենիք—սփյուռք ամրակուռ պատնեշի վրա։

* * *

Արտասահմանի հայության կյանքում մեծ կշիռ ունի եկեղեցին, նրա գործունեությունը։ Գաղթօջախներում ազգային-համայնքային կյանքը մեծ մասամբ կառուցվում է եկեղեցական կազմակերպությունների շուրջը։ Տեղական իշխանությունների մոտ, որպես կանոն, հայ համայնքի պաշտոնական ներկայացուցիչը հանդիսանում է հոգևոր առաջնորդը կամ եկեղեցին։ Այդ ամենը հաշվի առնելով, Սփյուռքի կոմիտեն իր գործունեության իրականացման ընթացքում որոշակի առնչություններ է ունենում եկեղեցական թեմերի հետ։

Հայ եկեղեցու գլխավոր կենտրոնը կամ մայր Աթոռը Էջմիածինն է, որտեղ նստում է հայ եկեղեցու գերագույն պետը՝ Ամենայն հայոց կաթողիկոսը։ Նրան են ենթարկվում ԱՄՆ-ի, Կանադայի, Լատինական Ամերիկայի, Ավստրալիայի, Հնդկաստանի, Հեռավոր արևելքի, Աֆրիկայի, Մերձավոր արևելքի, Եվրոպայի հայկական գաղթօջախների շուրջ 200 եկեղեցիներ, կրոնական համայնքներ ու թեմեր։

Դրանցից ամենանշանավորներն են Երուսաղեմի և Ստամբուլի պատրիարքությունները, որոնք մեծ հեղինակություն ունեն ոչ միայն հայկական, այլև միջազգային քրիստոնեական աշխարհում։

Լիբանանի մայրաքաղաք Բեյրութի արվարձան Անթիլիասավանում հաստատվել է հանգամանքների բերումով ժամանա-

կին Կիլիկիայից այստեղ տեղափոխված մի ուրիշ կաթողիկոսություն՝ Անթիլիասի կամ Կիլիկյան կաթողիկոսությունը, որին ավանդական կարգով ենթարկվում են Սիրիայի, Լիբանանի և Կիպրոսի հայկական եկեղեցական թեմերը։

Մինչև 1956 թ. լավ հարաբերություններ գոյություն ունեին էջմիածնի և Անթիլիասի կաթողիկոսությունների միջև։ Վերջինս անվերապահորեն ճանաչում և ընդունում էր էջմիածնի առաջնությունն ու հեղինակությունը։ Սակայն դաշնակցության գործադրած խառնակչությունների հետևանքով 1956 թ. պառակտում առաջացավ էջմիածնի ու Անթիլիասի միջև, վերջինս թշնամաբար տրամադրվեց էջմիածնի նկատմամբ և գրավեց արտասահմանի էջմիածնական մի շարք թեմեր՝ Իրանի, Հունաստանի, ԱՄՆ-ի եկեղեցիների մի մասը և այլն։

Չնայած դրան, էջմիածինը շարունակում է պահպանել իր հեղինակությունը և մեծ ազդեցությունը արտասահմանի հայության բոլոր խավերի ամենալայն զանգվածների, քաղաքական կուսակցությունների, ՀԲԸՄ, Գ. Կյուլպենկյան հիմնարկության, երիտասարդական կազմակերպությունների և անհատ գործիչների վրա։ էջմիածինը ամեն ջանք գործադրում է սփյուռքահայությանը մայր հայրենիքի հետ սերտորեն կապելու ուղղությամբ։ Հարկ է նշել այդ գործում էջմիածնի կաթողիկոսության և նրա արժանավոր գահակալ Վազգեն Ա ծավալած ազգանվեր, հայրենասիրական աշխատանքը, որը տալիս է միանգամայն դրական արդյունքներ։ Ամենայն հայոց կաթողիկոսի բազմաթիվ ուղևորությունները Մերձավոր և Միջին արևելքի երկրներում, ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Իտալիայում և այլուր, անառարկելիորեն վկայում են այն լուրջ ջանքերի մասին, որ էջմիածինը գործադրում է սփյուռքահայությանը հայրենիքի շուրջը համախմբելու և ժողովուրդների միջև բարեկամություն ու աշխարհում կայուն խաղաղություն հաստատելու ուղղությամբ։

Բնավ գաղտնիք չէ, որ էջմիածնի և Անթիլիասի միջև մղվող պայքարը ըստ էության կրոնական պիտակի տակ պրոսովետական ու հակասովետական ուժերի պայքար է, նրանց քաղաքական-գաղափարական հակամարտությունների կոնկրետ արտահայտություններից մեկը։

Բարեբախտաբար, վերջին տարիներին ձեռք առնված հետևողական քայլերի շնորհիվ, էջմիածնի և Անթիլիասի փոխհարաբերությունները աստիճանաբար բարելավվում են, ուստի



կարելի է հուսալ, որ կվերանա հայրենիք—սփյուռք միասնության հաստատման ճանապարհին եղած այդ խոչընդոտը։

Արտասահմանյան հայության որոշ մասի կյանքում նշանակալի դեր ունեն նաև հայ կաթոլիկ և հայ ավետարանական-բողոքական համայնքները։ Դրանք ոչ միայն կրոնական, այլև մանավանդ կրթական ու մշակութային որոշակի գործունեություն են ծավալում։

Հայ կաթոլիկների կենտրոնը գտնվում է Բեյրութում, որտեղ և նստում է նրանց պատրիարքը։ Թեև որպես համաշխարհային կաթոլիկության մի հատված, այն նույնպես կապված է Վատիկանին, սակայն, միաժամանակ, զգալի գործունեություն է ծավալում ազգային մշակութային ասպարեզներում։ Վերջին տարիներին հայ կաթոլիկները նույնպես նկատելիորեն աշխուժացրել ու սերտացրել են հարաբերությունները թե՛ մայր հայրենիքի և թե՛ էջմիածնի Ամենայն հայոց կաթողիկոսության հետ։

Հայ բողոքականների ընդհանուր թիվը այնքան էլ մեծ չէ (մոտ 50000 մարդ), սակայն նրանք ևս նշանակալից աշխատանք են կատարում հատկապես կրթական-միսիոներական իմաստով։ Հայ բողոքականները թեպետ չունեն ընդհանուր կենտրոն և ամեն մի երկրում գործող բողոքականների կենտրոնը գտնվում է հենց իրենց մոտ, սակայն ունեն ընդհանուր գործելակերպ։ Հայ բողոքականները ևս էջմիածնի Ամենայն հայոց կաթողիկոսության նկատմամբ դրսևորում են հարգալից վերաբերմունք, նրա նկատմամբ տածում ակնածանք։ Նրանք Սովետական Հայաստանը համարում են իրենց մայր հայրենիքը, Սփյուռքի կոմիտեից ստանում են գրականություն, մամուլ և այլ նյութեր։

Մի խոսքով, սփյուռքահայ եկեղեցիների մեծ մասը և հիմնական կրոնական համայնքները սերտ կապեր ունեն էջմիածնի Ամենայն հայոց կաթողիկոսության ու մայր հայրենիքի հետ, իրենց ամենօրյա գործունեությամբ նպաստում են հայապահպանության սուրբ գործին։ Եվ պատահական չէ, որ հայրենասիրաբար տրամադրված եկեղեցիները, իրենց փոքրիկ բյուլետեններում անգամ աշխատում են որոշակի տեղ հատկացնել հայրենի երկրի նվաճումների պրոպագանդմանը։ Օրինակ՝ Նյու Յորքի հայոց ս. Խաչ եկեղեցու «Տեղեկագիրը», որի չափերը աշակերտական տետրի թերթից էլ փոքր են և ունի ընդամենը 4 էջ, դարձյալ իր սրբազան պարտքն է համարում գոնե մի քանի

*տողով իր ընթերցողներին ուրախ լուրեր հաղորդել Սովետական Հայաստանի մասին։*

*Արտասահմանի էմիգրանտական թեմերի բոլոր եկեղեցիները Սփյուռքի կոմիտեից մշտապես ստանում են թերթեր, ամսագրեր, գեղարվեստական գրականություն և այլն, որոնք նրանց միջնորդությամբ ու կրթական հանձնախմբերի միջոցով տարածվում են տեղի հայ բնակչության մեջ։*

* * *

*Սփյուռքի կոմիտեի գործունեության կարևոր բնագավառներից մեկը հայրենիքում սովորող սփյուռքահայ երիտասարդության շրջանում տարվող աշխատանքն է։ ՀՍՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության մինիստրության, Արտասահմանյան ուսանողության գործերի հայկական հանրապետական խորհրդի հետ համատեղ, Սփյուռքի կոմիտեն սիստեմատիկ աշխատանք է ծավալում սփյուռքահայ ուսանողների մեջ, սկսած նրանց ընդունելությունից մինչև ավարտելը։ Եվ դա հասկանալի է, չէ՞ որ այսօրվա ուսանողը վաղը դառնալու է սփյուռքի ազգային-հասարակական գործիչը։ Հայ ժողովրդի պատմության մեջ շատ խորիմաստ երևույթ է, որ սփյուռքի առաջադեմ երիտասարդներից շատերը ներկայումս կյանք են մտնում Սովետական Հայաստանի բարձրագույն դպրոցի ավարտական վկայականներով։ Չէ՞ որ ոչ վաղ անցյալում Հայաստանից էին գնում օտար երկրներ ուսում ստանալու։ Դա հաջողվում էր շատ քչերին։ Այժմ մեր բուհերը սովորելու են գալիս ոչ միայն սփյուռքահայեր, այլև նաև ուրիշ ազգերի հարյուրավոր զավակներ։ Պրակտիկան ցույց է տվել, որ սովետական բուհերի շրջանավարտները երբեք ու ոչնչով չեն զիջում արտասահմանյան մասնագետներին, ուստի ճանաչված և բարձրարժեք փաստաթուղթ է համարվում հայրենի բուհի դիպլոմը արտասահմանում։ Այժմ Սովետական Հայաստանը դարձել է սփյուռքահայ երիտասարդներից բարձրագույն կրթությամբ մասնագետների պատրաստման հիմնական կենտրոնը, որտեղ նրանք հնարավորություն ունեն մայրենի լեզվով, առանց ուսման վարձի, ընդհակառակը, պետության տված բարձր կրթաթոշակով, ստանալ բարձրագույն կրթություն։*

*Հանրապետության դիրեկտիվ օրգանների որոշումներին համապատասխան, առաջին անգամ 1958 թ. հայրենի բուհերում սովորելու հրավիրվեցին 15 սփյուռքահայ երիտասարդներ, որոնցից մրցույթով ընտրվեցին 8 հոգի։ 1962 թ., երբ Սովետական Հայաստանի բուհերը տվեցին առաջին սփյուռքահայ շրջանավարտները, հանրապետությունում սովորող արտասահմանցի ուսանողների թիվը արդեն հասել էր 140-ի, որի մեծ մասը սփյուռքահայ երիտասարդներ էին։ Նրանք եկել էին Բուլղարիայից, Լիբանանից, Սիրիայից, Իրաքից, Իրանից, Լատինական Ամերիկայից և այլ երկրներից։ Այդ շրջանում ՀՍՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության կոմիտեի (հետագայում՝ մինիստրություն) հետ միասին արտասահմանյան ուսանողների հետ սիստեմատիկ աշխատանք էր տանում ԱՕԿՍ-ը, նրանց համար կազմակերպելով դեկուցումներ, հանդիպումներ, սովետական երիտասարդության հետ հանդիպումներ, կինոդիտումներ, էքսկուրսիաներ և այլ միջոցառումներ[113]։*

*1961 թ., համաձայն ՍՍՀՄ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության մինիստրության որոշման, Երևանի պետական համալսարանին կից կազմակերպվում է արտասահմանյան քաղաքացիների համար նախապատրաստական ֆակուլտետ, որտեղ սփյուռքահայերից բացի ընդգրկվում են նաև այլ ազգությունների օտարերկրացի քաղաքացիներ։*

*Մինչև 1963 թ. հանրապետության բուհերում և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում սփյուռքահայ գաղթօջախների համար առանձնացվում էր տարեկան 20 տեղ։ 1963—1964 ուսումնական տարվանից սփյուռքահայերին հատկացվում էր տարեկան 70 տեղ, որից 50-ը՝ բուհերում, 20-ը՝ տեխնիկումներում։ 1968 թ. սկսած տեխնիկումներին հատկացված 20 տեղից 10-ը տրվում է սաժյորներին և ասպիրանտներին։ Մինչև 1965 թ. հանրապետության բուհերում սովորելու էին գալիս հայ երիտասարդներ հիմնականում Լիբանանի, Սիրիայի և Իրաքի հայկական գաղթօջախներից։ Վերջին տարիներին մեծ ձգտում է նկատվում նաև Հորդանանի, Եթովպիայի, Սուդանի, Ֆրանսիայի, Բուլղարիայի, Կիպրոսի, Ուրուգվայի, ԱՄՆ-ի և այլ երկրների հայկական գաղութներից։*

*1961—1972 թթ. ընթացքում հանրապետության բուհերն են*

---

[113] Տե՛ս նույն տեղում, ֆ. 709, ց. 3, գ. 140, թ. 1—3։

ընդունվել 618 սփյուռքահայ ուսանողներ, ստաժյորներ և ասպիրանտներ[114], իսկ տեխնիկումներն ու միջնակարգ մասնագիտական հաստատությունները՝ 50 մարդ[115]։

Մինչև 1970 թ. հանրապետության բուհերը տվել են 157, իսկ տեխնիկումները 23 սփյուռքահայ շրջանավարտներ, որոնք հաջողությամբ աշխատում են տարբեր երկրներում, լիովին արդարացնելով սովետական ուսումնական հաստատությունների անունը, բարձր պահելով նրանց պատիվն ու հեղինակությունը։ Դրանցից 62-ը եղել են Սիրիայից, 60-ը՝ Լիբանանից, 15-ը՝ Իրաքից, 7-ը՝ ԱՄՆ-ից, մնացածները ուրիշ երկրների հայկական գաղթօջախներից։ Ըստ մասնագիտությունների այդ 180 հոգուց 55-ը եղել են ինժեներներ, 41-ը՝ բժիշկներ, 11-ը՝ բուժակներ, 17-ը՝ երաժիշտներ, 28-ը՝ հայոց լեզվի և գրականության ուսուցիչներ ու ժուռնալիստներ, 18-ը՝ ռեժիսյորներ, դերասաններ, նկարիչներ, 8-ը՝ տեխնիկներ, 3-ը՝ պարուսույցներ[116]։

1958—80 թվականների ընթացքում Սովետական Հայաստանի բարձրագույն և միջնակարգ մասնագիտական հաստատությունները ավարտել են 846 սփյուռքահայեր։ Դրանք եղել են 30 երկրներից ժամանած սփյուռքահայ երիտասարդներ, այդ թվում Սիրիայից՝ 324, Լիբանանից՝ 227, Հորդանանից՝ 67, Իրաքից՝ 59, ԱՄՆ-ից՝ 29, Ֆրանսիայից՝ 14 մարդ և այլն։ Այդ 846-ից 228-ը եղել են ինժեներներ, 253-ը՝ բժիշկներ, 80-ը՝ արվեստի գործիչներ (երաժշտություն, թատրոն, կերպարվեստ և այլն), 59-ը՝ հայոց լեզվի և գրականության մասնագետներ[117]։ Ինչպես դժվար չէ նկատել, վերջին թիվը բավականին փոքր է։ Եթե հայրենիքին ու սփյուռքին հուզող ամենակարևոր խնդիրը հայապահպանությունն է և դրա ամենակարևոր գործոններից մեկը գաղթօջախներում հայկական դպրոցների պահպանումը, ապա գլխավոր մտահոգություններից մեկը պետք է լինի այդ դպրոցների համար որակյալ ուսուցիչների պատրաստումը։ Այստեղից հետևում է, որ պետք է առաջին հերթին ավելացնել հայրենիք ուսման ուղարկվող երիտասարդների թիվը հայոց լեզվի, գրականության ու պատմության գծով և ընդհանրապես մտածել

114 Տե՛ս նույն տեղում, ֆ. 875, ց. 4, գ. 60, թ. 44—48։

115 Տե՛ս նույն տեղում, ց. 2, գ. 43, թ. 27, և ց. 4, գ. 17, թ. 7։

116 Տե՛ս նույն տեղում, ց. 6, գ. 1, թ. 1—5։

117 Տե՛ս «Սովետական Հայաստան», ամսագիր, № 12, 1980 թ., էջ 22—23։



մանկավարժների պատրաստման հետագա կատարելագործման մասին։ Հայրենիքը այդ ուղղությամբ արդեն որոշակի քայլեր է կատարել, և 80-ական թվականների սկզբից հանրապետության բուհերն ու տեխնիկումները տարեկան ընդունում են մինչև 120 սփյուռքահայ երիտասարդներ, մեծ տեղ տալով մանկավարժական կադրերի պատրաստման գործին։ Եթե նկատի ունենանք, որ յուրաքանչյուր ուսանողի վրա տարեկան ծախսը կազմում է նվազագույնը 2500 ռուբլի, ապա միանգամայն պարզ կլինի, թե սովետական կառավարությունը ամեն տարի որքան շատ միջոցներ է տրամադրում սփյուռքահայ երիտասարդների կրթության համար։

Այսպիսով, սփյուռքի մտավորականության կազմը աստիճանաբար համալրվում է հայրենիքում կրթություն ստացած նոր որակի գործիչներով, որոնք կարևոր դեր են կատարում մատաղ սերնդի դաստիարակության, հայրենասիրական ոգին ամրապնդելու և սփյուռք—հայրենիք կապերը սերտացնելու գործում։ Հատկապես Մերձավոր արևելքի մի շարք երկրներում՝ Սիրիայում, Լիբանանում, Հորդանանում և այլուր, նրանք արդեն ոչ միայն քանակ են կազմում, այլև՝ որակ։ Նրանք եռանդով աշխատում են դպրոցներում, մշակութային կազմակերպություններում՝ սատարելով և՛ իրենց ապրած երկրի առաջընթացին, և՛ հայապահպանության վեհ գործին։

Նրանցից կարելի է հիշատակել, օրինակ, Հալեպում հմուտ մանկավարժի անուն վաստակած հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Ակնիվ Արաբյանի գործունեությունը։ Նա իր սաներին ոչ միայն հարուստ գիտելիքներ է հաղորդում մայրենի լեզվից ու գրականությունից, այլև ջերմ հայրենասիրություն ներարկում նրանց։

Հալեպում մեծ հեղինակություն և հարգանք է վայելում նաև Երևանի բժշկական ինստիտուտի շրջանավարտ Հարություն Մարտիրոսյանը, որն իր մասնագիտության մեջ ավելի խորացավ Մոսկվայում, պաշտպանելով նաև բժշկագիտության գծով դիսերտացիա։ Նա իր մասնագիտությունը հմտորեն կիրառելու հետ մեկտեղ, եռանդով մասնակցում է նաև հայ համայնքի մշակութային-հասարակական կյանքին[118]։

Երևանի բժշկական ինստիտուտի 1977 թ. շրջանավարտ

118 Տե՛ս «Հայրենիքի ձայն», 27 հոկտեմբերի, 1982 թ., № 44։

Հրաչ Լուսինյանը Սիրիայի հեռավոր գյուղերից մեկում բժիշկ աշխատելու հետ մեկտեղ դարձել է նաև հասարակական գործիչ և իրենց մայրենի լեզուն կորցրած հայրենակիցների շրջանում ազգանվեր գործ է կատարում։ Նա նամակով դիմել է Սփյուռքի կոմիտեին և նրանից խնդրել գրքեր, թերթեր և այլ նյութեր, հայապահպանության գործը հաջող առաջ տանելու համար[119]։

Սովետական Հայաստանի բուհերն ավարտած աչքի ընկնող մասնագետներ կան նաև ուրիշ երկրներում, ինչպես Կիպրոսի Մելքոնյան կրթական հաստատությունում, «Զարթոնք», «Խոսնակ», «Լրաբեր», «Ապրիլ» և այլ պարբերականների խմբագրություններում, երգի, պարի, թատերական խմբերի ղեկավարների շարքերում և այլուր։

Սփյուռքահայ երիտասարդ մասնագետներին հնարավորություն է տրված հայրենիքում 6—10 ամիս ժամանակաընթացքում կատարելագործվելու որպես ստաժյորների կամ սովորելու ասպիրանտուրայում և ստանալու գիտական աստիճաններ։ Անցած ժամանակամիջոցում մեզ մոտ թեկնածուական դիսերտացիաներ են պաշտպանել բժիշկ Ռոբեր Ճեպեճյանը (Հալեպ), Բեյրութի Հայկազյան կոլեջի հայագիտական ամբիոնի վարիչ Երվանդ Քասունին, լիբանանյան համալսարանի դասախոս Գրիգոր Գրիգորյանը, Կահիրեի «Արև» օրաթերթի խմբագիր Ավետիս Յափուճյանը, Բեյրութի «Կանչ» շաբաթաթերթի խմբագրական կազմի անդամ Մարտիրոս Գուշակճյանը և ուրիշներ[120]։

Հայրենի ուսումնական հաստատություններն ավարտած երիտասարդներն ու ստաժյորները իրենց հետ սփյուռք են տանում նոր ավյուն՝ հայապահպանության կենսական գործի համար, կանգնում են սփյուռքի կյանքը կազմակերպողների առաջին շարքերում։

* * *

Սփյուռքի կոմիտեն լայն կապեր է հաստատել նաև երիտասարդական, ուսանողական և մարզական կազմակերպությունների ու միությունների հետ, որոնք նույնպես հայրենա-

119 Տե՛ս «Սովետական Հայաստան», ամսագիր, 1978 թ., № 8, էջ 17։

120 Տե՛ս «Հայրենիքի ձայն», 27 հոկտեմբերի, 1982 թ., № 44։



սիրական մեծ աշխատանք են կատարում նոր սերնդի հայեցի դաստիարակության, նրան հայրենիքի հետ ծանոթացնելու գործում։ Եղած տվյալներով, սփյուռքում գործող երիտասարդական կազմակերպությունների թիվը անցնում է վեց տասնյակից, որոնց մեծ մասի հետ կոմիտեն գտնվում է սերտ կապերի մեջ։

Դրանց մեջ հատուկ ուշադրության են արժանի Ֆրանսահայ երիտասարդական միությունը (ԺԱՖ), Հալեպի «Նոր սերունդ» մշակութային երիտասարդական միությունը, Բեյրութի հայ երիտասարդական միությունը, Լոնդոնի հայ երիտասարդական միությունը, Ուրուգվայի հայ կենտրոնի «Երևան» երիտասարդական կազմակերպությունը, Ամերիկահայ առաջնորդարանի երիտասարդական կազմակերպությունների հանձնախումբը, Հռոմի, Ժնևի և ԳՖՀ-ի մի քանի քաղաքներում կազմակերպված հայ ուսանողական միությունները, Բուենոս Այրեսի «Հայ ձայն» և Կորդոբայի «Խուզա» երիտասարդական միությունները և այլն։

ՀԼԿԵՄ Կենտկոմի օրգան «Ավանգարդ» թերթի խմբագրությանը կից ստեղծվել է «Միածան» երիտասարդական ակումբը, որը նույնպես սերտ կապեր է հաստատել սփյուռքի երիտասարդական կազմակերպությունների, արվեստագետների, ուսանողների ու մարզիկների հետ։ «Միածան»-ի էջերում պարբերաբար տպագրվում են սփյուռքահայ երիտասարդ ստեղծագործողների գործերը, ընդհանրապես լուսաբանվում է սփյուռքի երիտասարդության կյանքը։

Սփյուռքի կոմիտեն երիտասարդական և մարզական կազմակերպություններին, թերթերից ու գրականությունից բացի, ուղարկում է նաև մարզական գույք, մարզահագուստ, գավաթներ՝ տեղերում մրցույթներ կազմակերպելու համար, հուշանվերներ, երաժշտական գործիքներ, լուսանկարային ցուցահանդեսներ, կինոֆիլմեր և այլն։

Սփյուռքում կան մի քանի մարզական կազմակերպություններ, որոնցից երկուսը ավելի մասսայական են։ Դրանք են՝ Հայ մարմնամարզական միությունը (ՀՄՄ) և հայ մարմնամարզական ընդհանուր միությունը (ՀՄԸՄ)։ Հայկական մարզական կազմակերպությունները ուժեղ են հատկապես Լիբանանում, Սիրիայում, Եգիպտոսում, Հորդանանում և Արգենտինայում։ 1938 թ. սկսած Բեյրութում երկու տարին մեկ տեղի են ունենում Նավասարդյան խաղեր՝ ՀՄՄ-ի ղեկավարությամբ։

Հայրենիք—սփյուռք առնչությունների սերտացման շնորհիվ ակտիվացել են նաև սպորտային կապերը: 1965 թ. «Նոր սերունդ» երիտասարդական կազմակերպությունների հրավերով Սիրիա և Լիբանան մեկնեց Հայաստանի բասկետբոլի տղամարդկանց թիմը, ԺԱՖ-ի հրավերով Ֆրանսիա է մեկնել Հայաստանի երիտասարդության ներկայացուցիչների պատվիրակությունը: Նույն թվականին Հայաստան են հրավիրվել 6 տարբեր մարզական կոլեկտիվներ՝ Սիրիայից տղամարդկանց և կանանց վոլեյբոլի թիմերը, Լիբանանից՝ տղամարդկանց վոլեյբոլի թիմը, Լիբանանից և Սիրիայից՝ ֆուտբոլային թիմեր և այլն[121]:

1970 թ. սփյուռքահայ երիտասարդական մի շարք կազմակերպությունների խնդրանքով Երևանում կազմակերպվեցին հայոց լեզվի ուսուցման երկշաբաթյա դասընթացներ, որոնց մասնակցեցին 25 երիտասարդներ: 1971 թ. նման դասընթացներին մասնակցելու ցանկություն հայտնեցին ավելի քան 100 հոգի[122]:

1970 թ. ամռանը Հայաստան եկած սփյուռքահայ դպրոցականներին և ԱՄՆ-ից ժամանած երիտասարդական երկու խմբի անդամներին նույնպես հայոց լեզու, հայկական երգեր ու պարեր են սովորեցրել Հայրենի մանկավարժները՝ Սփյուռքի կոմիտեի գլխավորությամբ: Այդ նպատակով, մի քանի պիոներական ճամբարներում, ուր կային սփյուռքահայ երեխաներ, նույնպես առանձնացվել են հատուկ ուսուցիչներ[123]:

Հայրենիքի և սփյուռքի երիտասարդական կազմակերպությունների գործարար համագործակցության ուղղությամբ կարևոր քայլ հանդիսացավ Հայաստանի երիտասարդական կազմակերպությունների կոմիտեի նախաձեռնությամբ 1971 թ. հունվարին Երևանում տեղի ունեցած սփյուռքահայ մի շարք առաջադիմական երիտասարդական միությունների ներկայացուցիչների հավաք-հանդիպումը[124]:

Սովետական Հայաստանի և սփյուռքի միջև մշակութային կապերի ու հարաբերությունների օրեցօր ընդլայնման շնորհիվ սփյուռքահայ երիտասարդական շարժումը նույնպես թևակոխեց վերելքի ու զարգացման նոր ժամանակաշրջան: Հայրենիքի ան-

[121] Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՄՇ ՊԿԱ, ֆ. 875, ց. 4, գ. 5, թ. 1—13:
[122] Տե՛ս նույն տեղում, գ. 51, թ. 32:
[123] Տե՛ս նույն տեղում, գ. 20, թ. 69—74:
[124] Տե՛ս «Սովետական Հայաստան», ամսագիր, № 4, 1971 թ., էջ 22—23:



միջական առկայությունը սփյուռքում ուծացման վտանգին ենթարկված աճող սերնդի մեջ հետզհետե արթնացրեց ազգային գիտակցությունը, խթանեց նրա զարգացմանը: Այդ գիտակցությունը երիտասարդ սերնդի մեջ առաջ բերեց գաղթօջախներում կազմակերպվելու և կազմակերպված գործելու ձգտում, նոր արյուն ներարկեց երիտասարդական շարժմանը, պայմաններ ստեղծեց ոչ միայն գոյություն ունեցող երիտասարդական միությունների գործունեության աշխուժացման, այլև նորերի ստեղծման համար: Հատկապես 60—70-ական թվականները հանդիսացան սփյուռքահայ երիտասարդական շարժման աճման ու զարգացման նոր ժամանակաշրջան: Հենց այդ պրոցեսի կարևոր փուլերից մեկը եղավ սփյուռքահայ մի շարք առաջադիմական երիտասարդական միությունների ներկայացուցիչների Երևանում հրավիրված հավաքը:

Այդ հավաքին մասնակցում էին Լիբանանի «Հայ երիտասարդաց ընկերության», «Սարգիս Տխրունի», «Նոր սերունդ», «Էրեբունի», «Լիբանանահայ գրական շրջանակ», հայ մարմնամարզական «Արարատ» միությունների, Սիրիայի «Նոր սերունդ», Հալեպի ազգային մշակութային միության, Լոնդոնի հայ երիտասարդաց միության, Ֆրանսահայ երիտմիության (ԺԱՖ), ՀԲԸՄ-ի ֆրանսահայ երիտասարդական մասնաճյուղի, Ալեքսանդրիայի «Տիգրան Երկաթ», Ամմանի ազգային-մարզական միությունների և Ամերիկահայ առաջադեմ երիտասարդության ներկայացուցիչները: 7 երկրից ժամանել էին 20 սփյուռքահայ երիտասարդներ:

12 օր անցկացնելով հայրենի երկրում, սփյուռքահայ երիտասարդության պատվիրակները ծանոթացան հայրենիքի նվաճումներին, այցելեցին մի շարք արդյունաբերական ձեռնարկություններ, կոլեկտիվ տնտեսություններ, մշակույթի և արվեստի օջախներ, ճամփորդեցին հանրապետության պատմական ու տեսարժան վայրերում, հանդիպումներ ունեցան գիտության, գրականության ու արվեստի գործիչների հետ, ծանոթացան սովետական երիտասարդական կազմակերպությունների գործունեությանը:

Ինչպես հանդիսավոր հավաքում, այնպես էլ մամուլում պատվիրակները հանդես եկան հայրենիքից ստացած տպավորություններով, պատմեցին իրենց միությունների գործունեության, աճող սերունդը ուծացման վտանգից փրկելու ուղղու-

թյամբ գործադրվող ջանքերի, հայրենի երկրի և նրա երիտասարդական կազմակերպությունների հետ կապերը սերտացնելու ուղղությամբ կատարվող աշխատանքների մասին։

Վերջապես, հավաքի մասնակիցները՝ սփյուռքում միմյանցից մեկուսացված, անչափ գործող երիտասարդական տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչները, առաջին անգամ հավաքվելով «կլոր սեղանի շուրջ», գործարար մթնոլորտում քննարկեցին հայապահպանության ուղղությամբ երիտմիությունների գործունեության հետագա ծավալման, հայրենիքի երիտասարդական միությունների հետ կապերի ամրապնդման ու համագործակցության հարցերը։ Հավաքն ընդունեց սփյուռքահայ երիտասարդությանը և նրա միություններին ուղղված հատուկ կոչ։

Հավաքում դրսևորվեց երիտմիությունների ներկայացուցիչների բարձր գիտակցականությունն ու պատասխանատվությունը տարագիր հայության երիտասարդ սերնդի ճակատագրի նկատմամբ։ Միահամուռ էր երիտմիությունների ներկայացուցիչների ցանկությունն ու պատրաստակամությունը՝ ավելի սերտացնելու կապերը Սովետական Հայաստանի երիտասարդության հետ, և, որ ամենակարևորն է՝ գաղթօջախներում աշխատել համագործակցված, միասնաբար։

Սփյուռքահայ երիտասարդությանն ուղղված կոչի մեջ ասված էր, որ «ուծացման, այլասերումի վտանգին առջև, զոր կրզգանք ամեն օր և ամեն ժամ, անհրաժեշտ է, որ մենք միացնենք մեր ջանքերը, առեղծենք միակամորեն ու միասնականությամբ գործելու հնարավորություններ։

Ուրեմն, միացնենք մեր ջանքերը, գետ գարձնենք բաժանբաժան վտակները, բանավոր հայրենասիրությունը զուգակցենք գործնական հայրենասիրության հետ՝ մեր դպրոցներուն, մշակութային միություններուն, մարզական ակումբներուն և երիտասարդական ուսանողական կազմակերպություններուն մեջ»[125]։

Հավաքը դրսևորեց նրան մասնակցող սփյուռքահայ երիտասարդական կազմակերպությունների, նրանց ղեկավարների ազգային բարձր գիտակցականությունը, առողջ, ջերմ հայրենասիրական ոգին, տարագիր հայության ճակատագրի նկատմամբ պարտքի և պատասխանատվության բարձր զգացումը։ Երիտ-

[125] Տե՛ս նույն տեղում, № 5, 1971 թ., էջ 4։



միությունների ղեկավարների ելույթները ցույց տվեցին, որ նրանք խորապես գիտակցում են այն իրողությունը, որ իրենք կոչված են վաղն իրենց ուսերի վրա կրելու այն ծանր բեռը, որ տասնամյակներ շարունակ պատվով տարել են հին սերնդի ներկայացուցիչները։ Սփյուռքահայ առաջադեմ երիտասարդական կազմակերպությունների ներկայացուցիչները հայտարարեցին, որ միայն հայրենիքի՝ Սովետական Հայաստանի վրա հենվելու, դեպի հայրենիքը հավատ, սեր, նվիրվածություն, ազգային հպարտության զգացում դաստիարակելու ճանապարհով կարելի է կանխել ձուլման վտանգը։

Այսպիսով, այդ հավաքով առաջին և լուրջ քայլն արվեց սփյուռքահայ երիտասարդական կազմակերպությունների ջանքերի միավորման, համագործակցված ու միասնաբար գործելու ճանապարհին։ Հանդիպման մասնակիցները, լիցքավորված հայրենի իրականությամբ, մեկնեցին իրենց բնակության երկրները՝ ավելի մեծ թափով հայապահպանման գործը առաջ մղելու **վճռականությամբ ու վստահությամբ**[126]։

Սփյուռքահայ ազգային կյանքի վերջին տասնամյակի ամենակարևոր երևույթներից մեկը ձուլման վտանգին ենթարկված երիտասարդ սերնդի ազգային զարթոնքն է, կազմակերպվելու նրա ձգտումը, որը ամենից առաջ հայրենիք—սփյուռք կապերի զարգացման արդյունքն է։ Ծնունդ առած երիտասարդական նոր միությունները, խմբակցությունները, պարբերականները, գեղարվեստական խմբերը, մտահոգված լինելով հայ տարագրության ճակատագրով, լրջորեն որոնում են իրենց հուզող հարցերի լուծման նոր ուղիներ, նոր գործելակերպ, պայքարի ու աշխատանքի նոր ձևեր ու մեթոդներ։ Երիտմիությունների մեծ մասը ճիշտ է կողմնորոշվում՝ սփյուռքահայության ճակատագիրը կապելով վերածնված հայրենիքի հետ։ Նրանք ձգտում են սերտացնել կապերը նրա հետ, երիտասարդությանը համախմբել Սովետական Հայաստանի շուրջը, նոր սերնդի մեջ դաստիարակել իր հայրենիքի նկատմամբ ազգային հպարտության զգացում, նրան հայ պահել հայրենիքի համար։ Սփյուռքահայ երիտմիությունների ներկայացուցիչների երևանյան հավաքը այդ ճանապարհին կատարված լուրջ քայլերից մեկն է։

Բոլորի համար այժմ հանրահայտ է դարձել, որ սփյուռ-

[126] Տե՛ս նույն տեղում, № 4, 1971 թ., էջ 22—23։

քահայության կյանքում զգալիորեն աճել է հայրենիքի դերը ձուլման վտանգի դեմ մղվող պայքարում հաջողություն ապահովելու իմաստով։ Այդ ճշմարտությունը խորապես գիտակցում են սփյուռքահայ աշխատավորները, առաջավոր մտավորականությունը, բոլոր հայրենասիրական կազմակերպություններն ու միությունները։

Բնութագրելով հայրենիքի դերը ուծացման վտանգից տարագիր հայության փրկության գործում, Բեյրութի «Նոր սերունդ», «Թեքեյան» մշակութային միությունների և «Գրական շրջանակ» ընկերակցության Սովետական Հայաստանի 50-ամյակն անցկացնող միացյալ հոբելյանական հանձնախումբը գրել է. «Նոյեմբերի 29-ը իրավամբ ամենապայծառ թվականն է Հայոց պատմության նորագույն հանգրվանին, տոնն ու խորհրդանիշը հայ ժողովուրդի փրկության ու վերածնունդին։ ...Խորհրդային Հայաստանը մայր հայրենիքն է ամենայն հայոց, միակ խարիսխն ու ապավենը աշխարհի չորս ծագերում ցրված հայ բազմությունների։ Սփյուռքի մեջ հայապահպանման սրբազան գործին հաջողությունը պայմանավորված է առաջին հերթին մայր հայրենիքի հետ հարաբերությունները առավել սերտացմամբ, որովհետև առավելաբար հայրենի հեռանկարն է, որ կիմաստավորե հայապահպանման ճիգը ու ավյուն կընծայե բարձրացող սերունդներուն»[127]։

Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի կարևոր նախաձեռնություններից մեկը եղավ 1980 թ. նոյեմբերի 24—27-ը Երևանում սփյուռքահայ համայնքների ներկայացուցիչների առաջին անգամ և մայր հայրենիքում անցկացված ժողովը, որին մասնակցում էին տարբեր մայրցամաքների գրեթե բոլոր հայկական գաղթօջախների պատվիրակներ, ինչպես նաև Սովետական Հայաստանի հասարակայնության ներկայացուցիչներ, գիտության ու մշակույթի գործիչներ[128]։

Ժողովը, որն անցավ «Վերածնված հայրենիքը և սփյուռքը. պայքար հանուն խաղաղության և առաջադիմության» նշանաբանով, քննարկեց հայրենիքի շուրջը սփյուռքահայությանը սերտորեն համախմբելու, Սովետական Հայաստանի հաջողություն-

[127] Նույն տեղում, № 10, 1973 թ., էջ 3։
[128] Տե՛ս նույն տեղում, № 12, 1980 թ., էջ 7։



ները յուրաքանչյուր սփյուռքահայի հասցնելու կարևորագույն հարցերը[129]։

Ժողովը ներածական հակիրճ ճառով բացեց նրա նախապատրաստության կազմակերպական կոմիտեի նախագահ, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, սոցիալիստական աշխատանքի կրկնակի հերոս Վ. Հ. Համբարձումյանը։ Նա սրտանց ողջունեց աշխարհի բազում երկրներից ժամանած հյուրերին և հրապարակեց Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության ուղերձը՝ սփյուռքահայության ներկայացուցիչների ժողովին։

«Վերածնված հայրենիքը և սփյուռքը, պայքար հանուն խաղաղության և առաջադիմության» խորագիրը կրող ընդարձակ զեկուցումով հանդես եկավ Սփյուռքի կոմիտեի նախագահ Վ. Ն. Համազասպյանը։

Ժողովում ելույթ ունեցան Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ն, Արտասահմանի հետ կուլտուրական կապերի սովետական «Ռոդինա» ընկերության նախագահության անդամ, «Գոլոս Ռոդինի» թերթի և «Ռոդինա» ամսագրի գլխավոր խմբագիր Օլեգ Կուպրինը (Մոսկվա), Հայաստանի գրողների միության վարչության առաջին քարտուղար Վարդգես Պետրոսյանը, ՀՍՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության մինիստր Լյուդվիգ Ղարիբջանյանը, Երևանի «Նաիրիտ» գիտաարտադրական միավորման բանվոր, ՀՍՍՀ Գերագույն սովետի դեպուտատ Վաչիկ Ազիզյանը, ՀՍՍՀ ժողովրդական նկարիչ, ՍՍՀՄ Գեղարվեստի ակադեմիայի ակադեմիկոս Գրիգոր Խանջյանը, ՀՍՍՀ լուսավորության մինիստր Սեմյոն Հախումյանը, ժողովրդական դեպուտատների Հրազդանի քաղսովետի գործկոմի նախագահ, հայրենադարձ Տիգրան Պետիկյանը, Էջմիածնի շրջանի Արշալույս գյուղի կոլտնտեսուհի, ՀՍՍՀ Գերագույն սովետի դեպուտատ Բավական Մնացականյանը և սփյուռքահայ տարբեր համայնքների երեք տասնյակ ներկայացուցիչներ։

Ժողովի մասնակիցներին ուղղված ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության ողջույնում ասված էր, որ տվյալ հավաքը իր մեջ մեծ խորհուրդ ունի, քանի որ առաջինն է հայրենիքի ու սփյուռքի պատմության մեջ։ Այն մեծախորհուրդ է նաև նրանով, որ հստակորեն մարմնավորում և արտացոլում է սովետական

[129] Տե՛ս նույն տեղում։

իշխանության տարիներին հայրենիքի ձեռք բերած վիթխարի նվաճումները, որոնց շնորհիվ նա կարողացավ զորավիգ լինել բախտի դաժան ճակատագրի հետևանքով աշխարհով մեկ սփռված իր տարագիր զավակներին։ Այդ ժողովը միաժամանակ եղավ արտահայտիչը այն նվիրական զգացմունքների, որ սփյուռքահայությունը տածում է վերածնված հայրենիքի նկատմամբ, նրա մեջ տեսնելով իր գոյության առհավատչյան։

Այդ ժողովի մեծ խորհուրդն էր նաև այն, որ գործնականում հաստատեց մեր ժողովրդի տարբեր հատվածների միասնության պահպանման անհրաժեշտությունն ու հնարավորությունը, օրեցօր ընդլայնվող հայրենիք—սփյուռք կապերի ամրապնդման բարերար նշանակությունը այդ գործում։ Սփյուռքահայության ներկայացուցիչները կրկին անգամ հավաստեցին, որ համայն հայության հայրենիքը Սովետական Հայաստանն է, ուր անցյալի նվիրական ավանդներով նորոգվում ու իմաստավորվում է նրա ներկան ու գալիքը։

Սփյուռքահայության ներկայացուցիչների ժողովում ելույթ ունեցողները առաջ քաշեցին հայրենիք—սփյուռք փոխհարաբերությունների ավելի սերտացման, հայապահպանության համար մղվող պայքարի հետագա ուժեղացման և այլ հարցերի վերաբերյալ կոնկրետ ու գործնական առաջարկություններ, որոնց իրականացումը, անշուշտ, կնպաստի այդ աշխատանքների ավելի բարեհաջող ընթացքին։

Այնուհետև ժողովը հատուկ ուղերձներով դիմեց ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությանը, Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահությանը և համայն սփյուռքահայությանը։

ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահությանը հղած ուղերձում ժողովի մասնակիցները սրտանց շնորհակալություն էին հայտնում հայրենի պետությանը, որը հնարավորություն ընձեռեց «...մեր ժողովրդի պատմության մեջ առաջին անգամ ըլլալով այսպիսի համատեղ ժողով մը գումարելու, ուր քննարկեցինք հայրենիքի և սփյուռքի մշակութային կապերու ընդլայնման ու ամրապնդման, ինչպես և խաղաղության ու առաջադիմության հետ առնչված հարցերը»[130]։

Այնուհետև ասված էր, որ «ուրախությամբ կհայտնենք Ձե-

[130] Նույն տեղում, էջ 17։



զի, որ ժողովի մեջ քննարկված հարցերու շուրջ մեր ըմբռնումներն ու կարծիքները եղան համերաշխ։

Այսօր սփյուռքահայության համար անխախտ համոզում է դարձեր այն գիտակցությունը, թե համայն հայության հայրենիքը Սովետական Հայաստանն է։ Սփյուռքահայը իր կյանքի փորձով հասել է այն մտքին, թե հայ մարդը ուրիշ ոչ մեկ երկրի տակ չի կրնար ունենալ ազգային այն պահպանությունը, զոր ան գտած է մայր հայրենիքի մեջ։ Սփյուռքահայ հոծ զանգվածներու հոգեբանության ու գիտակցության մեջ կատարված արմատական այս հեղաշրջումը անհրաժեշտ է, որ արձանագրվի մեր վերածնված հայրենիքի հաջողություններու ոսկի մատյանին մեջ։

...Մենք կհավատանք, թե հայ ժողովրդի բոլոր երազները կիրականանան շնորհիվ սովետական հզոր երկրի խաղաղասիրական քաղաքականության, կհավատանք, թե մեր վերածնված հայրենիքը, ինչպես 60 տարի շարունակ, այսուհետև ևս կապրի առանց անկումներու սարսափին։

Մենք կվերադառնանք մեր բնակավայր երկրները՝ նոր ոգևորությամբ ծառայելու հայապահպանման, սփյուռք—Հայաստան կապերու ամրապնդման և խաղաղության սրբազան գործին՝ մեր հայացքները միշտ հառած մայր հայրենիքին»[131]։

Սփյուռքահայությանն ուղղված ուղերձում ժողովի մասնակիցները, իրենց գոհունակությունը հայտնելով հայրենիքում հավաքվելու առթիվ, գրում էին. «...Ձեզ ենք դիմում մենք, սիրելի հայրենակիցներ, ձեզ, որ սփռված եք աշխարհով մեկ, Մերձավոր արևելքից մինչև Եվրոպա և Եվրոպայից մինչև Ամերիկա ու Ավստրալիա, ուր էլ լինեք, պատվար ու սատար եղեք աշխարհի խաղաղությանը, որ ժողովուրդների համերաշխ ընտանիքում ապրի Հայաստանը, հայը կերտի ու կառուցի, բազմապատկի իր մշակութային արժեքները և հավերժ հնչի հայոց լեզուն»[132]։

Տասնամյակներ առաջ, եղեռնից հետո, սփյուռքի մեծ բանաստեղծ Վահան Թեքեյանը գրում էր, թե՝

[131] Նույն տեղում։
[132] Նույն տեղում, էջ 34։

«Կարենալու համար ապրել այսուհետև
Օդի, ջրի, հացի նման
Մենք պետք ունինք հպարտության»։

Ժողովի մասնակիցները գոհունակությամբ արձանագրեցին, որ «մենք այժմ ունենք այդ հպարտությունը՝ մեր վերածնված հայրենիքն է դա, Սովետական Հայաստանը, որ իր աշխարհաշեն գործերով, իր մեծ մշակույթով աշխարհի քաղաքակրթության մասնակիցն է այսօր։

Փարվենք նրան, ամուր պահենք հայրենիքի և սփյուռքի միջև ստեղծված կամուրջը, բոլոր միջոցներով նպաստենք հայրենիքի բարօրությանն ու խաղաղությանը, որովհետև դրանով է, որ պիտի գոյատևի սփյուռքահայությունը և դրանով է, որ պիտի իրականանան մեր ամենանվիրական երազանքները»[133]։

Եվ իրոք, սփյուռքահայությունը անկեղծ սիրով ու մեծ հույսերով փարվել է հայրենիքին՝ Սովետական Հայաստանին, անխզելի կապերով մերվել նրա հետ և դրանում է սփյուռքահայության ապագայի հաջողության երաշխիքը։

Ժողովի մասնակիցները այցելեցին Սարդարապատի հուշահամալիր, Եղեռնի զոհերի հուշարձան, տեսարժան այլ վայրեր, ինչպես նաև ծաղկեպսակ դրին Երևանում Վ. Ի. Լենինի հուշարձանին՝ որպես անկեղծ սիրո ու երախտագիտության նշան։

Այնուհետև ՀԿԿ Կենտկոմը և ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը ընդունելություն կազմակերպեցին ի պատիվ սփյուռքահայ համայնքների ներկայացուցիչների, ուր նրանց ողջունեցին ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Կ. Ս. Դեմիրճյանը և Մինիստրների խորհրդի նախագահ Ֆ. Տ. Սարգսյանը։ Հանդիպման ժամանակ ելույթ ունեցան սփյուռքահայության ներկայացուցիչները, շնորհակալություն հայտնելով սփյուռքի նկատմամբ հայրենական հոգատարության առթիվ։ Վերջում Կ. Ս. Դեմիրճյանը պատասխանեց հանդիպման մասնակիցներին հետաքրքրող բազմաթիվ հարցերի և նրանց մաղթեց նորանոր հաջողություններ իրենց հայրենասիրական գործունեության մեջ[134]։

Նոյեմբերի 25-ին սփյուռքահայության ներկայացուցիչների ժողովի մասնակիցները ներկա եղան Երևանում՝ Մռավյան և

[133] Նույն տեղում։

[134] Տե՛ս նույն տեղում, էջ 20—21։



Կնունյանց փողոցների հատման անկյունում, մայրաքաղաքի Գլխավոր պողոտայի վրա, Վարդան Մամիկոնյանի արձանի մոտ, Բարեկամության տան հիմնադրման արարողությանը[135]։ Սովետական Հայաստանի կառավարության որոշմամբ կառուցվելիք Բարեկամության տունը, որը լինելու է հայրենիք այցելող սփյուռքահայերի հանգրվանը, իրենով կխորհրդանշի հայրենիք—սփյուռք օրավուր ամրապնդվող միասնությունը։

Այդ իմաստով խիստ ուշագրավ երևույթ է նաև իրենց հայրենասիրական գործունեությամբ աչքի ընկած սփյուռքահայ հասարակական, մշակութային գործիչների ու գիտնականների համար Սովետական Հայաստանի պետական, մշակութային և գիտական մի շարք կազմակերպությունների կողմից ամենամյա մրցանակների սահմանումը։ ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահությունը հիմնեց «Խաղաղության և մայր հայրենիքի հետ կապերի ամրապնդման օգտին ակտիվ գործունեության համար» մրցանակ, որը շնորհվում է սփյուռքահայ նշանավոր հասարակական-քաղաքական, կրոնական գործիչներին, գործարար շրջանների ներկայացուցիչներին, նրանց, ովքեր իրենց ջանքերը ի սպաս են դնում խաղաղության, ժողովուրդների բարեկամության ու հայապահպանության վեհ գործին։

Այնուհետև, ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության համաձայնությամբ, լուսավորության ու կուլտուրայի մինիստրությունները, գիտությունների ակադեմիան, գրողների, ժուռնալիստների, նկարիչների և կոմպոզիտորների միությունները՝ ամենամյա մրցանակներ սահմանեցին գիտության ու մշակույթի սփյուռքահայ առաջադեմ գործիչներին շնորհելու համար։ Հիմնվեցին վեց անվանական մրցանակներ, որոնք ամեն տարի, Հայաստանում սովետական իշխանության հաղթանակի տարելիցի նախօրյակին, շնորհվում են սփյուռքահայ աչքի ընկած մտավորականներին։ Դրանք են՝ Մեսրոպ Մաշտոցի անվան մրցանակ, որը շնորհվում է սփյուռքահայ մանուկներին մայրենի լեզու ավանդող բազմավաստակ ուսուցիչներին, Խաչատուր Աբովյանի անվան մրցանակ, որին արժանանում են գրականության և հրապարակախոսության բնագավառում աչքի ընկած երկերի հեղինակները։ ՀՍՍՀ ԳԱ նախագահության սահմանած Անանիա Շիրակացու անվան մրցանակը տրվում է գի-

[135] Տե՛ս նույն տեղում, էջ 44։

տական, մասնավորապես՝ հայագիտական, արժեքավոր աշխատությունների համար։ Կերպարվեստի բնագավառում աչքի ընկած գործերը արժանանում են Մարտիրոս Սարյանի անունը կրող մրցանակին, երաժշտական լավագույն ստեղծագործությունների հեղինակներին հանձնվում է Կոմիտասի անվան մրցանակ, և կատարողական արվեստի բնագավառում մեծ վաստակ ունեցողներին շնորհվում է Պետրոս Ադամյանի անվան մրցանակ[136]։

Ահա առաջին մրցանակակիրները.

ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության 1981 թ. նոյեմբերի 28-ի հրամանագրով «Խաղաղության և մայր հայրենիքի հետ կապերի ամրապնդման օգտին ակտիվ գործունեության համար» առաջին մրցանակակիրը դարձավ մեր ժամանակի ականավոր գրող, հասարակական գործիչ Վիլյամ Սարոյանը (հետմահու)։ Սահմանված մյուս մրցանակները շնորհվեցին. Հայաստանի գրողների և ժուռնալիստների միությունների Խ. Աբովյանի անվան մրցանակը շնորհվեց գրող, հասարակական գործիչ Գառնիկ Ադդարյանին (Լիբանան), գրականության և հրապարակախոսության բնագավառում ունեցած վաստակի համար։ ՀՍՍՀ Լուսավորության մինիստրության Մ. Մաշտոցի անունը կրող մրցանակին արժանացավ վաստակաշատ մանկավարժ, գրող, հասարակական գործիչ Վահե Վահյանը (Լիբանան)՝ լուսավորության և մանկավարժության բնագավառում ունեցած ծառայությունների համար։ ՀՍՍՀ ԳԱ Անանիա Շիրակացու անվան մրցանակը տրվեց ՀՍՍՀ ԳԱ օտարերկրյա անդամ, պատմաբան Սիրարփի Տեր-Ներսեսյանին (Ֆրանսիա)՝ գիտական ակնառու աշխատությունների համար։ Հայաստանի կոմպոզիտորների միության Կոմիտասի անվան մրցանակը ստացավ կոմպոզիտոր Համբարձում Պերպերյանը (ԱՄՆ)՝ երաժշտության բնագավառում ունեցած մեծ վաստակի համար։ Հայաստանի նկարիչների միության Մ. Սարյանի անվան մրցանակը շնորհվեց Ֆրանսիայի գեղարվեստի ակադեմիայի անդամ, նկարիչ Գառզուին (Գառնիկ Զուլումյան)՝ կերպարվեստի բնագավառում ունեցած վաստակի համար։ ՀՍՍՀ կուլտուրայի մինիստրության Պետրոս Ադամյանի անվան մրցանակը տրվեց Նյու Յորքի «Մետրոպոլիտեն-օպերայի» մեներգչուհի Լիլի Չուգասզյանին՝

---

[136] Տե՛ս նույն տեղում, էջ 17։



կատարողական արվեստի բնագավառում ունեցած վաստակի համար[137]։

Իհարկե, դա առաջին դեպքը չէ, որ հայրենիքը ուշադրության ու գնահատանքի է արժանացնում սփյուռքահայ առաջադիմական գործիչներին։ Նրանց լավագույն ներկայացուցիչներից մի քանիսը ընտրվել են Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի օտարերկրյա անդամներ (Զատիկ Խանզադյան, Մանասե Սևակ, Սիրարփի Տեր-Ներսեսյան, Արշիլ Հրաչ Փափազ), պարգևատրվել են ՍՍՀՄ շքանշաններով (Հարություն Մագեյան, Ավետիս Ալիքսանյան և ուրիշներ) և այլն։ Սփյուռքահայ մշակույթի, արվեստի, գիտության ու հասարակական գործիչներին հայրենական մրցանակների և կառավարական պարգևների արժանացնելը իր հերթին խրախուսում ու ոգևորում է հայրենիք—սփյուռք կապերի զարգացմանը զինվորագրված մարդկանց։

Վերջին տարիներին հայրենիք—սփյուռք առնչությունների սերտացման գործում ձեռք բերված հաջողություններից մեկն էլ այն է, որ կապերը ծավալվել են ոչ միայն լայնքով, այլև խորությամբ։ Սփյուռքի կոմիտեն իր կարևոր խնդիրներից մեկն է համարել հնարավոր բոլոր միջոցներով, ամեն մի երկրի առանձնահատուկ պայմաններն ու քաղաքական կացությունը հաշվի առնելով, ներգործել հայ զանգվածների վրա, կտրել նրանց հակասովետիզմի թույնով ներարկված ուժերի ազդեցությունից։ Արտասահմանում տարվող աշխատանքի հաջողությունը զգալի չափով պայմանավորված է նրա շերտավորված իրականացումով։ Ամեն երկիր ու գաղթօջախ իր առանձնահատկությունն ունի, պետք է խստորեն դա հաշվի առնվի, այլապես անխուսափելի կլինի ձախողումը։ Օրինակ՝ Ավստրալիայի ու Կանադայի հայկական գաղութներում տարվող աշխատանքը պետք է այլ բնույթ ունենա, քանի որ դրանք հիմնականում նոր կազմակերպված գաղութներ են։ Ֆրանսիայի և Լիբանանի գաղութների հետ տարվող աշխատանքը միանգամայն այլ է, նկատի ունենալով դրանց երկար տարիների կուտակած փորձը, միջպետական նպաստավոր փոխհարաբերությունները և այլ հանգամանքներ։ Մինչդեռ, ասենք, Թուրքիայի և Իրանի հայկական գաղութների գծով աշխատանքը այլ բնույթ ունի։ Այդ երկրներում տիրող քաղաքական ռեժիմների պատճառով Սփյուռքի կո-

---

[137] Տե՛ս «Հայրենիքի ձայն», 2 դեկտեմբերի, 1981 թ., № 49։

միտանի կապերը այնքան էլ ակտիվ չեն, կան բացասական կարգի նաև այլ գործոններ։

Չնայած Լատինական Ամերիկայի երկրների հայկական գաղութների հետ ունեցած ակտիվ կապերին, Սփյուռքի կոմիտեն հարկադրված է հաճախակի վերանայել նրանցում իրականացվող իր աշխատանքի ձևերն ու մեթոդները՝ հաշվի առնելով արագորեն փոփոխվող քաղաքական կացությունը։

Եվ, վերջապես, ԱՄՆ-ի հայկական գաղութի հետ տարվող աշխատանքներն այլ բնույթ ունեն, տարբերվում են մնացածներից։ Դրա պատճառը ոչ միայն այն է, որ նա աշխարհի ամենահայաշատ գաղութն է՝ ավելի քան կես միլիոն հայությամբ, այլև այն, որ գտնվում է միջազգային իմպերիալիզմի միջնաբերդում և, չնայած դրան, ունի հայրենասիրական գործունեության լավ ավանդույթներ։ Միևնույն ժամանակ, վերջին տասնամյակներում այն թևակոխել է ազգային կյանքի նկատելի զարթոնքի շրջան, շնորհիվ մերձավորարևելյան երկրների հայկական գաղթօջախներից այնտեղ արտագաղթած մտավորականության ջանքերի։

Ամերիկահայ գաղթօջախը հաճախակի հանդես է գալիս սփյուռքահայ կյանքի կազմակերպմանն առնչվող բազմաթիվ նախաձեռնություններով։ ԱՄՆ-ի հայ ազգաբնակչության մեջ մեծ տոկոս են կազմում բարձր աստիճանի հասած մտավորականները, որոնք վերջին տարիներին սկսել են ակտիվություն ցուցաբերել ազգային կյանքի նկատմամբ։ Այնտեղ է գործում սփյուռքի հայրենակցական միությունների մեծ մասը, ինչպես նաև ՀԲԸՄ կենտրոնական վարչությունը, իսկ վերջինս սփյուռքահայ ամենաբազմամարդ կազմակերպությունն է, և նրա անդամների զգալի մասը նույնպես գտնվում է ԱՄՆ-ում։

Հայկական գաղութների հետ Սփյուռքի կոմիտեի ունեցած կապերի ընդլայնման ու խորացման շնորհիվ այնտեղ տարվող մշակութային, պրոպագանդիստական ու հայրենասիրական աշխատանքների ոլորտի մեջ հետզհետե ավելի մեծ թվով հայ ազգաբնակչություն է ներգրավվում։ Կապերի արդյունավետության մասին է վկայում նաև այն փաստը, որ տարեցտարի սփյուռքահայության նորանոր հատվածներ ու խավեր են դուրս գալիս հակասովետական ուժերի ազդեցությունից և կանգնում Սովետական Հայաստանի կողքին։ Ուստի բնավ պատահական չէ, որ վերջին տարիներին դաշնակցական մամուլը ուժեղացրել է



հարձակումները Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի դեմ։ Ավելի հեռուն գնալով, այդ մամուլը փաստորեն հանդես է գալիս հայրենիք—սփյուռք մշակութային ու այլ կարգի կապերի դեմ, կապեր, որոնք խիստ կենսական նշանակություն են ստացել արտերկրի հայության համար, և առանց որոնց սփյուռքահայ մշակութային կյանքը կազքատանա ու կզրկվի կենսատու ակունքներից։ Սակայն պրակտիկան ցույց է տալիս, որ որքան սերտանում են հայրենիք—սփյուռք հարաբերությունները, որքան ընդլայնվում է տարագիր հայերի իմացությունը հայրենի իրականության մասին, այնքան ավելի պարզ ու որոշակի է դառնում հայության ազգային շահերի և դաշնակցության քաղաքականության միջև եղած խոր հակասությունն ու հակադրությունը։

Այժմ արդեն դժվար թե սփյուռքում գտնվի որևէ ողջամիտ մարդ, որը փորձի ժխտել այն ճշմարտությունը, թե հայկական գաղթօջախների գոյատևման և «սպիտակ ջարդի» դեմ մղվող պայքարի հաջողության գլխավոր գործոնը հայրենիքն է, աճող սերունդը հայրենիքով խանդավառելը։ Կյանքը լիովին հաստատել է այն ճշմարտությունը, որ վերածնված հայրենիքը այն անփոխարինելի ու որոշիչ գործոնն է, որի միջոցով միայն կարելի է ապահովել գաղթօջախների առժամյա գոյությունը, արգելակել տարագիր հայության և հատկապես նրա աճող սերնդի ուծացումը։ Պետք է ասել, որ սփյուռքահայ առաջադիմական մամուլը, հայրենասեր մտավորականությունը, հասարակական-ազգային գործիչները պատվով ու նվիրումով են կատարում իրենց հայրենասիրական պարտքը՝ մշտապես նոր սերունդը խանդավառում հայրենիքով, զարգացնում հայրենիքի ներշնչած ազգային հպարտության զգացումը։ Այդ գործում նրանց մեծ օգնություն է կազմակերպում Սփյուռքի կոմիտեն, որպիսի հանգամանքը անկեղծորեն արձանագրում են սփյուռքահայ շատ գործիչներ։ Ահա թե ինչ է գրում այդ մասին Եգիպտոսի հայկական Գեղարվեստասիրաց միության ղեկավար գործիչներից Ալիս Դեպոյանը. «Ինչ խոսք, որ բարձրորեն կգնահատենք Ձեր կոմիտեի նպատակասլաց գործունեությունը, որը կձգտի բազմաղան միջոցներով ամրապնդելու հայրենիքի և սփյուռքի կապերը, զարգացնելու արտասահմանի հայության և հատկապես երիտասարդության սերն ու հավատքը մայր երկրի հոգեկան հարստությունների և հարազատ ժողովրդի արժանիքների հան-

դեպ։ Ահա որքան կենսական նշանակություն ունի Ձեր կոմիտեի գործունեությունը սերունդների հայապահպանման գործում»[138]։

Կատարված լայնածավալ աշխատանքների շնորհիվ սփյուռքը վերջնականապես փարվել է հայրենիքին, փարվել հարազատի անկեղծ սիրով, իսկ այդ սերը հայրենիքը ձեռք է բերել իր մեծագործություններով, իր առաջավոր գաղափարներով, դեպի իր տարագիր զավակներն ունեցած ջերմ ու հոգատար վերաբերմունքով։ Ի պատասխան այդ հոգատարության սփյուռքահայ առաջադիմական կազմակերպություններն ու նրանց մամուլը ամենուրեք ամեն տարի արժանավայել կերպով, բազմամարդ հանդիսություններով նշում են Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության և Հայաստանում սովետական իշխանության հաղթանակի տարելիցները։ Հայկական գաղթօջախների մեծ մասը մշտապես արձագանքում է մեր երկրում, մասնավորապես Սովետական Հայաստանում, տեղի ունեցող բոլոր կարևոր իրադարձություններին։ Առաջադիմական կազմակերպությունները հանդիսավոր ժողովներով, մամուլով, ռադիոյով և այլ միջոցներով նշում են այն բոլոր կարևոր հոբելյանները, որ կատարվում են հայրենիքում։ Նրանք դրական մեծ գործ կատարեցին հատկապես Վ. Ի. Լենինի ծննդյան 100-ամյակի, ՍՍՀՄ կազմավորման 50-ամյակի և այլ առիթներով։ Խիստ գնահատելի է նրանց դերը ՍՍՀՄ ներքին և արտաքին քաղաքականությունը պրոպագանդելու ուղղությամբ։

Ահա այս ամենը ձուլման ալեկոծ օվկիանոսում մաքառող տարագիր հայությանը տալիս է գոյատևման կենսատու ավիշ և փարոսի նման լուսավորում նրա փրկության ուղին։

[138] Տե՛ս «Սովետական Հայաստան», ամսագիր, № 10, 1976 թ., էջ 27։

## ՎԵՐՋԱԲԱՆ

Ինչպես ցույց է տալիս մեր աշխատության ամբողջ շարադրանքը, հայ ժողովրդի Օսմանյան կայսրության տիրապետության տակ գտնվող հատվածի նկատմամբ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին երիտթուրքերի կուսակցության ու կառավարության կողմից իրագործված ցեղասպանությունից մի կերպ փրկված և իր պատմական հայրենիքից բռնագաղթի միջոցով աշխարհով մեկ ցրված սփյուռքահայությունը մշտապես ձգտել է վերադառնալ իր հայրենի օջախները, վերամիավորվել իր ժողովրդի հետ։

Իր գոյության հենց սկզբից սփյուռքահայության ճակատագրով մշտապես մտահոգվել է Սովետական Հայաստանի կառավարությունը՝ նրա հետ հաստատելով և հետևողականորեն զարգացնելով բազմաբնույթ կապեր, ինչպես նաև իրականացնելով նրա որոշ մասի հայրենադարձությունը։ Սովետական իշխանության տարիներին տեղի ունեցած հայրենադարձության և հայրենիք—սփյուռք առնչությունների պատմության ուսումնասիրությունը ակնբախորեն վկայում է, որ տարագիր հայության փրկության իրական ու գլխավոր գործոնը մայր հայրենիքն է, Սովետական Հայաստանը։ Այդ է պատճառը, որ սփյուռքահայ բոլոր առաջադիմական ուժերը մեծ նշանակություն և կարևորություն են տալիս Սովետական Հայաստանի հետ կապերի զարգացմանն ու ամրապնդմանը, ներգաղթի անընդհատ շարունակմանը։

Ինչպես վկայում են մեր կատարած երկարամյա հետազոտությունները, սովետական իշխանության տարիներին, կոնկրետ առած, 1921—1982 թթ., սփյուռքից հայրենիք են ներգաղթել մոտ 168000 տարագիրներ, դառնալով Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության, հետևապես՝ ՍՍՀՄ լիիրավ քաղաքացիներ։ Անհրաժեշտ է նշել, որ չնայած

մեր մանրակրկիտ պրպտումներին, այնուամենայնիվ հնարավոր չի եղել լիովին պարզել հայրենադարձների ճշգրիտ թիվը։ Հատկապես հայրենադարձության առաջին փուլում տեղի ունեցած ներգաղթի վերաբերյալ տեղեկությունները խիստ պակասավոր են և, ինչպես նշել ենք իր տեղում, իրականում հայրենադարձների թիվը շատ ավելի է, քան արտահայտված է մեր կազմած աղյուսակում (տե՛ս էջ 105)։ Հետագա տարիներին նույնպես, զանգվածային հայրենադարձությունից բացի, մեծ թվով սփյուռքահայ ընտանիքներ անհատական կարգով հայրենադարձվել են Սովետական Հայաստան։ Ուստի կարելի է ասել, որ սովետական իշխանության տարիներին մայր հայրենիքում իրենց հանգրվանն են գտել 200 հազարից ավելի սփյուռքահայեր, ինչպես դա վկայում են մի շարք այլ աղբյուրներ։ Թվական տեսակետից այնքան էլ մեծ չէ ավելի քան վեց տասնամյակի ընթացքում հայրենիք ներգաղթածների թիվը։ Սակայն եթե նկատի ունենանք մեր հանրապետության տարածքային փոքրությունը, նրանում մշակելի հողերի սակավությունը, բնակչության զգալի խտությունը, ներգաղթածների այստեղ ունեցած աճը և այլ հանգամանքներ, ինչպես նաև հայրենադարձության հսկայական քաղաքական նշանակությունը, ապա պետք է ասել, որ 20-ական թվականներին սկսված և առ այսօր շարունակվող այդ խրախուսելի իրադարձությունը սոցիալիստական կարգերի շնորհիվ մեր ժողովրդի ձեռք բերած մեծագույն նվաճումներից մեկն է, կոմունիստական կուսակցության լենինյան ազգային քաղաքականության կենսագործման կոնկրետ վկայությունը։

Դաժան ճակատագրի բերումով զրկվելով իրենց հայրենի օջախներից և մեծ մասամբ իրավազուրկ վիճակում երկար տարիներ դեգերելով օտար ափերում, տարագիր հայերը հայրենիք վերադառնալուց անմիջապես հետո սովետական կառավարության կողմից ապահովվում են բնակարանով, աշխատանքով, ստանում սովորելու և իրենց բոլոր ընդունակություններն ու ձիրքերը դրսևորելու լիակատար հնարավորություններ։

Ի պատասխան իրենց նկատմամբ կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության ցուցաբերած հոգատարության, հայրենադարձները ամենուրեք աչքի են ընկնում հայրենանվեր աշխատանքով, դառնում արտադրության առաջավորներ, գիտության ու մշակույթի ճանաչված գործիչներ։



Բնավ պատահական չէ, որ մեծ թվով հայրենադարձներ արժանացել են կառավարական պարգևների, ընտրվել իշխանության տեղական ու կենտրոնական օրգաններում։ Այդ մասին հատուկ ընդգծվեց հայրենադարձների հանրապետական երկրորդ հավաքում (10 ապրիլի, 1966 թ., Երևան), որտեղ նշվեց, որ նրանց բացարձակ մեծամասնությունը ազնվորեն է աշխատում կոլտնտեսային ու սովխոզային դաշտերում, արդյունաբերության, շինարարության, տրանսպորտի և ժողովրդական տնտեսության մյուս բնագավառներում։

Արդյունաբերության, գյուղատնտեսության և մշակույթի բնագավառներում աչքի ընկած մի խումբ հայրենադարձներ արժանացել են սոցիալիստական աշխատանքի հերոսի բարձր կոչման։ Դրանք են՝ Երևանի Վ. Ի. Լենինի անվան մետաքսի կոմբինատի ջուլհակուհի Ծաղկանուշ Գալեմտերյանը, Շահումյանի շրջանի XVIII կուսհամագումարի անվան կոլտնտեսության անդամ Աղնիվ Խտրյանը, Էջմիածնի շրջանի № 3-րդ սովխոզի այգեգործներ Գաբրիել Թամազյանը և Ամիր Առաքելյանը, Արտաշատի շրջանի Քաղցրաշենի կոլտնտեսության օղակավարուհի Նոյեմ Եղիազարյանը, Արարատի շրջանի Վանաշենի կոլտնտեսության օղակավար Պողոս Պողոսյանը, Արտաշատի շրջանի Այգեզարդի կոլտնտեսության անդամ Սիսե Կարապետյանը, Արտաշատի ջրանցքի II տեղամասի պետ Վարսենիկ Սալախյանը, ՍՍՀՄ ժողովրդական արտիստուհի Գոհար Գասպարյանը։

Հանրապետության գիտահետազոտական հիմնարկներում, բուհերում, տեխնիկումներում, դպրոցներում, մշակույթի օջախներում նույնպես աշխատում են հազարավոր հայրենադարձներ, որոնցից շատերը ակադեմիկոսներ, դոկտորներ ու գիտության թեկնածուներ, հանրապետության վաստակավոր ուսուցիչներ են, ՍՍՀՄ և ՀՍՍՀ ժողովրդական արտիստներ, արվեստի վաստակավոր գործիչներ և այլն։

Միաժամանակ հարկ է նշել, որ վերջին տարիներին որոշ հայրենադարձ ընտանիքներ, տարբեր շարժառիթներով ու պատճառներով, ձգտում են մեկնել արտասահման, դրանով իսկ վնաս պատճառելով թե՛ իրենց անձնական ճակատագրին և թե՛ մեր ժողովրդի ազգահավաքման կենսական գործին։

Ինչպես վկայում են փաստերը, արտասահման բնակության մեկնողների մեծ մասը գնում է գլխավորապես զարգացած կապիտալիստական երկրներ։ Սակայն ընկնելով արտասահման,

նրանք անմիջապես բախվում են բազմաթիվ դժվարությունների հետ (բնակարանային, աշխատանքային, լեզվական և այլն)։ Ահա թե ինչու կարծեցյալ «դրախտ» մեկնողների մեծամասնությունն ապրում է խոր հիասթափություն ու զղջում և ձգտում է նորից վերադառնալ Սովետական Միություն։ Նրանցից շատերը, համոզվելով իրենց կատարած սխալի մեջ, դիմում են սովետական կառավարությանը՝ նորից հայրենիք վերադառնալու խնդրանքով։ Հայրենիքը մեծահոգաբար ներում է այդպիսիներին և թույլատրում վերադառնալ սովետական երկիր։

Հայրենադարձների բացարձակ մեծամասնությունը տոգորված է ջերմ հայրենասիրությամբ, անկեղծորեն նվիրված է սովետական հայրենիքին և ակտիվորեն մասնակցում է մեր երկրում ծավալված կոմունիստական շինարարությանը։ Կարծում ենք, որ հայրենադարձների այդ հայրենանվեր գործունեության հետազոտությունը կունենա քաղաքական, գիտական ու գործնական կարևոր նշանակություն։ Ուստի սովետահայ պատմաբանների խնդիրներից մեկը պետք է լինի նրանց կյանքի և գործունեության ուսումնասիրումն ու լուսաբանումը։

**О. У. МЕЛИКСЕТЯН**

## ВЗАИМОСВЯЗЬ РОДИНА—СПЮРК И РЕПАТРИАЦИЯ (1920—1980 гг.)

### Резюме

В течение многих веков Армения была ареной опустошительных набегов и завоеваний со стороны иноземных захватчиков. И не случайно, что ее история богата многими страницами героической борьбы народа за свою свободу и независимость.

Разорение Армении и физическое истребление армянского населения усилились и приняли систематический характер с начала XVI века, когда за обладание ею столкнулись интересы двух агрессивных соседних империй—Османской Турции и Сефевидской Персии. Почти полутора столетия Армения была местом ожесточенных завоевательных войн, которые в 1639 г. завершились ее разделом между ними. Большая, западная часть Армении перешла под владычество Турции, восточная—Персии. В 1828 г., по Туркменчайскому договору, Восточная Армения вошла в состав России и часть армянского народа, навечно связав свою судьбу с русским народом, благодаря Великой Октябрьской социалистической революции получила возможность национального и социального возрождения.

Однако большая часть армянского народа, оставшаяся под игом турецкой деспотии, продолжала подвергаться постоянным жестоким гонениям, депортации и геноциду. Последовательно осуществляя свою реакционную пантуркистскую-панисламскую политическую программу, турецкие шовинисты не останавливались ни перед чем, чтобы истребить армянский народ на его исконных исторических землях и окончательно освоить их. После султана Абдул Гамида особенно оголтелыми проводниками этой кровавой политики явились младотурки. Воспользовавшись сложной обстановкой в период первой мировой войны, они осу-

ществили массовый геноцид армянского населения, проживавшего в Западной Армении и в других областях Турции.

В результате резни армян и насильственного переселения их в пустынные области Сирии и Месопотамии, Западная Армения полностью лишилась своего коренного армянского населения. Истребление турецкими варварами более чем полутора миллионов армян явилось первым массовым преступлением против человечества в XX веке— предвестником страшных преступлений гитлеровского фашизма.

Сотни тысяч армянских детей, женщин и стариков, чудом уцелевших от турецкого ятагана и изгнанных из своих родных очагов, пройдя тяжелыми дорогами гибели и скорби, рассеялись по многим странам мира и тем самым значительно расширили армянскую диаспору (Спюрк).

К сожалению, несведущие в истории армянского народа, склонны рассматривать зарубежных армян в качестве политических эмигрантов. Однако общеизвестно, что эмигрантами в большинстве случаев являются лица, покидающие свою родину по политическим мотивам. Основная же часть двухмиллионного армянского Спюрка— одной трети всего армянского этноса—состоит не из политических эмигрантов, а из безвинных жертв организованного султанами, младотурками и кемалистами геноцида армян. И сокровенной мечтой армян Спюрка было и есть возвращение на свою историческую родину, единение с материнской землей.

Эти уцелевшие осколки западноармянского населения, скитавшиеся на чужбине после первой мировой войны, вначале лелеяли надежду, что государства Антанты создадут им возможности для возвращения на родину. Однако надежды эти оказались иллюзиями. Для обманутых и покинутых западными державами трудящихся масс зарубежных армян единственной и реальной опорой стала победившая в ноябре 1920 г. в Восточной Армении советская власть.

Коммунистическая партия и Советское правительство Армении, с помощью РКП(б) и братских республик, приняли конкретные меры по созданию необходимых условий для жизни и деятельности западноармянских беженцев, нашедших пристанище в республике, а также по оказанию всесторонней поддержки и помощи зарубежным армянам.

С первых же шагов своей деятельности Советское правительство Армении стремилось наладить связи с зарубежными армянами и по мере возможности организовать репатриацию их определенной части в Советскую Армению. Исследованию этих связей и истории репатриации, осуществленной за годы советской власти в Армянскую ССР, и посвящена данная монография.



Впервые в своей многострадальной истории, армянский народ благодаря советской власти, с помощью братских народов и, в первую очередь, великого русского народа, получил возможность объединения на своей новой, социалистической родине. Тем самым было положено начало воссоединению по воле судьбы рассеянных по свету армян в Советской Армении, консолидации и развитию армянской социалистической нации. В этом нашла свое конкретное воплощение ленинская национальная политика Коммунистической партии в отношении многострадального армянского народа.

Репатриация армян рассматривается в работе по трем основным этапам. Первый этап охватывает 1921—1936 гг., когда на родину возвратилось, примерно, 42286 зарубежных армян. Второй этап—1946—1948 годы. За этот сравнительно короткий промежуток времени произошла самая большая и массовая иммиграция зарубежных армян, известная под названием великой репатриации. Всего за три года из 12 стран мира в Советскую Армению переселилось 20646 семей или 89750 человек. В 1950-ых годах в индивидуальном порядке на родину иммигрировало более 4 тысяч зарубежных армян. Третий этап репатриации начался в 1962 г. и продолжается по сей день. За период 1962—1982 гг. из 30 стран репатриировалось 6795 семей или 31920 человек. Кроме этого, за годы советской власти разными путями с чужбины на родину вернулись еще несколько тысяч армян. Таким образом, число репатриантов составило более 200 тысяч человек. Советское правительство предприняло энергичные усилия и вложило огромные средства в дело обеспечения репатриантов жилищами и работой, создания для них благоустроенной жизни, вовлечения в общественно-политическую жизнь страны в качестве полноправных граждан страны Советов.

В области установления и развития связей родины с армянской диаспорой важную роль сыграл основанный в сентябре 1921 г. Комитет помощи Армении.

В настоящее время эту деятельность продолжает созданный в июне 1964 г. Комитет по культурным связям с зарубежными армянами, содействующий как процессу их сплочения вокруг Советской Армении, пропаганде ее социально-экономических и культурных достижений, так и борь-

бе против ассимиляции, развитию прогрессивных традиций национальной культуры.

Вместе с тем, на основе многочисленных фактических материалов, разоблачается корыстная и реакционная политика империалистических держав, двуличие и беспомощность Лиги наций в отношении армянских беженцев, как и предательская деятельность дашнаков, враждебно настроенных к советской власти и репатриации армян. Наряду с этим, по достоинству высоко оценена деятельность великого гуманиста Фр. Нансена в защите армянских беженцев.

Освещение истории связей советской родины с армянскими колониями зарубежных стран и репатриации армян ярко выявляет заботу о них Коммунистической партии и Советского государства, важную и плодотворную деятельность прогрессивных организаций зарубежных армян в деле национального сохранения и утверждения связей с родиной.

Все это является неопровержимым свидетельством того, что основным и главным фактором спасения армян, проживающих на чужбине, является родина-мать—Советская Армения, достигшая небывалого расцвета в единой братской семье народов СССР.

HOVIK U. MELIKSETIAN

## THE ARMENIAN MOTHERLAND AND DIASPORA: RELATIONS AND REPATRIATION (1920—1980)

### Summary

Situated on the borderline of Europe and Asia, Armenia has been the object of devastating raids and conquests on the part of foreign invaders for many centuries. And the fact that its history is rich in a number of heroic events manifesting the continuous struggle of the Armenian people for freedom and independence is not entirely accidental.

The destruction of Armenia and the annihilation of its population became especially obvious and acquired systematic character starting in the very beginning of the 16th century. That was the period when the interests of two aggressive neighbouring countries, namely Ottoman Turkey and Sefevid Persia, clashed. For about a century and a half Armenia had been the scene of violent battles between them that came to an end only in 1639. As a result Armenia was divided between these two countries. The western and larger part of its territory fell under the dominion of Turkey, and the eastern part remained under Persian rule. In 1828 East Armenia was attached to Russia by the Treaty of Turkmenchai. Later on as a result of the Great October Socialist Revolution, the Armenian people gained an opportunity for national and social rebirth.

The greater part of Armenians, remaining under the Turkish yoke, were severely persecuted, deported and massacred. Consistently carrying out their reactionary pan-

Turkish and pan-Islamic political program, the Turkish chauvinists stopped at nothing to destroy the Armenian nation on the territory of its age-old motherland and annihilate it once and for ever. Following Sultan Abdul-Hamid, it was the party and the government of the Young Turks that most shamelessly carried out this murderous policy. Taking advantage of the complicated circumstances that arose during World War I, they perpetrated the ruthless genocide of the Armenian people in West Armenia and other regions of Turkey.

As a result of this horrible massacre of Armenians and their forced deportation to the desert areas of Syria and Mesopotamia, West Armenia was completely deprived of its native Armenian population. The massacre of more than one and a half million Armenians at the hands of Turkish barbarians was the first mass crime against humanity in the 20th century. That was actually the presage of the horrible crimes of Hitlerian fascism.

Hundreds of thousands of Armenians who have survived this horrible genocide by some miracle, and who have been deported and undergone the path of sorrow and death, have been scattered all over the world, thus extending the Armenian Diaspora. Unfortunately, people unaware of the Armenian nation are inclined to consider foreign Armenians as political emigrants. In fact, emigrants in most cases are people who leave their homeland on political grounds. But the main part of the Armenian Diaspora, numbering two million souls (one third of the whole Armenian nation) consists of people who have emigrated not because of their political convictions, but as victims of the horrible genocide organized by the sultans, Young Turks and Kemalists. And the innermost desire of the Armenians abroad has always been and still is to return to their motherland and feel the thrilling touch of their native soil.

These splinters of the West Armenian population wandering in foreign lands after World War I cherished at first the hope that the states of the Entente would organize



and support their return to the motherland. But their hopes were crushed. It was the Soviet power only, established in East Armenia in November 1920, that turned out to provide genuine support for the Armenians of the Diaspora.

The Communist party and the Soviet government of Armenia, backed by the RCP (of Bolsheviks) and the other Soviet republics took concrete measures to establish normal conditions for life and creative work for the refugees who found shelter in Soviet Armenia.

From the first days of its existence the Soviet government of Armenia did its best to maintain good relations with Armenians abroad and to organize their gradual repatriation to Soviet Armenia. It is the history of repatriation and these relations that the present monograph is devoted to.

The Armenian nation for the first time in its long suffering history was given the opportunity of coming together on the territory of its new socialist fatherland. This opportunity was achieved by the Armenian people only due to the Soviet power and due to the help and support of other fraternal peoples and the great Russian people in particular. This was the reunification of Armenians who had been scattered all over the world by the cruel hand of fate. This was the beginning of the consolidation and development of the Armenian socialist nation. This revival of the Armenian nation was the embodiment of the national policy of the Communist party elaborated by V. I. Lenin.

The present investigation deals with the three main stages of the repatriation of Armenians. The first stage covers the period from 1921 to 1936 when 42.286 Armenians repatriated from abroad. During the years of the second stage, a comparatively shorter period (1946—1948), the so-called great repatriation took place when a great number of Armenians repatriated from various countries. During this short period of three years 20.646 families or 89,750 people repatriated to Soviet Armenia. In the 1950-s more than 4 thousand Armenians returned to their native land individually. The third stage began in 1962 and is being continued till now. 6795 families or 31,930 people from 30 different countries repatriated during the period of 1962—1982. If we take into consideration that many Armenians returned to their motherland in other ways, we may say that altogether in 1921—1982 Soviet Armenia has admitted more than 200000 repatriants. The Soviet government applied great

energy and effort and large sums of money to the cause of supplying the repatriates with jobs and dwellings. They were involved in the socio-political life of the country, enjoying equal rights together with the citizens of the country of Soviets.

In establishing and developing contacts with the Armenian Diaspora, the Committee of Help to Armenia, established in September 1921, played a very important role.

At present this role is carried out by the Committee for Cultural Relations with Foreign Armenians in their support to Soviet Armenia, to the propaganda of social, economic and cultural achievements of Soviet Armenia, as well as to the struggle against assimilation and the development of progressive traditions of the national culture.

Along with this, on the basis of quite a number of facts, the mercenary and reactionary policy of imperialist states, the double-faced helplessness of the League of Nations, the treacherous activities of the Dashnaks hostile to the Soviet power and the repatriation of Armenians are all discussed in the present paper. On the other hand, the activities of the great humanist Fr. Nansen in the cause of support of Armenian refugees are higly appreciated in the paper.

The elucidation of the history of the relations between Soviet Armenia and Armenian colonies in various foreign countries on the one hand the repatriation of Armenians on the other reveals the incessant care of the Communist party and the Soviet state towards them and fruitful activities of progressive organizations of Armenians abroad.

All this undeniably manifests that the main and basic factor for the salvation of Armenians living abroad is their motherland—Soviet Armenia—which has achieved unprecedented growth in the united fraternal family of the peoples of the Soviet Union.

## ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ


Աբարտյան Գրիգոր 196
Աբգարյան Մովսես 202
Աբդալյան Սեդրակ 197
Աբդուլակ Ռ. 304
Աբդուլ Համիդ 38, 39
Աբեղյան Մ. 152
Աբրահամյան Ա. Գ. 14
Աբրահամյան Խաչիկ 197
Ադամյան Ազատ 194
Ադամյան Օննիկ 416
Ադդարյան Գառնիկ 386, 422, 423, 442
Ազանիքյան Միհրան 193
Ազատյան Հ. 68
Ազիզյան Վաչիկ 437
Ազնակյան Եզնիկ 197
Աթմանյան Մառի 386, 422
Ալիքսանյան Ավետիս 370, 386, 422, 443
Ալբունյան Լևոն 192
Ալիխանյան Ս. Տ. 47
Ալմուխյան Ժան 419
Ալպոյաճյան Ա. 20
Ակիշյան Երվանդ 389, 392
Ահարոնյան Գ. 21
Ահարոնով Ռ. 209
Աղամալյան Գ. 233
Աղայան Ծ. Պ. 11
Աղաջանյան, կարդինալ, 345—348
Աղաջանյան, քահանա, 259
Աճառյան Հր. 183, 184
Անեմյան Արսեն 199
Անեմյան Հակոբ 201
Այվազյան Հ. Ռ. 256
Այվազովսկի Հովհաննես 416
Անդրանիկ 161
Անդրեասյան Անդրանիկ 20, 53, 422, 423
Անտելեպյան Գ. 97
Անտոնյան Ա. 33, 35
Աշնյան Ա. 196
Աշնյան Հակոբ 337
Աչչյան Անդրանիկ 386
Առաքելյան Ամիր 499
Առաքելյան Գուրգեն 389
Առաքելյան Ս. 250, 304
Առաքելյան Սուրեն 99
Ասատրյան Գր. 208
Ասատրյան Երանուհի 244
Ասատուրյան Մեսրոպ 194, 195
Ասլանյան Վահան 224
Աստվածատրյան Բ. Ա. 178, 193, 195, 200, 207, 239
Աստրդվ 135
Ասրյան Ռ. 208
Ավագյան Գ. Ե. 10
Ավետիսյան Ավետիս 405
Ավետիսյան Սահակ 197
Ավետիսյան Օննիկ 417
Ավետիքյան Հակոբ 398
Ատոռ 132
Ատուր Սարգիս 195, 196
Արաբյան Ազնիվ 429
Արամայիս 357
Արամյան Հակոբ 198
Արզումանյան Մ. 22
Արխանյան Մուշեղ 202
Արծրունի Վ. 152
Արմիս (Միսիրյան Արմենակ) 416
Արսլանյան Գևորգ 201

Արալաձյան Պողոս 194
Արտունի Ս. Մ. 197

Բաբայան Ս. Հ. 256
Բաբլոյան Մ. 19
Բաբուրյան Ներսես 382
Բալայան Հ. 97
Բաղդասարյան Ս. 366
Բաշալյան Լ. 136
Բարակյան Զինաիդա 244
Բարակյան Վարդան 244
Բարաղամյան Թորոս 199
Բարիկյան Խաչի 324
Բարկովսկի Ս. 304
Բարսեղյան Հովհաննես 197
Բեկզադյան Ալ. 54
Բեհաեդդին Շաքիր 29
Բերգման Կ. 136
Բերիա 170
Բեքերյան Գրիգոր 266
Բնակունի Մկրտիչ 197
Բոգոմոլով Ս. 209
Բոզոյան Արշամ 394
Բոյաջյան 100
Բոյաջյան Աբրահամ 309
Բոնար Քրամփ 311
Բրյուսով Վալերի 37
Բուդարին 202

Գաբրիելյան Գաբրիել 193, 385
Գաբրիելյան Հ. 18
Գազազյան Հարություն 194
Գալամքեարյան Արշակ 193
Գալայճյան Արմենակ 193
Գալայճյան Մ. Թ. 197
Գալեմտերյան Ծաղկանուշ 449
Գալեմքեարյան Զարուհի 423
Գալըճյան Հրաչ 198
Գալճյան Հայկ 194
Գալստյան Գ. 18
Գայսերյան Հակոբ 194, 238
Գառզու (Զուլումյան Գառնիկ) 387, 416, 442
Գասարճյան Արտաշես 194
Գասպարյան Գոհար 449
Գասպարյան Եղիա 416

Գասպարյան Ս. Տ. 13, 14, 18, 256, 278
Գասպարով Ն. Վ. 209, 252, 304
Գավուք Արփին (Գավուքյան Հարություն) 417
Գատըքլյան Էննիկ Արփին 336, 337
Գարագաշ Հայկ 197, 338
Գարագաշյան Եզնիկ 194
Գարանյան Կ. 196
Գաֆեսյան Հովհաննես 196
Գեղամ Սևան 19
Գըլըճյան 168
Գիբոնս Հերբերտ 37
Գյուրջյան Հակոբ 415
Գյուտոյան Միշա 413
Գոլանճյան Փ. 200
Գողթունի Գ. 97
Գոհայան 193
Գորկին Ջոն 143
Գրանյան Հովհաննես 202
Գրիգորյան Գրիգոր 430
Գրիգորյան Հրանտ 192
Գրիգորյան Ս. 233
Գույումճյան 163
Գույումճյան Հակոբ 242
Գուշակճյան Մարտիրոս 430
Գուչյան Բյուզանդ 202
Գևորգ Ջ. 201, 342
Գևորգյան Գ. 208
Գևորգյան Գ. Տ. 178, 256
Գևորգյան Լ. 304

Դալլաքյան Կ. 15
Դանիելյան Վահան 194, 215
Դանիել Վարուժան 31, 402
Դավթյան Արփեն 171
Դավթյան Դավիթ 193, 194
Դավթյան Վահագն 366, 408
Դարբինյան Աղասի 385
Դարբինյան Արտակ 194
Դարբինյան Գրիգոր 193
Դաքեսյան Վահան 200
Դեբրուկեր 133, 135
Դեմիրճյան Դ. 152, 183, 184
Դեմիրճյան Կ. Ս. 440
Դեյիրմենճյան Արամ 202

Դեպոյան Ալիս 445
Դյուպլուի Չարլզ 132
Դոլաբչյան գերդաստան 243
Դպիրյան Հայկ 171
Դրամբյան Տ. Ս. 17
Դուրգերյան Հովհ. 65, 97, 124, 125
Դուրյան Լին 419
Դևենյան Հրանտ 192, 337, 338

Եագուպյան Ավետիս 192
Եալընըզյան Գուրգեն 196
Եալչըն 351
Եանըկյան Ոսկինե 197
Եափուճյան Ազատ 337
Եղիգարյան Գևորգ 194
Եղիազարյան Նայեմ 449
Եղիշե Չարենց 385, 386
Եոզղատյան Հովսեփ 192
Եսայան Զապել 415
Երանյան Մինաս 224
Երեցյան Պարույր 418
Երզնկյան Ար. 54, 83, 97, 101, 115, 124, 125, 141, 152, 158
Երկաթգործյան Հարություն 203
Երմոշին Պ. 260, 304
Երնեքյան Փանոս 193
Երոֆեև Վ. 257, 304
Երուխան 31
Երևանյան Գ. 20
Եուսուֆյան Տիրան 202

Զաելիկյան Տիգրան 265
Զայցև Գ. 209, 226, 304
Զայցև Վ. 209
Զատիկյան Հակոբ 376
Զարդարյան Արամ 385
Զարդարյան Հրաչ 422
Զարդարյան Ռուբեն 31
Զարյան Նվարդ 416
Զարյան Ռուբեն 389
Զարոբյան Յա. Ն. 252, 261
Զենին 209
Զեքի 34
Զոլոպյան Սարգիս 199
Զոհրաբյան 349
Զոհրապ Գ. 31

Զոքյան Իսրայել 199
Զուբով Ս. 304

Էլլեզյան Եփրեմ 192
Էլմեսեկյան Աբրահամ 202
Էլչիբեկյան Հ. Մ. 10, 11
Էնկ Սուֆեբ 353
Էնվեր 27, 29
Էպպերյան Սարգիս 196
Էքմեքճյան Պողոս 202
Էքշիյան Կարապետ 202
Էֆեյան Պարգև 202

Թադևոսյան Ս. Ե. 16
Թադևոսյան Եղ. 152
Թադևոսյան Թ. 196
Թադևոսյան Մ. 233
Թալալյան Պ. 304
Թալեաթ 27, 29—31, 38
Թամազյան Գաբրիել 449
Թամանյան Ալ. 112
Թաշճյան 168
Թաշճյան Կարապետ 201
Թաշչյան Էլիզ 419
Թարայան Մարտիրոս 197
Թելալյան Սիսակ 337
Թենքեարյան Սարգիս 193
Թեոդիկ 27, 40, 41, 53
Թեքեյան Վահան 423, 439
Թիլեպյան Պերճ 386
Թիրեաքյան Միհրդատ 197
Թլկատինցի Հովհաննես (Հարությունյան) 402
Թյուֆենկչյան Բենիամին 385
Թոմա Ալ. 124, 132—135
Թոյնբի 37
Թոնունց 65
Թոսունյան Լ. 233
Թորեյան Հովհաննես 196
Թոփալյան Բյուզանդ 417
Թոփճյան Աբրահամ 193
Թոփչյան Էդվարդ 389
Թոփուզյան Հ. Խ. 16, 17
Թրյանց Հակոբ 192
Թութունճյան Հովսեփ 198
Թութունջյան Հովիկ 379

Թուրունջյան Վազգեն 419
Թուլումճյան Կարապետ 194
Թուխմանյան Խաչիկ 193
Թումայան Սամվել 387
Թումանյան Հովհ. 152, 154, 378, 413, 414
Թևանյան Խաչիկ 224

Ժամկոչյան Աղասի 194, 238
Ժերանյան Ռիշար (Խաչատուր) 386, 416, 417

Իդեն Ա. 173
Իննեյան 193
Իննեյան Նորայր 193
Իշխանյան Լյուսի 419
Իսագուլով 209
Իսահակյան Ավետիք 157, 183
Իսաև Ռոման (Եսայան Ռոմանոս) 197
Իսկանդարյան Ա. 304
Իսկանդարյան Վարդգես 337
Իսպիրյան Հովհաննես 199
Իսրայելյան Երվանդ 194

Լենին Վ. Ի. 47, 66, 101, 234, 378, 417—419, 440
Լեո 27, 152
Լեփենյան Գ. 196
Լեփսիուս Իոհաննես 32, 33, 37, 38, 40
Լիբկնեխտ Կարլ 37
Լյովիչկին 209
Լոմակին Յա. 209
Լուսին Ամարտ 419
Լուսինյան Հրաչ 430

Խալեյան Ե. Մ. 11
Խալիլ 29
Խանգուլով Վ. 209
Խանենց Գալուստ 423
Խանզադյան Զատիկ 387, 443
Խանզադյան Սերո 389
Խանենյան Պետրոս 196
Խանչյան Գրիգոր 437
Խաչատրյան Ահարոն 193
Խաչատրյան Արամ 183
Խաչատրյան Հ. 208
Խաչատրյան Մարկոս 235
Խաչատրյան Ռ. Հ. 15
Խաչատուրյան Արշակ 199
Խաչիկյան Ա. 304
Խաչիկյան Մարտիրոս 193, 385
Խարմանդարյան Ս. Վ. 10
Խոճասարյան Մանիկ 197
Խտրյան Ազնիվ 449
Խրիմլյան Ա. 208
Խրլոպյան Գ. 18
Խրլոպյան Տիգրան 193
Խուդգարյան Ս. 10
Խուրշուդյան Լ. Ա. 14

Ծաղիկյան Վ. Հ. 178
Ծառուկյան Ա. 21

Կալինա Ի. 294, 303, 304
Կամսարական Դարիա 386, 416
Կամսարական Սպանդարատ 159
Կաշեն Մարսել 37
Կապուտիկյան Ս. 19
Կասյան Ս. 63, 152
Կասումյան Ջհանգիր 224
Կատարյան Թ. 208
Կարապաշյան Ավետիս 385
Կարագյոզյան Արշակ 207
Կարապետյան Գրիգոր 194
Կարապետյան Հ. Ս. 11
Կարապետյան Մ. 208
Կարապետյան Ջորջ 196
Կարապետյան Սիսե 449
Կարապետյան Ս. Կ. 178
Կարիկյան Եսայի 307, 308
Կարնյան Սուրեն 193
Կարմիրյան Հայկ (Հաջի Հայկ) 336
Կենեյան Անդրանիկ 195
Կեցոյան Կարպիս 203
Կիտուր Արսեն 77, 78
Կիրակոսյան Ալիսիա 386, 421, 423
Կիրակոսյան Ա. Մ. 252
Կիրակոսյան Ջավեն 387
Կիրակոսյան Թագվոր 203
Կիրակոսյան Պող 416
Կիրակոսյան Ջ. Ս. 16, 37
Կիրիե Վ. 209
Կլիմով 209
Կյուլպենկյան Գալուստ 410
Կյուլպենկյան Հարություն 336, 337
Կյուլպենկյան Ռոպեր 387, 410
Կյուրեղյան Արմենակ 197
Կյուրումլյան Հ. 200
Կոկինոս Պ. 17
Կոմիտաս 31, 378, 387, 414
Կոստանդինյան Ալեքսանդր 194
Կոստանյան Ա. 97
Կոստանյան Վահան 197
Կոստրոմին Լ. 304
Կրյուչկով 209
Կուժունի Հարություն 386
Կուլաժենկով 209
Կուպրին Օլեգ 437
Կուրտիկյան Ս. 19
Կեներյան Հովհաննես 199

Հաբեկյան Գրիգոր 338
Հադիկյան Հարություն 380
Հազարյան Հարություն 387
Հախումյան Սեմյոն 437
Հակոբյան Ա. Մ. 10, 11, 63
Հակոբյան Գևորգ 416
Հակոբյան Հ. 16
Հակոբյան Հովհ. 10
Հակոբյան Ռ. 208
Հակոբջանյան Հ. 208
Համազասպյան Վ. Ե. 366, 389, 408, 414, 437
Համալյան Գուրգեն 193
Համաստեղ 370
Համբար Դավիթ 198
Համբարձումյան Հրանտ 190
Համբարձումյան Ս. 54, 101, 125, 128, 152
Համբարձումյան Վ. Հ. 414, 437
Հայրապետյան Լ. Ե. 256
Հանչերյան Մարգարիտ 357
Հանրի Պառպի (Հանրի Բարբի) 26, 37
Հարուր Եղիշե 419
Հարությունյան Գրիգոր 192
Հարությունյան Հ. 208
Հերվանյան Հարություն (Արթուր) 21
Հինայեկյան Ա. 208, 229
Հիտոյան Գևորգ 193
Հովակիմյան Գ. Բ. 181
Հովհաննես Ասպետ 313—315
Հովհաննիսյան Ալ. 208, 349
Հովհաննիսյան Աշ. 13, 54
Հովհաննիսյան Գ. Ա. 181
Հովհաննիսյան Դ. Հ. 252, 304
Հովհաննիսյան Ե. 304
Հովհաննիսյան Խաչիկ 198
Հովհաննիսյան Հ. 304
Հովհաննիսյան Հ. Վ. 252
Հովհաննիսյան Հրաչ 196
Հովհաննիսյան Հրաչյա 389
Հովհաննիսյան Ն. Հ. 16
Հովհաննիսյան Ս. 196
Հովհաննիսյան Սուրեն 377
Հովնանյան Պետրոս 200
Հովսեփյան Հ. Ա. 256
Հրանտ Սամվել 357

Ղազարյան Կարպիս 416
Ղազարյան Հրաչ 405
Ղազարյան Մուրատ 193
Ղազարյան Ռ. 208
Ղազարյան Սոնա 419
Ղասաբյան Ջ. 17
Ղավամե Սալթանե 335
Ղարաբաջակյան Մարտիրոս 235
Ղարախանյան Հովսեփ 197
Ղարիբջանյան Լյուդվիգ 437
Ղարիպյան Արմեն 192
Ղանբարչյան Հովհաննես 244
Ղուկասյան Անդրանիկ 171
Ղուկասյան Շ. 336
Ղուրոփչյան Բաբկեն 196

Ճաննիկյան Ալպերտ 387
Ճեպենյան 193
Ճեպենյան Ռոբեր 383, 385, 430
Ճերանյան Արուսյակ 197
Ճերանյան Ղազարոս 214
Ճերենյան Միսաք 193
Ճերենյան Վահրիճ 192, 226

Ճրոյան Ճենան 196
Ճիվանյան Հովհաննես 199
Ճյուհերյան Երվանդ 415

Մազլըմյան Պարույր 193
Մարեսով Ի. Ի. 178
Մալեզյան Վահան 415, 423
Մալխասյան Ստ. 152
Մալումյան Տիրան 193
Մալումյան Վահրամ 199
Մախյան Հարություն 193
Մակդոնալդ Մարգոփ 136, 138
Մակինտոշ Ուիլյամ 137
Մակինցյան Պ. 54, 68
Մանասյան 168
Մանասյան Հովհաննես 192
Մայեր 138
Մանանդյան Հ. 152
Մանասե Սեակ 443
Մանասերյան Լ. Պ. 256
Մանվելյան Աղամ 192
Մանուկյան Ալեք 409
Մանուկյան Ս. 208
Մանուշակյան Գևորգ 212, 213, 235
Մանուչյան Միսաք 171, 423
Մավյան Միհրան 194, 382, 388
Մավյան Սալբի 417
Մավյան Վահրամ 387
Մատեյան Հարություն (Արփին) 192, 443
Մարգարյան 193
Մարգարյան Դ. 196
Մարգարյան Երվանդ 192
Մարմարյան Հանրի (Գևորգ) 194
Մարջանյան Հ. Հ. 178
Մարտիկյան Ջորջ 260, 270, 332
Մարտիկյան Ս. 152
Մարտիրոսյան Ա. Ս. 366
Մարտիրոսյան Գ. Ա. 252
Մարտիրոսյան Հակոբ 196
Մարտիրոսյան Հարություն 429
Մարուքյան Մանուկ 168
Մելիք-Ազամյան Արտ. Ալ. 178
Մելիք-Հովսեփյան Ս. 97
Մելիքյան Ռ. 152
Մելիքյան Վ. 304
Մելիք Ռուբեն 423
Մելիքսեթյան Հ. Ռ. 11, 12, 64, 70
Մելիքսեթյան Վ. Գ. 11
Մելքոնյան Հ. 208
Մելքումյան Կ. 304
Մելքումյան Մ. 366
Մեծատուրյան Լևոն 193
Մեհրապյան 193
Մեսրոպ Լևոն 415
Մեսրոպ Մաշտոց 414
Մեսրոպյան Մեսրոպ 192
Մեսրոպյան Միհրան 194
Մեվլան Ջադե Ռիֆաթ 29
Մեքերյան Հարություն 198
Մեքրուպյան Գևորգ 193
Միդհատ Շյուքրի 29
Մինասյան Մինաս 416
Մինասյան Ն. 233
Միրզաքարաև 209
Միրիճանյան Արամ 197
Միրիճանյան Արմեն 197
Միքայելյան Կ. 366
Միքայելյան Կարեն 159, 161
Մյասնիկյան Ալ. (Ալ. Մարտունի) 13, 54, 55, 57, 80, 153, 309, 318, 319
Մնացականյան Բավական 437
Մնդիկյան Մարտա 417
Մնձուրի Հակոբ 402, 423
Մոլոտով Վ. Մ. 173
Մոսինյան Խ. Ս. 256, 270, 271, 304
Մովսիսյան Ս. Հ. 252
Մորգենթաու Հենրի 29, 38, 40
Մռավյան Սաք. 54, 68, 82, 84, 97, 108, 125
Մսըրլյան Զ. 21
Մսըրլյան Մ. 21, 192
Մսրյան Պերճ 270
Մուրաֆյան Զարեհ 386, 416, 417
Մուսայելյան Արամայիս 161
Մուրադյան Անգինե 419
Մուրադյան Գ. 208
Մուրատյան Սամվել 201

Յազչյան Հովհ. 353
Յազվեցկի Վալերի 37
Յակովլև 209
Յափուճյան Ավետիս 430
Յուրուճյան Անդրանիկ 194
Յուսուֆյան Դանիել 193

Նազարյան Բաքոլ 356
Նազարյան Գառնիկ 204
Նազըմ 27, 29
Նաքրյան Պողոս 337, 338
Նաիրի Ժիրայր 386
Նալպանտյան Հակոբ 199
Նահապետյան Նահապետ 192
Նանարյան Նուպար 192
Նանագուլյան Ս. 304
Նանսեն Ֆրիտյոֆ 22, 122, 125—134, 136—151
Նար-Դոս 152
Ներկարարյան Վ. Ն. 10
Ներսիսյան Բ. Ա. 178
Ներսիսյան Մ. Գ. 37
Ներսոյան Հակոբ 193
Նիկիֆորով 304
Նշանյան Պետրոս 196
Նոսկով Լ. 304
Նովիկով Կ. 304
Նորատունկյան Գ. 144, 310
Նուրիկյան Բենիամին 370

Շաղուեց Ս. 97, 101
Շահգելդյան Ար. 65
Շահինյան Ա. 304
Շահնազարյան Ա. 208
Շահնազարյան Գ. 209
Շահպազ Ստեփան 198
Շահվերդյան Դանուշ 54, 90, 92—94, 152, 312, 313, 318
Շապորին Ա. 209
Շառլ Ազնավուր 419
Շառոյան Խաչո 193
Շեղակ 259
Շեքեռնյան Հայկ 271, 332
Շիշիկյան Պարունակ 244
Շիրազյան Արա 389
Շիրակյան Թոռնիկ 202
Շլուկյան Մ. 243
Շնյուկով 209
Շչերբակով Ի. 304
Շումյացկի Բ. 99
Շուստով 209

Ոսկերիչյան Մանուել 195
Որբունի Զարեհ 386, 422

Չալըգյան Կարապետ 195, 196
Չալըգյան Հրանտ 196
Չանգալյան Ջեմս 197
Չարխըտյան Կոստան 199
Չարչյան Բ. 208
Չարչյան Զ. 208
Չաքրով Հակոբ 193
Չաքջյան Ավետիս 270
Չաքրյան Ռաֆել 194
Չեպեյան Հայկ 192
Չերնիշև Ն. 209
Չերչիլ Ուինստոն 80
Չեքչենյան Ավագ 192
Չինիլի Պողոս 353
Չիչերին Գ. Վ. 126, 143
Չոլակ Հարություն (Չոլակյան) 417
Չոպանյան Արշակ 157, 185, 415, 423
Չորեքչյան Գևորգ 187, տե՛ս Գևորգ Զ
Չորմիսյան Լևոն 20, 195
Չպլաքյան Հարություն 192
Չուբարյան Գր. 152
Չուգասզյան Լիլի 387, 419, 442

Պագալյան Բագրատ 192
Պագալյան Տ. 357
Պազարյան Մովսես 200
Պալյան Ժիրայր 199
Պալյան Սարգիս 385
Պամս Ժյուլ 132, 136, 138
Պայպուրթյան Ստեփան 194, 243
Պապալենյան Գրիգոր 225
Պապաջանյան Մ. 136
Պապիկյան Պերճ 198
Պապոյան Գևորգ 192
Պապոյան Հարություն 194
Պասմաճյան 338
Պատրիկ Ռաֆել 198
Պարզյան Գ. 97
Պարոնյան Հայկ 197

Պարոնյան Հակոբ 171
Պարույր Սևակ 26
Պգտիկյան Նշան 405
Պեգով Ն. 260, 304
Պեգնյան Հարություն 192
Պեյլերյան Նորայր 198
Պեշիրյան Պողոս 192
Պետիկյան Տիգրան 437
Պետյան Աստուր 386
Պետոյան Հակոբ 336
Պետրելլի 136
Պետրոս XII 345
Պետրոսյան Առաքել 200
Պետրոսյան Պ. 366
Պետրոսյան Վարդգես 437
Պերպերյան Արտավազդ 386, 416
Պերպերյան Համբարձում 442
Պերպերյան Սրբուհի 199
Պիսկունով Վ. 304
Պլպուլյան Պարգև 196
Պոզապալյան Լուիզա 419
Պոմա 136
Պոյաճյան Եզնիկ 196
Պոյաճյան Ներսես 203
Պոնտացի Պետրոս 197
Պողիկյան Աստուր 198
Պողոսյան Երջան 416
Պողոսյան Նունուփար 416
Պողոսյան Պողոս 449
Պողոս Նուպար 41, 310
Պոտիկյան Էդվարդ 201
Պրիպիսնով Ա. 266, 304
Պրոնին Վ. 258

Ջամալյան Արշակ 164
Ջավիդ 29
Ջեմալ 29
Ջերեջյան Հովհաննես 417

Ռազգրադլյան Հերմինե 171
Ռայնիս Յան 37
Ռիդ Ջոն 37
Ռիժով Ն. 414
Ռոդիոնով Կ. 209
Ռոզի Արմեն 419
Ռոկֆելլեր 410



Ռոսսինի Կոնտի 136, 138
Ռուբեն Սևակ 31
Ռուբինյան Հարություն 380

Սադչիկով 209
Սաթրլենդ 405
Սալախյան Վարսենիկ 449
Սայիդ Հալիմ 29
Սանակյան Արշակ 225
Սաղըրյան Սարգիս 195
Սազով 209
Սամիլովսկի Ի. Վ. 181
Սամսոնյան Սիմոն 416
Սայաթ-Նովա 414
Սարաֆյան Գևորգ Ա. 20, 202
Սարգիսյան Պ. 200
Սարգիսյան Ս. 196
Սարգիսով Վարդան 193
Սարգսյան Ս. 209
Սարգսյան Ա. Ս. 182
Սարգսյան Արա 183
Սարգսյան Խորեն 386
Սարգսյան Հարություն 244
Սարգսյան Ն. 10
Սարգսյան Սարգիս 197
Սարգսյան Ֆ. Տ.
Սարյան Մ. Ս. 152, 178, 183, 366
Սարյան Սուրեն 332
Սարոյան Վիլյամ 373, 423, 442
Սարուխան Ալեքսանդր 416, 423
Սաֆայան Վահրամ 171
Սեդրակյան Հրաչ 192, 226
Սեիդ-Ջադե 209
Սեմա (Արմանյան Գեղամ) 171, 415, 423
Սերգեև Մ. Գ. 202
Սերգոյան Ժիրայր 419
Սիամանթո 31
Սիմոնյան Ա. 80
Սիմոնյան Հովհաննես 192
Սիմոնյան Հր. 14, 15, 335
Սիմոնյան Ղազար 197
Սիմոնյան Պեպո 383
Սիմոնյան Սիմոն 393
Սինապյան Գ. 136
Սիտալ Կարապետ 370, 422

Սիրանույշ 244
Սիրունյան Մամբրե 198, 250, 251, 259
Սմարյան Տիգրան 197
Սոլագյան Գ. 239
Սոլտերն Արթուր 133
Սոլոդ Դ. 209
Սվիրդերսկի 126
Ստեփանյան Լ. Ա. 252
Սրապիոնյան Երվանդ 194
Սրապիոնյան Ս. (Ս. Լուկաշին) 54, 88—90, 152
Սրապյան Արամայիս 386
Սուրխաթյան Հ. 83
Սուրմելյան Լեոն Զավեն 370, 383, 413
Սուրյան Վահե 417
Սևոյան Սուրեն 197

Վազգեն Ա 250, 251, 366, 426, 437
Վահե Հայկ 20
Վահե Վահյան 422, 423, 442
Վասպուրականցի Արմենակ 197
Վարդանյան Գր. 65, 68, 80, 159, 161
Վարդապետյան Հակոբ 199
Վարժապետյան Ս. Հ. 20
Վրացյան Ս. (Մասուրյան Ս.) 167, 315, 316, 335, 358

Տանյան Լևոն 198
Տամատյան Ձիկ 416
Տատուրյան Շահե 194
Տարլե Ե. Վ. 38
Տարոնցի Արմեն 416
Տեովլաթյան Սմբատ 200, 201, 386
Տետլյան Նուպար 196
Տեր-Անդրեասյան Աբրահամ 195
Տեր-Գաբրիելյան Ս. 143, 152
Տեր-Եղիայան Սեդրակ 199
Տեր-Հարության Խորեն 416, 417
Տեր-Ղազարյան Ն. 65
Տեր-Մինասյան Ռուբեն 334
Տեր-Մկրտչյան Լ. Խ. 16
Տեր-Ներսեսյան Սիրարփի 387, 442, 443
Տեր-Նիկողոսյան Հ. 90

Տեր-Սանակյան Ավետիս 193
Տեր-Սիմոնյան Դր. 65
Տեր-Ստեփանյան Մարտիրոս 338
Տեր-Վարդանյան Ալիս 380
Տիրացյան Գևորգ 194
Տոքաշյան Ռոբերտ 386
Տրդատյան Պողոս 196
Տումանյան Եսայի 202

Ցարյով Ի. 304
Ցվերներ 317

Ուզունյան Հայկաշեն 192
Ութուճկյան Գ. 233
Ումետյան Ստեփան 198
Ունճյան Լևոն 196
Ուշագըրկիլ Էֆրեմ 350
Ուստինով Ա. Մ. 99, 100, 317
Ուրլյան Հակոբ 197

Փանյլեանյան Գ. 304
Փանոսյան Սմբատ 382
Փաշանյան Սարգիս 193
Փափազ Արշիլ Հրաչ 443
Փափազյան Լևոն 405
Փենչլեանյան Արփինե 419
Փիլավճյան Խաչատուր 192
Փիլիպոսյան Նուրիցա Մ. 20
Փիրումյան Ս. 54, 133—136, 138, 152
Փոթուզյան Լևոն 192
Փոլատյան Ա. Լ. 20
Փոլատյան Արմենակ 192
Փոլատյան Գևորգ 196
Փողարյան Վահան 199

Քալանթար 65
Քալանթար Ռ. 208
Քաղցրունի Արշավիր 197
Քասունի Երվանդ 430
Քավքարաձե Ս. 209
Քենեսյան Գևորգ 199
Քեշիշյան Շուֆրի 377
Քեոսյան Լևոն 193
Քեչյան Բյուզանդ 314
Քեստենյան Եփրեմ 337

Քեստեքյան Ավետիս (Կապենց Ա.) 20
Քերզոն 84
Քըլըճյան Օշական 379
Քիպարյան Աշոտ 357
Քյուրքճերյան Ստեփան 199, 200
Քոբանյան Տիրանի 385
Քոքս Ռ. Զ. 80
Քրմոյան Մայքլ 419

Օգգայան Նազելի 395
Օբարյան Մ. 208
Օհանյան Կարապետ 199
Օսիկյան Սա՛րգիս 244
Օրագյան Ժակ 416
Օրջոնիկիձե Գ. Կ. 61
Օրուջյան Մինաս 214

Ֆերփաչյան Արշակ 244
Ֆեոդորով 209
Ֆեսչյան Ստեփան 200
Ֆորդ 410
Ֆրանս Անատոլ 37
Ֆրենկյան Վահե 194

## ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Աբադան 80
Ադանա 33
Ադրբեջան 46, 61, 62, 285
Աթենք 52, 87, 89, 99, 100, 168, 176, 200, 329
Ալավերդի 261, 262, 265, 267, 284
Ալբանիա 361
Ալեքսանդրապոլ, տե՛ս Լենինական
Ալեքսանդրիա 164, 168, 169, 189, 211, 259, 433
Ալժիր 164
Ահվազ 196
Աղին 233
Ահարլուխ 204
Ամասիա 118
Ամման 433
Ամերիկա (ԱՄՆ) 5, 19, 20, 39, 42, 48, 50—54, 56, 70, 111, 139, 150, 151, 155, 159—162, 167—169, 188, 197, 198, 208, 227, 229, 231, 236, 238—241, 243, 245, 251—253, 259, 260, 278, 280, 293, 299, 313, 315, 322, 326, 332, 350, 368, 375, 380, 382, 387, 388, 389, 391, 399, 403, 405, 409, 412, 414, 416—421, 423, 424, 427, 428, 432, 439, 442, 444
Այաշ 31
Այգեզարդ 233
Այղր լիճ (այժմ՝ Ակնա լիճ) 282
Այնթապ (Այնթեպ) 20, 33, 401
Անատոլիա 94, 142
Անգլիա 5, 52, 81—84, 132, 134, 138, 158—160, 173, 261, 278 301, 326, 350, 378, 414—416, 420
Անդրկովկաս 18, 42, 44, 55, 74, 90, 170
Անդրկովկասյան Ֆեդերացիա (Անդրֆեդերացիա) 31, 95, 105
Անթիլիաս 423, 424
Անի-Պեմզա 116, 117
Անկարա 31, 173, 352
Անտառավան, թաղամաս Լենինականում, 289
Անտիոք 33
Աշտարակ 275, 279, 281, 282, 284, 287, 290, 291, 301
Ասիա 3, 48
Աստրախան 153
Ավշար 103
Ավստրալիա 5, 250, 251, 258, 260, 270, 280, 301, 331, 356, 357, 375, 423, 439, 443
Ավստրիա 52, 249, 301, 414
Ատրպատական 196
Արաբիա 28
Արաբկիր 320
Արագած, լեռ, 63
Արագածի շրջան 286



Արազդայան 101—103
Արամո 206
Արարատ, լեռ, 92, 125, 149, 214, 340
Արարատյան դաշտ, 126, 283, 293, 404
Արաք 196
Արաքս, գետ, 103
Արգենտինա 50, 94, 202, 228, 249, 251, 252, 255, 260, 263, 268, 271, 278, 281, 301, 315, 378, 386, 387, 389, 391, 403, 418, 431
Արդահան 173
Արդվին 173
Արզնի 261, 262
Արմաշ 102, 103
Արշալույս 437
Արտաշատի շրջան 66, 83, 85, 86, 185, 209, 219, 221, 233, 235, 291, 301, 449
Արտենի 286
Արևելյան Հայաստան 3, 5, 44, 49, 353
Արևմտյան Անատոլիա 33
Արևմտյան Թրակիա 98
Արևմտյան Հայաստան (Արևմտահայաստան) 4, 19, 33, 39, 43, 60, 110, 113, 326, 334, 400, 403
Աֆրիկա 94, 111, 250, 313, 315, 420, 423
Բաթում 83—86, 95, 100, 124, 128, 153, 178, 209, 211—213, 216, 234, 239, 240, 262—264, 266, 271, 272
Բալկանյան երկրներ, Բալկաններ, 39, 42, 51, 54, 121, 143, 155, 357
Բալու 405
Բաղդադ 36, 41, 75—77, 82, 99, 226, 378, 379
Բաղեշ 33
Բաշ Ապարան 44
Բասարգեչարի շրջան (այժմ՝ Վարդենիսի շրջան) 83, 86, 186
Բասրա 41, 76, 81, 82
Բաքու 61, 159, 178, 209, 262, 263, 285
Բաքուբա 76
Բելգիա 52, 135, 158, 159, 160, 249
Բեյրութ 20, 21, 29, 41, 50, 88, 164, 168, 190, 191, 203, 204, 209, 211, 212, 214, 227, 230, 231, 324, 325, 336—338, 351, 352, 355, 369, 372, 373, 377, 381, 383, 385, 387—390, 393, 398, 412—414, 418, 419, 421, 423, 425, 430, 431, 436
Բեռլին 164, 173
Բեսարաբիա 51
Բերգամո 414
Բյուրական 405
Բոլորան 284
Բոստոն 33, 34, 53, 167, 378
Բրազիլիա 50, 165, 203, 228, 231, 251, 260, 268, 301, 315, 356, 378, 380, 387, 403
Բուենոս Այրես 51, 164, 165, 202, 357, 368, 369, 381, 391, 394, 414, 419, 431
Բուլղարիա 15, 48, 51, 56, 115, 122, 154, 171, 181, 193, 203, 208, 209, 215, 216, 225, 227, 236, 238, 241, 244, 248, 249, 253, 271, 301, 315, 322, 414, 416, 419, 420, 427
Բուխարեստ 194, 215, 381
Գալաթիա 33
Գասբեմունի 33
ԳԴՀ 301, 414
Գերմանիա 52, 138, 150, 158, 159
Գյուրջի 335
Գրենոբլ 168
Գուսանագյուղ 233
ԳՖՀ 301, 379, 414, 431
Դալար 235
Դամասկոս 41, 50, 192, 204, 209, 336, 389
Դավալու 102
Դատեմ 113, 406
Դեդեաղաչ 100
Դետրոյթ 380
Դիլիջան 292
ԵԱՀ, տե՛ս Եգիպտոս

Եգիպտոս 17, 19, 20, 48, 52, 89, 162, 177, 198, 208, 209, 227, 229, 232, 236, 238, 241, 243, 245, 249—253, 255, 257—259, 262—265, 267—272, 278—280, 282, 293, 294, 299, 304, 322, 340, 348, 378, 387, 389, 393, 416—418, 420, 431, 445
Եդեսիա 33, 37, 404
Եթովպիա 48, 52, 198, 199, 268, 301, 427
Եկատերինոդար 40
Եղեգնաձոր 224
Եվդոկիա 20, 401
Եվրոպա 3, 48, 50—52, 126, 129, 130, 139, 140, 143, 148, 151, 161, 169, 375, 423, 439
Երզնկա 35
Երուսաղեմ 41, 196, 205, 423
Երևան, տե՛ս աշխատության գրեթե բոլոր էջերում
Եփրատ, գետ, 35, 36
Զանգեզուր 64
Զանգիբասարի շրջան (այժմ՝ Մասիսի շրջան) 127, 137, 149,, 219, 221, 301
Զարիշատ 224
Զեյթուն 401
Զենջան 75
Զմյուռնիա 52, 352
Էջմիածին 65, 68, 77, 112, 118, 160, 187, 219, 221, 274—276, 279, 281, 283, 284, 287, 291, 301, 342, 359, 411, 423—425, 437, 449
Էլառ (այժմ՝ Աբովյան) 262, 267, 274, 276—279, 281—284, 290, 291, 293, 301, 403
Էնկյուրի, տե՛ս Անկարա
Էվջիլարի ջրանցք 160
Թաթար-Բազարջիկ 88
Թալին 65, 224, 274, 275, 279, 281, 284—287, 301
Թավրիզ 80, 294, 335
Թեհրան 81, 84, 85, 99, 265, 283, 302, 338, 357, 371, 378, 414
Թիֆլիս (Թբիլիսի) 13, 66, 67, 83, 153, 162, 285
Թոխմախան լիճ 112
Թրակիա 89
Թուրքիա 3, 7, 21, 25—29, 33, 36, 37, 38, 40—42, 48, 51—53, 58, 93—95, 113, 114, 122, 125, 144, 172—175, 190, 201, 255, 263, 268, 271, 278, 279, 292—294, 299, 322, 326, 336, 350—355, 390, 420, 443
Ժնև 139, 142, 311, 431
Իգդիր 74
Իզմիր, տե՛ս Զմյուռնիա
Ինքիլի 36
Իջևանի շրջան 116, 117, 261, 262, 267, 269, 272, 273, 279, 286, 292
Իսկենդերուն 33
Իսրայել 268, 271, 278, 301
Իտալիա 52, 239, 268, 301, 413—417, 420, 424
Իրան 48, 51, 53, 64, 78, 87, 99, 105, 106, 177, 181, 187, 190, 196, 203, 208, 209, 216, 219, 221, 225—228, 231, 248, 249, 253, 257, 260, 262—269, 271, 278—282, 293—297, 299, 302—304, 322, 324, 335, 338, 340, 350, 355, 390, 420, 421, 424, 427, 443
Իրաք 177, 199, 209, 226, 229, 230, 241, 245, 249, 255, 257, 262—264, 268, 271, 278—280, 293, 294, 299, 410, 416, 420, 427, 428
Լայպցիգ 122
Լամբալու (այժմ՝ Բագրատաշեն) 116
Լատինական Ամերիկա, տե՛ս Հարավային Ամերիկա
Լեհաստան 188, 420
Լենինական 66, 83, 86, 96, 101, 102, 116—118, 124, 164, 209, 235, 236, 261, 265, 266, 267, 269, 272—275, 277—280, 282, 284, 288—292, 301, 317
Լիբանան 16, 19, 20, 50, 51, 177, 181, 190—192, 203, 208, 209, 211, 216, 225—228, 230, 231, 235, 236, 238, 241, 244, 245, 248, 249, 255, 257, 263, 264, 268, 277—280, 293, 294, 299, 304, 322, 324, 331, 336—338, 378, 379, 387—390, 403, 416—418, 420, 421, 423, 424, 427—429, 431—433, 442, 443
Լիբիա 294, 301, 322, 324
Լիոն 117, 168, 195, 389
Լիսաբոն 410, 414
Լիվերպուլ 243
Լյուքսեմբուրգ 150
Լոզան 7, 58, 121
Լոնդոն 412, 413, 415, 431, 433
Լոս Անջելոս 20, 380, 381
Լուսավան (Չարենցավան) 261, 262, 267, 269, 273, 277—282, 284, 286, 290—292, 301
Խարբերդ 33, 401
Խարբին 247
Խարկով 153
Խոյ 74, 86
Խորհրդային Հայաստան, տե՛ս Սովետական Հայաստան
Խորհրդային Միություն, տե՛ս Սովետական Միություն
Ծաղկաձոր 394
Կալամաթիա 88
Կալիֆոռնիա 20
Կահիրե 20, 164, 198, 251, 257—260, 271, 283, 338, 339, 341, 342, 373, 383, 419, 430
Կաղզվան 60
Կանադա 5, 19, 50, 51, 159, 249, 250, 258, 260, 270, 280, 294, 301, 331, 356, 378, 380, 420, 423, 443
Կարասու 137
Կարին 32, 33, 352
Կ. բլուր, թաղամաս Երևանում, 337
Կարս 60, 173
Կեսարիա 401, 406
Կիլիկիա 32, 33, 39, 42, 51, 214, 244, 400, 401, 403, 424
Կիպրոս 51, 177, 200, 226, 249, 257, 260, 262—270, 272, 279, 288, 299, 304, 322, 361, 378, 386, 424, 427, 430
Կիրովական 44, 116, 117, 209, 261, 265, 267, 269, 272—275, 277—280, 282, 284, 285, 288—291, 301, 394
Կիև 153
Կոնիա 33
Կոստանդնուպոլիս, Կ. Պոլիս 26, 29—32, 36, 39, 40, 42, 53, 71, 77, 83, 85, 90, 92, 94, 95, 96, 99, 105, 107, 114, 122, 125, 142, 154, 155, 163, 201, 311—313, 315, 316, 318, 352
Կովկաս 27, 136, 167, 353
Կոտայքի շրջան (այժմ՝ Աբովյանի շրջան) 186
Կորդոբա 202, 431
Կորնթոս 52
Կորֆու կղզի 52
Կուբա 50
Հաբեշստան, տե՛ս Եթովպիա
Հալեպ 33, 35, 36, 41, 50, 175, 192, 199, 203—206, 231, 243, 322, 324, 325, 330, 337, 341, 377, 378, 382, 385, 389, 392, 394, 419, 429—431, 433
Հանըն 403, 404, 406
Համադան 75, 78, 196
Հայաստան, տե՛ս աշխատության գրեթե բոլոր էջերում
Հայաստանի Հանրապետություն 130
Հայֆա 169, 195, 196, 326, 353
Հանքավան 394
Հարավ-Աֆրիկյան Միություն 251
Հարավային Ամերիկա 50, 51, 94, 164, 190, 201—203, 227, 228, 236, 249, 250, 258, 280, 331, 391, 423, 427, 444
Հարավային Իրան 74, 75
Հարավսլավիա 52, 172, 278, 301,
Հեզարջերիբ 294
Հեռավոր արևելք 52, 423
Հին Հունաստան 98
Հյուսիսային բևեռ 142
Հյուսիսային Կովկաս 46, 153
Հնդկաստան 52, 249, 423

Հոռոմի 233
Հոլանդիա 52, 420
Հոկտեմբերյան 186, 221, 274—277, 279, 281, 284—289, 292, 301
Հոմս 193
Հորդանան 249, 301, 427—429, 431
Հռոմ 259, 345, 346, 413, 414, 431
ՀՍՍՀ (ՀԽՍՀ), տե՛ս Սովետական Հայաստան
Հրազդան 223, 233, 231, 262, 267—269, 272, 273, 277—280, 282, 284, 290, 291, 301, 437
Հունաստան 17, 51, 52, 89, 90, 95—101, 105, 112, 114—116, 122, 125, 126, 128, 150, 155, 164, 171, 172, 176, 181, 190, 200, 203, 205, 208, 209, 215, 216, 225—228, 238, 241, 248, 249, 255, 263, 267, 268, 293, 299, 315, 317, 319, 322, 420, 424
Հունգարիա 52, 188, 361, 414, 420
Ղազվին 187
Ղամարլուի շրջան, տե՛ս Արտաշատի շրջան
Ղամըշլի 206, 292
Ղարադաղ 294
Ղարաքիլիսա, տե՛ս Կիրովական
Ղափան 117, 261, 267, 273, 278, 292, 301
Ղուր 137, 149
Ղուրդուղուլի (այժմ՝ Հոկտեմբերյան) 66, 118
Ճավա 52
Ճենովա, տե՛ս Ջենովա
Մադագասկար 331
Մալաթիա 20, 113, 117, 160, 405, 406
Մակեդոնիա 89, 98
ՄԱՀ, տե՛ս Եգիպտոս
Մայիսյան սովխոզ 286
Մանչուրիա 248
Մասիս, ավան, 262
Մասիս, տե՛ս Արարատ լեռ
Մարաբ 36
Մարաշ 33, 40
Մարաֆ 318



Մարսել 109, 114, 195, 229
Մեծ Բրիտանիա, տե՛ս Անգլիա
Մեսքենե 36
Մերձավոր արևելք 5, 16, 19, 43, 50—52, 70, 73, 119, 143, 155, 163, 167, 254, 280, 332, 342, 345, 357, 361, 375, 390, 399, 416, 423, 429, 439
Մեքսիկա 50
Միլան 412—414
Միջագետք (Իրաք) 11, 45, 53, 74, 75, 77—86, 95—99, 101, 105
Միջին Ասիա 61, 153
Միջին արևելք 73, 254, 280, 334, 345, 373, 390, 416, 424
Մյասնիկյանի անվան սովխոզ 286
Մյունխեն 371, 414
Մոնտեվիդեո (Մոնտեվիտեո) 165, 380
Մոնրեալ 412
Մոսկվա 35, 47, 101, 126, 133, 138, 139, 143, 153, 161, 162, 173, 212, 285, 429, 437
Մոսուլ 41, 78
Մորենիկ 405, 407
Մուշ 37
Մուսա լեռ 37, 404
Մուսալեռ ավան 404
Յաղուբիե 206
Յաֆա 196
Նաիրիի շրջան 301
Նասր էլ Օմար 76, 78, 80
Նեապոլ 239
Նիկոզիա 201, 323, 386
Նիկոմեդիա 33
Նյու Յորք 13, 20, 50, 71, 167, 174, 197, 207, 209, 239, 244, 322, 332, 343, 374, 377, 386, 425, 442
Նոր Ամասիա 113
Նոր Ավան 289
Նոր Արաբկիր 112, 404
Նոր Բյուզանդիա 112
Նոր Երզնկա 113
Նոր Եվդոկիա 112, 160
Նոր Զելանդիա 331
Նոր Զեյթուն 231
Նոր Թոմարզա 113
Նոր Խարբերդ 113
Նոր Կեսարիա 113, 119
Նոր Հաճըն 111, 261, 401, 403, 405, 406
Նոր Մալաթիա 113, 385, 404, 406
Նոր Մարաշ 401
Նոր Յոզղատ 113
Նոր Սեբաստիա 113, 119, 385, 404, 405
Նորվեգիա 142, 150
Նոր Տարոն 113
Նոր Տիգրանակերտ 113, 119
Նուբարաշեն (այժմ՝ Սովետաշեն) 113, 119
Շահումյանի շրջան 449
Շապին-Գարահիսար 37
Շեդադե 36
Շղուր 206
Շվեդիա 249, 301
Շվեյցարիա 159, 249, 416, 420
Շումեն 420
Շուրիչկան 294
Չանղըրը 31
Չեխոսլովակիա 52, 414
Չիկագո 377
Չինաստան 229, 238, 241, 301
Պաղեստին 53, 177, 195, 196, 205, 226, 229, 230, 232, 241, 245, 322
Պաղին 401, 405
Պաղնատուն 104
Պարսկաստան 3, 85
Պելոպոնես 89
Պետրոգրադ 39
Պիրեյա 52
Պլովդիվ 189, 420
Պովոլժիե 142
Պոտսդամ 38, 173
Պրուսա 33
Պուրն Համամ 337
Ջեզիրե 193, 231, 244, 245, 349
Ջենովա 139, 188
Ջրաբր 206
Ռուլֆա 86, 95, 99, 178, 209, 216, 234, 240, 262, 266
Ռաս-ուլ-Այն 36
Ռեշտ 196
Ռոդոստո 20
Ռոսարիո 202
ՌՍՖՍՀ 47, 78
Ռուսական Հայաստան, տե՛ս Արևելյան Հայաստան
Ռուսաստան 3, 39, 43, 61, 62, 142, 331, 353, 354
Ռուսե 420
Ռաքավի 285
Ռումինիա 48, 150, 154, 172, 181, 188, 194, 203, 208, 209, 216, 227, 236, 238, 241, 248, 249, 253, 301, 322, 361, 414, 416
ՍԱՀ, տե՛ս Սիրիա
Սալմաստ 74, 86, 338
Սալոնիկ 52, 90, 91, 100, 317
Սան Պաուլո 385
Սասուն 37
Սարդարապատ 44, 95, 123, 126, 440
Սարդարապատի դաշտ 127, 129
Սեբաստիա 33, 113, 401
Սեֆևյան Պարսկաստան 3
Սիսիան 186
Սիրիա 16, 19, 33, 50, 51, 95, 105, 111, 122, 125, 165, 175, 177, 181, 190—192, 203, 204, 206, 208, 209, 211, 216, 225—228, 230, 231, 235, 236, 238, 241, 244, 245, 248, 249, 255, 257, 263, 263, 264, 270—272, 277, 279—282, 287, 292, 299, 302, 304, 322, 324, 331, 337, 338, 348, 389, 390, 416, 417, 420, 424, 427—433
Սմո 102, 103
Սովետական Հայաստան, տե՛ս աշխատության գրեթե բոլոր էջերում
Սովետական Միություն 99, 100, 105, 114, 126, 140, 158, 171, 172, 173, 177—179, 181—183, 195, 201—202, 206, 209, 210, 212, 214, 222, 223, 225, 225, 234, 236, 237, 242, 245—250, 252, 254—258, 260,

261, 264—266, 271, 276, 277, 280, 284, 294, 297, 303, 304, 317, 326, 334, 335, 350, 354, 362, 366, 374, 377, 414, 416, 427, 437, 438, 446—450
Սովետական Ռուսաստան 43, 44, 46, 56, 62, 70, 84, 85, 142, 143
Սոֆիա 189, 381, 420
Սպահան 196, 209, 294
Սպիտակ 277
ՍՍՀՄ (ԽՍՀՄ), տե՛ս Սովետական Միություն
Ստալինգրադ 201
Ստամբուլ 260, 350, 351, 352, 390, 423
Ստենֆորդ 387
Ստեփանավան 96, 116, 186, 233, 309
Սուդան 52, 198, 199, 245, 427
Սուեդիա 33, 37
Սոխումի 285
Սումգաիթ 285
Սուվար 36
Սուրենավան 102, 103
Սուրմալու 60
Սևան 269
Սև ջուր 127, 149
Սևր 121
Վալանս 195, 389
Վաղարշապատ, տե՛ս Էջմիածին
Վան 31, 37, 74, 87, 105
Վանաշեն 449
Վառնա 318, 420
Վասպուրական 74, 76, 406
Վեդու շրջան (այժմ՝ Արարատի շրջան) 85, 86, 219, 221, 223, 274, 275, 279, 281, 284, 285, 287, 291, 292, 301, 449
Վենետիկ 53, 413, 414
Վիեննա 31, 309, 414
Վիսենտե Լոպես 394
Վրաստան 46, 61, 62, 65, 83, 124, 285
Տաճկաստան, տե՛ս Թուրքիա
Տարոն 20, 404
Տարոն-Տուրուբերան 329, 406, 407
Տեսին 389
Տեր-Զոր 36
Տիգրանակերտ 33
Տրանսիլվանիա 51
Տրապիզոն 33, 352
Տրիպոլի (Թրիպոլի) 337
Ուկրաինա 47, 61
Ուրմիա 74, 86
Ուրուգվայ 50, 203, 228, 232, 249, 252, 253, 255, 263, 268, 278, 301, 315, 378, 380, 403, 412, 427, 431
Ուրֆա, տե՛ս Եդեսիա
Փարիզ 10, 27, 28, 39, 45, 78, 112, 114, 115, 133, 138, 144, 157, 162, 165, 168, 185, 194, 195, 207, 229, 307, 318, 329, 357, 368, 377, 378, 381, 389, 405, 408, 418
Փեհլևի 196
Փիրմալաք (այժմ՝ Արեգ) 224
Փոքր Ասիա 36
Քաղցրաշեն 449
Քարակերտ 286
Քեսապ 33, 349
Քեֆալոնիա 52
Քիլիս 33
Քիրմանշահ 78
Քղի 407
Քուվեյթ 5, 278, 301
Օդեսա 153
Օսմանյան կայսրություն 3, 25, 36, 447
Ֆիլիպե 88
Ֆլորենս 165
Ֆոնտան 233
Ֆրանսիա 5, 17, 51—54, 56, 89, 94, 95, 114, 115, 117, 119, 138, 155, 158—60, 162, 171, 208—209, 227, 229, 236, 238, 241, 245, 249, 263, 271, 278, 293, 294, 301, 318, 322, 357, 378, 386, 387, 389, 391, 403, 414, 416—421, 424, 427, 428, 432, 442, 443



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն . . . . . . . . 3
Գլուխ առաջին.— *Ժամանակակից սփյուռքի առաջացումը և նրա կողմնորոշումը դեպի Սովետական Հայաստան* . . . 25
Գլուխ երկրորդ.— *Առաջին ձեռնարկումները գաղթականության հարցի լուծման ուղղությամբ* . . . . . . 60
Գլուխ երրորդ.— *Սփյուռքահայերի հայրենադարձությունը 1921—1936 թվականներին* . . . . . . 73
*1. Սփյուռքահայերի հայրենադարձությունը ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին* . . . . . . 74
*2. Հայրենակցական միությունների գործունեության աշխուժացումը և սփյուռքահայերի հայրենադարձությունը 1926—1936 թվականներին* 110
Գլուխ չորրորդ.— *Հայ գաղթականության հարցը Ազգերի լիգայում և և Նանսենյան ծրագիրը* . . . . . . . 121
Գլուխ հինգերորդ— *Հայաստանի օգնության կոմիտեի գործունեությունը հայրենիք-սփյուռք կապերի զարգացման և հայրենադարձության իրականացման ուղղությամբ* . . . . 152
Գլուխ վեցերորդ.— *Սփյուռքահայերի զանգվածային հայրենադարձությունը 1946—1948/1949 թվականներին* . . . . 171
*1. Սփյուռքահայերի հայրենադարձության նախապատրաստումը* . 177
*2. Հայրենադարձների քարավանների տունդարձը և նրանց տեղավորումը հանրապետությունում* . . . . . 211
Գլուխ յոթերորդ.— *Սփյուռքահայերի հայրենադարձությունը 1962—1982 թվականներին* . . . . . . . 246
Գլուխ ութերորդ.— *Տարբեր գիրքորոշումներ հայրենադարձության նկատմամբ* . . . . . . . 306
Գլուխ իններորդ.— *Հայրենիք—սփյուռք առնչությունների հետագա զարգացումը և Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի գործունեությունը* . . . . 359
Վերջաբան . . . . . . . 447
Резюме . . . . . . . . . . . 451
Summary . . . . . . . . . . 455
*Անձնանունների ցանկ* . . . . . . . . 459
*Տեղանունների ցանկ* . . . . . . . . 468

ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ ՀՈՎԻԿ ՌՈՒԽՏԱՆԵՍԻ

# ՀԱՅՐԵՆԻՔ—ՍՓՅՈՒՌՔ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ (1920—1980 ԹԹ.)

Հրատարակության է ներկայացրել
համալսարանի հայ ժողովրդի պատմության ամբիոնը

*Հրատարակչության խմբագիր՝* Ա. Մ. Գաբրիելյան
*Նկարիչ՝* Յ. Հ. Ղանդիլյան
*Գեղարվեստական խմբագիր՝* Ն. Ա. Թովմասյան
*Տեխնիկական խմբագիր՝* Հ. Ս. Այվազյան
*Վերստուգող սրբագրիչ՝* Գ. Պ. Խաչատրյան

*ԻԲ 664*

*ՎՖ 03333։ Պատվեր 1181։ Տպաքանակ 4000։ Հանձնված է շարվածքի 25.05 1985 թ.։ Ստորագրված է տպագրության 06.08.1985 թ.։ Թուղթ № 1, չափսը՝ 84×108 1/32։ Տառատեսակը «Սովորական»։ Տպագրության եղանակը՝ «Բարձր»։ Հրատարակչական 23,4 մամուլ։ Տպագրական 14,875 մամուլ=պայմ. 25,0 մամուլի։ Գինը՝ 2ռ. 10 կոպ.։*

*Երևանի Համալսարանի հրատարակչություն, Երևան, Մռավյան փ. № 1։*
Издательство Ереванского университета, Ереван, ул. Мравяна, № 1.
*Երևանի Համալսարանի տպարան, Երևան, Աբովյան փ. № 52։*
Типография Ереванского университета, Ереван, ул. Абовяна, № 52.